ՄԱՅՐ ՄԱՇՏՈՑ

Ժ. ԴԱՐ

ՀԱՏՈՐ Ա. ԳԻՐՔ Ա.

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՄԱՅՐ ՄԱՇՏՈՑ

ՀԱՏՈՐ Ա., ԳԻՐՔ Ա.

(Ժ. ԴԱՐ)

ՀՐԱՄԱՆԱՒ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ.
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

[illegible]
4605

ՄԱՅՐ ՄԱՇՏՈՑ

ՀԱՏՈՐ Ա.

ԳԻՐՔ Ա.

ԸՍՏ ՀՆԱԳՈՅՆ ԵՐԿԱԹԱԳԻՐ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԵՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆԻ,
ԲՆԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԿԱՆՈՆԱՑԱՆԿԱՅԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎՔ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ՝
ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ - 2012

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Մ 239

Տպագրուած է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի
երաշխաւորութեամբ

ՄԱՅՐ ՄԱՇՏՈՑ.

Մ 239 Հատոր Ա., Գիրք Ա. Ըստ հնագոյն երկաթագիր ձեռագրերի եւ համեմատութեամբ Աստուածաշունչ մատեանի. Բնագրական եւ կանոնացանկային յաւելուածովք. Աշխատասիրութեամբ Գէորգ Տէր-Վարդանեանի.- Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2012. - 920 էջ+16 էջ ներդիր:

Գիրքը պարունակում է Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցում գործածուած հնաւանդ ծիսարանի Մաշտոցի բնագիրը, ըստ երկաթագիր հնագոյն ձեռագրերի եւ համեմատութեամբ Սուրբ Գրքի եւ ձեռագրական օժանդակ հարուստ նիւթի: Ունի յաւելուածներ. Քահանայաթաղի կանոնի լրացուցիչ երկու խմբագրութիւն, Մեռոնօրհնէքի կանոնի հին տարբերակը, «Կարգաւորութիւն օրհնութեանաբեր ցուցակի» ցանկի համադիր բնագիրը, Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսի վարքի խմբագրութիւնները, Աղօթք-քարոզների եւ սուրբգրական ընթերցուածների ցանկեր, մեր ծիսարանի զարգացման ընթացքը պատկերող կանոնացանկային յաւելուածներ: Նախաբանը Մաշտոց ժողովածուի եւ նրա ուսումնասիրութեան կարեւոր դրուագների ընդհանուր տեսութիւն է, ուր առաջադրուած է նաեւ հայ եկեղեցու ծիսական այս կարեւոր ժողովածուի հետագայ ուսումնասիրութեան ծրագիր:

Նախատեսուած է թէ ծիսագիտական, թէ ծիսակարգային եւ թէ հայերէն Աստուածաշնչի բնագրագիտական հետազօտութիւններին նպաստելու համար:

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37

Տպագրում է մեկենասութեամբ
ԳԱԲՐԻԷԼ ՉԵՄՊԵՐՃԵԱՆԻ

ISBN 978-9939-59-098-1

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հնաւանդ Մաշտոցը եւ համառօտ ակնարկ հայկական ծիսարանի պատմութեան 11

ԲՆԱԳԻՐ 83

Ա. Յովհաննու Մանդակունոյ Հայոց կաթողիկոսի Հիմնարկութիւն սրբոյ եկեղեցոյ 85
Բ. Կանոն եկեղեցի աւրհնելոյ 97
Գ. Կանոն յորժամ նոր Դուռն դնեն եկեղեցւոյ 135
Դ. Կանոն Աւազան աւրհնելոյ 137
Ե. Կանոն նաւակատեաց եկեղեցոյ եւ պղծելոյ յանաւրինաց եւ գշարժեալ սեղանն վերստին հաստատել 145
Զ. Կանոն զնկարել եկեղեցի աւրհնել 160
Է. Կանոն զՀանդերձեղէն, զսպաս աւրհնելոյ 161
Ը. Կանոն Սկիհ եւ մողզմա աւրհնել 163
Թ. Կանոն աւրհնութեան նորակերտ Գրոց 164
Ժ. Կանոն ժամահար աւրհնելոյ 165
ԺԱ. Կանոն Խաչ աւրհնելոյ 168
ԺԲ. Կանոն Տեառնական աւրհնելոյ 193
ԺԳ. Աւրհնութիւն աղի 203
ԺԴ. Կանոն Ոգեհանգիստ առնելոյ կամ յիշատակ մեռելոց 204
ԺԵ. Աւրհնութիւն Սեղանոյ տեառնականի ճաշոյ եւ պատարագի 210
ԺԶ. Աւրհնութիւն Հատի պատարագի 211
ԺԷ. Աւրհնութիւն Հատի մարտիւրոսաց 214
ԺԸ. Կանովն Մկրտութեան յորժամ քրիստոնեայ առնեն 215

ժԹ. Կանոն կուսանաց խաչ փոխել 234
Ի. Ի. Կանոն Պսակ աւրհնելոյ 238
Իա. Կանոն Պսակ վերացուցանելոյ 249
ԻԱ. Կանոն Յաղորդութիւն տալոյ հիւանդի 250
ԻԲ. Կանոն զԱմենայն ննջեցեալք թաղմամբ ի քրիստոս յուղարկելոյ 255
ԻԳ. Կանոն. իսկ յերկրորդումն աւուրն 275
ԻԴ. Կանոն Մոնոզոն առնելոյ ըստ հերակտրութեանն եգիպտացւոցն եւ սուրբ լերինն եւ Պաղաստին. արանց եւ կանանց, որք զկուսութիւնն յանձն առին վասն Քրիստոսի. կարգ այս է 283
ԻԵ. Կանոն ձեռնադրութեան կրաւնաւորութեան Սքեմ տալոյ արժանացելոց չափահասակաց կատարման տիոց միայնացելոց ի Քրիստոս 293
ԻԶ. Կանոն Հայր առնել 330
ԻԷ. Աղաւթք ի վերայ Տնտեսի 335
ԻԸ. Կանոն յորժամ Կրաւնաւոր վախճանի 337
ԻԹ. Կանոն Ջուր աւրհնելոյ յաւուր յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 343
Լ. Կանոն խորհրդածութեան սուրբ իւղոյն, զոր Միռոնն կոչեն (բնագիրը չկայ) 360
ԼԱ. Կանոն Ապաշխարող առնելոյ
ԼԲ. Կանոն մեծի հինգշաբաթին զԱպաշխարողսն արձակելոյ 381
ԼԳ. Կանովն ի նմին աւուր երեկորին, յորում փրկիչն զոտսն աշակերտացն Լուաց, աւանդեաց եւ մեզ զայս մեծ խորհուրդ ի մեծի հինգշաբաթոջն 398
ԼԴ. Կանովն Քարոզ պատուիրանի, զոր զեկուցանէ քահանայն ժողովրդեանն 402
ԼԵ. Կանոն Խունգ աւրհնելոյ 409
ԼԶ. Կանոն զԱրմտիս սերմանեաց, զշիւղ եւ զհնձան աւրհնելոյ 410
ԼԷ. Աղաւթք ի վերայ Երաշտութեան. անձրեւ լինի 416
ԼԸ. Կանոն Խաչալուայ առնելոյ 416

ԼԹ. Աղաւթք որ Պիւղծ ինչ կերեալ է 421
Խ. Որ ի Կերակուրս միայն պղծի 421
ԽԱ. Աղաւթք ի վերայ Երդմնասխալաց 422
ԽԲ. Կանոն ձեռնադրութիւն Անագանուաց, որ լինին Գրակարդացք 422
ԽԳ. Կանոն ձեռնադրութեան Կես սարկաւագաց 423
ԽԴ. Կանոն ձեռնադրութեան Սարկաւագաց 423
ԽԵ. Կանոն Ձեռնադրութիւն Քահանայութեան 426
ԽԶ. Կանոն զՆշխարս սրբոցն ի հանգիստ փոխարկելոյ 431
ԽԷ. Կանոն յորժամ Քահանա վախճանի կամ եպիսկոպոս առ ի թաղումն 433

ԲՆԱԳՐԱԿԱՆ ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ

Ա. Կանոն յորժամ Քահանայ վախճանի կամ եպիսկոպոս առ ի թաղումն (ըստ ԺԲ. դ. Հ^{մր} 2789 ձեռագրի) 491
Բ. Կանոն յորժամ Քահանայ վախճանի կամ եպիսկոպոս առ ի թաղումն (հետագայ խմբագրութիւն. ըստ ձեռ. Հ^{մր} 961) 566
Գ. Ի մեծի աւուր Հինգշաբաթուն խորհրդածութիւն սուրբ եւղոյն, զոր մեռոնն կոչեն 648
Դ. Կարգաւորութիւն աւրհնութիւնաքեր ցուցակի (Մաշտոց ծիսարանի) 654
Ե. Մաշտոց Ա. Եղիվարդեցի կաթողիկոսի վարքը 709

ՑԱՆԿԵՐ

1. Աղօթքների եւ քարոզների սկսուածքների այբբենական ցանկ 741
Ա-Գ. յաւելուածների աղօթքների եւ քարոզների սկսուածքների այբբենական ցանկ 752
2. Ընթերցուածների ցանկ ըստ կանոնների 755
Ա., Բ. յաւելուածների ընթերցուածներ 770
3. Ընթերցուածների ցանկ ըստ Աստուածաշունչի գրքերի կարգի 774
Ա., Բ. յաւելուածների ընթերցուածներ ըստ Աստուածաշունչի գրքերի կարգի 788

ԿԱՆՈՆԱՑԱՆԿԱՅԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ
(կարեւոր ձեռագրերի կանոնացանկեր)

Զ. Յոռոմոսի Մաշտոցի 795

Է. Ներսէս Լամբրոնացու թարգմանած Լատինական ծիսարանի 798

Ը. Սսեցւոց Մաշտոցի 804

Թ. Էջմիածնական տասնհինգ Մայր Մաշտոցների 814

Ժ. Պատկեր հնաւանդ Մաշտոցում բացակայող Մայր Մաշտոցներում առկայ յաւելեալ կանոնների 881

ԺԱ. ԱԲ, Յոռոմոսի եւ տասնհինգ Մայր Մաշտոցների կանոնացանկերի համադիր աղիւսակ (ըստ Ա ձեռագրի համարների) 900

ԺԲ. Յ. Մատթէոս վարդապետ Մաղաքեան, Ցուցանի թէ երկաթագիր Մաշտոցն մեր գրեալ է յիններորդ դարուն կամ իբր 1000 ամօք յառաջ 902

ԺԳ. Տպագիր Մաշտոցների ցանկ 911

Լուսանկարներ 921

ՀԱՅՐԻԿԻՍ
անմնացորդ նուիրումի եւ
անխոնջ աշխատաւորի տիպար
ՀՄԱՅԵԱԿ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
(1924-2008)
լուսաւոր յիշատակին

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂ

ՀՆԱՒԱՆԴ ՄԱՇՏՈՑԸ ԵՒ ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԻՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ներկայ գրքի բուն նպատակը մեր եկեղեցու նախնական Հնաւանդ Մաշտոց-Ծիսարանի[1] բնագրի հրատարակումն է ըստ երկաթագիր երկու ձեռագրի.

Ա. Մխիթարեան Վենետիկի մատենադարանի ձեռ. Հմր 457/320. Ժ. դ.[2]

Բ. Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հմր 1001. ԺԱ. դ.[3]:

Բնագիրը հրատարակութեան պատրաստելու ընթացքում տրամաբանօրէն անհրաժեշտութիւն առաջացաւ Սուրբգրական ընթերցուածները համեմատելու նաեւ Հայերէն Աստուածաշնչի միակ ձեռագրական հրատարակութեան հետ (Ա)[4]:

---

[1] *Մաշտոց ժողովածուի մասին ընդհանուր գիտելիքներ տե՛ս Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը՝ յարակից ազգային պարագաներով պատմուած, գրեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան. նախկին պատրիարք. հտ. Ա., Կոստանդնուպոլիս, 1912. վերահրատ.՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, յօդ. 196, 323, 677, 698 եւյն (այսուհետեւ՝ Ազգապատում), Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Ծիսական բառարան, Անթիլիաս-Լիբանան, 1979, էջ 154-5. Նորայր արքեպս. Պողարեան, Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 91-120, Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 685-7. Ա. Արեւշատեան, «Մաշտոց» ժողովածուն որպէս հայ միջնադարեան երաժշտական մշակոյթի յուշարձան, Երեւան, 1991 (155 էջ. էջ 148-54 գրականութեան ցանկ. այսուհետեւ՝ Ա. Արեւշատեան, «Մաշտոց» ժողովածուն): Մաշտոց Եղիվարդեցու մասին տե՛ս Ազգապատում, հտ. Ա., յօդ. 696-698, Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ., Երեւան 1946, էջ 215-6: Բնականաբար, բաւական գրականութիւն յիշատակուած է նաեւ ներկայ գրքի հետազօտական-առաջաբանային մասերում:*

[2] *Մանրամասն նկարագրութիւնը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Գ. Մաշտոց - Գիրք ձեռնադրութեանց, Յօրինեցին Հ. Բարսեղ Սարգիսեան եւ Հ. Գրիգոր Սարգսեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1966, էջ 1-48 (այսուհետեւ՝ Վենետիկի ցուցակ, Գ., ըստ յարմարութեան նաեւ՝ ՎՑ, Գ. ձեւով, շարադրանքի մէջ):*

[3] *Ձեռագրերի այս թուագրումները մերն են. այլ կարծիքների մասին տե՛ս ստորեւ՝ պատկան տեղում: Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի անունը այսուհետեւ, տողատակին կամ շարադրանքի մէջ, ըստ հարկի յիշատակելու ենք ՄՄ համառօտութեամբ:*

[4] *Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց. ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց՝ ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ: Նորոգապէս ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ՝ համեմատութեամբ այլեւայլ օրինակաց, հանդերձ կարեւոր ծանօթութեամբք բնաբանին: Յաշխատասիրութենէ տեառն Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի, 1805, ի Վենէտիկ, ՌՄԾԴ.:*

Միաժամանակ, ստացուած բնագրի թելադրանքով, կարիք առաջացաւ.

ա. Թռուցիկ ակնարկով անդրադառնալու մեր ծիսարանի պատմութեան կամ զարգացման կարեւորագոյն մի քանի դրուագի.

բ. Հիւսելու տպագիր կարեւոր Մաշտոցների համառօտ տեսութիւն-գնահատութիւն եւ գրքիս կցելու բնագրի մեզ յայտնի կարեւոր հրատարակութիւնների մի ցանկ.

գ. Ներկայացնելու Մաշտոցի բնագրի քննութեան ասպարէզում կարեւոր դիտուած մի քանի աշխատանք.

դ. Մեր երկու ձեռագրի պարունակած 46+1 կանոնների ցանկը զուգադրելու 1432 թ. - ԺԷ. դ. ընթացքում գրուած եւ Հայ եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ԺԵ-ԺԸ. դարերի ընթացքում գործածուած 15 Մայր Մաշտոցների բովանդակածների հետ եւ պարզելու, որ վերջիններիս մէջ, հնաւանդ Մաշտոցի ունեցած յիշեալ 46+1 կանոնների հետագայում ճոխացուած համարժէքներից բացի, կան նաեւ 70ից աւելի այլ կանոններ.

ե. Ուսումնասիրելու «Կարգաւորութիւն Օրհնութիւնարեր ցուցակի» բնագրի մեզ հասու ձեռագրական բոլոր տարբերակները եւ նրանց տուեալները զուգադրելու մեր նոյն 46+1 կանոնների ցանկին.

զ. Պատրաստելու եւ գրքիս Յաւելուածների շարքում դնելու Մաշտոց Ա. Եղիվարդեցի Կաթողիկոսի վարքի բնագրական խմբագրութիւնները:

Ըստ այսմ՝ այս Ա. հատորի Բ. գրքով ապագայում պէտք է հրատարակուեն մեր պատկերած 15 Մայր Մաշտոցներում առկայ նոյն 46+ նոնների ճոխացուած-ընդարձակուած տարբերակները: Այս ձեւով միեւնոյն կանոնների նախնական-պարզ եւ փոփոխուած տարբերակներն առանձին գիրք-պրակներով հրապարակելը նպատակ ունի յստակ (ոչ խառն-խճողուած տողատակերով) պատկերելու ծէսի զարգացման ընթացքը եւ դրանով իսկ դիւրացնելու հետագայ հետազօտութիւնները:

Իսկ այս գրքի Բ. հատորը պէտք է լինի Մայր Մաշտոցի նոյն 15 օրինակներում առկայ եւ այս պրակի մէջ չընդգրկուած թուով 70ից աւելի կանոնների միատեղումը (ցանկը տե՛ս Յաւելուած ԺԱ.). ըստ որում՝ այս հատորը պատրաստելիս առանձին կանոնների դէպքում երեւի պէտք է նկատի ունենալ նաեւ Ձեռաց (քահանայական) Մաշտոցի աւելի հին օրինակները, միաժամանակ թէ՛ հատորի ամբողջութեան եւ թէ՛ առանձին կանոնների համար Մաշտոցեան Մատենադարանի Մայր

ցուցակի պատրաստող եւ տպագրուելիք հատորների գործածմամբ պէտք է փնտրել նաեւ նախընտրելի այլ ձեռագրեր:

Մի այլ հատոր էլ անպայման պէտք է լինի կաթողիկոսապատկան կանոնների՝ Հայրապետական Մաշտոցը, հիմք ընդունելով հետեւեալ կարեւորագոյն ձեռագրերը. Անթիլիասի Հմր 9 (Սսի օրինակ, շուրջ 1311 թ.)[5], ՄՄ Հմր 4997 (Էջմիածնի օրինակ, 1461 թ.)[6] եւ ՄՄ Հմր 5702 (Աղթամարի օրինակ, 1471 թ.)[7]:

Միով բանիւ, այս ընդլայնումներով պէտք է սկսուի մեր Մաշտոցի ամբողջական հրապարակում-քննութեան աշխատանքի մի ծրագիր, որ թելադրուեց մեր հիմնական նպատակ՝ հնաւանդ բնագրի պատրաստութեան ընթացքով:

Այս ամէնից յետոյ առաւել քան համոզուած ենք, որ այս աշխատանքի շարունակութեան նախապատրաստումը պէտք է անել այնպէս, ինչպէս Ամենայն Հայոց Վազգէն Ա. կաթողիկոսի հոգածութեամբ 1960ի շուրջ արուեց Աստուածաշնչի գիտական բնագրի կազմումն սկսելու համար. առաջին անելիքը ձեռագրական մեր հիմնական՝ մեծ հաւաքածուներում պահպանուող Մաշտոցների ընդհանուր հաշուառումն է (նախնական հետազօտութիւն[8]), որի հիման վրայ արժէ պատրաստել եւ ի մի բերել առաւել արժէքաւոր դիտուած ձեռագրերի պատճէնները, այնուհետեւ պէտք է մշակել աշխատանքային նպատակադիր այն ծրագիրը, ըստ որի եւ արժէ անել մեր ծիսարանի քայլ առ քայլ (զուցէ կանոն առ կանոն կամ ըստ կանոնախմբերի)՝ համակողմանի հրապարակում-հետազօտումը:

---

[5] *Ստացող՝ Կոստանդին կաթողիկոս, 221 թերթ, մագաղաթ, 23,7x17,3. միասիւն, բոլորգիր, 13 տող. տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Կազմեց՝ Անուշաւան վարդապետ Դանիէլեան, Անթիլիաս-Լիբանան, 1984, էջ 96-99:*

[6] *Էջմիածին, գրիչ՝ Ստեփաննոս կրօնաւոր, ստացող՝ Զաքարիա կաթողիկոս, 137 թերթ, մագաղաթ, 18x24. երկսիւն, բոլորգիր, 17 տող:*

[7] *Աղթամար, գրիչ՝ Ներսէս եպս., ծաղկող՝ Կարապետ, 243 թերթ, թուղթ, 21,5x16,5. երկսիւն, բոլորգիր, 15 տող:*

[8] *Ըստ հաւաքածուների մի մօտաւոր աշխատանքային ցանկ արդէն կազմել ենք, սակայն հիմնական անելիքը Մաշտոցեան Մատենադարանի ամենաճոխ հաւաքածուի շուրջ 1.000 միաւոր Մաշտոցների նկարագրում-ճանաչումն է, որ արդէն արւում է մեր Մայր ցուցակի կազմութեան ընթացքին զուգահեռ: ՄՑ ՄՄ Գ. եւ Դ. համառօտմամբ այստեղ յաճախ յիշատակելու ենք այս ցուցակի արդէն տպագրուած Գ. եւ Դ. հատորները. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Գ., Կազմեց՝ Օ. Եգանեան, Երեւան, 2007. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Դ., Կազմեցին՝ Ա. Քէօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քէօսէեան, Երեւան, 2008:*

* * *

Մեր եկեղեցու Ծիսարանն առաջացել է Աստուածաշունչ մատեանի հայերէնացումից անմիջապէս յետոյ[9], իր մէջ ներառելով թէ թարգմանական եւ թէ՛ հայերէնով գրուած միաւորներ. ըստ Գ. վ. Զարբհանալեանի. «Սուրբ Գրոց թարգմանութիւնէն ետքը՝ եկեղեցական բարեկարգութիւն եւ հասարակաց հոգեւոր պաշտամանց անհրաժեշտ հարկ եւ կարգաւորութիւնն պէտք էր որ գրուէր սրբոց Թարգմանչաց աստուածասէր եւ աստուածախնամ միտքն ու սիրտ, եւ նպատակ բլլար իրենց նախապատիւ փութաջան փառակից առ այն»[10], ապա հիմնուելով «Կարգաւորութիւն Օրհնութիւնաց եւ ցուցակի» խորագրով բնագրի[11] վրայ, եզրակացրել է, որ մեր Ծիսարանի հիմնական մասը ձեւաւորուել է ս. Սահակ Պարթեւի եւ ս. Մեսրոպ Մաշտոցի կեանքի օրօք: Ծիսարանի Մաշտոց անուան հիման վրայ յատկապէս ԺԹ. դ. ընթացքում շատ մասնագէտներ համոզուած էին, թէ այն կազմել է Մեսրոպ Մաշտոցը. առ այս վկայակոչենք Հրաչեայ Աճառեանին, որ նախ նկատել է, թէ այդ «կարծիքը թէեւ շատ ունկի տարածուած, սակայն չի հիմնուում մի հին պատմական վկայութեան վրայ. ո՛չ Կորիւն, ո՛չ Փարպեցի, ո՛չ Խորենացի եւ ո՛չ էլ սրանց մօտ կամ հեռու ապրած մի հեղինակ այս մասին չի տալիս որեւէ տեղեկութիւն, եւ յայտնի չէ ինձ, թէ նոր հեղինակները ի՛նչ վկայութեան վրայ հիմնուելով պնդում են այս կարծիքի վրայ»[12], ապա իր քննարկումն աւարտել է ժողովածուի ինք՝ բուն մասերի՝ «աղօթքների, քարոզների ու շարականների» լեզուն ՝հատելով. «բոլորն էլ, առանց բացառութեան, ունեն յետոսկեդարեան լեզու: Նրանց համար, որ գիտեն խորել ոսկեդարեան հայերէնը յետոսկեդարեան հայերէնից, այս հանգամանքը բաւական է հաստատելու համար, թէ Մաշտոցը չի կարող երբեք Մեսրոպի գործը լինել»[13]:

---

[9] Ենթադրելի է, որ գրերի գիւտից առաջ ծէսը մեր եկեղեցիներում կատարուած լինի յունարէնով եւ ասորերէնով՝ զուգահեռ բանաւոր թարգմանութեամբ հանդերձ:

[10] Հ. Գ. վ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, դար Դ–ԺԳ., Վենետիկ, 1889, էջ 245:

[11] Այս բնագիրը եւ նրա խնդիրները տե՛ս ստորեւ՝ Յաւելուած Դ.:

[12] Հրաչեայ Աճառեան, Հայոց գրերը, Երեւան, 1984, էջ 312:

[13] Նոյն տեղում, էջ 319: Տե՛ս նաեւ Ա. Արեւշատեան, «Մաշտոց» ժողովածու, էջ 23-6, ուր վկայակոչուած է հարցին վերաբերող հիմնական գրականութիւնը: Ի դէպ, այս սխալը գալիս է դեռեւս միջնադարից. ծիսարանի շատ օրինակների յիշատակարանների հեղինակներ եւս Մեսրոպ Մաշտոցին համարում են ժողովածուի կարգաւորող, սակայն ուրիշ յիշատակագիրներ էլ գիտեն, որ գործի հեղինակը կաթողի-

Իրաւացին եւ գիտութեան մէջ ներկայումս ընդունուածն այն է, որ Ծիսարանի կանոններն առաջին անգամ դեռեւս վարդապետ ժամանակ մէկտեղել է Մաշտոց Ա. Եղիվարդեցի կաթողիկոսը (897-898 թթ.). սա գիտենք նախ Կիրակոս Գանձակեցուց. «եկաց կաթողիկոս տէր Մաշտոց ամ մի... Սա կարգեաց զգիրսն, որ ըստ անուան իւրում կոչի Մաշտոց, ժողովեալ զամենայն կարգեալ աղաւթսն եւ զընթերցուածսն ի միասին՝ յարմարեալ յաւելուածով յիւրմէ, որ ունի յինքեան զամենայն կարգս հաւատոյ քրիստոնէութեան»[14]: Նոյնը վերահաստատում է նաեւ Գրիգոր Ծերենցի (ԺԴ-ԺԵ. դդ.) Յայսմաւուրքի Սահմի Դ.՝ Հոկտեմբերի ԺԳ. օրուայ ներքոյ գրուած՝ «Վարք եւ յիշատակ սուրբ հայրապետին մերոյ Մաշտոց վարդապետին» շարադրանքը. «լեալ Կ. (60) ամաց՝ եղեւ կաթողիկոս. եւ եկաց տարի մի յաթոռ հայրապետական եւ վախճանեցաւ ի գեղաքաղաքն Գառնի. եւ եդաւ պատուով մօտ ի հովանոց արքային Տրդատայ, ի բերդն Գառնոյ, ՅԽԶ. (897) թվին: Այս վարդապետս Մաշտոց. ընդ բարի վարուց առաքինութեանն իւրոյ, արար եւ բազում ուղղութիւնս կարգաց եւ կրօնից սուրբ եկեղեցւոյ. եւ ժողովեաց զկարգեալսն յառաջին սրբոցն, եւ զթերին ինքն էլից յաստուածային շնորհաց իւրոց եւ եդ ի միում տփի. զկարգն Մկրտութեան եւ զՊսակին, զՀաղորդութեան եւ զԹաղմանն, զՀոգեհանգիստն եւ զԽաչօրհնեայն, զՍերմնօրհնէն եւ զչեղջ, զկալ եւ զհնձանին, զհորս եւ զկարաս, զՋրօրհնէն եւ զՈտնլուայն, զՀիմնարկէք եւ զԵկեղեցի օրհնէքն, զԱւազանին եւ զՊղծեալ տաճարին, զՁեռնադրութեանն եւ զԲահանայաթաղն եւ զայլն ամենայն, որովք վարին մերս կարգաւորութիւն, վասն որոյ եւ անուն գրոցն այն Մաշտոց կոչեցաւ, զի նորին աշխատասէր կամօքն ի մի վայր ժողովեցաւ»[15]:

կոսն է: Աշխատանքիս ընթացքում պատահաբար հանդիպել ենք նաեւ 1655 թ. Զէյթունում գրուած՝ Զմմառի ձեռ. Հմր 112 Մաշտոցի Գրիգոր գրչի այս հաղորդմանը, որ հակասական թուացող տեսակէտների հաշտեցումն է. «կատարեցաւ գիրքս այս, որ կոչի Մաշտոց, զոր արարեալ է մեծ վարդապետն Հայոց Մեսրովբ եւ Յոհան Մանդակունին, եւ այլք ի նախնեացն, զոր հաւաքեալ է ի միում տփի Մաշտոց վարդապետն՝ ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ» (Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Կազմեց Մեսրոպ վ. Քէչիչեան, Վիեննա, 1964, էջ 228): Ըստ այսմ՝ արժէ առանձին համադիր քննութեան ենթարկել Մաշտոց ժողովածուի ձեռագրերի յիշատակարանների հաղորդումները. սա կարող է նպաստել խնդրի եւ նրա մանրամասների ճշգրիտ լուծմանը:

[14] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 81:

[15] Գիրք որ կոչի Յայսմաւուրք, Կ. Պոլիս, ի տպ. Գրիգորի դպրի Մարզուանեցւոյ, ՌՃԻԹ.-1730, էջ ՃԻԱ-ՃԻԲ.:

Յայսմաւուրքի թուարկածը միայն 15 կանոն է, որոնք ներկայ գրքի հետեւեալ համարներն են՝ Ա., Բ., Դ., Ե., ԺԱ., ԺԴ., ԺԸ., Ի., ԻԱ., ԻԲ., ԻԹ., ԼԳ., ԼՁ., ԽԵ.՞, ԽԷ.: Ժամանակով եւ աշխարհագրօրէն Մաշտոց կաթողիկոսին առաւել մօտ եղած Գանձակեցին էլ որեւէ կանոնի անուն չի տալիս, անորոշ են նաեւ «կարգեաց» եւ «յարմարեալ յաւելուածով յիւրմէ» բնորոշումները, որոնցով անհնար է գոնէ մօտաւոր պատկերացում կազմել Եղիվարդեցի կաթողիկոսի արած աշխատանքի բնոյթի, առաւել եւս՝ մանրամասների մասին:

Ուրեմն առայժմ կարելի է դատողութիւն անել միայն կանոնների հաւաքման-մէկտեղման մասին: Այստեղ էլ կարեւոր հարցեր են, թէ Մաշտոցի օրօք գործածութեան մէջ քանի՞ կանոն կար, քանի՞սը եւ արդեօք բոլո՞րը ժողովեց, բայց սրանց էլ որոշակի պատասխան տալու համար փաստեր չկան. ունենք ընդամէնը 3 հին ձեռագիր, սակայն երեքն էլ պակասաւոր են. Ա՝ թերի է վերջից (ունի 46 կանոն եւ Մեռոնօրհնէքի կանոնի գոյութեան յիշատակութիւնը), Բ՝ պակաս է սկզբից եւ վերջից (ունի 27 կանոն), Գ՝ անկումներ ունի մէջտեղից եւ կրկին թերի է վերջից (ունեցել է 46 կանոն, 3ն այժմ ընկած)[16]*:*

Մաշտոցի՝ մեր եկեղեցու ամենագործածական գրքի մասերի մէկտեղման՝ «ի մի տփի» ժողովման խնդիրը դիտարկենք մի այլ իրողութեան հէնքի վրայ. տարօրինակ չէ, որ այս միատեղումը հնարաւոր է եղել միայն Թ. դարի վերջին. աւելի վաղ շրջանում գրանիւթ-մագաղաթի հաստութեան պատճառով մի կազմի մէջ շատ ծաւալուն գիրք, առաւել եւս՝ գրքերի խումբ տեղաւորելն անյարմար, գուցէ նաեւ անհնար էր, ուստի ասենք՝ Աստուածաշնչի գրքերն օրինակւում էին հրէական աւանդոյթով սկզբնաւորուած խմբերով՝ Հնգամատեան, Սողոմոնի, Երկոտասան մարգարէից գրքեր եւ այլն. բնականաբար, նոյն ձեւով ծիսարանի առանձնապէս ծաւալուն միաւորները (Մկրտութիւն, Քահանայթաղ, Աշխարհաթաղ եւ այլն) գրւում էին որպէս առանձին գրքեր[17]*:*

---

[16] *Նկատի ունենք Երուսաղէմի Ս. Յակոբեանց Հ^{րդ} 3299 ձեռագիրը, որի մասին տե՛ս ստորեւ:*

[17] *Յարմարութեան նկատառումով, գուցէ նաեւ գրքից գիրք օրինակելով, մեծ ժողովածուի կազմութիւնից յետոյ անգամ հետագայ դարերում այս աւանդոյթը շարունակուել է, եւ ասենք՝ Քահանայթաղ կամ Աշխարհաթաղ կանոններն օրինակուել են որպէս առանձին գրքեր: Այս տեսանկիւնից տարաբնոյթ ձեռագիր ժողովածուներում առանձին հանդիպող մէկ կամ մի քանի կանոնները պէտք է որ երբեմն լինեն հին՝ նախաժողովածուային աւանդոյթի դրսեւորում-վերապրուկներ. եթէ այս կանխադրոյթը սխալ չէ, ապա ծիսական հին կարգերի կատարեալ պատ-*

4605

Նոյն կերպ Ս. Գիրքը, որ բոլոր առումներով կապակցուած է Մաշտոց ժողովածուի հետ, մի կազմի մէջ տեղաւորելը հնարաւոր դարձաւ Մաշտոցից երեք հարիւրամեակ յետոյ՝ ԺԲ. դ. վերջերին, երբ մշակման եղանակի զարգացման շնորհիւ մագաղաթն արդէն անհամեմատ նուրբ եւ բարակ էր: Հանրայայտ է, որ հայ իրականութեան մէջ Աստուածաշունչն առաջինն «ի մի տփի» է ժողովել Ներսէս Լամբրոնացին[18]*: ԺԳ. դ. վերջին Մովսէս վ. Երզնկացին Կիլիկիայում իր պատուէրով գրուած Աստուածաշունչի Դանիէլի մարգարէութիւն գրքի վերջում գրել է. «Փառաւորէ մարգարէն Աստուած զհոգի տեառն Ներսէսի Լամ[բ]րոնեցւոյ, որ ի վերայ ամենայն յաւելուածոց բարեացն, զոր պարգեւեաց ազգիս մերում՝ թարգմանութեամբ եւ մեկնչութեամբ բազմաց տառից, եւ զայս եւս յաւել, շնորհելով մեզ ի միասին զհաւաքումն աստուածաշունչիցս, նախանձ բարի արկանելով ամենեցուն, զի մինչեւ ցնա ոչ երբեւէր թէ լինեալ էր յազգիս մերում. եւ ի մերումս ժամանակի գրեթէ երկուս կամ երիս միայն տեսաք յաւելեալք զկնի նորա: Եւ տե՛ս զտարտամութիւն ազգիս, զի այժմ հարիւր ամ կամ թէ եւս աւելի ի նմանէ մինչ առ մեզ, եւ այնչափ գոն աճեցեալք, որչափ ասացաք»*[19]*: Լամբրոնացու ժողոված օրինակը, բնականաբար, չի պահպանուել: Նաեւ զարմանալի չէ, որ Մովսէս Երզնկացին տեսել է «Հաւաքումն աստուածա-*

կեր պարզելու առումով այսպիսի օրինակութիւնները կարեւոր են եւ անպայման համեմատելի-հետազօտելի:

[18] *Մանրամասները տե՛ս Հ. Ներսէս վ. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի. արքեպիսկոպոս Տարսոնի. Կեանքն եւ գրական վաստակները, Վիեննա, 1956, էջ 318 (այսուհետեւ՝ Ակինեան, Լամբրոնացի):*

[19] *ՄՄ ձեռ. Հ^{րդ} 177, 418բ. հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա., Կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Երեւան, 1984, էջ 712, Գ. կթղ. Յովսէփեանն այս յիշատակարանը՝ «Ըստ բովանդակութեան», տպագրել է 1198 թ. ներքոյ. տե՛ս Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 607-9 (այսուհետեւ՝ Յիշ-ք): Մի տեղ ասելով թէ «Սոյն տեսակէտը հիմնուած է յիշատակարանի մը վրայ՝ գրուած 1298ին, Մովսէս Երզնկացիի ձեռքով, գովելու համար Ներսէս Լամբրոնացին» (Շ. արքեպս. Աճէմեան, Ցուցակ Աստուածաշունչ մատեանի հայերէն ձեռագիրներուն, Լիզպոն, 1992, էջ ՃԴ.), փորձ է արուել համոզելու, թէ Լամբրոնացուց շատ առաջ՝ 1149 թ., Ներսէս Շնորհալին արդէն Աստուածաշունչը ժողովել եւ օժտել էր սեփական ոտանաւորներով, սակայն ոտանաւորները վերաբերում են ոչ թէ ամբողջ Աստուածաշնչին, այլ միայն Հնգամատեանին, Յեսուի, Դատաւորաց եւ Հռութի գրքերին (տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Ա., Յօրինեց Հ. Բ. վ. Սարգիսեան, Վենետիկ, Սուրբ Ղազար, ՌՅԿԳ.=1914, էջ 4-5), որ նշանակում է, թէ Շնորհալու ձեռքին եղած Աստուածաշունչը պարունակել է միայն այդ գրքերը:*

չունչից» ժողովածուի՝ Լամբրոնացուն յաջորդած Հայրերից աւելի տարուայ ընթացքում ունեցած ընդամէնը «երկու կամ երիս» օրինակ. պատճառը միջնադարում հաղորդակցութեան դանդաղութեան եւ ընդհանրապէս «նոր հրատարակուած» գրքի մասին ուշ կամ շուտ իմանալու հնարաւորութեան մէջ է: Այժմ մեզ յայտնի հնագոյն ամբողջական օրինակը, որ կրկին կորսուած է եւ ընդմէջ Աստուածաշնչի գրքերի ունեցել է Մաշտոցի 13 կանոն[20] *(Նաեւ Ժամագիրք, Պատարագամատոյց, Տօնացոյց), 986 թ. գաղափար օրինակից 1253-5 թթ. Կիլիկիայի «տաւրոսեան վանքերէն» մէկում Միքայէլ քահանայի եւ Զախարի ձեռքով գրուել է Կոստանդին կրօնաւոր քահանայի համար*[21]*: Չիմացութեան պատճառով յաճախ կարող էին նաեւ կրկնել նոյն գործը. ասենք՝ մեզ յայտնի երկրորդ ամբողջական Աստուածաշնչի գրիչ Կարապետ քահանայի եւ Այլիկի (Այլկան) որդի Յովհաննէս Հացեկացի երէցը 1256 թ. Մամեստիա (Մսիս) քաղաքում գրել է. «Հաւաքեցի զամենայն գիրս Աստուածաշունչ Հին կտակարանաց, եւ եդի ի միասին եւ զպատմութիւն Մակաբայեցւոց»*[22]*: Նոյնը 1269 թ. արել է նաեւ Եկեղեաց գաւառի առաջնորդ Սարգիս Երզնկացին. «մեծաւ փափաքանաւք եւ ջերմեռանդն սիրով շարժեալ եղեւ ի Հոգւոյն Սրբոյ հոգիընկալ միտս սորա՝ ժողովել ի մի վայր զամենայն տառս հոգենուագ մարգարէիցն եւ զՔրիստոսի Աստուծոյ մերոյ տնաւրէնութեանն, զկենսաբեր քարոզութիւնն եւ զհանգամանս, եւ զսրբոց առաքելոցն գործս եւ զնոցին քարոզութիւնն եւ զՏեսիլն Յովհաննու աւետարանչի»*[23]*. եւ սա մեզ յայտնի երրորդն է: Յայտնի են Մովսէս Երզնկացու օրինակին նախորդող եւս երեք ձեռագիր.*

4րդ. ՉԺԹ.-1270 թ., Երեւանի Հմր 345. Կիլիկիա, գրիչ՝ Բարսեղ եպս., Յովհաննէս Արքաեղբայր (375բ-486ա), ստացող՝ Յովհաննէս արքաեղբայր:

5րդ. ՉԼԲ.-1283 թ., Երեւանի Հմր 1500. Ճառընտիր. Այրիվանք. գրիչ եւ ստացող՝ Մխիթար Այրիվանեցի, ծաղկող՝ Սարգիս գրիչ:

6րդ. ՉԼԴ-ՉԼԷ.-1285-1288 թթ., Պուրսա Բիւթանիոյ, Ս. Աստուածածին եկեղեցի, Սկեւռա, գրիչք՝ Խաչատուր, Աստուածատուր քհյ, Ստեփաննոս Գոյներիցանց, ստացող՝ Խաչատուր (գրիչը թելադրութեամբ իր ուսուցիչ Գէորգ Սկեւռացու)[24]*:*

Ի վերջոյ վկայակոչուած Մովսէս Երզնկացու օրինակը 7-րդըն է, որից յետոյ միայն յաճախանում են Աստուածաշունչի ամբողջական օրինակները:

ՄԱՇՏՈՑԻ ԿԻԼԻԿԵԱՆ ՇՐՋԱՆԸ

Յայտնի է, որ մեր պատմութեան կիլիկեան շրջանում Հայ եկեղեցու ծէսն ընդհանրապէս էական փոփոխութիւնների է ենթարկուել: Առանձնապէս Ներսէս Շնորհալու եւ նրա յաջորդների շրջանում՝ յարգելիս բիւզանդական եւ արեւմտեան եկեղեցիների հետ առընչութիւնների եւ բանավարութիւնների, զանազան մանր եւ մեծ եկամուտներ ընդունելով, մեր ծէսն աստիճանաբար կորցրել է սկզբնական անպաճոյճ պարզութիւնը:

---

[20] *Ձեռագրի թերթերի կարգով՝ ներկայ գրքի շարքի Ը., Է., Ժ., ԼԶ., ԽԱ., ԽԲ., ԽԳ., ԽԹ., Ե., Թ., ԼԳ., ԺԳ., ԺԸ. համարները:*

[21] *Տե՛ս Բաբգէն աթոռակից կաթողիկոս [Կիւլէսէրեան], Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 275-90, ձեռ. Հմր 45:*

[22] *Տե՛ս Սահակ Ա. Մուրատեան, Նազարէթ Պ. Մարտիրոսեան, Ցուցակ ձեռագրաց Մշոյ Սբ. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, խմբագրեց Արա Գալայճեան, Երուսաղէմ, 1967, էջ 7, ձեռ. Հմր 4. ցաւալիօրէն կորսուած այս ձեռագիրը պարունակութեան եւ գրքերի դասաւորութեան առումով շատ ուշագրաւ է: Սրա գրչութեան 1256 թուականը ցուցակում գրուած է բառերով՝ «յամի եւթն հարիւրերորդի հինգերորդի հայկազեան տոմարի»: Եթէ սա բնագրից է բխում եւ եթէ յաջորդը Ե-Է. շփոթով չէ վերարտադրուել, ապա Ալիշանի «Հայկարան» նիւթերի Ը՝ յիշատակարանների հատորից քաղուածը վերաբերում է նոյն գրչի գրած մի այլ ձեռագրի. «ՉԷ.-1258 թ., Առ Սիմոն Պապայ ի Կալիփոռնիա. Աստուածաշունչ. յիշ՝ «Ի թուին հայոց ՉԷ., յամսեանն Մարգաց ես Յոհաննէս երէց նուաստ ծառայ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ եւ որդի Կարապետ քահանայի, յերկրէն Տարաւնոյ, ի գեղջէն Հացեկաց, ցանկացեալ եղէ Աստուածաշունչ գրոց, ժողովեալ ի միասին, զի նախ քան զայս գիրքս գրեալ է յայլում տեղւոջ երիս հատորս. գրել եւ ի մի տուփ հաւաքել զՀին եւ զՆոր կտակարանս». տե՛ս Մեսրոպ արքեպս. Տէր-Մովսիսեան, Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց. Աստուածաշունչ, Հմր ԻԳ. (ՄՄ, Անտիպ ձեռագրացուցակ Հմր 133):*

[23] *Երուսաղէմի Ս. Յակոբեանց ձեռ. Հմր 1925. 413բ. տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Զ., Կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1972, էջ 414 (այսուհետեւ՝ Երուսաղէմի ցուցակ):*

[24] *Տե՛ս Տ. եպս. Պալեան, Պրուսայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ձեռագիր Աստուածաշունչը՝ 1285-1287.- «Լոյս», 1906, էջ 1166-72, 1191-6, 1216-21: Գ. վ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, դար Դ-ԺԳ., Վենետիկ, 1889, էջ 156-7,* Месропъ Теръ-Мовсесянъ, История перевода Библии на армянский языкъ, С. Петербургъ, 1902, *էջ 92, Հմր 7, SK1: Յիշատակարանը՝ Հ. Ղ. վ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, յօդ. Հմր 339, էջ 496-7, նաեւ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԳ. դ., Կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան, 1984, էջ 617-9, Հմր 500:*

Մաշտոցի կրած փոփոխութիւնները երբեւէ յատուկ հետազոտման նիւթ չեն դարձել[25], բացի Վիեննայի Մխիթարեան միաբանութեան ընդհանրական աբբահայր, մեր հանգուցեալ բարեկամ Սահակ վ. Ճեմճեմեանի (1939-1996) արած՝ Մկրտութեան կանոնի հրատարակութիւն-քննութիւնից, որի մասին խօսելու ենք ստորեւ: Ծիսարանին վերաբերող ամենաէական իրադարձութիւնները կատարուել են երեւի թէ Լեւոն Բ. Ռուբինեան իշխանի թագադրման եւ Կիլիկեան Հայաստանի միջազգային ճանաչման նախօրէին[26]: Ղուկիոս (Լուսիոս) Գ. պապի բանագնաց Գրիգոր եպիսկոպոսը 1185ի հոկտեմբերին հասել է Տարսոն՝ Գրիգոր Տղայ կաթողիկոսի մօտ եւ նրան տուել «զպատասխանի նամակի տեառնս մերոյ (Լեւոն Բ. իշխանի - Գ. Տ-Վ.) եւ զգիրս Կարգաց եկեղեցւոյ Հռոմայեցի գրով»: Կաթողիկոսը նամակը եւ Կարգաց (ծէսի) գիրքը տուել է Ներսէս Լամբրոնացուն՝ «յիմ նուաստութիւնս՝ թարգմանել, որ յեղաշրջեցի ի հայ բարբառ. միայն երիւրեալ գրանսն քերդողական արհեստի՝ առանց յաւելուածոյ եւ թերութեան»: Այս խօսակցութիւնը վերաբերում էր Լեւոնի թագադրմանը. թագադրողը պէտք է լինէր Գերմանիայի Փրեդերիկոս Շիկամօրուս կայսրը, որ, սակայն, 1190ին Սելեւկիա գետում «գետամոյն» եղաւ եւ վախճանուեց: Այսուհանդերձ թագ ստանալու ձգտումներն ու բանակցութիւնները շարունակուեցին, այդ ընթացքում կաթողիկոսը Լամբրոնացուն «հրաման ետ զայն (կարգն օրհնութեան թագաւորի) թարգմանել, զոր կատարեցի յօրինակէ միոյ եպիսկոպոսաց նորին, որ առ իս (ի Տարսոն) իջեւանէր, Մունստեր քաղաքի... եւ յորժամ թարգմանեցի, (գերմանացիք) խորհեցան եւ ոչ կարացին յանձն առնուլ զգործն՝ յորժամ ինքնակալն բարձաւ ի միջոյ... Իսկ ես զթարգմանեալ օրհնութիւն թագաւորիս ոչ կամեցայ աղաւաղել, եղի ընդ նախաթարգմանեալ կարգսդ վերստին յարմարմամբ»: Թագաւորօրհնէքի թարգմանութիւնը նրա համար էր, որպէսզի Լեւոնը թագադրուի (հայկականի՞ հետ) նաեւ լատինական ծէսով:

Ըստ Ն. վ. Ակինեանի՝ «Եթէ Ներսէս Միւնստերի եպիսկոպոսի օրինակէն կը թարգմանէ Թագաւորօրհնէքը, պիտի հետեւցնենք, թէ այն կը պակսէր Եկեղեցւոյ Կարգաց գրքին մէջ: Այդ թարգմանութիւնը զոր կատարած էր, թերեւս սակաւ ինչ ազատօրէն եւ յապաւումներով, չուզեց «աղաւաղել», այսինքն՝ ոչնչացնել, այլ վերստին յարդարումով զետեղեցի. կ'ըսէ. Եկեղեցւոյ կարգաց գրքին մէջ, որ «նախաթարգմանեալ» էր. անոր կից պահելով նաեւ այս օրինակը: Թէ այս իմաստով պէտք է հասկնալ Լամբրոնացւոյ տողերը. կը հաստատեն Էջմիածնի թ. 1026 եւ Երուսաղէմի թ. 2673 ձեռագիրները, որոնք կը ներկայացնեն երկու Թագաւորօրհնէք, մին «ըստ մեծի եկեղեցւոյ Հռոմայ», եւ միւսը «ըստ Հայաստանեայցս ուրինաց»... անոնցմէ մին գործածուեցաւ ապա 1199 յունուար 6ին եւ յաջորդ շրջանին»[27], այսինքն՝ Լեւոն Բ. իշխանի եւ նրա յաջորդների թագադրութիւնների ժամանակ:

Այսպիսով, լատինական ծիսարանը 1190 թ. շուրջ Ներսէս Լամբրոնացու ձեռքով թարգմանուեց հայերէնի: Թէկուզ ըստ Ն. վ. Ակինեանի՝ «Ներսէս Լամբրոնացին թարգմանած է Լատին Ծիսարանը պարզապէս ծանօթացնելու համար զայն հայ ծիսագէտներու կամ ծիսասէրներու, եւ ոչ թէ գործածութեան համար... Ներսէս ինքնին հայ մեծագոյն ծիսասէրն եւ ծիսագէտն էր. եւ գործէս առաջին հաճոյքն ինքը վայելած էր... Անծանօթ չէին իրեն լատին, յոյն, ասորի, խպտի եւ այլ ծէսեր, որոնց ծանօթացած էր այցելութեամբ այդ ծէսերով բարգաւաճած եկեղեցիներ Տարսնի, Կիպրոսի, Անտիոքի եւ Սեաւ Լեռան վանքերու մէջ...»[28], եւ թէկուզ այս թարգմանութեան պահպանուած ձեռագրերը շատ չեն (նշանակում է, թէ երբեւէ ընդհանրական գործածութիւն չի ունեցել), ուստի եւ նրանից ունենք ԺԴ. դ. պակասաւոր մի օրինակ եւ վերջինիցս 1788 թ. արտածուած մասնական մի ընդօրինակութիւն.

ա. ՄՄ ձեռ. Հմր 1026. Մաշտոց ԺԴ. դ., 386 թերթ, թուղթ, 16,3x11. միասիւն, բոլորգիր, 16 տող (ՄՄ ՄՑ, Դ., էջ 99-108).

բ. Մխիթարեան Վիեննայի ձեռ. Հմր 610. Հաւաքածու, 1788 թ., Պոլիս, գրիչ եւ ստացող՝ Գրիգոր. 116 թերթ, թուղթ, 23x18. միասի՞ւն, շղագիր, 30-41 տող[29]:

---

[25] Կարծում ենք՝ այդպիսի քննութիւնները հնարաւոր են դառնալու ներկայ բնագրի հրապարակումից յետոյ:

[26] Մանրամասները տե՛ս Ակինեան, Լամբրոնացի, էջ 302-16:

---

[27] Նոյն տեղում, էջ 303-4:

[28] Նոյն տեղում, էջ 306-7, ուր կայ նաեւ աւելին. «յընթացս դարուց այդ Ծիսարանի թարգմանութենէն մասեր փոփոխութեամբ անցան հայ Ծիսարանին, ինչպէս Եպիսկոպոսօրհնէքն, Կաթողիկոսօրհնէքն, Միւռոնօրհնէքն, նաեւ Քահանայութեան կարգին Ա.-Է. աստիճանները եւ այլն»: Թուարկած առաջին երեք կանոնի լատինական ծագումը կասկածելի է, ուստի եւ քննութեան արժանի, սակայն ստորին աստիճանների կանոնները եթէ լիովին լատինական էլ չեն, ապա ԺԵ. դ. Առաքել Սիւնեցու ջանքերով ձեւուել են նրա հիմքի վրայ:

[29] Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հտ. Բ., Կազմեց Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 77-80:

Լամբրոնացու թարգմանութեան ոչ միայն ամբողջութիւնը չի պահպանուել, այլեւ նոյն այդ ամբողջութիւնը վերականգնելը դժուար է (բայց ո՛չ անհնար), սակայն դար-դարուկէս անց նրա գոյութիւնը յիշելու հարկ է եղել. 1307 թ. Սսի եւ 1316 թ. Ադանայի «միաբանական» ժողովներին յաջորդեցին մինչեւ 1362 թ. ձգուած հայ-լատինական եկեղեցական բանակցութիւնները, դեսպանագնացութիւնները եւ քննարկումները տխրահռչակ՝ «Հայոց 117 մոլորութիւնների» ցուցակի, որի գլխաւոր յօրինիչը Մ. վ. Զամչեանի բնորոշմամբ «կրկնակնունք խռովարար» Ներսէս Պալիանենցն էր: Ահա այս ընթացքում, վստահաբար 1340 թ. շուրջ եւ անպայման Սսի հայրապետանոցում, յիշեցին Լամբրոնացու թարգմանութիւնը, նրա կանոնները խառնեցին հայկական աւանդական ծիսարանին եւ ստացան մի խառնամաշտոց, որ ունի ուղիղ 103 կանոն եւ որ հետագայում գիտութեան մէջ ստացաւ «Սսեցւոց» Մաշտոց անունը: Սա եւս, բարեբախտաբար, շատ չտարածուեց՝ մեզ հասած ամբողջական օրինակներն ընդամէնը երկուսն են.

ա. Մխիթարեան Վենետիկի ձեռ. Հմր 1173/332. Մաշտոց ԺԴ., ՉՂԴ.-1345 թ., Սիս, գրիչ եւ ծաղկող՝ Գրիգոր դպիր, ստացող՝ Յովհաննէս եպս.՝ աթոռակալ Սրբոյ առաքելոյն Բարդողոմէոսի յԱգրակ. 408 թերթ. մագաղաթ, 18x12. երկսիւն, բոլորգիր, 26-31 տող (Վ.Ց, Գ., էջ 143-196).

բ. ՄՄ ձեռ. Հմր 973. Մաշտոց ԺԷ. դ., ստացող՝ Պօղոս արքեպս., առաջնորդ Եւդոկիոյ. 344 թերթ, 20,3x14,8. երկսիւն, բոլորագիր, 27 տող. սա նոյնաբար օրինակուած է առաջինից[30]:

Սրա՝ Սսի հայրապետանոցում ստեղծուած լինելու մեր ենթադրութեան հիմնական կռուանն այն է, որ առաջին ձեռագրի գլխաւոր յիշատակարանում գրիչը խնդրում է յիշել «եւ զԳրիգոր եկեղեցպանն՝ զսպասաւորն աջոյն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, որ զօրինակն շնորհեաց» (407ա): Այսինքն՝ անկասկած է, որ Լուսաւորչի աջը եւ նրա «սպասաւոր»-պաշտօնեան Սսի կաթողիկոսարանում էին, իսկ ստացող Յովհաննէս եպիսկոպոսն անպայման այդ ժամանակի մեր եկեղեցական կեանքում շատ կարեւոր դեր ունեցող Ագրակի Ս. Բարթուղիմէոսի թեմի առաջնորդն էր:

Բ. վ. Սարգիսեանը Մաշտոցի այս տարբերակը բնորոշել է հետեւեալ կերպ. «Մաշտոցս իր տեսակին մէջ ամենափարթամն է՝ նորանոր կանոններով, որոնցմով բաւականութիւն կը ստանան քրիստոնէական կեանքի եւ վիճակներու ամէն պիտոյք օրհնութեամբ եւ ծիսակատարութիւններով. եւ ահա ասոր համար մեծապէս ուշագրաւ՝ հայկական ծիսարանի զարգացման պատմութեան համար» (Վ.Ց, Գ., էջ 190): Իսկ Ս. վ. Ճեմճեմեանը Մկրտութեան կանոնի տեսանկիւնից այս ձեռագիրը գնահատել է հետեւեալ կերպ. «Համադրութիւն մըն է լատին ու հայ արարողութիւններուն, ուր հայկական մկրտութեան բնագիրը մնացած է իր ամբողջութեամբ, բայց զանազան տեղեր աւելցած են լատինական մկրտութեան հատուածներ: Այս ձեռագիրը իր անուղղակի ազդեցութիւնը ունեցած է մեր ներկայ գործածած տպագիր Մաշտոցին վրայ»[31]:

Հետեւելով Ն. վ. Ակինեանին[32], Համառօտ ցուցակից[33] յետոյ ընդարձակի մէջ եւս[34] երկրորդ ձեռագիրը համարուած է՝ «Ներսէս Պալեանենց, Մաշտոց», որ հիմնովին սխալ է, որովհետեւ լատիներէնից Պալիանենցի թարգմանած Մաշտոցն այլ՝ հետեւեալն է.

Մխիթարեան Վենետիկի ձեռ. Հմր 86/368. Մաշտոց ԽԹ., 1346-7 թթ., [Աւինիոն, թարգմանիչ, գրիչ եւ ստացող՝ Ներսէս Պալիանենց]. 171 թերթ, մագաղաթ, 22,2x17. երկսիւն, բոլորգիր, 22-23 տող: Ունի ձեռնադրութեան 18, ծիսական 72 եւ արարողական 46, ընդամէնը՝ 136 կանոն (Վ.Ց, Գ., էջ 347-60):

Սրա նկարագրութեան մէջ եւս թիւրիմացութիւն կայ՝ «Գրիչ՝ հաւանաբար Բարթուղիմէոս եպս. Պոլոնիացին, ձեռնտուութեամբ Յովհաննէս Քռնեցի[ի] (անունը ջնջուած է)» (Վ.Ց, Գ., էջ 347. հմմտ. էջ 360)[35], որ անհնար է, որովհետեւ Բարթուղիմէոսը մահացել էր 1333 թ., իսկ Յովհաննէս Քռնեցին՝ 1347 թ. Քռնայում, մինչդեռ այս Մաշտոցը նոյն 1347ին դեռ գրւում էր, այն էլ՝ Աւինիոնում, ըստ որում՝ նրա շարադրոգը նկարագրել-արձանագրել է նաեւ նոյն Աւինիոնում «աչօր» խրովք տեսած ծէսերը: Բարեբախտաբար Պալիաննեցի Մաշտոցը եւս հեղինակային միակ օրինակով մնացել է մեկուսի եւ բոլորովին չի գործածուել, այսինքն՝ զուտ պատմական արժէք ունի:

---

[30] Առաջինի մէջ կան հետագայ ձեռքով արուած միջամտութիւններ, որոնք նոյնութեամբ արձանագրուել են սրա մէջ:

[31] Բազմավէպ, 1971/1-2, էջ 35:

[32] Տե՛ս Ցուցակ ձեռագրաց ՀՍԽՀ Վաղարշապատի պետական Մատենադարանի, Վաղարշապատ, 1924-1928, ՄՄ Անտիպ ձեռագրացուցակ Հմր 96, մասն Գ., էջ 897ա եւ 898ա:

[33] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա., Կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան. Ներածութիւնը՝ Օ. Եգանեանի [«Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները»՝ էջ 13-214], խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, 1965, էջ 450 (այսուհետեւ՝ Համառօտ ցուցակ ՄՄ, Ա.):

[34] ՄՄ ՄՑ, Գ., էջ 1535-44:

[35] Մխիթարեան միաբանութեան ընդհանրական աբբահայր Եղիա ծ. վ. Քիլաղպեանի արտօնութեամբ Վենետիկի Հմր 1173 եւ 86 ձեռագրերի թուային պատճէնները 2009 թ. օգոստոսին մեզ համար պատրաստել է լուսանկարիչ Հրայր-Բազէ Խաչերեանը. երկուսին էլ երախտապարտ ենք:

Սակայն բոլորովին այլ է Սսեցւոց Մաշտոցի պարագան. թէ Լամբրոնացու թարգմանութեան չպահպանուած կամ պահպանուած օրինակներից եւ թէ՛ Սսեցւոց Մաշտոցի օրինակներից նրա տարբեր կանոններ անցել են ԺԴ. եւ յաջորդ դարերի որոշ Մաշտոցների մէջ եւ սկսել են ազդել հայկական ծէսի վրայ, ընդհուպ մինչեւ նշանտուք-պսակի խորհրդանիշ անզարդ պարզ օղ-մատանիի աւանդոյթի արմատաւորումը մեր իրականութեան մէջ:

Ապագայ հետազօտողների գործը դիւրացնելու՝ Լամբրոնացու թարգմանած լատինական եւ նրա գործածումով առաջացած Սսեցւոց Մաշտոցների ազդեցութիւններն արագ ճանաչելի դարձնելու համար գրքիս յաւելուածների (Է. եւ Ը.) մէջ դրել ենք նրանց կանոնացանկերը ըստ Երեւանի Հմր 1026 եւ Վենետիկի Հմր 1173/332 Մաշտոցների[36]:

Հ. Ներսէս վ. Ակինեանն այլ ձեռագրերի նոյնական կանոնների յիշատակումներով արել է Լամբրոնացու թարգմանութեան ձեռագրի նկարագրութիւնը[37], փորձելով պարզել նաեւ կանոնների լատիներէն հիմքերը. «Առանձին աշխատանք կը պահանջէ հայերէն թարգմանութեան մասերու համապատասխան լատին բնագիրները վեր հանել: Լատին Ծիսարանի անթիւ ձեռագիրներու մէջ բազմատեսակ ձեւերով պահուած է մէն մի կանոն: Ունիմ տրամադրութեանս տակ Edmund Martène, De antiques ecclesiae ritibus, t. I-IV, Venetiis, *1783*, ուր սակայն թէեւ կը տեսնուին նմաններ, բայց ոչ հայ թարգմանութեան ծառայած բնագիրները»[38]: Նրա դիտարկումները մեր կազմած կանոնացանկի մէջ բերել ենք հետեւեալ եղանակով. «Ակ. 309, Հմր 2 (հմմտ. Martène, II, *85*): Զմմառ 331, 36ա-78բ: 343, 98ա: Վիեննա 51, 2ա». այստեղ 309ը Ակինեանի գրքի էջահամարն է, մնացեալը՝ նրա ծանօթութիւնները՝ Զմմառի եւ Վիեննայի ձեռագրերի համապատասխան կանոնների յիշատակումներ: Այսպիսի ծանօթութիւններ չունեցող կանոնների մասին Ակինեանն ունի հպանցիկ մի նկատում. թէ կարող են լինել նոյն Լամբրոնացու ձեռքով բիւզանդական ծիսարանից արուած թարգմանութիւններ: Այս ձեռագրի ցանկի մէջ նշանակել ենք նաեւ որոշ կանոնների՝ Սսեցւոց Մաշտոցի համարժէքները. օրինակ՝ Ժ. միաւորի մէջ. «Սս. Մշտ. ՂԷ.»:

ՏՊԱԳԻՐ ՄԱՇՏՈՑՆԵՐԸ

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ԺԹ. դ. երկրորդ կէսից ի վեր եւ ներկայումս ծէսի մէջ գործածւում են միմիայն տպագիր Մաշտոցները[39], անհրաժեշտ ենք համարում անպայման նկատառելի մի քանի հրատարակութիւնների վերաբերող ընդհանուր գնահատում-դիտարկումներ անել:

Մաշտոցը մեր եկեղեցու ծիսական ժողովածուների շարքում գործածականութեան առումով երեւի թէ Աւետարանից յետոյ երկրորդն է[40]: Ծիսարանի Ձեռաց (առձեռն) տարբերակը միշտ եղել է մեր քահանայի ամենօրեայ գործածութեան գիրքը, նրա աշխատանքի հիմնական գործիքը[41]. սրանով է պայմանաւորուած այն փաստը, որ մեր ձեռագրական ժառանգութեան մէջ Աւետարաններից յետոյ բազմաքանակութեամբ յաջորդը Մաշտոցի օրինակներն են (օրինակ՝ Երեւանի Մատենադարանում կայ Մաշտոցի եւ նրա կանոններ պարունակող շուրջ 1000 ձեռագիր), նոյն պատճառով էլ Ձեռաց (առձեռն) Մաշտոցի առաջին հրատարակութիւնը լոյս է տեսել հայ գրատպութեան գրեթէ սկզբում. 1569 թ. Պոլսում, Աբգար դպիր Եւդոկիացու ձեռքով[42]. պահպանուած օրինակի (ՄՄ ձեռ. Հմր 8264) համեմատ սրա մէջ կան Մկրտութեան, Պսակի, Հաղորդ տալու, Աշխարհաթաղի կանոնները:

---

[36] Անշուշտ, մեր իրականութեան մէջ եղել են նաեւ քաղկեդոնական եւ միաբարական (ունիթորական) ծէսեր եւ ծիսական գրքեր, ի վերջոյ՝ ԺԷ. դարից ի վեր կայ նաեւ «Լեհահայոց Մաշտոց» խրոզութիւնը, բայց սրանց անդրադառնալը մեր խնդիրների շրջանակից դուրս է:

[37] Տե՛ս Ակինեան, Լամբրոնացի, 1956, էջ 308-16:

[38] Նոյն տեղում, էջ 307-8:

[39] Ընդհանրապէս կարեւոր եւ անհրաժեշտ է նաեւ Մաշտոցի տպագիրների համադիր քննութիւնը, հնարաւորութեան դէպքում պարզելով նաեւ նրանց հիմք-ձեռագրերը, սակայն սա մեր ներկայ նպատակից դուրս՝ առանձին խնդիր է:

[40] Մեր հանգուցեալ բարեկամ Սահակ վ. Ճեմճեմեանի գնահատումն այս է. «Հայկական ձեռագիրներու մէջ Մաշտոցը յետ Աստուածաշունչին, ամէնէն աւելի օրինակուած սրբազան գիրքը եղած է» (Բազմավէպ, 1971/1-2, էջ 25): Եթէ Աստուածաշունչ ասելով նկատի ունի նաեւ Աւետարանը, ապա մեր եւ իր սասծի մէջ հակասութիւն չկայ. ամբողջ աշխարհում պահպանուած հայերէն ձեռագրերի շարքում հաշուել ենք Աստուածաշնչի գրքեր պարունակող 700ից աւելի միաւոր, իսկ Աւետարանների քանակը երեւի թէ 6.000 թուի շուրջ է:

[41] Կան յիշատակարանային վկայութիւններ, ըստ որոնց նորընծայ քահանաներն իրենց Մաշտոցն օրինակել են ձեռնադրութեանը յաջորդած քառասունքի ընթացքում:

[42] Տե՛ս Հայ գիրքը 1512-1800 թուականներին, Հայ հնատիպ գրքի մատենագիտութիւն, [Կազմեցին] Ն. Ա. Ոսկանեան, Ք. Ա. Կորկոտեան, Ա. Մ. Սաւալեան, Երեւան, 1988, էջ 12, նկրգր. Հմր 13 (այսուհետ՝ Հայ գիրքը 1512-1800 թթ.):

Երկրորդ տպագիրը եւս նոյն ամենագործածական, այսինքն՝ Ձեռաց Մաշտոցն է, որ մեր եկեղեցին տպագիր գրքերով ապահովելու իր հիմնական եւ մեծագործ նպատակ-ծրագրի շրջանակում. 1667 թ. Ամստերդամում իրագործել է Ոսկան Երեւանցին[43]: Սա ունի հետեւեալ կանոնները. Ջրօրհնէքի, Մկրտութեան, Պսակի, Հոգորդ տալու, Աշխարհաթաղի (Այգալացով եւ Եօթնօրէքով հանդերձ), Տղաթաղի (Այգալացով), Ապաշխարող արձակելու, Ոտնլուայի, Քահանայաթաղի (Բ-է. աւուրց ծէսերով հանդերձ), Կոչումն ապաշխարութեան, Քարոզ պատուիրանին, Ժամահար օրհնելու, Խաչալուայ տանելու, Աղօթք առ հիւանդն, Օրհնութիւնք Այգի, Հանդերձի, Սկիհի, Նոր գրքի, Խունկի, Նաւակատեաց, Սեղանի, Աղօթք վասն երաշտի, Արմտիքի եւ սերմանց, Խաղողի օրհնութեանց կանոնները եւ Աւետարանք բժշկութեան:

Փոքր տարբերութեամբ գրեթէ նոյնն են նաեւ յաջորդները՝ Ոսկանի քեռորդի Սողոմոն Լեւոնեանի հրատարակութիւնը (Մարսէլ, տպ. Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի, 1676, 4+304=308 էջ[44]), միւսը՝ Կ. Պոլիս. տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցու, 1704 թ. (642 էջ) եւ ընդհանրապէս Ձեռաց Մաշտոցի այլ հրատարակութիւնները:

Մաշտոցի տպագրութիւնների լաւագոյն ամփոփ բնորոշումն արել է Ս. վ. Ճեմճեմեանը. «Այսօր Հայ Եկեղեցւոյ զոյգ համայնքներու գործածած տպագիր Մաշտոցները չեն հետեւիր ոչ մէկ ձեռագիր Մաշտոցի, այլ արդիւնք են հրատարակիչներու, որոնք օգտուելով զանազան ձեռագիրներէ, մանաւանդ ԺԸ. դարուն երեւան եկած նորաձեւութիւններով ճոխ Մաշտոցներէ, չափազանց խճողած են արարողութիւնը. եւ որովհետեւ կատարած են զայն հեղինակութեան մը հաւանութեամբ, այսօր դարձած են անձեռնմխելի ու սրբազան բնագիրներ: Եւ սակայն, իրականութեան մէջ, ոչ միայն հեռացած ենք մեր նախնիքներու գործածած բնագիրներէն, այլ նաեւ կուրօրէն փարած ենք մեր ներկայ Մաշտոցին, այնքան որ հոն որեւէ փոփոխութիւն՝ նկատուած է շեղում մեր նախնիքներէն եւ Հայրերու հաւատքէն»[45]:

Սա գրուել է ձեռագրերի եւ որոշ տպագիրների համեմատութեան հիման վրայ. ահա նրա խօսքի մի հաստատում. 1726 թ. Պոլսում Աստուածատուրի տպարանում հրատարակուած Ձեռաց Մաշտոցի «Յիշատակարան Սրբագրողի»ի մէջ կարդում ենք. «յայտ լիցի. զի ի վաղուց հետէ տեսանելով զբազում սխալանս բառից եւ բանից ի մէջ Մաշտոցացն. մեծագոյն սուգ լինէր սրտիս, թէ զիա՞րդ ոչ ումեք փոյթ լինի ուղղել զնոսա: Եւ ըղձայի հանապազ սրբագրել զՄաշտոց մի եւ նոր տալ տպել ի փառս անուան մեծին Աստուծոյ եւ ի քաւութիւն բազում յանցանաց իմոց: Ուստի տեսեալ զբաղձանս անպիտան ծառայիս իւրոյ՝ գիտօղն զաղտնեաց էլից այսօր զփափագանս սրտի իմոյ, որ ահա շնորհիւն Աստուծոյ եւ հարկօղ հրամանաւ սրբազան պատրիարգին մեծի Պօլսոյս, ձեռնամուխ եղէ ի գործս այս: Շարելով առաջի իմ Ե., Զ. հնագոյն ընտիր օրինակս եւ համեմատելով զնոսա ընդ իրեարս, բազում աշխատութեամբ եւ անհանգիստ տքնութեամբ: Որ թէ մտօք նայիս եւ համեմատես զսա այլոցն, կարես գտանել ի նոսա զբազում սխալանս բառից եւ բանից, որոց ոմանք այնպիսիք են, որք հաւատոյ վնաս բերեն եւ զասօղն ի ներքոյ դատապարտութեան ընկենուն: Եւ թէ ասես ո՞րպէս՝ զսորին ԽԱ. երեսն ընթերցիր յայլ օրինակսն, եւ տե՛ս թէ ո՞րպէս հերձուած բերէ բանն այն որ ասէ, Քրիստոսի քոյ. Առ Քրիստոս խօսի, եւ նմա ասէ. Քրիստոսի քոյ...»[46]:

---

[43] *Նոյն տեղում, էջ 52, հ^{մր} 62:*

[44] *Նոյն տեղում, էջ 76-7, հ^{մր} 99:*

[45] *Բազմավէպ, 1971/1-2, էջ 26:*

Ահա եւ «հեղինակութեան մը հաւանութիւնը» առ այս. «Վկայութիւն սրբազան պատրիարգին Կոստանդնուպօլսոյ. Ես Յօհաննէս վարդապետ՝ անարժան այցելու սուրբ տեղեացն Քրիստոսի եւ արքեպիսկոպոս Կոստանդնուպօլսոյ, ընթերցայ զսրբագրեցեալ օրինակն Մաշտոցիս, եւ տեսի որ ըստ ամենայնի լի էր ուղղութեամբ: Վասն որոյ հարկ եղեալ հրամայեցի տպել զսա եւ ի լոյս ածել՝ յօգուտ մանկանց եկեղեցւոյ եւ ի փառս անուան Յիսուսի Քրիստոսի եւ մօր նորա երանուհւոյ կուսին Մարիամու: Եւ առ ի հաստատութիւն բանիս՝ զիւրաքանչիւրսն սոցա՝ կնքեցի ահա ի նախկին թղթին իմովս կնքով: Որ եւ զնորագիւտ ազնիւ [շարականք] սրբոց առաքելոցն Թադէոսի եւ Բարթուղիմէոսի եւ սրբոյն Գէորգեայ զօրավարին, զոր գտեալ էի ի մէջ Շարակնոցի միոյ՝ ի Սըսայ տանն գրեցեալ, եդի ի սմա, զի մի՛ կորիցեն, եւ կամեցօղքն՝ յաւուր տօնի սրբոցն երգեսցեն»[47]:

Տպագիրների շարքում կայ Քահանայաթաղի մի կարեւոր հրատարակութիւն, որի որոշ մանրամասներ այստեղ պարտաւոր ենք վերարտա-

---

[46] *Սուրբ գիրք որ կոչի Մաշտոց Ձեռաց... Կ. Պոլիս, տպ. Աստուածատուրի, 1726, էջ յհգ-յհէ. (յձգ=384 էջ, հմմտ. Հայ գիրքը 1512-1800 թթ., էջ 269-70, հ^{մր} 355):*

[47] *Նոյն տեղում, էջ յձա.:*

գրել. նախ՝ տիտղոսաթերթից. «Կարգ թաղման կարգաւորաց՝ այսինքն՝ Հայրապետաց, Եպիսկոպոսաց եւ Քահանայից. զոր ի բուն Մաշտոցէն մերմէ առեալ, սրբագրեալ եւ կարգաւորեալ տեառն Սիմէօնի գերերջանիկ եւ գիտնական կաթուղիկոսի Ամենայն Հայոց. եւ տպագրել մեծաւ զգուշութեամբ, ինքնին իսկ լինելով վերահասու»[48]: այստեղ կայ «Սակաւ ինչ Վերջաբանութիւն ի սրբագրողէ գրքոյս Տեառն Սիմէօն Արարատեան Կաթուղիկոսէ ամենայն Հայոց առ բարեմիտ վերծանօղս», ուր կարդում ենք. «Ի վաղուց հետէ ունէաք զդիտումն՝ սրբագրել զՄեծ Մաշտոցն մեր, յոր թէ ո՞րքան աղճատանք եւ մեծագոյն սխալանք էին ներմուծեալք յանզգոյշ անձանց՝ թէ՛ ի ձեռագիրսն եւ թէ՛ ի տպեալսն. յայտնի է նրբանկատ քննողաց: Վասն որոյ գումարեալ ի մի վայր զձեռագիր օրինակս յոգունս, ջանիւ մեծաւ հետազօտեցաք ի յուղղել. որ եւ ուղղեցաք իսկ՝ շնորհիւ Տեառն, բառնալով զաւելորդսն. որք յետոյ էին ներմուծեցեալք, եւ լցուցանելով զթերիսն, զորս անխնամաբար հանեալ էին ի տեղեաց իւրեանց ի յոլով օրինակս՝ թէ՛ գրօղք եւ թէ՛ տպիչք: Եւ ուրեք ուրեք՝ յորս խանգարեալ էին բանին միտք, կամ անհամեմատ երեւէր, զայնս փոխեցաք ի յուղիղ եւ ի համեղ ոճ. պահելով ամբողջ զմիտս հեղինակին: Իսկ թէ այժմ վասն է՞ր միայն զՔահանայաթաղին կանոն եդաք տպել, քանզի այս կանոն քան զայլսն յոյժ աղճատեալ եւ խանգարեալ էր, որպէս յայտ է փորձիւ գիտողաց, իսկ միւսոց կանոնացն եւս թէպէտ գոյին աղճատանք, այլ ոչ այնքան՝ որքան Քահանայաթաղին. մանաւանդ զի միւսքն յամենայն ուրեք գտանին, իսկ այս կանոն հազուագիւտ էր եղեալ այժմոյս: Վասն որոյ աճապարեցաք նախապէս զսոյն տպեցուցանել. եւ եթէ Տէր կամիցի, զայլսն եւս ի դիպօղ ժամու տպեցուցանելոց եմք: Արդ, կարէ ամենայն ոք համեմատելով զսոյնս ընդ հնոցն՝ իմանալ թէ ո՞րքանք գոն ի սմա ուղղութիւնք եւ բարեձեւ կարգք՝ թէ՛ ի յընթերցուածսն, թէ՛ ի յաղթօզսն, եւ թէ՛ ի մակագրութիւնսն: Յորմէ ի բաց բարձաք զաւելորդ եւ զնորամոյծ անախորժ բանսն, եւ ի հնոց օրինակաց զխորհրդաւոր եւ զզօրաւոր աղօթս առեալ՝ եդաք ի տեղիս նոցին, ըստ հնոց շաւղաց: Եւ զընթերցուածսն եւս ուրեք ուրեք փոխեալ՝ զհնոցն եդաք, որք բարւոքագոյն երեւեցան մտօք. եւ զայլ ուղղութիւնս բազումս ըստ սոցին արարաք»[49]: Այստեղ կայ նաեւ

---

[48] Կարգ թաղման կարգաւորաց, Էջմիածին տպ. Ս. Գրիգոր Լուսաւորչի, 1777-8, տիտղ. (160 զարդափակ էջ):

[49] Նոյն տեղում, էջ 158-9:

«Յիշատակարան տպողաց», ուր գրուած է. «յիշեսջիք ի Քրիստոս զբազմերախտ Հայրապետս մեր եւ զյոգնաջան հովուապետս Ամենայն Հայոց՝ զտէր Սիմէօն սրբազան կաթուղիկոս, որ բարեյարմար կարգաւորութեամբ ուղղեաց զկանոն Քահանայաթաղին՝ եւ զՄեծ Մաշտոցն [illegible] Տեառն շնորհիւ»[50]:

Երկար քաղուածքներ արեցինք միայն այս տպագրի կարեւորութիւնն ակներեւ դարձնելու համար. Սիմէոն Ա. Երեւանցի կաթողիկոսը գրել է, որ ինքը՝ «[illegible]», ապա բաւական հանգամանալի ներկայացրել է իր արած բնագրական աշխատանքի մանրամասները, իսկ «տպողաց» յիշատակարանում ասուած է, թէ նա «[illegible]» նաեւ «զՄեծ Մաշտոցն [illegible]», որ յետոյ տպելու են: Եթէ ենթադրենք, որ վերջին տեղեկութիւնը եւ նրան վերաբերող խոստումը եղել են ցանկալին, բայց ո՛չ իրականացուածը, որի պատճառով էլ Սիմէոն կաթողիկոսի «ուղղեալ Մեծ Մաշտոց»ը չի տպուել, ապա Քահանայաթաղի այս տպագրի առկայութիւնը մեր ծիսագիտութեանը եւ բնագրագիտութեանը խնդիրներ է առաջադրում. յիշատակարաններում խօսքը Մեծ Մաշտոցի մասին է, որ նշանակում է, թէ Երեւանցի կաթողիկոսի աշխատանքի հիմք-ձեռագրերը եղել են ներկայիս Մաշտոցեան Մատենադարանում պահպանուող Մայր Մաշտոցները՝ ըստ ամենայնի այն նոյն ձեռագրերը, որոնց կանոնացանկերը մենք զուգադրել ենք ներկայ հրատարակութեան հիմք երկաթագիր ձեռագրերի ցանկին: Իսկ սա նշանակում է, որ ամենեւին անկարեւոր չէ պարզելը, թէ Քահանայաթաղի կանոնի հետ ծիսագիտական եւ բնագրագիտական ի՛նչ աշխատանք է արել մեր եկեղեցու «Մեծ Կարգաւորող» կաթողիկոսը. այսինքն՝ Մայր Մաշտոցի մեր դիտարկած 15, ըստ հարկի՝ նաեւ այլ ձեռագրերի Քահանայաթաղի կանոնը մէկ առ մէկ պէտք է համեմատել սիմէոնեան տպագրի հետ եւ յանգել շատ կարեւոր եզրակացութիւնների, որոնք նաեւ պարզելու են Երեւանցի գիտնական-կաթողիկոսի աշխատաեղանակի մանրամասներն ու նրբութիւնները:

Նշանակալի յաջորդ տպագիրն է.

---

[50] Նոյն տեղում, էջ 160:

ՄԵԾ ՄԱՇՏՈՑ, Կ. ՊՈԼԻՍ, 1807[51]

Սկսւում է «Յառաջաբանութիւն ինչ զՄիսարանէս» մուտքով (էջ 2-3), որ ստորագրուած է. «անպիտան ծառայս Յիսուսի փրկչին, անուանեալ դպիր՝ Գալուստ չրնչին»: Այս վերջում գրուած է, թէ Մաշտոցը փոփոխուել է «ի ձեռն անհմուտ գրագրաց եւ անհրահանգ տպագրչաց», ապա սրբագրել են «բանիբուն անձինք», «յորոց թէեւ հոգւոյս Հայրապետին՝ մի միայն Քահանայաժողին արժանացաք տեսութեան, սակայն [illegible] է զՄաշտոցն: Իսկ մեք աստ՝ ըստ որում խորաթափացոյց գլացողի եւս պատահեալ (բաց ի յուսահողի Պատուելւոյն համառօտաբանութենէ), [illegible]» (էջ 3): Այսինքն՝ Քահանայաժողը Սիմէոն Երեւանցու հրատարակութեան վերատպութիւնն է, մնացեալն արել են «վաղնջուց գրեալ» երկու ձեռագրով: Այստեղ շատ կարեւոր է նաեւ հրատարակչի «ի լրոյ» ունեցած տեղեկութիւնը, որ սիմէոնեան Քահանայաժողի «տպողաց» յիշատակարանի տեղեկութեան՝ նոր մանրամասներով կրկնութիւնն է, թէ Սիմէոն Երեւանցին ըստ «վաթսուն կամ եւս աւելի ձեռագրի... ծաղէ ի ծաղ սրբագրեալ է զՄաշտոցն». «լսեմք»ի վրայ հիմնուած այս հաղորդումը կարող է նաեւ ճիշտ չլինել, բայց բոլոր դէպքերում սրա գոյութիւնը նշանակում է, որ մեր Ծիսարանի ապագայ հետազօտողները, թէկուզ եւ չգտնելու շատ հաւանական ելքն ի մտի ունենալով, պարտաւոր են փնտրել Սիմէոն Երեւանցու եւ նրա հետեւորդների խմբագրած ամբողջական Մաշտոց:

Կարեւորութեան համեմատ՝ քաղենք այս տպագրի երկու կանոնի խորագիր[52].

29. «Կանոն եւ արարողութիւն վասն Հիմնարկութեան եկեղեցւոյ, արարեալ տեառն Յօհաննու Մանդակունւոյ սրբազան կաթուղիկոսի նախապէս, եւ կարգաւորեալ այժմ ի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի միաբան տեառն Մինասայ արհիեպիսկոպոսի» - 155-166/Ա.:

30. «Կանոն եւ կարգաւորութիւն արարողութեան նաւակատեաց՝ Օրհնութեան եւ օծման նորակառոյց եկեղեցւոյ, առեալ ի բանից սրբոց վարդապետաց, որ եւս ըստ մեծի մասին եղեւ ի նոյնոյ արհիեպիսկոպոսէ բարեկարգեցեալ» - 166-189/Բ.:

Այս Մինաս արքեպիսկոպոսը Սիմէոն կաթողիկոսի աշակերտ Վաղարշակերտցին է՝ 1780ից յետոյ Կ. Պոլսում Մայր Աթոռի նուիրակ[53]: Հիմնարկէքի եւ Եկեղեցիօրհնէքի կանոնների նրա խմբագրութեան մասին արձանագրուած է ընդհանուր ծիսագիտական գրականութեան մէջ[54], աւելացնենք, որ տաղերգու է եւ քարոզների հեղինակ, ծէսի նրա խմբագրումների լաւութիւնը պարզելի է իրենից մնացած ձեռագիր գործերով[55], իսկ մեզ համար այստեղ կարեւոր արձանագրելին այն է, որ նրա արածն ըստ ամենայնի եղել է մեր եկեղեցու ծէսի սրբագրման սիմէոնեան ծրագրի մասը: Շատ հաւանական այս ենթադրութիւնը հիմնուած է նաեւ գիրքը եզրափակող «Յիշատակարան տպողաց»ում ասուած հետեւեալի վրայ, թէ Մաշտոցի «բաղկացութեանն անձներաբար պատճառ՝ նախապէս գերանելի թագմանիչ վարդապետն մեր, եւ վերջապէս ըստ սրբագրութեան մասին՝ զհոգելոյս տէր Սիմէօն սրբազան կաթուղիկոսն, զնորին նուիրակ՝ զտէր Մինաս արքեպիսկոպոսն, եւ զտիրացու Պաղտասար պատուելի վարժապետն, եւ հուսկ յետին յաշակերտաց նորին՝ մանկավարժութեամբ զբաղեալ զԳալուստ դպիրն՝ ըստ կարեաց սրբագրիչ սորին» (էջ 426):

Հրատարակիչների ունեցած ձեռագրական հիմքերի առումով շատ ուշագրաւ է այն փաստը, որ 152-3րդ էջերի կամ գրքի 19-20րդ մամուլների միջեւ տեղադրուած է չէջակալուած մի պրակ՝ 8 էջ (պայմանականօրէն՝ 152ա-ը), որոնց վրայ տպուած է չորս կանոն. Նկարեալ եկեղեցու, Փրկչական եւ Աստուածածնի պատկերներ, ապա Խունկ օրհնելու, իսկ 152է. էջում կան կարեւոր տեղեկութիւններ. «գիտել արժան է, զի որպէս ի վերջն յառաջաբանութեան զտպագրութենէ սոյնոյ մատենիս ասացաւ, թէ սա, նա եւ նախապէս ի Սուրբ Էջմիածին սրբագրեալ, եւ ըստ մասին լեալ էր տպագրեալ, զոր ըստ բերման անխաղաղ միջոցին այնմիկ՝ անկարելի էր յօգնութիւն մեր ի ձեռս բերել, վասն որոյ որքան եւ հնար իցէ, զսրբագրեալս մեր զայս՝ հարկիւ յազգի մերում ներկայացուցանել յայնժամ փոյթ կալաք...», իսկ երբ Դանիէլ կա-

---

[51] *Գիրք մեծ Մաշտոց կոչեցեալ, յորում հաւաքեալ աւանդին ըստ մեծի մասին կարգք եւ կանոնք արարողութեան Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ, Կ. Պոլիս, Բիւրքճի խան, տպ. Պօղոս Յովհաննիսեանի (Արապեան), 1807 (19,3x24, 426+8 էջ):*

[52] *Սրանց կարգային՝ 29, 30 համարները մենք ենք նշանակել. գրքի էջահամարներին յաջորդող Ա. եւ Բ.՝ ներկայ գրքի կանոնահամարներն են:*

[53] *Տե՛ս Ազգապատում, հտ. Գ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, յօդ. 2153, 2218:*

[54] *Տե՛ս օրինակ՝ Նորայր արքեպս. Պողարեան, Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 96:*

[55] *Հիմնարկէքի եւ եկեղեցիօրհնէքի համար տե՛ս ՄՄ ձեռ. Հ^{մր} 2228, 189ա-213բ. 214ա-76ա, գրական վաստակը տե՛ս ձեռ. Հ^{մր} 828, 1258, 1837, 2227, 2228, 2808, 3830, 6412, 9644:*

թողիկոսն «անդ ի գահ բազմեցաւ. առաքեալ զ'ի պատրաստի գաւառացն զմին՝ գրով ի խնդիր մատեանս» Թէև կաթողիկոսը «փութացուցեալ էր ի հաւաքանել, սակայն ի սակս աշխարհային զարձուածոց և ճանապարհային զիպուածոյ՝ կարի անագան. և սորին ապեցման յաւարտ ժամանման՝ հազիւ ժամանեաց»։ Այդուհետև թուարկում է Պատկեր օրհնելու կանոնի՝ Էջմիածնից ստացած օրինակի և իր տպածի (էջ 213-215) և մեկ այլ կանոնների տարբերութիւնները, որ եզրափակում է. «այսքան և այսորիկ էին ի նմա գտեալ բարեկարգութիւնք, զորս աստէն յիշատակեցաք ի վայելումն ազգիս մերոյ. և ի զերծուցումն օծեաց մերոց ի ձեռաց ոմանց ընդ վայրապաղանց բծախնդրաց»։

Այս բոլոր փաստերը հաստատում են, որ 1807 թ. այս տպագիրը Մայր Աթոռի հրատարակութիւն է, որ Պոլսում է լոյս տեսել միայն ժամանակի էջմիածնական միջավայրի քաղաքական-տնտեսական աննպաստ պայմանների պատճառով։ Բոլոր դէպքերում այս տպագիրը[56] *մեր Մաշտոցի հետազօտում-հրապարակման պատմութեան կարևոր դրուագներից է և անպայման նկատելի է հետագայ ուսումնասիրութիւնների ընթացքում (ի դէպ՝ Մաշտոցեան՝ Մատենադարանի Մայր ցուցակում այս գիրքը համարւում է Մեծ Մաշտոցի լաւագոյն-յղկի հրատարակութիւնը)։*

Կարևոր և յիշատակելի միւսն է՝.

ՄԱՇՏՈՑ՝ ՅԻՍՈՒՆ ՁԵՌԱԳՐԻ ԲԱՂԴԱՏՈՒԹԵԱՄԲ[57].

Սրա առաջին կարևորութիւնը մեր Ա. օրինակի վրայ հիմնուած լինելն է, երկրորդը՝ որ պատրաստուած է յիսուն ձեռագրի համեմատութեամբ: Ըստ Ֆ. Կոնիբիրի (գիրքը տե՛ս ստորև՝ էջ ԻԴ.) հրատարակիչը եղել է Վրթանէս վ. Ասկերեանը, որ գրել է. «առաջնորդ կալաք զերկաթագիր զվաղեմի զընտիր Մաշտոցն մագաղաթեայ, որ ի մատենադարանիս մերում պահի գանձ պատուական։ Որ թէպէտ և առ թերութեան թերթից ինչ յառաջոյ և յետոյ՝ անթուական է, այլ յամենայն հանգամանացն գուշակի գրեալ յառաջ քան զամս հազար, թերևս և յառաջագոյն իսկ իբր ի սկիզբն ութերորդ դարու. նախ քան զկաթողիկոսութիւն Իմաստասէր հայրապետին Յովհաննու. զի և տարազ գրչութեան է երկաթագիր ստուար. և կարգաւորութիւնք պաշտամանցն համառօտք. և չեն իսկ ի նմա շարականք, բայց միայն երկու կամ երեք յօրինեալք նախ քան զութերորդ դար[58]*: Իսկ որ ինչ ի նմա պակասէին երգք շարականաց և կարգաւորութիւնք յետոյ յաւելեալք, զայն ամենայն լրացուցաք յայլոց ընտիր ձեռագրաց՝ բաղդատութեամբ օրինակաց իբր յիսնից: Դարձեալ և ի Մաշտոցաց գրելոց ի Սիս յաւելաք որ ինչ ի յետին դարս կարգաւորեցին կամ նորոգեցին հայրապետք ազգիս՝ Գրիգոր Վկայասէր, և յաջորդք նորին Պահլաւունին և Ներսէս Շնորհալին, և որք զհետ նոցա կացին ի Սիս յառաջին ամս Ռուբինեանց, որոց կարգաւորութիւնք ընդունելի եղեն յազգիս. քանզի հրաման նոցա յարևելս և յարևմուտս տարածանէր ի Մեծն Հայս և ի Կիլիկիա, մինչև ցբաժանումն աթոռոյ կաթողիկոսութեան, որ եղև յամին 1441» (էջ գ-դ.): Ապա Վ. վ. Ասկերեանը, երկարօրէն, մատենագրական վկայութիւններ բերելով, արծարծում է վերջին օծման խորհրդի հարցը (էջ դ-է.) և եզրակացնում, որ մինչև ԺԲ. դ. մեր եկեղեցում այն ընդունուած է եղել, բայց «մանաւանդ զի բազում ինչ յազգի մերում ձայնաւոր աւանդութեամբ անցանեն ի յաջորդս», այս կարգը հետագայ դարերում խափանուել է, ուստի և ինքը «զգեղեցիկ կարգաւորութեանս այսորիկ զտարապարտ խափանած յազգիս տեսանելով, յաւելաք զայն աստանօր ըստ հարազատ ձեռագրաց», ապա. «Բայց քանզի են ինչ առ նախնիս բառք, որք թէպէտ և ուղիղ մտօք ի նոցանէ ասացեալք, այլ յետ մոլորութեանց ի վեր երևելոյ մարթեն երկդիմի տալ իմաստս, առ ի բաց բառնալ զամենայն երկբայս՝ հրամայեաց մեզ սրբազան հայրապետն Հռոմայ Գրիգոր ԺԶ., որ այժմս քահանայապետէ, փոփոխումն առնել բառիցն, և այլս փոխանակ այնոցիկ կարգել՝ ազատս յամենայն երկբայանաց» (էջ դ-է.): Ի վերջոյ. «Ի վերայ այսոցիկ և ուրեք ուրեք զվարդապետութիւնս արարողութեանց պարզաբանեցաք, քանզի և ի*

---

[56] *Սրա՝ գործածութեան համար աւելի յարմար չափերով արուած վերահրատարակութիւններ են տպագիրների մեր շարքի 21 (7,2x13), 22 (8,5x13) և 25 (7,5 13,5) համարները, որոնք նաև «նորոգ սրբագրութեամբ» են. այս սրբագրութիւնների խնդիրը ևս տպագիրների համադիր ուսումնասիրութեանը վերաբերող հարց է:*

[57] *Մաշտոց. Արարողութիւնք պաշտամանց եկեղեցւոյ Հայաստանեայց ըստ կարգաւորութեան սուրբ հարցն մերոց. Բաղդատութեամբ բազմաթիւ և հնագիր օրինակաց իբր յիսնից, նաև հնագոյն երկաթագիր ձեռագրի, Վենետիկ, Ս. Ղազար, 1831, 8,3x15,5. 12 չհ., 726, 20 էջ: Ձեռքի տակ ունենք և ներկայացնում ենք ըստ նոյնական վերահրատարակութեան՝ Մաշտոց. Արարողութիւնք պաշտամանց եկեղեցւոյ Հայաստանեայց, տպագրեալ ըստ կարգաւորութեան նախնեացն մերոց հարց. Վենետիկ, Ս. Ղազար, 1839, 8,2x15,4. 8 չհ.[=ա-ը.]+726+20 էջ (տպագիրների շարքի 28րդ, տե՛ս նաև 29րդը):*

[58] *Ձեռագրում շարականներ ընդհանրապէս չկան. այս թիւրըմբռնման մասին՝ իր տեղում:*

նոյին իսկ գրչագիրս տեսանեմք զայս անհրաժեշտ հարկ լեալ. զի առաջինք եւ վաղեմիք համառօտագոյն ունին զկարգադրութիւնն. իսկ ընդ աղօտանալ գրագիտութեան յազգիս մերում, եւ ըստ յաճախել ագէտ պաշտօնէից սուրբ խորհրդոցն, յաւելուն յետինք պարզաբանել ըստ հարկի իրացն, եւ յաճախել եւս զայնս» (էջ է.):

Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, հրատարակիչը բաւական ազատ է վարուել, տպագրել է գործնական նպատակներ ունեցող (ծիսակատարութեան մէջ գործածելի) մի գիրք, որ նաեւ ստացել է իր ժամանակի եւ տեղի մտայնութիւնների խորը կնիքը. այսինքն՝ որքան էլ նրա «առաջնորդ»ը եղել է մեր Ա. ձեռագիրը, եւ որքան էլ բնագիրը պատրաստել է յիսուն ձեռագրի համեմատութեամբ, գիրքը դարձել է տարբեր ժամանակների ձեռագրերով, տարբեր ժամանակներում ստեղծուած կանոններով եւ Վատիկանի թելադրանքներով հիւսուած մի խառնամաշտոց, որ գիտական պահանջների համար պիտանի լինել չի կարող. միով բանիւ, հնագոյն ձեռագրի վրայ հիմնուած լինելով հանդերձ, սա ձեռագրական հրատարակութիւն չէ[59]:

Նշանակալի եւ արժանագրելի յաջորդ աշխատանքն է՝

ՖՐԵԴԵՐԻԿ ԿՈՆԻԲԻՐԻ ԱՆԳԼԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ[60].

Այս գիրքը մեր եկեղեցու ծէսի քննութեան ասպարէզի երեւի թէ ամենակարեւոր նուաճումներից մէկն է. սակայն տպուած լինելով աւելի քան մէկ դար առաջ եւ ո՛չ հայկական միջավայրում, մատենագիտօրէն հազուագիւտ է եւ ընթերցողների մեծ մասին հասու չէ: Միաժամանակ քանի որ կրկին հիմնուած է մեր հիմք՝ վենետիկեան հնագոյն ձեռագրի վրայ, պարտաւոր ենք որպէս հետագայ ուսումնասիրութիւնների ուղենիշ հնարաւոր համառօտութեամբ ներկայացնել այն: Նախ բերենք թարգմանութեան համար գործածած ձեռագրերի ցանկը, ընդունած պայմանանիշերով հանդերձ, նախապէս նկատելով, որ, բնականաբար, օգտագործել է իր ապրած միջավայրին եւ իրեն մերձաւոր, այսինքն՝ մատչելի հաւաքածուների ձեռագրերը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԸ

A - *Մխիթ. Վենետիկի ձեռ. Հմր 457 մեր Ա. օրինակը:*

B - *Վատիկանի* Cod. Barberiniani 100 (olim vii. 44)*. Մաշտոց, չուրջ 1300 թ.: 301 թերթ, թուղթ, 23,7x16,1. միասիւն, բոլորգիր, 22 եւ 31 տող[61] (ըստ Կոնիբիրի՝ մագաղաթ, սկզբնատառերը եւ խորագրերը ոսկի եւ կարմիր. գրիչը վարժ է եղել երկաթագիր գրելուն, խրատները մանրագիր են). սա արդէն կաթոլիկական կանոններ ունի:*

Bd - *Օքսֆորդ, Բոդլեյեան* Cod. Arm. d. 2/26. *Ճաշոց (Երուսաղէմեանի օրինակ, նման Փարիզի* Anc. fonds *20ին). ԺԳ. դ. (ըստ Կոնիբիրի՝ 1359 թ. կամ առաջ). 293 թերթ, թուղթ, 22,9x16,5. երկսիւն, բոլորգիր, 24-25 տող[62]. («Ոտնլուան նախորդում է Քարոզ պատուիրանի-ին (թ. 165-168)». սա հնաւանդն է՝ նման* A *եւ* N *ձեռագրերի ունեցածին):*

C - *Մխիթ. Վենետիկի ձեռ. Հմր 199/323. Մաշտոց Դ., 1216 թ. (ըստ Կոնիբիրի՝ Ms. I. 5. 199. համարում է 1250-1300 թթ. միջեւ), Պայասգիւղ, գրիչ եւ ծաղկո՞ղ՝ Ստեփանոս, 324 թերթ, թուղթ, 23x16. երկսիւն, բոլորգիր, 24 տող (Վ.Ց. Գ., էջ 69-94):*

D - *Բրիտանական գրադարանի* Cod. Orient 1411/29. *Մաշտոց, ԺԳ. դ. վերջ, 378 թերթ, թուղթ, 26,7x17,8. բոլորգիր, 18 տող[63]:*

---

[59] *Ըստ Կոնիբիրի (էջ ԻԴ.) այս տպագիրը յաւելումներ ունի Վենետիկի Մխիթ. Հմր 199/323, 193/325, 1173/332, 1217/344 ձեռագրերից, նաեւ 1383 թ. մի ձեռագրից. այս վերջին թուականին գրած Մաշտոց Վենետիկի ձեռագրացուցակում չկայ: Մանրամասների մէջ չմտնենք. կարող է լինել Մաշտոց ԺԴ., ձեռ. Հմր 487/333. 1386 թ., կամ Մաշտոց ԺԵ., ձեռ. Հմր 868/334. 1387 թ.:*

[60] Rituale Armenorum, Being the Administration of the sacraments and the Breviary Rites of the Armenian Church, Togheter with the Greek Rites of Baptism and Epiphany, Edited from the oldest Mss. by F. C. Conybeare, Oxford, At the Clarendon Press, 1905. *ձեռագրերի նկարագրութիւնները՝ էջ Թ-ԻԴ. (այսպէս գրում ենք գրքի լատինատառ՝* ix-xxiv *էջահամարների փոխարէն). ամբողջ գիրքը՝ ԼԵ., 536 էջ (այսուհետեւ՝* Rituale Armenorum*):*

[61] *Տե՛ս* Codices Armeni bybliothecae Vaticanae: Borgiani, Vaticani, Barberiniani, Chisiani, Schedis Frederici Cornwallis Conybeare adhibitis, recensvit Eugenius Tisserant - Bybliothecae Vaticanae scriptor, Romae, Typis Poluglottis Vaticanis, MCMXXVII (1927), p. 344-53 *(այսուհետեւ՝ Վատիկանի ցուցակ): Ըստ առկայ լատիներէն նշումի՝ 1580 թ. հոկտ. 14ին* «Cardinali Sanctae Severini»*ն այս ձեռագիրն ստացել է* Stephano de Mus, ordinis *սուրբ Անտոնի* Episcopo Armieno*ից:*

[62] Catalogue of the armenian manuscripts in the Bodleian Library, By the Rev. Sukias Baronian and F. C. Conybeare, Oxford, 1918, p. 26-7 *(այսուհետեւ՝ Բոդլեյեան ցուցակ). թեքին նախորդող թուերը Բոդլէյեան գրադարանի գոյքահամարներն են, յաջորդողները՝ ցուցակի համարները:*

[63] A Catalogue of the armenian manuscripts in the British Museum, By Frederick Cornwaills Conybeare, London, 1913, p. 57-8 *(այսուհետեւ՝ Լոնդոնի ցուցակ). թեքին նախորդողները կրկին գոյքահամարներ են, յաջորդողները՝ ցուցակի. կարծում է, որ 23ր էջում յիշուած «Հայրապետին մերոյ տեառն Գրիգորի» վերաբերում է Գրիգոր Անաւարզեցուն (1293-1307 թթ.):*

E - *Բրիտանական գրադարանի* Cod. Orient 2682/30. *Մաշտոց. 1331 թ., Արգերան մենաստան, գրիչ՝ Յովաննէս. ստացող՝ Վարդան արքեպս., 268 թերթ, թուղթ, 25x16,5. միասի°ւն, բոլորգիր. 17 տող*[64]:

F - *Բրիտանական գրադարանի* Cod. Orient 2612/32. *Հայր Մաշտոց. 1527 թ., Ս. Խաչիկ անապատ՝ մերձ յեղովկա գիւղ Համշինոյ. գրիչ՝ Կարապետ երէց. 239 թերթ, թուղթ, 14,6x10,2. միասի°ւն, բոլորգիր. 18 տող*[65]:

G - *Բրիտանական գրադարանի* Cod. Additional 23.900/35. *Հայր Մաշտոց. 1628 թ., Կ. Պոլիս, գրիչ՝ Յակոբ, ստացող՝ Աբիստակէս վրդ. Խարբերդցի, 286 թերթ, թուղթ, 25,4x19. երկսիւն, բոլորգիր. 21 տող*[66]:

H - *Բրիտանական գրադարանի* Cod. Orient 2669/34. *Մաշտոց. 1605 թ., Ամիշ գիւղ, ստացող՝ Յոհան. 256 թերթ. թուղթ. 26,7x19. երկսիւն. բոլորգիր, 25 տող*[67]:

I - *Բոդլեյեան* Cod. Arm. E. 8/29. *Մաշտոց ձեռաց եւ Գանձարան. 1464 թ., Կեղի, գրիչ՝ Երեմիա, 328 թերթ, թուղթ, 18x13. միասի°ւն, բոլորգիր, 18 տող*[68]:

K - *Բոդլեյեան* Cod. Arm. E. 7/28. *Մաշտոց ձեռաց, 1491 թ., Խարտիշարի վանք, գրիչ՝ Յուսիկ կր., 202 թերթ, թուղթ, 18x14. միասի°ւն, բոլորգիր, 17 տող*[69]:

L - *Բրիտանական գրադարանի* Cod. Additional 19.548/42. *ԺԳ. դ. սկիզբ. 52 թերթ, թուղթ, 24,2x17,8. երկաթագիր, 13 տող. ունի 1372, 1375 թթ. յիշ-ք*[70]:

M - *Բոդլեյեան* Cod. Arm. E. 13/122. *Մաշտոց, 1664 թ., Նոր Ջուղա, գրիչ՝ Յարութիւն, ստացող՝ Դաւիթ Ջուղայեցի. 340 թերթ, թուղթ, 17,8x12,7. միասի°ւն, բոլորգիր, 19 տող*[71]:

N - *Ֆրանսիայի Ազգային գրադարանի Հայ. ձեռ. Հմր 52-55 (հին՝* Suppl. *Arm. 110, 108, 109, 107). ԺԲ. կամ ԺԱ. դ., 59+90+48+36 = 233 թերթ, 23,5x15. երկսի°ւն, բոլորգիր, 21 տող*[72]:

---

[64] *Լոնդոնի ցուցակ, էջ 58-60:*

[65] *Նոյն տեղում, էջ 67:*

[66] *Նոյն տեղում, էջ 72-6:*

[67] *Նոյն տեղում, էջ 70-72:*

[68] *Բոդլեյեան ցուցակ, էջ 30-31:*

[69] *Նոյն տեղում, էջ 28-29:*

[70] *Լոնդոնի ցուցակ, էջ 88-90:*

[71] *Բոդլեյեան ցուցակ, էջ 250-53:*

O - *Ֆրանսիայի Ազգային գրադարանի Հայ. ձեռ. Հմր 60* (Anc. Arm. 41). *1546 թ., Անկիւրիա. գրիչ՝ Մովսէս. 202 թերթ, թուղթ, 15,5x12. միասիւն, բոլորգիր. 14-16 տող*[73]:

P - *Ֆրանսիայի Ազգային գրադարանի Հայ. ձեռ. Հմր 56* (Anc. Arm. 26). *Մաշտոց. 1500 թ., Ստանոզ գիւղ Անկիւրիոյ. գրիչ՝ Յովհաննէս եպս. Երզնկացի, ստացող՝ Նիկողայոս եպս., 234 թերթ, թուղթ, 21,5x14,5. միասիւն, բոլորգիր, 21-22 տող*[74] *(գաղափար օրինակի յիշատակարանի հիման վրայ Կոնիբիրը համարել՝ 1331 թ., Ապահունեաց Թոնրակ գիւղ, ստացող՝ Խաչատուր եւ իր եղբօրորդի Բարդաղիմէոս. համեմատել է միայն Մկրտութիւնը):*

S - *Մխիթ. Վենետիկի ձեռ. Հմր 1159/321. Մաշտոց Բ., «ԺԲ. դ. վերջին կէսին եւ կամ ԺԳ.ին սկիզբները» (Կոնիբիրը համարում է՝ ԺԱ. կամ ԺԲ. դ.) գրիչ եւ ծաղկո°ղ՝ Գրիգոր, 155 թերթ, մագաղաթ, 18,2x14. միասիւն, բոլորգիծ եւ ուղղագիծ երկաթագիր, 7-15 տող (Վ.Ց. Գ., էջ 49-56):*

T - *Կարինեան ցուցակի ձեռ. Հմր 999 ՄՄ Հմր 1028. 1296 թ., Բարջանջ գիւղ, գրիչ՝ Անանիա սրկ., ստացող՝ Իշխան սրկ., 176 թերթ, թուղթ, 16,2x12,2. երկսիւն, բոլորգիր, 18-19 տող: Ունեցել եւ գործածել է միայն Տղաթաղի կանոնի (75ա-84ա, այգալացը՝ 84ա-8ա) օրինակութիւնը:*

V - *Մխիթ. Վիեննայի ձեռ. Հմր 68. Մաշտոց, 1567 թ. Լվով եւ Կամենից, գրիչ եւ ծաղկո°ղ՝ Մինաս, ստացող՝ Կամախցի Աքանդար. 192 թերթ, թուղթ, 26,5x19,5. միասիւն, բոլորգի°ր, 23 տող*[75]:

W - *Բրիտանական գրադարանի* Or. 2615/43. *Մաշտոց ձեռնադրութեան, 1491 թ., Կեսարիա, գրիչ՝ Յովանէս. 109 թերթ, թուղթ, 19x14. միասի°ւն, բոլորգիր, 16 տող. նման Պոլսի 1807 թ. տպագրին. բովանդակութիւնը նոյնական ընդ Բրիտ. գրադարանի ձեռ. 23.900*[76]:

---

[72] Raymond H. Kévorkian, Armén Ter-Stepanian, Avec le concource de Bernard Outtier et de Guévorg Ter-Vardanian, Manuscrits arméniens de la Bibliothéque nationale du France. Catalogue. Bibliothéque nationale du France / Fondation Calouste Gulbenkian, Paris, 1998, p. 99-100՝ *թուագրումը՝ ԺԳ. դ. (այսուհետեւ՝ Փարիզի ցուցակ):*

[73] *Փարիզի ցուցակ, էջ 111-2:*

[74] *Նոյն տեղում, էջ 101-2:*

[75] *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Կազմեց Հ. Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 306-10 (այսուհետեւ՝ Վիեննայի ցուցակ, Ա.):*

[76] *Լոնդոնի ցուցակ, էջ 90-91:*

X - *Մխիթ. Վիեննայի ձեռ. Հր 123. Մաշտոց, 1511 թ., Խարտիչարի վանք, գրիչ եւ ծաղկող՝ Կիրակոս արդյ. 224 թերթ, թուղթ. 18x13 միասիւն, բոլորգիր, 18 տող*[77]:

Msh - *Պոլսի 1807 թ. հրատարակութիւնը.*

Ven - *Վենետիկի 1831ի՝ յիշուն ձեռագրի համեմատութեամբ հրատարակութիւնը:*

Թարգմանութեան հիմքը, ինչպէս, մեր Ա. ձեռագիրն է, նաեւ աշխատել է պահպանել նրա կանոնների հերթագայութիւնը[78], *սակայն թէ այլ ձեռագրերից մուծումներ է արել եւ թէ՝ համեմատութիւնները հաւասարարժէք չեն՝ տարբեր կանոնների համար օգտագործել է տարբեր ձեռագրեր: Այսպէս, հիմք ձեռագրի երկրորդ կանոնի սկսուածքում (9բ) համար չկայ, կայ 26ա էջի ստ. լս-ում «Բ. Եկեղեցի արհնել», որ չի նկատել, ուստի Հիմնարկէքի եւ այս կանոնները տպել է մի՝ 1ին համարի ներքոյ (էջ 1-25), այստեղ Ա. ձեռագրի հետ համեմատել է* CD *ձեռագրերը եւ* Msh *(1807ի տպագրի) աղօթքները: Գ. կանոնի համար համեմատել է* IK, Ven *եւ* Msh *(էջ26-7), Դ. կանոնի համար՝* C *եւ* Msh, *Ե. կանոնի համար՝ կրկին* IK, Ven *եւ* Msh *տպագրի աղօթքները, ԺԷ. կանոնից (էջ 64) յետոյ յաւելեալ աղօթքներ է մուծել* BF*ից (էջ 64-5), ԺԹ. կանոնի աղօթքներն* A*ից են, ընթերցուածներն ու խրատները՝* D*ից (էջ 108-9), Ի. կանոնի աղօթքները* A*ից եւ* N*ից են, ընթերցուածները եւ խրատները՝* D*ից (էջ 109-14) եւ այսպէս շարունակ:*

Համեմատած օրինակների տարբերութիւնները նշել է միայն տողատակում: Ընթերցուածները չի թարգմանել, միայն նշել է սահմանները, տանք Հիմնարկէքի առաջին՝ Առկ. Գ. 19-26 ընթերցուածը՝ Lection from Proverbs, 3[19-26] *(այսպէս՝ ամբողջ գրքում): Սրանք հայերէնից անգլերէն թարգմանելը, բնականաբար, անիմաստ էր, բայց ինքնին պարզ է, որ այս խել պատճառով թարգմանութիւնը մեր Մաշտոցի հարազատ վերարտադրութիւն լինել, ուստի եւ հայերէն բնագրի հարցերի մեծ մասին պատասխանել չէր կարող:*

---

[77] *Վիեննայի ցուցակ, Ա., էջ 406-8:*

[78] *Աշխարհաթաղի Այգալացը, հակառակ ձեռագրում (96ա) նրա ունեցած ԻԳ. համարի, առանձին կանոն չի համարել եւ 23րդ է հաշուել ԻԴ.՝ Մոնոզոնի օրհնութեան կանոնը:*

Բոլոր կանոնների հրատարակչական-թարգմանական յատկանիշները թուարկելն անիմաստ է, ուստի ներկայացնենք Ա. ձեռագրի չունեցած՝ այլ ձեռագրերից քաղուած կանոնները.

[illegible]. K*ից, համեմատութեամբ ընդ* FX*ի.* A *եւ* Msh *չունեն այս կանոնը (էջ 65):*

[illegible]. F*ից, համեմատութեամբ ընդ* Ven *եւ* Msh*ի (էջ 65-6), սրան յաջորդում է էջ 67-85՝* Armenian documents illustrating the history of the rites of the metal, *եւ քաղուածքներ Ս. Սահակի, Բարսղի, Շահապիվանի կանոններից, Յովհան Մանդակունու մի ճառից, Ներսէսի եւ Մամիկոնէից Ներշապուհի կանոններից, Արիստակէս Լաստիվերցու Պատմութիւնից, յոյների՝ ընդդէմ հայոց գրուածքներից եւ այլն:*

Մկրտութեան *(մեր՝ ԺԸ.) կանոնի փոխարէն նախ* B *եւ* V, *ապա* GPV *ձեռագրերից առել է Ը.օրեայ եւ Խ.օրեայ Երախայից մկրտութիւնը (Ա. եւ ձեռագրերի մեծ մասը չունեն), ապա՝* BCFGI *ձեռագրերից յաւելեալ աղօթքներ, իսկ վերջում.* Illustrative documents՝ *Խրատք մկրտութեան (էջ 86-108):*

Տղաթաղ. *առել է* K*ից, դրել Քահանայաթաղից անմիջապէս յետոյ, համեմատել ընդ* CFGHKNT *(*A *եւ* D *չունեն, բայց հրատարակել է որոշ աղօթքների զգայնութեան եւ գեղեցկութեան՝* «pathos and beauty» *համար (էջ 276-93):*

Ընդմէջ բնագրի ըստ հարկի տեղադրել է նաեւ բաւական օգտակար ծանօթագրութիւններ. օրինակ՝ Եկեղեցիօրհնէքի կանոնի մէջ ունի օժանդակ աղբիւրների գործածումով գրուած դիտարկումներ, ապա «Հայերէն եւ յունարէն բնագրերի յարաբերակցութեան մասին» (էջ 11-8), յաճախ վկայակոչել եւ քննել է խնդրին վերաբերող ժողովական, կանոնագրքային եւ ճառական բնագրական հատուածներ, որոշ կանոնների բնագրեր բերել է նաեւ ըստ տարբեր ձեռագրերի (երկու կամ աւելի տարբերակ), Տղաթաղից յետոյ, ըստ իր NP *ձեռագրերի, դրել է Յովհաննէս Մանդակունու Կոչումն ապաշխարութեան գործը (էջ 294-7), ապա «Ասորական կամ նեստորական ծէսը», որ թարգմանել է* A. J. Maclean*ը (էջ 298-388), Մկրտութեան Հերակտրութեան, Ջրօրհնէքի յունական ծէսերը, Զատկական եւ Մատաղի աղօթքներ (յունարէն բնագրերը, էջ 389-442): Վերջում ունի երկու յաւելուած՝ Ա. «Հայկական ժամագիրքը» (էջ 443-507), Բ. «Հին հայկական ծաշոցը եւ Տօնացոյցը»:*

Կրկնենք, անգլիացի փաստակաշատ հայագէտի այս հսկայ աշխատանքը մնայուն արժէք ունի եւ անպայման գործածելի է լինելու մեր ծէսին վերաբերող հետագայ բոլոր տեսակի ուսումնասիրութիւնների մէջ: Նոյնպիսին է նաեւ յաջորդ կարեւոր հրատարակութիւնը, որ է՝

ՄԱՇՏՈՑՆԵՐԻ ՎԵՆԵՏԻԿԵԱՆ ՁԵՌԱԳՐԱՑՈՒՑԱԿԸ[79].

Ժամանակագրական, որոշ չափով նաեւ տեսակային սկզբունքով այստեղ նկարագրած է 143 (137+6) ձեռագիր՝ ցուցակի Հ^{ամր} 320-456 եւ յաւելուածային Ա-Զ.: Սկզբի 120 միաւորը (Հ^{ամր} 320-439) Մաշտոցներ են, յաջորդ 17ը (Հ^{ամր} 440-456)՝ Գիրք ձեռնադրութեանց, ապա՝ յաւելուածային եւս 6 ձեռագրի՝ Մաշտոցի կանոններ ունեցող այլաբնոյթ ժողովածուների մասնակի նկարագրութիւն՝ [456Ա-Զ.][80]: Մաշտոցեան Մատենադարանի ունեցած հազարին մօտեցող քանակի համեմատ այս թիւը մեծ չէ, բայց նկատի ունենալով այն հանգամանքը, որ վենետիկեան հաւաքածուն ընդհանրապէս ձեւաւորուել է յաւագոյն ընտրութեամբ[81], այս ձեռագրացուցակը Մաշտոց ժողովածուի ուսումնասիրութեան գործին նպաստելու առումով առաջնակարգ նշանակութիւն ունի. մի հատորի մէջ, այն էլ յստակ ժամանակագրական կարգով ներկայացուած են նոյնաբնոյթ, մեծ մասամբ ընտիր ձեռագրեր:

Սա մեր թէ՛ ձեռագրագիտութեան եւ թէ՛ յատկապէս ծիսագիտութեան համար նշանակալի երեւոյթ է. հնագոյն (մեր Ա) ձեռագիրը նկարագրուած է շատ մանրակրկիտ՝ բոլոր խորաններով, ընթերցուածների եւ աղօթքների սկսուածքներով. «Դիտմամբ Մաշտոցս բոլոր իր մանրամասնութեամբը եւ ընդարձակօրէն ցանկագրեցինք, որպէս զի թէ՛ ընասէրներու ճշգրտօրէն ներկայացնենք զայն եւ թէ՛ միւս Մաշտոցներու բաղդատութեան համար իբր հաստատուն հիմնաքար դրած ըլլանք» (էջ 48): Եւ իրապէս, այս «Ա. Մաշտոց»ի կանոններին եւ տարբեր յատկանիշներին վերաբերող ներքին յղումներ առատօրէն կան ամբողջ հատորի մէջ: Նոյն մանրամասնութեամբ նկարագրուած են նաեւ բոլոր այն ձեռագրերը, որոնք Ա ձեռագրի համեմատ էական տարբերութիւններ ունեն. միով բանիւ՝ մեր ծիսարանի ուսումնասիրութեան համար այս ձեռագրացուցակը միշտ լինելու է անփոխարինելի եղակէտային հիմքերից մէկը համեմատութեան համար՝ Մաշտոցեան Մատենադարանի Մայր ցուցակի առկայ հինգհատորեակի մէջ նկարագրուած է վենետիկեան հատորի նիւթից մի փոքր աւելին՝ ամբողջական եւ մասնակի շուրջ 160 ձեռագիր, բայց որեւէ հետազօտող հարկադրուած է լինելու այստեղ ներկայացուածի հետ բաւական ժամանակատար նախապատրաստական աշխատանք անել, որպէսզի ստանայ վենետիկեան հատորում առարկայական սկզբունքի համեմատ ինքնին առկայ պատկերը[82]:

ՍԱՀԱԿ Վ. ՃԵՄՃԵՄԵԱՆԻ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այս հատորը նաեւ դարձել է Հ. Սահակ Ճեմճեմեանի ծիսագիտական հետաքրքրութեան սկզբնապատճառը[83]. մեր հնաւանդ Մաշտոցի հետազօտութեան բնագաւառում նա մեծ վաստակ ունի, իսկ ծիսարանի հետազօտման աշխատանքների համար քննութեան նրա եղանակն ընդհանրապէս բաւական ուսանելի եւ օրինակելի է, ուստի եւ պարտաւոր ենք համառօտ ներկայացնել վաղամեռիկ ծիսագէտի արածը.

Ա. «Մկրտութեան խորհուրդի բանաձեւը».

Նախ՝ կանոնական, մատենագրական հաղորդումների եւ տարբեր ժամանակների ձեռագիր Մաշտոցների վկայութիւնների հիման վրայ քննել է «այն խօսքերը, զոր մկրտողը կ'արտասանէ՝ երբ ջուրը կը թափէ մկրտեալին գլխուն»[84], եւ պարզել երկու հիմնական բանաձեւ.

---

[79] *Վենետիկի ցուցակ, Գ. (Մաշտոց - Գիրք ձեռնադրութեանց, Յօրինեցին Հ. Բարսեղ Սարգիսեան եւ Հ. Գրիգոր Սարգսեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1966). Է էջ, 728 սիւն, 7 էջ:*

[80] *Այսպէս է արուած այն նկատառումով, որ այս ձեռագրերն ամբողջապէս նկարագրուած են կամ նկարագրուելու են իրենց բնոյթին համապատասխանող ձեռագրերին վերաբերելիք հատորներում:*

[81] *Հաւաքողներն ընդհանրապէս մատենագրական նիւթին լաւ ծանօթ են եղել եւ ջանացել են ձեռք բերել որեւէ տեսակի լաւագոյն ձեռագրերը:*

[82] *Միայն թէ ներկայ գրքի պատրաստութեան ընթացքում համոզուեցինք, որ հատորը մեծապէս աւելի օգտակար կլինէր, եթէ կազմուէր տեսակային աւելի մանր բաժանումներով, այսինքն՝ Մայր, Հայրապետական, Ձեռաց, Քահանայաթաղ, Աշխարհաթաղ, Տղաթաղ, Լատին, Լեհահայոց եւ այլ Մաշտոցները նկարագրուէին առանձին շարքերով:*

[83] *Տեսանք, որ տիտղոսաթերթի վրայ կայ երկու կազմողի անուն, սակայն կայ նաեւ երրորդը, որի անունը չի գրուել սոսկ նրա համեստութեան պատճառով: Ըստ առաջաբանի էջ Զ՝ Հ. Բ. Սարգիսեանը նկարագրել է Հ^{մր} 320-365 (46 նկրգր.), Հ. Գ. Սարգսեանը՝ Հ^{մր} 366-439 (74, իրականում՝ 69 նկրգր.): Երկուսի մահից բաւական անց հատորի «հրատարակութեան վրայ հսկեց Հ. Սահակ Ճեմճեմեան, կատարելով բնագիրներու քննութիւնը, փորձերու սրբագրութիւնը». նաեւ լրացրել է պակասող նկարագրութիւնները՝ Հ^{մր} 373, 392, 406, 425, 439 (5 նկրգր.՝ հանելի երկրորդ կազմողի շարքից), 440-456 եւ յաւելուածի 6 ձեռագիրը (5+17+6=28) : Այսպիսով, 28 նկարագրութիւն արել է Հ. Ս. Ճեմճեմեանը: Իսկ անձնանունների, տեղանունների ցանկերը եւ աղիւսակները կազմել է Հ. Կոմիտաս Ունճեանը (ապա՝ Մանուկեան):*

[84] *Հ. Սահակ Ճեմճեմեան, Մկրտութեան խորհուրդի բանաձեւը, Բազմավէպ, 1967/Զ-*

ա. «Այս անուն մկրտի յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, գնեալ արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց, ընդունելով զազատութիւն որդեգրութեան Հաւրդ երկնաւորի, լեալ ժառանգակից Քրիստոսի եւ տաճար Հոգոյն»:

բ. «Այս անուն ծառայ Աստուծոյ եկեալ կամաւ յերեխայութիւն, յերեխայութենէ ի մկրտութիւն, մկրտի այժմ ի ձեռս իմ, յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, գնեալ արեամբն...»: Նաեւ՝ հաստատել է, որ առաջինը կիրառուել է Թ-ԺԵ. դդ., իսկ երկրորդը երեւան է եկել միայն ԺԵ. դ.: Ի վերջոյ այս բնաձեւերը համեմատել է տպագիր Մաշտոցների[85] հետ եւ եզրափակել. «Մեծապէս մաղթելի պիտի ըլլար որ համաձայնութիւն մը գոյանար, եւ ընդհանրանար դարերով ընդունուած ու կիրարկուած միեւնոյն բանաձեւը» (Բազմավէպ, 1967/Զ-Ը., էջ. 142):

Բ. «Երախաներու օծումը»[86].

Խրատների վերաբերմամբ նկատել է, որ երեխաների օծման իւղի օրհնութիւնից եւ նրան վերաբերող աղօթքից յետոյ «կը պակսի յատուկ խորագիր մը, որ պատուիրէ նոյն ձէթին գործածութեան կերպը կամ եղանակը. լռութիւն մը՝ որ զարմանալի կը թուի: Միւս կողմէ, սակայն, Մաշտոցին մէջ պէտք չէ փնտռել ամէն մանրամասնութիւն, որովհետեւ շատ մը բաներ բերանացի կամ գործնական կերպով իրարու կը փոխանցուէին, որոնք կարօտ չէին գրութեան կամ բացատրութեան: Ուստի, մեր համոզումով, իւղն օրհնելու աղօթքը աւարտելուն՝ նոյն սուրբ ձէթով քահանան կ'օծէր երեխան, առանց յատուկ բանաձեւի» (Բազմավէպ, 1968/Ա-Գ., էջ 26): Գէորգ Երզնկացու «Խրատ Մկրտութեան» գրութեան համառօտ խմբագրութիւնից վկայակոչել է. «Են ոմանք որ ոչ կարեն զանազանել գլխատն զոր գրեալ է, եւ են ոմանք որ ոչ փոյթ առնեն ամենեւին գլխատիցն տեսանելոյ, այլ աւանդութեամբ ուսեալք ի միմեանց», ըստ այսմ կարծում է, որ քահանաները

Ը., էջ 135 (յօդուածի ամբողջութիւնը մինչեւ էջ 142): Ի դէպ, մեր ԱԲ ձեռագրերի մասին այստեղ կայ. «Թուականը կը պակսի. սակայն հնախօսութեան օրէնքներուն հետեւելով՝ առանց վարանելու կրնանք հաստատել թէ Ժ. դարէն առաջ պէտք են գրուած ըլլալ», Բազմավէպ, 1967, էջ 137: Ճեմճեմեանի այս հրապարակումների մեր առաջին՝ ամբողջական մատնանշումին յաջորդող յղումներն արել ենք շարադրանքի մէջ, փակագծուած:

[85] *Հ. Ս. Ճեմճեմեանն իր ուսումնասիրութիւնների մէջ ձեռագիր Մաշտոցները միշտ համեմատել է տպագիրների մեր շարքի 44րդ (կաթողիկէ) եւ 55րդ (առաքելական) տպագիրների հետ:*

[86] *Հ. Ս. վ. Ճեմճեմեան, Երախաներու օծումը հայ եկեղեցւոյ մէջ, Բազմավէպ, 1968/Ա-Գ., էջ 21-9:*

մկրտութեան խորհուրդը՝ «աւանդութեամբ ուսեալք ի միմեանց, յոյժ թերութեամբ կատարեն զսուրբ խորհուրդ մկրտութեան», ապա երեխաների համար յատուկ իւղն օրհնելու աղօթքից յետոյ կայ հետեւեալը. «Եւ ապա օծանէ սուրբ ձիթովն զքամակն եւ զսիրտն խաչանման»[87]: Եզրակացութիւնն այս է. «Կը համարինք թէ հարկ եւ ժամանակն է որոշ վերանորոգումներ ու բարեփոխումներ կատարելու՝ ծիսական այս խնդիրներուն մէջ: Հայկական հնագոյն աւանդութեան աղբիւրները լոյսին տակ եւ համամիութենական հոգիով ստեղծել միաձեւութիւն մը՝ երախաներու օծումի արարողութեան մէջ, նկատմամբ իւղին, անոր օրհնութեան, կիրարկումին ու բանաձեւին» (Բազմավէպ, 1968/Ա-Գ., էջ 29): Իսկ հին աւանդութիւնն այս է. մկրտութիւնից առաջ քահանան սովորական ձէթ էր օրհնում այնչափ՝ որչափ պէտք էր այդ մկրտութեան համար, նրանով անում մկրտութեանը նախորդող օծումը, իսկ մկրտելուց յետոյ օծում էր արդէն մեռոնով:

Գ. «Պսակի խորհուրդը»[88].

«Մաշտոցի մէջ ամփոփուած իւրաքանչիւր կանոն ունի իր յատուկ պատմութիւնն ու յեղաշրջումը. յեղաշրջում մը՝ որ կատարուած է դարերու ընթացքին: Այն Մաշտոցը՝ որ ներկայիս կը կիրարկուի Հայաստանեայց Եկեղեցիէն ներս, երկար դարերու ճամբայ մը անցնելէ ետք է որ հասած է մեզի, ու դարերու ընթացքին միշտ ճոխացած, ընդլայնած, ենթակայ եղած է յաւելումներու, հազուագիւտ անգամ կրճատումներու. որով անցեալի պարզն ու համառօտը՝ ներկայիս դարձած է ընդարձակ եւ ծանրաբեռնուած» (Բազմավէպ, 1969/Դ-Է., էջ 116):

Մխիթարեան մատենադարանն ունի Ժ-ԺԸ. դդ. ընթացքում գրուած 100ից աւելի Մաշտոց, նրանցից մինչեւ 1699ը գրուածները 80 հատ են. դրանց հիման վրայ՝ «Երեք մեծ հանգրուաններու կարելի է բաժնել պսակի բնագիրը. առաջին, որ է հնագոյն շրջանը. երկրորդ՝ անցքի շրջան, եւ հուսկ երրորդ՝ վերջին շրջան». եւ ներկայացնում է իւրաքանչիւրի քայլ առ քայլ ընթացքը՝ սաղմոսք-ընթերցուածք (հնում խրատներ գրեթէ չկան) եւ այլն:

Առաջին խումբը (Ժ-ԺԷ. դդ. 42 ձեռագիր) «չափազանց պարզ... համառօտ ալ է», ձեռագրերից 22ն ունեն երկու աղօթքի յաւելում. սրա

---

[87] *Քաղուածքներն արել է Մխիթ. Վենետիկի Հմր 686 ձեռագրից (1348 թ.)՝ 81բ, 76ա:*

[88] *Հ. Ս. վ. Ճեմճեմեան, Պսակի խորհուրդը ձեռագիր Մաշտոցներու լոյսին տակ, Բազմավէպ, 1969/Դ-Է., էջ 116-23:*

մէջ «նկատելի կէտ մըն է շարականներու բացակայութիւնը, այսինքն այս խումբին մէջ չեն մտած շարականներ՝ բացի մէկ կամ երկու ձեռագիրներէ, որոնք միշտ ազդուելով յարակից ընտանիքներէ՝ ներմուծած են ինչ ինչ շարականներ» (Բազմավէպ, 1969/Դ-Է., էջ 117): Երկրորդը (ԺԳ-ԺԷ. դդ. 12 ձեռագիր) «պարզ-համառօտ»ից կամուրջի կամ անցքի շրջան է եւ նոր յաւելումներ ունի, երրորդն արդէն «ճոխացած» խումբն է (ԺԷ. դ. 10 ձեռագիր), որի հիմնական տարբերութիւնը ընթերցուածների եւ աղօթքների բազմաքանակ յաւելուածներն են կամ առատութիւնը (Բազմավէպ, 1969/Դ-Է., էջ 120):

Եզրակացութիւնն այս է. «Ձեռագիրներու գծած ուղին յստակ կերպով տեսնելէ ետք, եթէ քննելու ըլլանք ներկայիս մեր կիրարկած Մաշտոցներու արարողութիւնը, պիտի տեսնենք թէ տպագիր Մաշտոցը չի հետեւիր իր բոլոր կէտերուն մէջ ձեռագիրներու աւանդութեան. տպագրութիւնը՝ արդիւնք է անհատի մը տեսակէտներուն եւ համադրութեան, որ կատարած է առանց ձեռագրական խումբերու բաժանումներու: Թէ՛ Կաթողիկէ եւ թէ՛ Առաքելական եկեղեցւոյ մէջ կիրարկուած Մաշտոցներու մէջ՝ կը պակսին խորագիրներու պարզութիւնը, արարողութեան ընդհանուր յօրինուածքի հարազատութիւնը, ինչպէս նաեւ շարականներու ընտրութիւնը: Այս ամէնը անհրաժեշտ կերպով կը կարօտին վերատեսութեան մը» (Բազմավէպ, 1969/Դ-Է., էջ 123):

Առաջին այս երեք հրապարակումների մէջ Ճեմճեմեանը բնագիր չի հրատարակել, միայն համադրել է իր քննած 80 ձեռագրերի տուեալները, ուրուագծային եղանակով՝ խրատ-հրահանգները եւ ընթերցուածներն ու աղօթքները սկսուածքներով թուարկելով, պատկերել է իր քննած կանոնները, նոյն սկզբունքով էլ ձեռագրերը բաժանել է խմբերի, նշել ամէն խմբի յատկանիշները, ենթադրել նրանց առաջացման ժամանակը եւ վերջում արձանագրել իր ամփոփիչ եզրակացութիւնները: Բոլորովին այլ է՝

Դ. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԻ ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ[89],

որ նոյն 80 ձեռագրի հիման վրայ թէ՛ նոյնպիսի ուսումնասիրութիւն է, թէ՛ հրապարակում բնագրի, որ ըստ «երկաթագիր»՝ մեր Ա (68ա-76բ) եւ Բ (82բ-94ա) ձեռագրերի է, իսկ տողատակում նրանց «ամենահաւատարիմ կերպով» հետեւող թուով 22 ձեռագրերի[90] ընթերցումներն են:

Մկրտութեան կանոնը քննելով, Ս. վ. Ճեմճեմեանն արձանագրել է. «ամբողջովին պարզ ու համառօտ են երկաթագիր Մաշտոցներու մկրտութեան բնագիրները. հոն չկան խճողումներ, արարողութիւնը կ՚ընթանայ վսեմ կերպով, խորագիրները իրենց համառօտութեան հետ ունին իմաստի լիութիւն, չկան ամենեւին միջնադարեան կամ արեւմտեան մտայնութեան յատուկ մանրակրկիտ բացատրութիւններ… այս համառօտ ու պարզ արարողութիւնը, որ արդէն Թ. դարուն եւ անկէ առաջ կազմուած էր, իր անաղարտ ու հարազատ ձեւով, առանց որեւէ յաւելումի՝ պահուած է ամբողջ տասը դարեր, մինչեւ ԺԹ. դար՝ բազմաթիւ ձեռագիրներու մէջ. հակառակ որ միջանկեալ դարերուն կազմուած են յաւելումներ, ու երեւան եկած են մկրտութեան նոր արարողութիւններ, նոր խմբագրութիւններով ճոխացած ու ծանրաբեռնուած» (Բազմավէպ, 1971/1-2, էջ 26):

Այսուհանդերձ «Մեր այս մայր օրինակը ժամանակի ընթացքին ունեցած է յաւելումներ, ընդհանրապէս աղօթքներու, հազուագիւտ կերպով խորագիրներու մէջ: Թէ ի՞նչ օրէնքով կատարուած են այդ յաւելումները, յատուկ բան մը չէ կարելի ըսել, սակայն կարելի է ընդհանուր կերպով լուսաբանել խնդիրը…»: Եւ մկրտութեան կանոնի հին տարբերակը համեմատել է Մայր Մաշտոցի վենետիկեան ժամանակագրօրէն երկրորդ՝ Հմր 199/323 ձեռագրի (1216 թ. գրուած Ծովային Կիլիկիայի Պայաս գիւղաքաղաքում) ճոխացուած տարբերակի հետ (Բազմավէպ, 1971/1-2, էջ 29-33) ու եզրակացրել. «Ինչպէս կը տեսնուի, աւելցած են 12 նոր աղօթքներ, երկու սաղմոս, ընթերցուած մը ու քարոզ մը: Մեր տեսած հարիւրաւոր ձեռագիր Մաշտոցներու մէջէն սա միակն է իր տեսակին մէջ, եւ որ ծառայած է կազմելու յաջորդ խումբերը: Միշտ մնալով առաջին ընտանիքին մէջ, ԺԴ-ԺԶ. դարերուն բնագրին վրայ կատարուած են աղօթքներու յաւելումներ, որոնք կարելի է դասաւորել երկու խումբի տակ» (Բազմավէպ, 1971/1-2, էջ 33). առաջին խումբն աւելի ունի երեք աղօթք, երեքն էլ առնուած են իր համեմատած Հմր 199 ձեռագրից, «սակայն այս աղօթքները հաւասար կերպով

---

[89] *Հ. Սահակ Ճեմճեմեան, Մկրտութեան արարողութիւնը Մաշտոցներու մէջ, Բազմավէպ, 1971/1-2, էջ 25-46, 1972/2-3, էջ 183-231, 1972/4, էջ 381-419. կանոնի բնագիրը՝ 1971, էջ 36-46, 211-231, 1972, էջ 400-411. մնացեալ էջերը քննութիւն են:*

[90] *Ցանկը տե՛ս Բազմավէպ, 1971/1-2, էջ 29: Բացի Վատիկանի Հմր 17ից (1585 թ.), մնացեալ 21ը Մխիթարեան Վենետիկի մատենադարանի ձեռագրեր են: Այսուհանդերձ Ճեմճեմեանն իր եզրակացութիւնները կայացրել է 80 ձեռագրի ընդհանուր համեմատութեան հիման վրայ:*

չենք գտներ բոլոր ձեռագիրներուն մէջ, այլ երբեմն գանց եղած են այս կամ այն օրինակին մէջ», ապա կայ նաեւ երկրորդ խումբ, որ «ունի վեց նոր աղօթք... որոնք առնուած են» նոյն հմր 199 Մաշտոցից (Բազմավէպ, 1971/1-2, էջ 33). եւ այսպէս շարունակ. «Այս առաջին մեծ ընտանիքի ստորակարգեալ խումբերը կը տարբերին հնագոյն օրինակէն, ոչ միայն աղօթքներու յաւելումներով, այլ նաեւ խորագիրներու մէջ ունին ինչ ինչ շեղումներ»:

Երկաթագիր Մաշտոցների կանոնը վերաբերում է «մեծահասակներու» մկրտութեան ծէսին, մինչդեռ «ժամանակի ընթացքին կը զգացուի պահանջը փոքրահասակները մկրտելու արարողութեան մը, այնպէս որ ԺԴ-ԺԶ. դարու ձեռագիրներու մէջ շատ անգամ կը հանդիպինք կամայական խորագիրներու, տեղական սովորութիւններու, որոնք մնացած են սակաւաթիւ ձեռագիրներու մէջ եւ չեն ընդհանրացած»: Ի վերջոյ «ԺԴ. դարուն Գէորգ Երզնկացի[91], վերջ դնելու համար այդ կամայական յաւելումներուն, կը կազմէ նոր խմբագրութիւն մը», որով ձեւացաւ Մկրտութեան կանոնի «երկրորդ ընտանիք»ը, որն էլ իր կարգին ունեցել է համառօտ եւ ընդարձակ տարբերակներ[92]:

Ուշագրաւ է, որ այս հրապարակումն ունէր ո՛չ միայն գիտական, այլեւ գործնական նպատակադրում. «կ'ուզենք գրական նպաստ մը բերել... առաջարկելով ծիսական ինչ ինչ սրբագրութիւններ, մատնանշելով բնիկ հայկականն ու հինը, ցոյց տալով նորամուտ տարրերը, որոնք դարերու ընթացքին մտած են Մաշտոցէն ներս: Մեր կատարելիք առաջարկները անձնական փափաքներ չեն, այլ արդիւնք երկար ուսումնասիրութեան մը, կատարուած Ս. Ղազարի, Երեւանի, Վատիկանի, Փարիզի եւ մասնաւորներու ձեռագիրներու լոյսին տակ» (Բազմավէպ, 1971, էջ 25): Եւ մեծապէս մեր վաղամեռիկ բարեկամի կատարած աշխատանքի շնորհիւ է, որ այսօր մեր եկեղեցին կարող է սրբագրել եւ միակերպութեան բերել Մկրտութեան կանոնը[93], նոյնպէս նրա արած աշխատանքն է հնարաւոր դարձրել մեր հնագոյն աղբիւրների հաղորդումները. հայերէն հին բնագրի եւ նոյն ծէսի յունական ու ասորական տարբերակների համադիր լայնակտաւ մի ուսումնասիրութիւն[94], որպիսի քննութեան պէտք է ենթարկուեն մեր Մաշտոցի բոլոր կանոնները:

Միայն թէ Մկրտութեան կանոնի Ճեմճեմեանի[95] հրապարակման մէջ ընթերցումները պատմագրական եւ ընդհանրապէս սովորական բնագրերում կիրառուող միասնական-բառական եղանակով ներկայացնելն այնքան էլ ճիշտ չենք համարում: Պատկերն այսպիսին է՝ ամէն էջում ամենաշատը 10-15 տող բնագիր, իսկ մեծադիր էջի մնացեալ մասը (30-40 խիտ մանրատառ տող) ընթերցումներ, որոնք բուն շարադրանքի համեմատ բովանդակային էական տարբերութիւններ են: Թէկուզ հրատարակողը հետազօտական-նկարագրական մէջընդմէջ հատուածներով ներկայացրել-մեկնաբանել է ժամանակի ընթացքում կանոնի կրած յաւելում-փոփոխութիւնները եւ պատկերացում տուել ծէսի պատմական զարգացման մասին, այդուհանդերձ հետաքրքրուողն այսպիսի շարուածքով յստակ պատկերացում չի ստանում, ուստի վստահ ենք, որ հնարաւոր է ընտրել աւելի նպատակայարմար ձեւ: Իր ուսումնասիրած գրեթէ բոլոր ծէսերի մէջ Ճեմճեմեանն արձանագրել է ձեռագրերի երեք խմբագրութիւն-խումբ, ուստի կարծում ենք, որ արժէր (այսուհետեւ եւս) բնագիրը հրապարակել ըստ ձեռագրական խմբերի՝ եռասիւն (ըստ հարկի՝ նաեւ քառասիւն) հանդիպադիր ձեւով. թէկուզ այս եղանակի դէպքում սիւների մէջ կարող են մեծ բացատներ առաջանալ, բայց շարունակող-հետազօտողը յստակ պատկեր ստանալու համար անհրաժեշտ լրացուցիչ աշխատանք անելու հարկադրանքից ազատուած կլինի:

---

[91] *Սա Յովհան Որոտնեցու նշանաւոր աշակերտն էր՝ շրջ. 1350-1416 թթ., տե՛ս Նորայր եպս. Պողարեան, Հայ գրողներ, Ե-ԺԷ. դար, Երուսաղէմ, 1971, էջ 406-8:*

[92] *Բազմավէպ, 1971/1-2, էջ 34: Մեծ խմբերից դուրս յիշում է նաեւ Սսեցւոց Մաշտոցը եւ մի երկրորդը՝ նոյն Ս. Ղազարի հմր 336 (ԺԴ. դ.) ձեռագիրը, «որ ոչ մէկ ազդեցութիւն ունեցած է հայկական բնիկ Մաշտոցին վրայ: Այս երկու Մաշտոցները կը կարօտին առանձին ուսումնասիրութեան մը», Բազմավէպ, 1971/1-2, էջ 35:*

[93] *Ահա պաշտօնական մի հաղորդագրութեան ամփոփոյթը. «Հայ եկեղեցու ծիսական հարցերի յանձնախումբը 2010 թ. օգոստոսին Էջմիածնում եւ 2011 թ. մարտին Անթիլիասում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի օրհնութեամբ սկսել է քննարկել Հայ Եկեղեցու Սուրբ Մկրտութեան խորհուրդին առնչուող հարցեր, եւ հանգամանօրէն քննարկում է հրատարակուած ծիսարանների բնագրերը, բաղդատութեամբ հնագոյն ձեռագրերի, միաձեւ բնագրի պատրաստութեան համար» (լուրը՝ համացանցից):*

[94] Gabriele Winkler, Das armenische Initiationsrituale. Entwicklungsgeschichichne und Liturgievergleichende Untersuchung der Quellen des 3. bis 10 Jahrhunderts (Orientalia Christiana Analecta, 217), Roma, 1982, 476 S. - *(Մկրտութեան հայկական արարողութիւնը. Գ-Ժ. դարերի աղբիւրների քննութիւնը պատմական զարգացման եւ համեմատական ծիսագիտութեան տեսանկիւնով), Լ. Տէր-Պետրոսեանի հեղինակած՝ այս գրքի մանրամասն մատենախօսականը տե՛ս Պատմաբանասիրական հանդէս, 1984/1, էջ 203-5:*

[95] *Այստեղ յիշատակուած նրա չորս աշխատութիւնների միատեղ գրքային հրատարակութիւնն անպայման կնպաստի ծիսագիտական հետագայ քննութիւնների գործին:*

Դիտարկումների այս համառօտ շարքը ստիպուած ենք[96] եզրափակելու մեզ համար շատ անհաճոյ մի արձանագրումով. «Մատենագիրք Հայոց» արժէքաւոր շարքի Թ. հատորի[97] 574-693 էջերում ծիսարանը տպագրուած է «[Մաշտոց]» տարօրինակ-փակագծուած խորագրով եւ էլ աւելի տարօրինակ՝ որպէս Մաշտոց Եղիվարդեցու ստեղծագործութիւն[98] («ծիսամատեանի խմբագրում-կազմում»). բնագիրն է՝ ըստ «ՄՄ 1001 ձեռագրի (=A)[99], որի կանոնախրատական մասերը համեմատուած են Վենետիկի թիւ 320 (ձեռ. թիւ 457) [=B] գրչագրի հետ, ըստ նրա գիտական, հանգամանալից նկարագրութեան» (էջ 558): Այստեղ կայ նաեւ «փաստարկ», թէ այս ձեռագրերը «Մաշտոցի կազմած օրինակին պէտք է որ մօտիկ լինեն... ներկայացնում են ծիսամատեանի զարգացման սաղմնային վիճակը»: Այս հիմնաւորումով Մատենադարանի ձեռագրի (մեր Բ) շարագրանքը վերը, Վենետիկի ձեռագրի (մեր Ա) նկարագրութիւնը տողատակում (ցրիւ) հրատարակուած է որպէս Մաշտոց կաթողիկոսի «[Մաշտոց]» ստեղծագործութիւն, ըստ որում՝ իր հիմք օրինակի 1ին թերթի (Հիմնարկէքի կանոնի աւարտի) գոյութեան մասին խօսք չկայ, սկսում է 2ա էջով՝ Եկեղեցիօրհնէքով, իսկ տողատակում (էջ 574) գրուած է Հիմնարկէքի կանոնին վերաբերող այն ամէնը, ինչ կայ Ա ձեռագրի նկարագրութեան մէջ:

Ձեռագրերից եկող եւ տպագիրներով շարունակուած ծիսարանի համար սովորական դարձած ձեւաւորում բացարձակապէս չկայ, փոխարէնը հատորաշարի ընդհանուր ոճով բնագիրն անիմաստ տրոհուած է 1-1565 նախադասութիւնների, որ գործածողին որեւէ բան տալ չի կարող: Նաեւ ծայրէծայր լի է սխալ ընթերցումներով եւ անբացատրելի բացթողում-պակասներով. որոնցից, գրքի միայն երկու էջից, բերենք միայն մի քանի նմոյշ.

1. էջ 588. «221[100] Յորժամ պատրաստեր զերկինս՝ ընդ նմա էի. եւ մինչ զատուցանէր զաթոռն իւր ի վերայ հողմոց. եւ յորժամ զաւրաւոր առնէր զամպս վերինս. եւ յորժամ անխսալ դնէր զաղբերս ի ներքոյ երկնից» (Առ. Ը. 27). ընդգծուածը գրքում չկայ, իսկ ձեռագրում (20բ) կայ.

2. էջ 588. «228 շուրջ զնովաւ. վեց թեւք միոյ, եւ վեց թեւք |21բ| միոյ» (Ես. Զ. 2) նոյն պատկերն է.

3. էջ 588. «233 Եւ առաքեցաւ մի ի սրովբեից անտի, եւ ի ձեռին իւրում ունէր կայծակն, զոր առեալ ունէր ի սեղանոյ անտի. եբեր մերձեցոյց ի բերան իմ. եւ ասէ. Ահաւադիկ մերձեցաւ այդ ի շրթունս քո. եւ հանցէ զանաւրէնութիւնս քո. եւ զմեղս քո սրբեսցէ ի քէն. եւ լուայ զբարբառ Տեառն որ ասէր. Զո՞ առաքեցից. կամ ո՞ երթիցէ առ այն ժողովուրդն: Եւ ասեմ. Ահաւասիկ եմ, տէր առաքեա զիս» (Ես. Զ. 6). կրկին՝ ընդգծուածները ձեռագրում կան, տպագրում՝ ոչ:

Ինչպէս տեսնում ենք, այս քաղուածքները սուրբգրական ընթերցուածներից են. թէեւ «Մաշտոց Եղիվարդեցի» խորագրով առաջաբանում (էջ 559) գրուած է. «Պայմանանիշ չունեցող տողատակի ընթերցուածները Հ. Արսէն Բագրատունու հրատ. Աստուածաշնչինն են (Վենետիկ, 1860)»[101], բայց եթէ այս հրատարակութեան հետ կանոնաւոր համեմատուած լինէր, ինչպէ՞ս հնարաւոր էր չնկատել, որ ձեռագրի իր «պակասները» Աստուածաշնչի բնագրում կան: Միաժամանակ աստուածաշնչական ընթերցումները նշանակուած են շատ ցանցառ եւ իրական պատկերը ներկայացնելուց շատ հեռու են[102]:

Եւս երկու՝ ոչ ընթերցուածային օրինակ.

1. էջ 597. «388 Եւ քարոզէ. Հաւատով եւ(=ւ) յուս|35ա|ով եւ միաբանութեամբ խնդրեսցուք ի Տեառնէ զլիր զողորմութիւն, զշնորհս արասցէ ի վերայ մեր եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեամբ ամենակալ Տէր Աստուած մեր, կեցոյ եւ ող[որմեա]». վերջին բառն իբր ձեռագրում լրիւ

---

[96] Եթէ սրա մասին խօսելու չլինէինք, մեր բնագրի եւ խնդրոյ առարկայ տպագրութեան տարբերութիւնները կմնային չբացատրուած:

[97] «Թ. դար», Անթիլիաս-Լիբանան, 2008. «Հատորը կազմեց Յակոբ Քէօսէեան. խմբագիր Ռուբէն Ղազարեան», էջ 6:

[98] Մատենաշարի մէջ որպէս տարբեր հեղինակների գործեր ամփոփող ժողովածուներ արդէն տպագրուած են «Շարակնոց»ը եւ «Գանձարան»ը (երկու գրքով). թէ ինչու է նոյնաբնոյթ այս մէկն առանց որեւէ պատճառաբանութեան հրատարակուել որպէս հեղինակային աշխատանք՝ յայտնի է երեւի թէ հատորի կազմողին, գուցէ նաեւ մեր վաղեմի բարեկամ խմբագրի՞ն: Այս մատենաշարի ինչպէս բոլոր հատորներում, նոյնպէս եւ այստեղ (էջ 6) մեր անունը կայ որպէս «Խմբագրական խորհուրդ»ի անդամ, բայց քանի որ կատարելապէս անմասն եւ անտեղեակ ենք եղել սրան, ուստի այս հատորից մեր անունը «յետս ենք կոչում»:

[99] Այստեղ ծանօթագրուած է. «Բնագրիս համառօտական ընդօրինակութիւնը շնորհակալութեամբ ստացայ Վարդան Դեւրիկեանից»:

[100] Այսպիսիք նախադասութիւնների անիմաստ համարներն են:

[101] Յայտնի է, որ Աստուածաշնչի այս տպագիրը ո՛չ ձեռագրական է. ունի հրատարակչական միջամտութիւն-սրբագրութիւններ, որոնք ծանօթագրուած չեն եւ որոնց հիմքերն ըստ այդմ յայտնի չեն, ուստի այսպիսի բնագիրները սրա հետ համեմատելն արդարացուած չէ:

[102] Հետաքրքրուող ընթերցողը կարող է այդ «բնագիրը» համեմատել այս գրքինի հետ եւ տեսնել «սար ու ձորի» տարբերութիւնը:

կայ՝ տպուած է առանց լրացման փակագծերի. իսկ ձեռագրում առկայ՝ ընդգծուածը տպագրում կրկին չկայ:

2. էջ 597. «397 քանզի սովոր ես ի ձեռն փոքու ապաստուց քոց պաշտպան առնել ի ձեռն սքանչելեաց մեծամեծս՝ որպէս կործանեցեր զպարիսպն Երիքովի: Եւ այժմ շնորհեա՝ ի ձեռն հնչմանս այսորիկ կործանել ի մէնջ ամենայն ամբութեանց թշնամւոյն»: Էլի՝ ձեռագրի 36ա էջում ընդգծուածը կայ, տպագրում՝ ոչ. եւ այս պատկերը բոլոր էջերում է:

Մի խօսքով՝ այս հրատարակութիւնը լիովին ձախողուած է, ուստի պէտք է համարել գոյութիւն չունեցող եւ անտեսելի:

ԲՆԱԳՐԻՍ ՀԻՄՔ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ա. – Վենետիկի ձեռ. Հ^մր 457/320. Մաշտոց[103], գրչութեան ժամանակը՝ 958-964 թթ. միջեւ (Վ.Ց, Գ, էջ 3), գրիչ՝ Գէորգ քհյ. Ա-Ե+230+Զ-Ը թերթ[104] (էջակալուած 1-460)[105], չափը՝ 35x24 (գրադաշտը՝ 24x16), գրութիւն՝ երկսիւն (մի սիւնը՝ 24x7, սիւնակամէջի լայնքը՝ 2 սմ), 20 տող: Ունի դրոշմազարդ կաշեկազմ, նիւթն է «մագաղաթ հաստկեկ, պինդ եւ դեղնեայ»:

Այս մատեանի Վենետիկ հասնելու կամ կորստից փրկուելու դիպուածը շատ յատկանշական եւ բնորոշ է ընդհանրապէս մեր ձեռագիր գրքի պատմութեան համար. «յամի Տեառն 1775-1776 մտեր է հաւաքմանս մէջ, գնուած 60 փարայի, ի Համշէն գաւառի, այսպէս. մեր միաբան Հ. Պօղոս վարդապետ Առնջեցի[106] 1775 թուականին երբ քարոզչութեամբ կը գտնուէր ի Կարին, յանձնարարած էր փերեզակ տիրացուի մը որ գաւառները շրջած ժամանակ եթէ ձեռագիրներու հանդիպի, գնէ

---

[103] Ըստ հարկի անհրաժեշտ քաղումներ ենք անում ձեռագրի ընդարձակ նկարագրութիւնից՝ Վենետիկ ցուցակ, Գ., էջ 1-48 (նաեւ շարադրանքի մէջ՝ Վ.Ց, Գ. ձեւով):

[104] Սկզբում կայ սպիտակ թղթէ 5 թերթ յաւելուած, համարակալուած՝ A, B, C, D, E. սրանք կոչում ենք Ա-Բ-Գ-Դ-Ե. վերջում՝ չհամրակալած 3 թերթ, սրանք էլ կոչում ենք Զ-Է-Ը.:

[105] Երեւի ԺԹ. դ. սկզբներին ձեռագիրը թանաքով կանոնաւոր էջակալուած է՝ 1-460 (համարները գրուած են թերթերի առաջին երեսներին, բ երեսներին չկան. Կոնիբերի թարգմանութեան մէջ գործածուած են այս էջահամարները), ապա՝ երեւի Ի. դարի սկզբներին, կաղապարային թուեր դրոշմելով թերթակալուել է՝ 1-230:

[106] Այս վարդապետի կեանքի պատմութիւնը տե՛ս Պատմութիւն վարուց Հայր Պօղոս վարդապետի Մեհերեան. Շարագրեալ յիւրմէ, 1811, Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, Հրատարակութեան պատրաստեց, Գէորգ Տէր-Վարդանեան, Բազմավէպ. Հայագիտական-բանասիրական-գրական հանդէս, ՃԿԳ. տարի, Թիւ 1-4, 2005, էջ 412-488, ՃԿԴ. տարի, Թիւ 1-4, 2006, էջ 5-108, ՃԿԵ. տարի, Թիւ 1-4, 2007, էջ 7-130:

գանոնք իր հաշուին եւ արժէքն ընդունի. սա Համշէն գաւառին մէջ յաւուր կիրակմտի այլազգւոյ մը տունը իջեւանած պահուն, որ ծագումով հայ, 60 տարի յառաջ թուրքաց բռնութենէն ստիպուած իսլամութիւն ընդունած էր. կը տեսնէ որ անդին կանթեղ մը կը վառի՝ կաւեղէն համբարի մը վրայ. կը հետաքրքրուի հարցնել եւ իմանալ եղելութեան պատճառը. եւ կ'ըսուի իրեն, թէ ի պատիւ Ինճիլին (Աւետարան կարծելով) զոր իրենց նախնիքներէն ժառանգած են, կը վառեն այդ կանթեղը ամէն շաբաթ իրիկուն: Տեսնելով տիրացու փերեզակը սոյն պատկառելի մատեանը՝ կ'ուզէ գնել. բայց նոքա չեն ուզեր վաճառել, ըսելով թէ իրենց տան բէրէքէթն է (այն է՝ օրհնութիւնն): Շատ թախանձելէն վերջ կը գիջանին ծախել 60 փարայի. եւ նա կը տանի ի Կարին առ յիշեալ վարդապետը. եւ գինէն ու ճանապարհի ծախքէն դուրս աւելի բան չ'ուզեր առնուլ... Նոյն տարին Տրապիզոնի ճանապարհով կը ղրկէ մատեանս Հ. Պօղոս վարդապետ ի Կ. Պոլիս, ուստի ապա կ'ուղարկուի ի Վենետիկ (Վ.Ց. Գ. էջ 4-5)[107]:

Ձեռագիրը նկարազարդում բացարձակապէս չունի, կայ գրքային յարդարանքի շատ համեստ միայն մի արտայայտութիւն. կանոնների սկզբնատառերի վերին կամ ստորին ստեղների ծայրերից ելնող տերեւազարդի նման պարզ գծագրութիւններ կան (օրինակ՝ 28բ, 33ա) կամ զուտ ոճաւորումներ, աղօթքների, քարոզների եւ ընթերցուածների սկզբնատառերը՝ երկաթագիր ձեռագրերի համար սովորական ձեւով, տողի սկզբում են, մնացած գրերից աւելի խոշոր եւ գծուած կիսով չափ գրադաշտից դուրս՝ ձախ լուսանցում: Գրչութեան երկաթագիրն ընդհանրապէս ուղղագիծ-անկիւնաւոր է՝ ո՛չ թեք, ստեղներն ուղղահայեաց են, կոր պատկերումով գրերը (Զ, Ծ, Յ, Ջ, Ց) աւելի շատ բոլորգիծ երկաթագրի տեսք ունեն, խրատները նոյն երկաթագրի աւելի մանր տառերով են: Առաւել ուշագրաւն այն է, որ լուսանցային խորագրերի, երբեմն նաեւ տողաւարտների մէջ «ա» գիրը եռաստեղն է, այսինքն՝ բոլորգիր (տե՛ս 148ա, 149ա ստ. լս., 211բ՝ սկզբի խրատը), յաճախ նոյն բոլորգրով է նաեւ «ց» գիրը:

---

[107] Այս նոյն պատմութեան մանրամասներ տե՛ս նաեւ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Դ., Շարակնոց-Ճաշոց-Ժամագիրք, Խորհրդատետր-Մանրուսմունք-Կցուրդք, Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1993, էջ ԺԹ., ձեռագիրը Ս. Ղազար է հասել 1776 թ. մայիսի 12ին:

Զգալապէս վնասուած է 1-4 թերթերի վերին արտաքին անկիւնը «խոնաւութենէ կամ ճարպային հեղուկէ մը վարակուած եւ փտած» է (Վ.Յ., Գ., էջ 1), իսկ թ. 5-38՝ նոյն վարակից աստիճանաբար խորացող (մինչեւ 8 տող), ապա նուազող չափերով արտաքին սիւնակները. բնագրով հանդերձ, թափուած են[108]. վարակի հետքերը կան նաեւ 39-52րդ թերթերի վերին լուսանցների վրայ. բայց բնագիրն անխաթար է. 31րդ թերթից ի վեր վերին տողերը լիովին ընթեռնելի են, թափուած տողեր չկան: Թ. 1, 8, 118 «թեթեւ կերպով» ստորին լուսանցները կտրուած են, իսկ թ. 17, 18, 80, 82, 84-5, 108, 119, 143, 147, 200՝ նոյն ստորին լուսանցները, լիովին կտրուած-հանուած են, բարեբախտաբար՝ բնագիրը չվնասելով[109]: Այս ամէնով հանդերձ, հատածն այժմ լաւ ամրակայուած է. Ա. կազմաստառին փակցուած պիտակի վրայ, Ներսէս վ. (հետագայում՝ արքեպս.) Տէր-Ներսէսեանի ձեռքով գրուած է. «457. Մաշտոց Ա. (դար Թ.) Նորոգութիւն ձեռագրիս եղեւ յաշխատանոցի Բենեդիկտեան հարց, ի Praglia, ի ձեռն եւ ծախիւք «Soprintendenza Bibliografina» հաստատութեան Վենետկոյ, յամին 1959-1960», որից յետոյ՝ «Ներկայիս այս ձեռագիրը ունի սքանչելի վիճակ մը՝ կոկուած, հականեխուած թուղթերով եւ զօրաւոր կազմով» (Վ.Յ., Գ., էջ 1)[110]:

Պահպանուածը 8 թերթանոց 29 պրակ է. գրչի նշանակած սկզբնական պրակահամարները կտրուած են[111], վերակազմողի գրած՝ այժմ առկայ համարներն են՝ Բ-Ս եւ Տ. ընկած են Ա. եւ Վ. պրակները. իսկ Տ պրակը 8ի փոխարէն ունի 6 թերթ, այսինքն՝ պակասում է նաեւ սրա վերջի 2 թերթը[112], որին յաջորդող պակասի համար վկայակոչում ենք 1830 թ. Հ. Մատթէոս վ. Մաղաքեանի արձանագրած դիտարկումը. «զկնի Տ. վերջին տետրին, ուր թերի մնայ Քահանայաթաղն, թուի թէ պակասին մի կամ առ առաւելն երկու տետր. զի որպէս տեսանի՝ զառաւելն ոչ տանի եւ կազմ մատենիս» (էջ Բա)[113]. ըստ այսմ՝ վերջում եղել են նաեւ Ր եւ Ց համարներով պրակներ. որոնց մէջ գրչի ենթադրելի գլխաւոր յիշատակարանից բացի. ըստ ամենայնի, եղել է միայն Քահանայաթաղի ընդարձակ կանոնի աւարտը եւ առ առաւելն՝ նոյն կանոնի եօթնօրէքը[114], որովհետեւ հազիւ թէ այստեղից պակասող 2+8+8=18 թերթի վրայ մի այլ կանոն եւս տեղաւորուէր[115]:

Աա-Աբ. էջերին ԺԹ. դ. շղագրով կայ. «Ցուցակ Մաշտոցիս», մօտը՝ երեւի մատիտով. «RG 1829», ապա ցանկ՝ «Ա. Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի Հիմանարկութիւն սրբոյ եկեղեցւոյ .... 1 ... |Աբ| Խէ. Կանոն յորժամ քահանայ վախճանի կամ եպիսկոպոս առ ի թաղումն .... 380 (պակասաւոր ի վերջոյ)»: Ըա էջին ԺԹ. դ. սկզբների այլ շղագրով վերարտագրուած է ձեռագրի 45բ-6ա/90-91րդ էջերի՝ «Վասն բարեբար լինելոյ... իսկ բարեբարութեամբդ քո եւ ձեռամբ միածնիդ» մասը: Է. եւ Զ. թերթերին ձեռագրի էջահամարների կարգով՝ «Ընթերցուածք եւ Աւետարանք որք գտանեմք ի Մաշտոցիս» վերնագրով, Մխիթարեան անանուն մի միաբան ԺԹ. դ. շղագրով նշել է ձեռագրի մէջ առկայ սուրբգրական քաղուածքները (կարդալ՝ Էաբ-Զաբ), այսպէս՝ «Առակաց Գ. 19 Աստուած իմաստութեամբ՝ երես 2 [=1բ]» ... Մատթ. [ԺԹ. 27-30] Պատասխանի տուեալ Պետրոսի՝ 458 [=229բ]»[116]:

ԹՈՒԱԳՐՈՒՄՆԵՐԸ.

Ձեռագրի մէջ առկայ յաւելագրութիւնների շարքում առաւել արժէքաւորն այստեղ որպէս ԺԲ. Յաւելուած դրուած՝ «Ցուցանի թէ երկաթագիր Մաշտոցն մեր գրեալ է յիններորդ դարուն կամ իբր 1000 ամօք յառաջ» (էջ Բա-Եբ.) շարադրանքն է, որ 1830 թ. գրել է Հ. Մատթէոս վարդապետ Մաղաքեանը[117]: Նրա եզրակացութիւնն այս է. «գրեալ է յիններորդ դարուն, կամ իբր ի Յ. [851] թուականին Հայոց. յաւուրս Զաքարիա կաթողիկոսի, կամ յամի Տեառն 850» (Աջ Գր.) այսինքն՝ Մաշտոց կաթողիկոսից առաջ: Սա քիչ հաւանական ենք համարում, որովհետեւ հիմնուած է Եկեղեցիօրհնէքի կանոնում ընթերցուող սաղմոսներից մէկը շարական համարելու թիւրիմացութեան վրայ: Հետեւեալն է. «Եւ եկեալ առ սուրբ սեղանն, ի կատարել սաղմոսին սգեցուցանեն զսեղանն, ասելով ձայնիւ զսաղմոսն ՂԲ [1]. Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ՝ շարականաւ. Սեղան քո Տէր զաւրութեան՝ ՁԱ. [ՁԳ. 4]» (13բ): Ահա այս հատուածի «ՂԲ.»ի՝ սաղմոսահամար լինելը չի գգացել, կարծել է, որ սա Շարակնոցի միւս որի կարգային համարն է, այստեղից յետոյ համարել է, թէ «Սեղան քո Տէր զաւրութեան» սկսուածքը՝ «Մանկունքն կանոնին Նաւակատեաց խաչին, զոր յօրինեալ է Սահակ Գ. կաթողիկոս Ձորոփորեցին իբր ի վախճան եօթներորդ դարուն» շարականինն է: Մ. վ. Մաղաքեանը գիտէ, որ կայ նաեւ նոյն սկսուածքով սաղմոս, բայց համոզուած է, որ այստեղ անպայման շարականն է: Քանի որ այս տեսակէտը, առանց հեղինակի անունը տալու, արտայայտուած է նաեւ ձեռագրի նկարագրութեան մէջ[118], ուստի նախ քաղենք «շարական» բառի՝ բնագրում առկայ մնացեալ բոլոր վկայութիւնները[119]:

---

[108] Ա. ձեռագրի այս մասերի (1ա-9բ՝ Հիմնարկէքի կանոնի) բնագրական թերիները լրացրել ենք Աստուածաշնչով եւ ՄՄ Հմր 955 ձեռագրով: Վ.Յ., Գ., էջ 8, ծ.՝ «Քառակուսի փակագծի մէջ գրուածները Դ. Մաշտոցէն լրացուցինք». այս լրացումներն արտայայտել ենք ընթերցումների մէջ:

[109] Երեւի ինչ որ մէկն այս «անմեղ» բարբարոսութեամբ հոգացել է մագաղաթի իր ունեցած կարիքը:

[110] Նորոգումից յետոյ ձեռագրի սկզբում եւ վերջում որպէս կազմապատի մաս-շարունակութիւն աւելացուել է սպիտակ թղթէ 1ական թերթ-պահպանակ:

[111] Վ.Յ, Գ., էջ 1. «Հին թերթահամարներն որ վերին լուսանցաքգանցից վրայ էին՝ վերջին կազմողէն կտրուած են, իսկ նորին ստորին լուսանցից վրայ գրուած են սեւ մելանով եւ տարբեր գրով»:

[112] Պրակների եւ նրանց թերթերի պատկերը հետեւեալն է. Բ$^{1-8}$, Գ$^{9-16}$, Դ$^{17-24}$, Ե$^{25-31}$, Զ$^{32-40}$, Է$^{41-48}$, Ը$^{49-56}$, Թ$^{57-64}$, Ժ$^{65-72}$, Ի$^{73-80}$, Լ$^{81-88}$, Խ$^{89-96}$, Ծ$^{97-104}$, Կ$^{105-112}$, Հ$^{113-120}$, Ձ$^{121-128}$, Ղ$^{129-136}$, Ճ$^{137-144}$, Մ$^{145-152}$, Յ$^{153-160}$, Ն$^{161-168}$, Շ$^{169-176}$, Ո$^{177-184}$, Չ$^{185-192}$, Պ$^{193-200}$, Ջ$^{193-200}$, Ռ$^{209-216}$, Ս$^{217-224}$, Տ$^{225-230}$:

[113] Նոյնն է ասուած նաեւ ձեռագրի մէջ մի այլ ձեռքով արձանագրուածով. «Ի Մաշտոցէս Ա. տետրն պակասի, եւս եւ Վ. տետրն, որ է վերջընթերն, ի վերջոյ եւս մի կամ երկու տետր» (Աբ):

[114] Այսպէս ունենք ՄՄ Հմր 2789 ձեռագրում (ԺԲ. դ.). տե՛ս ստորեւ:

[115] Մէ էջի վրայ կայ շուրջ 700, մանրագիր խրատների դէպքում՝ առաւելը 750-800 գիր. վերջից պակասողը կարող է լինել միջին հաշուով 18x1500=27.000, առաւելը՝ 30.000 գիր:

[116] Այս բոլոր յաւելագրութիւնները, նաեւ ընթերցուածների ցանկը մեզ համար անկարեւոր են. վերջինի փոխարէն կազմել ենք նորերը (տե՛ս ստորեւ), իսկ միւսները բնագրում արդէն կան:

բ. «Եւ ապա սկիզբն առնեն Գ. ժամու: Եւ ապա՝ [ՃԽԷ. 12] Գովե[ա՛] Երուսաղէմ, շարականաւ» (26ա).

գ. «ապա սկիզբն առնեն երրորդ ժամու եւ ասեն. [Սղմ. ՃԽԷ. 12]. Գովէ՛, Երուսաղէմ, շարականաւ, [Սղմ. ՁԳ. 4] Սեղան քո Տէր» (39ա).

---

[117] Հ. Մատթէոս վ. Մաղաքեան, 16 Սեպտ. 1767 ծնուել է ի Կոստանդնուպոլիս, մահացել է 4 Յունուարի 1847, ի Սբ. Ղազար», հայրը՝ Սողոմոն, պապը՝ Մաղաքիա Ճեվահիրճեան մատենագիրը: Հակառակ նրան, որ ձեռագրի թուագրման՝ հեղինակի կռուանն անընդունելի ենք համարում, Մ. վ. Մաղաքեանի այս գրութիւնը կարեւոր ենք համարում ընդհանրապէս գիտութեան պատմութեան, յատկապէս մեր ծիսագիտութեան համար, ուստի որպէս յաւելուած ամբողջապէս հրատարակում ենք՝ նաեւ խնդրի ապագայ քննութիւններին նպաստած լինելու համար:

[118] Վենետիկի ցուցակ, Գ., էջ 2. «Ա. Մաշտոցս զանազան կանոններու մէջ յիշատակուած են մինչեւ Ը. դար յօրինուած շարականներ եւ օրհնութեան աղօթքներ եւ քարոզներ, որոնց հեղինակները ծանօթ են մեզ, եւ ահա այդպիսեաց մին է, թղ. 13բ^2 Նաւակատեաց խաչի Մանկունքը «Սեղան քո Տէր զօրութեանց», զոր գրած է Սահակ Գ. Կաթողիկոսն Ձորոփորեցի ի վերջ Է. դարուն: Բ. Յիշատակուած չեն բնաւ այն շարականներն ու աղօթք, որոնք Ժ. դարէն ետքը յօրինուած են եւ կը գտնուին ԺԲ. դարուն գրուած Մաշտոցներուն մէջ. օրինակի համար Պետրոս Գետադարձէն ԺԱ. դարուն շինուած Հանգստեան շարականներէն բնաւ կոչումն եղած չէ հոս, որով կը ճոխանան ընդհակառակն բոլոր միւս Մաշտոցք»:

[119] Մեր Բ օրինակի տարբերութիւնները տե՛ս բնագրում. այստեղ չենք նշում:

դ. «Եւ սկսանին զԱմբիծսն եւ զԱրարիչն, շարականաւ, մինչեւ ածեն ի դուռն գերեզմանին: Եւ ապա ասեն ողբաձայն սաղմոս ՃԺԳ. [=ՃԺԴ. 7]. Դա՛րձ, ա՛նձն իմ ի հանգիստ քո» (90բ).

ե. «Եւ ապա իջուցանեն ի գերեզմանն, ասելով՝ Հաւատ ունելով, շարականաւ. Հաւատ ունելով հոգի խաղ[աղութեան]. սաղմոս. [ՃԺԳ. 1]. Սիրեցի, զի լուիցէ [Տէր զձայն աղաւթից իմոց]» (93բ).

զ. սաղմոսների շարի վերջում՝ «Խ. [2]. Երանի որ խորհի. Աւրհնութիւն [ՃԺԹ. 1]՝ Ի նեղութեան. եւ՝ Տէր ամենակալ, շարականաւ» (159ա).

է. «Եւ ասեն զվերին կանոնն եւ զաւրհնութիւնն շարականաւ. եւ աւրհնութիւն եւ փառս» (192աբ), «Եւ ապա ասեն [ԺԸ. 2] զԵրկինք պատմեն, եւ աւրհնութիւն. Ես ասացի՝ շարականաւ: Եւ քարոզե» (193ա).

ը. «[Լ. 2]. Ի քեզ, Տէ՛ր, յուսացա. Աւրհնութիւն. Ծանեբուք, շարականաւ» (194ա):

Այսպիսով, որեւէ որոշակի շարականի անուն կամ սկսուածք չկայ, բոլոր ութ վկայութիւնների մէջ խօսքը վերաբերում է սաղմոսները «շարականով», զուգէ երգելով, երգեցիկ, առ առաւելն՝ անորոշ կամ ցանկացած որեւէ շարականի հետ միասին ասելուն:

Այս առիթով վկայակոչենք նաեւ Մկրտութեան կանոնը տասնեակ ձեռագրերով հետազօտած Հ. Ս. Ճեմճեմեանին. «Շարականներու յայտնութիւնը համեմատաբար աւելի նոր է քան արարողութեան բնագիրը, այնպէս որ հնագոյն Մաշտոցներու մէջ, սկսեալ Թ-Ժ. դարու երկաթագիր օրինակներէն, ոչ մէկ շարականի կը հանդիպինք, եւ ինչպէս տեսանք վերեւ, եւ ոչ իսկ ջուրն օրհնելու Օրհնեսցէ եւ սրբեսցէ ջուրս երգը կը գտնենք մեր հին ձեռագիրներու մէջ: Մինչեւ ԺԵ. դարու երկրորդ կէսը, շարականները բացակայ են Մաշտոցներէն, ապա առանց յատուկ կանոնի մը կը սկսին յայտնուիլ, երթալով կը սկսին բազմանալ, այնպէս որ ԺԸ-ԺԹ. դարու Մաշտոցները կը ծանրաբեռնուին, եւ միայն Մկրտութեան արարողութեան մէջ կը հանդիպինք տասնեակ շարականներու: Չենք գիտեր թէ որու ձեռքով շարականները մտած են ներս, այսքանը սակայն որոշ է որ բնիկ հայկական Մաշտոցները զուրկ են անոնցմէ, նոյն իսկ Գէորգ Երզնկացիի նոր խմբագրութեան մէջ, ԺԴ-ԺԵ. դարու առաջին կէսին, դեռ չկան շարականները, սակայն հոն է որ առաջին անգամ կը սկսին երեւիլ, եւ անոնց ազդեցութեամբ կը սկսին որդեգրուիլ նաեւ մկրտութեան հին խմբագրութենէն» (Բազմավէպ, 1972, էջ 396-7):

Մկրտիչ վ. Աւգերեանն իր կազմած գոյքամատեան-ցուցակում[120] ձեռագրիս ժամանակ համարել է Թ. դարը. Յ. Կոնիբիրն այս խնդրին էջեր է նուիրել եւ եզրակացրել, որ այն պէտք է գրուած լինի Բիւզանդիայի Փոտ պատրիարքի ժամանակից՝ 858-867, 878-886 թթ. առաջ, եւ թէ անհաւանական է որ գրուած լինի նրա շրջանից, այսինքն՝ 858ից յետոյ. ըստ այդմ էլ ծէսերը կարող են ի մի ժողովուած լինել մի ձեռքով, որ առաջ է Մաշտոց կաթողիկոսի ժամանակից, իսկ Մաշտոցի աշխատանքը կարող էր ունեցած լինել միայն տեղական նշանակութիւն»[121].

Հ. Գրիգոր վ. Սարգսեանը, այս թուագրումներին տեղեակ լինելով հանդերձ, յայտնել է. «Կանխաւ ձեռագրոյս զբաղած են նախ Հ. Մատ. Եսայեան, ապա Հ. Բ. Սարգիսեան (անտիպ). երկուքն ալ Թ-Ժ. դարուն կը համարին զայն», յիշատակել է նաեւ Կոնիբիրի թուագրումը, ապա Մխիթ. Վենետիկի մատենադարանի ՃԳ. (գրածը՝ խԳ.) հմր 1571/422 ձեռագրում[122] նկատած լինելով Մաշտոց Եղիվարդեցու Վարքը (337ա-40ա), եւ այնտեղ «Յիշատակարան Գէորգեայ» տեսած լինելով՝ կարծում է, թէ սրանով նկատի է ունեցուած Ա. ձեռագրի Գէորգ գրչին եւ թէ իբր վարքը նոյն այս ձեռագրի՝ Գէորգ գրչի գրած եւ այժմ կորսուած գլխաւոր յիշատակարանն է, ըստ որի՝ Ա. ձեռագիրը պէտք է գրուած լինի 893 թուականին[123]: Նկարագրութեան[124] մէջ վարքի խորագրից աւելին չկայ, չկայ նաեւ «Յիշատակարան Գէորգեայ» արտայայտութիւն. ուրեմն մնում է ենթադրելը, թէ սա անուշադրութեան հետեւանքով շտապով արուած յայտարարութիւն է:

Մեզ աւելի հաւանական է թւում Բ. վ. Սարգիսեանի թուագրումը՝ Ժ. դ. ճիշտ կէս: Նկատի ունենալով Մեռոնօրհնէքի կանոնի մասին գրչի ծանուցումը, թէ «մեք ոչ իշխեմք գրել, զի մի՛ անհնազանդ գտանիցիմք սուրբ Լուսաւորչի աթոռոյն եւ մեծի Հայրապետին մերոյ» (148ա), կարծում է, որ Մաշտոցը գրուած պէտք է լինի Անանիա Մոկացի կաթողիկոսի շրջանում՝ «958-964ին եւ Անանիայի կենդանութեան ատեն»: Տրամաբանութիւնն այս է. Անանիա կաթողիկոսի գրութիւնների մէջ «միւռոնի օրհնութեան եւ գործածութեան մասին եւս խիստ արգելքներ կը դրուին եպիսկոպոսաց եւն: Հաւանօրէն այդ խռովայոյզ ժամանակին եւ Անանիա կաթողիկոսի ի գործ դրած ծանր միջոցներու վախէն՝ Մաշտոցիս գրիչը խոհեմութիւն համարած է զանց ընել գրելու միւռոնի օրհնութեան կանոնը» (Վ.Ց., Գ., էջ 3): Այս փաստարկը հաստատում է նաեւ անթուական ձեռագրերի ժամանակի մեր զգացողութեամբ, որ հիմնուած է տասնամեակների փորձի վրայ. ուրեմն Ա. ձեռագրի գրչութեան ժամանակն է 960 թ. շուրջ:

ԳՐՉՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ պէտք է լինէր Արգինայի մերձակայքում. եթէ մեր հնագոյն Մաշտոցի գրիչը զգուշանում էր Հայրապետին «անհնազանդ» լինելուց եւ նրանից երկիւղում էր, նոյն տրամաբանութեամբ նա պէտք է մօտ լինէր Հայրապետանոցին՝ Արգինային, որ 944-992 թթ. ընթացքում Հայոց կաթողիկոսանիստն էր, այլ խօսքով՝ նաեւ 961 թ. Բագրատունեաց մայրաքաղաք դարձած Անիի մերձակայքում:

ԳՐԻՉԸ՝ Գէորգ. ամուսնացեալ քահանայ էր, ունի միակ յիշատակագրութիւն. «Աղաչեմ ես՝ մեղուցեալ քահանայս Գէորգ, զսրբասեր դասս քահանայից յայդմ վայրի ինձ մեղաց թողութիւն հայցէցեք յարդար դատաւորեն Քրիստոսէ, զի թերեւս ողորմեսցի բազմագութն Աստուած ինձ եւ ծնողաց իմոց եւ զաւակաց իմոց եւ զիւղակցի իմոյ, եւ որք յիշեք յիշեալ լիջիք ի Տէր. ամեն» (211ա)[125]:

ԲՆԱԳՐԱԿԱՆ ՊԱԿԱՍՆԵՐԸ. դժուար է ենթադրելը, թէ ինչ է պարունակել սկզբից ընկած Ա. պրակը[126], որովհետեւ այս ձեռագիրը, Մայր

---

[120] Աւգերեանի ցուցակի առաջաբանը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատոր Է., Տօնապատճառ-ժողովածոյ, Մատենագիրք Հայոց, Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ, Ս. Ղազար, 1996 էջ Բ-ԺԴ.:

[121] Տե՛ս Rituale Armenorum, էջ Ժ.-ԺԳ., յատկապէս ԻԴ.:

[122] 1704-1710 թթ. Նոր Ջուղայի Երեւանցոց թաղում գրել, ծաղկել եւ կազմել է տէր Խաչատուր քահանան, ինքն էլ նուիրել է Նոր Երեւանի Ս. Ամենափրկիչ եւ Ս. Ստեփանոս եկեղեցուն (տե՛ս Վենետիկի ցուցակ, Գ., էջ 557-72):

[123] Տե՛ս Հ. Գրիգոր Սարգսեան, Ա. Մաշտոցը (Ճ. թիւ՝ 457), Բազմավէպ, 1949/Ե-Զ., էջ 114-5:

[124] Նկատենք՝ արել նոյն Հ. Գ. Սարգսեանը (Նրա նկարագրածներն են՝ հմր 366-439) (տե՛ս Վենետիկի ցուցակ, Գ., էջ Զ.):

[125] Սրա սկզբում կայ պարզ բաժանարար, որ է՝ աշխարհ բառի գաղափարագրին նման 8 զարդագիծ: Տպուած է Վենետիկի ցուցակ, Գ., էջ 48, որից առել եւ որպէս Թ. դարի տպագրել է Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Ե-ԺԲ. դդ., Աշխատասիրութեամբ Ա. Ս. Մաթեւոսեանի, Երեւան, 1988, հմր 56, էջ 45 (այսուհետեւ՝ Ե-ԺԲ. դդ-ի յիշ-ք): Ունի նաեւ հետագայ՝ ամենաուշը ԺԶ. դարի մի յիշատակագրութիւն. 1բ (ստ. լս., «խոշոր եւ աղաւաղ գրութեամբ վերջին ստացողէ մը, կամ լաւ եւս նուիրատուէ մը դաշնագրի ձեւով հետեւեալն.»). «(Ած) Ես Ասլ[ա]ն տ[ո]ւր թուխթ իմ հայրայնեցն Սարգսի որ զինչ իմ ակաւսն կու անցնի թէ բունէ թէ հերկէ թէ մարգէ նրայ Սարգսի ըլնի եպկ. ու ես Սարգիս տուի իմ հայրայնեցն որ Ասլանին ըլնի ուր իմ ակաւսն անցնի. ով որ յետ վազէ Դպկ գկէս [ուտեմ] եզմ տուգանք տայ. ամէն գեղջես վկայութիւն»:

[126] Ինչ էլ մտածելու լինենք, ոսկական եւ անփաստարկ ենթադրութիւնից աւելին լինել չի կարող:

Մաշտոցի օրինակների մեծ մասի նման, սկսւում է Եկեղեցու հիմնարկէքի կանոնով, որ համար չունի, սակայն յաջորդող կանոնների մեծ մասի լուսանցային խորագրերից առաջ գրուած են նրանց կարգային համարները. «Բ. Եկեղեցի աւրհնել» (26ա), «Գ. Նոր դուռն աւրհնել» (29ա), մինչեւ «ԽԷ. Քահանաթաղ» (191ա, 204ա)[127], այսինքն՝ հիմնարկէքի կանոնի համարը, բնականաբար, առաջինն՝ Ա. է: Միով բանիւ, համարում ենք, որ այս Մաշտոցի մէջ սկզբնապէս իսկ պէտք է օրինակուած լինի 46 (47-ի Լ.՝ Մեռոնօրհնէք) կանոն:

ԼՈՒՍԱՆՑԱՅԻՆ ԽՈՐԱԳՐԵՐԸ. *կանոնների խորագրերի համառօտութիւնները ստորին լուսանցներում գրելը ձեռագիր Մաշտոցների համար սովորական, գրեթէ պարտադիր է եւ նախատեսուած է որեւէ պահի հարկաւոր կանոնը հեշտութեամբ գտնելու համար: Բանի որ ներկայ հրատարակութեան հիմք ձեռագրերը գոյութիւն ունեցող հնագոյնները լինելով՝ մեր ծիսարանի համակողմանի ուսումնասիրութեան ելակէտային հիմքն են, որոշեցինք չանտեսել խորագրերի՝ նրանց մէջ առկայ համառօտումները, որոնք յաճախ բովանդակային արժէք ունեն եւ կարօտ են մեկնաբանութեան, ուստի եւ տարընթերցումների շարքում այդպիսիք արտայայտեցինք հետեւեալ կերպ. ամէն կանոնի սկզբում դրել ենք նրա կարգային համարներն ըստ Ա եւ Բ ձեռագրերի, ապա նոյն համարների վրայ դրուած ծանօթութիւնների ներքոյ արձանագրել տուեալ կանոնին վերաբերող լուսանցային բոլոր նշումները՝ ձեռագրերի էջահամարներով հանդերձ: Այսպէս՝ Եկեղեցիօրհնէքի կանոնի համարն Ա ձեռագրում Բ. է, Բ ձեռագրում՝ [Բ.]. առաջինի վրայ դրուած ծանօթութեան ներքոյ կայ հետեւեալը. «Ա.10ա, 21ա, 24ա, 27ա, 28ա ստ. լս. «եկեղեցի աւրհնել», 12ա, 13ա, 14ա, 15ա, 19ա, 20ա, 22ա, 23ա, 25ա, 26ա՝ «.բ. եկեղեցի աւրհնել», երկրորդի ծանօթութիւնն այս է՝ «Բ.2ա, 6ա, 8ա, 9ա, 10ա, 11ա, 12ա, 13ա, 15ա, 16ա, 17ա, 19ա, 20ա, 21ա, 22ա՝ ստ. լս. «եկեղեցի», 3ա՝ «եկեցի», 14ա՝ «եկեղեցի աւրհն.», 18ա՝ «եկեղեցի աւր.»: Մկրտութեան կանոնի համարն Ա ձեռագրում ԺԸ. է, Բ ձեռագրում՝ [Ի.]. առաջինին վերաբերող ծանօթութիւնը հետեւեալն է. «Ա.69ա՝ ստ. լս. «.ժը. կնուք տալ» (70ա, 71ա, 72ա, 73ա, 74ա, 75ա, 76ա՝ առանց .ժը. համարի)», իսկ երկրորդինն այս է. «Բ.83ա, 91ա՝ «մկրտութիւն» (82բ՝ վերնագրի կողքը սեւով Ի. համարը ջնջած), 89ա, 90ա՝ «մկրտու», 84ա, 88ա՝ «կնուք», 85ա, 86ա, 93ա՝ «կնիք»:*

---

[127] *Այսպիսի բոլոր նշումները եւ համարները տե՛ս բնագրի ընթերցումների մէջ:*

ԲՆԱԳՐԻ ԼԵԶՈՒԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ *եւ Աստուածաշնչի ընկալեալ բնագրի համեմատ սուրբգրական ընթերցուածներում առկայ տարբերութիւնների մասին ձեռագրի նկարագրութեան մէջ արդէն բաւական մանրամասներ կան (Վ.Տ. Գ., էջ 3-4), այդ ամէնն այստեղ կրկնելն անիմաստ ենք համարում, որովհետեւ ներկայ գրքի մէջ ամբողջական պատկերն արդէն կայ աւելիով՝ երկրորդ ձեռագրի եւ Աստուածաշնչի համեմատութեամբ, ուստի համոզուած ենք, որ թէ՛ սուրբգրական ընթերցուածների եւ թէ՛ ընդհանրապէս հնաւանդ Մաշտոցիս լեզուաբառապաշարային կատարեալ քննութիւն արժէ անել այս գրքի լոյս ընծայումից յետոյ: Ձեռագրիս բնագիրը որքան էլ հին, որքան էլ նախնական է, գրչական վրէպներից զուրկ չէ. սխալմունքներն ու անստոյգ բառաձեւերը հիմա արդէն հեշտ նկատելի եւ մեկնաբանելի են. օրինակ՝ Ա.126բ կայ «գագաթնագաշն», որի տեղ՝ Հռոմսի Մաշտոցն[128] (Հ) ունի «գագաթան դրոշմ», նոյն տեղում Ա ունի «սախմանալի նա խորհրդով», իսկ Հ՝ «ախտալիս իմն» եւ այլն:*

Նկատենք, որ Նոր հայկազեան բառարանում[129], Մաշտոցի այլ օրինակների շարքում, քաղուած է նաեւ հնագոյն այս ձեռագրի բառապանձր (յղումը՝ «Մաշտ. հին»). բերենք աղբիւրիս՝ երից վարդապետաց բնորոշումը, որ նաեւ ծիսագիտական արժէք ունի. «Մ~շտ. Մաշտոց գիրք՝ որպէս ծիսարան ազգիս, հիմնարկեալ ի սրբոյն Մեսրոպայ Մաշտոցէ, եւ լաւագոյն յօրինեալ ի Յովհաննէ Մանդակունւոյ, որոյ անունն է արձանագրեալ ի սկիզբն հին եւ երկաթագիր Մաշտոցի: Թողից առել զանուանս այլոց դասակցաց նորա նշանակեալս յօրհնութիւնսրեր մակագրեալ ցուցակի, թարգմանչաց ասեմ ի յունէ եւ յասորւոյ գայլեւայլ կանոնս Մաշտոցի: Հին Մաշտոցն էր համառօտ, որ դարուց ի դարս ճոխացաւ. վասն որոյ ոմանք ի կարծիս եղեն, թէ այս գործ ունիցի զվերջին կարգաւորութիւն յերկրորդ Մաշտոցէ կաթողիկոսէ ի Թ. դարու, մինչդեռ եւ ոմն ի գրչաց զվարս սորին Մաշտոցի գրեալն ի Ստեփաննոսէ Սեւանեցւոյ զետեղեալ է զկնի այսր մատենի: Այլ զյետին լրումն էառ գործս յաւուրս Լամբրոնացւոյն, եւ կիլիկեցւոց, որպէս յայտ է ի յաւելուածոց նոցին ի ձեռագիրս գրեալս ի ԺԴ. դարու: Ընդ կոչմամբս Մաշտ. նշանակեմք եւ գգիրս ձեռնադրութեան» (Հտ. Ա., էջ 15): Աւելացնենք, որ Մաշտոցի բնագրի լեզուական քննութիւնը պէտք է անել անպայման Նոր Հայկազեանի տուեալները նկատի ունենալով եւ սա հաստատենք միայն մի օրինակով՝ Ա.125բ կայ «ընդդէմ ամենաբոյծ չարժմանց». որի առիթով ՆՀԲ ունի. «գուցէ գրելի էր՝ ամենաբիծ» (Հտ. Ա., էջ 58գ):

---

[128] *Տե՛ս ստորեւ:*

[129] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի. Երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր՝ Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան, հատոր առաջին. Ա-Կ, ի Վենետիկ, յամին 1836. ՌՄՁԵ., 20, 1140 էջ, հատոր երկրորդ՝ Բ. Հ-Ֆ, ի Վենետիկ, յամին 1837 ՌՄՁՁ., 1067 էջ:*

Ուղղագրական յատկանիշների մասին քաղում ենք նկարագրութիւնից. «Հրչտակ, հրչտակապետք, հրչտակական» կը գրէ միշտ: Ե գիրը սովորաբար գործածուած է փոխ. Է-ի, բայց ոչ սակաւ անգամ ալ հակառակը, այսինքն՝ անխտիր կը գրուի «էթե, եթէ, եթե, միթե, թե եւ թէ[130]... կէտադրութիւնն իսկ... հին Աւետարանաց նման պարզ է. վասնզի սովորաբար կը գործածէ կէտ (.) դնելով զայն մերթ տողէն վեր, մերթ տողին վրայ եւ մերթ ալ բառերու վերջին տառին վրայ: Վերջակէտ (:) եւ նոյնը գծով (:-) միայն խորագիրներու եւ մէկ մի կանոնի վերջ գործածուած է, բայց ոչ բնագրին: Շեշտը քանի մը անգամ գործածուած է միայն, եւ այն իսկ նման երկարի՝ հորիզոնական գծով: Այսպէս ստորակէտ՝ միջակէտն վար քանի մ'անգամ միայն: Բացառութեամբ միւս հին երկաթագիրներուն՝ պատիւ (ւ) շատ անգամ գործածած է նաեւ -թիւն, -թեան, -թեամբ վերջացող գոյական անուանց վրայ, այսպէս. «փրկութեն, սրբութին, քարոզութբք, յանցաւորութբ» եւն: Տողադարձի ժամանակ բնաւ բաժանման նշան չի գործածեր վանկի կամ տառի, այլ շարունակաբար բառեր եւ տողեր իրարու կը յաջորդեն. իսկ տողավերջը հասած պահուն երբ տեղ կը մնայ, յաջորդ բառի առաջին տառն անգամ հոն կը գծէ, ըլլայ այն ձայնաւոր, ըլլայ բաղաձայն. իսկ ընդհակառակն երբեմն երբ վերջին բառէն տառի մը կամ երկու տառի տեղ կը պակսի, այդ տառը փոքրկացնելով կա՛մ նախորդ տառին վերեւ կը գրէ եւ կա՛մ անոր ստորոտը, տողէն դուրս (տե՛ս թղ. 178ա^{2}): Գրչութեան այս վերջին կերպը հնագոյն ուրիշ երկաթագիրներու անսովոր է եւ ասոր յատուկ» (Վ.Յ, Գ., էջ 4):

Բ. Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հ^{մր} 1001. Մաշտոց, ԺԱ. դ., 184 թերթ, թուղթ, 40x25,5. երկսիւն, ուղղագիծ երկաթագիր, խորաններն ու քարոզները՝ նոյն երկաթագրի աւելի մանր տառերով, 24 տող.

կազմը ԺԸ-ԺԹ. դդ. սահմանագծի է՝ ստուարաթղթէ միջուկով ծաղկաթուղթ. մէջքը եւ անկիւնները՝ կաշի, աստառը՝ թուղթ, որի շարունակութիւն-մասն են սկզբի եւ վերջի մէկական չգրուած թղթէ պահպանակները: Ունի 8 թերթանոց 24 պրակ՝ Բ-Ջx8 (Ջ՝ 5, Բ, Ո՝ 6, Ը՝ 7). Ը պրակն սկզբնապէս իսկ ունեցել է 7 թերթ (47-53), սկզբից ընկած է Ա պրակը լիովին եւ Բ պրակի առաջին 2 թերթը (պակաս՝ 10 թերթ), թ. 173-4ի եւ 178-9ի միջեւ չկան նաեւ Ո պրակի սկզբի եւ վերջի 1ական թերթերը (պակաս՝ 2 թերթ), ընկած է նաեւ Ջ պրակի վերջի 3 թերթը (պակաս՝ 3 թերթ). առկայ 184 թերթի սահմաններից պակաս է ընդհանուր հաշուով՝ 15[131], վերջից՝ անորոշ քանակի թերթ[132], վերջի թերթերը խառնուած են. կարդալ՝ 177, 180, 178-9, 181-4:

Ա ձեռագրի նման ինչ որ ժամանակ ինչ որ մէկը թղթի իր կարիքը բաւարարել է այս ձեռագրի լայն լուսանցների հաշուին, այսինքն՝ մկրատով կամ ածելիով կտրել է՝ 61, 116, 126, 155-156 թերթերի արտաքին լուսանցները (թ. 116 բնագիրը վնասելով), թ. 24 արտաքին լուսանցի ստորին կէսը, թ. 118 արտաքին լուսանցի վերին $^{1}/$քը, թ. 130-132 արտաքին լուսանցը եւ արտաքին սեան ստորին 8 տողը, թ. 142 արտաքին լուսանցի վերին $^{2}/$քը՝ բնագիրը վնասելով:

ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ. երբեւէ հնագրական յատուկ քննութեան նիւթ չի եղել. ձեռագրացուցակներում թուագրուած է մէկ Թ-Ժ. դ.[133], մէկ՝ Ժ. դ.[134]: Թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը ճիշտ եւ ընդունելի չենք կարող համարել. նկատի ունենալով այն հանգամանքը, որ 981 թուականի թղթէ մեր հնագոյն ձեռագրի[135] նիւթ-թուղթը որակապէս շատ է տարբերւում սրա թղթից, աւելացնելով նաեւ ձեռագրիս հնագրական յատկանիշները եւ գրի՝ ԺԱ. դ. ձեռագրերի գրին աւելի մերձաւորութիւնը եւ յաջորդ՝ ԺԲ. դ. ձեռագրերի գրից աւելի հին լինելու նշանները, աւելի ճշմարտանման ենք համարում ԺԱ. դարով թուագրումը[136]: Գրչու-

---

[130] Միայն Ա ձեռագրում առկայ մասերում ե-է գրերի այս խոտոր ձեւերը պահել ենք նոյնաբար, նաեւ Բ ձեռագրում առկայ մասերում նախընտրել ենք վերջինիս առաւել կանոնաւոր ձեւերը, իսկ Ա ձեռագրի խոտոր ձեւերը որպէս ընթերցում չենք նշել:

[131] Բարեբախտաբար, Ա ձեռագիրը լրացնում է այս օրինակի թէ՛ սկզբի եւ թէ՛ միջի ընկած թերթերի պակասները:

[132] Թերթերի բաշխումն ըստ պրակների հետեւեալն է. Բ$^{1-6}$, Գ$^{7-14}$, Դ$^{15-22}$, Ե$^{23-30}$, Զ$^{31-38}$, Է$^{39-46}$, Ը$^{47-53}$, Թ$^{54-61}$, Ժ$^{62-69}$, Ի$^{70-77}$, Լ$^{78-85}$, Խ$^{86-93}$, Ծ$^{94-101}$, Կ$^{102-109}$, Հ$^{110-117}$, Ձ$^{118-125}$, Ղ$^{126-133}$, Ճ$^{134-141}$, Մ$^{142-149}$, Յ$^{150-157}$, Ն$^{158-165}$, Շ$^{166-173}$, Ո$^{174-177+180+178}$, Ջ$^{179, 181-184}$:

[133] Համառօտ ցուցակ ՄՄ, Ա., էջ 456:

[134] ՄՅ ՄՄ, Դ., էջ 10:

[135] Մատենադարանի ձեռ. Հ^{մր} 2679:

[136] Այս ամէնը մեր փորձի եւ զգացողութեան արտայայտութիւնն է. ըստ այսմ՝ հնութեամբ երկրորդ այս Մաշտոցի հնագրական՝ տառ առ տառ քննութիւնն անհրաժեշտ է:

թեան ՏԵՂԻ համար էլի կարող ենք արձանագրել կրկին զուտ զգացողութեամբ ունեցած տպաւորութիւն, թէ այս ձեռագիրը պէտք է գրուած լինի Այրարատում, Ա ձեռագրի նման՝ նոյն Բագրատունեաց թագաւորութեան սահմաններում[137]:

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԿԷՏԱԴՐԱԿԱՆ *պատկերը. գլխատառը երկաթագրի համար սովորական ձեւով՝ աւելի խոշոր գրերով, նոր տողից, մասամբ դէպի ձախ լուսանցք եկած, խորանների մէջ՝ նաեւ տողի մէջ: Ունի միջակէտ՝ տողի ստորին եզրին. սա հիմնական տրոհիչն է. ստորակէտ՝ տողից ցած դիրքում, շատ ուշադրու՝ աջից ձախ գծագրութեամբ. ապաթարցի նման՝ «ի» նախդրի վրայ միշտ հորիզոնական գծիկ. խորանների սկզբում՝ տողից վեր իրար եւեւից երեք կէտի շար. աւարտին՝ եռանկիւն դասաւորութեամբ կրկին երեք կէտերի շարք. երբեմն՝ երկկէտ, բայց ո՛չ միշտ վերջակէտի, այլ սովորական տրոհիչի դիրքում. երբեմն, արդէն որպէս վերջակէտ՝ աջում գրուած գծիկի հետ :-, բութի դիրքում համարեա հորիզոնական նուրբ գիծ: Առոգանական նշաններ (շեշտ եւ նմանիք) քիչ ունի՝ ո՛րչափ, բայց տրոհումը բաւական կանոնաւոր է եւ տրամաբանական: Տողամէջերին սրբագրումներ ունի՝ բաց թողնուած բառերի լրացումներ, չտեղաւորուած տառերը երբեմն գրում է տողավերջի տառից վեր կամ վար, սխալ գրածները՝ կէտերով շրջանակում: Ունի՝ ամպատամբեցաք, նահեցարուք, եթե, սեղանոյն, բառավերջի -յ՝ հիմնականում ունի, սակայն երբեմն չի գրում: Համառօտումներ ունի՝ Յ″ս, Ք″ս, Տ″ր, Ա″ծ, յԵ″մ, -թե″ (-թեան), թի″ (-թիւն):*

ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ. *անկախ պակասող թերթերից, պրակահամարների կարգը կանոնաւոր է, ուրեմն՝ կանոնների դասաւորութիւնն այսօր այնպէս է, ինչպէս ի սկզբանէ գրուել է (պակասող միակ կանոնը Ա՝ Հիմնարկէքինն է, որի միայն վերջին թերթն է պահպանուել, ուրեմն՝ սկիզբի հետ չկայ նաեւ համարը), սակայն կանոնահամարների խնդիրը բաւական խճողուն է. Բ., Գ., Ե., Զ., ԺԲ., ԺԸ., ԻԶ., Լ., ԼԱ. համարները չկան, Դ., Թ., Ժ., ԺԱ., ԺԳ., ԺԴ., Ի. համարները ջնջուած են, սեւ թանաքով կանոնաւոր-ճիշտ համարներ ունեն Է., Ը., ԺԵ-ԺԷ., ԺԹ., ԻԳ., ԻԷ. կանոնները, կան նաեւ կարմրով անճիշտ համարներ (ուղիղները դրել ենք թեքից յետոյ)՝ ԻԲ/ԻԵ., ԻԴ/ԻԲ., ԻԵ/ԻԴ., ԻԹ/ԻԸ., ԼԴ/ԼԳ.: Այս վիճակից ելնելով. բացակայ եւ սխալ համարների փոխարէն բնագրի մէջ նշանակել եւ Ա ձեռագրի համարների կողքը գրել ենք ճիշտ եւ կանոնաւոր աճով փակագծային համարներ. օրինակ՝ ԻԴ/[ԼԲ.], ԻԵ/[ԼԳ.]. այստեղ ԻԴ-ԻԵ-ն Ա ձեռագրինն են, [ԼԲ-ԼԳ.]-ն՝ Բ ձեռագրինը:*

Ունի 32 կանոն. չունի Ա ձեռագրի հետեւեալ համարները. Ա. (թափուած), ԻԶ., ԻԷ. (Լ՝ երկուսն էլ չունեն), ԼԵ., ԼԷ., ԼԹ.-ԽԷ. (=5+9=14 կանոն). 46-14=32 միաւոր[138]:

ՆՈՌՈՄՈՍԻ ՄԱՇՏՈՑԸ

Մեր բնագիրն արդէն պատրաստ էր (համեմատութիւններն աւարտել եւ օժանդակ ցանկերը կազմել էինք), երբ նկատեցինք, որ Ն. եպս. Պողարեանի «Ծիսագիտութիւն» (Նիւ Եորք, 1990) գրքում Երուսաղէմի Ս. Յակոբեանց հաւաքածուի Մաշտոցների պատկերն անկատար է, ուստի թերթեցինք նոյն հեղինակի կազմած ձեռագրացուցակի բոլոր 11 հատորները եւ պարզեցինք, որ սրանց մէջ արձանագրուած է 158 միաւոր Մաշտոց[139]*, որոնցից մեր խնդրի համար կարեւորագոյնն այս հաւաքածուի հնագոյն՝ Հմր 3299 Մաշտոցն է*[140]*, որ Սեբաստիայի Ս. Նշանի նախկին Հմր 96 ձեռագիրն է եւ որի մասին 1913ից առաջ Թորգոմ եպս. Գուշակեանը գրել է. «Հայ եկեղեցւոյ Ծիսարանի կազմութեան ուսումնասիրութեան համար մեծ շահեկանութիւն կը ներկայացնէ ձեռագիրս. մանրամասն համեմատութիւն մը տպագիր Մայր Մաշտոցին կամ անոր իբր հին ծառայած ձեռագիրներուն հետ՝ մեծ լոյս պիտի սփռէր կարգ մը կէտերու մասին, աւելի քան երբեք անգամ մը եւս շեշտելով այն պատմաքննական ճշմարտութիւնը, թէ մեր ներկայ Ծիսարանը հետզհետէ խճողուելով անպէտ եւ աւելորդ մանր մասունքներով, շատ ու շա՛տ հեռացած է նախնականին տանելի եւ հաճելի պարզութենէն»*[141]*: Ձեռագրի նկարագրութիւնն ուսումնասիրելով համոզուեցինք,* որ այն եւս հնագոյն է եւ անպայման հարազատ մեր բնագրի հիմքերին, այլեւ մինչեւ այժմ ցաւալիօրէն դուրս է մնացել մեր ծիսագիտութեան տեսադաշտից: Այսինքն՝ այս ձեռագրի գործածումը մեծապէս օգտակար կլինէր մեր խնդրի համար, ուստի անպայման արժէր գրքիս տպագրութիւնը մի փոքր ուշացնել եւ համեմատել նաեւ այս երրորդ օրինակը: Բայց Երուսաղէմի մեր ներկայ պատրիարքի օրօք այդ մատենադարանի որեւէ ձեռագրի պատճէն ստանալն ընդհանրապէս անհնար է[142], ուստի որպէս ապացոյց ուսումնասիրողի ուղենիշ՝ գրքիս կանոնացանկային յաւելուածների շարքում գրեցինք նաեւ այս ձեռագրի ցանկը (Յաւելուած Զ.), ամէն միաւորի սկզբում դնելով նաեւ մեր բնագրի կանոնների կարգային համարները:

---

[137] *Ձեռագիրս ունի միայն որեւէ տեղեկութիւն չտուող երկու փոքր յիշատակագրութիւն-աղերս. «47բ «Տէր Աստուած, փրկիչ աշխարհի եւ ազատիչ ազգի մ[ե՞րոյ], ի ձեռն Սուրբ խաչիս ողորմէ գծողես. ամէն»: 69բ «Յիսուս Քրիստոս, վասն քո սուրբ Մկրտութեանդ աղաչեմ, ողորմեայ գծողիս. ամէն»:*

[138] *Այս ձեռագրի կարգային ԻԳ՝ Պսակ վերացուցանելոյ կանոնը Ա ձեռագրում Ի՝ Պսակի կանոնի մասն է (այդպէս էլ հրատարակել ենք՝ Իա., այսինքն՝ առանձին համար չենք տուել):*

[139] *Ըստ որում, սրանցից 54ը ոչ միայն անթուական են, այլեւ կազմողի թուագրում չունեն:*

[140] *Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Ժ., Կազմեց Նորայր արքեպս. Պողարեան, Երուսաղէմ, 1990, էջ 127-30:*

[141] *Ցուցակ հայերէն ձեռագրաց Սուրբ Նշանի վանուց ի Սեբաստիա, Կազմեց Թորգոմ*

Ձեռագրիս կարեւորագոյն յատկանիշներն են. գրիչ եւ ստացող Յովհաննէս քահանայ Հոռոմոսի վանեցին[143] նոյն Հոռոմոսի վանքում գրել է ԺԲ. դ. վերջերին[144]՝ երեւի 1180ի շուրջ[145]. ունի 357 թերթ[146], նիւթը՝ «բամբակեայ գործուածք» թուղթ. չափը՝ 24x15 (հաստ.՝ 8 սմ), միասին, «խորագրերը եւ մասամբ հրահանգները կարմիր, մնացեալը մուգ սրճագոյն մելանով.... հրահանգներն ու քարոզները մեծ բոլորգիր. երկաթագիր տառերով խառն, աղօթքներն ու ընթերցուածները հնաձեւ բոլորգիր», 19 տող. պրակները՝ Ա-Տx12[147]:

Հոռոմոսի (=Հ)[148] օրինակն ունի Ա ձեռագրում առկայ 41 կանոն, ապա չունի նրա ԺԵ., ԺԷ., ԺԹ., Լ., նաեւ ԼԹ-ԽԱ. կանոնները (վերջիններս՝ երեւի թ. 235-6 միջեւ ընկած 2 թերթի պատճառով). Ա ձեռագիրը չունի նրա ԽԲ. եւ ԽԳ.՝ Տղաթաղ եւ Այգալաց, այլեւ ԻԳ. «Կանոն անագանոսաց, որ են սաղմոսասացք» (տարբեր է Ա ձեռագրի ԽԲ. եւ Հ օրինակի Ի. «Կանոն ձեռնադրութեան անագանոսաց, որ լսին գրակարդացք» կանոնից). իմա՝ Հոռոմոսի Մաշտոցը չունի Ա օրինակի ընդամէնը 7 կանոն, աւելի ունի 3 կանոն: Եթէ մեր ԱԲ ձեռագրերն իրենց բովանդակութեամբ վերաբերող որեւէ յիշատակարան չունեն, ապա Հոռոմոսի օրինակի գրիչ-ստացողն ունի մի ակնարկ, որ մտորելու առիթ է տալիս. «Վասն յուսոյն որ առ Աստուած, ես՝ Յովհաննէս Հոռոմոսի վանեցի, եղբայր Վարդանայ, մեծ տառապանաւք աշխատեցայ ի գիւտս բա-

---

արքեպ. Գուշակեան, Վիեննա, 1961, էջ 66. «Թուղթ՝ 358 (716 էջք), 24x15x6 սմ., միասին, 19 տող, թուղթ, կազմ քայքայուած, հանգամանք՝ թրջած եւ մգլոտած. վերնագիրք՝ կարմիր թանաքով, գիր՝ հրահանգները եւ քարոզները անցման գեղեցիկ գիր, աղօթքներն ու ընթերցուածները՝ բոլորգիրի եւ նօտրգիրի միջեւ կարծես անցման կէտ մը կազմող գիր մը, թանաք՝ սեւ, սկզբնատառք՝ մեծադիր երկաթագիրք, լուսանցազարդք՝ հնագոյն պարզութեան գեղեցիկ ձեւեր, մուգ գոյներով»:

[142] Մերժումները շարունակական եւ հետեւողական են, բոլոր պատճառաբանութիւնները՝ տրամաբանութեան հետ հեռաւոր կապ իսկ չունեցող: Այս վարմունքը գուցէ ձեռագրերի հետ նախորդի ժամանակ պատահած անհաճոյ արկածախնդրութիւնների հակազդեցութիւն է, բայց էլի արդարացնելի չէ. Մովսէս Երզնկացի վարդապետը ԺԳ. դ. վերջերին առ այս ասել է. «Որ գիրքս զԱստուածաշունչս եւ կամ զՄեկնչերն եւ զՆորերն եւ զինչ վարդապետական գիրք կայ, խնայէ դասասաց վարդապետի, փակեալ լիցի նմա դուռն արքայութեանն Աստուծոյ, զի գրեանքդ վասն դասի ենք գրել ի դուռն Սուրբ Լուսաւորչիդ» (Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հմր 177, 12բ):

[143] Այս գրիչ-մանրանկարչի մասին տե՛ս Կարէն Մաթեւոսեան, Անի. եկեղեցական կեանքը եւ ձեռագրական ժառանգութիւնը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 267-70. գրել է նաեւ՝ ա) իր երէց եղբայր Վարդանի «Հրամանաւ» եւ «կրտսեր, աշխարհաւար» եղբայր Գրիգորի «սատարութեամբ»՝ Վիեննայի 961/87 Աւետարանը, 1181 թ., 344 թերթ, մագաղաթ, 19x15. 17 տող (Վիեննայի ցուցակ, Ա., 1914, էջ 391), Յիշ-ք, էջ 483, 486: բ) 1187 թ., Բարսղի Կեսարացւոյ Ճառք յաղագս Վեցաւրէից. եղել է Կեսարիայի Ս. Սարգիս եկեղեցում, այժմ է Երմ Հմր 1801՝ Երուսաղէմի ցուցակ, Զ., 1972, էջ 161-3. Երուսաղէմի ցուցակ, Ժ., 1990, էջ 605՝ 1199 թ. մի յիշատակարան, ըստ որի՝ Ծոսե գիւղացի Յակոբը Հոռոմոսում Վարդան եւ Յովհաննէս եղբայրներին կազմել է տուել մի Աւետարան:

[144] Գրչի մանր յիշատակագրութիւններն այստեղ բերելն աւելորդ չէ. էջ 84/42բ. վր. լս. «Եւ զՅովհաննէս գրիչ յիշեսջիք յաղաւթս վասն Աստուծոյ». էջ 227/114ա ստ. լս., կարմրով. «Ով աստուածասէր ընթերցող, վասն Աստուծոյ ասա՛ սրտի մտաւք՝ Աստուա՛ծ, ողորմեա՛ Յովհաննիսի եւ ծնողաց իւրոց եւ եղբարց». էջ 292/146բ ստ. լս. «ԶՅովհաննէս գրիչ յիշեա՛ ի Տէր, ով սուրբդ Աստուծոյ եպիսկոպոս, աղաչեմ». էջ 535/268ա. «ԶՅովհաննէս գրիչ եւ ստացիչ սորոյ գրոցս յիշեսջիք յաղաւթս հանդերձ ծնաւղովք մերովք, աղաչեմ». էջ 551/276ա. «Եւ զանարժան զՅովհաննէս յիշեա՛ անմոռաց»:

[145] Ա. Մաթեւոսեանը ձեռագրիս յիշատակարանները դրել է 1181 թ. ներքոյ (Ե-ԺԲ. դդ. յիշ-ք. Հմր 251, էջ 233)՝ ելնելով Մխիթ. Վիեննայի Հմր 961/87 Աւետարանի թուականից՝ Հոռոմոսի վանք, 1181 թ., գրիչ՝ Յովհաննէս կր., միաբան Հոռոմոսի (հմմտ. Վիեննայի ցուցակ, Ա., 1914, էջ 391-6):

[146] Ձեռագիրը թերթահամարներ չունի, էջակալուած է՝ 1-716, բայց հաշուելով յստակութեան համար սրա կանոնացանկը պատկերել ենք ըստ թերթերի: 716-2=714 էջ, որ է 358-1=357 թերթ (ընկած՝ թ. 342՝ էջ 683-4): Ունի «Գունաւոր լուսանցազարդք՝ վաղնջական ոճով, թանձրագիծ, էջ 552՝ խորանազարդ իւր սարօք. Կաշեկազմ խուաքարտեայ. առաջին երեսին փակցուած նախկին խաչազրոշմ կաշին՝ մասամբ փճացած». վերակազմութեան ժամանակ դրուած՝ սկզբից 1 եւ վերջից 17 չգրուած նոր թղթէ պահանակ. սկզբինի վրայ՝ «Նորոգ կազմեալ եղեւ հնագոյն Մաշտոցս ի տպարանի Սրբոց Աթոռոյս, յամի Տեառն 1976, յուլիս Մայիս ամսոյ, Տեսուչ Ձեռագրատան Նորայր Արքեպս.», «Կնքադրոշմ Սբ. Նշանի՝ էջ 3: Վիճակ՝ ընդհանուր առմամբ ազդուած թացութենէ, վերջը թերի»:

[147] Պրակների մեր կազմած պատկերն է՝ Ա$^{1-12}$, Բ$^{13-24}$, Գ$^{25-36}$, Դ$^{37-48}$, Ե$^{49-60}$, Զ$^{61-72}$, Է$^{73-84}$, Ը$^{85-96}$, Թ$^{97-108}$, Ժ$^{109-119}$ (=11. թ. 114-5ի միջեւ ընկած մէջտեղի զոյգի երկրորդը), Ի$^{120-131}$, Լ$^{132-143}$, Խ$^{144-155}$, Ծ$^{156-167}$, Կ$^{168-179}$, Հ$^{180-191}$, Ձ$^{192-203}$, Ղ$^{204-205}$, Ճ$^{206-217}$, Մ$^{218-229}$, Յ$^{230-239}$ (=10. թ. 235-6ի միջեւ ընկած միջին 2 զոյգի երկրորդ թերթերը), Ն$^{240-251}$, Շ$^{252-263}$, Ո$^{264-275}$, Չ$^{246-287}$, Պ$^{288-299}$, Ջ$^{300-311}$, Ռ$^{312-323}$, Ս$^{324-335}$, Վ$^{336-346}$ (=11. ընկած թ. 342ի մէջտեղի զոյգի 2րդը), Տ$^{347-358}$:

[148] Այս՝ Հ պայմանանիշով մեր բնագրի հետ համեմատել ենք նկարագրութեան մէջ առկայ ԻԵ. կանոնից Ն. եպս. Պողարեանի արած ընդարձակ քաղուածքները:

նից գրոց եւ գրեցի ըստ իմում կարի աղաչեմ յիշեսջիք զմեզ յաղաւթս»[149]: «Ի գիտս բանից գրոց» դարձուածի յոգնակի ձեւը կարող է ենթադրել տալ, որ Յովհաննէս Հաւատոցին գուցէ իր գրած գրքի կանոնները հատիկ առ հատիկ կամ մաս առ մաս գտել եւ ի մի է բերել. սակայն նրա եւ Ա. ձեռագրի կանոնների մեծ մասի նոյնականութիւնը մտածել է տալիս, որ դարձուածի յոգնակիութեամբ կարելի է նաեւ նշանակութիւն չտալ եւ համարել, որ Յովհաննէսի գտած եւ վերարտադրածը եղել է մի գիրք. այն է՝ նոյն Մաշտոց կաթողիկոսի ժողովածը: Սակայն այսպէս մտածելու դէպքում էլ պէտք է զգոյշ լինել եւ շտապելով չեզրակացնել, թէ նրա ժամանակ գոյութիւն ունեցած կանոն-աղօթքների քանակը եղել է ընդամէնը 46 + 1 (Մեռոնի) + 3 (Անագանոս-սաղմոսասացի, Տղաժացի եւ նրա Այգայացի) = 50 կամ աւելի միւսոր: Այսինքն՝ համոզուած ենք, որ այս խնդիրը կարելի է լուծել միայն ձեռագրական շատ աւելի մեծ նիւթի եւ աղբիւրագիտական տարբնոյթ բոլոր վկայութիւնների համադիր քննութեամբ:

Բոլոր դէպքերում Վենետիկի եւ Երուսաղէմի ձեռագրերի պարունակութեան համարեա նոյնականութիւնը կարող է յանգեցնել տրամաբանական մի եզրակացութեան, թէ երկու դէպքում էլ գործ ունենք Մաշտոց կաթողիկոսի կազմած ժողովածուի հետ: Աւելին՝ նոյն մտքի օգտին է խօսում նաեւ այն փաստը, որ թէ՛ այս երկուսը եւ թէ՛, ըստ մեր ենթադրութեան Բ ձեռագիրը, գրուել են կենտրոնական Հայաստանում կամ Բագրատունեաց թագաւորութեան տարածքում՝ իրերայաջորդ Ժ., ԺԱ. եւ ԺԲ. դարերի ընթացքում:

* * *

Արդէն ասացինք, որ Ա. ձեռագրում Քահանայաթաղի կանոնը վերջից թերի է, այլեւ առկայ վերջին տետրից առաջ մի պրակ էլ ընկած է: Թերի եւ անկատար կանոն չէինք կարող հրատարակել, ուստի էջմիածնական մեր Մայր Մաշտոցների շարքում թուցիկ համեմատութեամբ գտանք մէկը, որ ընթերցուածների, աղօթքների եւ քարոզների կարգով ու ընթացքով մեր հիմնական բնագրին հնարաւոր չափով համընթաց է. սա ՄՄ Հմր 961 ձեռագիրն է (Բաղէշի Կամախ գիւղ, ՌԻԶ.-1577 թ., գրիչ՝ Ներսէս, ծաղկող՝ Վարդան Բաղիշեցի), որի Քահանայաթաղի կանոնը (251ա-336ա), բուն բնագրի պակասների, նաեւ ծէսի հետագայ ճոխացումների մասին պատկերացում տալու նպատակով վերարտադրեցինք որպէս յաւելուած (մանրամասները՝ ստորեւ): Սակայն սրանից յետոյ էլ նկատեցինք գոյութիւնը Քահանայթաղէքի մի այլ՝ շատ արժէքաւոր ձեռագրի, որ է հետեւեալը.

Ձեռ. Դ. ՔԱՀԱՆԱՅԱԹԱՂԻ ԿԱՆՈՆԻ ԺԲ. ԴԱՐԻ ՕՐԻՆԱԿԸ. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ Հմր 2789

Ունի 186 թղթէ թերթ[150], չափը՝ 25,5x17. գրութիւնը՝ միասիւն, էջում 17 տող[151]: Սկզբից եւ վերջից թերի է. պահպանուած է 16 պրակ՝ Ե-Մx12, չկան Ա-Դ. պրակները, Ե. պրակի սկզբի 2, Մ. պրակից 4 (Ա-Դ.՝ չիք, Ե.՝ 10, Մ.՝ 8)[152], եւ վերջից անորոշ քանակի թերթեր: Առաջին՝ մեծ կէսը Քահանայաթաղի կանոնն է (1ա-129բ), որի սկզբից ընկած է ուղիղ 50 թերթ (պրակք Ա-Դ.՝ 4x12=48, եւ Ե. պրակի առաջին 2 թերթը = 50), որոնց վրայ, անկասկած, եղել է սոսկ նոյն կանոնի սկիզբը[153]: Միակ համառօտ յիշատակագրութիւնից յայտնի է միայն ստացողների անունները. «Քրիստոս Աստուած նորոգեսցէ զհոգի ստացողաց սորա՝ զՍարգսի եւ զՍտեփանոսի, յիւրում գալըստեանն» (129բ). գրչութեան մնացած հանգամանքներն անյայտ են: Գիրը անցման կամ սրեւեկեան բոլորգիր է, երկաթագրի տարրերով, որով շատ նման է ԺԲ. դ. երկրորդ կէսին Այրարատում գրուած ձեռագրերին[154] ըստ այսմ կարելի է վստահ լինել, որ գրուած է բուն Հայաստանում (ոչ Կիլիկիայում)[155]:

---

[149] *Տե՛ս նաեւ Ե-ԺԲ. դդ-ի յիշ-ք, էջ 233, Հմր 251 (ձեռագրի՝ էջ 129/65ա):*

[150] *ԺԹ. վերջերին անկազմ ստացուել է Աստրախանի Հայոց երկսեռ դպրոցից (Համառօտ ցուցակ ՄՄ, Ա., էջ 67). 1950ականներին առնուել է ստուարաթղթէ կազմի մէջ, 1975 թ. պատրաստուել է նոր կաշեկազմ՝ դրոշմազարդ շագանակագոյն կաշի. միջուկը՝ տախտակ, աստառը՝ դրոշմազարդ կտաւ. սխալմունքով թ. 179 դրուած է վերջում՝ թ. 186ից յետոյ:*

[151] *Փոքրաչափութիւնը հիմք է մտածելու, որ գրուել է ո՛չ թէ եկեղեցում բեմի վրայ գործածուելու, այլ թաղման ընթացքում ծիսակատարութիւն անելու համար. միայն թէ անհասկանալի է, թէ ինչո՞ւ է Քահանայաթաղէքին կից՝ որպէս ձեռագրի երկրորդ մաս, սրա մէջ օրինակուել նաեւ հետեւեալը. 130ա-186բ «Երանելւոյն Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացոյ Ի վարս եւ ի սքանչելիս սրբոյն Գրիգորի Սքանչելագործի Կեսարու եպիսկոպոսի - Այլ որպէս առ ի յոմանց եղեալ էր կամ ի սկզբանէ բնակեալ ի քաղաքի, որպէս ոչ ինչ աւգտեցուցանել, յառաջիկայսն թողցուք զայսպիսի պատմութիւնս... զոր միայն խոստովանեին գոլ ճշմարիտ զԱստուած Գրիգորի եւ ամենայն/// (թափուած)»:*

[152] *Պրակներն այս է. Ե.*$^{1-10}$*=10, Զ.*$^{11-22}$*, Է.*$^{23-34}$ *Ը.*$^{35-46}$*, Թ.*$^{47-58}$*, Ժ.*$^{59-70}$*, Ի.*$^{71-82}$*, Լ.*$^{83-94}$*, Խ.*$^{95-106}$*, Ծ.*$^{104-118}$*, Կ.*$^{119-130}$*, Հ.*$^{131-142}$*, Ձ.*$^{143-154}$*, Ղ.*$^{155-166}$*, Ճ.*$^{167-178}$*, Մ.*$^{179-183}$*=8:*

[153] *Պահպանուած սկիզբը Ա օրինակի 178րդ ընթերցուածի (Յովհ. ԺԵ. 11 - ԺԶ. 5) 16րդ տունն է. «/// այլ ես ընտրեցի զձեզ եւ եդի զձեզ...». ձեռագրիս թ. 1-50 ունեն 40.610 նիշ (մի թերթը միջինը 812 նիշ է), Ա ձեռագրի մէջ նոյն կանոնի՝ 178րդ ընթերցուածին նախորդող շարադրանքի նիշերի թիւն է՝ 33.549. նկատի ունենալով, որ Հմր 2789ի (1ա-73բ) եւ Ա ձեռագրի (209բ-230բ) բնագիրների համընթաց մասերը կատարելապէս նոյնական չեն, ուրեմն ձեռագրիս սկզբի ընկած 50 թերթի վրայ եւս եղել է Քահանայաթաղի կանոնը, որին այլ բնագիր չի նախորդել:*

Թերթերի վրայ կան խոնաւութեան եւ նրա հետեւանք բորբոսի, անկային հիւանդութեան հետքեր, բայց առկայ բնագիրը հիմնականում լաւ պահպանուած եւ լիովին ընթեռնելի է, բացի հետեւեալներից. թ. 2 հիմքի մօտ մէջտեղում մի հատուած թափուած է, 15րդ թերթի ստորին արտաքին անկիւնի հետ ընկած է մի քանի գիր, 16րդ թերթից պահպանուած է միայն վերին 6 տողի հիմքի նեղ եւ դէպի ցած նեղացող մի շերտ, 33րդ թերթից կայ միայն հիմքի մի նեղ շերտը[156]:

Կանոնի շարադրանքն արժէքաւոր է նախ նրանով, որ շատ էլ համընթաց չէ թէ՛ բուն բնագրին եւ թէ՛ ճոխացուած տարբերակին (ձեռ. Հ^{մր} 961), այսինքն՝ մեր բնագրի համեմատ տարբեր՝ երկրորդ մի խմբագրութիւն է, որ, սակայն, նոր չէ, աւելին՝ ձեւաւորուած պէտք է լինի գոնէ մինչեւ Ժ. դար կամ աւելի վաղ: Նկատի ունենալով Օրհնութիւնաբեր ցուցակի կարգաւորութեան այն հաղորդումը, թէ Եփրեմ Ասորու յօրինած Քահանայաթագին, որ ունէր ԺԲ. Աւետարան (իմա՝ Ընթերցուած), Սահակ Պարթեւ կաթողիկոսն աւելացրել է եւս Է. Աւետարան (տե՛ս Յաւելուած Դ.՝ Բ.10, Գ.10, Խ.10, Ծ.10, Մ.10, Յ.10), մտածել է տալիս, թէ գուցէ բուն բնագրի եւ ԺԲ. դ. այս ձեռագրի միջեւ տեսանելի լինի խմբագրական այդ աշխատանքը, ուստի այս ձեռագրի բնագիրը վերարտադրեցինք որպէս բնագրական Յաւելուած Ա., որանից աւելի առաջ պատրաստուած՝ նոյն Քահանայաթագի ճոխացուած տարբերակը դարձնելով Յաւելուած Բ.:

Այսպիսով, նիւթի եւ աշխատանքի ընթացքի թելադրանքով այստեղ Քահանայաթագի երեք տարբերակ ներկայացնելով, վստահ ենք որ մեր ծիսագիտութեանը համեմատական հետազօտութեան լաւ հիմք-նիւթ ենք տալիս[157]:

* * *

ՄԵՌՈՆՕՐՀՆԷՔԻ կանոնը. կրկին ո՛չ պակասաւոր բնագիր հրատարակած լինելու մտահոգութեամբ թռուցիկ ուսումնասիրեցինք այս կանոնի՝ մեր Մայր Մաշտոցներում առկայ տարբերակները եւ հինգ ձեռագրի մէջ գտանք ըստ ամենայնի նախնական-համառօտը, որ որպէս Գ. յաւելուած հրատարակում ենք երեք ձեռագրի[158] համեմատութեամբ: Համեմատուած ձեռագրերն են.

Ա. Հ^{մր} 958. ԻԴ. 134ա-8ա. Ուրծ գիւղ Այրարատի, ՋԻԲ.-1473 թ., գրիչ՝ Խաչատուր, ստացող՝ Մեսրոպ արղ. (սրա մէջ առկայ՝ գաղտնավանկ բ-ի երբեմնակի գրուածութիւնն անտեսել ենք).

Բ. Հ^{մր} 965. ԻԳ. 122բ-6ա. Եղեգեաց գաւառի Երերան անապատ, ՊՁԱ.-1432 թ., գրիչ՝ Դաւիթ կր. եւ Ղազար, գլխագրող՝ Կարապետ, ստացող՝ Դաւիթ կր.՝ գրիչը.

Գ. Հ^{մր} 999. ԻՋ. 78բ-80բ. Շատիկայ վանք, ԺԷ. դ., գրիչ՝ Յոհանէս արղ.:

Ձեռագրերից երկուսը չհամեմատեցինք.

Ա. Հ^{մր} 953. ԾԷ. 460ա-76բ, որ նախորդների բնագրին համաձայն է, սրա սակաւաթիւ վրէպներն արձանագրելն աւելորդ դիտեցինք.

Բ. Հ^{մր} 998. ԻԲ. 98ա-100բ, 111աբ. սա եւս համեմատուած ձեռագրերին համաձայն է, բայց խոնաւութեան հետեւանքով ծայրէծայր եղծուած է, ուստի բազմաթիւ բառերի կիսով ընթեռնելիութիւնը կամ անընթեռնելիութիւնն արձանագրելն անիմաստ համարեցինք: Ուշագրաւ է, որ վերջինս ունի նաեւ նոյն Մեռոնօրհնէքի կանոնի ընդարձակ տարբերակը (ԿԳ. 249բ-64ա):

---

[154] Նկատի ունենք յատկապէս Յովհաննավանքի եւ Սաղմոսավանքի ճառընտիրները՝ ՄՄ ձեռ. Հ^{մր} 1522, 3777 եւ այլն:

[155] Քանի որ ո՛չ աւետարանական բովանդակութիւն ունեցող հին ձեռագրերի նկարազարդումը գրեթէ ուսումնասիրուած չէ, հպանցիկ պատկերենք նաեւ Քահանայաթաղէքիս՝ կարմրով եւ շագանակագոյնով արուած մանրանկարչական յարդարանքը. նկատելի առաջինը 191րդ ընթերցուածին նախորդող կիսախորան-ճակատազարդն է՝ 58ա. պարզունակ բուսական լուսանցազարդեր կան պատահական որեւէ ընթերցուածից կամ աղօթքից առաջ՝ 11բ, 20բ, 26ա, 41բ, 48բ, 54բ, 63ա, 69բ, 102բ, 109ա, 119բ, 121բ, 123բ, 125ա. զուտ հանգուցային են՝ 34բ, 67բ, 72ա, 84բ, 92բ. կրկին պարզունակ բուսահանգուցային են՝ 40ա, 110ա, 113ա, 117բ, 126ա: Ունի նաեւ հանգուցազարդ երկու զարդագիր. 82ա՝ Մ., 114բ՝ Ս. երկուսն էլ սովորական խոշոր երկաթագիր գրեր են, հանգուցազարդերը տեղաւորուած են ուղղահայեաց առեղների կամ գրերի մարմնի մէջ: Գրիգոր Նիւսացու գործը, բացի սկզբնաթերթի (130ա) հանգուցային լուսանցազարդից, լրիւ անզարդ է:

[156] Այս թերթները լրացրել ենք Ա ձեռագրի ՃՁ. եւ ՃՁԳ. աղօթքներից:

[157] Կարծում ենք՝ արժէ սրանց հետ նկատի ունենալ նաեւ Սիմէոն կաթողիկոս Երեւանցու խմբագրութիւնը:

[158] Սրանց Ա-Գ պայմանանիշերը չպէտք է շփոթել բուն բնագրի՝ նոյն Ա-Գ պայմանանիշերի հետ:

ԲՆԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՒ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հանգամանքների թելադրանքով մեր աշխատանքն սկսեցինք Բ ձեռագրի բնագրի վերարտադրութեամբ[159], ապա նրա ունեցածը համեմատեցինք Ա ձեռագրի հետ (սրա ձեւերը դնելով տողատակում), վերծանելով-լրացնելով նաեւ այս երկրորդի աւելի ունեցածը: Բնագրի վերարտադրութիւնն ամբողջացնելուց յետոյ կանոնները դասաւորեցինք ըստ Ա ձեռագրի կարգի[160], այնուհետեւ ընթերցուածները համեմատեցինք, ինչպէս ասել ենք, Աստուածաշնչի Զօհրապեան հրատարակութեան (Ս) հետ, որից յետոյ միայն արեցինք բնագրիս քննութիւնը:

Հնարաւոր վրիպումներից խուսափելու նպատակով երկու ձեռագիրն էլ համեմատել ենք ըստ էութեան երկիցս, ուստի եւ գրեթէ վստահ ենք, որ ամէն ինչ ճշգրիտ արձանագրել ենք շարագրանքի մէջ կամ տողատակում: Վերծանումը Բ ձեռագրից սկսած լինելով, Ա օրինակի համարժէք (իմաստային էական տարբերութիւն չունեցող) շատ ձեւեր նոյնութեամբ թողել ենք տողատակում:

Ապագայ հնարաւոր ստուգումները դիւրացնելու եւ ընդհանրապէս բնագիրս առաւել վաւերական տեսքով ներկայացրած լինելու նպատակով շարագրանքի մէջ դրել ենք ձեռագրերի էջափոխի նշաններ. |Ա.5բ| |Բ.10ա|, |Գ.251բ| նշանակում են, որ յաջորդող շարագրանքն առաջինի 5բ էջում է երկրորդի՝ 10ա կամ երրորդի՝ 251բ:

Արձանագրելի են ձեռագրերի հետեւեալ իւրայատկութիւնները.

Ուղղագրութեան առումով Ա օրինակի խոտորումները բաւական շատ են, Բ ձեռագիրն աւելի նախընտրելի ձեւեր ունի: Սակայն բնագրային-իմաստային առումով գերադասելին Ա ձեռագիրն է, Բ-ն անհամեմատ շատ ունի գրչի անուշադրութեան հետեւանք-բացթողումներ եւ սխալմունքներ:

Սուրբգրական ընթերցումների մէջ Ա աւելի հարազատ է հայերէն Աստուածաշնչի Ընկալեալ բնագրին. Բ օրինակի վրէպներն անհամեմատ շատ են. սրանց մէջ ԱՍ համընկնումները դրել ենք շարագրանքի մէջ. Բ օրինակի տարբերութիւնները նշել ընթերցումների շարքում: Սրանով իսկ Ա. Գրքի բնագրական խնդիրների ապագայ քննութիւնների մէջ այս բնագրի տուեալների գործածումը դիւրացրել ենք՝ Ընկալեալ բնագրի համեմատ առկայ տարբերութիւնները փնտրելի են մեծ մասամբ ընթերցումների մէջ:

Խրատների եւ աղօթքների մէջ եւս Ա օրինակը նախընտրելի է, ուստի եւ նրա ձեւերով լրացրել ենք իմաստի առումով Բ ձեռագրի ունեցած թերի եւ մութ թուացող մասերը, առաւել եւս՝ Բ (երբեմն նաեւ Ա) ունի մեքենական անկումներ՝ տողերի կամ նոյնայանգ աւարտով հատուածների բացթողումներ. սկզբնապէս Բ-ից առած մասում այսպիսի տեղիները լրացրել ենք Ա օրինակի աւելի ուղիղ ձեւերով, սակաւ դէպքերում եղել է նաեւ հակառակը՝ Բ ձեռագրի ձեւերն աւելի նախընտրելի ենք համարել, ուստի Ա օրինակի տարբերակներն արձանագրել ենք ընթերցումների շարքում: Ընթերցումների ընտրութիւնն արել ենք ըստ շարագրանքի տրամաբանութեան եւ այդպիսով՝ երկու օրինակի ձեւերի զուգադրումով, ստացել ենք համադիր կապակից եւ տրամաբանուած շարագրանք:

Խրատ-հրահանգները, բնականաբար աւանդոյթին հետեւելով, ներկայացրել ենք տարբեր տառատեսակով. սրանց շարքում առկայ սաղմոսների սկսուածքների կողքը նոտրով՝ [ ] փակագծերի մէջ նշանակել ենք նրանց տնահամարները՝ ՉԳ. [1], *երբեմն նաեւ գլխահամարները, եթէ մեր բնագրում յիշատակուածներն Աստուածաշնչի ընկալեալ բնագրի համեմատ տարբեր են՝* ԽԵ. [=ԽԷ·2]:

Սուրբգրական ընթերցուածների գլխահամարները եւ տնահամարները փակագծուած, նոտրգրով նշել ենք խորագրերից անմիջապէս յետոյ՝ «ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱԿԱՑ [Գ· 19-26]», *տնահամարները դրել ենք նաեւ շարագրանքի մէջ՝ համապատասխան տեղերում, ցած գիրքով եւ թուանիշերով (որպէսզի թէ՛ կարդալուն չխանգարեն եւ թէ՛ աննկատելի չլինեն)՝* $_{20}$, $_{21}$ *եւ այլն:*

---

[159] *2009 թ. Հոկտեմբերի 27ին Մխիթարեան միաբանութեան ընդհանրական աբբահայր եւ մեր վաղեմի բարեկամ Հայր Եղիա ծ. վ. Քիլաղպեանին ուղղուած նամակով եւ հետագայ շարունակական յիշեցումներով խնդրեցինք եւ այդպէս էլ չստացանք այս ձեռագրի թուային պատճէնը, որ մեծապէս հեշտացնելու էր մեր աշխատանքը: Խորին երախտագիտութեամբ արձանագրում ենք, որ բնագրի վերծանման աշխատանքս չափէս դիւրացրեց Տ. Ղեւոնդ քհյ. Մայիլեանի պատրաստած թուային պատճէնը՝ տեսածրումով արուած Մաշտոցեան Մատենադարանի Այլ վայրերի ձեռագրերի Հ^{ձր} 1134 ժապաւէնից, որ դեռեւս 1988ին ստացել ենք Հ. Ներսէս Տէր-Ներսէսեանի եւ Հ. Սահակ Ճեմճեմեանի բարեացակամութեան շնորհիւ (այլապէս երկաթագրի հիմնական տառերի նուրբ եւ համարեա աննկատ գծիկ-կցումներն ընկալելը գրեթէ անհնար էր լինելու):*

[160] *Հանգամանքների բերումով Ա ձեռագրի վերծանումը եւ կանոնների վերադասաւորումն աւարտեցինք 2011 թ. յունուարի 18ին Կիպրոսի Նիկոսիա մայրաքաղաքում:*

Երկու օրինակների միջեւ կան աղօթքների շարադրանքի ամբողջութեան նրբերանգային ակնյայտ տարբերութիւններ, որ մի քանի տեղ ցուցադրել ենք, բերելով նախ միայն Ա. օրինակինը, ապա նոյնը համեմատուած, այսինքն՝ Բ ձեռագրինը որպէս շարադրանք, Ա. օրինակի տարբերութիւնները՝ տողատակին. տե՛ս 37րդ ընթերցուածը, ուր վերը Բ ձեռագրի շարադրանքն է, տողատակում՝ Ա. օրինակի նախ միակտուր բնագիրը, ապա տարբերութիւնները հատ առ հատ. ԺԳ. քարոզում՝ վերը Բ ձեռագրինն է, տողատակում՝ Ա., 47րդ ընթերցուածն Ա. ձեռագրինն է, 48րդը՝ Բ օրինակինը (նմանիք տե՛ս նաեւ Աղօթք ԻԸ-ԼԱ.):

Երբեմն բառ առ բառ համեմատելով հանդերձ, հականօրէն տարբերուող ամբողջ հատուածներ նոյնութեամբ բերել ենք նաեւ տողատակում, այսպիսի դէպքերում ծանօթութեան համարի վրայ աստղանիշ ենք դրել. տե՛ս օրինակ՝ Ա.12ա. ընդհանրապէս աստղանշակիր ծանօթութիւնները վերաբերում են յաջորդող ամբողջ պարբերութեանը:

Երբեմն, կրկին էական տարբերութիւնների դէպքում, իրար հետեւից դրել ենք մէկի, ապա միւսի ամբողջ հատուածներ. տե՛ս Ա.29բ եւ Բ.36ա, ուր ունենք մի շարադրանք՝ այսպիսի ծանօթութեամբ. «սա ըստ՝ Ա. Բ > այս խրատը», ապա անմիջապէս յետոյ. «սա ըստ՝ Բ. Ա > այս խրատը». առաջինում գրուած է Ա. ձեռագրի ունեցածը, երկրորդում՝ Բ օրինակինը:

Համեմատել ենք նաեւ Ա. ձեռագրի ընդարձակ նկարագրութիւնը (Վ.Յ, Գ., էջ 1-48) եւ տարբերութիւնները տողատակում նշել Յ (խմ՛ Ցուցակ) պայմանանիշով. սա արել ենք ոչ թէ նկարագրողի սխալմունքները (հիմնականում տպագրութեան վրիպները) ցուցադրած լինելու համար, այլ կանխելու համար հնարաւոր բնական տարակոյսները, թէ ինչու նկարագրութեան մէջ մի ձեւ է, մեր բնագրի մէջ՝ մի այլ: Նոյն սկզբունքով Մկրտութեան կանոնը համեմատել ենք նաեւ Ս. վ. Ճեմճեմեանի հրատարակութեան հետ եւ տարբերութիւնները տողատակում նշել ճանաչելի Ճ (=Ճեմճեմեան) պայմանանիշով. նա կարեւորութիւնը տուել է կանոնի էութիւն-բովանդակութեանը, անտեսելով Մաշտոցի սուրբգրական եւ ուղղագրական արժէքները. առանց ծանուցելու՝ ուղղագրական խոտորումները կանոնականացրել է. ե-է ձեւերը գրել է ըստ կանոնի, պակասող տեղերում աւելացրել է բառավերջի յ-ն, ու-ի տեղ գրել է օ, ընթերցուածների մէջ ձեռագրական ձեւերն անտեսելով, հետեւել է միայն Սուրբ Գրքի Զօհրապեան տպագրին, այլ ձեռագրերից առել եւ իմաստի լրութեան համար տարբեր տառատեսակով իր բնագրի մէջ է մուծել տարբեր բառեր կամ դարձուածներ. նրա եւ մեր բնագրերի այստեսակ տարբերութիւնները չենք նշել:

Ամբողջը պատրաստելուց յետոյ ծիսարանի հետագայ հետազօտական աշխատանքների դիւրացման, բնագրի մասերը հեշտութեամբ յղելի դարձնելու նպատակով հատուածները համարակալել ենք[161]. սուրբգրական ընթերցուածները թուերով, աղօթքները եւ քարոզները՝ հայերէնի գլխատառերով. բուն բնագիրն ունի Ընթերցուածք 1-198 եւ Աղօթք-քարոզ՝ Ա-ՃՂԶ.: Յաւելուածների մէջ այս համարակալումները շարունակեցինք. Ա. Յաւելուածն ունեցաւ նոր Ընթերցուածք 199-224 (26 միաւոր), Աղօթք՝ ՃՂԷ-ՄԺ. (24 միաւոր), Բ. Յաւելուածը՝ Ընթերցուածք 225-243 (19 միաւոր), Աղօթք՝ ՄԺԱ.-ՄԻԱ. (11 միաւոր), Մեռոնօրհնէքի կանոնն ընթերցուածներ չունի, միայն աղօթքներ են՝ ՄԻԲ-ՄԻԸ. (7 միաւոր):

Ըստ այդ համարակալումների էլ կազմեցինք հետեւեալ երեք ՑԱՆԿԵՐԸ (բուն բնագրի պատկերը յստակ ներկայացնելու նպատակով միայն յաւելուածներում առկայ նիւթերը ցանկել ենք ամէն մէկի վերջում առանձին՝ որպէս յաւելուածական).

1. Աղօթքների եւ քարոզների սկսուածքների այբբենական ցանկ.

- Ա-Գ. յաւելուածների աղօթքների եւ քարոզների սկսուածքների այբբենական ցանկ:

Սա հետագայ ուսումնասիրութիւնների ընթացքում այբբենական սկսուածքով որեւէ աղօթքի՝ այստեղ առկայ լինելը հեշտ ստուգելու համար է, նաեւ արձանագրելու համար, թէ, օրինակ, որեւէ ձեռագրում, ասենք՝ ԻԵ. աղօթքից յետոյ կայ նաեւ յաւելեալ «հետեւեալ» աղօթքը: Ցանկի ամէն միաւորի վերջում գրուած է կանոնի համարը, թեք գիծ, աղօթքի համարը՝ ԻԵ/ԾԹ., որ նշանակում է՝ ԻԵ. կանոնի մէջ՝ ԾԹ. աղօթքը: Միակերպ սկսուածքներով միաւորներ շատ կան, ուստի տարբերութիւնը ցուցադրելու համար ստիպուած ենք եղել բերելու 3-4 տողանոց սկզբնատողեր: Եթէ որեւէ միաւոր առկայ է թէ՛ հիմնական բնագրում եւ թէ՛ Յաւելուածների մէջ, այդ փաստն արձանագրել ենք հիմնական ցանկում «ԽԷ/ՃՂԶ., նաեւ Յաւ. Ա., Բ.», որ նշանակում է՝ ՃՂԶ. աղօթքը, բուն բնագրի ԽԷ. կանոնից բացի, կայ նաեւ Ա. եւ Բ. յաւելուածների մէջ (յաւելուածներին վերաբերող ցանկում բուն բնագ-

---

[161] Մեր համարներն ապագայ ուսումնասիրութիւնների մէջ ծառայելու են որպէս ուղենիշեր: Միայն խրատ-հրահանգները համարակալելն անհնար եղաւ:

րում արդէն առկայ միաւորների սկզբնատողերը չենք կրկնել): Ըստ կանոնների կարգի այսպիսի ցանկ պատրաստելն ինքնանպատակ եւ անտեղի համարեցինք, որովհետեւ բնագրի կարգով միաւորների ընթացքն ու հերթագայութիւնն արդէն տեսանելի են:

Այս ցանկում ՃՁԷ.-ՄԺ. համարները վերաբերում են Ա. Յաւելուածին, ՄԺԱ.-ՄԽԱ.՝ Բ. Յաւելուածին, ՄԽԲ.-ՄԽԸ.՝ Գ. Յաւելուածին (Մեռոնօրհնէք):

2. Ընթերցուածների ցանկ ըստ կանոնների[162].

- Ա., Բ. յաւելուածների ընթերցուածներ:

Կանոնների խորագրերից յետոյ նշել ենք՝ ընթերցուածի կարգային համար, Աստուածաշնչի գրքի անուն, գլխահամար եւ տնահամարներ. սկզբնատող եւ վերջնատող կարգով (յաւելուածների ցանկում՝ նաեւ նրանց Ա. կամ Բ. համարը): Ծիսագիտական առումով ինքնին կարեւոր է այստեղ մի հայեացքով տեսնելը, թէ որոշակի կանոնի մէջ Աստուածաշնչի ո՛ր գրքերի ի՛նչ հատուածներ են օգտագործուել, բայց ցանկիս հիմնական նպատակը կանոնների մէջ որոշակի ընթերցուածի առկայութիւնն արագ ստուգել կարողանալն է, նաեւ ըստ հարկի արձանագրելը, թէ որեւէ որոշակի համարի ընթերցուածից առաջ կամ յետոյ ինչ որ ձեռագիր աւելի ունի ինչ որ ընթերցուած եւ այլն:

3. Ընթերցուածների ցանկ ըստ Աստուածաշնչի գրքերի կարգի.

- Ա., Բ. յաւելուածների ընթերցուածներ ըստ Աստուածաշնչի գրքերի կարգի:

Այս ցանկի նպատակն Աստուածաշնչի գրքերի բնագրական խնդիրների քննութեան համար ներկայ բնագրի տուեալների գործածումը դիւրացնելն է: Կազմուած է հետեւեալ կարգով. նախ՝ Աստուածաշնչի գրքի վերնագիրը, որի ներքոյ՝ գլուխ, տնահամարներ, չակերտների մէջ՝ ընթերցուածի սկիզբը եւ վերջ, ապա ընթերցուածի եւ կանոնի համարները (76/Ի.՝ 76րդ ընթերցուածը, որ Մաշտոցիս Ի. կանոնի մէջ է): Ընթերցուածների սկզբնատողերը եւ վերջնատողերը, բնականաբար, բերուած են ըստ Մաշտոցի բնագրի (տարընթերցումներն

տնտեսուած են): Այստեղ եւս բուն բնագրի եւ յաւելուածների նոյնական ընթերցուածներն արտայայտուած են հիմնական ցանկում, իսկ միայն յաւելուածներում առկայ միաւորներն արձանագրել ենք լրացուցիչ ցանկում: Ընթերցուածներից Ա. յաւելուածին վերաբերում են ՃՁԷ.-ՄԺ., Բ. յաւելուածին՝ ՄԺ.-ՄԽԱ. համարները:

Ա. ՅԱՒԵԼՈՒԱԾԸ. *Բնագրի տողատակի ծանօթութիւնների մէջ արձանագրել ենք Ա. ձեռագրի եւ Բ. յաւելուածի նկատմամբ ունեցած էական նմանութիւնները եւ տարբերութիւնները: Ընթերցուածները, բնականաբար, միշտ համեմատել ենք ընդ Ս: Այս երկու հին օրինակների տարբերութիւնները ցուցադրելու նպատակով յաւելուածիս առաջին երկու՝ 178-179րդ ընթերցուածների տողատակում նշեցինք նաեւ Ա. օրինակի ձեւերը. բայց նոյնական բոլոր մասերի համեմատումն աւելորդ համարեցինք. գրքիս նիւթով Ս. Գիրք ուսումնասիրողը պէտք է նկատի ունենայ թէ՛ բուն բնագիրը եւ թէ՛ այս յաւելուածը, որ նոյնպէս հին եւ արժէքաւոր ձեռագրի ճշգրիտ վերարտադրութիւն է: Նոյնական քարոզաղօթքները որոշեցինք չհամեմատել ընդ Ա., որովհետեւ շարադասական բազմաթիւ տարբերութիւններն արձանագրելու համար ստիպուած էինք լինելու այստեղ տողատակին յաճախ նոյնութեամբ բերել Ա. օրինակի ամբողջ շարադրանքը. ըստ այսմ՝ բուն բնագրի նոյն համարներն այստեղի մասերի սկզբում նշանակելը բաւարար համարեցինք: Երկու յաւելուածների համար ընդհանուր քարոզների եւ աղօթքների մէջ նշել ենք ԱԲԳ օրինակների տարընթերցումները: Խրատ-հրահանգները նոյնպէս նախ բնագրօրէն դժուար համեմատելի են, ապա սրանց հարցերի մէջ մտնելը վերաբերում է արդէն ծիսագիտութեանը, որ մեր զուտ բնագրական նպատակից դուրս է: Թւում է աւելի ճիշտ կլինի, եթէ անհրաժեշտ համարուի եւ ապագայում մեր երեք տարբերակներն ու Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի խմբագրութիւնը հրատարակուեն առանձին՝ մեծադիր գրքով, բացուածք-զոյգ էջի վրայ չորս սիւնակով, ամէն տարբերակ տեղադրելով մի սիւնակի մէջ[163]. կարծում ենք՝ նոյն գրքի մէջ էլ անհրաժեշտ կլինի անել ծիսագիտական լուրջ քննութիւն:*

Բոլոր դէպքերում այս յաւելուածի շարադրանքի մէջ այս՝ Հ^{մր} 2789 ձեռագրի ունեցածն է, ի բաց առեալ վնասուած թերթերի մասը, որ լրացուած է Ա. ձեռագրից:

---

[162] *Թէեւ Բ. վ. Սարգիսեանը գրել է. «Մաշտոցս բոլոր իր մանրամասնութեամբը եւ ընդարձակօրէն ցանկագրեցինք...» (Վ.Յ, Գ., էջ 48), սակայն Ա. ձեռագրի նկարագրութեան մէջ վրիպմամբ արձանագրուած չեն 15րդ, 17րդ, 24րդ, 25րդ, 30րդ, 51րդ, 54րդ ընթերցուածները (Վ.Յ, Գ., էջ 7, 11, 16, 17): 31րդի ընթեցուած լինելը նկատուած չէ. նկատուած չեն նաեւ 95րդը, 107րդը, 111րդը, 119րդը, 144րդը, 153րդը, 161րդը, 171րդը, 185րդը, 191րդը (Վ.Յ, Գ., էջ 27, 33, 34, 35, 42, 43, 44, 45, 47) եւլն:*

[163] *Եւ տայ Աստուած, որ այս ժամանակ հնարաւոր լինի համեմատել նաեւ Հոռոմոսի Մաշտոցը:*

Բ. ՅԱՒԵԼՈՒԱԾը. այստեղ ըստ մեր Գ ձեռագրի գրել ենք հիմնական բնագրում արդէն առկայ ընթերցուածների միայն կարգային համարները, խորագրերը, սկսուածքները եւ վերջնատողերը (առանց տարընթերցումների), իսկ բուն բնագրում նոյն ընթերցուածների համեմատութիւնների մէջ աւելացրել ենք նոյն Գ օրինակի ձեւերը: Հիմնական բնագրում բացակայող, միայն յաւելուածում առկայ ընթերցուածները, որոնք յաճախ նախորդների հետ մէջընդմէջ են, սակայն անկախ դրանից ստացել են կարգային 225-243 համարները, ներկայացրել ենք սովորական ձեւով՝ շարագրանքն ըստ Գ ձեռագրի, տողատակում՝ Սուրբ Գրքի (Ս) ձեւերը:

Այս յաւելուածի աղօթքների եւ քարոզների դէպքում վարուել ենք ճիշտ հակառակ կերպ. տարբերութիւններն աւելի ցայտուն պատկերելու նպատակով բուն բնագրում արդէն առկայ միաւորներն այստեղ բերել ենք՝ շարագրանքն ըստ Գ ձեռագրի, ընթերցումներն ըստ ԱԲ օրինակների:

Յաւելուածիս ձեռագիրը (Գ) ունի սակաւաթիւ միանիշ – եւ °. սրանք անտեսել եւ անխտիր գրել ենք ե–, ա–. անտեսել ենք եւ որպէս ընթերցում չենք նշել նաեւ «գնոսայ, գնայ, նմայ» եւ նմանք, նաեւ՝ գաղափար օրինակներից եկած գաղտնավանկերը, օրինակ՝ «պատրուական» բնոյթիք համարել ենք «պատուական»:

* * *

Արդէն ասացինք, որ Քահանայաթաղի կանոնի երեք տարբերակ հրատարակելով, շրջանառութեան մէջ ենք դնում ծիսագիտական հետազօտութեան լաւ նիւթ: Առայժմ որպէս ապագայ քննութիւնների ուղենիշ, համարական ցանկերով պատկերում ենք խմբագրութիւնների համապատասխանութիւններն ու տարբերութիւնները: Նախ արձանագրենք շատ ուշագրաւ մի հանգամանք. երկու յաւելուածն էլ ունեն բուն բնագրի Աշխարհաթաղի կանոնի ՁԶ. քարոզը եւ նոյն կանոնի Այգալցի Ղ. եւ ՂԱ. աղօթքները (երեք միաւորն էլ կանոնի բուն մասում ո՛չ եօթնօրէքի մէջ):

Յաւելուածների (Ա.՝ ձեռ. Դ.՝ Հմր 2789, Բ.՝ ձեռ. Գ.՝ Հմր 961) ընթերցուածների եւ աղօթքների հերթագայութիւնն այս է (յիշենք բուն բնագրի համարները՝ 1-198 եւ Ա-ՃՁԶ., միայն յաւելուածներում առկայ միաւորների համարներն այստեղ նոտրով են).

Յաւելուած Ա. - 178, ՃՁԷ., ՃՁԸ., 179, 180, 181, 181ա·199·199ա·200·200ա. *182, 196, 186, ՃՀԹ., ՃՁ., ՃՁԱ., ՃՁԲ.*·184, 201·*185, 183, ՃՁԳ., ՃՁԴ., 187,* ՃՁԹ., *ՃՀԷ., 167, ՃՂ., ՃՂԱ., 189, ՃՁԶ., ՃՂԲ., 190, ՃՂԳ., ՃՀԸ., ՃՂԴ., ՃՂԵ., 191, 192, 193, 194, 195, ՃՁԵ., ՃՂԶ.,* 202, 203, 204, *197, 198,* 205, *ՁԶ., Ղ., ՂԱ.,* 206·207·208·209·ՃՂԷ.·ՃՂԸ.·210·ՃՂԹ.·Մ.·211·212·213·ՄԱ.·ՄԲ.·214·215·216·217·ՄԳ.·ՄԴ.·218·219·220·ՄԵ.·ՄԶ.·*164,* 221·222·ՄԷ.·ՄԸ.·223·224·*173*·ՄԹ.·ՄԺ.:

Յաւելուած Բ. - 148, 149, 150, 151, ՄԺԱ., *152, 153, 154, ՃԿԳ., ՃԿԹ., ՃՀ., 155, 156, 157, 158, 159, ՃԿԸ., ՃՀԱ., ՃՀԲ., 160, 161, 162, 163, 164, 165, ՃՀԳ., ՃՀԴ.,* 225·226, *168, 170, 171, 172, 173, ՃՀԵ., ՃՀԶ., 174, 175, 176, 177, 178, ՃՀԷ., ՃՀԸ., 179, 180, 181, 182, 183, ՃՀԹ., ՃՁ., ՃՁԱ.,* ՄԺԲ., *ՃՁԲ., 184, 185, 186, ՃՁԳ., ՃՁԴ., 187, 167, 189, 195,* ՄԺԳ.·ՄԺԴ., 227, *191, 192, 193, 194, 197,* ՃՂԶ., *ՃՁԶ.,* 228, 229, 229ա, 230, 230ա, 231, 231ա, 232, 232ա, 233, 234, 234ա, 235, 235ա, 236, 236ա, 199, 199ա, 200, 200ա, 237, 203, *196, 190, 198,* 205, *ՁԶ., Ղ., ՂԱ.,* 206·207·208·209·210·ՃՂԹ.·Մ.·214·ՃՂԸ.·215·217·ՄԺԵ.·ՄԺԶ.·238·239·222·ՄԺԷ.·ՄԺԸ.·218·216·*93,* ՄԺԹ.·ՄԹ.·240·221·220·ՄԷ.·ՄԸ.·223·241·240·ՄԻ.·ՄԻԱ.:

Ա. Յաւելուածն ունի բուն բնագրի Քահանայաթաղի կանոնի ՃԿԲ-ՃՁԶ. աղօթք-քարոզներից հետեւեալները՝ ըստ կանոնի ընթացքի. ՃՀԹ., ՃՁ., ՃՁԱ., ՃՁԲ., ՃՁԳ., ՃՁԴ., ՃՀԷ., ՃՁԶ., ՃՁԵ., ՁԶ., Ղ., ՂԱ., այսինքն՝ չունի ՃԿԲ-ՃՀԶ. (զգալի մասը՝ սկզբի ընկած թերթերի հետ), ՃՀԸ., ՃՁԳ.: 148-198 Ընթերցուածներից, ըստ կանոնի ընթացքի, ունի. 178-182, 196, 186, 184-185, 183, 187, 167, 189, 190, 191-195, 197-198, 164, 173 (յաւելում՝ 181ա.), չունի՝ 148-163, 165-166, 168-172, 174-177, 188:

Բ. Յաւելուածն ունի նոյն ՃԿԲ-ՃՁԶ. աղօթքներից հետեւեալները. ՃԿԳ., ՃԿԹ., ՃՀ., ՃԿԸ., ՃՀԱ., ՃՀԲ., ՃՀԳ., ՃՀԴ., ՃՀԵ., ՃՀԶ., ՃՀԷ., ՃՀԸ., ՃՀԹ., ՃՁ., ՃՁԱ., ՃՁԲ., ՃՁԳ., ՃՁԴ., ՃՁԶ., ՁԶ., Ղ., ՂԱ., չունի հետեւեալները՝ ՃԿԲ., ՃԿԴ-ՃԿԷ., ՃՁԵ.: 148-198 Ընթերցուածներից ունի՝ ըստ կանոնի ընթացքի. 148-165, 168, 170-187, 167, 189, 195, 191-194, 197, 196, 198, 93, չունի՝ 166, 169, 188:

Ա. եւ Բ. յաւելուածներում կրկնւում են հետեւեալ աղօթքները՝ Ղ., ՂԱ., ՃՀԷ.-ՃՁԴ., ՃՁԶ., ՃՂԶ., ՃՂԸ., ՃՂԹ., Մ., ՄԷ., ՄԸ., ՄԹ.: Նոյնպէս երկուսում էլ կրկնւում են հետեւեալ ընթերցուածները. 164, 167, 173, 178-181-187, 189-200, 203-210, 215-218, 220-223, 240: Մահք մար-

գարէից կան. Ա. Յաւելուածում՝ 181ա., երկուսում էլ՝ 199ա., 200ա., Բ Յաւելուածում՝ 229ա.-232ա., 234ա.-236ա.: Երկուսն էլ չունեն բուն բնագրի 169 եւ 188 ընթերցուածները:

ԳՐՔԻՍ ՄՆԱՑԵԱԼ ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐԸ

Արդէն ասել ենք, որ ներկայ հրատարակութեան հիմնական նպատակն ընդհանրապէս Մաշտոցի ծիսագիտական հետազօտութիւնների աղբիւրագիտական հիմքի ստեղծումն է[164]: Այսինքն՝ մտածում ենք, որ այս գիրքը պէտք է դառնայ Մաշտոցի բնագրի, ուստի եւ Հայ եկեղեցու ծէսի հետագայ ամբողջական քննութեան հիմք-ելակէտերից մէկը: Աշխատանքի հետագայ ընթացքը պատկերացնում ենք հետեւեալ կերպ. այստեղ վերարտադրուած բոլոր կանոնները հատիկ առ հատիկ պէտք է համեմատուեն Մաշտոցի տարբեր ժամանակների յաւ ձեռագրերի հետ (ամէն կանոնի համար գուցէ ըստ հարկի ընտրուեն տարբեր ձեռագրեր) եւ նրանց բնագրերը հրատարակուեն այն հիմնական նպատակադրումով, որ էջի կամ գրքի բացուածքի նոյն հարթութեան վրայ տարբեր խմբագրութիւնների զուգադրում-հանդիպադրման եղանակով ծէսի զարգացման պատմական ընթացքը յստակ երեւայ՝ այս բնագրերից մինչեւ երեւի թէ ԺԸ. դ. վերջերը՝ մինչեւ Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի եւ նրա ժամանակների խմբագրական մշակումներ: Այս եղանակով կստեղծուի նաեւ գիտականօրէն կատարեալ այն հիմքը, որի վրայ յենուելով՝ հնարաւոր կլինի մեր եկեղեցական առօրեայի համար գործնական վճիռներ ընդունել:

Ուստի եւ բնագրի պատրաստութիւնն սկսելուց առաջ անհրաժեշտ եւ կարեւոր գիտեցինք թուցիկ անդրադարձ անել Մաշտոցեան Մատենադարանի ծագումով էջմիածնական բուն հաւաքածուի մէջ գտնուող այն Մայր Մաշտոցներին[165], որոնց պարունակած կանոններն այս կամ այն չափով յարաբերում են մեր հրատարակելի երկաթագիր օրինակների բովանդակութեանը, միաժամանակ ունեն ընդարձակ, բայց եւ ոչ օտարամուտ տարրերով կանոնացանկեր: Որոշ համեմատութիւններ յանգեցրին ընտրելու տասնհինգ ձեռագիր (տե՛ս Յաւելուած Թ.)[166], որոնց կանոնացանկերը եւս Հոռոմոսի, Լամբրոնացու եւ «Սսեցւոց» Մաշտոցների ցանկերի նման զետեղեցինք այստեղ: Ցանկերն առել ենք Մատենադարանի Մայր ցուցակի Գ. հատորից (լաւագոյնս սրբագրելով՝ յաճախ դիմելով բուն ձեռագրերին). ամէն ցանկի սկզբում նշել ենք ձեռագրի կարեւորագոյն արտաքին յատկանիշները, որոնց շարքում՝ նաեւ գրչութեան ժամանակի եւ հետագայ յիշատակարանների էջերը, ապա նոյն Մայր ցուցակի Գ. հատորի էջահամարները: Մեր շարքի կանոնների հետ նոյնացող խորագրերի սկզբում թաւ գրերով նշել ենք Ա ձեռագրի կանոնահամարները:

Սրանց հիման վրայ կազմել ենք յաջորդ՝ Ժ. Յաւելուածը. «ԱԲ, Հոռոմոսի եւ տասնհինգ Մայր Մաշտոցների կանոնացանկերի համադիր աղիւսակ», ուր Ա ձեռագրի Ա-ԽԷ. կանոնների դիմաց սիւնակներով նշուած են միւս բոլոր ձեռագրերի համապատասխան կանոնների համարները: Կարծում ենք, որ սա լինելու է Մայր Մաշտոցի ներկայ՝ Ա. հատորի Բ. գրքի ծրագիր-ուղենիշը, որովհետեւ 15 Մայր Մաշտոցների կանոնները ԱԲ (նաեւ Հոռոմոսի) Մաշտոցի կանոնների հետ նոյնանուն են, բայց նրանց նոյնականութիւնն անպայման ստուգելի է. վստահ ենք, որ սրանց մէջ երեւան են գալու մէկից աւելի նոր խմբագրութիւններ:

Ի վերջոյ որպէս Յաւելուած ԺԱ. կազմել ենք նոյն 15 Մաշտոցներում առկայ եւ մեր ԱԲ ձեռագրերում գոյութիւն չունեցող 73 կանոնե-

---

[164] *Կարծում ենք՝ կարողացել ենք իրագործել՝ անելով նիւթի թելադրած անհրաժեշտ մշակումները:*

[165] *Մաշտոցին վերաբերող ծովածաւալ նիւթին շատ տեղեակ չլինելով, իրաւաբան Սմբատ Յովհաննիսեանը սրանցից մէկի՝ Հմր 953 ձեռագրի մասին անփաստարկ դատողութիւններ է արել. «Թէեւ տուեալներ կան, որ այն ոչ միայն արտագրուած է Թ. դ. ձեռագրից, այլեւ, հաւանաբար, հարազատ է եղել Ե. դարի մաշտոցեան խմբագրութեան». այլեւ՝ Մաշտոց կաթողիկոսի Վարքը համարել է նրա հեղինակ Ստեփանոս կրօնաւորի «ընդօրինակած Մաշտոցի յիշատակարանը», իսկ «այս հանգամանքը մտածել է տալիս, որ Հմր 953 ձեռագիրն ընդօրինակուել է Թ. դարում գոյութիւն ունեցած մէկ այլ ձեռագրից». տե՛ս Ս. Հ. Յովհաննիսեան, Ամուսնաընտանեկան իրաւունքը վաղ աւատական Հայաստանում (Դ-Թ. դդ.), Երեւան, 1976, էջ 34-5 (այս անհմուտ արծարծման մասին իմացանք մեր գործընկեր Վարդան Դեւրիկեանից):*

[166] *Այս Մաշտոցներն էջմիածնական ենք համարում ոչ՛ թէ գրչութեան, այլ գործածուածութեան տեղի հիման վրայ. գրուած լինելով տարբեր տեղերում եւ տարբեր՝ ԺԵ-ԺԷ. դարերում, ժամանակ անց նրանք եկել են Մայր Աթոռ եւ այստեղ ծէսի մէջ օգտագործուել ընդհուպ մինչեւ ԺԹ. դ. կէսերը (որից յետոյ, յայտնի է՝ առաջնորդուել են արդէն տպագիր օրինակներով): Մեծ մասը գործածութիւնից մաշուած են եւ տարբեր չափի մանր բնագրական թերութիւններ ունեն, բայց անգամ այդպիսի տեղիները հիմնականում ընկալելի եւ վերծանելի են՝ երբեմն մէկի վնասուածքը միւսով վերականգնելի:*

րի մի ցանկ՝ «Պատկեր Հնաւանդ Մաշտոցում բացակայող՝ Մայր Մաշտոցների ունեցած յաւելեալ կանոնների»[167]: Այս մէկն արդէն Մայր Մաշտոցի Բ. հատորի կանոնացանկի մի տեսակ նախնական ուրուագիծ է, որն անպայման պէտք է ընդլայնուի՝ կանոնացանկերը քննելով ըստ ձեռագրերի ժամանակագրական կարգի, առանց Մաշտոցների տեսակի (Ձեռաց, Աշխարհաժող եւ այլն) խտրութիւն դնելու: Այսպիսով, ձեռագրական առաւել մեծ նիւթի գործածումով հնարաւոր է դառնալու ճշգրտել շատ կանոնների եւ նրանց մանրամասների առաջացման տեղը, ժամանակը, հեղինակին եւ այլն[168]:

Կանոնների դասաւորումն այստեղ արել ենք ըստ հնարաւոր տեսակային մերձաւորութեան, Հայրապետական Մաշտոցին վերաբերող կանոնները գրել ենք վերջում, տարբեր աստիճանների վերջի՝ Կիսասարկաւագի, Սարկաւագի եւ Քահանայի ձեռնադրութեան կանոնները վերի համադիր աղիւսակի (Յաւելուած Ժ.) մէջ չենք արտայայտել: Այստեղ արձանագրել ենք միայն այն չափածոները (տաղեր, գանձեր), որոնք կան մեր բնագրի կանոններից տարբերուողների մէջ:

Այս ցանկի մէկ-երկու կանոն այստեղ դրուել են գուցէ սոսկ խորագրերի տարբերուող շարադրանք ունենալու պատճառով, ուստի եւ հնարաւոր է նոյնանան մեր բուն շարքի որեւէ կանոնի հետ, բայց մնացեալը նրանցից տարբեր կանոններ են:

Ցանկիս մէջ Օրհնութենարեր ցուցակի կարգաւորութեան եւ Մաշտոց Եղիվարդեցու վարքի բնագրերը չարտայայտեցինք, որովհետեւ նկատի ունենալով մեր ծիսարանի ձեւաւորման եւ հետագայ կենցաղավարութեան խնդիրների առումով դրանց առաջնային կարեւորութիւնը, նախընտրեցինք դրանք այստեղ հրատարակել որպէս Դ. եւ Ե. Յաւելուածներ, ամէն մէկի սկզբում դնելով պատշաճ հետազօտական նախաբան. այս բնագրերը պարունակող ձեռագրերի պատկերը կայ թէ՛ համապատասխան յաւելուածների նախաբաններում եւ թէ՛ Մայր Մաշտոցների կանոնացանկերում (Յաւելուած Ժ.):

---

[167] Ի դէպ, Ն. եպս. Պողարեանը մեծաւ մասամբ Երուսաղէմի ձեռագրերի հիման վրայ ցանկել է կաթողիկոսական 5, եպիսկոպոսական 23 եւ քահանայական 77 կանոն (տե՛ս նրա՝ Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 96-120), բայց յատկապէս վերջին շարքի մէջ կան օտարամուտ եւ ընդհանրական կիրառութիւն չունեցած միաւորներ:

[168] Կանոնացանկային յաւելուածներիս մասին ոմանք գուցէ մտածեն, թէ կարելի էր ցանկերն այստեղ չբերել եւ բաւականանալ ձեռագրերի ցուցակային նկարագրութիւնների յիշատակումով: Այդպէս ճիշտ չէր լինի, որովհետեւ նախ ցանկերը գրել ենք մեր բնագրի հետ ունեցած յարաբերակցութիւնների ցուցադրումով, ապա՝ ընդհանուր պատկեր համադրելու որոշակի նպատակ ունեցող մշակումով եւ դասաւորութեամբ: Ի վերջոյ՝ դրանով գրքիս մէջ արդէն իսկ ամփոփուած են աշխատանքի շարունակման համար անհրաժեշտ կարեւորագոյն տեղեկութիւնները:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԷՋ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Ընթերցումները նշանակել ենք աւանդական եղանակի մեր նախընտրած ձեւով, «փոխարէն» նշանակող փխ-ի տեղ գրել ենք], իսկ չիք-ի տեղ՝ ~ պայմանական նշանները, բոլոր դէպքերում նախ գրուած են ձեռագրերի պայմանանիշերը, ապա ընթերցումը, յիշեալ նշաններից մէկը, վերջում հիմնաբառը: Տարահիւսական դրափոխութիւններից առաջ գրել ենք ~ նշանը: Ծաւալուն յաւելումներից առաջ տարբերութիւնը լաւ ցուցադրած լինելու նպատակով գրել ենք + նշանը: Ձեռագրերի պայմանանիշներ ընդունելով հայերէն այբուբենի գլխատառերը, շփոթից խուսափելու համար տողատակերում մեծատառ չենք գործածել, ուստի եւ թիւ նշանակող տառերը գրել ենք՝ .բ. ձեւով: Փակագծերի՝ [ ] մէջ գրուած տառերն ու բառերը ձեռագրերում (յատկապէս՝ Ա) եղծուած են:

ՄԱՇՏՈՑԻ ԲՆԱԳՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱՆԻՇԵՐԸ

Ա - Վենետիկի ձեռ. Հմր 487/320.

Բ - Երեւանի ձեռ. Հմր 1001.

Գ - Երեւանի ձեռ. Հմր 961.

Դ - Երեւանի ձեռ. Հմր 2789.

Հ - Երուսաղէմի ձեռ. 3299 (ցուցակում առկայ ԻԵ. կանոնի ընդարձակ քաղուածքները).

Ճ - Մկրտութեան կանոնի (ԺԸ.) Ճեմճեմեանի հրատարակութիւնը.

Յ - Վենետիկի Հմր 487/320 ձեռագրի նկարագրութիւնը (ՎՑ, Գ., էջ 1-48).

Ս - Աստուածաշունչի Զօհրապեան հրատարակութիւնը:

* * *

ԲՆԱԳԻՐ

Ա.1ա Ա.[1] ՅՈՎՀԱՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ՝ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ԵԿԵՂԵՑՈՅ

Ժողովեալ աստուածայնոյ եպիսկոպոսին զարքանեալ դասս պաշտանէից. եւ երթան ի տեղին ընդրեալ ըստ արժանին. եւ բերեն չափաւոր քարինս անտաշս եւ անկոփս ԺԲ.:

Եւ ասեն սաղմոս ի թիւ ԽԵ. [ԽԷ. 2]· *Մեծ է Տէր եւ աւրհնեալ է յոյժ: ՁԳ. [1] Իբրեւ[2] սիրելի են յարկք քո Տէր [զաւրութեանց], ՁԴ. [2]· [Հաճեցար] Տէր ընդ երկիր քո, եւ դարձ[ուցեր զգերութիւն Յակոբայ][3]: ՁԶ. [1] Հիմունք նորա ի լերանն սուրբ նորա:*

Սարկաւագն քարոզէ. *Խնդրեսցուք հաւատով եւ միաբանութեամբ:*

Գ. Տէր ողորմեայ:

Եւ ապա հաստատեն վէմ մի ի հիմն եկեղեցւոյն. ի միջոյ քեմբին, եւ այլ քարինս անկոփս ի յանկիւնս [շուրջանակի] չորեսին. առաջի երթալով ուխտին մոմեղին[աւք] վառելովք եւ բուրմամբք[4] խնկոց:

Եպիսկոպոսն ասէ զաղաւթս զայս.

Ա. *Բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնիդ եւ ամենայն սրբոց, լո՛ւր մեզ, Տէ՛ր Աստուած մեր, հաստատեա՛յ զհիմունս սորա մեծաւ զաւրութեամբ քով. աջողեա՛յ զգործս ձեռաց սոցա, որպէս զի եղիցի կատարումն սորա խաղաղութեամբ, եւ մեք արժանի լիցուք մտանել ընդ դրունս սորա եւ գոհանալով փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՀոգին Սուրբ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:*

[*Ա.1բ*] Եւ ապա հրամայէ ճարտարապետին՝ առնուլ զգործի չափոյն եւ գծագրէ զտեղին ըստ կամաց շինողին: Ապա տեառնագրէ սուրբ խաչովն զքարինսն[5] եւ զչորեսին անգիւնսն, ասելով.

Աւրհնե[ս]ցի, աւծցի եւ սրբէ[ս]ցի քարինքս այս յանուն Հաւր եւ Որդւո եւ Հոգւոյն[6] Սրբոյ:

Զայս ասէ եպիսկոպոսն եւ իրիցունքն ի չորեսին անգիւնսն: Յետ այսորիկ այս կանոն կատարի. սաղմոս ՂԹ. [17]· կցուրդ. *Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա՛ ի մեզ, զգործս ձեռա[ց]»:*

1. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱԿԱՑ

[Գ. 19-26]· «*Աստուած իմաստութեամբ հիմունս արկ երկրի, պատրաստեաց զերկինս խորհրդով,* 20 *հանճարով[7] զանդունդս պատառեաց, եւ ամպք հոսեցին զանձրեւ[8]:* 21 *Որդեա՛կ, մի՛ լքա-*

---

[1] *Ա.1ա, 2ա, 3ա, 7ա, 8ա ստ. լս.՝ «Հիմն, Հիմն», 4ա, 5ա՝ «Հիմն, Հիմն աւրհնել», 6ա, 9ա՝ «Հիմն աւրհնել»*

[2] *Ս որպէս] իբրեւ*

[3] *Յ իբրեւ զի բարի են յարկ քո եւ դարձ] իբրեւ սիրելի... եւ դարձ. (Ա* այս տողը մագաղաթի ծալուածքի տակ է. ընթերցումը՝ սաղմոսի համարի հիման վրայ*)*

[4] *Յ բուրմամբ*

[5] *Յ զքարինս*

[6] *Յ Հոգոյն*

[7] *Ս հանճարով իւրով*

[8] *Ս զանձրեւ*

նիր[1], պահեա՛յ[2] զխորհուրդս իմ եւ զիմաստութիւն, 22 եւ[3] կեցցէ անձն քո, եւ շնորհք իցեն ի վերայ պարանոցի քում[4]. եղիցի բժշկութիւն մարմնոյ քում, եւ զարման ոսկերաց քոց: 23 Եւ[5] գնասցես յուսով խաղաղութեամբ[6] յամենայն ճանապարհս քո, եւ ոտն քո մի՛ գայթակղեսցի[7]: 24 Զի եթէ նստիս[8] աներկիւղ[9] իցես, եւ եթէ ն[ն]ջեսցես՝ քաղցր քունեսցես: 25 Եւ[10] ոչ երկիցես ի զարհուրանաց ի վերայ եկելոց[11] եւ |Ա.2ա| յարշաւանաց ամբարշտաց[12] ի վերայ հասելոց[13]: 26 Զի Տէր եղիցի վերակացու[14] ամենայն ճանապարհաց քոց, եւ հաստատեսցէ զոտն քո, զի մի՛ գայթակղեսցիս[15]»:

2. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Բ. ՅՈԲԱ [ԻԸ. 5-28].

«Երկիր. եւ[16] ի նմանէն ելցէ հաց, եւ ի ներքո[17] նորա իբրեւ զհուր շրջեցաւ: 6 Տեղի շափիղա[18] քարինք նորա, եւ քար[19] նորա ոսկի. 7 Շաւիղ[20] է, զոր ոչ ծանեաւ թռչուն, եւ ոչ գիտաց[21] զնա ակն անգեղ. 8 եւ ոչ կոխեցին զնա որդիք ամբարտաւանից, ոչ անց ի նա առիւծ[22]: 9 Յապառաժն ձգեաց զձեռն իւր, տապալեաց զլերինս ի հիմանէ: 10 Զպտոյտս[23] գետոց պատառեաց: Եւ[24] զամենայն պատուականս ետես ակն իմ: 11 Զխորս գետոց յատակեաց[25], եւ եցոյց զզաւրութիւնս[26] իւր ի լոյս: 12 Իսկ իմաստութիւն ուստի գտաւ, կամ զի՞նչ տեղի իցէ հանճարոյ: 13 Ոչ գիտէ մարդ զճանապարհս նորա, եւ ոչ գտաւ ի մէջ մարդկան: 14 Անդունդք ասացին. եթէ[27] չէ առ իս, եւ ծով ասաց. եթէ[28] չէ ընդ ինեւ: 15 Ո՛չ տայց[29] զրուական ընդ նորա, եւ ո՛չ կշռեսցի արծաթ գնոց[30] նորա: |Ա.2բ| 16 Եւ ոչ բարձցի ընդ ոսկոյն Սափերա[31]. եւ[32] ընդ եղնգան պատուականի[1]: 17 Եւ[2] զուգեսցի ընդ նմա ոսկի եւ ապակի. եւ ի գինս նորայ անաւթք ոսկեղէնք: 18 Բարձրութիւնք եւ խորութիւնք ոչ յիշեցին[3]: Զգեաց զիմաստութիւն քան զներքսագոյնս: 19 Եւ[4] ոչ հաւասարեսցէ նմա տպազիոյն թեոպացոց[5]. եւ[6] ընդ ոսկոյ սրբոյ ոչ բարձցի: 20 Իսկ իմաստութիւն ուստի գտաւ, եւ զի՞նչ[7] տեղի հանճարոյ: 21 Ղաւղեալ է[8] ի մարդ[կ]անէ, եւ ի թռչնոց[9] ծածկեցաւ: 22 Կորուստ եւ մահ ասացին. լուաք զփառաւորութենէ նորա: 23 Եւ Տէր զիւրաւ ընծաեցոյց զճանապարհս նորա: 24 Քանզի ինքն գիտէ զտեղի նորա, եւ ինքն տեսանէ զամենայն առ ի ներքո երկնից: Քանզի[10] գիտէ զամենայն՝ 25 զոր արար յերկրի. զկշիռ հողմոց եւ զչափս ջուրց[11] զոր արար: 26 Ինքն ետես եւ համարեցաւ. եւ զճանապարհս[12] նորա արձակմամ[բ] բարբառոյ: 27 Յայնժամ ետես զնա եւ պատմեաց զնմանէ: Պատրաստեալ քննեաց. 28 եւ ասէ ցմարդ. Ահա աստուածպաշտութիւն է իմաստութիւն, եւ մեկ|Ա.3ա|նեալ[13] ի չարեաց[14] հանճար»:

3. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱԵԱՅ ՄԱՐԳԱՐԷ[Է] [ԿԵ. 21 - ԿԶ. 2].

Այսպէս ասէ Տէր[15]. «շինեսցեն տունս եւ ինքեանք բնակեսցեն ի նոսա, տնկեսցեն այգիս եւ ինքեանք կերիցեն զպտուղ նորա[16]: 22 Եւ մի՛ եւս նոքա շինեսցեն՝ եւ այլքն[17] բնակեսցեն[18], նոքա տնկեսցեն՝ եւ այլք կերիցեն: Այլ[19] ըստ աւուրց փայտին[20] կենաց եղիցին աւուրք կենաց[21] ժողովրդեան իմոյ. գործք ձեռաց նոցա հնասցին: 23 Եւ ընտրեալք իմ մի՛ եւս վաստակեսցեն ընդունայն. եւ ծնցին որդիս ո՛չ[22] յանէծս, զի զաւակ աւրհնեալ են յԱստուածոյ, եւ ծնունդք նոցա՝ ընդ նոսա: 24 Եւ եղիցի մինչ չեւ կարդացեալ իցէ նոցա՝ ես լուայց նոցա. եւ մինչդեռ խաւսեցին[23], ասացից՝ եթէ[24]

---

[1] Ս > մի՛ լքանիր
[2] Ս պահեա
[3] Ս զի] եւ
[4] Ս քոյ
[5] Ս զի] եւ
[6] Ս խաղաղութեան
[7] Ս գայթագղեսցի
[8] Ս նստիցես
[9] Ս աներկեւղ
[10] Ս > եւ
[11] Ս հասելոց] եկելոց
[12] Ս ամպարշտաց
[13] Ս եկելոց] հասելոց
[14] Ս ի վերայ] վերակացու
[15] Ս գայթագղեսցի
[16] Ս > եւ
[17] Ս ներքոյ

[18] Ս շափիղայի
[19] Ս հող] քար
[20] Ս շաւիղ
[21] Ս գիտեաց] գիտաց
[22] Ս առեւծ
[23] Ս զպոյտ
[24] Ս > եւ
[25] Ս յայտնեաց] յատակեաց
[26] Ս զզաւրութիւն
[27] Ս թէ
[28] Ս թէ
[29] Ս տացի
[30] Ս ընդ գնոց
[31] Ս սոփերայ
[32] Ս > եւ

---

[1] Ս եղնգանն պատուականի + եւ ընդ շափիղայի
[2] Ս ոչ] եւ
[3] Ս յիշեցին եւ
[4] Ս > եւ
[5] Ս տպազիոնն եթւովպացւոց
[6] Ս > եւ
[7] Ս զի՞նչ իցէ
[8] Ս > է
[9] Ս թռչնոց երկնից
[10] Ս քանզի ինքն
[11] Ս զկշիռ հողմոյ եւ զչափ ջրոց
[12] Ս զճանապարհ

[13] Ս մեկնել
[14] Ս չարեաց է
[15] Ս > այսպէս ասէ տէր
[16] Ս նոցա
[17] Ս այլք
[18] Ս բնակեսցեն եւ
[19] Ս > այլ
[20] Ս փայտի
[21] Ս > կենաց
[22] Ս ոչ եւս ծնանիցին որդիս] ծնցին որդիս ոչ
[23] Ս խաւսեսցին
[24] Ս թէ

զինչ խնդրեք: 25 Յայն[1] ժամանակի գայլք եւ գառինք ի միասին ճարակեսցին, եւ առեւծ՝ իբրեւ զեզն յարդ կերիցէ, եւ աւձ՝ զհող իբրեւ զհաց կերիցէ. եւ[2] մի՛ մեղիցեն եւ մի՛ վնասեսցեն ոք[3] ի լերինս[4] սրբութեան իմոյ[5]: [ԿԶ.] 1 Այսպէս ասէ Տէր. Երկինք աթոռ իմ են, եւ երկիրս[6] պատուանդան ոտից իմոց: Ո՞րպիսի տուն շինիցեք ինձ[7], կամ ո՞ր|Ա.3բ|պիսի ինչ իցէ այն տեղի հանգստեան իմոյ: 2 Զի զայս ամենայն ձեռն իմ արար, եւ իմ է ամենայն, ասէ Տէր: Եւ ես յո՞ հանգեայց[8], եթե ոչ ի հեզս եւ ի խոնարհս, եւ յայնոսիկ[9] որ դողան ի բանից իմոց»:

4. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Դ. ՅԵԶԵԿԻԵԼԷ ՄԱՐԳ[ԱՐԷԷ. Խ· 3-10]. *«Եւ ահա այր մի, եւ տեսիլ նորա իբրեւ զտեսիլ փայլուն պղնձոյ, եւ ի ձեռին նորա[10] լար շինողաց եւ ձող չափոյ. եւ ինքն կայր ի վերայ դրանն: 4 Եւ ասէ ցիս այրն. Տե՛ս[11], որդի՛ մարդոյ, եւ[12] արդ, հայեաց աչաւք քովք[13], եւ լուր ականջաւք քովք[14] եւ հաստատեա[15] ի սրտի[16] քում զամենայն զոր[17] ցուցից քեզ. զի վասն ցուցանելոյ քեզ եկի այսր. եւ զամենայն զոր տեսանես՝ ցուցես տանդ Իսրայէլի[18]: 5 Եւ ահայ[19] շուրջ զտաճարաւն փողոցս. եւ ի ձեռն[20] առն՝ ձող չափոյ ի վեց կանգնոյ եւ թզոյ: Եւ չափեաց զլայնութիւն պարսպացն հաւասար ձողոյն, եւ զբարձրութիւն[21]: 6 Եւ եմուտ ընդ դուռն[22] որ հայէր ընդ արեւելս՝ զեւթն աստիճանաւքն[23]. եւ չափեաց զկողակն վեց վեց զկամարաւք դրանն հաւասար ձողոյն[24], եւ կամար[25] |Ա.4ա| ի մէջ կողակացն վեց կանգուն[26]: 7 Եւ կողակն երկրորդ հաւասար ձողոյն յերկայնութիւն[27], եւ հաւասար ձողոյն ի լայնութիւն[1]. եւ կամար[2] ի հինգ կանգնոյ: 8 Եւ կողակն երրորդ հաւասար ձողոյն ի լայնութիւն, եւ հաւասար ձողոյն յերկայնութիւն[3]. եւ կամարք դրանն 9 մերձ ի կոնք դրանն յութ կանգնոյ. եւ այլ[4] կամարք յերկուց կանգնոց. եւ կամարք երեքկին[5] դրանն 10 եւ կողակք[6] դէմ յանդիման միմեանց՝ երեք աստի եւ երեք անտի[7]. չափեալ յեր[8] յերեցունց կամարացն՝ աստի եւ անդի[9]»:*

---

[1] *Ա յայնմ*
[2] *Ա > եւ*
[3] *Ա > զոք*
[4] *Ա լերին*
[5] *Ա իմոյ ասէ տէր*
[6] *Ա երկիր*
[7] *Ա ինձ ասէ տէր*
[8] *Ա հայեցայց] հանգեայց*
[9] *Ա > յայնոսիկ*
[10] *Ա նորա էր*
[11] *Ա տեսեր*
[12] *Ա > եւ*
[13] *Ա քովք*
[14] *Ա քովք*
[15] *Ա հաստատեա*
[16] *Ա մտի] սրտի*
[17] *Ա զոր ես*
[18] *Ա ցուցցես զամենայն զոր զուզ տեսանես՝ տանն իսրայէլի] զամենայն զոր տեսանես՝ ցուցես տանդն իսրայէղի*
[19] *Ա ահա*
[20] *Ա ձեռին*
[21] *Ա զբարձրութիւն + նորա հաւասար ձողոյն*
[22] *Ա դուռնն*
[23] *Ա աստիճանաւք*
[24] *Ա ձողոյն + եւ զերկայնութիւն կողակին հաւասար ձողոյն, եւ զլայնութիւն նորին հաւասար ձողոյն*
[25] *Ա կամարս*
[26] *Ա ի վեց կանգնոյ*
[27] *Ա ի լայնութիւն] յերկայնութիւն*

5. ԸՆԹԵՐՑ[ՈՒԱԾ] Ի ԶԱՔԱՐԵԱՅ ՄԱՐԳ[ԱՐԷԷ. Բ· 1-5]. *«Ամբարձի զաչս իմ եւ տեսի. եւ ահայ այր մի[10], եւ ի ձեռին նորա[11] լար երկրաչափ: 2 Ասեմ[12] ցնա. Յո՞[13] երթաս: Ասէ[14] ցիս. Չափել զԵրուսաղէմ եւ տեսանել[15] ո՞րչափ է լայնութիւն նորա եւ ո՞րչափ է[16] երկայնութիւն: 3 Եւ ահա հրշտակն[17] որ խաւսեր յիս, զտեղի առեալ կայր. եւ այլ հրշտակ[18] ելանէր ընդ առաջ նորա: 4 Եւ ասէ ցնա. Ընթա՛ եւ խաւսեա՛ց ընդ երիտասարդին այսորիկ[19], եւ ասասցես[20]. Պտղալից շինեսցի Երուսաղէմ |Ա.4բ| ի բազմութենէ մարդոյ եւ անասնոյ ի մէջ նորա. 5 եւ ես եղեց նմա պարիսպ հրեղէն շուրջանակի, եւ փառս[21] բնակեցայց ի մեջ[22] նորա»:*

6. ԴԱՐՁԵԱԼ Ի ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԷԷ [Դ· 1-9]. *«Եւ դարձաւ հրշտակն[23] որ խաւսերն, եւ զարթոյց զիս՝ զոր աւրինակ զարթնու[24] այր ի քնոյ իւրմէ. 2 եւ ասէ[25]. Զի՞նչ տեսանես դու: Եւ ասեմ. Տեսանեմ[26] աշտանակ ոսկի ձոյլ, եւ գունդ ի վերա նորա, եւ եւթն ճրագ ի վերայ նորայ, եւ եւթն բերան[27] ճրագացն[28]. 3 եւ երկու ձիթենիք ի վերայ նորա՝ մի ընդ աջմե գնդին լուցելոյ, եւ մի ընդ ահեկե: 4 Հարցի, եւ ասեմ ցհրշտակն[29] որ խաւ-*

---

[1] *Ա յերկայնութիւն] ի լայնութիւն*
[2] *Ա կամարն*
[3] *Ա յերկայնութիւն, եւ հաւասար ձողոյն ի լայնութիւն*
[4] *Ա > այլ*
[5] *Ա ներքին] երեքկին*
[6] *Ա կողակք + դրանն*
[7] *Ա + եւ*
[8] *Ա չափ մի էր] չափեալ յեր*
[9] *Ա անտի*
[10] *Ա > մի*
[11] *Ա իւրում ունէր] նորա*
[12] *Ա եւ ասեմ*
[13] *Ա յով*
[14] *Ա եւ ասէ*
[15] *Ա տեսանել + թէ*
[16] *Ա > է*
[17] *Ա հրեշտակն*
[18] *Ա հրեշտակ*
[19] *Ա ընդ այնմիկ] այսորիկ*
[20] *Ա ասասցես*
[21] *Ա ի փառս*
[22] *Ա միջի*
[23] *Ա հրեշտակն*
[24] *Ա յորժամ զարթնուցու] զարթնու*
[25] *Ա ասէ ցիս*
[26] *Ա տեսանեմ ահա*
[27] *Ա բերանք*
[28] *Ա ճրագացն որ ի վերայ նորա*
[29] *Ա հրեշտակն*

սէր ընդ իս[1]. Զի՞նչ են այդորիկ, Տէ՛ր: 5 Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ[2]. Ո՞չ գիտես զինչ են այդորիկ: Եւ ասեմ. Ոչ, Տէ՛ր: 6 Պատասխանի ետ եւ ասէ[3]. Այս բան Տեառն է առ Զաւրաբաբէլ[4]. ասե, ոչ զաւրութեամբ մեծաւ եւ ոչ ուժգնութեամբ, այլ Հոգով իմով, ասե Տէր ամենակալ: 7 Ո՞վ ես դու, լեառն մեծ, կանգնեալ առաջի Զաւրաբաբելի[5]. եւ հանից զվէմն ժառանգութեան՝ զհաւասարութիւն շնորհաց շնորհել նմա: 8 Եւ եղեւ |Ա.5ա| բան Տեառն առ իս եւ ասէ. 9 Ձեռք Զաւրաբաբելի[6] հիմն արկին տանս այսորիկ[7], եւ ձեռք նորա կատարեսցին զսա[8]. եւ ծանիցես, եթե[9] Տէր ամենակալ առաքեաց զիս առ քեզ»:

7. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՆԳԷԷ ՄԱՐԳԱՐԷԷ [Բ. 5-10]. «Եւ արդ, զաւրացի՛ր դու, Զաւրաբաբել[10], ասէ Տէր, եւ զաւրացի՛ր, Յեսու Սեդեկիա[11] քահանայ մեծ, եւ զաւրասցի ամենայն ժողովուրդ երկրիդ, ասէ Տէր, եւ գործեցէ՛ք, զի ես ընդ ձեզ եմ. ասէ Տէր ամենակալ: 6 Եւ բանն զոր ուխտեցի ընդ ձեզ՝ ելանել[12] յերկրէն Եգիպտացւոց. եւ Հոգին իմ որ[13] ի [միջի ձերում. ք][14] աջալեր[եցարուք. 7 զի այսպ]էս ասէ Տէր ամենակալ. Դարձեալ միւանգամ շարժեցից զերկինս եւ զերկիր[15] ըզծով եւ զցամաք. 8 եւ միանգամայն շարժեցից զամենայն արարածս[16], եւ լցուցից զտունդ զայդ փառաւք իմաւք[17], ասէ Տէր ամենակալ[18]: 10 Եւ[19] մեծ եղիցի[20] փառք տանդ այդորիկ վերջին[21] քան զառաջինն[22]: Եւ ի տեղւոջդ[23] յայդմիկ տացի[24] խաղաղութիւն, ասէ Տէր ամենակալ[25]. խաղաղութիւն ոգոց ի[26] փրկութիւն ամենայնի, որ գործելոց իցեն[27] յարուցանել զտունդ[28] զայդ»:

---

[1] Մ ցիս] ընդ իս
[2] Մ հրեշտակն որ խաւսէր ցիս եւ ասէ ցիս
[3] Մ ետ հրեշտակն եւ ասէ ցիս
[4] Մ զօրաբաբէլ
[5] Մ զօրաբաբելի
[6] Մ զօրաբաբելի
[7] Մ տանդ այդմիկ
[8] Մ կանգնեսցեն զդա] կատարեսցին զսա
[9] Մ թէ
[10] Մ զօրաբաբէլ
[11] Մ յովսեդեկեայ
[12] Մ յելանելն
[13] Մ որ կայ
[14] այս լրացումը Սր. Գրքից
[15] Մ զերկիր եւ
[16] Մ ազգս. եւ եկեսցէ ընտիր ընտիր ընչից ամենայն ազգաց] արարածս
[17] Մ > իմաւք
[18] Մ ամենակալ + 9 իմ է արծաթ, եւ իմ է ոսկի, ասէ տէր ամենակալ.
[19] Մ զի] եւ
[20] Մ եղիցին
[21] Մ վերջինդ
[22] Մ զառաջինն + ասէ տէր ամենակալ
[23] Մ տեղւոջդ
[24] Մ տաց
[25] Մ + եւ
[26] Մ ոգւոց (> ի)
[27] Մ գործիցէ] գործելոց իցեն
[28] Մ զտաճարդ] զտունդ

8. Ա.5բ Ի ԿՈՐՆԹԱՑԻՈՑ Ա. ԹՂԹՈՅՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Գ. 9-15] «Եւ[1] [Աստուծոյ գործակից եմք. Աստուծոյ արդիւն] եմք[2], Աստուծոյ շինած եմք[3]: 10 Ըստ շնորհացն[4] որ տուեալ են ինձ, իբրեւ իմաստուն ճարտարապետ հիմն եդի. բայց այլ է որ շինեն. այլ իւրաքանչիւր ոք զգոյշ լինիցի[5] եթե[6] որպէս շինիցէ: 11 Զի հիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս: 12 Եթե ոք շինեսցէ[7] ի վերա հիմանս այսորիկ՝ ոսկի, արծաթ, ականս պատուականս, փայտ, խոտ, եղեգն, 13 իւրաքանչիւր գործն յայտնելոց է. զի աւրն ընդրելոց է[8]. զի հրով յայտնելոց է. 14 զի[9] իւրաքանչիւր գործոյն[10] զիարդ եւ իցէ՝ հուրն փորձեսցէ: 15 Եթե այլ[11] ինքն կացցէ[12] այնպէս՝ որպէս ուրուք գործն զոր շինեաց՝ կացցէ, վարձս առցէ. եթե[13] ուրուք գործն այրեսցի՝ տուժեսցի, եթե[14] ի հուր»:

Ալելու. [Սաղմոս ԻԱ. 1. Տէ՛ր, յո՛յս իմ][15]

9. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ [ԺԶ. 13-19]. «Եւ եկեալ Յիսուս ի շէնս[16] Փիլիպպեայ կեսարեան[17], հարցանէր ցաշակերտսն իւր[18] եւ ասէր. Զո՞ ոք ասեն զինէն մարդիկն՝ եթե[19] իցէ որդի մարդոյ: 14 Եւ նոքա ասեն. Ոմն՝ |Ա.6ա| զՅովհաննես մկրտիչ, եւ այլք՝ զԵղիա[20], կամ զմի ոք ի մարգարէից[21]: 15 Ասե ցնոսա[22]. Իսկ դուք զո՞ ոք ասեք զինէն եթե[23] իցեմ: 16 Պատասխանի ետ[24] Պետրոս եւ ասէ ցնա[25]. Դու ես Քրիստոս[26] որդի Աստուծոյ կենդանոյ[27]: 17 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Երանի քեզ, Սիմո՛վն որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայրն[28] իմ որ յերկինս է: 18 Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վեմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց զնա մի յաղթահար[եսցեն:

---

[1] Մ զի] եւ
[2] Մ էք] եմք
[3] Մ էք] եմք
[4] Մ շնորհացն աստուծոյ
[5] Մ լիցի
[6] Մ թէ
[7] Մ շինէ
[8] Մ ընտրեսցէ
[9] Մ եւ] զի
[10] Մ զիւրաքանչիւր գործն
[11] Մ բայց] այլ
[12] Մ կեցցէ այլ
[13] Մ եւ եթէ
[14] Մ թէ
[15] սկսւածքն ոնի ձեռ. 955. 7ա
[16] Մ կողմանս] շէնս
[17] Մ կեսարեայն
[18] Մ > իւր
[19] Մ թէ
[20] Մ զեղիա + եւ կէսք՝ զերեմիա
[21] Մ մարգարէիցն
[22] Մ ցնոսա յիսուս
[23] Մ թէ
[24] Մ ետ + նմա սիմովն
[25] Մ > ցնա
[26] Մ քրիստոսն
[27] Մ կենդանւոյ
[28] Մ հայր

19 Եւ տա]ց քեզ [զփականս արքայ]ութեան երկն[ից. եւ զոր] միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կա[պեա]լ յերկինս. եւ զոր արձակեսցես[1] յերկրի, եղիցի արձակեալ յերկինս»:

Սարկաւագն քարոզէ[2]. Վասն ի վերուստ խաղաղութեան:

Եպիսկոպոսն[3] ասէ զաղօթս զայս.

Բ. Տէ՛ր Աստուած մեր, որ հաճեցար ի վերա այսր վիմի շինել զեկեղեցի քո, դու, Տէ՛ր, զքոյս քեզ մատուցանեմք՝ շինել ի փառաբանութիւն որ շինեալ է քեզ տունս, բազում քո երկնաւոր բարերարութեամբդ լցո՛յ զսա եւ փոխահատոյց լե՛ր, |Ա.6բ| եւ որք [սպասաւորեն սմա]՝ զաւր[ացո՛] զսոսա, ան[ախտ պահելով զ]հիմունս սորա, ան[բախ]ս[4] եւ անշարժելի եւ հաստատուն պահեա՛յ, կատարեալ լցո՛ զտունս զայս, որպէս զի ի սմա ամենազովեստ երգով եւ փառաբանութեամբ աւրհնեսցուք զամենապատիւ եւ զվայելուչ անունդ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս:

Քարոզէ սարկաւագն. Խնդրեսցուք հաւատով եւ միաբանութեամբ ի Տեառնէ. զի զողորմութեան: ԺԲ: Տէր ողորմեա՛ Եւ աւրհնութիւն ի փառս:

Ապա առնու եպիսկոպոսն զբրիչն ի ձեռնն եւ հարկանէ զերկիրն, զոր ծրագրեալ է արուեստաւորին Գ. յարեւելս, Գ. յարեւմուտս, Գ. ի հարաւ, Գ. ի հիւսիսի. եւ տա ի գործողսն. եւ զքարինս ԺԲ: դնէ ի խորանին ի չորեսին անգիւնսն, զոր եհար եպիսկոպոսն եւ մտանեն ի ժամ յայնմ տեղոջ. ուր հաստատի սեղանն եւ այս կանոն կատարի. սաղմոս ՁԶ. [1]. Կցուրդ Հիմունք նորա ի լեառն սուրբ[5] նորա. [ՃԻԶ. 2]. Շինէ Տէր զԵրուսաղէմ[6]:

10. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱԵԱ ՄԱՐԳԱՐ[ԷԻ. Կ. 1-7]. «Լուսաւորեա՛ց, լուսաւորեա՛ց, Երուսաղէ՛մ, զի հասեալ է լոյս քո, եւ փառքն[7] Տեառն ի վերայ քո ծագեցին[8]: 2 Զի ահա խաւար ծածկեաց զերկիր, եւ մառախուղ՝ զհեթանոսս. բայց ի քեզ, Տէ՛ր, յայտնեսցի, |Ա.7ա| եւ փառք նորա ի քեզ երեւեսցի[9]: 3 Եւ գնասցեն[10] թագաւորք ի լոյս քո, եւ հեթանոսք ի ծագել լուսոյ քոյ: 4 Համբա՛րձ շուրջ զքեւ զաչս քո, եւ տե՛ս ժողովեալ առ քեզ զամենայն մանգունս[11] քո, զի եկին հասին ի հեռաստանէ որդիք քո, եւ զդստերս[1] քո ի վերայ ուսոց բերեանց[2] բարձեալ բերիցին: 5 Յայնժամ տեսցես եւ խնդասցես[3], երկիցես եւ զարհուրեսցես[4] ի սրտի քում. զի փոխեսցի[5] ի քեզ զմեծութիւն[6] ծովու, եւ ազգաց եւ ժողովրդոց: 6 Եկեսցեն ի քեզ երամակք ուղտուց, եւ ծածկեսցեն[7] [զքեզ ուղտերամակքն Մադիամու եւ Գեփայ]. ամենեքե[ան ի Սաբայ եկ]եսցեն. բերել քեզ[8] ոսկի եւ կնդրուկ, եւ ականս պատուականս. եւ զփրկութեան Տեառն առցեն զաւետիս: 7 Եւ ամենայն խաշինքն Կեդարու ժողովեսցին առ քեզ. եւ խոյք Նաբեութայ[9] ածցին եւ մատուցեն[10] ընդունելի ի պատարագ ի վերայ սեղանոյ իմոյ. եւ տուն աղաւթից իմոց փառաւորեսցի»:

11. ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ Ի ԿԱԹՈՂԻԿԵԱՑՈՑ ԹՂԹՈՅՆ Ը[ՆԹԵՐՑՈՒԱԾ. Ա. Պետր. Բ. 4-10]. «Սիրելի՛ք[11], առ որս մատուցեալ[12] ի վէմն կենդանի, որ թեպէտ ի մարդկա|Ա.7բ|[նէ անարգեալ, այլ առ ի յԱստուծոյ ընտրեալ եւ պատուական է: 5 Եւ դու]ք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր՝ յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգեւոր[13] պատարագ սուրբ[14]՝ հաճոյ Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի: 6 Քանզի կայ իսկ ի գրի. եթե ահաւասիկ[15] դնեմ ի Սիովն[16] վէմ ընդիր[17], գլուխ անկեան պատուական, եւ որ ի նա հաւատացէ[18] մի ամաչեսցէ: 7 Ձեզ այսուհետեւ հաւատացելոցդ է[19] վէմ պատուական: Իսկ անհաւատիցն, վէմ[20] զոր անարգե[ց]ին շինողքն[21], նա եղեւ գլուխ անկեան. 8 եւ վեմ գլորման եւ վեմ գայթագղութեան, յոր[22] գայթագղին ապստամբեալքն[23] ի բանէն՝ յոր[24] եղան: 9 Այլ դուք ազգ էք ընդիր[25], թագաւորութիւն, քահանայութիւն. ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական. որպես զի զձեր առաքինութիւնս[26] նուիրիցեք

---

[1] Ս արձակեսցես
[2] Յ քարոզէ
[3] Յ եւ եպիսկոպոսն
[4] աղօթքիս պակասների լրացումը ըստ ձեռ. 955.7բ

[5] Ս ի սուրբ
[6] Հմմտ. Սղմ. ՃԻԶ. 2 Շինէ զԵրուսաղէմ Տէր. եւ զցրուեալսն Իսրայէլի ժողովէ
[7] Ս փառք
[8] Ս ծագեսցեն
[9] Ս երեւեսցին
[10] Ս գնասցեն
[11] Ս մանկունս

[1] Ս զդստերք
[2] Ս նոցա] բերեանց
[3] Ս խնդասցես
[4] Ս զարհուրեսցիս
[5] Ս փոխեսցի
[6] Ս մեծութիւն
[7] Ս ծածկեսցեն
[8] Ս > քեզ
[9] Ս խոյքն Նաբէովթայ
[10] Ս մատուսցին
[11] Ս > սիրելիք
[12] Ս մատուցեալ էք

[13] Ս զհոգեւորն
[14] Ս պատարագս] պատարագ սուրբ
[15] Ս ահաւասիկ
[16] Ս սիոն
[17] Ս ընտիր
[18] Ս հաւատասցէ
[19] Ս > է
[20] Ս վէմն
[21] Ս շինաւղքն
[22] Ս որ
[23] Ս ապստամբեալք
[24] Ս յոր եւ
[25] Ս ընտիրք
[26] Ս առաքինութիւնսն

այնմ, որ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն։ ₁₀ *Որք երբեմն չժողովուրդ, բայց արդ ժողովուրդ Աստուծոյ. որք չողորմեալք, այժմ ողորմութիւն գտեալք»։*

Ալելու. [*ՁԳ. 1.*]. *Իբրեւ սիրելի են յարկք*[1]։

12. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ [*Է. 24-29*].

|*Ա.8ա*| *«Տէր մեր Յիսուս ասէ*[2]. *«ամենայն որ լսէ զբանս իմ*[3] *եւ առնէ զնոսա*[4], *նմանէ*[5] *առն իմաստնոյ, որ շինեաց զտունն*[6] *իւր ի վերա վիմի։* ₂₅ *Շնչեցին հողմք, իջին անձրեւք, խաղացին գետք*[7], *բախեցին զտունն, եւ ոչ կործանեցաւ, զի*[8] *ի վերայ վիմի հաստատեալ էր։* ₂₆ *Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ եւ ոչ առնէ զսոսա, նմանէ*[9] *[առն] յիմարի, որ շինեաց զտունն*[10] *իւր ի վերայ աւազոյ։* ₂₇ *Իջին անձրեւք, խաղացին*[11] *գետք, շնչեցին հողմք՝ հարին զտունն, եւ անկաւ, եւ եղեւ*[12] *կործանումն նորա մեծ յոյժ.* ₂₈ *[Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն] ընդ վարդապետութիւն նորա.* ₂₉ *Զի իբրեւ իշխանութեամբ ուսուցանէր զնոսա*[13], *եւ ոչ որպէս դպիրքն*[14]*»։*

13. ԱՂԱՒԹՔ ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷԻ [*Թ. 4-19*].

«Տէ՛ր Աստուած, մեծ[15] *եւ սքանչելի, որ պահես զուխտ եւ զողորմութիւն սիրելեաց քոց, որոց պահեն զպատուիրանս քո։* ₅ *Մեղաք, անաւրինեցաք, անիրաւեցաք*[16], *ապստամբեցաք եւ խոտորեցաք ի պատուիրանաց քոց*[17]. ₆ *եւ ոչ լուաք ծառայից քոց մարգարէից*[18] *եւ*[19] *որ*[20] *խաւսեցան յանուն քո առ թագաւորսն*[21] *մեր* |*Ա.8բ*| *[եւ առ իշխանս մեր, եւ առ հարս մեր, եւ առ ամենայն ժողովուրդս երկրին։* ₇ *Քո], Տէ՛ր, ա[րդարութիւն], եւ մեր ամ[աւթ ե]րեսաց իբրեւ յաւուր յայսմիկ, առն Յուդայ՝ եւ բնակչաց*[22] |*Բ.1ա*|[23] *Երուսաղէմի, եւ ամենայն բնակչաց*[1] *Իսրայէղի*[2] *մերձաւորաց եւ հեռաւորաց յամենայն երկրի*[3] *ուր ցրուեցեր զնոսա*[4] *վասն անհնազանդութեան իւրեանց, զոր անհնազանդեցան*[5] *քեզ, Տէ՛ր։* ₈ *Մեր ամաւթ երեսաց մերոց եւ թագաւորաց մերոց*[6], *եւ իշխանաց մերոց եւ հարց*[7] *մերոց, որք*[8] *մեղաք։* ₉ *Եւ Տեառն Աստուծոյ մերոյ գթութիւնք եւ քաւութիւնք*[9]. *զի ապստամբեցաք*[10] *ի Տեառնէ,* ₁₀ *եւ ոչ լուաք ձայնի*[11] *Տեառն Աստուծոյ մերոյ՝ գնալ յաւրէնս*[12] *նորա, զոր եդ*[13] *առաջի մեր ի ձեռն ծառայից*[14] *իւրոց մարգարէից։* ₁₁ *Եւ*[15] *ամենայն Իսրայէղ*[16] *անցին*[17] *զաւրինաւք*[18] *քովք*[19]*։ Եւ եկն*[20] *ի վերա մեր անէծք*[21] *եւ երդումն*[22], *գրեալն*[23] *յաւրէնս*[24] *Մովսէսի*[25] *ծառայի քո*[26], *զի մեղաք նմա։* ₁₂ *Եւ հաստատեաց զբան*[27] *իւր զոր խաւսեցաւ ի վերայ մեր եւ ի վերայ*[28] *դատաւորաց մերոց որ դատին*[29] *զմեզ՝ ածել*[30] *ի վերայ*[31] *մեր չարիս մեծամեծս, որ ոչ եղեն ի ներքոյ ամենայն երկնից՝ ըստ այնմ որ եղեն յԵրուսաղէմ։* ₁₃ *Որպէս եւ գրեալ է յաւրէնսն Մովսէսի*[32]. |*Ա.9ա*| *այն ամենայն*[33] *չարիք եկին ի վերայ մեր, եւ ոչ աղաչեցաք զերես*[34] *Տեառն Աստուծոյ մերոյ՝ դառնալ յանիրաւութեանց հարց*[35] *մերոց*[36]. *եւ խելամուտ լինել ամենայն*[37] *ճշմարտութեան քում։* ₁₄ *Եւ զարթեաւ Տէր Աստուած*[38] *ի վերայ չարեացն*[39] |*Բ.1բ*| *մերոց եւ ած զնոսա ի վերայ*[40] *մեր, զի արդար է*[41] *Տէր*

---

[1] Հմմտ. Սղմ. ՁԳ. 1. Որչափ սիրելի են յարկք քո Տէր զաւրութեանց

[2] *Ս > Տէր մեր Յիսուս ասէ*

[3] *Ս իմ զայսոսիկ*

[4] *Ս զսոսա*

[5] *Ս նմանեսցէ*

[6] *Ս զտուն*

[7] *Ս ~ իջին անձրեւք, եւ խաղացին գետք, շնչեցին հողմք, եւ*

[8] *Ս քանզի*

[9] *Ս նմանեսցէ*

[10] *Ս զտուն*

[11] *Ս յարեան] խաղացին*

[12] *Ս էր] եղեւ*

[13] *Ս > զնոսա*

[14] *Ս + նոցա*

[15] *Ս մեծդ*

[16] *Ս անիրաւեցաք եւ*

[17] *Ս քոց + եւ յիրաւանց քոց*

[18] *Ս մարգարէիցն*

[19] *Ս > եւ*

[20] *Ս որք*

[21] *Ս թագաւորս*

[22] *Բ* սկսում է այստեղից՝ *[բնակ]իչս*

[23] *Բ.1ա*՝ ստ. լս. *«հիմն»*

---

[1] *ԲՍ > բնակչաց*

[2] *Ս իսրայէլի*

[3] *Ս երկրի*

[4] *Ս զնոսա անդր*

[5] *Ա հնազանդեցան*

[6] *Ա > եւ թագաւորաց մերոց*

[7] *Ս հարցն*

[8] *Բ որ*

[9] *Ա ողորմութիւնք] քաւութիւնք*

[10] *Բ ամպստամբեցաք*

[11] *Բ > ձայնի*

[12] *Բ յիրաւունս] յաւրէնս*

[13] *Ս ետ*

[14] *Ա ծառաից*

[15] *Բ > եւ*

[16] *Ս իսրայէլ*

[17] *Ա երուսաղէմ էանց] իսրայէղ անցին*

[18] *Բ ընդ աւրինաւք*

[19] *Բ > քովք, Ս քովք + եւ խոտորեցան զի մի լուիցեն ձայնի քում*

[20] *Ս եկին*

[21] *Բ անէծքն, Ս անէծն*

[22] *Բ երդումնն*

[23] *Ս երդումն գրեալ, Բ որ գրեալ էր*

[24] *Բ յաւրէնսն*

[25] *Բ մովսէսի, Ս մովսիսի*

[26] *Բ տեառն] քո, Ս քո տէր*

[27] *Բ գրանն, Ս գրանս*

[28] *Բ վերա*

[29] *Բ դատէնն, Ս դատէին*

[30] *Ա ած*

[31] *Բ վերա*

[32] *Ս մովսիսի, Բ > մովսեսի*

[33] *Բ > ամենայն*

[34] *Ս զերեսս*

[35] *Ս հարցն*

[36] *Բ > դառնալ յանիրաւութեանց հարց մերոց*

[37] *Ա > ամենայն*

[38] *Ս աստուած մեր*

[39] *Բ վերա չարեաց*

[40] *Ա վերա*

[41] *Ա ե] է*

Աստուած մեր[1] ի վերայ ամենայն գործոց իւրոց[2], զոր արար ընդ մեզ, զի[3] ոչ լուաք ձայնի նորա։ 15 Եւ արդ, Տէ՛ր Աստուած մեր, որ հաներ զժողովուրդ քո յերկրէն Եգիպտացւոց[4] հզաւր ձեռամբ, եւ արարեր քեզ անուն իբրեւ[5] յաւուրս[6] յայսմ[իկ մեղաք եւ[7] անաւրինեցաք։ 16 Տէ՛ր, ամենայն ողորմութեամբ քով դարձցի սրտմտութիւն քո, եւ բարձցի բար]կութիւն[8] քո ի քաղաքէ քումմէ յԵրուսաղէմէ[9], եւ ի լեռնէ սրբոյ քումմէ[10], զի մեղաք[11], եւ առ անաւրէնութեանց[12] հարց[13] մերոց՝ Երուսաղէմ եւ ամենայն ժողովուրդ քո եղեւ ի նախատինս ամենեցուն[14] որ շուրջ զմեւք[15] են[16]։ 17 Եւ արդ, լո՛ւր, Տէ՛ր[17], աղաւթից ծառայի քոյ[18] եւ խնդրուածոց[19] մերոց[20] եւ երեւեսցո զերեսս քո[21] ի սրբութիւն[22] որ աւարեցաւ[23]. 18 Խոնարհեցո[24] Աստուած զունկն[25] քո եւ լուր ինձ. բաց զաչս քո եւ տես զապականութիւնս[26] մեր. |Ա.9բ| եւ զքաղաքին[27] քո յորոյ վերայ[28] կոչեցեալ է անուն քո[29], զի ոչ առ արդարութեանց[30] մերոց արկանեմք զգութս մեր[31] առաջի քո, այլ[32] վասն բազում գթութեան քոյ[33], Տէ՛ր[34]։ 19 Լո՛ւր, Տէ՛ր, քաւեա՛, Տէ՛ր[35], անսա՛, Տէ՛ր, եւ[36] մի յամեր վասն քո, Աստուած իմ. զի անուն քո կոչեցեալ է ի վերայ[37] մեր, եւ քո են փառք յաւիտեանս. ամէն[38]»։[39]

---

[1] Բ > մեր
[2] Բ մերոց] իւրոց
[3] ԲՄ եւ] զի
[4] Բ եգիպտացւոց
[5] ԲՄ որպէս] իբրեւ
[6] Մ յաւուր
[7] Բ > եւ
[8] Ա > իկ մեղաք… եւ բարձցի բար (///), Բ դարձիր տէր ի սրտմտութենէս քումմէ եւ զբարկութիւն] տէր ամենայն… բարկութիւն
[9] Բ երուսաղեմէ
[10] Մ քոյ] քումմէ
[11] Բ մեղաք քեզ
[12] Բ անաւրէնութեան մերո եւ, Մ անաւրէնութեան մերում եւ
[13] Մ հարցն
[14] Բ > ամենեցուն
[15] Մ զմեաւք
[16] Բ ~ են զմեւք
[17] Մ տէր աստուած մեր
[18] Բ ծառայիս գո
[19] Մ խնդրուածոց
[20] Մ > մերոց
[21] Մ քո + վասն քո
[22] Բ սրբութիւնս քո, Մ սրբութիւնն
[23] Մ աւերեցաւ
[24] Բ խոնարհեցոյ
[25] Մ աստուած իմ զունկն, Բ զունկն
[26] Մ զապականութիւն
[27] Բ զքաղաքի
[28] Բ վերա
[29] Մ քո սուրբ
[30] Բ արդարութեան ինչ
[31] Բ զգութ] զգութս մեր
[32] Ա. արդ] այլ
[33] Բ ողորմութեան քո] գթութեան քոյ
[34] Բ > տէր
[35] Ա. > քաղաքին քո… քաւեա՛, տէ՛ր (///)
[36] Բ > եւ
[37] Մ ի վերայ քաղաքին քո
[38] Բ յաւիտ] յաւիտեանս ամէն, Մ > մեր եւ քո են փառք յաւիտեանս. ամէն
[39] Բ.վ.Մ՝ «Այս եւ յաջորդ կանոններուն մէջ չկան ընթերցուածոց խմբումներ, որոնցմով կը ճոխանան ԺԲ. եւ ԺԳ. դարու մաշտոցը. այս իսկ հնութեան նշան մը» (Վենետիկի ցուցակ, Գ., էջ 7)։

Բ.[1] [Բ.[2]] Բ 2ա ԿԱՆՈՆ ԵԿԵՂԵՑԻ[3] ԱՒՐՀՆԵԼՈՅ[4]

Իսկ ի[5] նաւակատիս եկեղեցւոյ յերեկորեա[6] հսկումն լինի միանգամայն միաբան[7] ուխտին, մինչեւ ցառաւաւտն[8], ի նմին եկեղեցւոջն[9]։ Եւ ապա ի յերրորդ[10] ժամուն ժողովէ եպիսկոպոսն զբազմութիւն ուխտին, եւ կան ի մէջ եկեղեցւոջն միաբան ամենեքեան[11], եւ այս կանոն կատարի. սաղմոս ԻԵ.[12] [Տ]. կցուրդ[13]. Տէ՛ր, սիրեցի զվայելչութիւն տան քո եւ զտեղի յար[կի փառաց քոց][14]։

14. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱԿԱՑ

[Թ. 1-11]. «Իմաստութիւն շինեաց իւր տուն եւ կանգնեաց սիւնս եւթն։ 2 Եզեն[15] զենլիս[16] իւր եւ խառնեաց ի խառնելիս[17] զգինի իւր, եւ պատրաստեաց զսեղան իւր։ 3 Եւ[18] առաքեաց զծառայս իւր՝ կոչել բարձր քարոզութեամբ ի խառնելիս իւր, 4 եւ ասէ. Որ ոք իցէ անզգամ[19], եկեսցէ[20] առ իս. եւ ցպակասամիտսն ասէ. 5 Եկա՛յք կերա՛յք[21] ի հացէ իմմէ, եւ արբէ՛ք զգինի իմ, զոր խառնեցի ձեզ։ 6 Թողէ՛ք զանզգամութիւն[22] եւ կեցջի՛ք. խնդրեցէ՛ք[23] զիմաստութիւն[24] զի ապրեսջիք, եւ[25] ուղղեցէք[26] գիտութեամբն[27] զհանճար[28]։ 7 Որ խրատէ զչարս՝ առցէ անձին իւրում անարգանս. |Ա.10ա| եւ որ յանդիմանէ զամպարիշտս՝ արատեա[29] զանձն իւր[30]։ 8 Մի՛ յանդիմաներ զչարս, զի մի՛ ատեսցեն

---

[1] Ա.10ա, 21ա, 24ա, 27ա, 28ա ստ. լս. «եկեղեցի աւրհնել», 12ա, 13ա, 14ա, 15ա, 19ա, 20ա, 22ա, 23ա, 25ա, 26ա՝ «.բ. եկեղեցի աւրհնել»
[2] Բ.2ա, 6ա, 8ա, 9ա, 10ա, 11ա, 12ա, 13ա, 15ա, 16ա, 17ա, 19ա, 20ա, 21ա, 22ա՝ ստ. լս. «եկեղեցի», 3ա՝ «եկեղցի», 14ա՝ «եկեղեցի աւրհն.», 18ա՝ «եկեղեցի աւր.»
[3] Բ եղեցի] եկեղեցի
[4] Ա > կանոն եկեղեցի աւրհնելոյ (10ա, 12ա, 13ա, 14ա, 15ա՝ ստ լս. «.բ. եկեղեցի աւրհնել»)
[5] Բ > ի
[6] Ա եկեղեցո յերեկորեա, Բ > յերեկորեա
[7] Ա > միաբան
[8] Յ յառաւաւտն
[9] Ա տեղոջ] եկեղեցւոջն
[10] Ա .գ.] ի յերրորդ
[11] Ա եկեղեցոյն ամենեքեան միաբան (Յ եկեղեցոյ)
[12] Ա .իգ.] .իե.
[13] Ա > կցուրդ
[14] Ա զվայելչու] զվայելչութիւն… զտեղի յար

[15] ԱՄ զեն
[16] Մ զզենլիս
[17] Բ զխառնելիս] ի խառնելիս
[18] Ա > եւ պատրաստեաց զսեղան իւր։ եւ
[19] Ա իցե անզգամ
[20] Բ եկիցէ
[21] Ա կերեք
[22] Ա զանզգամութիւն
[23] Ա խնդրեցեք
[24] Ա զիաւունս] զիմաստութիւն
[25] Ա > եւ
[26] Ա ուղղեցեք
[27] ԱՄ գիտութեամբ
[28] Մ զհանճար + եւ ուղիղ ճանապարհաւ իմացարուք զխրատ
[29] Ա զամբարիշտն ատե
[30] Մ > իւր

Եւ քարոզէ սարկաւագն[3]. *Խնդրեսցուք*[4] *հաւատով եւ միաբանութեամբ.*

Եպիսկոպոսն ասէ[5] զաղաւթս Դանիելի. *Տէ՛ր Աստուած, մեծ եւ սքանչ[ել*[6]*· Դան· Թ· 4]*. Ի թիկանցն գտանես՝ ի Հիմնարկէքն[7]:

Եւ[8] յետ այսորիկ դնեն զքար սրբոյ սեղանոյն[9] արտաքոյ դրանն եկեղեցւոյն[10]. Եւ զհանդերձսն սպասաւորութեան[11] ի վերայ[12] փայտեղէն սեղանոյն[13], կից առ միմեանս[14], եւ ամենեքեան արտաքս ելանեն: |*Ա.11բ*| Եւ ձգեալ եպիսկոպոսն զդուռնն զկնի իւր. եւ կա առ դրանն: Եւ քահանայքն եւ ամենայն դասք կղերիկոսացն եւ բոլորովին մանկունք եկ|*Բ.4ա*|եղեցւոյն. առեալ ակումբ եւ զսեղանն ի վեր պանտաւանդանի դնելով հանդերձիւքն հանդերձ[15]: Եւ[16] եպիսկոպոսն, որում հաւատացա[17] փառաւոր ասրն[18], զսքողեցուցանէն իւր[19] պայծառ եւ սպիտակ զարդիւք սքողեւք, եւթն պարզ կարգեւքն եւ զեւթն կրկնամած նափորտիւքն[20], եւ բառակ հրաշակերտին լայնատարած երկնագոյնիւքն[21] համանգամայն[22]. պատուանդան ոտից[23], մոմեղենաւք վառելովք եւ ջահընկալ լապտերաւք[24], եւ բուրմամբ[25] խնկոց. շուրջ կալով ահիւ եւ մեծայոր դող շնորհիւ. եւ[26] հոգեւորականք[27] սիրով եւ յորդառուխ ձայնիւ, եւ քաղցրալուր աւրհնութեամբ. ասեն սաղմոս Գ· [2] *Տ[էր զի բազում եղեն նեղիչք իմ]*[28], առաջին սաղմոս ՃԺԹ· [1][29]. *Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի*[1]. կցուրդ. *Լո՛ւր մեզ, Տէ՛ր.* երկրորդ սաղմոս ՃԻ· [1][2]. *Համբարձի զաչս իմ ի լերինս*[3]. կցուրդ. *Աւգնեա մեզ Տէր.* երրորդ սաղմոս. ՃԻԱ·[4] [1] *Ուրախ եղէ ես որք ասէին ցիս ի տուն Տեառն*[5]. կցուրդ. Աղեղուիա կրկին[6]. Եւ[7] նախ եպիսկոպոսն սկսանի ձայնիւ, եւ ըստ միում միում[8] սաղմոսին փառս տան նովին կցրդիւն[9]. Եւ առ մի մի սաղմոսն[10] քարոզէ սարկաւագն. *Խնդրեսցուք հաւատով եւ միաբանութեամբ*[11]. Եւ[12] եպիսկոպոսն եւ քահանայքն[13] աւրհնութիւն եւ փառս հանեն[14]. Եւ տեառնագրեն[15] զսեղանն եւ զհանդերձսն[16]. Յետ այսորիկ ասեն ի թիւ[17] զՃԺԷ·[18] [1] սաղմոսն. *Խոստովան*[19] *եղերուք Տեառն, զի բարի է.* եւ ի կատարածն սաղմոսին քարոզ նոյն եւ աւրհնութիւն եւ փառս. ապա ասեն զնոյն սաղմոսն՝ [ՃԺԷ· 1]· *Խոստովան եղերուք*[20]. |*Ա.12ա*|[21]* կցուրդ. *Բա՛ց մեզ, Տէ՛ր*[22], *զդուռն ողորմութեան*[23]. եւ ասեն զսաղմոսն յայն վայրի[24]. *Բացէ՛ք ինձ զդրունս ար-*

---

[1] Ա > հաւր

[2] Ա իմոց + եւ ես եւ հայր իմ մի եմք

[3] Ա սարկաւագն քարոզէ] եւ քարոզէ սարկաւեգն

[4] Ա խնդրեցուք

[5] Բ եւ ասէ] եպիսկոպոսն ասէ

[6] Ա սքանչելա[գործ]

[7] Ա ~ գտանես ի թիկանց ի հիմնարկեսն

[8] Ա > եւ

[9] Բ սեղանւոյն

[10] Ա եկեղեցոյն առ դրանն] դրանն եկեղեցւոյն

[11] Ա զհանդերձ սպասուն] զհանդերձն սպասաւորութեան

[12] Ա վերա

[13] Բ սեղանւոյ

[14] Ա կից նմին] կից առ միմեանս

[15] Ա ///զձեռսն հաստատուն հաւատով] եւ ձգեալ եպիսկոպոսն... հանդերձ, Յ Դ. Մաշտոցէն լրացուցինք. [եւ ձգէ եպիսկոպոսն զդուռն զկնի իւր եւ կայ առ դրանն. եւ քահանայքն եւ ամենայն դասք կղերիկոսացն եւ բոլորովին մանկունք եկեղեցւոյ ակումբ կացեալ: եւ զնեն զսեղանն ի վերայ պատուանդ(ան)ին եւ զհանդերձսն. եւ քահանայիցն համբառնալով զձեռսն հաստատուն հաւատով]

[16] Ա իսկ] եւ

[17] Ա հանդիպեցա] հաւատացա

[18] Ա փառաւորութեան ասուրն

[19] Բ իւր հանդ

[20] Ա սքողեն իւր սպիտակազարդ սքողիւքն եւթնապարզ կարգաւք եւ կրկնապարզ նափորտամբն] զսքողեցուցանէն... նափորտիւքն

[21] Ա > լայնատարած երկնագոյնիւքն

[22] Ա միանգամայն] համանգամայն

[23] Ա ոտիցն

[24] Ա > եւ ջահընկալ լապտերաւք

[25] Ա բուրմամբք

[26] Ա > եւ

[27] Ա հոգեկան

[28] Ա > տ[էր զի բազում եղեն նեղիչք իմ], Յ > .գ. տ.

[29] Բ սաղմոսն] սաղմոս .ճժթ., Սղմ. ՃԺԹ· 1 Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի. Հմմտ. Սղմ. ՃԻ· 7 Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի· ՃԺԷ· 5 Ի նեղութեան կարդացի առ Տէր

[1] Բ > իմում ես առ տէր կարդացի

[2] Բ կրկին .բ. սաղմոսն. ճն.] երկրորդ սաղմոս .ճի.

[3] Բ > զաչս իմ ի լերինս

[4] Բ կրկին .գ. սաղմոսն ճնա] երրորդ սաղմոս .ճիա.

[5] Բ աս] ասէին ցիս ի տուն տեառն. Ս տեառն երթիցուք մեք

[6] Ա ալելուի] աղեղուիա. կրկին

[7] Բ > եւ

[8] Բ սրբոյ միոյ] միում միում

[9] Բ կարգովն] կցրդիւն

[10] Բ միմեանս սաղմոսին] մի մի սաղմոսն

[11] Ա խնդրեցուք հաւատով եւ միաբանու.

[12] Ա > եւ

[13] Բ > եւ քահանայքն

[14] Բ հանէ

[15] Բ տեառնագրէ

[16] Բ զհանդերձն

[17] Ա > ի թիւ

[18] Բ զ.ճժե.

[19] Ա խաւստովան, Յ խոստովան

[20] Բ > եւ ի կատարածն սաղմոսին... խոստովան եղերուք

[21] Ա |12ա| կցուրդ. բա՛ց մեզ տէր զդուռն ողոր. եւ ասեն զսաղմոսն յայն վայրի. բացէ՛ք ինձ զդրունս արդարութեան. զայս երիցս ասելով տեառնագրեն զդուռն. եւ բացեալ եպիսկոպոսն ասելով զսաղմոսն այս. դուռն տեառն է, եւ արդարք մտ[անեն]. եւ մտեալ եպիսկոպոսն, բառնալով քահանայիցն զսեղանն եւ զհանդերձսն իջուցանեն ի միջոյ եկեղեցոյն. եւ փոխեն զսաղմոսն. կցուրդ. ալելու. եւ կատարեալ քարոզեն զնոյն եւ տեառնագրեն. եւ ապա ասեն զնոյն երիս սաղմոսն որ առ դրան, նովին կցրդիւն. եւ ըստ միոյ միոյ սաղմոսին քարոզ նոյն. եւ տեառնագրեն եւ ապա ասեն ի թիւ գ.ձգ. սաղմոսն. իբրեւ սիրելի են յարկք. եւ ի կատարմանն քարոզ նոյն եւ կարգ նոյն. դարձեալ ասեն զնոյն սաղմոս. իբրեւ սիրելի են յարկք քո. կցուրդ. Հոգի իմ եւ մարմին իմ ցնծա ///(7 տող) ինս կատարին մինչեւ ցայն վայր: յետ այսորիկ վերացուցանեն եպիսկոպոսն զսեղանն, եւ քահանայքն ընդ նմա. եւ ասէ եպիսկոպոսն .գ. անգամ. սեղան քո, տէ՛ր զաւրութեանց, թագաւո՛ր իմ եւ աստուա՛ծ իմ. ժողովուրդն ասեն. ալելուիա. դարձեալ ասեն. սեղան քո, տէ՛ր զաւրութեան. եւ երիցս ասելով հաստատեն զսեղանն, ապա ասեն ի թիւ գ.իբ. սաղմոսն. տէր հովեսցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պակ[ասեսցէ]. եւքարոզեն զնոյն. եւ եպիսկոպոսն ասէ զաղաւթս զայս] կցուրդ. բա՛ց մեզ, տէ՛ր ... եպիսկոպոսն ասէ զաղաւթս զայս

[22] Բ > տէր

[23] Ա ողոր

[24] Բ եւ զայս երիցս ասելով, տեառնագրէ զդուռնն] եւ ասեն զսաղմոսն յայն

դարութեան[1]. [*ՃԺԷ· 19*]. զայս երիցս ասելով, տեառնագրեն զդուռն[2]. Եւ մտանեն ի ներքս, ասելով[3] [*ՃԺԷ· 20*]. *Այս դուռն Տեառն է, եւ արդարք մտ[անեն]*[4]: Եւ մտեալ եպիսկոպոսն[5], բառնալով քահանայիցն[6] զսեղանն եւ զհանդերձսն[7], իջուցանեն ի մէջ եկեղեցւոյն[8], եւ փոխեն զսաղմոսն. կցուրդ[9]. Ալէլուիա[10]: Եւ ի կատարմանն քարոզէ[11] զնոյն. *Խնդրեսցո[ւք]*. եւ աւրհնութիւնն եւ փառս հանեն[12]. եւ տեառնագրէ եպիսկոպոսն[13], եւ ապա ասեն զայն |*Բ.4բ*| Գ.[14] սաղմոսն, զոր ասացին ի դրանն[15], նովին կցրդովն[16]: Եւ ըստ միում միում սաղմոսի քարոզէ զնոյն. եւ տեառնագրէ զսեղանն[17]: Եւ ապա ասեն ի թիւ զՁԳ·[18] [1] սաղմոսն *Իբրեւ սիրելի են յարկք քո, Տէ՛ր.* կցուրդ. *Սիրտ*[19] *իմ եւ մարմին իմ ցնծ[ասցեն*. ՁԳ· 2]: Եւ բարձեալ քահանայիցն զսեղանն եւ զհանդերձն, դիցեն ի վերայ բեմին: Եւ կատարեն զսաղմոսն, զնոյն արասցեն եւ դարձեալ ասեն զնոյն սաղմոսն նովին կարգովն[20]: Զամենայն կարգաւորութիւն կատարեն ցայս վայր. եւ[21] յետ այսորիկ վերացուցանել եպիսկոպոսն զսեղանն, եւ քահանայքն ընդ նմին[22]: Եւ ասէ եպիսկոպոսն Գ. անգամ[23]. *Սեղան քո Տէր դաւրութեանց, թագաւոր իմ է Աստուած*[24] [*ՁԳ· 4*]. եւ[25] ժողովուրդն ասեն. *Աղելուիա*[26]: Դարձեալ ասեն զնոյն[27].

վայրի

[1] *Բ > արդարութեան.*

[2] *Բ արք[այութեան]] զայս երիցս ասելով տեառնագրեն զդուռն*

[3] *Ա եւ բացեալ եպիսկոպոսն ասելով զսաղմոսն] եւ մտանեն ի ներքս, ասելով*

[4] *Բ > եւ արդարք մտ[անեն]*

[5] *Բ > մտեալ եպիսկոպոսն*

[6] *Բ բառնան քահանայքն*

[7] *Ա զհանդերձն եւ*

[8] *Ա միջոց եկեղեցւոյն*

[9] *Ց կցուրդ*

[10] *Ա ալելու*

[11] *Ա կատարեալ քարոզեն] ի կատարմանն քարոզէ*

[12] *Ա > խնդրեսցուք... փառս հանեն*

[13] *Ա տեառնագրեն] տեառնագրէ եպիսկոպոսն*

[14] *Ա զնոյն երիս] զայն .գ.*

[15] *Ա որ առ դրան] զոր ասացին ի դրանն*

[16] *Ա կցրդիւն*

[17] *Ա միոյ միոյ սաղմոսին քարոզ նոյն. եւ տեառնագրեն (> զսեղանն)*

[18] *Բ զ.ձգ.] զ.ձգ.*

[19] *Ա եւ ի կատարմանն քարոզ նոյն եւ կարգ նոյն. դարձեալ ասեն զնոյն սաղմոս. Իբրեւ սիրելի են յարկք քո. կցուրդ. Հոգի] քո, տէր. կցուցդ. սիրտ*

[20] *Ա ցնծա* ///(7 տող)] *ցնծասցեն. եւ բարձեալ... նովին կարգովն, Ց Դ.* Մաշտոցէն լրացուցինք. [*եւ քարոզ նոյն եւ աւրհնութիւն, եւ բառնան քահանայքն եւ եղանեն ի բեմն զսեղանն եւ զհանդերձսն եւ դնեն ի վերայ բեմին ասելով զնոյն սաղմոս նովին կցրդիւ. եւ զնոյն քարոզ եւ աւրհնութիւն եւ փառք: Եւ դարձեալ կրկնեն զսաղմոսն եւ զկցուրդն եւ զքարոզն*]

[21] *Ա այս ամենայն կարգաւորութիւնս կատարի մինչեւ ցայս վայր] զամենայն... վայր եւ*

[22] *Ա նմա*

[23] *Բ > .գ. անգամ*

[24] *Ա եւ աստուած իմ] է աստուած*

[25] *Ա > եւ*

[26] *Ա ալելուիա*

[27] *Ա > զնոյն*

Սեղան քո Տէր դաւրութեան[1]. եւ Գ. անգամ[2] ասելով՝ հաստատեն զսեղանն: Եւ[3] ապա ասեն զԻԲ· [1] սաղմոսն *Տէր հովուեսցէ զիս*[4]. եւ քարոզէ զնոյն:

Եւ եպիսկոպոսն ասէ զաղաւթս զայս.

Գ. *Տէ՛ր Աստուած ամենակալ, որ* |*Ա.12բ*| *հաստատեցեր զերկիր՝ հաստատութեամբ իւրով, եւ արարեր միայն զաւրութիւնս բազումս*[5], *դու, Տէ՛ր ամենայն երկրի*[6], *զաւրացուցեր զեկեղեցի քո սուրբ եւ հրամայեցեր*[7] *ի սմա սեղան հաստատել*[8] *եւ*[9] *մատուցանել պատարագս եւ ողջակէզս բանաւորս, որ առանց արեան մատչին*[10] *յանուն քո սուրբ*[11] *ի կենդանութիւն ազգի մարդկան, նոյնպէս եւ այժմ, Տէ՛ր, առաքեա՛յ զՀոգիդ քո Սուրբ՝ զսրբարար*[12], *եւ սրբեա*[13] *զսեղանս զայս ի*[14] *յոյս հաւատացելոց, ի կենդանութիւն ամենայն* |*Բ.5ա*| *մարդկան. եւ որք*[15] *կան առաջի մեծի փառաց անուան քո*[16] *ի նորոգութիւն*[17] *հոգւոց եւ ի հաճութիւն կամաց քոց, որ միայնդ ես ողորմած Աստուած*[18], *երկայնամիտ եւ բազումողորմ, վասն զի աւրհնեալ է անունդ*[19] *Հաւր եւ Որդւոյ*[20] *եւ Հոգւոյդ Սրբոյ*[21] *այժմ եւ միշտ եւ յաւիտեան*[22]:

Եւ ապա[23] մատուցեալ սարկաւագունքն[24], լուանան զսեղանն[25] նախ[26] ջրով եւ ապա գինեաւ[27]. սաղմոսելով ԻԵ·[28] [1]· *Դատ արա՛ ինձ, Տէ՛ր, զի ես յանբծութեան*[29]: Եւ յետ այսորիկ ջնջեն ջնջոցովք սրբովք[30]: Եւ ապա առեալ եպիսկոպոսին[31] զեւղ[32] աւծութեան, դիցէ[1] ի վերայ սրբոյ[2] սեղանոյն[3] եւ ասէ[4] ողբաձայն զսաղմոսն[5] ԻԲ· [5]· կցուրդ[6]. *Աւծեր եւղով*[7] *զգլուխս իմ, բաժակ*[8]: |*Ա.13ա*| Եւ առեալ նախ աւծցէ[9] զգլուխ սեղանոյն[10] եւ[11] ապա զանկիւնսն[12] չորեսին, եւ զարեւելեան[13] եւ զհարաւակողմնն ճակատոյն[14] սեղանոյն, եւ զարեւմտիցն, եւ զհիւսիւսին, եւ[15] ապա զսիւնսն, ասելով.

---

[1] *Բ զաւր.*

[2] *Ա երիցս] .գ. անգամ*

[3] *Ա > եւ*

[4] *Ա տէր հովեսցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պակ[ասեսցէ].] հովուեսցէ զիս*

[5] *Ա > ստատեցեր զերկիր... զաւրա*/// (5 տող), *Ց* լրացուցինք Դ. Մաշտոցէն. [*տատեցեր զերկիրս հաստատութեամբ իւրով, եւ արարեր միայն զաւրութիւնս բազումս*]

[6] *Ա յամենայն ազգաց] ամենայն երկրի*

[7] *Ա հրամաեցեր, Բ հրամեցեր*

[8] *Ա ~ հաստատել սեղան*

[9] *Ա > եւ*

[10] *Բ մատչի*

[11] *Ա > սուրբ*

[12] *Ա սրբարար] սուրբ՝ զսրբարար*

[13] *Ա սրբեայ*

[14] *Բ > ի*

[15] *Ա ամենեցուն որ] ամենայն մարդկան եւ որք*

[16] *Ա քոց] անուան քո*

[17] *Ա նորոգումն*

[18] *Ա ~ աստուած ողորմած*

[19] *Ա անուն*

[20] *Ա որդոյ*

[21] *Ա սուրբ հոգւոյն*

[22] *Ա յաւիտեանս յաւիտենից*

[23] *Բ > ապա*

[24] *Ա սարկաւագունք*

[25] *Ա > զսեղանն*

[26] *Բ > նախ*

[27] *Ա գինով*

[28] *Ա ասելով զ.իե. սաղմոսն] սաղմոսելով .իե.*

[29] *Ա յամբծութեան իմո, Ս յանբծութեան իմում գնացի*

[30] *Ա սուրբ ջնջոցաւք] ջնջոցովք սրբովք*

[31] *Ա եպիսկոպոսն*

[32] *Ա զսուրբ միւռոնն] զեւղ*

Աւրհնե[ս]ցի, աւծցի եւ սրբե[ս]ցի սեղանս[16] *այս յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգ[ւոյն]*[17]. եւ ժողովուրդն ասեն. *Ամէն:*

Ապա զարեւելից կողմն խորանին, յետոյ սրբոյ սեղանոյն, ապա զհարաւային եւ զճակատ խորանին, ասելով.

Աւրհնե[ս]ցի, աւծցի եւ սրբե[ս]ցի խորանս այս անուն Հ[աւր][18]:

Եւ եթէ՛ խաչ լինիցի եւ եթէ՛[19] ժամահար, եւ եթէ՛[20] այլ ինչ սպաս, ասելով զիւրաքանչիւր անունն[21].

Եւ[22] ապա իջցէ յեկեղեցին՝ ի ներքոյ բեմին. եւ[23] շուրջ կալով քահանայիցն զեպիսկոպոսովն[24], եւ սարկաւագունքն քշոցովքն[25] եւ բուրվառաւքն[26] բուրելով խնկովն[27], եւ դպիրքն[28]՝ մոմեղէնաւք[29] լուցելովք առաջի[30] սպարիսպ կացեալ ի մէջ եկեղեցւոյն: Եւ եպիսկոպոսն տեառնագրէ նոյնպէս նախ հարաւակողմանն, ապա զհիւսիսայինն, ապա զարեւմտին[31], եւ յետ այնորիկ՝ զսիւնսն, ասելով զիւրաքանչիւր անունն, եւ[32] ապա զդրանդն[33] |*Բ.5բ*| բարաւորան հանդերձ[34], եւ զսեմնն[35] եւ

---

[1] *Ա դնէ*

[2] *Ա սուրբ*

[3] *Բ սեղանւոյն*

[4] *Ա ասելով] եւ ասէ*

[5] *Ա զսաղմոսն ողբաձայն] ողբաձայն զսաղմոսն*

[6] *Բ կցուրդ*

[7] *Ա իւղով*

[8] *Բ զգլուխ] զգլուխս իմ, բաժակ, Ս բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս*

[9] *Ա եւ աւծցեն նախ] եւ առեալ նախ աւծցէ*

[10] *Բ սեղանւոյն*

[11] *Ա > եւ*

[12] *Ա զանգիւնսն*

[13] *Ա > եւ զարեւելեան*

[14] *Ա զհարաւակողմն ճակատ*

[15] *Ա զհիւսիսին (> եւ)*

[16] *Բ խորանս] սեղանս*

[17] *Ա որդոյ եւ սրբոյ հոգոյն*

[18] *Բ եւ զաւազանն] եւ ժողովուրդն ասեն. ամէն... խորանս այս անուն Հ.*

[19] *Ա լինի կամ] լինիցի եւ եթէ*

[20] *Ա կամ] եթէ*

[21] *Բ անունն*

[22] *Ա > եւ*

[23] *Ա ի խորանէն ներքո բեմբին] յեկեղեցին ի ներքոյ բեմին եւ*

[24] *Ա քահանայիցն զեպիսկոպոսաւն*

[25] *Ա քշոցիւք*

[26] *Ա բուրվառաւք*

[27] *Ա > բուրելով խնկոցն*

[28] *Ա դպիրքն առաջի (Ց առաջին)*

[29] *Ա մոմեղինաւք*

[30] *Ա > լուցելովք առաջի*

[31] *Ա > կացեալ ի մէջ եկեղեցւոյն... ապա զհիւսիսայինն, ապա զարեւմտին (///),* Ց՝ լրացուցինք Դ. Մաշտոցէն. [*կացեալ ի մէջ եկեղեցւոյն, եւ եպիսկոպոսն տեառնագրէ նոյնպէս, նախ զհարաւային կողմն, ապա զհիւսիսայինն, ապա զարեւմտիցն*]

[32] *Ա > եւ*

[33] *Ա զդրուանդսն*

[34] *Ա բարաւոր խորանին] բարաւորան հանդերձ*

[35] *Ա զսեմսն*

զդուռն. եւ[1] զկոզակսն եւ զկամարսն. Եւ եթէ սարկաւագատունն[2] լինի՝ եւ[3] անդ մտցէ. եւ եթէ՛ սեղան լինի. եթէ՛[4] սատագան եւ եթէ՛ այլ[5] ինչ սպաս՝ այնպէս[6] արասցեն: Եւ երթան մանկունք ուխտին առաջի[7] մոմեղինաւք վառելովք[8]. եւ[9] զկնի նոցա[10]՝ սարկաւագունքն խնկաւք[11] բուրելովք, եւ ապա եպիսկոպոսն եւ միաբանակիցն, եւ որ զգաւազանն ունի, զկնի քահանայքն եւ այլ[12] ժողովուրդն, զտեղի խաչանշան[13] միոնին համբուրեսցեն: Եւ եպիսկոպոսն |*Ա.13բ*| յիշեսցէ յորոյ[14] անուն կանգնեցաւ եկեղեցին, ասելով այսպէս[15].

Անուանակոչութեամբ. այս[16] *անուն սրբոյ*[17], *աւրհնեսցի*[18], *աւծցի եւ սրբեսցի*[19] *տաճարս այս*[20] *յանուն Հաւր եւ Որդւոյ*[21] *եւ Սրբոյ Հոգւոյն*[22]:

Եւ ժողովուրդն ասեն[23]. *Ամէն: Տան*[24] *քում վայել*[25] *է սրբութիւն, եւ Տէր ընդ երկայն աւ[ուրս]:*

Եւ մատուցեալ սարկաւագունքն, լուանան[5] զսեղանն եւ ասեն սաղմոս[6] ԻԵ. [1]. *Դատ արա՛յ[7] ինձ, Տէր, զի ես յամբծութեան[8]*. կցուրդ. Աղեղու[9]: Եւ լուացեն նախ[10] ջրով եւ ապա գինեաւ[11]: |*Ա.37բ*| Եւ ասէ եպիսկոպոսն [Սղմ. ՁԳ. 4]. *Սեղան քո, Տէ՛ր զաւրութեանց[12], Թագաւո՛ր իմ եւ Աստուած իմ[13]*. Աղեղուիա[14]: Զայս երիցս ասելով, հաստատեն զսեղանն, եւ[15] յետ այսորիկ ասեն ողբաձայն սաղմոս[16] ԻԲ. [5]. *Աւծեր եւղով[17] զգլուխ[18] իմ*: Եւ դնէ[19] զմիռոնն ի վերայ[20] գլխոյ[21] սեղանոյն՝ |*Բ.29ա*| մինչեւ ասեն զսաղմոսն, եւ[22] ապա տեառնագրէ զսեղանն ըստ առաջին աւրինակին եւ[23] զբոլոր եկեղեցին, նոյնպէս[24] եւ զաւազանն եւ զանկիւնն[25], եւ եթե խաչ լինի եւ եթե ժամահար եւ եթե այլ ինչ սպաս[26], ասելով զիւրաքանչիւր անունն[27]. *Աւրհնե[ս]ցի, աւծցի եւ սրբե[ս]ցի յանուն Հաւր եւ Որդւոյ[28] եւ Հոգւոյն[29] Սրբոյ[30]*: Եւ[31] ժողովուրդն ասեն. *Ամեն: Տան քում վայել է սրբութիւն*: Եւ զամենայն ինչ նոյնպէս տեառնագրելով[32], որպէս լիով պայմանաւորեալ կարգեցաք յառաջնումն[33]. եւ մտեալ յեկեղեցին եւ ասեն[34] զփոքր Հարցն, գործովքն հանդերձ[1], եւ զգեցուցանել[2] զսեղանն եւ[3] քարոզել[4]. *Վասն ուղղւոյ*[5]. եւ[6] եպիսկոպոսն ասէ զաղօթս Դանիելի մարգարէի[7]. *Տէր Աստուած մեծ եւ սքանչելի*[8]: Գտանես ի թիկանցդ՝ ի Հիմնարկութեանն, յետին կարգին աղօթք[9], եւ[10] ապա ի ժամ մտանեն, եւ այս կանոն կատարի՝ սաղմոս ԻԹ.[11] [12]. կցուրդ[12]. *Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն:*

---

[1] *Ա տուն*

[2] *Ա փառքն զոր աւրհնեցին*

[3] *Ա եղեւ հրձիկ*

[4] *Բ վերա*

[5] *Ա լուասցեն*

[6] *Ա ասելով զսաղմոսն] եւ ասեն սաղմոս*

[7] *Բ արայ*

[8] *Բ > զի ես յամբծութեան*

[9] *Ա ալելու*

[10] *Բ լուասցեն] եւ լուացեն նախ*

[11] *Ա գինով*

[12] *Բ զաւր*

[13] *Բ > թագաւոր իմ եւ աստուած իմ*

[14] *Ա ալելուիա*

[15] *Ա > եւ*

[16] *Ա ~ զսաղմոսն ողբաձայն*

[17] *Ա իւղով*

[18] *Ա զգլուխս, Յ զգլուխ*

[19] *Ա դնեն*

[20] *Բ վերա*

[21] *Ա > գլխոյ*

[22] *Ա > եւ*

[23] *Ա > եւ*

[24] *Յ սոյնպէս*

[25] *Բ > եւ զանկիւնսն*

[26] *Ա կամ այլ ինչ սպաս եւ կամ ժամահար (Յ > եւ կամ ժամահար)] եւ եթե ժամահար եւ եթե այլ ինչ սպաս*

[27] *Ա անուն*

[28] *Ա որդո*

[29] *Ա հոգոյն*

[30] *Բ > սրբոյ*

[31] *Ա > եւ*

[32] *Ա տեառնագրեսցէ*

[33] *Բ պաշտաւնաւորեցաք կարգաւորապէս զառաջինն] պայմանաւորեալ կարգեցաք յառաջնումն*

[34] *Ա սկսանին] եւ ասեն*

42. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱՅԵԱ ՄԱՐԳԱՐԷԷ[13] [ԾԷ· 15-21]. «*Այսպէս ասէ բարձրեալն, որ ի բարձունս բնակեալ է յաւիտեան, սուրբն ի մէջ սրբոց, որոյ անունն*[14] *բարձրեալ է եւ ի սուրբս հանգուցեալ, որ տայ երկայնմտութիւն տարակուսելոց, եւ կեանս այն|Ա.38ա|ոցիկ, որ մաշեալն են սրտիւք:* 16 *Եւ*[15] *ոչ յաւիտեան խնդրեցից վրէժս ի ձէնջ, եւ ոչ ցանկ*[16] *բարկացայց ձեզ. զի Հոգի յինէն ելցէ. եւ զամենե|Բ.29բ|այն շունչ ես արարի:* 17 *Վասն մեղաց առ*[17] *սակաւ մի տրտմեցուցի*[18] *զնա, հարի զնա եւ դարձուցի զերեսս իմ ի նմանէ: Տրտմեցաւ եւ*[19] *գնաց թախծեալ*[20] *առաջի իմ զճանապարհս իւր*[21]: 18 *Զճանապարհս սրտի*[22] *նորա տեսի, եւ բժշկեցի զնա, մխիթարեցի*[23] *զնա եւ ետու նմա մխիթարութիւն ճշմարտութեան*[24], *եւ սգաւորաց նորա* 19 *հաստատեցի պտուղ. խաղաղութիւն ի վերայ խաղաղութեան՝ հեռաւորաց եւ մերձաւորաց, ասէ Տէր*[25]: 20 *Այդ*[26] *անաւրէնք իբրեւ զծով*[27] *ծփեսցին*[28], *եւ հանգիստ մի՛ գտցեն. եւ կորիցէ ջուր նորայ*[29] *ի կոխումն եւ ի կաւ:* 21 *Ոչ գոյ խաղաղութիւն ամպարշտաց*[30], *ասէ Տէր»:*

43. Ի ՀՌՈՎՄԱՅԵՑՈՑ[31] ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ[1] [ԺԱ· 1-8]. «*Իսկ արդ, ասեմ. միթէ մերժեա՞ց Աստուած զժողովուրդ իւր. քաւ լիցի. քանզի եւ ես Իսրայելացի*[2] *եմ, ի զաւակէ Աբրահամու, յազգէ Բենիամենի:* 2 *Եւ*[3] *ոչ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր, զոր յառաջն ծանեաւ. թե*[4] *ոչ գիտէք յԵղիա*[5] *զինչ ասէ Գիր, որպէս ամբաստան լինի Աստուծոյ զԻսրայելէ*[6]: 3 *Տէ՛ր, զմար|Ա.38բ|գարէս քո կոտորեցին, եւ զսեղանս քո կործանեցին, ես մնացի մի|Բ.30ա|այն, եւ խնդրեն զանձն իմ:* 4 *Այդ*[7] *զինչ ասէ նմա պատասխանի. թողի ինձ*[8], *ասէ, եւթն հազար այր, որ ոչ կրկնեցին ծունր*[9] *Բահաղու:* 5 *Նոյնպէս*[10] *եւ յայսմ ժամանակի մնացորդք ըստ ընտրութեանն*[11] *շնորհացն եղեն:* 6 *Իսկ եթե շնորհաւք, ոչ եւս ի գործոց, ապա թե*[12] *ոչ շնորհքն ոչ եւս շնորհք*[13] *լինին:* 7 *Իսկ արդ, զոր խնդրէրն Իսրայել*[14] *այնմ ոչ եհաս, բայց ընտրութեանն եհաս, եւ այլք*[15] *կուրացան*[16]»:

Աղեղու[17]. սաղմոս ՁԶ.[18] [=Հ.Զ. 2.ՀՆՁ.Գ.5.ՃԽԸ.2]. *Ձայնիւ իմով ես առ Տէր կարդա[ցի]*[19]:

44. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ[20] ՄԱՏԹԷՈՍԻ [ԻԱ· 12-16]. «*Եւ մտեալ*[21] *Յիսուս ի տաճարն*[22], *եհան արտաքս*[23] *զամենեսեան*[24], *որ գնէին եւ վաճառէին ի տաճարին*[25], *եւ զսեղանս հատավաճառացն կործանեաց, եւ որք*[26] *զաղաւնիսն վաճառէին*[27], 13 *ասէ ցնոսա*[28]. *Առէ՛ք զայդ այտի*[29] *եւ մի՛ առնէք զտուն Հաւր իմոյ տուն վաճառի. զի*[30] *գրեալ է. Տուն իմ տուն աղաւթից կոչեսցի, եւ դուք արարէք զդա այրս աւազակաց:* 14 *Եւ մատեան առ նա կոյրք եւ կաղք*[31] *ի տաճա-*

---

[1] *Ա ~ հանդերձ գործովքն*
[2] *Ա ագեցուցանեն, Բ զգեցուցան*
[3] *Ա > եւ*
[4] *Ա քարոզե սարկաւագն*
[5] *Ա սուրբ տեղոյս շինութեան] ուղղւոյ*
[6] *Ա > եւ*
[7] *Բ > մարգարէի*
[8] *Ա սքանչ.*
[9] *Ա ի հիմնարկեան] ի թիկանցդ՝ ի հիմնարկութեանն, յետին կարգին աղաւթք*
[10] *Ա > եւ*
[11] *Ա .իե.] .իթ.*
[12] *Ա > կցուրդ*
[13] *Ա յեսաեա մարգարէ*
[14] *Ա անուն*
[15] *Ա > եւ*
[16] *ԱՄ ցանգ*
[17] *Ա > առ*
[18] *Բ տրտմեցի*
[19] *Մ եւ տրտմեցաւ եւ*
[20] *Ա թախանձեալ] թախծեալ*
[21] *Ա նորա] իւր*
[22] *Ա > սրտի*
[23] *Ա մխիթարեացի*
[24] *Ա ճշմարիտ*
[25] *Մ տէր + եւ ես բժշկեցից զնոսա*
[26] *ԱՄ այլ*
[27] *Ա զծովս*
[28] *Մ ծփեսցին*
[29] *Ա նոցա] նորայ*
[30] *Ա ամբարշտաց*
[31] *Ա հռոմայեցոց*

---

[1] *Բ ի հռովմայ. թղթոյն պաւղոսի*
[2] *Ա երուսաղէմացի] իսրայելացի, Մ իսրայէլացի*
[3] *Ա > եւ*
[4] *Ա եթե] թե*
[5] *Բ > յեղիաս, Մ յեղիա*
[6] *Բ > որպէս ամբաստան լինի աստուծոյ զիսրայելե, Մ իսրայէլէ*
[7] *ԱՄ այլ*
[8] *Ա թող ինձ*
[9] *Ա ծունդր*
[10] *Բ սոյնպէս*
[11] *Ա ընդրութեանն, Մ ընտրութեան*
[12] *Ա եթե*
[13] *Ա շնորք*
[14] *Մ իսրայէլ*
[15] *Մ այլքն*
[16] *Ա > իսկ արդ, զոր խնդրէրն իսրայեղ՝ այնմ ոչ եհաս, բայց ընտրութեանն եհաս, եւ այլք կուրացան*
[17] *Ա > աղեղու*
[18] *Բ > սաղմոս .ձզ.*
[19] *Ա կ.] կարդացի*
[20] *Բ > ըստ*
[21] *Մ եմուտ] մտեալ*
[22] *Ա տէր մեր յիսուս եւ մտեալ ի տաճարն] եւ մտեալ յիսուս ի տաճարն*
[23] *Բ > արտաքս*
[24] *Մ զամենեսին*
[25] *Մ վաճառէին եւ գնէին ի տաճարի անդ*
[26] *Ա որ*
[27] *Մ զաթոռս աղաւնեվաճառացն եւ] որք զաղաւնիսն վաճառէին*
[28] *Ա ցնոսայ*
[29] *Ա զայտ աստի] զայդ այտի*
[30] *Մ > առէ՛ք զայդ այտի… վաճառի, զի*
[31] *Բ ~ կաղք եւ կոյրք*

րին, եւ բժշկեաց զնոսա: 15 Իբրեւ տեսին քահանայապետքն եւ դպիրք[1] զսքանչելիսն զոր արար, եւ զմանկտին[2] |Բ.30բ| որ աղաղակէին ի տաճարին[3] եւ ասէին. Աւրհնութիւն որդւոյ Դաւթի, բարկացան 16 եւ ասեն[4]. Չլսե՞ս[5] զինչ |Ա.39ա| ասեն դոքա: Ասէ[6] ցնոսա[7]. Այո՛, չիցէ՞ ընթերցեալ ձեր, եթէ[8] ի բերանոյ մանկանց[9] տղայոց[10] ստնդիացւոց[11] կատարեցեր զաւրհնութիւն[12]»:

Եւ[13] քարոզեն[14]. Վասն սուրբ տեղոյս շինութեան, եւ[15] եպիսկոպոսն ասէ զաղաւթս Սողոմոնին[16] արքայի [Գ. Թ-գ. Ը. 15-53]. Աւրհնեալ[17] Տէր Աստուած Իսրայեղի. գտանես ի թիկանցդ՝ յեկեղեցաւրհնենն[18]: Եւ[19] ապա սկիզբն առնեն երրորդ[20] ժամու[21] եւ ասեն[22]. [Ս՜ ՃԽԷ. 12] Գովեա[23], Երուսաղէմ, զՏէր[24]. շարականն [Ս՜ ՁԳ. 4] Սեղան քո Տէր: Եւ դարձեալ[25] այս կանոն[26] կատարի սաղմոս ՃԺԷ[27] [24]. կցուրդ. Այսաւր է, զոր արար Տէր, եկ[այք][28]:

45. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱՅԵԱ[29] ՄԱՐԳԱՐԷԷ [ԾԳ. 10-14]. «Ասաց Տէր. 11 Հաշտեալ եմ ընդ քեզ, տառապեա՛լդ եւ խախտեալդ[30], մինչեւ մխիթարեսցիս. ահաւասիկ[31] պատրաստեալ եմ[32] կարկեհան զքարինս քո, եւ զհիմունս քո շափիղա[33]. 12 եւ կանգնեցից զաշտարակս քո յասպիս, եւ զդրունս քո յականց վանեաց[34]. եւ ածից շուրջ զքեւ պարիսպ ընտիր[35] ընտիր ականց[36] պատուականաց. 13 եւ[37] զամենայն որդիս[38] քո խրատեալս[1] յԱստուծոյ[2], եւ ի բազում խաղաղութեան մանկունք[3] քո. 14 եւ |Բ.31ա| արդարութեամբ շինեսցիս»:

---

[1] Բ դպիրքն
[2] Բ մանկտին
[3] Բ > ի տաճարին
[4] Ս ասեն ցնա
[5] Ս լսես] չլսես
[6] Բ եւ ասէ
[7] Ս ցնոսա յիսուս
[8] Ա. թէ] եթէ
[9] Ա. մանգանց, Ս > մանկանց
[10] Բ տղայոց եւ
[11] Ա. ստանդուաց, Ս ստընդիեցաց
[12] Ա. զաւրհնութիւն քո
[13] Ա. > եւ
[14] Ա. քարոզէ սարկաւագն
[15] Ա. > եւ
[16] Ա. սողոմոնի
[17] Ա. աւրհնեալ ես
[18] Ա. յեկեղեցաւրհնեան կարգա՛ զաղա.] գտանես ի թիկանցդ յեկեղեցաւրհնեն
[19] Ա. > եւ
[20] Բ > երրորդ
[21] Յ ժամուն
[22] Բ > ասեն
[23] Ա. գովէ
[24] Ա. > զտէր
[25] Ա. > սեղան քո տէր: եւ դարձեալ
[26] Ա. կանոն
[27] Բ > .ճժէ.
[28] Ա. > եկ[այք]
[29] Բ յեսա
[30] Ս խախտեալ
[31] Ա. ահաւասիկ
[32] Բ պատրաստեմ] պատրաստեալ եմ
[33] Ա. կարկեհոնս [եւ զհիմ]ունս քո եւ զքարինս շափիւղայ
[34] Ս վանեայց
[35] Ս յընտիր
[36] Ա. > ականց
[37] Ա. > եւ
[38] Բ որդիսն

46. Ի ՀՌՈՄԱՅԵՑՈՑ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈ ԸՆԹԵՐՑՈՒԱԾ[4] [ԺԱ. 25-36]. «Ոչ կամիմ, եղբա՛րք, եթէ տգէտք իցէք[5] խորհրդոյս այսմիկ, զի մի՛ յանձինս ձեր իցէք իմաստունք, զի կուրութիւն[6] |Ա.39բ| փոքր ի շատէ եղեւ Իսրայեղի[7]. մինչեւ լրումն հեթանոսաց մտցէ, 26 եւ ապա ամենայն Իսրայեղ[8] կեցցէ, որպէս եւ գրեալ է. Եկեսցէ ի Սիովնէ փրկիչ, եւ դարձուսցէ[9] զամբարշտութիւնն[10] Յակովբայ[11]. 27 եւ այս նոցա որ յինէն ուխտ[12], յորժամ բարձից զմեղս նոցա: 28 Ըստ Աւետարանիս[13] թշնամիք են վասն ձեր, ըստ ընտրութեանն[14] սիրելիք վասն հարցն[15]: 29 Քանզի անզեղջ են շնորհքն, եւ կոչումն[16] Աստուծոյ: 30 Զի որպէս եւ դուք երբեմն[17] ապստամբեիք[18] յԱստուծոյ[19], եւ արդ ողորմութիւն գտէք առ նոցա ապստամբութեամբն. 31 նոյնպէս եւ նոքա այժմ ապստամբք[20] եղեն[21] առ ձերով ողորմութեամբդ[22], զի եւ նոքա ողորմութիւն գտցեն: 32 Քանզի արգել Աստուած զամենեսեան յանհաւատութեան[23] զի ամենեցուն ողորմեսցի[24]: 33 Ո՛վ խորք մեծութեան եւ իմաստութեան եւ գիտութեանն[25] Աստուծոյ, որպէս զի[26] առանց քննելոյ են դատաստանք |Բ.31բ| նորա, եւ առանց զննելոյ են ճանապարհք նորա: 34 Զի ով գիտաց զմիտս Տեառն[27], կամ ո՞վ խորհրդակից լինիցի նմա[28]. 35 կամ ո՞վ ետ նմա փոխ եւ առնուցու փոխարէն[29] ի նմանէ: 36 Զի ի նմանէ եւ նովաւ

---

[1] Ս փրկեալս] խրատեալս
[2] Բ աստուծոյ
[3] Ա. զմանգունս
[4] Բ ի հռովմայեցւոց թղթ[ոյն] պաւղոսի
[5] Բ > եթէ տգէտք իցեք
[6] Ա. կուրութիւնն
[7] Ս իսրայէլի
[8] Ա. երուսաղէմ] իսրայեղ, Ս իսրայէլ
[9] Բ դարձուցէ
[10] Բ զամպարշտութիւնն, Ս զամպարշտութիւնս
[11] Ա. յակովբա
[12] Բ ուխտ յինէն] որ յինէն ուխտ
[13] Ա. աւետարանին
[14] Ա. ընդրութեանն
[15] Ա. հարց
[16] Ա. կոչումնն
[17] Ա. ~ որպէս երբեմն եւ դուք
[18] Ս ապստամբք էիք
[19] Ա. > յաստուծոյ
[20] Բ ապստամբ
[21] Ա. եղեն այժմ
[22] Ա. ողորմութեամբն
[23] Ս յանհաւանութիւն
[24] Բ > քանզի արգել... ամենեցուն ողորմեսցի
[25] Ա. ~ եւ գիտութեան եւ իմաստութեան
[26] Ս > զի
[27] Բ տեառն + որ եւ խրատու լինիցի նմա
[28] Բ եղեւ նմա խորհրդակից + կամ ընդ ում խորհեցաւ եւ արար զնա խելամուտ] խորհրդակից լինիցի նմա
[29] Ա. փոխարէնս

եւ ի նոյն |Ա.40ա| ամենայն[1]. նմա փառք յաւիտեանս. ամէն»:

Աղեղու[2]. *սաղմոս ԼԳ.*[3] [2]. *Աւրհնեցի*[4] *զՏէր յամեն[այն ժամ].*

47. [5]* ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ [ԺԹ. 1-10]. *Տէր մեր Յիսուս*[6]. 1 *«եւ մտեալ շրջէր ընդ Երիքով. 2 եւ ահա այր մի անուն կոչեցեալ Զակքէոս, եւ նա էր մաքսապետ, եւ ինքն մեծատուն յոյժ*[7]. 3 *եւ խնդրէր տեսանել եթէ*[8] *ով իցէ Յիսուս, եւ ոչ կարէր ի բազմութենէն, քանզի*[9] *կա[ր]ճ էր հասակաւ,* 4 *փութացաւ յառաջն. եւ*[10] *ել ի ժանդաթզենին*[11] *զի տեսանիցէ զնա, քանզի ընդ այն իսկ անցանելոց էր.* 5 *իբրեւ եկն ի տեղին, հայեցաւ ի վեր Յիսուս եւ ասէ*[12]. *Զակքէ՛, փութա՛ է՛ջ այտի, զի այսաւր ի տան քում արժան է ինձ ագանել.* 6 *փութացաւ եւ էջ, եւ ընգալաւ*[13] *զնա ուրախութեամբ.* 7 *իբրեւ տեսին ամենեքեան*[14]*, տրտնջէին եւ ասէին. եթէ*[15] *առ առն մեղաւորի եմուտ լուծանել.* 8 *Եկն եկաց Զակքէոս եւ ասէ ցՏէր. Տէ՛ր, ահա զկէս ընչից իմոց տայց*[16] *աղքատաց. եւ եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին:* 9 *Ասէ ցնա Տէր. Այսաւր եղեւ փրկութիւն տանս այսմիկ, քանզի եւ սա որդի Աբրահամու է.* 10 *զի եկն Որդի մարդոյ՝ խնդրել եւ կեցուցանել զկորուսեալս*[17]»:

48. |Բ.31բ| [18]* ԱՒԵՏԱՐԱՆ ՄԱՏԹԷՈՍ[Ի. ԻԳ. 23-32]. *«Եւ իբրեւ եկն Յիսուսի ի տաճարն, մատեան առ նա՝ մինչդեռ ուսուցանէր. քահանայապետք*[19] *եւ ծերք ժողովրդեանն եւ ասեն. Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ, կամ*[20] *ով ետ քեզ զիշխանութիւնդ զայդ:* 24 *Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Հարցից եւ ես զձեզ բան մի. զոր եթէ ասասջիք*[21] *ինձ, եւ ես ձեզ ասացից՝ որով իշխանութեամբ առնեմ զայս:* 25 *Մկրտութիւնն Յովհաննու յերկնի՞ց է*[22]*, թէ՞ ի մարդկանէ: Եւ նոքա խորհէին ընդ միմեանս եւ ասէին.* 26 *Եթէ ասեմք՝ յերկնից, ասէ ցմեզ.* |Բ.32ա| *Իսկ ընդէ՞ր ոչ հաւատայցէք*[1] *նմա. եթէ*[2] *ասեմք ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդենէն. զի ամենեքեան*[3] *զՅովհաննէս իբրեւ զմարգարէ ունէին:* 27 *Պատասխանի ետուն Յիսուսի եւ ասեն. Ոչ գիտեմք*[4]*: Եւ նա ասէ ցնոսա*[5]. *Եւ ոչ ես ձեզ ասեմ*[6] *որով իշխանութեամբ առնեմ զայս:* 28 *Բայց զիա՞րդ թուի ձեզ. առն միոջ էին երկու որդիք. մատուցեալ*[7] *առաջինն, ասէ. Որդեակ, ե՛րթ այսաւր գործեա՛ յայգւոջն*[8]*: Նա պատասխանի ետ եւ ասէ. Երթամ Տէ՛ր. եւ ոչ չոգաւ:* 30 *Մատեաւ առ միւսն*[9] *եւ ասէ նոյնպէս. նա պատասխանի ետ եւ ասէ. Ո՛չ կամիմ, բայց յետոյ զղջացաւ եւ չոգաւ յայգին:* 31 *Արդ, ո՞ յերկուցունց ի նոցանէ*[10] *արար զկամս հաւրն: Ասեն. Յետինն: Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք եւ պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւնն*[11] *երկնից:* 32 *Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան, եւ ոչ հաւատացէք նմա, եւ մաքսաւորք եւ պոռնիկք հաւատացին նմա, եւ դուք տեսէք՝ եւ ոչ զղջաց|Բ.32բ|արուք յետոյ հաւատալ նմա»:*

|*Ա.40բ*| Եւ ապա պատարագ մատչի անխեղճ[12] իսկ եթէ նոր սեղան դնեն՝ կարգ առաջնոյն կատարեսցի. եւ զխոտեալ սեղանն յաջակողմն դիցեն ի պէտս ինչ: Եւ ութ աւր նաւակատիս կատարի ուրախութեամբ[13]:

---

[1] *Բ ամենայնն*

[2] *Ա ալելու*

[3] *Բ > սաղմոս լգ.*

[4] *Յ աւրհնեցից*

[5] յաջորդ ընթերցուածի փոխարէն Ա ունի այս, որ չունի Բ

[6] *Մ > տէր մեր յիսուս*

[7] *Մ > յոյժ*

[8] *Մ թէ*

[9] *Մ զի*

[10] *Մ եւ ընթացեալ յառաջս] փութացաւ յառաջն եւ*

[11] *Մ ժանտաթզենին*

[12] *Մ* ասէ ցնա

[13] *Մ ընկալաւ*

[14] *Մ ամենեքին*

[15] *Մ թէ*

[16] *Մ տաց*

[17] *Մ* զկորուսեալսն

[18] *Ա* > այս ընթերցուածը

[19] *Մ քահանայապետքն*

[20] *Մ եւ] կամ*

[21] *Մ թէ ասիցէք*

[22] *Մ ուստի՞ էր՝ յերկնի՞ց] յերկնի՞ց է*

---

[1] *Մ հաւատացէք*

[2] *Մ եւ եթէ*

[3] *Մ ամենեքին*

[4] *Մ ոչ գիտեմք*

[5] *Մ ~ ասէ ցնոսա եւ նա*

[6] *Մ ~ ասեմ ձեզ*

[7] *Մ եւ մատուցեալ առ*

[8] *Մ յայգւոջ*

[9] *Մ միւսն*

[10] *Մ > ի նոցանէ*

[11] *Մ յարքայութիւն*

---

[12] *Յ անխիղճ*

[13] *Բ Եւ ապա պատարագ մատչի ուրախութեամբ, իսկ եթէ նոր սեղան հաստատեն կարգ զառաջինն հաստատեն, իսկ զխոտեալ սեղանն յաջակողմն գլորիցեն ի պէտս ինչ] եւ ապա պատարագ մատչի... կատարի ուրախութեամբ*

Զ.[1]/[Ե.[2]] ԿԱՆՈՆ ԶՆԿԱՐԵԼ ԵԿԵՂԵՑԻ[3] ԱՒՐՀՆԵԼ

Յերեկորեայ հսկումն առնեն[4] եւ Գ.[5] ժամուն առաջի սեղանոյն ասեն սաղմոս ի թիւ *ՃԺԸ.*[6] *[1]. Երանեալ են ամբիծք ի ճանապարհի*[7]. *եւ զՏէր յերկնից ի բուն՝ [ՃԽԸ. 1]*: Եւ դարձեալ ասեն զսաղմոսն *ՃԺԲ.*[8] *[2]՝ Եղիցի անուն Տեառն աւրհնեալ*: Եւ աւրհնութիւն եւ փառս հանեն, եւ տեառնագրեն զբոլոր եկեղեցին միւռոնաւն, եւ սարկաւագն քարոզէ. *Վասն ի վերուստ*:

Եւ [ա]սէ զաղաւթս[9].

ԺԹ. *Սուրբ ես, Տէ՛ր Աստուած մեր*[10], *եւ ի սուրբս հանգուցեալ*[11], *սրբեա՛ զպատկերս վկայից*[12] *քոց*[13] *զայսոսիկ*[14], *զոր այժմ մեք քեզ մատուցաք*[15]: *Ի*[16] *յիշատակ նոցին*[17] *ոչ երկրպագելի, իբրեւ զկենդանիս պատուելի, այլ ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ քո, զերկրպագութիւն եւ զփառս քեզ միայնոյ հատուցուք բարերարիդ Աստուծոյ*[18]: *Դու, Տէ՛ր, սրբեա եւ աւրհնեա*[19] *զկերպագրութիւնս զայս՝ ի պատիւ եւ ի վայելչութիւն եկեղեցւոյ քո*[20], *եւ շնորհեա*[21] *զվարձս բարիս, որք վաստակեցան*[22] *ի սմա, զի քեզ ընծայի յամենայն հաւատացելոյս*[23] *պատ|Բ.33ա|իւ եւ իշխանական փառս*[24], *որում արժանավայելս*[25] *վայել է գոհութիւն եւ աւրհնութիւն*[26] *Հաւր եւ Որդւոյ եւ Հոգ-*

---

[1] *Ա.40բ* ստ. լս.՝ *«.զ. նկարել եկեղեցի աւրհնել»*

[2] *Բ.32ա, 32բ*՝ ստ. լս. *«նկար եկեղեց աւրհ»*

[3] *Բ զնկար եկեղեցւոյ*

[4] *Ա լինի] առնեն*

[5] *Բ յ.գ.] .գ.*

[6] *Ա կան ի մէջ եկեղեցւոյն եւ ասեն ի թիւ զ.ճժը. սաղմոսն] առաջի սեղանոյն... .ճժը.*

[7] *Բ ճանապար*

[8] *Բ .ճբբ.* (այսպէս)

[9] *Ա եւ ելանեն ի բեմբն եւ ասեն զտէր յերկինսն՝ ի բուն, ապա ասեն զ.ճժբ. սաղմոսն. եղիցի անուն տեառն աւրհնեալ. եւ աւրհնութիւն եւ փառս. եւ տեառնագրեն զբոլոր եկեղեցին միւռոնով. քարոզէ՝ վասն ի վերուստ խաղաղութեան եւ փ., եւ ասէ զաղաւթս զայս] եւ զտէր յերկնից ի բուն... զաղաւթս*

[10] *Ա > աստուած մեր*

[11] *Ա բնակեալ] հանգուցեալ*

[12] *Ա սրբեայ զպատկերքս վկաից*

[13] *Ա > քոց*

[14] *Ա զայսոցիկ. Յ զայսոսիկ*

[15] *Ա կենդանագրութեամբ արարաք] քեզ մատուցաք*

[16] *Բ > ի*

[17] *Ա նոցուն*

[18] *Ա ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ քում ի պատիւ եւ յերկրպագութիւն սուրբ երրորդութեանդ] ոչ երկրպագելի... բարերարիդ աստուծոյ*

[19] *Ա սրբեայ եւ աւրհնեայ*

[20] *Ա փառաց քոց] եւ ի վայելչութիւն եկեղեցւոյ քո*

[21] *Ա ~ շնորհեայ եւ*

[22] *Ա վաստակեցինս*

[23] *Ա ընծայի ամենայն արարածոց] ընծայի յամենայն հաւատացելոյս*

[24] *Ա իշխանութիւն եւ փառք*

[25] *Ա արժանաւորապէս*

[26] *Ա աւրհնաբանութիւն*

ւոյդ Սրբոյ[1] *այժմ եւ միշտ. յ[աւիտեանս]*[2]:

|*Ա.41ա*| Եւ խնկոյն ի ժամ մտանենն, եւ ութ աւր նաւակատիս կատարի[3]:

Է.[4]/[Զ.[5]] ԿԱՆՈՆ ԶՀԱՆԴԵՐՁԵՂԷՆ, ԶՍՊԱՍ[6] ԱՒՐՀՆԵԼՈՅ

[7]* Տանին յեկեղեցին առաջի բեմի. եւ սարկաւագն ի վեր ունելով, ասեն սաղմոս ի թիւ *ԺԷ. [2]. Սիրեցից զքեզ. եւ՝ Աւրհնեա անձն իմ զՏէր. Տէր Աստուած՝ [ՃԳ. 1]. եւ՝ Յիշեա՛ Տէր զԴաւիթ՝ [ՃԼԸ. 1]*: Եւ քարոզէ սարկաւագն. *Աղաչեսցուք զմարդասէրն Աստուած, զի սրբեսցէ զսպասս զայս ի հաճոյութիւն կամաց քոց եւ ի գովեստ անուան իւրոյ եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան:*

Եւ ասէ զաղաւթս զայս.

Ի. *Տէր*[8] *Աստուա՛ծ բարձրեալ, որ զգեցուցանես զեկեղեցիս*[9] *քո սուրբ*[10] *լուսով փառաց քոց, եւ ե-*

---

[1] *Ա որդւոյ եւ հոգւոյդ սրբո*

[2] *Ա եւ] յ[աւիտեան]*

[3] *Բ եւթն աւր նաւակատիս կատերեն ուրախութեամբ] եւ խնկոյն ի ժամ մտանենն եւ ութ աւր նաւակատիս կատարի*

[4] *Ա.41ա ստ. լս.՝ «.է. հանդերձեղէն սպաս աւրհնել»*

[5] *Բ.33ա*՝ ստ. լս. *«հանդերձ աւրհ»*

[6] *Ա սպաս*

[7] *Ա տանին յեկեղեցին, առաջի բեմբին. քարոզե սարկաւագն. վասն ի վերուստ: ասեն սաղմոս .ժե. սիրեցի զքեզ տէր զաւրո. եւ աւրհնաեայ անձն իմ զտէր տէր աստուած մ. եւ՝ յիշեայ տէր զդաւիթ. քարոզե սարկաւագ. աղաչե[ս]ցուք զմարդասէրն աստուած, զի ընկալցի զսպասս զայս ի հաճութիւն կամաց եւ ի գովեստ անուան իւրոյ եւ կեցու[ս]ցե շնորհիւ ողորմութեամբ իւրով ամենակալ տէր: .գ. տէր ողորմեա: եւ քահանայն ասէ զաղաւթս զայս] տանին յեկեղեցին... եւ ասէ զաղաւթս զայս*

[8] *Ա > տէր*

[9] *Ա սգէցուցեր զեկեղեցի*

[10] *Ա > սուրբ*

դեր մեզ զգեստ անապականութեան, ընկա՛լ[1], Տէ՛ր[2], ի մէնջ զՀանդերձս զայս, որպէս յայնժամ[3] զխորանին[4] վկայութեան[5] եւ որպէս զմանկանցն ի պատիւ քեզ տարածելոցն[6]: Աւրհնեա՛ եւ սրբեա[7]՝ որպէս ընկալար եւ սրբեցեր զկտակաւն Յովսէփու[8] ի զգեստ աստուածային[9] մարմնոյ քում մատուցանելոյ[10], զի եւ սա արժանի լիցի ազատ եկեղեցւոյ[11] քում սրբոյ, որպէս զի բերկրե|Բ.33բ|սցեն[12] եւ[13] մատուցանողք[14] սորա փոխարէնս[15] Հատուցման ի քեզ, յուսալով աստ եւ[16] ի Հանդերձեալսն զողորմութիւն քո մեծ. եւ զմեզ արժանաւորս[17] արասցես զամենեսեան[18] փառաւորել զՀայր եւ |Ա.41բ| զՍուրբ զՀոգին այժմ[19].

Եւ արկանեն յիւրաքանչիւր սեղան եւ փառս տան[20].

---

[1] *Ա ընդալ*
[2] *Ա եւ] տէր*
[3] *Ա յամենայն ժամ*
[4] *Բ զխորանն*
[5] *Ա > վկայութեան*
[6] *Ա տարածելոց*
[7] *Ա սրբեայ, Բ սրբեա եւ*
[8] *Ա որպէս զկտաւսն յուսեփու] որպէս... յովսեփու*
[9] *Ա աստուածային*
[10] *Ա քո մատուցելոյ] քում մատուցանելոյ*
[11] *Ա եկեղեցոյ*
[12] *Ա բերկրեսցին*
[13] *Ա > եւ*
[14] *Ա մատուցողք*
[15] *Բ զի փոխարէն] զփոխարէնս*
[16] *Ա ընդունել ի քեն աստ եւ յուսալով] ի քեզ յուսալով աստ եւ*
[17] *Ա արժանիս*
[18] *Ա > զամենեսեան*
[19] *Ա զորդի եւ զՀոգին սուրբ այժմ եւ միշտ եւ յաւի.] զսուրբ զՀոգին այժմ*
[20] *Ա > եւ արկանեն... փառս տան*

Ը.[1]/[Է.[2]]. ԿԱՆՈՆ ՍԿԻՀ[3] ԵՒ ՄՈՂՋՄԱ ԱՒՐՀՆԵԼ[4]

[5]* Լուանան նախ ջրով եւ ապա գինեաւ յեկեղեցւոջն եւ սրբեն սուրբ ջնջոցաւն եւ ասեն ձայնիւ ԻԲ. [1]. *Տէր Հովուեսցէ զիս*, եւ քարոզէ. *Խնդրեսցուք*. Գ. Տէր ող[որմեա]:

Եւ ասէ զաղաւթս.

ԻԱ. *Աւրհնեալ ես Տէր Աստուած մեր[6], որ ետուր մեզ զնիւթս զայս եւ զանաւթս մեզ[7] առնել ըստ Հանճարոյ[8] առ ի քէն տուելոյ մտաւորութեան: Եւ արդ, Տէ՛ր ընկա՛լ[9] զնիւթս զայս եւ զաննիւթս[10] ի ձեռաց մերոց, եւ սրբեա[11] զսա[12], զի արժանի լիցի Հպիլ ի սրբութիւն քո, որով ցնծասցեն եւ[13] մատուցողք սորա, ակն ունելով ի քէն[14] բարեաց[15] Հատուցման, եւ զմեզ արժանիս արա[16] պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց, Քրիստոս Աստուա՛ծ, Տէ՛րդ[17] մեր, որում վայել է փառք եւ իշխանութիւն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբո այժմ[18]:*

---

[1] *Ա.41բ* ստ. լս.՝ «*.ը. սկիհ եւ մաղզմա աւրհնել*»
[2] *Բ.33բ*՝ ստ. լս. «*սկի եւ մաղող*», արտք. լս-մ հմր՝ «*.է.*»
[3] *Ց սկի*
[4] *Բ սկի եւ մողզմայ] սկիհ եւ մաղզմայ աւրհնել*
[5] *Ա լուանան ջրով եւ ապա գինով յեկեղեցոջն եւ ջնջեն սուրբ ջնջոցաւք: եւ ասեն ձայնիւ. տէր Հովեցե: եւ քարոզէ սարկաւագն. խնդրեսցուք Հաւատով, .գ. տէր ողոր. քահանայն ասէ զաղաւթս զայս] լուանան... ասէ զաղաւթս*
[6] *Ց > մեր*
[7] *Բ > եւ զանաւթս մեզ*
[8] *Բ Հաճոյս] Հանճարոյ*
[9] *Ա արդ ընկալ] եւ արդ, տէր ընկալ*
[10] *Ա զսա] զնիւթս զայս եւ զաննիւթս*
[11] *Ա սրբեայ*
[12] *Ա > զսա*
[13] *Ա > եւ*
[14] *Ա > ի քէն*
[15] *Ա բարեացդ*
[16] *Ա արժանի արայ*
[17] *Ա > տէրդ*
[18] *Ա ընդ որում Հաւր եւ սուրբ Հոգոյդ վայել է փառք իշխանու.] որում վայել է... այժմ*

Թ.[1]/[Ը.[2]] |Բ.34ա| ԿԱՆՈՆ ԱՒՐՀՆՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՐՈՑ[3]

Տանին յեկեղեցին եւ հանեն ի բեմն[4], ունելով սարկաւագացն ի վերայ[5] բազկացն. եւ[6] ասեն սաղմոս ՀԷ. [=ՀԷ: 1] ի թիւ[7]. *Նայեցարուք*[8] *ժողովուրդք*. մինչեւ յայն տեղին[9] *Հորդանեա՛* [ՀԷ: 52]: Եւ[10] քարոզէ սարկաւագն[11]. *Խնդրեսցուք հաւատ*: Եւ ասեն Գ. Տէր ողոր[մեա][12]:

Քահանայն[13] ասէ զաղաւթս[14].

ԻԲ. *Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած մեր, որ ետուր մեզ զպատուիրանս*[15] *քո ի յու|Ա.42ա|սուորութիւն աչաց*[16] *մերոց, ընկալ*[17] *եւ այժմ զնորակերտեալս*[18] *զայս ի ձեռաց մերոց Աւրհնեա եւ սրբեա*[19] *զսա. զի որք ընթեռնուն*[20] *զսա*[21] *եւ լսեն, բանայցեն միտք նոցա՛ իմանալ եւ առնել զհրամանս քո եւ*[22] *գրել ի միտս իւրեանց. լինել քեզ ժողովուրդ սեփհականն*[23]*. եւ դու եղիցիս մեզ Աստուած. եւ քո իսկ աստուածութեանդ վայել են փառք. իշխանութիւն եւ պատիւ*[24]:

Խաղաղութիւն Աստուծոյ երկրպագ[եսցուք][25].

ԻԳ. *Ընկալ, Տէ՛ր Աստուած, զաղաչանս մեր եւ զժողովրդեան քում, որ կան առաջի քո*[26] *լսել ձայնիւ պաղատանաց սոցա եւ մեր ամենեցուն*[27]*, ողորմեա*[28] *եւ աւրհնեա՛, Տէ՛ր*[29]*, զգիրս զայս*[30] *եւ զգրողս սորա, եւ գրեա՛ զանուն սորա ի գրութիւն կենաց, զի սովառ յուսաւորին եկ|Բ.34բ|եղեցի*[31] *քո ի տաւնս տէրունականս*[1] *եւ յիշատակ*[2] *հանգուցելոց սրբոց մարտիրոսաց եւ ամենայն հանգուցելոց*[3]*, եւ*[4] *ընդ նոսին պայծառացո՛յ զհոգիս*[5] *սորա. եւ եթե*[6] *յանցեալ ինչ*[7] *իցէ սորա ի փոքումք կամ ի մեծումք*[8]*, արասցես թողութիւն բարերարութեամբ սուրբ Աստուածածնիդ*[9] *եւ ամենայն սրբոց քոց*[10]*, զի դու զատուցեր զսոսա առաւել շնորհիւ, որպէս զԲեսելիէլն*[11]*,* |Ա.42բ| *որով*[12] *տալով հոգի*[13] *քո ի սմա*[14]*, զի մեր հոգեւոր ողջունիւ ընկալեալ*[15] *զսա որպէս զգիրսն գրեալսն*[16] *ի տախտակսն քարեղենս*[17] *մատամբն Աստուծոյ*[18]*, եւ քեզ վայել է փառք. իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ յաւ[իտեան]*[19]:

Ժ.[20]/[Թ.[21]] ԿԱՆՈՆ ԺԱՄԱՀԱՒՐ ԱՒՐՀՆԵԼՈՅ

[22]* Լուանան ջրով եւ ապա գինով, եւ ջնջեն, եւ ունին առաջի սրբոյ սեղանոյն, եւ ասեն սաղմոս Ը. ի թիւ. ՂԷ. [=ՂԷ: 1]. *Աւրհնեցէ՛ք զՏէր յաւրհնութիւն ի նոր, զի սքանչելիս արար*, ՃԳ. [1]. *Աւրհնեա՛ անձն իմ զՏէր, Տէր Աստուած* [*ի*]*մ*, [*մեծ եղեր յոյժ*], ՃԺԷ. [=ՃԺԷ: 1]. *Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է*, [ՃԼԷ: 1]. *Խոստովան եղէց քեզ, Տէ՛ր, բոլորով սրտիւ իմով, առաջի հրեշտակաց* [*սաղմոս ասացից քեզ*], ՃԽԱ. [1]. *Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի ձ*[*այնիւ իմով զՏէր աղաչեցի*. հմմտ. Գ. 5, ՀԶ. 2], ՃԽԵ. [1]. *Աւրհնեա՛յ անձն իմ զՏէր, աւրհնեցից զՏէր ի կեանս իմ*: Քարոզէ սարկաւագն. *Խնդրեսցուք հաւատով եւ միաբանութեամբ*. Գ. Տէր ողորմեա:

[23]* Բերեն յեկեղեցին եւ լուանան ջրով եւ ապա գինեաւ, եւ մաքրեն սուրբ ջնջոցաւ եւ ասեն սաղմոսք Է..

---

[1] *Ա.41բ* ստ. լս.՝ «*.Թ. նորակերտ գիրս աւրհնել*» (*42ա* նոյնը առանց .թ. համարի)

[2] *Բ.34ա*՝ ներքն. լս.՝ հմր «*Ը.*», ստ. լս.՝ «*նոր գիրք աւրհ*»

[3] *Բ կանոն նորակերտ գրոց աւրհնելոյ*

[4] *Ա. բեմբն*

[5] *Ա. սարկաւագունքն ի վերայ*

[6] *Ա. > եւ*

[7] *Ա. սաղմոս ի թիւ .հէ.] սաղմոս .հա. ի թիւ*

[8] *Ա. նաեցարուք, Յ նայեցարուք*

[9] *Ա. յայն վայր, Յ ցայն վայր] մինչեւ յայն տեղին*

[10] *Ա. > եւ*

[11] *Բ > սարկաւագն*

[12] *Ա. եւ եւս խաղաղութեան. տէր ողորմե. կեցո եւ ողորմե. կեցոյ տէր, .գ. տէր ողորմեա] խնդրեսցուք հաւատ: եւ ասեն .գ. տէր ողոր*[*մեա*]

[13] *Բ եւ] քահանայն*

[14] *Ա. զաղ*[*աւթս*

[15] *Յ պատուիրանս*

[16] *Բ անձանց] աչաց*

[17] *Ա. ընգալ*

[18] *Ա. զնորոգեալս*

[19] *Ա. աւրհնեայ եւ սրբեայ*

[20] *Ա. ընթեռնուցուն*

[21] *Ա. > զսա*

[22] *Ա. > եւ*

[23] *Ա. սեպհական*

[24] *Ա. զի քո է աստուածութիւն, եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ ա.] եւ քո իսկ... եւ պատիւ*

[25] *Բ > աստուծոյ երկրպագ.*

[26] *Բ > որ կան առաջի քո*

[27] *Ա. > ամենեցուն*

[28] *Ա. ողորմեայ*

[29] *Ա. > տէր*

[30] *Ա. > զայս*

[31] *Ա. եկեղեցիք*

[1] *Ա. տերունականս*

[2] *Ա. յիշատակս*

[3] *Ա. ննջեցելոց] հանգուցելոց*

[4] *Ա. > եւ*

[5] *Բ զհոգի*

[6] *Ա. եթէ*

[7] *Բ > ինչ*

[8] *Ա. փոքու կամ մեծաւ] ի փոքումք կամ ի մեծումք*

[9] *Ա. աստուածածնին*

[10] *Բ > քոց*

[11] *Ա. եղիեղն] զԲեսելիէլն*

[12] *Ա. որոյն*

[13] *Ա. զհոգիտ*

[14] *Բ նմա*

[15] *Ա. ընգալեալ*

[16] *Ա. զգիրն գրեալ*

[17] *Բ > քարեղենս*

[18] *Ա. > մատամբն աստուծոյ*

[19] *Ա. հանցուք զաւրհնութիւն ամենակեցոյց իշխանութեանդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս ամ.] վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ յաւ*[*իտեան*]

[20] *Ա.42բ, 43ա* ստ. լս.՝ «*.Ժ. ժամահար աւրհնել*»

[21] *Բ.35ա*՝ ստ. լս. «*ժամհար աւրհ.*» *35ա* արտ. լս.՝ ջնջած «*.Ժ.*»

[22] սա ըստ՝ *Ա. Բ >* այս խրատը. շարադրանքը եւ սաղմոսները տարբեր են, ըստ այդմ՝ առանձին-առանձին բերում ենք նախ Ա, ապա՝ Բ ձեռագրերինը

[23] սա ըստ՝ *Բ. Ա .* այս խրատը

ՂԵ.. ՂԶ.։ [ՂԵ· 3] Աւրհնեցէ՛ք զՏէր յաւրհնութիւն նոր, [ՂԶ· 1] Տէր թագաւորեաց, ցնծասցէ երկիր, [ՃԳ·1]· Աւրհնեա՛ անձն իմ զՏէր, Տէր Աստուած իմ մեծ, [ՃԺԷ· 1]· Խոստովան եղերուք Տեառն, զի քաղցր է, [ՀԶ· 2] Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի, ձայնիւ իմով առ Աստուած, [ՁԵ· 12] Խոստովան եղեց քեզ բոլորով սրտ[իւ], [ՃԽԵ· 2]· Աւրհնեայ անձն իմ զՏէր, աւրհնեցից զՏէր ի կեանս իմ։ Եւ քարոզէ. Հաւատով եւ յոյս|Բ.35ա|ով եւ միաբանութեամբ խնդրեսցուք ի Տեառնէ զիւր զողորմութիւն, զշնորհս առաքեսցէ ի վերայ մեր եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեամբ ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛յ եւ ող[որմեա՛]։Եւ ասեն Գ. Տէր ողորմեայ։

[1]* Քահանայն ասէ զաղաւթս զայս.

ԻԴ. Տէ՛ր Աստուած զաւրութեանց եւ արարիչ ամենայն արարածոց, զքեզ աւրհնեն ամենայն եղականքս[2], եւ քեզ բարեբանեն ամենայն[3] փայտք պտղաբերք եւ ամենայն մայրք։ Դու վասն անբաւ մարդասիրութեանդ[4] քո հաճեցար բնակիլ[5] ի մէջ հարցն մերոց եւ խաւսեցար ընդ հարսն մեր ի խորանէն վկայութեան[6], եւ յուար[7] ազաւթից նոցա եւ[8] սրբեցեր զամենայն կահ խորանին սրբութեան, որ սրսկմամբ արեամբն[9] ի ձեռն Մովսէսի[10]։ Եւ այժմ, Տէր Աստուած մեր[11], առաք|Ա.43ա|եա[12] զշնորհս Հոգւոյդ[13] Սրբոյ ի փայտս յայս, զի եւ սա մերձեսցի ի սպաս պաշտաման եկեղեցւոյ քո[14] սրբոյ։ Տո՛ւր, Տէ՛ր, շնորհս ձայնի ազգմանս այսորիկ, զի ամենեքեան, որ լուիցեն[15] զհնչումն սորա, զղջասցեն[16] ի սիրտս իւրեանց ի վերայ չարեացն գործելոց |Բ.35բ| եւ դարձցին ի խորհրդոց անաւրէնութենէ[17] եւ խնդրեսցեն զներումն եւ զթողութիւն յանցանաց իւրեանց[18], եւ դու բարերարութեամբդ քո լուիցես եւ ողորմեսցես[1] նոցա։ Տո՛ւր, Տէ՛ր, շնորհս[2] ձայնի ազգմանս այսորիկ, զի ամենեքեան, որք[3] իցեն ի հիւանդութիւնս ախտից եւ[4] կամ յարհաւիրս սատանայի[5] եւ լուիցեն[6] զհնչումն սորա եւ յիշեսցեն[7] զսուրբ եւ զահաւոր անունդ քո[8], եւ խնդրեսցեն զողորմութիւն, եւ[9] դու լուիցես նոցա եւ թեթեւացուցեալ փարատեսցես զցաւս[10] նոցա։ Տո՛ւր, Տէ՛ր, շնորհս ձայնի ազգմանս այսորիկ, զի ամենեքեան, որք[11] իցեն ի վիշտս եւ յայլ նեղութիւնս, եւ լուիցեն[12] զհնչումն սորա, եւ յիշեսցեն զեկեղեցի քո սուրբ եւ զերկրպագութիւն քո զահաւոր եւ խնդրեսցեն ի քէն |Ա.43բ| զաւգնականութիւն, դու[13] լուիցես նոցա եւ փարատեսցես զտրտմութիւն եւ զնեղութիւնս[14] նոցա։ Տո՛ւր, Տէ՛ր, շնորհս ձայնի ազգմանս այսորիկ, զի յորժամ գումարեսց|Բ.36ա|են ամպք ցասմամբ[15], եւ լուիցեն մարդիկ զհնչումն սորա եւ յիշեսցեն զահեղ անուն[16] քո, յորմէ[17] սարսեն ամենայն արարածք եւ խնդրեն[18] ի քէն զներումն յանցանաց իւրեանց եւ զպահպանութիւն անդաստանաց եւ ամենայն պտղոց եւ[19], դու լուիցես եւ ողորմեսցիս[20] նոցա՝ փոխանակ հրամանի բարկութեան քո, քանզի սովոր ես ի ձեռն փոքու սպասուց քոց պաշտաման առնել սքանչելիս[21] մեծամեծս՝ որպէս կործանեցեր զպարիսպն Երիքովի ի ձեռն հնչման փողոյն եղջերայ[22]։ Եւ այժմ շնորհեա՛ ի ձեռն հնչմանս այսորիկ կործանիլ ի մէնջ ամենայն ամրութեանց թշնամւոյն[23], զի արժանի լիցուք աւրհնել զքեզ՝ զամենակալդ Աստուած այժմ եւ միշտ եւ յա[ւիտեան][24]։

Եւ ապա ի բեմն հանեն[25] առաջի սրբոյ սեղանոյն, եւ սարկաւագն ի

---

[1] Բ եւ ասէ զաղաւթս զայս] քահանայն ասէ զաղաւթս զայս

[2] Ա արարածք] եղականքս

[3] Ա զքեզ աւրհնեն] եւ քեզ բարեբանեն ամենայն

[4] Ա մարդասիրութեան

[5] Բ բնակել

[6] Ա > եւ խաւսեցար ընդ հարսն մեր ի խորանէն վկայութեան

[7] Ա յսել] յուար

[8] Ա > եւ

[9] Ա > սրբութեան, որ սրսկմամբ արեամբն

[10] Ա մովսեսի + որ սրսկմամբ արեամբ

[11] Բ > աստուած մեր

[12] Ա առաքեայ

[13] Ա զշնորս Հոգոյտ

[14] Ա եկեղեցոյ քում

[15] Ա ամենիքեան որ լսիցեն

[16] Ա զղջացեն

[17] Ա եւ յամենայն անաւրէն բանից] անաւրէնութենէ

[18] Ա ներումն եւ թողութիւն մեղաց] զներումն եւ զթողութիւն յանցանաց իւրեանց

---

[1] Ա բարերարութեամբ քով լսիցես եւ ողորմեսցիս

[2] Ա շնորս

[3] Ա ամենիքեան որ

[4] Բ ախտի] ախտից եւ

[5] Ա սատանայականս

[6] Ա լսիցեն

[7] Ա յիշեցեն

[8] Ա զահեղ անուն քո] զահաւոր անունդ քո

[9] Բ > եւ խնդրեսցեն զողորմութիւն եւ

[10] Ա թեթեւացուցես եւ փարատեսցես զամենայն ցաւս

[11] Ա որ

[12] Ա յիշեսցեն] լուիցեն

[13] Ա եւ դու

[14] Ա ~ զնեղութիւնս եւ զտրտմութիւն

[15] Ա գումարեսցին ամպք ցասման

[16] Բ զբարերարութիւնդ] զահեղ անուն

[17] Ա յորժամ] յորմէ

[18] Ա խնդրեսցեն

[19] Բ > եւ զպահպանութիւն անդաստանաց եւ ամենայն պտղոց եւ

[20] Ա ողորմեցիս

[21] Բ ի ձեռն սքանչելեաց] սքանչելիս

[22] Բ > ի ձեռն հնչման փողոյն եղջերայ

[23] Ա թշնամոյ

[24] Բ քրիստոս աստուած մեր] զամենակալդ աստուած այժմ եւ միշտ եւ յա.

[25] Ա ~ հանեն ի բեմբն

վեր ունելով[1]. եւ քահանայն տեառնագրէ միւռոնաւն[2] զչորեսին անկիւնսն[3] եւ ասէ. *Աւրհնեսցի, ածցի ժամահարս այս յանուն Հաւր եւ Որդւոյն եւ Հոգ[ւոյն]*[4]: Եւ առնու զժամահարն եւ կոփե երիցս, եւ տա ց[ս]պասաւորս եկեղեցոյն՝ հարկանել. |*Ա.44ա*| եւ իսկոյն ի ժամ մտանեն[5]:

ԺԱ.[6] [ԺԱ.[7]] Բ 40բ ԿԱՆՈՆ ԽԱՉ ԱՒՐՀՆԵԼՈՅ

Բերեն յեկեղեցին եւ լուանան նախ ջրով եւ ապա[8] գինով եւ ասեն սաղմոս ի թիւ[9] Կ [2] *Լուր, Աստուած, աղաւթից իմոց, նայեա*[10]. *Տէր, յաղաւթս իմ*[11]: Եւ դարձեալ լուանան գինեաւ[12] եւ ասեն զսաղմոսն ԿԴ.[13] [2]. *Լո՛ւր, Աստուած, աղաւթից իմոց՝ յաղաչել ինձ առ քեզ*: Եւ[14] բարոզէ սարկաւագն[15]: *Խնդրեսցուք հաւատով եւ միաբանութեամբ*[16]: Եւ աւրհնութիւն եւ փառս հանեն[17]: Եւ[18] այս կանոն կատարի. սաղմոս ՂԷ:[19] [3]. *Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն*[20]:

49. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ[21] ՅԱՌԱԿԱՑ [Գ. 13-26]. *«Երանեալ է այր,*

---

[1] *Ա ունելով սարկաւագացն ի վեր*] *եւ սարկաւագն ի վեր ունելով*

[2] *Ա միռոնե*] *տեառնագրէ միւռոնաւն*

[3] *Ա ծակսն*] *անկիւնսն*

[4] *Ա > եւ ասէ. աւրհնեսցի, ածցի ժամահարս այս յանուն հաւր եւ որդւոյն եւ հոգ[ւոյն]*

[5] *Բ եւ ապա առեալ կոփէ երիցս անգամ եւ տայ սպասաւորս եկեղեցւոյն*] *եւ առնու զժամահարն... ի ժամ մտանեն*

[6] *Ա.44ա, 48ա, 49ա, 50ա, 51ա, 52ա, 54ա, 56ա* ստ. լս.՝ *«.ժա. խաչ աւրհնել» (45ա, 46ա, 47ա, 53ա, 55ա, 57ա՝* նշեր առանց *.ժա.* համարի)

[7] *Բ.40բ՝ սեւով .ժա. համարը ջնջած, 41ա, 42ա, 43ա, 44ա, 45ա, 48ա, 49ա, 50ա, 52ա, 54ա՝ «Խաչ աւրհ», 55ա, 56ա՝ «Խաչալուա»*

[8] *Բ ջրով եւ*] *նախ ջրով եւ ապա*

[9] *Ա ~ ի թիւ սաղմոս*

[10] *Ա եւ նայեա*

[11] *Բ յաղաւթ.*] *յաղաւթս իմ*

[12] *Ա գինով*

[13] *Բ > զսաղմոսն .կդ.*

[14] *Ա յաղա*] *յաղաչել ինձ առ քեզ, եւ*

[15] *Բ > սարկաւագն*

[16] *Ա միա.*] *միաբանութեամբ*

[17] *Ա > հանեն*

[18] *Ա ապա*] *եւ*

[19] *Ա .ղե.*] *.ղէ.*

[20] *Բ > երկրի զփրկութիւն*

[21] *Ա ընթերցուած .ա.*

որ եգիտ զիմաստութիւն, եւ մահկանացոյ[1], *որ եպես զհանճար*[2]: 14 *Զի լաւ է զվաճառն զայն գտանել, քան զգանձս ոսկւոյ*[3] *եւ արծաթոյ*: 15 *Պատուականա|Բ.41ա|գոյն է նա քան զականս*[4] *պատուականս, եւ ոչ ինչ է չար, որ հակառակ կայցէ նմա: Յայտնի է ամենեցուն, որ մերձենան*[5] *ի նա, եւ ամենայն ինչ որ պատուական է՝ չարժէ զնա*: 16 *Զի երկայն աւուրք*[6] *եւ ամք կենաց յաջմէ իւրմէ*[7] *եւ յահեկէ իւրմէ փառք եւ մեծութիւն, ի բերանո նորա*[8] *բղխե իմաստութիւն*[9], *զաւրէնս եւ զողորմութիւն ի լեզուի իւրում կրէ*: 17 *Ճանապարհք նորա*[10] *ճանապարհք բարեաց, եւ ամենայն շաւիղք*[11] *նորա խաղաղութեամբ են*[12]: 18 *Փայտ կենաց է ամենեցուն, որ պատսպարին ի նա, եւ որ*[13] *յենուն ի նա իբրեւ ի* |*Ա.44բ*| *Տէր հաստատութեամբ*: 19 [14]*Աստուած իմաստութեամբ հիմունս արկ երկրի, պատրաստեաց զերկինս խորհրդով*, 20 *հանճարով իւրով զանդունդս պատառեաց, եւ ամպք հոսեցեն*[15] *զանձրեւ*: 21 *Որդեա՛կ, մի՛ լուծանիցիս*[16], *պահեա՛ զխորհուրդս իմ եւ զիմաստութիւն*, 22 *զի կեցցէ անձն քո, եւ շնորհք իցեն ի վերա պարանոցի քո, եղիցի բժշկութիւն մարմնոյ քո եւ դարման ոսկերաց քոց*: 23 *Զի գնասցես*[17] *յուսով*[18] *յամենայն ճանապարհս քո, եւ ոտն քո մի՛ գայթագղեսցի*[19]: |*Բ.41բ*| 24 *Զի եթէ նստիցես՝ աներկիւղ*[20] *իցես, եւ եթե ննջիցես՝ քաղցր քուն իցես, եւ*[21] *ոչ երկիցես յարհուրանաց*[22] *ի վերայ եկելոց*[23] *եւ յարշաւանաց ամպարշտաց ի վերայ հասելոց*[24]: 26 *Զի Տէր եղիցի ի վերայ ամենայն ճանապարհաց քոց եւ հաստատեսցէ զոտն քո, զի մի՛ սասանեսցի*[25]*»*[26]:

---

[1] *Ա մահկանացու ե, Ս մահկանացու*

[2] *Բ զհաճար*

[3] *Ա ոսկոյ*

[4] *Ա > պատուականագոյն է նա քան զականս*

[5] *Ս մերձին*

[6] *Բ աւուրբք*

[7] *Ա նորա*] *իւրմէ*

[8] *Ս > նորա*

[9] *Բ > ի բերանո նորա բղխե իմաստութիւն, Ս արդարութիւն*] *իմաստութիւն*

[10] *Բ նոցայ*] *նորա*

[11] *Ա շաւիղք*

[12] *Ա արդարութիւն է*] *խաղաղութեամբ են, Ս > են*

[13] *Բ > որ*

[14] *Ա > աստուած իմաստութեամբ... զի մի՛ սասանեսցի* (19-26 համարը)

[15] *Ս հոսեցին*

[16] *Ս > մի՛ լուծանիցիս*

[17] *Բ գնայցես*

[18] *Ս յուսով խաղաղութեան*

[19] *Ս գայթակղեսցի*

[20] *Ս աներկեւղ*

[21] *Ս քունեսցես*] *քուն իցես, եւ*

[22] *Ս ի զարհուրանաց*

[23] *Ս հասելոց*] *եկելոց*

[24] *Ս եկելոց*] *հասելոց*

[25] *Ս գայթագղեսցի*] *սասանեսցի*

[26] *Ա > աստուած իմաստութեամբ... զի մի՛ սասանեսցի* (19-26 համարը)

50. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱՅԵԱ ՄԱՐԳԱՐԷ[Է[1]. ԿԲ· 8-12]. *«Երդուաւ Տէր ի փառս իւր եւ ի զաւրութիւն բազկի իւրոյ, եթէ ո՛չ տաց զցորեան քո եւ զկերակուր ի ձեռս թշնամեաց քոց, եւ ո՛չ արբեսցեն որդիք աւտարաց զգինի քո, յորում դու վաստակեցար[2]: 9 Այղ որ ամփոփեսցենն[3] կերիցեն[4] եւ աւրհնեսցեն զՏէր, եւ որ ժողովեսցեն[5] զնա, արբցեն ի սրահս սրբութեան իմոյ[6]: 10 Երթայք մտէ՛ք ընդ դրունս իմ, կազմեցէք ճանապարհ, հորդեցէ՛ք շաւիղս[7], գործեցէ՛ք ճանապարհս[8] ժողովրդեան իմոյ, եւ զքարինս ի ճանապարհէ անտի ի բաց արարէ՛ք[9], առէք նշան ի հեթանոսս, 11 զի աւասիկ[10] Տէր լսելի արար մինչեւ ի ծագս երկրի: Ասացէ՛ք դստեր Սիովնի[11]. Ահաւասիկ[12] |Բ.42ա| փրկիչ քո հասեալ զա եւ ունի[13] զվարձս իւր ընդ իւր, եւ զգործս[14] իւր[15] առաջի երեսաց իւրոց. 12 եւ կոչեսցէ զնա[16] ժողովուրդ սուրբ[17], փրկեալ ի Տեառնէ, եւ դու կոչեսջիր[18] քաղաք խնդրեալ[19] եւ ոչ լքեալ»:*

51. Ի ԿՈՐՆԹԱՑԻՈՑ[20] ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ[21] [Ա Կոր· Ա· 18-24]. *«Զի բանն խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ զաւրութիւն Աստուծոյ: 19 Զի գրեալ է. «Կորուսից զիմաստութիւն իմաստնոց եւ զխորհուրդս խորհրդականաց[22] արհամարհեցից[23]» [Ես· ԻԹ· 14]. 20 Ո՞ւր իմաստուն, ո՞ւր դպիր, ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՞չ ապաքէն յիմար եցոյց[24] Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ[25]: 21 Քանզի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութեամբն զԱստուած, հաճեցաւ[1] Աստուած յիմարութեամբ քարոզութեամբն[2] ապրեցուցանել զհաւա|Ա.45ա|տացեալս[3]: 22 Իսկ ոսոփհեաւ հրեայքն[4] նշան հայցեն, եւ հեթանոսք զիմաստութիւն[5] խնդրեն, 23 մեք քարոզե[ս]ցուք[6] զխաչ ելեալն Քրիստոս՝ հրէից գայթակղութիւն[7] եւ հեթանոսաց յիմարութիւն, 24 բայց նոցին իսկ կոչեցելոցն[8] հրէ|Բ.42բ|ից եւ հեթանոսաց զՔրիստոս՝ Աստուծոյ զաւրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն»:*

[9]* Ալելու. սաղմոս ԾԹ·[3]· *Աստուած մերժեցեր եւ աւերեցեր[10]:*

[11]* Աղելու. *Աստուած մերժեցե.* ՃԶ·[= ԾԹ· 3]:

52. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՀԱՆՆՈՒ[12] [Ժ·Թ· 16-22]. *«Յայնժամ ետ զնա[13] ի ձեռս նոցա, զի ի խաչ ելանիցէ: 17 Եւ նոքա առեալ տանէին զնա, եւ բարձեալ էր ինքնին զխաչափայտն, եւ ելանէր ի տեղին, որ անուանէր[14] Գագաթն[15], եւ[16] կոչէր եբրայեցերէն[17] Գողգոթա[18], ուր եւ ի խաչ իսկ հանին զնա: Եւ ընդ նմա[19] երկուս եւս այլս[20] աստի եւ անտի[21], եւ ի միջին[22] զՅիսուս: 19 Գրեաց եւ տախտակ մի[23] Պիղատոս[24] եւ եդ ի վերա խաչին, եւ էր գրեալ. «Յիսուս Նազովրեցի[25] թագաւոր հրէից»: 20 Զայն տախտակ[26] ընթերցան բազումք ի հրէից[27], զի մաւտ էր ի քաղաք անդր տեղին[28], ուր խաչեցաւն Յիսուս: Եւ էր գրեալ եբրաեցերէն[29], դաղմատերէն եւ յունարէն[30]: 21 Ասեն ցՊիղատոս[31] քահ|Ա.45բ|անայապետքն հրէիցն[32], Մի՛ գրեր թագաւոր հրէից[33], այլ թէ[34] նա ասաց՝ թագաւոր եմ հրէիցն[35]: 22 Պատասխա-*

---

[1] Ա ընթերցուած .բ. յեսայեա մարգ. - Այսպէս սաէ տէր. երթայք մտէք ընդ դրունս իմ… (> երդուաւ տէր ի փառս իւր… ի սրահս սրբութեան իմոյ՝ 8-9 համարը)

[2] Մ դուն վաստակեցեր

[3] Մ այլ որ ամփոփեցինն

[4] Մ կերիցեն զնա

[5] Մ ժողովեցինն

[6] Ա > երդուաւ տէր ի փառս իւր… ի սրահս սրբութեան իմոյ, Մ սրբութեանց իմոց (8-9 համարք)

[7] Մ կազմեցէք զճանապարհս հորդեցէք զշաւիղս

[8] Ա > հորդեցէ՛ք շաւիղս, գործեցէ՛ք ճանապարհս, Մ ճանապարհ

[9] Ա առէք, Մ ընկեցէք] արարէ՛ք

[10] Ա ահաուասիկ

[11] Բ սոնի

[12] Ա ահաուասիկ

[13] Բ ընդունի] ունի

[14] Մ գործք

[15] Բ > իւր

[16] Ա զնոսա] զնա

[17] Ա > սուրբ

[18] Մ կոչեսցիս

[19] Բ ընտրեալ] խնդրեալ, Մ ~ խնդրեալ քաղաք

[20] Ա կորնթացոց

[21] Բ > առաք.

[22] Ա հորդականաց

[23] Ա առ համարեցից

[24] Բ եցուոյց

[25] Մ > այսորիկ

[1] Ա այլ հաճեցաւ

[2] Ա քարոզութեամբք, Մ քարոզութեանն

[3] Բ զհաւատեալս

[4] Մ հրեայք

[5] Մ իմաստութիւն

[6] Մ քարոզեսցուք

[7] Բ գայթագղութիւն

[8] Ա կոչեցելոց

[9] սա ըստ՝ Ա. Բ > այս խորատը

[10] Մ աւերեցեր զմեզ

[11] սա ըստ՝ Բ. Ա > այս խորատը

[12] Ա աւետան ըստ յոհաննու.

[13] Ա պիղատոս զյիսուս] զնա

[14] Ա անուանեալն] որ անուանէր

[15] Մ գագաթան

[16] Ա որ] եւ

[17] Ա եբրաեցերեն

[18] Բ գողգոթայ

[19] Ա > ընդ նմա

[20] ԱՄ այլս

[21] Ա անդի

[22] Մ միջի

[23] Մ > մի

[24] Մ պեղատոս

[25] Բ նազովրացի

[26] Ա տախտակն

[27] Ա հրեիցն

[28] Բ ի տեղին, Ա > տեղին

[29] Մ եբրայեցերէն

[30] Ա յունարէն գրով

[31] Մ ցպեղատոս

[32] Ա ասե պիղատոս զքահանայապետսն հրից

[33] Ա հրից

[34] ԱՄ այլ, Բ եթե] թե

[35] Ա հրից

նի եւ Պիղատոս[1]. Զոր ինչ գրեցի՝ գրեցի»:

Եւ[2] քարոզէ սարկաւագն[3].

ԻԵ. *Վասն բարերար լինելոյ Տեառն Աստուծոյ ի վերայ ժողովրդեանս[4] իւրոյ եւ լսել[5] աղաչանաց սոցա զՏէր[6]:*

Վասն շնորհել[7] |Բ.43ա| մեզ[8] զմեծ եւ զառատ զողորմութիւն իւր[9] ի հաւատացեալս անուանն իւրոյ[10]:

Վասն վերստին փրկութեան տալ մեզ զերկնային զխաղաղութիւն, զոր արար խաչին իւրով զՏէր[11]:

Վասն պահելոյ զմեզ ընդ ամենայաղթող[12] զաւրութեան զՏէր[13]:

Վասն առաքելոյ զշնորհս Հոգւոյն[14] Սրբոյ[15] ի տպաւորութիւն սուրբ խաչիս զՏէր[16]:

Վասն հեղլոյ[17] զարիւնն իւր խորհրդով ի վերայ նորակերտ փայտիս զՏէր:

Վասն հաւատով եւ[18] յուսով ճշմարտութեամբ պարծել[19] մեզ սովաւ ի վերջին աւուրս[20] զՏէր:

Վասն վերստին[21] փրկութեան եւ աւրհնութեան ամենայաղթ եւ սուրբ[22] խաչիս[23] զՏէր աղ[24].

Վասն հոգւոցն հ[անգուցելոց][25] եւ եւս զանձինս[26] ողորմեա՛յ[27] մեզ Տէր Աստուած[28]:

Եւ ասէ զաղաւթս զայս.

ԻԶ. *Տէ՛ր Աստուած անսկիզբն, որ ես միշտ յէութեան[29], Աստուա՛ծ զաւրութեանց եւ արարիչ բոլորից, էութիւն[30] կատարեալ ինքնութեամբ, մեծ եւ հզաւր զաւրութեամբ[31], անքննին[32], անհաս, որ ոչ երկինք բաւեն մեծութեան քում, եւ ոչ երկիրս բովանդ[ակ]է զանբաւ[33] արարչական զաւրութիւն քո[1], եւ քեւ լնուս զամենայն արարածս քո[2] եւ բովանդակեալ[3] պահես ի զաւրութիւն անհաս փառաց քոց՝ սքանչելագործ զաւր|Ա.46ա|ութեամբդ քո[4] եւ առաջնորդ ինքնակատար[5], ինքնիշխան հրամանաւ յաւրին|Բ.43բ|եալ եւ[6] ամենայն արարածոց երկնաւորաց եւ երկրաւորաց[7] շնորհս բարեաց պարգեւես, ըստ իւրաքանչիւր յաւրինեալ[8] սահմանադրութեանց. Երրորդութիւն սուրբ կատարեալ ամենակալ զաւրութեամբն, որ նստիս[9] ի վերայ քերովբէից, փառաւորեալ յանմարմնական զինուորութեանց[10] եւ ի հրեշտակական բանակացն իշխանութեանց[11] եւ պետութեանց[12], որք երեքսրբեան փառաւորութեամբ վայելչացեալ խնկապէս ի սպաս[13] արարչական Տէրութեանդ[14], որով լի են երկինք եւ երկիր փառաւք քո[15], որ ի սկզբանցն[16] իսկ բարերարութեամբդ քո[17] եւ[18] ձեռամբ միածնիդ[19] քո ստեղծեր զմարդն ի պատկեր քոյոյ[20] բարերարութեանդ, ի մեծ հրաշագործութեան խորհրդոյս[21] այսորիկ[22] սահմանաւորեցեր[23] զնա եւ եդիր ի դրախտին փափկութեան անամաւթ փառաւք[24], իսկ նա[25] ցանկասիրութեամբն[26] անհասիցն անգիտակացեալ[27] խաբեցաւ յորսողէն[28] յանցաւորութեամբ պատուիրանին, կործանեցաւ[29] ի դառն ճաշակմանէ փայտին գիտութեան[30] եւ փոխանակ աստուածատեսակ |Ա.46բ| պատուի|Բ.44ա|րանին զկեանս անիծաբերս եւ[31] զմահ ժառանգեաց, եւ[32] ապա զթացեալ յարախնամ[33]*

---

[1] Ս պեղատոս
[2] Ա. > եւ
[3] Ա. սարկ.
[4] Ա. ժողովրդեան
[5] Ա. լսելոյ
[6] Ա. զաղաւթս մեր զտէր աղաչէ] աղաչանաց սոցա զտէր
[7] Ա. շնորհելոյ
[8] Ա. > մեզ
[9] Բ > իւր
[10] Ա. զտէր] անուանն իւրո
[11] Ա. վասն տալոյ մեզ զերկնաին զխաղաղութիւնն զոր արար խաչիւն իւրով զտէր
[12] Ա. յաղթող սուրին] ամենայաղթող
[13] Ա. զաւրութեամբս զտէր աղաչե] զաւրութեան զտէր
[14] Ա. հոգոյն
[15] Ա. > սրբոյ
[16] Ա. խաչին զ.

[17] Ա. հեղլով
[18] Ա. > հաւատով եւ
[19] Ա. ճշմարիտ պարծելով
[20] Ա. աւուրն
[21] Բ ի վերուստ] վերստին
[22] Ա. > եւ սուրբ
[23] Ա. խաչիւն
[24] Ա. զ.] զտէր աղ.
[25] Ա. > վասն հոգւոցն հ[անգուցելոց]
[26] Բ զանձի
[27] Ա. ողորմեաց
[28] Ա. > մեզ տէր աստուած
[29] Ա. ի յէութեան
[30] Բ > եւ արարիչ բոլորից, էութիւն
[31] Ա. > մեծ եւ հզաւր զաւրութեամբ
[32] Ա. եւ անքննին
[33] Ա. բաւանդակէ անբաւ

---

[1] Ա. զաւրութեանդ] զաւրութիւն քո
[2] Ա. ծագս երկրի] արարածս քո
[3] Ա. բաւանդակեալ
[4] Ա. զաւրութեամբ քով
[5] Ա. առաջնորդական] առաջնորդ ինքնակատար
[6] Ա. > յաւրինեալ եւ
[7] Ա. > երկնաւորաց եւ երկրաւորաց
[8] Ա. ~ յաւրինեալ ըստ իւրաքանչիւր
[9] Բ նստիստ
[10] Ա. զաւրութեանց ի սրովբեական զաստուց] զինուորութեանց
[11] Ա. բանակաց յիշխանութեանց
[12] Ա. > եւ պետութեանց
[13] Ա. > ի սպաս
[14] Ա. զաւրութիւն] տէրութեանդ

[15] Ա. քով
[16] Ա. սկզբանց
[17] Ա. բարերարութեամբ քոով
[18] Ա. > եւ
[19] Ա. միածնի
[20] Ա. քո
[21] Ա. հրաշագործութիւն խորհրդոյ
[22] Ա. > այսորիկ
[23] Ա. սահմանելով] սահմանաւորեցեր
[24] Բ > եւ եդիր ի դրախտին փափկութեան անամաւթ փառաւք
[25] Ա. նորա] նա
[26] Ա. ցանգասիրութեամբ
[27] Ա. անգիտացեալ
[28] Ա. ի պատրողէն] յորսողէն
[29] Ա. կործանեալ
[30] Բ գիտութեամբն
[31] Ա. > եւ
[32] Ա. > եւ
[33] Ա. հայրախնամ] յարախնամ

ողորմութեամբն իւրով[1], առաքեաց[2] ի ծոցոյ իւրմէ[3] զմիածին Որդին իւր[4] զՏէր մեր Յիսուս Քրիստոս՝ զփրկիչն եւ[5] զստեղծողն եւ զնորոգիչն հնացելոյս մեղաւք, ի վերստին աստուածային կենագործութեամբն[6], որով պայծառացոյց ինքեամբք տնաւրինեալ[7] զմեզ[8] ամենայն, ընծայելով զնոյն շնորհսն[9] ի փառս Հայրենի կամացն, խաչեալ ի վերայ փայտին կենաց, եւ խաչակցեալ զհնութիւնս մեր ի հերքումն ամենաչար պատրողէն, պարգեւելով մեզ զնոյն խաչ՝ շնորհ աստուածապարգեւ[10] փայտ կենաց եւ փայտ[11] գիտութեան առ քեզ, Տէ՛ր Աստուած մեր[12]: Գաւազան զաւրութեան եւ զէն ամրութեան եւ փրկութեան[13], հաւատք[14] խաչակցութեան եւ ելք բարձրութեան փառաց[15] առ քեզ. Տէ՛ր Աստուած մեր, որպէս յայնժամ տարածմամբ աստուածային[16] արարչագործ բազկաց միածնից[17] ի վերայ նորա ժողովել զցրուեալսն ի մի[18], ի հաւնութիւն քեզ. եւ[19] խափանեաց[20] ի մէնջ զմահ եւ զապականութիւն այսու աստուածային[21] զաւրացեալ[22] նշանաւս[23], զոր ետուր փրկ|Բ.44բ|ութիւն երկրպագուացս[24] քոց յերեսաց աղեղան: Եւ յորոց ամենասուրբ Երրորդութեանդ երկրպագեալ բարեպաշտութեամբ[25] |Ա.47ա| խորհրդով կենսարեր խաչիւդ քո[26], որ է նոյն ինքն աստուածաեսութիւն հզաւր եւ վկայութիւն[27] աստուածային[28] աւետարանեալ ի փրկութիւն աշխարհի: Նշան զաւրավիգն[29] ամենայաղթ զաւրութիւն սուրբ[30] խաչին, որով կոխեցան[31] խայթոցք մահու մեղաց եւ կենդանարուղխ[1] արեամբ աստուածային, որ հեղաւ ի վերա[2] սորա: Բժշկեցան, որ[3] ի մեզ առածք կամակոր թշնամւոյն[4], զի դու ես Աստուած բարեխնամող հայրական գթութեամբդ քո[5] եւ Տէր ի վերայ ամենայն[6] արարածոց քոց, որ արարեր խաղաղութիւն յերկինս եւ յերկրի[7] պատուական խաչիդ[8] տարածմամբ[9] միածնիդ[10] քո եւ արեամբն իւրով հեղլով[11], վասն որոյ քեզ Հաւրդ[12] վայել է փառք[13] եւ միածնի Որդւոյդ[14] երկրպագութիւն[15], եւ կենարար[16] եւ ազատիչ Սուրբ Հոգւոյդ[17] այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից[18]:

Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպագ[19].

ԻԷ. Որ եղ ի[20] յէութեան խոկութեան[21] ընդ Հաւր եւ ամենասուրբ Հ|Բ.45ա|ոգւոյն[22] էակից եւ արարչակից Որդիդ[23] միածին՝ փրկիչդ[24] մեր Յիսուս Քրիստոս, Հաւր սահման եւ Բան, որ[25] առաքեցար լոյս ի լուսոյ եւ կեանք ի կենաց, Աստուած յԱստուծոյ եւ[26] փրկիչ աշխարհի, լինելով Բան եւ աստուածային նմանութիւն, առեր զկերպարանս[27] |Ա.47բ| մեր՝ նմանութիւնս ի սրբոյ[28] կուսէն, եւ տուեալ[29] զանձն քո փրկանս վասն[30] աշխարհի, ինքնիշխան կամաւք[31] եկիր ի խաչ եւ յաղթական զաւրութեամբ[32] կոխեցեր զմահու բռնութիւն, հեղլով զարիւն[33] քո ի վերայ խաչին, եւ փայտին[34] բարձեր զդատապարտութիւն[35], եւ զգեստաւորեալ[36]

---

[1] Ա. ողորմութեամբ քո] ողորմութեամբն իւրով
[2] Ա. առաքեցեր
[3] Ա. > իւրմէ
[4] Ա. որդի քո] որդին իւր
[5] Ա. > եւ
[6] Ա. ստեղծող եւ նորոգիչ հնացելոյն վերստին աստուածաին կենագործութեամբ
[7] Ա. ինքեամբ տնաւրինելով
[8] Ա. զմերս
[9] Ա. շնորհս
[10] Ա. > ի հերքումն ամենաչար պատրողէն, պարգեւելով մեզ զնոյն խաչ, շնորհ աստուածապարգեւ
[11] Ա. յուսոյ եւ] կենաց եւ փայտ
[12] Ա. > մեր
[13] Ա. > եւ փրկութեան
[14] Ա. հաւատ

[15] Ա. փառաւք
[16] Ա. աստուածաին
[17] Ա. միածնի քո
[18] Ա. > ի մի
[19] Ա. > եւ
[20] Ա. խափանելով
[21] Ա. աստուածական
[22] Ա. > զաւրացեալ
[23] Բ նշանիս
[24] Ա. երկիւղածաց] երկրպագուացս
[25] Ա. բարեպաշտի
[26] Ա. խաչիդ] խաչիւդ քո
[27] Ա. զաւրութիւն] վկայութիւն
[28] Ա. աստուածաին
[29] Ա. զաւրավիգ
[30] Ա. > զաւրութիւն սուրբ
[31] Ա. կոխեցաւ

---

[1] Ա. կենդանարուխղ
[2] Ա. իւրով զոր եհեղ ի վերայ] աստուածային, որ հեղաւ ի վերա
[3] Ա. > որ
[4] Ա. թշնամոյն
[5] Ա. բարէգթութեամբ քով] գթութեամբդ քո
[6] Բ > ամենայն
[7] Ա. ի յերկրի
[8] Ա. խաչիւ
[9] Ա. եւ արեամբ] տարածմամբ
[10] Ա. միածնի
[11] Ա. > եւ արեամբն իւրով հեղլով
[12] Ա. Հաւր
[13] Ա. ~ փառք վայել է
[14] Ա. որդոյտ
[15] Ա. > երկրպագութիւն
[16] Ա. կենդանարար
[17] Ա. Հոգոյտ
[18] Բ > միշտ եւ յաւիտեանս յաւիտենից
[19] Ա. երկրպագե.

[20] Ա. ես] եղ ի
[21] Բ > խկութեան
[22] Ա. Հոգոյդ
[23] Ա. որդիտ
[24] Ա. ազէր] միածին փրկիչդ
[25] Ա. > որ
[26] Ա. > եւ
[27] Բ > բան եւ աստուածային նմանութիւն, առեր զկերպարանս
[28] Ա. նմանութեան մարդկան ի սուրբ] մեր նմանութիւնս ի սրբոյ
[29] Ա. եսուր] տուեալ
[30] Ա. > վասն
[31] Ա. կամաւ
[32] Ա. փառաւք] զաւրութեամբ
[33] Ա. հեղեր զարիւնս
[34] Ա. խաչափայտին] խաչին եւ փայտին
[35] Ա. զանխծիցն զատապարտութիւն] զդատապարտութիւն
[36] Ա. ագեստաւորեալ

աստուածային եւ[1] ճշմարիտ եւ անապական հաւատով ծածկեալ[2] զմերկութիւնն[3] նախահաւրն, որ եղեւ ի ճաշակմանէն[4], եւ ետուր մեզ[5] նշան յաղթութեան զյառաջընտրեալ[6] պատուական փայտ խաչի[7] քո, Տէ՛ր, որպէս յայնժամ տարածմամբ աստուածային[8] արարչագործ ձեռաց քոց ի վերայ սորին նշանիս, եւ հեղմամբ արեամբդ[9] քո եղիր զատ[10] սահման աստուածային[11] իշխանութեանց քո, եւ փառաւորութիւն մեծ արարեր[12] երկնաւորացն[13] եւ երկրաւորաց: Դի՛ր, Տէ՛ր, եւ այժմ զաստուածական ձեռն քո ի վերայ |Բ.45բ| սորին՝ քեզ Տեառն Աստուծոյ[14] ընծայեալ նշանի խաչիս[15] եւ խոնարհեալ աւրհնեա՛ զատ[16] տէրունական աւրհնութեամբդ, որ ոչ անցանէ, հեղլով զնոյն շնորհս խորհրդոյ[17] ի վերայ սորա[18] տալ մեզ զատ[19] վերստին փրկանս եւ պահապան յամենայն վտանգաւ |Ա.48ա| որ նեղութեանս[20] մերում[21] եւ զէն աստուածային զինաւորութեանս մերում[22] եւ[23] պարիսպ ամրութեան զնոյն աստուածային զաւրավիգ[24] նշան[25] ծածկեալ խորհրդով[26] փառաց քոց. զոր առեալ ընդ քեզ. ունիս ի գովութիւն[27] եւ ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանդ. քանզի սովաւ եւ[28] խոստովանի աւրհնեալ եւ կենարարի անուանդ[29] ընդ տիեզերս ամենայն: Եւ ի ձեռն սորին նշանի խաչիս[30] աւրհնեսցեն զքեզ ամենայն ծագք երկրի[31], Քրիստո՛ս Թագաւոր փառաց. որ եղեր ցնծութիւն երկրպագուացս[32] պատուական խաչի քո. որով արարեր

---

[1] Ա > եւ
[2] Ա > ծածկեալ
[3] Ա զմերկութիւն ճաշակաց
[4] Ա > որ եղեւ ի ճաշակմանէն
[5] Ա > մեզ
[6] Ա զյառաջընդրեալ
[7] Ա խաչ] փայտ խաչի
[8] Ա աստուածային
[9] Ա արեամբ
[10] Ա > զատ
[11] Ա աստուածային
[12] Ա > արարեր
[13] Ա երկնաւորաց
[14] Ա > տեառն աստուծոյ
[15] Ա նշանիս] նշանի խաչիս
[16] Բ զնա] զատ
[17] Ա խորհուրդ շնորհաց] շնորհս խորհրդոյ
[18] Բ սորայ
[19] Ա ~ զատ մեզ
[20] Ա նեղութեանց
[21] Ա > մերում
[22] Ա աստուածային զինուորութեան մերոյ
[23] Ա > եւ
[24] Ա աստուածազաւրավիգ] աստուածային զաւրավիգ
[25] Ա նշանն
[26] Ա խորհուրդ
[27] Ա զաւրութիւն] գովութիւն
[28] Ա > եւ
[29] Ա անուն քո
[30] Բ նորին նշանիս] սորին նշանի խաչիս
[31] Ա երկրի + գովեսցեն զքեզ
[32] Ա երկրպագուաց

զփրկութիւն ի մէջ երկրի: Սա մխիթարեացէ զմեզ ի խոնարհութեան մերում. յոր[1] յուսացուցեր զմեզ: Սա[2] եղիցի մեզ ճանապարհ եւ ճրագ լուսոյ. ուղղելով զշաւիղս[3] մեր առ քեզ. Տէ՛ր Աստուած մեր[4]. զաւազան զաւրու|Բ.46ա|թեան ի Սիովնէ՝ տիրելով ի վերայ թշնամեաց. ջախելով[5] զգլուխ վիշապին թիւնաւոր[6]: Սա է աթոռ փառաց եւ նոյն գաւազան զաւրութեան եւ[7] գաւազան ուղղութեան արքայութեան քո, որով ի կեանս վերածեր զմեզ, Տէ՛ր Աստուած փրկիչ մեր: |Ա.48բ| Դու արարեր զմեծութիւնս զայս հաւատացելոցս[8] ի քեզ[9] տալ մեզ[10] զփառս մեծ զթութեան[11] աստուածային խորհրդոյս այսորիկ, զի դու ես Տէր ի վերայ[12] ամենայն երկրի, որ փրկելոց քոց առաջնորդեցեր[13] պատուական[14] խաչիւդ[15] քո, որով արարեր քեզ[16] մեծութիւն եւ անուն սքանչելի: Պատմեսցեն երկինք զարդարութիւն քո, եւ երկիրս՝ խոստովանութեամբ զփառս քո, զի ցուցեր ամենայն ազգաց երկրի եւ ժողովրդեան քո զփրկութիւն փառաց քոց[17]: Աւրհնեսցեն զքեզ, Քրիստո՛ս, գոհութեամբ ամենայն ազինք[18], որ զաւրացուցեն[19] աւրհնեալ աստուածընկալ զնշանս[20] շնորհաւք յերկիւղածս քո զողորմութիւն եւ զճշմարտութիւն քո սորին[21] յաղթական զաւրութեամբ, որով ընկալաւ[22] մահ յաղթութիւն, եւ |Բ.46բ| փշրեցան[23] խայթոցք դժոխոց, զի[24] ետուր երկիւղածաց քոց նշան յաղթութեան ի[25] պարտութիւն դիւական[26] գնդին եւ պսակ[27] պարծանաց կաթողիկէ եկեղեցւոյ քո[28] եւ ամաւթ երեսաց[29] թշնամւոյն[30]: Զսայ ետուր մեզ

---

[1] Ա յորում
[2] Ա սայ
[3] Ա զշաւիղս
[4] Ա ի հաճոյս քեզ] առ քեզ տէր աստուած մեր
[5] Ա ջաղխեցեր
[6] Ա ~ թիւնաւոր վիշապին
[7] Ա > եւ նոյն գաւազան զաւրութեան եւ
[8] Ա ամենայն հաւատացելոց
[9] Ա > ի քեզ
[10] Բ > մեզ
[11] Ա մեծութեան] մեծ զթութեան
[12] Բ վերա
[13] Ա առաջնորդես
[14] Ա > պատուական
[15] Ա նշանաւ խաչիւ
[16] Ա մեզ] քեզ
[17] Ա զի ցուցեր ամենայն ծագաց երկրի, ժողովրդեան քո զփառս քո եւ զմեծութիւն] եւ երկիրս... փառաց քոց
[18] Ա ազգ
[19] Ա զաւրացուցեր
[20] Ա աստուածընդգալ նշանիս
[21] Բ նորին] քո սորին
[22] Ա ընդալաւ
[23] Ա փշրեցաւ
[24] Ա ըզսայ] զի
[25] Ա ամրութեան եւ] յաղթութեան ի
[26] Ա դիւացն
[27] Բ սպակ] պսակ
[28] Ա եկեղեցոյ] եկեղեցւոյ քո
[29] Ա > երեսաց
[30] Բ թշնամոյն

պարծանս եւ յոյս[1] ամենայն հաւատացելոցս[2], որով տուեն[3] [Ա.49ա] զմեծ փրկութիւնս[4] իրեանց կանխաւ հաւատով[5] մինչեւ յանկիւնս[6] սորին՝ քո աւրհնեալ նշանի եւ կենսատու խաչի[7]: Սա[8] է կամք Հաւր ի[9] հաճութիւն[10] փառաց եւ ելք բարձրութեան ընդ առաջ քեզ ի հանդիպումն[11], սորին նշանաւ խաչիւ պայծառացեալ լուսով քո[12], Քրիստոս Աստուա՛ծ, որ նստիսդ[13] ի[14] յերկինս երկնից, ի փառս հայրենիս, ընդ արեւելս[15] լինել մեզ առաջի քո զուարթատեսակ երեսաւք, որք ազատեցաք յունայնութենէ ապականութեան[16] եւ յազատութիւն փառաց փոխեցաք գալստեամբ քով[17]: Կեցո՛յ, Տէ՛ր, զժողովուրդս[18] քո եւ աւրհնեա զժառանգութիւն քո, եւ[19] հովուեա[20] աստուածային[21] նշանաւս քո յայսմ հետէ մինչեւ[22] յաւիտեան, զի դու ես Տէր[23], որ արարեր խաղաղութիւն ի[24] յերկինս եւ ի[25] յերկ[Բ.47ա]րի նշանաւ խաչի[26] քո. եւ քեզ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյդ[27] վայել են[28] փառք եւ երկրպագութիւն, պատիւ եւ իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւի[տեանս][29]:

Եւ[30] սարկաւագն քարոզէ[31]. *Խնդրեսցուք հաւատով եւ միաբանութեամբ ի Տեառնէ, զի զ.*[32]. Գ. Տէր ողորմեա[33]: Եւ առեալ սուրբ քահանայն զսուրբ միռոնն, կա առ ընթեր խաչին[34] եւ ասէ զաղաւթս[35].

---

[1] *Բ զսա եդիր պարծանս] զսայ ետուր մեզ պարծանս եւ յոյս*

[2] *Ա հաւատացելոց*

[3] *Ա տուեն քեզ*

[4] *Ա զփրկութիւն] զմեծ փրկութիւնս*

[5] *Բ > հաւատով*

[6] *Ա յանգիւն*

[7] *Բ նշանաւս եւ կենսատու խաչիւս*

[8] *Ա սայ*

[9] *Ա > ի*

[10] *Ա հաճութեան*

[11] *Ա ~ ի հանդիպումն քեզ*

[12] *Ա > քո*

[13] *Ա նստիս*

[14] *Ա > ի*

[15] *Ա ~ ընդ արեւելս ի փառս հայրենիս*

[16] *Ա յունայնութեանց ապակ[ան]ութենէ*

[17] *Բ փառաց փրկաւետ գալստեանդ քո] փառաց փոխեցաք գալստեամբ քով*

[18] *Ա զժողովուրդ*

[19] *Ա > եւ*

[20] *Ա հովեայ*

[21] *Ա աստուածային*

[22] *Ա > քո յայսմ հետէ մինչեւ*

[23] *Ա աստուած] տէր*

[24] *Ա > ի*

[25] *Ա > ի*

[26] *Բ խաչիդ] նշանաւ խաչի*

[27] *Ա հոգոյն*

[28] *Ա է] են*

[29] *Բ եւ երկրպագութիւն, պատիւ եւ իշխանութիւն այժմ եւ միշտ] իշխանութիւն... եւ յաւի.*

[30] *Ա > եւ*

[31] *Ա ~ քարոզէ սարկաւագն*

[32] *Բ հաւատ] հաւատով եւ միաբանութեամբ ի տեառնէ զի զ.*

[33] *Բ ողորմէ*

[34] *Ա > եւ առեալ սուրբ քահանայն զսուրբ միւռոնն կա առ ընթեր խաչին*

[35] Բ.47ա լս. Ս. վ. Ամատունո՞ւ ձեռքով, մատիտով. «Այլ Մաշտոցք Հինն/// *օրհնեալ ես/// տէր աստուած ամենակալ.* տե՛ս 52 երես ապա այս»

ԻԸ. [1]* *Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած, արարիչ ամենայն արարածոց՝ երեւելեաց եւ աներեւութից, դու, Տէ՛ր, կանխա[Ա.49բ]գէտ ճշմարտութեամբ քով իսկ ապաւորեցեր զհրաշագործութիւն փայտին կենաց՝ յաւրինակ առ յապա եղելոցս. եւ ի ջուրցն հեղեղէ ապրեցուցեր զսիրելին քո զՆոյ, բազմահոյլ կենդանեաւք. ապաւինութեամբ զսորին հիւթով նաւապետեալ մարդասիրապես. որ եւ հանդերձեալ իսկ բերեր յինքեան զճշմարտութիւն յաւիտենից այսորիկ. քանզի խաչդ անուն յառաջ գոյր դատապարտութեան գործարան, իսկ այժմ՝ գործի կենաց, յորում տարածեալ զբազուկս կենդանարարս միածնի Որդոյ քո սիրելոյ՝ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, հրաւիրելով զմեզ ի մշտնջենաւոր բարութիւնսդ: Եւ այժմ, Տէ՛ր Աստուած մեր ողորմած, հայեա՛ց ի ծառայս քո եւ ի գործս ձեռաց քոց, ձգեա՛յ զաներեւոյթ աջ քո եւ աւրհնեա՛յ զխաչս զայս ի պահպանութիւն եւ ի փրկութիւն երկրպագուացս, ծածկեա՛ զմեզ ընդ հովանեաւ սորին յաղթող զաւրութեամբ եւ ապրեցո՛յ զմեզ յամենայն փորձութենէ թշնամոյն[2], զի յամենայնի գոհանալով փառաւորեսցուք [Ա.50ա] զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ ե[ւ յաւիտեանս]:*

ԻԹ. [3]* *Տէ՛ր Աստուած, դու պատուիրեր մեզ եւ ասացեր. Մի՛ երկիր պագանիցէք երկնի եւ մի՛ ամենայն զարդու նորա, եւ մի՛ երկրի եւ որ ի նմա, եւ մի՛ առնէք ձեզ Աստուածս ձեռագործս: Եւ արդ, մեք՝ ծառայքս քո եւ հաւատացեալքս ի քեզ, արարաք զխաչս զայս, ո՛չ եթէ ի նիւթ ինչ զսա պաշտելով եւ ո՛չ Աստուած զսա անուանելով, այլ արարաք զսա նշան սուրբ խաչի քո, յորոյ վերայ տարածեցեր զանարատ բազուկս քո՝ միածին Որդի Տէրդ մեր Յիսո՛ւս Քրիստոս: Եւ արդ, Տէ՛ր բարերար, ընկա՛լ զսա ի ձեռաց մերոց եւ աւրհնեա՛ եւ սրբեա՛ զսա՝ լինել արժանի կոչել աստուածային նշան եւ պատճառս երկրպագութեան՝ համագոյ իշխանութեանդ Հաւր:*

[*Ա.50ա*] Խաղաղութիւն ամեն[եցուն]. Աստուծոյ երկրպ[ագեսցուք][4].

Լ. [5]* *Փրկեցեր զմեզ, Տէ՛ր Աստուա՛ծ, ճշմարտութեամբ քո, որ շնորհեցեր երկիւղածաց քոց՝ նշան անպարտելի, զի ապրեսցին յերէսաց աղեղան եւ յորոգայթադիր թշնամոյն, վասն զի սա է փայտ*

---

[1] սա ըստ՝ *Ա*. *Բ* > այս աղօթքը

[2] *Ա թշնամո<ո>յն*

[3] սա ըստ՝ *Բ*. *Ա* > այս աղօթքը

[4] *Ա խաղաղութիւն. աստուծոյ երկրպա.*

[5] սա ըստ՝ *Ա*. *Բ* > այս աղօթքը

կենաց ամենայն հաւատացելոց քոց եւ աշտարակ հզաւր յերեսաց թշնամոյն, ճշմարիտ պատարագին որ մատեաւ ի հօտ անուշից քեզ Աստուծոյ՝ Հաւր բարերարի եւ մարդասիրի: Եւ այժմ աղաչեմ զքեզ՝ բազմագութ եւ ողորմած Աստուա՛ծ, առաքեա՛յ զշնոր[հս] ամենասուրբ Հոգոյ եւ աւրհնեա՛յ զխաչս զայս յաւիտենական աւրհնութեամբդ, որ ոչ անցանէ, պայծառացո՛յ եւ փառաւորեա՛յ զաւրհնութիւն սորա ի հերքումն հակառակորդ թշնամոյն եւ ի պարծանս հաւատացելոցս ի Քրիստոս, ի պահպանութիւն ամենայն քրիստոնէից, զի յամենայնի զոհանալ[ով] փառաւորես[ց]ուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւի[տեանս]:

[1]* Եւ առեալ քահանայն զսուրբ միւռոնն, կա ընթեր խաչին:

|*Ա.50բ*| Եւ ասէ զաղաւթս զայս.

ԼԱ.[2]* *Որ տարածեցեր զաշխարհաստեղծ եւ զանարատ բազուկս քո ի վերա փրկաւէտ խաչին. եւ հեղեր սուրբ զարիւն քո՝ կեցուցանել զվտանգեալսն ի ծառայութենէ մահու մեղաց, դու նոյն ինքն Տէր Աստուած մեր Յիսուս Քրիստո՛ս, առաքեա՛յ զշնորհս ամենազաւր եւ բարձրացեալ բազկի քո ի յիւղս յայս, զոր առեալ մեր ի շնորհատու պարգեւաց ամենազաւր Սուրբ Հոգոյն առատապես բաշխմամբ. զի հեղլով մեր զսա ի վերայ խաչիս այսորիկ. յանուն սուրբ Երրորդութեանդ. տացէ զզաւրութիւն ամենայաղթ սուրբ խաչին. ի պահպանութիւն անձանց մերոց եւ ի պատճառս երկրպագութեան սրբոյ եւ զիւգական Երրորդութեանդ՝ Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն այժմ եւ միշտ եւ յ[աւիտեանս]*[3]*:*

ԼԱ.ա[4]* |*Բ.47բ*| *Որ տարածեցեր զանարատ եւ զաշխահաստեղծ բազուկս քո ի վերա փրկաւէտ խաչին եւ հեղեր զսուրբ արիւնդ քո ի նմա՝ ապրեցուցանել զվտարանդեալքս ի ծառայութենէ մահու մեղաց. դու ինքնին Տէրդ մեր Յիսուս Քրիստոս, առաքեա՛ զշնորհս ամենազաւր բարձրացեալ բազկի քո, զոր առեալ մեր ի շնորհատու պարգեւաց ամենազաւր Սուրբ Հոգւոյդ առատապէս բաշխմամբ, զի հեղլով մեր զսա ի վերայ խաչիս այսորիկ յանուն սուրբ Երրորդութեանդ, առցէ զաւրութիւն ամենայաղթ սուրբ խաչի քո ի պահպանութիւն անձանց մերոց եւ ի պատճառ երկրպագութեանց եւ միասնական աստուածութեանդ՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ սրբոյ այժմ եւ միշտ:*

---

[1] սա ըստ՝ *Ա*. *Բ* > այս խրատը

[2] սա ըստ՝ *Ա*. *Բ* > այս աղօթքը

[3] այս աղօթքն ինչ-որ կերպ համեմատելի է յաջորդողի՝ Բ.47բ էջինի հետ, բայց այսպէս բերեցինք ճաշակ տալու համար

[4] սա ըստ՝ *Բ*. *Ա-ի* այս աղօթքը նախորդն է

Եւ ապա[1] տեառնագրէ սուրբ իւղովն նախ զայն խաչին եւ ապա զթեւսն չորեսին եւ զբունն. եւ ասէ Գ. անգամ. Աւրհնութիւն եւ փառք[2]: Եւ ապա ասէ[3]. *Աւրհնե[ս]ցի. աւծցի եւ սրբե[ս]ցի խաչս այս յանուն Քրիստոսի Աստուծոյ մերոյ*[4]*:*

Եւ ապա թագ կապէ եւ[5] ասէ զաղաւթս զայս[6].

ԼԲ. |*Բ.48ա*| *Տէ՛ր զաւրութեանց, Քրիստո՛ս փրկիչ մեր.* Դարձեալ ասէ[7]. *Դի՛ր զարարչական զձեռն քո, զոր* |*Ա.51ա*| *տարածեցեր ի վերայ*[8] *սորին նշանի խաչիս*[9]*. եւ*[10] *աւրհնեա՛ զխաչս*[11] *զայս ի պահպանութիւն ամենայն հաւատացելոց*[12] *քոց*[13] *այժմ եւ հանապազ յաւիտեանս. ամէն*[14]: Դարձեալ ասէ[15]. *Դի՛ր, Տէ՛ր, զամենասուրբ*[16] *ձեռն քո ի վերայ նշանի խաչիս այսորիկ*[17] *եւ աւրհնեա՛ եւ տո՛ւր յաղթանակ փրկեալ*[18] *ժողովրդեան քո այժմ եւ միշտ եւ յաւիտեանս:* Դարձեալ ասէ այսպէս[19]. *Ձգեա՛, Տէ՛ր, զկենդանագործող*[20] *եւ զբարձրացեալ աջ քո, զոր սփռեցեր ի վերայ*[21] *սորին զաւրացեալ աջոյ քո եւ կենսատու խաչիս եւ արարեր զանքննին մեծութիւն*[22]*: Աւրհնեա՛ զխաչս*[23] *զայս եւ տո՛ւր պահապան խոստովանողացս ամենասուրբ Երրորդութեանդ վահան*[24] *ամրութեան՝ չիջուցանել զամենայն նետս մուխս չարին*[25] *ընդդիմամարտ թշնամոյն, զի քո է զաւրութիւն*[26] *եւ փառք յաւիտեանս. ամէն:*

Դարձեալ[27] այս կանոն կատարի. սաղմոս Ղ.Զ. [6]. *Պատմեցեն երկինք զարդարութիւն նորա*[28]*,* կցուրդ. [Ղ.Է. 3] *Տեսին ամենայ[ն] ծագ երկրի*[1]:

---

[1] *Բ > ապա*

[2] *Ա > եւ զբունն եւ ասէ .գ. անգամ. աւրհնութիւն եւ փառք*

[3] *Ա եւ ի տեառնագրելն ասէ] եւ ապա ասէ*

[4] *Ա հաւր եւ որդոյ եւ սրբոյ հոգոյն] քրիստոսի աստուծոյ մերոյ*

[5] *Ա > թագ կապէ եւ*

[6] *Բ զ.] զայս*

[7] *Ա > դարձեալ ասէ*

[8] *Բ վերա*

[9] *Բ խաչին*

[10] *Յ > եւ*

[11] *Ա աւրհնեայ ըզխաչս*

[12] *Բ հաւատելոց*

[13] *Բ > քոց*

[14] *Ա > այժմ եւ հանապազ յաւիտեանս. ամէն*

[15] *Ա եւ դնէ զաջն ի վերայ խաչին] դարձեալ ասէ*

[16] *Ա զսուրբ] զամենասուրբ*

[17] *Բ խաչիս] նշանի խաչիս այսորիկ*

[18] *Ա > փրկեալ*

[19] *Բ > դարձեալ ասէ այսպէս*

[20] *Ա ձգեայ տէր զկենագործող*

[21] *Ա վերա*

[22] *Ա նշանիս եւ] աջոյ քո եւ կենսատու... մեծութիւն*

[23] *Բ զխաչ*

[24] *Ա եւ վահան*

[25] *Ա > չարին*

[26] *Ա տէրութիւն] զաւրութիւն*

[27] *Ա եւ ապա] դարձեալ*

[28] *Բ > պատմեցեն երկինք զարդարութիւն նորա*

53. |*B.48բ*| **ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ԾՆՆԴՈՑ** [ԻԸ. 10-19]. *«Եւ ել Յակովբ*[2] *ի Ջրհորոյ անտի*[3] *երդման*[4] *եւ գնաց ի Խառան.* 11 *եւ եհաս*[5] *ի տեղի մի, եւ ննջեաց*[6] *անդ*[7], *քանզի*[8] *արեւն ի մուտս էր: Եւ առ ի քարանց տեղւոյն*[9] *եւ եդ ընդ սնարս իւր, եւ ննջեաց ի տեղւոջն*[10] *յայնմիկ*[11]: 12 *Եւ եսես տեսիլ.* |*Ա.51բ*| *եւ ահա սանդուղխք*[12] *հաստատեալ կայր ի*[13] *յերկրի, որոյ գլուխն*[14] *հասանէր ի*[15] *յերկինս, եւ Հրեշտակք*[16] *Աստուծոյ ելանեին*[17] *եւ իջանեին ընդ նա,* 13 *եւ Տէր հաստատեալ կայր ի նմա: Եւ ասէ. «Ես եմ Աստուած*[18] *Աբրահամու Հաւր քո*[19], *եւ Աստուած Իսահակայ*[20], *մի երկնչիր. զի տեղիդ*[21] *յորում դու*[22] *ննջեսցես*[23], *քեզ տաց*[24] *զդա*[25] *եւ զաւակի քում.* 14 *եւ եղիցի զաւակ քո իբրեւ զաւազ երկրի*[26] *եւ ընդարձակեսցի ի*[27] *ծովակողմն եւ ընդ Հիւսիսի, եւ ընդ Հարաւ*[28] *եւ ընդ արեւելս*[29], *եւ աւրհնեսցին*[30] *ի զաւակի*[31] *քում ամենայն ազգք*[32] *երկրի*[33]: 15 *Եւ ես աւասիկ*[34] *ընդ քեզ եմ ի*[35] *պահել զքեզ*[36] *յամենայն ճանապարհս քո, յոր*[37] *եւ երթիցես*[38], *եւ դարձուցից զքեզ յերկիրս յայս, եւ*[39] *ոչ թողից զքեզ մինչեւ արարից զամենայն զոր*[1] |*B.49ա*| *խաւսեցայ*[2] *ընդ քեզ:* 16 *Եւ զարթուցեալ*[3] *Յակովբ*[4] *ի քնոյ անտի*[5] *խորհէ*[6] *եւ ասէ. Տէր է ի տեղւոջս*[7] *յայսմիկ, եւ ես ոչ գիտէի.* 17 *զահի Հարաւ եւ ասէ. Ահեղ իմն է տեսիլս*[8] *այս*[9], *եւ ոչ է սա եթէ ոչ տուն Աստուծոյ, եւ այս*[10] *դուռն երկնից:* 18 *Եւ*[11] *յարեաւ Յակովբ*[12] *ընդ առաւաւտն եւ առ զվէմն զոր եդ ընդ սնարս*[13], *եւ կացնեաց զնա արձան*[14] *եւ արկ իւղ*[15] *ի գլո*|*Ա.52ա*|*ւխ նորա:* 19 *Եւ կոչեաց Յակովբ*[16] *զանուն տեղոյն*[17] *այնորիկ Տուն Աստուծոյ» մինչեւ ցայսաւր*[18]*»:*

54. **ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՑԵԼԻՑ**[19] [Լ.Է. 17-24]. *«Եւ արար Բեսելիէլ*[20] *զաշտանակն լուսոյ ձոյլ*[21] *ոսկի գրունն*[22] *եւ զստեղունսն յերկուցունց կողմանցն*[23] *նորա*[24] *եւ ըստ*[25] *տեղանցն չառաւեղք*[26] *ընտրեալ*[27] *ի միմեանց*[28] *երեք*[29] *ի միոջէն եւ երեք*[30] *ի միւսմէն*[31] *Հաւասարք*[32] *միմեանց, եւ զլուսակալս*[33] *նոցա, որ են*[34] *ի ծայրսն*[35] *ընկուզազարդս անդստին*[36] *ընտրեալ*[37]*: Եւ զբազմակալսն*[38], *որ է*[39] *ի նոսա*[40], *զի իցեն ճրագունքն*[41] *ի վերայ նոցա, եւ զբազմակալսն զեւթներորդ*[42], *որ ի գլուխ լուսակալին եւ*[43] *ի վերայ բուն իսկ գլխ*|*B.49բ*|*ոյն ի վե-*

---

[1] Ա > կցուրդ. տեսին ամենայ[ն] ծագ երկրի: Սղմ. Ղ.Զ. 6. Պատմեցին երկինք զարդարութիւն նորա. տեսին ամենայն ժողովուրդք զփառս նորա: շփոթած ընդ սմա՝ Սղմ. Ղ.Է. 3. տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ
[2] Ս յակոբ
[3] Ա անդի
[4] B երդմանն
[5] Ս հասեալ
[6] Ա նջեաց
[7] B անտ
[8] Ա զի
[9] Ա տեղոյն, B տեղւոյն այնորիկ
[10] Ա նջեաց ի տեղոջն
[11] Ս յայնմ
[12] Ա սանդուխք, Ս սանդուղք
[13] Ա > հաստատեալ կայր ի, Ս > կայր ի
[14] Ս գլուխ իւր
[15] Ա > ի, Ս մինչեւ] ի
[16] Ա Հրշտակք
[17] Ա զի ելանէին
[18] Ս տէր աստուած
[19] B > Հաւր քո
[20] B սահակա
[21] Ա երկիրդ, Ս զերկիրդ] տեղիդ
[22] Ս դուդ
[23] B ննջեսցեր
[24] Ա տայց
[25] B > զդա
[26] Ա ծովու] երկրի
[27] Ա ընդարձակեսցին ընդ] ընդարձակեսցի ի
[28] B > եւ ընդ Հիւսիսի, եւ ընդ Հարաւ
[29] Ս ~ ընդ արեւելս. եւ ընդ Հիւսիսի եւ ընդ Հարաւ
[30] Ա աւրհնեսցի
[31] B զաւակէ
[32] Ա ազգ
[33] Ս աւրհնեսցին ի քեզ ամենայն ազգք երկրի՝ եւ ի զաւակի քում] աւրհնեսցին… երկրի
[34] Ա ահաւասիկ ես] ես աւասիկ, Ս ահաւասիկ
[35] Ս > ի
[36] Ա > ի պահել զքեզ
[37] Ա տեղիս ուր] ճանապարհս քո, յոր
[38] Ս գնասցես] երթիցես
[39] Ս զի] եւ

---

[1] Ս ինչ զոր. B զոր միանգ|B.49ա|ամ
[2] Ա խաւսեցա
[3] Ս զարթեաւ
[4] ԱՍ յակոբ
[5] B անդի
[6] Ա > խորհէ
[7] Ա տեղոջս
[8] Ս տեղիս] տեսիլս
[9] B > զահի Հարաւ եւ ասէ. Ահեղ իմն է տեսիլս այս
[10] Ա սայ է] այս, Ս այս է
[11] Ա > եւ
[12] Ս յակոբ
[13] Ա սնարս իւր
[14] B յարձան
[15] Ս եւղ
[16] Ս յակոբ
[17] Ս տեղւոյն
[18] Ս > մինչեւ ցայսաւր, Ա ցայսաւր + ժամանակի
[19] B ի ծննդոց] յելից
[20] Ս > բեսելիել
[21] ԱՍ ձոյլ
[22] B զրուն
[23] Ս յերկոցունց կողմանց
[24] Ա ստեղունս նորա յերկուցունց կողմանց
[25] Ա > ըստ, Ս ի] ըստ
[26] B չաւեղք (Ա չառաւեղք), Ս չառաւիղք
[27] Ա ընդրեալ
[28] Ս առ միմեանս] ի միմեանց
[29] B երե///
[30] B երե///
[31] Ա միւսեն
[32] B Հաւա///արք
[33] Ա զլուսազարդս] զլուսակալս
[34] Ա են
[35] Ա ծայրս
[36] B անտստինս
[37] Ա ընդրեալս, Ս ընտրեալս, B ընտրեալ միմեանց
[38] Ա զբազմակալս
[39] Ս > որ է
[40] Ա նոցա ոսկիս] որ է ի նոսա
[41] Ա ճրագունք, Ս ճրագարանքն
[42] Ս զբազմակալն զեւթներորդ
[43] Ա > եւ, Ս որ] եւ

բուստ[1] ձոյգ[2] համակ ոսկի, եւ զեւթն ճրագունս[3], որ[4] ի վերայ[5] նորա[6] ոսկիս եւ զունկլիս[7] նորա ոսկիս եւ զարգարիչս[8] նորա ոսկիս յոսկւոյ[9] սրբոյ ճախարակեայ գործեաց զաշտանակն, զբունն եւ[10] զստեղունս նորա եւ զկահաձեւս[11], եւ զգնդակսն[12], եւ զշուշանսն[13] անդստինս[14] ի նմանէ[15] 18 վեց ստեղն արձակեալ[16] ի[17] կողմանց[18] նորա[19], |Ա.52բ| երեք ստեղունք արձակեալ[20] ի միջէ կողմանէ աշտանակին, եւ երեք ստեղունք յերկրորդ[21] կողմանէ աշտանակին: 19 Եւ երեք սկահաձեւք[22] ընկուզազարդք[23] յաւրինեալք ի միւսում ստեղանն[24], եւ գնդակք[25] եւ շուշանն[26] այսպէս վեցեցունց[27] ստեղանցն[28] արձակելոց[29] յաշտանակէ անտի[30]: 20 Եւ ի[31] բուն աշտանակին չորք սկահաձեւք[32] ընգուզազարդք յաւրինեալք[33] եւ գնդակք նորին. եւ շուշանն[34]. 21 եւ գնդակ մի ընդ երկու ստեղամբքն[35] անդստինս[36] ի նմանէն[37] վեցեցունց ստեղանցն արձակելոց ի նմանէ[38]: 22 Գնդակք[39] նոցա եւ ստեղունք իւրեանց[40] անդստինք[41] ի |Բ.50ա| նմին[42] բովանդակ[43] ճախարակեայ ի միջէ յոսկոյ[44] սրբոյ: 23 Եւ արար զճրագարանս նորա եւթն, եւ զունկլիս նորա եւթն[45], եւ զզարդարիչս[1] նորա[2] յոսկւոյ[3] սրբոյ: 24 Եւ[4] ի տաղանդէ միոյ ոսկւոյ[5] արար զնա եւ[6] զամենայն կահս[7] նորա»:

---

[1] Բ > ի վերուստ
[2] Մ ձողլ] ձոյգ
[3] Ա ճրագունսն, Մ ճրագարանսն
[4] Ա > որ
[5] Բ > վերայ
[6] Բ նոսա] նորա
[7] Բ զունկլիսն
[8] Ա զզարդարիչս, Մ զյարդարիչս
[9] Ա յոսկո
[10] Ա եւ զբունն եւ
[11] Մ զսկահաձեւսն
[12] Ա զգնդակս
[13] Ա զշուշանս նորա
[14] Մ անդստին
[15] Բ նմանէն
[16] Մ ստեղունք արձակեալք
[17] Ա > ի
[18] Բ կողմանէ
[19] Բ նորա եւ
[20] Բ > արձակեալ, Մ արձակեալք
[21] Ա երկրորդ
[22] Բ սկահաձեւս
[23] Բ ընգուզազարդք եւ
[24] Մ միում ստեղան] միւսում ստեղանն
[25] Բ գնդակս (Ա գնդակք), Մ գնդակ
[26] Բ շուշանս
[27] Բ վեցուցունց
[28] Բ ստեղացն
[29] Բ արձակելոց ի նոցանէն
[30] Ա անդի
[31] Ա > ի
[32] Բ չորս կահաձեւս
[33] Ա,Մ ընգուզազարդք (Մ ընկուզազարդք) յաւրինեալք, Բ ընգուզազարդս յաւրինեալս
[34] Ա գնդակ եւ շուշանք նորին, Մ շուշանք
[35] Ա երկուքումք ստեղամբք
[36] Մ անդստին
[37] Ա նմանէ, Մ ի նմին
[38] Բ > վեցեցունց ստեղանցն արձակելոց ի նմանէ
[39] Ա գնդակ, Բ եւ գնդակք
[40] Բ նոցայ] իւրեանց
[41] Ա անդստինս, Մ անդստին
[42] Ա նմանէ
[43] Ա բաւանդակ
[44] Ա յոսկո, Մ յոսկւոյ
[45] Մ > նորա եւթն

55. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի Բ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵՆԷՆ[8] [Գ. Թ-ք. Զ. 20-35].

«Եւ արար սեղան եղեւնափայտեայ[9], 21 եւ զրուագեաց[10] Սողոմոն[11] զտունն ի ներքուստ յոսկւոյ սրբով[12] եւ հաստատեաց ոսկի բեւեռաւք[13] հանդէպ |Ա.53ա| դաբիրայն. եւ պատեաց զնա ոսկւով[14], 22 եւ զամենայն տունն ած ոսկով[15] մինչեւ ի սպառ[16] ամենայն տանն[17] եւ ամենայն[18] ներքին կողմանն[19] դաբիրայն արար[20] թիթղունս ոսկիս: 23 Եւ արար ի[21] ներքոյ[22] ի[23] դաբիրայն[24] երկուս քերոբս[25] ի փայտից նոճից. ի տասն կանգնոյ[26] մեծութիւն միոյն կշռով, 24 եւ ի հինգ կանգնոյ թեւ մի նորին[27], եւ հինգ[28] կանգնոյ[29] թեւն երկրորդին[30], տասն կանգնոյ թեւ ի թեւ թեւոց նոցա[31]: 25 Նոյնպէս եւ[32] երկրորդ քերովբեին[33] միով չափով. ի[34] մի բովանդակութիւն[35] քրովբեիցն. 26 եւ բարձրութիւն միոյ |Բ.50բ| քրովբեին[36] ի[37] տասն կանգնոյ[38], նոյնպէս եւ երկրորդ[39] քրովբեին[40]: 27 Եւ եդ զերկոսին[41] քերովբէսն[42] ի մէջ տանն ներքնոյ[43] եւ տարածեաց զթեւս նոցա, եւ

---

[1] Ա զզարդարիչս. Բ ըզարդարիչս. Մ զյարդարիչս
[2] Ա ~ զզարդարիչս նորա եւ զունկլիս նորա (> եւթն)
[3] Ա յոսկոյ
[4] Մ > եւ
[5] Ա ոսկոյ, Մ ոսկւոյ սրբոյ
[6] Բ > զնա եւ
[7] Ա կահ, Մ զկահ
[8] Բ չորրորդ թագ.] .բ. թագաւորութենէն
[9] Ա եղեւնափայտէ
[10] Բ զրուակեաց
[11] Մ սողոմոն
[12] Ա ոսկով սրբով, Մ ոսկւով զըտով, Բ սրբոյ զտունն
[13] Ա բեւեռովք
[14] Մ ոսկւով
[15] Մ ոսկւով
[16] Ա սպառուած
[17] Բ տունն
[18] Բ յամենայն
[19] Ա տան] կողմանն, Մ կողման
[20] Ա եւ արար
[21] Ա > ի
[22] Ա ներքո, Մ ներքս
[23] Ա > ի
[24] Մ դարբին
[25] Մ քերովբէս
[26] Ա կանգնո
[27] Մ նորա] նորին
[28] Մ ի հինգ
[29] Բ > թեւ մի նորին, եւ հինգ կանգնոյ
[30] Բ երկրորդ եւ, Մ երկրորդ
[31] Բ թեւէ ի թեւս նորա (Ա թեւ ի թեւ թեւոց նոցա9, Մ թեւէ ի թեւ թեւոց նորա
[32] Ա > եւ
[33] Բ քերոբին երկրորդի (Ա երկրորդ քերովբեին), Մ երկրորդի քերոբէին
[34] Ա եւ] ի, Մ > ի
[35] Ա բաւանդակութիւն
[36] Ա քերովբեին, Մ քրովբէի
[37] Բ > ի
[38] Բ կանգնաւ
[39] Մ երկրորդի
[40] Ա քերովբեին, Մ քրոբէին
[41] Բ զերկուս
[42] Մ քերոբէսն
[43] Բ ներքոյ

Հաստանէր թեւ միոյն յորմն[1], և երկրորդին[2] յորմն[3] երկրորդ, և թեւք նոցա[4] Հաստանէին[5] ի մէջ տանն[6] թեւէ ի թեւ[7], 28 և պատեաց զքերոբէսն ոսկւով[8], 29 և զամենայն որմս[9] տանն շուրջանակի քանդակեալ գրեաց գրչաւ[10] քերոբէս[11] և արմաւենիս դրաւշածս[12] Հայեկիս ի ներքնագոյնն[13] և յար|Ա.53բ|տաքինն[14], 30 և զյատակս[15] տանն դրուագեաց[16] ոսկւով ներքոյ և արտաքոյ[17]: 31 Եւ դրաց դաբիրայն[18] արար դրունս[19] ի փայտից գիոց[20], և սեամս[21] Հնգկինս[22], 32 և երկուս[23] դրունս ի փայտից մայրից. և[24] բանդակս ի նոցանէ[25] մածուցեալս քերովբէս[26] և արմաւենիս. և թիթեղունս թուցեալս և պատեաց[27] ոսկւով[28]. և իջանէր ի վերայ քերովբէիցն[29] և արմաւենեացն ոսկին[30]: 33 Այսպէս[31] արար և[32] դրաց տաճարին սեամս[33] ի փայտից գիոց. չորեքկինս. 34 և երկուցունց[34] դրացն[35] փայտս մայրս[36] |Բ.51ա| երկրացիկս մի մի[37] դուռն. և ծղխնիք[38] նոցա[39] յերկրացիկ[40]: 35 Եւ դուռնն[41] երկրորդ շուրջանակաւ և դրաւշեալս ի նա քերոբս[42] և արմաւենիս, և թուցեալ թիթեղունս, և պատեաց[43] ոսկւով իջանելով[1] ի վերայ[2] յարթնուածոյն[3]»:

56. Ի ԳԱՂԱՏԱՑՈՑ[4] ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ[5] [Զ. 14-18]. «Այղ[6] ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ[7] ի խաչ ելեալ է, և ես՝ աշխարհի. 15 զի ոչ թղփատութիւն[8] ինչ է, և ոչ անթղփատութիւն[9], այղ[10] նոր արարած[11], և որ միանգամ այսմ կանոնի[12] միաբան |Ա.54ա| լինին, խաղաղութիւն ի վերայ[13] նոցա, և ողորմութիւն ի վերայ[14] Իսրայելին[15] Աստուծոյ: 17 Այսու հետեւ աշխատ ոք զիս մի[16] արասցէ. զի ես զչարչարանս[17] Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ: 18 Շնորհք Տեառն մերո Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում, եղբար՛ք, ամէն»:

[18]* Ա ալելու. սաղմոս Դ·[19] [7]· Նշանեցաւ առ մեզ լ[ոյս]:

[20]* Աղեղուիա. սաղմոս Ղ.Է· [1]· Աւրհնեցէք զՏէր յաւրհնու[թիւն նոր]:

57. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ[21] ՄԱԹԷՈՍԻ [ԻԴ· 29-36]. Տէր մեր Յիսուս ասէ[22] «վաղվաղակի|Բ.51բ|ի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և զաւրութիւնք երկնից շարժեսցին[23]: 30 Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ[24] մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին[25] ամենայն ազգք երկրի, և տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ[26] ի վերայ ամպոց[27] երկնից զաւրութեամբ և փառաւք բազմաւք: 31 Եւ առաքեսցէ զհրեշտակս[28] իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն[29] զընտրեալս[30] նորա ի չորից հողմոց՝ ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս նո-

---

[1] Ա. յորմնն
[2] Ս և Հաստանէր թեւ քրոբէին երկրորդի] և երկրորդին
[3] Բ > և երկրորդին յորմն
[4] Ս նոցա ի մէջ տանն
[5] Բ Հաստանեին
[6] Բ > ի մէջ տանն
[7] Ա. թեւ ի թեւի
[8] Ա. զքերովբեսն ոսկով
[9] Բ որմ
[10] Ա. > գրչաւ
[11] ԱՍ քերոբս
[12] Բ գրոշմածս և (Ա. դրաւշածս), Ս և դրաւշածս
[13] Բ ներքնագոյնս (Ա. ներքնագոյնն), Ս ներքսագոյնն
[14] Բ յարտաքինս
[15] Բ յատակս (Ա. զյատակս), Ս զատակ
[16] Ա. դրուագրեաց, Բ դրուակեաց, Ս դրուագեաց
[17] Ա. ոսկով ներքս և արտաքս, Ս զներքնոյն և զարտաքնոյն
[18] Ա. դաբիրային
[19] Ս դուրս
[20] Ս գիոյ
[21] Ա. սեմս
[22] Բ Հինգկինս
[23] Բ երկու
[24] Ա. > և
[25] Ա. նոստ
[26] ԱՍ քերոբս
[27] Բ պատեաց զնոստ
[28] Ա. ոսկով
[29] Ս քրոբէիցն
[30] Ա. արմաւենեաց ոսկի
[31] Ա. նոյնպէս, Ս այնպէս] այսպէս
[32] Ս > և
[33] Ա. սեմս
[34] Ա. երկուցուն, Ս երկոցունց
[35] Ս դրանցն
[36] Ա. մայրս և
[37] Բ ի մի] մի մի
[38] Ա. ծխղնիկս, Ս ծխնիք
[39] Ա. > նոցա
[40] Ա. երկրացիկս, Ս երկրացիկք
[41] Ա. դրունս, Ս դուռն
[42] Բ շուրջանակի գրոշմեալ ի նմա քերոբէս (Ա. շուրջանակաւ և դրաւշեալս ի նա քերոբս), Ս շրջանակաւ՝ դրաւշեալ ի նմա քերոբս
[43] Ս պատեալ

[1] Ա. ոսկով իջելով
[2] Բ վերա
[3] Ա. յարթնուածին
[4] Բ զաղատացւ.
[5] Բ պաւղոս] պաւղոսի առաքել
[6] Ա. այլ. Ս այլ վայ ինձ
[7] Ա. աշխարհս
[8] Ս թլփատութիւն
[9] Ս անթլփատութիւն
[10] ԱՍ այլ
[11] Ս արարածս
[12] Ա. կանոնիս
[13] Բ վերա
[14] Բ վերա
[15] Ս իսրայէլին
[16] Ա. ~ զիս մի ոք
[17] Բ զչարչարանսն
[18] սա ըստ՝ Ա. Բ > այս խրատը
[19] Յ .գ.] .դ.
[20] սա ըստ՝ Բ. Ա > այս խրատը
[21] Բ > ըստ
[22] Ս > տէր մեր յիսուս ասէ
[23] Ա > վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն... զաւրութիւնք երկնից շարժեսցին (29 համարը)
[24] Ա. որդո
[25] Բ կործանեսցին
[26] Ա. > եկեալ
[27] Ա. ամբոց
[28] Ս զհրեշտակս
[29] Բ ժողովեսցէ
[30] Ա. զընդրեալս

ցա: 32 Ի թզենոյ[1] անտի ուսարուք զառակն[2], զի յորժամ նորա ոստքն կակղասցին, եւ տերեւն ցցուեսցի[3], գիտէք թէ[4] մերձ է ամառն: 33 Նոյնպէս եւ դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ[5] գիտասջիք եթէ[6] մերձ է ի դուրս: 34 Ամէն ասեմ ձեզ[7] ոչ անցցէ ազգս այս մինչեւ այս ամենայն եղիցի: 35 Երկինք եւ երկիր անցցեն, |Ա.54բ| եւ բանք իմ մի[8] անցցեն: 36 Բայց վասն աւուրն |Բ.52ա| այնորիկ եւ ժամուն[9] ո՛չ ոք գիտէ. ո՛չ հրշտակք[10] երկնից եւ ոչ Որդի, բայց միայն Հայր»[11]:

ԼԳ. [12]* Քարոզէ սարկաւագն.

Եւ եւս գոհացարուք զամենակեցոյց գեղատեսն Որդոյն Աստուծոյ, որ կամաւքն իւրովք յանձն էառ զչարչարանս խաչի եւ փրկեաց զմեզ ի մահուանէ՝ հեղմամբ արեամբն իւրով ամենակալ Տէր. ԺԲ. Տէր ողորմ[եա]:

Եւ ասէ զաղաւթս զայս.

ԼԴ. [13]* *Տէր Աստուած զաւրութեանց եւ արարիչ ամենայն լինելութեան, որ զվիրաւորեալ եւ զապականեալ մարդն ի թիւնաւոր գազանէն ո՛չ անտես արարեր, այլ առ անբաւ գութ արարչական սիրոյ քո առաքեցեր զէակից Բանդ Աստուած՝ զմիածին Որդի քո, ի նորոգումն նախաստեղծին քո, եւ եկեալ էառ զկերպարանս նորա ի մարքական արգանդ կուսին, եւ բեւեռեալ ի փրկաւետ փայտին, սպան զթշնամութիւն ի յանձին իւրում, եւ շնորհեաց ամենայն հաւատացելոց իւրոց կրել ի յինքեանս զնշան ամենայաղթ սուրբ խաչին, ըստ ասացելոյ հոգեպատմին, էթե ետուր երկիւղածաց քոց նշան [Սղմ. ԾԹ. 6], զոր եւ ինքն իսկ արտաՍրեաց յաւետաբեր քարոզութեանն՝ հետեւեցելոցն զկնի իւր, աստուածագրոշմ նշանաւ, էթէ առցէ զխաչ |Ա.55ա| իւր եւ եկեսցէ զկնի իմ [Մտթ. ԺԶ. 24. Ղկ. Թ. 23], եւ ետ իշխանութիւն կոխել զաւձս եւ զկարիճս, եւ զամենայն զաւրութիւն թշնամոյն [Ղկ. Ժ. 19]: Եւ արդ, Տէ՛ր բարերար, Աստուա՛ծ ամենակալ, լո՛ւր աղաչանաց ծառայից քոց եւ արա՛ առ մեզ զնշան բարութեան, եւ արա՛յ առ մեզ յաղթանակ զաւրութիւն սուրբ խաչին՝ ի տպաւորութիւն նորաձեւութեանս այսորիկ, զի հանգիցէ ի սմայ նմին իշխանական զաւրութիւն եւ պահպանութիւն յուսացելոց քոց. շնորհաւք ողորմութեամբ միածնի քո, Տեառն մերոյ եւ փրկչիդ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հաւր եւ Սուրբ Հոգւոյդ փառք, իշխ[անութիւն]:*

[1]* Եւ քարոզէ սարկ. *Վասն ուղղելոյ զգ[նացս].* Եւ ասէ զաղաւթս զայս.

ԼԵ. [2]* *Աւրհնեալ ես, Տէ՛ր ամենակալ, երեւելեաց եւ աներեւոյթից: Դու, Տէ՛ր, կանխագէտ ճշմարտութեամբդ քո ի սկզբանց իսկ տպաւորեցեր զհրաշագործութիւն փայտին կենաց՝ յաւրինակ առ յապա եղելոցս ի ջրոցն հեղեղեաց ապրեցուցանել զսիրելին քո զՆոյ, բազմահոյլ կենդանեաւքն, ապաւինութեամբ նորին հիւթովս, նաւապետեալ մարդասիրապէս, որ եւ հանդերձեալ իսկ բերէր յինքեան զճշմարտութիւնն յաւիտենիս այսորիկ, քանզի խաչդ անուն յառաջ դատապարտութեան գործարան, իսկ այժմ կենաց բաշխող, յորում տարածեալ զբազուկս իւր կենդանարար միածին Որդին եւ սիրելի Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ հրաւիրեաց զմեզ ի մշտնջենաւոր բարութիւնս: Եւ այժմ, Տէ՛ր Աստուած մեր |Բ.52բ| ողորմած, հայեա՛ց ի ծառայս քո եւ ի գործ ձեռաց քոց, եւ ձգեա՛ց զաներեւոյթ աջ քո, եւ աւրհնեա՛ զխաչս զայս ի պահպանութիւն եւ ի փրկութիւն երկրպագուաց քոց եւ ծածկեա՛ զմեզ ընդ սորին յաղթող զաւրութեամբ եւ ապրեցո՛յ յամենայն փորձութեանց թշնամւոյն, զի յամենայնի գոհութեամբ փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՀոգիդ Սուրբ, այժմ:*

Խաղաղութիւն Աստուծոյ երկր[պագեսցուք][3].

ԼԶ. *Աղաչեմք[4] զքեզ, միածին Որդի[5] Աստուծոյ, ի գթութիւն[6] Հաւր եւ ի գթութիւն Հոգւոյդ[7] սրբոյ, արա[8] արժանի զնշան սուրբ խաչիս[9] աւրհնութեան քում[10], սրբեա[11] ամենազաւր աջովդ քո* [12]* *եւ շնորհեա՛յ ամե-*

---

[1] *Ա թզենո, Մ թզենւոյ*
[2] *Ա զառակ*
[3] *Մ ցցուեցի*
[4] *Բ գիտասջիք, եթէ*
[5] *Մ > եղեալ*
[6] *Մ թէ*
[7] *Մ ձեզ եթէ*
[8] *Ա ոչ] մի*
[9] *Մ ժամու*
[10] *Մ հրեշտակք*
[11] *Ա > Բայց վասն աւուրն... միայն Հայր* (36 համարը)
[12] սա ըստ՝ *Ա. Բ* > այս խրատը

[13] սա ըստ՝ *Ա. Բ* > այս աղօթքը

[1] սա ըստ՝ *Բ. Ա* > այս խրատը
[2] սա ըստ՝ *Բ. Ա* > այս աղօթքը

[3] *Ա երկրպագե.*
[4] *Ա աղաչեմ*
[5] *Ա զմիածինդ] զքեզ, միածին որդի՛*
[6] *Ա գթութիւնս*
[7] *Ա հոգւոյդ*
[8] *Ա արա զայս*
[9] *Ա > զնշան սուրբ խաչիս*
[10] *Ա քո եւ] քում*
[11] *Ա սրբեայ*
[12] *Ա զնշան սուրբ խաչիս, զի եղիցի սայ բերդ ամուր եւ աշտարակ հզաւր, զի հալածեսցուք ընդ յաղթող զաւրութեամբ ամենակուռ զինուս այսորիկ, եւ սորին զաւրութեամբ ամրացեալ փրկեսցուք ընդ առաջ քո ի յաւուր, |Ա.55բ| յարութենական յանդիմանական ուրախութեանց, ընդ ամենայն սուրբս քո, փառաւորեալ առաջի սորա զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին ա[մէն]] եւ*

նոյն հաւատացելոց քոց ապաւորել յանձինս իւրեանց զնշան ամենայաղթող սուրբ խաչիս ըստ ասացելոյ հոգէպատումն մարգարէին, եթէ «Ետուր երկիւղածաց քոց նշան» [Սղ. ԾԹ. 6], *զոր եւ դու իսկ արտաբերեալ յաւետարանի քարոզութեանց հետեւելոյն զկնի աստուածաբարոզ նշանիդ, եթէ* [Բ.53ա] *«Առցէ զխաչ իւր եւ եկեսցէ զհետ իմ»* [Մտ. ԺԶ. 24. Ղկ. Թ. 23], *եւ ետուր «իշխանութիւն կոխել զաւձս եւ զկարիճս եւ զամենայն զզաւրութիւնս թշնամւոյն»* [Ղկ. Ժ. 19]: *Եւ արդ, արա՛ զսա բերդ ամուր եւ աշտարակ հզաւր, զի հովանացեալքս ընդ սորին զաւրութեամբն ամրակուռ զինուս այսորիկ աներկիւղ լիցուք ի կեանս յայսոսիկ եւ սորին զաւրութեամբս ամպաչուելով վերացուք յաւդս* [Ա.55բ] *եւ յարատեւելով յանդրուական ուրախութիւնն, ընդ ամենայն սուրբս քո, եւ փառաւորեսցուք առաջի սորայ զանփոփոխելի տէրութիւնդ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտ[եանս]:*

Եւ ապա[1] երկրպագութիւն մատուցանելով համբուրեն կարգաւ ըստ պատուի[2], եւ միաբանութեամբ պաշտեն զնուագս զայս եւ ասեն[3].

ԼԷ. *Խաչի քում[4]. Քրիստոս, երկիր պագանեմք եւ զթաղումն քո մեծացուցանեմք. սուրբ զյարութիւնդ[5] քո փառաւորեմք: Եկայք ամենեքեան երկրպագեսցուք[6] Քրիստոսի Աստուծոյ[7]. վասն զի եկն ի ձեռն խաչի իւրոյ[8]. շնորհեաց պարգեւս աշխարհի. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ[9]:*

Զայս երիցս[10] անգամ ասեն սաղմոսիւք[11] եւ փառս տալով պաշտեն՝ մինչեւ ամենեքեան համբուրեն: Եւ ապա[12] քարոզէ սարկաւագն[13]. *Սուրբ* [Բ.53բ] *խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի փ[ասաւք]*. Գ. Տէր ողորմ[եա][14]:

Եւ ապա[15] ասէ զաղաւթս զայս.

ԼԸ. [16]* *Գոհանամք եւ փառաւորեմք զքեզ, Քրիստո՛ս փրկիչ մեր, որ զերկնաւոր եւ զաստուածային շնորհս եւ զողորմութիւն քո պարգեւեցեր հաւատացեալ ժողովրդեան քո այսու աստուածական նշանաւս, յոր եկեր եւ պարգեւեցեր զփրկութիւն աշխարհի, եւ ետուր զսայ սուսեր հոգեւորական՝ ի սպանումն մեղաց եւ ի մահ ընդդիմամարտին, եւ հաղորդս արարեր զաւրութեան շնորհի, աւրհնել սովաւ եւ դրոշմել* [Ա.56ա] *զամենայն ինչ որ մեր յանուն քո, որով պայծառացեալ նշանեցաւ առ մեզ լոյս փառաց քոց, որով յիշեցեն եւ դարձ[ց]ին առ քեզ ամենայն ծագք երկրի: Աւրհնեալ Քրիստո՛ս փրկիչ մեր, յո՛յս եւ ապաւէն եւ զաւրութիւն, եւ աւգնական ի նեղութեան, որք պաշտեալ պահեն զմեզ ի սուսերք մահու. Տէ՛ր զաւրութեանց ընդ մեզ Աստուած, ծածկեա՛ զմեզ ընդ հովանի թեւոյ աստուածային նշանի քո, յոր յուսացուցեր զմեզ, եւ ծագեցեր ի մեզ զհոգեւոր գիտութիւն շնորհիս այսորիկ, եւ ետուր զսա պսակ բարձրութեան եկեղեցւոյ քում սրբոյ եւ աղբեւր բարեաց՝ սնուցանել եւ աճեցուցանել զմանկունս ուխտի սրբութեան քո, զոր հաղորդս արարեր ուրախութեան, եւ մարմնո եւ արեամբ քո պատարագեալ ի վերայ խաչին, արարեր խաղաղութիւն յերկինս եւ ի յերկրի, ընդ որս եւ զմեզ արժանացուցես կենսաբեր շնորհի քո, խաչիւ քով յաւիտենական կենացդ, ընդ ամենայն սուրբս քո, որք խաչակիր պարծանաւք* [Ա.56բ] *կնքեցին զճանապարհս իւրեանց ի քեզ, Քրիստոս Աստուա՛ծ մեր, ընդ որում Հաւր եւ Հոգւոյդ Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ ե[ւ յաւիտեանս]:*

[1]* Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպա[գեսցուք].

ԼԹ. *Տէ՛ր Աստուած, արարիչ ամենայն արարածոց, դու ես Աստուած յերկինս ի վեր եւ յերկիր ի խոնարհ, զքեզ խոստովանիմք եւ քեզ[2] փառաւորեմք, քեզ երկիր պագանեմք եւ աղաչեմք. պարգեւեա[3] զշնորհս Հոգւոյդ[4] Սրբոյ նշանիս[5], զոր կանգնեցաք յանուն քո սուրբ[6], տո՛ւր զսա[7] պահապան հոգւոց[8] եւ մարմնոց մերոց: Ամենայն՝ որ հաւատայցէ[9] ի խաչ ելեալ Որդիտ[10] քո եւ երկիր պագանիցէ[11] նշանիս այսորիկ՝ զոր կանգնեցաք[12] յանուն քո, եւ խնդրեսցէ զիրաւունս եւ զարդա-*

շնորհեա՛յ ամենայն հաւատացելոց... այժմ եւ միշտ եւ յաւիտ[եան]

[1] Բ > ապա

[2] Բ պատուով ըստ արժանի] կարգաւ ըստ պատուի

[3] Ա. ասելով] զայս եւ ասեն

[4] Ա. քո

[5] Ա. զյարութիւնս

[6] Ա. երկրպագեցուք

[7] Ա. սուրբ խաչին] աստուծոյ

[8] Ա. իւրում

[9] Ա. > սուրբ աստուած, սուրբ եւ հզաւր, սուրբ անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ

[10] Ա. .գ.] երիցս

[11] Ա. ասելով սաղմոսիւ

[12] Ա. > ապա

[13] Բ > սարկաւագն

[14] Բ > զտէր զի փ., .գ. տէր ողորմ.

[15] Ա. > եւ ապա

[16] սա ըստ՝ Ա. Բ > այս աղօթքը

[1] սա ըստ՝ Ա. Բ > այս խրատը

[2] Ա. զքեզ] եւ քեզ

[3] Ա. պարգեւեայ

[4] Ա. հոգւոյտ

[5] Ա. ի նշանս

[6] Ա. > սուրբ

[7] Ա. զսայ

[8] Ա. հոգւոց

[9] Ա. հաւատասցէ

[10] Ա. որդի

[11] Ա. պագցէ

[12] Բ > զոր կանգնեցաք

րութիւն, դու, Տէ՛ր[1], լուիցես նոցա[2] եւ ողորմեսցիս եւ շնորհեսցես զհայցուածս նոցա: Եւ որք անսցեն զսա[3] ի հեռաստանէ եւ կնքեսցեն զինքեանս նշանաւս[4] քո, աւգնեսցես նոցա յամենայն նեղութիւնս նոցա, եւ եթէ թշնամիք հասանիցեն[5] ի վերայ[6] ուրուք, եւ եթէ նեղիցին[7] յայսոց պղծոց եւ ապաւինիցին[8] ի սա[9], դու, Տէ՛ր, աւգ|Ա.57ա|նեսցես եւ փրկեսցես զնոսա |Բ.54ա|, եւ որք ունիցին ցաւս ի[10] պէսպէս ախտից, եւ կայցեն յաղաւթս առաջի նշանիս[11] այսորիկ, դու լուիցես եւ աւգնեսցես նոցա: Եւ յորժամ մահ ածիցես ի վերայ մարդկան, եւ գայցեն եւ աղաչիցեն զքեզ առաջի նշանիս այսորիկ, դու[12] ներեսցես եւ կեցուսցես զնոսա: Պատկառեսցէ ի սմանէ[13] սատակիչն, որպէս ի տեսլեանն Եզեկիելի[14] եւ որպէս արեամբն գրացն[15] յԵգիպտոս. եւ եթէ շարժեսցեն[16] ամպք բարկութեամբ կարկտի[17] կամ հողմք խորշակի, կամ սառն եղեամն ածին զառնութեան[18] կամ ժանգ կամ մարախ կամ թրթուր[19] եւ ամենայն հրաման ցասման, եւ գայցեն եւ աղաչեսցեն[20] առաջի նշանի խաչիս[21] քո, դու[22] լուիցես եւ ողորմեսցիս[23] եւ քաւիցես[24] եւ անցուցես զցասումն պատուհասի քո, եւ զխաչնամահս[25] եւ զամենայն ախտս անասնոց բուժեսցես[26] եւ ամենայն[27] պատահար[28] շարժմանց[29] հրոյ եւ ջրոյ, տացես[30] մեզ զնշան սուրբ[31] խաչի քո աւգնական[32] եւ պահապան: Յիշեսցես եւ զարարող սորա եւ զոր-

---

[1] *Ա. > տէր*
[2] *Ա. > նոցա*
[3] *Ա. զսայ*
[4] *Ա. նշանաւ խաչիւ*
[5] *Ա. յարձակեսցին] հասանիցեն*
[6] *Բ վերա*
[7] *Ա. ոք նեղեսցի*
[8] *Ա. ապաւինիցի*
[9] *Ա. սայ*
[10] *Ա. > ի*
[11] *Ա. խաչիս] նշանիս*
[12] *Բ > աւգնեսցես նոցա: եւ յորժամ մահ ածիցես ի վերայ մարդկան, եւ գայցեն եւ աղաչիցեն զքեզ առաջի նշանիս այսորիկ, դու*
[13] *Ա. նմանէ] սմանէ*
[14] *Ա. տեսլեննեն եզեկիելէ*
[15] *Ա. յաւծեալ գրաց նորա] արեամբն գրացն*
[16] *Ա. եթէ շարժեսցին*
[17] *Բ > կարկտի*
[18] *Ա. ~ եղեամն սառնամանածին բարկութեան] սառն եղեամն ածին զառնութեան*
[19] *Ա. եւ ժանգ եւ մարախ եւ թրթուր] կամ ժանգ կամ մարախ կամ թրթուր*
[20] *Ա. աղաչեսցեն զքեզ*
[21] *Ա. խաչի] նշանի խաչիս*
[22] *Ա. եւ դու*
[23] *Ա. > եւ ողորմեսցիս*
[24] *Ա. քաւեսցես*
[25] *Ա. զխաչնամահ*
[26] *Ա. բժշկեսցես*
[27] *Ա. զամենայն*
[28] *Ա. պատահարս*
[29] *Ա. > շարժմանց*
[30] *Ա. եւ տացես*
[31] *Ա. > սուրբ*
[32] *Ա. յաղթանակ] աւգնական*

մես|Ա.57բ|ցիս նմա[1]: Եւ ես աղաչեմ զքեզ, Տէ՛ր բարերար[2], մի՛ յանարժանութիւնս |Բ.54բ| իմ հայելով արգելցես[3] զշնորհս Հոգւոյդ[4] Սրբոյ եւ զամենակարող զաւրութիւնդ քո[5] ի նշանէս յայսմանէ, այդ[6] ըստ մեծի ողորմութեանդ քո[7] զթացիր[8] ի ժողովուրդս քո եւ կատարեա՛ զաղաւթս աղաչանաց սոցա եւ արժանաւորեա՛ զմեզ յամենայն ժամ փառս տալ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն[9]:

ԺԲ.[10]/[ԺԴ.[11]] |Բ.70ա| ԿԱՆՈՆ ՏԵԱՌՆԱԿԱՆ[12] ԱՒՐՀՆԵԼՈՅ

Ածեն զխոստացեալն ի դուռն եկեղեցւոյն[13] եւ առաջի խաչին, եւ[14] դնեն կարմիր բամբակ, եւ կարմիր ճանդերձ արկանեն ի վերայ. այդ[15] մատուցանեն զանարատն եւ մի ակամայս[16] ինչ, զի ընդունելի լիցի Աստուծոյ, եւ առ[17] դրան եկեղեցւոյն[18] ասեն սաղմոսք Դ. ի թիւ[19] ԼԱ· [1]· *Երանի որում թողութիւն եղեւ*[20]: ԼԳ· [2]· *Աւրհնեցից*[21] *զՏէր յամենայն ժամ*[22]. Ծ· [1]· *Ողորմեա*[23] *ինձ Աստուած ըստ մեծի ող[որմութեան]*[24], ԿԳ· [2]· *Քեզ վայել է, Աստուա՛ծ, աւրհնութիւն.* զգոբողայն ի բուն, եւ[25] քարոզէ սարկաւագն[26]. *Խնդրես-*

---

[1] *Ա. սորա] նմա*
[2] *Ա. > եւ ես աղաչեմ զքեզ, տէ՛ր բարերար*
[3] *Ա. արգելցուս*
[4] *Ա. հոգւոյդ*
[5] *Ա. > եւ զամենակարող զաւրութիւնդ քո*
[6] *Ա. այլ*
[7] *Ա. > ըստ մեծի ողորմութեանդ քո*
[8] *Ա. գթա*
[9] *Ա. եւ աւրհնեայ զծառայս քո, ընդալ զաղաւթս եւ զաղաչանս մեր եւ արա՛ արժանի փառաւորել զՀայր եւ զորդի եւ զսուրբ հոգին այժ.] եւ կատարեա զաղաւթս... յաւիտեանս. ամէն*

[10] *Ա.57բ, 58ա, 59ա, 60ա, 61ա* ստ. լս.՝ *«տեառնական»*
[11] *Բ.71ա, 72ա, 73ա, 74ա, 75ա* ստ. լս.՝ *«տեառնական»*
[12] *Ց տէրունական*
[13] *Ա. եկեղեցոյն*
[14] *Ա. > եւ*
[15] *Ա. կարմիր եւ բամբակ եւ ծածկեն կարմիր հանդերձիւք, բայց] կարմիր բամբակ... արկանեն ի վերայ, այդ*
[16] *Բ ակամայց*
[17] *Ա. ի] առ*
[18] *Ա. եկեղեցոյն*
[19] *Ա. ի թիւ .դ.] .դ. ի թիւ*
[20] *Ա. > եղեւ*
[21] *Ա. աւրհնեցի, Ց աւրհնեցից*
[22] *Ա. յա.] յամենայն ժամ*
[23] *Ա. ողորմեայ, Ց ողորմեա*
[24] *Ա. ը.] ըստ մեծի ող[որմութեան]*
[25] *Ա. > .կգ. քեզ վայել է, աստուա՛ծ, աւրհնութիւն զգոբողայն ի բուն, եւ*
[26] *Բ քարոզ] քարոզե սարկաւագն*

ցուք[1] *հաւատով եւ մխ[իթարութեամբ]*[2], եւ ազնուութիւն եւ փառս[3] հանեն[4], եւ դարձեալ[5] այս կանոն կատարի. սաղմոս *Ժ·Թ·* [4]· կցուրդ *Յիշեսցէ*[6] *Տէր զամենայն պատարագս*[7].

58. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅՂԵՒՏԱԿԱՆԷ[8] [Ա· 1-13].

«Եւ կոչեաց Տէր զՄովսէս[9] *եւ խաւսեցաւ ընդ նմա ի խորանէ անդի*[10] *վկայութեան*[11], *եւ ասէ. Խաւսեա՛ց*[12] *դու ընդ որդիսն*[13] *Իսրայելի*[14] *եւ ասասցես ընդ նոսա*[15]. 2 *Այր ոք ի ձէնջ եթէ*[16] *մատուցանիցէ պատարագ Տեառն ի խաշանց, յարջառոց*[17] *կամ յոչխարաց*[18] *մատուցանիցէք զպատար|Ա.58ա|ագս*[19] *ձեր:* 3 *Եթէ*[20] *ողջակեզ իցէ պատարագն, որ*[21] *յարջառոց*[22] *անարատ մատուցանիցէ արու*[23] *առ դուռն*[24] *խորան|Բ.70ր|ին վկայութեան*[25] *ածցէ*[26] *զնա յընդունելութիւն*[27] *ի նմանէ*[28] *առ ի բաւելոյ առաջի Տեառն:* 4 *Եւ դիցէ զձեռն իւր ի վերայ գլխոյ ընծային*[29] *յընդունելութիւն*[30] *նմա. առ ի բաւելոյ վասն անձին իւրոյ:* 5 *Եւ սպանցեն զզուարակն առաջի Տեառն. եւ մատուսցեն*[31] *քահանայքն որդիքն*[32] *Ահարովնի*[33] *զարիւնն եւ հեղցեն շուրջ զսեղանովն, որ կայցէ առ դրանն*[34] *խորանին վկայութեան*[35]*:* 6 *Եւ մորթեսցեն զողջակէզն*[36]*. եւ անդամ անդամ յաւշեսցեն զնա:* 7 *Եւ դիցեն որդիքն Ահարովնի քահանայքն*[37] *հուր ի վերայ*[38] *սեղանոյն*[39]*, եւ կուտեսցեն փայտ ի վերայ հրոյն: Եւ դիցեն որդիքն Ահարովնի քահանայքն*[40] 8 *զանդամաւթին*[1] *եւ զգլուխն եւ զճարպն ի վերա փայտին, որ կայցէ ի*[2] *վերայ հրոյն ի սեղանի*[3] *անդ*[4]*:* 9 *Եւ զփորոտին եւ զոտսն լուասցեն*[5] *ջրով. եւ դիցեն քահանայքն զամենայն*[6] *ի վերայ սեղանոյն*[7]*, զի ողջակէզ զոհի է ի հոտ անուշից Տեառն:* 10 *Ապա եթե յոչխարաց*[8] *իցէ պատարագն |Բ.71ա| Տեառն՝ ի գառանց |Ա.58բ| եւ*[9] *յուլուց յողջակէզ*[10] *արու անարատ մատուցանէ*[11] *զնա*[12]*:* 11 *Եւ դիցէ զձեռն*[13] *իւր ի վերայ*[14] *գլխոյ նորա. եւ սպանցեն*[15] *զնա ի կողմանց*[16] *սեղանոյն*[17] *ընդ հիւսիւսի*[18] *առաջի Տեառն. եւ հեղցեն զարիւնն*[19] *նորա*[20] *որդիքն Ահարովնի*[21] *քահանայքն շուրջ*[22] *զսեղանովն:* 12 *Եւ յաւշեսցեն զնա անդամ անդամ. եւ զգլուխն*[23] *նորա*[24] *եւ զճարպն. եւ դիցեն զայն*[25] *քահանայքն ի վերայ փայտին եւ հրոյն*[26]*, որ ի վերայ սեղանոյն*[27] *իցէ:* 13 *Եւ զփորոտին եւ զոտսն*[28] *լուասցեն ջրով. եւ մատու[ս]ցէ քահանայն*[29] *զամենայնն*[30]*, եւ դիցէ*[31] *ի վերայ սեղանոյն*[32]*, զի ողջակէզ զոհի է*[33] *ի հոտ անուշից Տեառն»:*

59. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՒ[ՈՐՈՒԹԵԱՆՑ[34]. Զ· 17-19].

«Եւ մատոյց Դաւիթ ողջակէզս եւ խաղաղականս առաջի Տեառն[35]*:* 18 *Եւ*[36] *իբրեւ դադարեաց*[37] *Դաւիթ ի մատուցանելոյ*[38] *զողջակէզն*[39] *եւ զխաղաղականս*[40]*, աւրհնեաց*[41] *զժողովուրդն յանուն Տեառն զաւ-*

---

[1] *Ա խնդրեցուք*
[2] *Բ > եւ մխ.*
[3] *Բ փառք*
[4] *Ա > հանեն*
[5] *Ա ապա] եւ դարձեալ*
[6] *Բ յիշեցէ*
[7] *Ա պատար.*
[8] *Ա ի ղեւտացոց*
[9] *Ա ~ զմովսէս տէր*
[10] *Մ անտի*
[11] *Ա խորանին վկաութեան] խորանէ անդի վկայութեան*
[12] *Բ խաւսեա*
[13] *Ա յորդիսն] ընդ որդիսն*
[14] *Մ իսրայէլի*
[15] *Ա ցնոսա, Մ զդոսա] ընդ նոսա*
[16] *Ա էթէ*
[17] *Ա արջառոց*
[18] *Մ յոչխարէ*
[19] *Բ զպատարագն*
[20] *Ա եւ եթե*
[21] *Ա ձեր, Մ նորա] որ*
[22] *Բ յարջառոցն*
[23] *Բ ~ արու անարատ մատուցէ*
[24] *Մ դուրս*
[25] *Ա վկաութեան*
[26] *Բ ածցեն*
[27] *Ա ընդունելութիւն*
[28] *Բ նմա] ի նմանէ*
[29] *Ա գլոյ ընծային] գլխոյ ընծային*
[30] *Ա ընդունելութիւն*
[31] *Բ մատուցանեն*
[32] *Ա > քահանայքն որդիքն*
[33] *Մ ահարոնի*
[34] *Ա դուռն, Մ դրան*
[35] *Ա վկաութեան*
[36] *Բ զողջակէզնն*
[37] *Բ ~ քահանայքն որդիքն Ահարովնի, Մ ահարոնի*
[38] *Ա վերա*
[39] *Բ սեղանւոյն*
[40] *Բ ~ քահանայքն որդիքն ահարովնի*

---

[1] *Ա զանդամաթիւան, Բ զանդամաթին, Մ զանդամաթիւն*
[2] *Ա > ի*
[3] *Մ ի է սեղանն, Ա սեղան*
[4] *Մ > անդ*
[5] *Ա լուանայցեն*
[6] *Ա զամենայնն*
[7] *Բ սեղանւոյն*
[8] *Բ ոչխար*
[9] *Բ > եւ*
[10] *Բ ուլուց ողջակէզ*
[11] *Ա մատուցանիցէ*
[12] *Բ զպատարագն տեառն] զնա*
[13] *Բ զձեռս*
[14] *Ա վերա*
[15] *Բ զենցեն] սպանցեն*
[16] *Ա կողմանէ*
[17] *Բ սեղանւոյն*
[18] *Ա հիւսիսի*
[19] *Ա զարիւն*
[20] *Մ > նորա*
[21] *Մ ահարոնի*
[22] *Բ զ շուրջ*
[23] *Ա զգլուխ*
[24] *Բ > նորա*
[25] *Մ դիցեն] եւ դիցեն զայն, Ա զայս*
[26] *Մ հրոյ*
[27] *Բ սեղանւոյն*
[28] *Ա զոտս*
[29] *Ա մատուցէ քահանայն, Բ մատուցանեն քահանայքն, Մ մատուցէ քահանայն*
[30] *Մ զամենայն*
[31] *Բ դիցեն*
[32] *Բ սեղանւոյն*
[33] *Ա եւ] է*
[34] *Ա .բ. թագաւորութեան*
[35] *Մ ~ առաջի տեառն եւ խաղաղականս*
[36] *Ա եւ եղեւ*
[37] *Մ կատարեաց] դադարեաց*
[38] *Մ մատուցանել] ի մատուցանելոյ*
[39] *Ա զողջակէզս եւ զխաղաղականս առաջի տեառն, Մ զողջակէզսն եւ զխաղաղականս*
[40] *Բ > եւ զխաղաղականս*
[41] *Բ եւ աւրհնեաց*

բութեանց, 19 եւ բաշխեաց ամենայն ժողովրդեանն յամենայն զաւրութեանցն Իսրաելի[1] ի Դանա մինչեւ ց|Բ.71բ|Բերսաբեէ[2], յառնէ[3] մինչեւ զկին, իւրաքանչիւր ումեք բլիթ մի հաց[4], |Ա.59ա| եւ պատառ մի ի կասկարայից[5], եւ քանքար մի ի տապակէ. եւ գնաց ամենայն ժողովուրդն իւրաքանչիւր[6] ի[7] տուն իւր»:

60. [8]* ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Գ. ՅԵՍԱԵԱ ՄԱՐ[ԳԱՐԷԷ. ԾԶ. 6-8]. *«Եւ զամենեսեան որք պահեսցեն[9] զշաբաթս իմ եւ ոչ պղծեսցեն[10], եւ կալցեն յուխտի[11] իմում, 7 տարայց զնոսա ի լեառն սրբութեան իմոյ. եւ ուրախ արարից զնոսա ի տան աղաւթից իմոց: Ողջակէզք նոցա եւ պատարագք նոցա ի վերա սեղանոյ իմոյ ընդունելի լիցի[12], զի տուն իմ տուն աղաւթից կոչեսցի ամենայն հեթանոսաց, 8 ասէ Տէր[13]»:*

61. [14]* ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ՄԱՂԱՔԻԱՅ ՄԱՐԳ[ԱՐԷԷ. Ա. 6-12. 13-14]. *«Այսպէս ասէ Տէր[15]», 6 Որդի փառաւոր առնէ զհայր, եւ ծառայ երկնչի ի Տեառնէ իւրմէ: Իսկ արդ, եթէ Հայր կոչէք զիս[16], ո՞ւր է փառքն իմ. եւ եթէ Տէր եմ, ո՞ւր է պատիւն իմ[17]: Դուք քահանայք էք[18], որ բամբասէք զանուն իմ. եւ ասէք. Ի՞ւ բամբասէք[19] զանուն քո. 7 զի մատուցանիցէք ի սեղան իմ հաց պղծութեան. եւ ասէք[20]. Ի՞ւ պղծեցաք զնա[21] յասելն ձեր. եթէ[22] սեղան Տեառն արհամարհեալ է. եւ որ[23] ինչ դնի ի վերա նորայ արհամարհանք[24]: 8 Զի եթէ[25] մատուցանիցէք զկոյրն պատարագ՝ չէ[26] չար. եւ եթէ մատուցանիցէք զկաղն կամ զհիւանդն[27] չիցէ՞ ինչ[28]: Աղէ մատո՛յ[29] զնա իշխանին քում եւ տե՛ս[30] եթէ ընդունիցի՞ զնա[1], կամ եթէ[2] առնուցու՞ քեզ ակն, ասէ Տէր ամենակալ: |Բ.72ա| 9 Եւ այժմ աղաչեցէ՛ք զերեսս Տեառն[3] Աստուծոյ ձերոյ եւ հաշտեցուցէք զնա, զի[4] ի ձեռաց ձերոց եղեւ այդ. զի[5] եթէ առից ինչ ի ձէնջ ակնառութեամբ[6]: 10 Զի եւ ձեզ դրունք փակեսցին, եւ մերձենայք ի սեղան իմ վայրապար. զի ոչ են կամք իմ ի ձեզ, ասէ Տէր ամենակալ. եւ զպատարագս ոչ ընկալայց ի ձեռաց ձերոց: 11 Զի յարեւելից մինչեւ ի մուտս արեւու փառաւորեսցի[7] անուն իմ ի մէջ ազգաց բազմաց[8], եւ ընդ ամենայն[9] տեղիս մատչին խունկք անուան իմոյ եւ պատարագ սուրբ, զի մեծ է անուն իմ ի հեթանոսս, ասէ Տէր ամենակալ, 12 եւ դուք, պղծէք[10] զնա[11]: 13 Եթէ մատուցանիցէք ինձ զյափշտակեալն[12] եւ զկաղն եւ զվտիտն[13] պատարագ, եթէ ընկալա՞յց ինչ[14] ի ձեռաց ձերոց[15]: 14 Անիծեալ իցէ մարդ[16], որ կարող իցէ եւ կայցէ խաշինս[17] նորա որձ, եւ ուխտի[18] յանձին իւրում եւ մատուցանիցէ Տեառն զարատաւորն, զի թագաւոր յաղթող[19] եմ ես, ասէ Տէր[20], եւ անուն իմ |Բ.72բ| երեւելի ի մէջ ազգաց»:*

62. [21]* ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈ Ի ԿԱԹՈՂԻԿԵԻՑ ԹՂ[ԹՈՅՆ. Եբր. ԺԳ. 10-16]. *«Ունիմք մեք սեղան, ուստի ոչ ունին իշխանութիւն ճաշակել՝ որք պաշտեն զպաշտաւն խորանին: 11 Զի որոց անասնոցն[22] մատչեր արիւնն ի սրբութիւնսն՝ վասն մեղաց ի ձեռն քահանայպետին[23], նոցուն մարմինքն[24] այրեին արտաքո[25] բանակին: 12 Վասն որոյ եւ Յիսուս՝ զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն. արտաքո[26] դրանն չարչա-*

---

[1] *Ա զաւրութեանց Իսրայեղի, Մ զաւրութեան Իսրայէլի*

[2] *Ա ցԲերսաբէ*

[3] *Ա ի յառնէ*

[4] *Բ հացի*

[5] *Բ կասկարաից*

[6] *Ա յիւրաքանչիւր, Մ իւրաքանչիւր ոք*

[7] *Ա > ի*

[8] սա ըստ՝ *Ա. Բ* > այս ընթերցուածը

[9] *Մ զամենայն ոյք պահիցեն] եւ զամենեսեան որք պահեսցեն*

[10] *Մ պղծիցեն*

[11] *յուխտին*

[12] *Մ ընդունելի եղիցին ի վերայ սեղանոյ իմոյ*

[13] *Մ ասաց տէր տէր*

[14] սա ըստ՝ *Բ. Ա* > այս ընթերցուածը

[15] *Մ > այսպէս ասէ տէր*

[16] *Մ եմ ես] կոչէք զիս*

[17] *Մ իմ + ասէ տէր ամենակալ*

[18] *Մ > էք*

[19] *Մ բամբասեցաք*

[20] *Մ ասացէք*

[21] *Մ զնոսա*

[22] *Մ թէ*

[23] *Մ զոր*

[24] *Մ > արհամարհանք*

[25] *Մ թէ*

[26] *Մ ի պատարագ՝ չիցէ՞] պատարագ՝ չէ*

[27] *Մ զհիւանդոտն*

[28] *Մ չար] ինչ*

[29] *Մ մատո*

[30] *Մ > եւ տես*

[1] *Մ զքեզ] զնա*

[2] *Մ թէ*

[3] *Մ > տեառն*

[4] *Մ > զի*

[5] *Մ > զի*

[6] *Մ ակնառութեամբ + ասէ տէր ամենակալ*

[7] *Մ փառաւորեալ է*

[8] *Մ > բազմաց*

[9] *Մ յամենայն] եւ ընդ ամենայն*

[10] *Մ պղծեցէք*

[11] *Մ զնա + յասելն ձեր՝ թէ սեղան տեառն պիղծ է, եւ կերակուրն որ դնի ի վերայ նորա՝ արհամարհեալ է. 13 եւ ասէիք՝ թէ այն յաշխատութենէ է: եւ փչեցից զայն արտաքս՝ ասէ տէր ամենակալ: եւ*

[12] *Մ յափշտակեալն*

[13] *Մ զվտիտս*

[14] *Մ զնոսա] ինչ*

[15] *Մ ձերոց + ասէ տէր ամենակալ*

[16] *Մ լիցի մարդն] իցէ մարդ*

[17] *Մ ի խաշին*

[18] *Մ ուխտ*

[19] *Մ յաղթաւղ*

[20] *Մ տէր ամենակալ*

[21] սխալ վերնագրով՝ սա է նոյնն ընդ Բ-ի ունեցած յաջորդ ընթուածի. սա միայն ըստ՝ Ա եւ Մ, ճաշակ տալու համար. յաջորդը՝ նոյնն է աստ ԱԲՄ

[22] *Մ անասնոց*

[23] *Մ քահանայապետին*

[24] *Մ մարմինք*

[25] *Մ արտաքոյ*

[26] *Մ արտաքոյ*

րեցաւ: 13 Արդ, եկայք ելցուք առ նա արտաքո[1] բանակին, առեալ յանձն զնախատինս նորա: Ա.59բ 14 Բանզի ոչ[2] ունիմք քաղաք որ աստէն մնայոց իցէ[3], այլ զհանդերձեալսն խնդրեմք: 15 Արդ, ի ձեռն նորա մատուցուք[4] պատարագ ուրհնութեան յամենայն ժամ Աստուծոյ. այսինքն[5] զպտուղ շրթանց խոստովանելոց յանուն նորա: 16 Զբարերարութիւն եւ զհաղորդութիւն մի՛ մոռանայք, զի ընդ այնպիսի պատարագ[6] Հաճի Աստուած»:

62ա. ՅԵԲՐԱՅԵՑԻՈՑ ԹՂԹԻ ՊԱՒՂՈՍԻ[7] [ԺԳ. 10-16]. «Ունիմք մեք սեղան, ուստի ոչ ունին իշխանութիւն ճաշակել՝ որք պաշտեն զպաշտաւն խորանին: 11 Զի որոց[8] անասնոցն մատչէր արիւնն ի սրբութիւնսն՝ վասն մեղաց ի ձեռն քահանայապետին[9] նոցուն[10] մարմինքն[11] այրեին արտաքոյ[12] բանակին: 12 Վասն որոյ եւ Յիսուս՝ զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն, արտաքոյ[13] դրանն չարչարեցաւ: 13 Արդ, եկայք ելցուք առ նա արտաքոյ[14] բանակին, առեալ յանձն[15] զնախատինս նորա: Ա.59բ 14 Բանզի ոչ եթէ[16] ունիմք քաղաք, որ աստէն մնայոց իցէ[17], այդ[18] զհանդերձեալսն խնդրեմք: 15 Արդ, ի ձեռն նորա մատու[ս]ցուք[19] պատարագ ուրհնութեան, յամենայն ժամ Աստուծոյ, այսինքն[20] զպտուղ շրթանց խոստովանելոց յանուն նորա: 16 Զբարերարութիւն եւ զհաղորդութիւն մի՛ մոռանայք, զի ընդ այնպիսի պատարագս Հաճի Աստուած»:

[21]* Ալելու. սաղմոս ԻԸ.[22] [1] Մատուցէ՛ք Տեառն, որդիք Աստուծոյ, մատուցէ՛[ք Տեառն զորդիս խոյոց]:

63. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ[23] [ԺԴ. 12-18]. «Ասէ Յիսուս[24] եւ[25] [Բ.73ա] ցկոչնատէրն. Յորժամ առնիցես[1] ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս քո, եւ մի՛ զեղբարս քո[2] եւ մի՛ զազգականս քո, եւ մի՛ զդրացիս քո[3], եւ մի՛ զմեծամեծս, զի մի՛ եւ նոքա փոխարէն[4] կոչեսցեն զքեզ, եւ լինիցի[5] քեզ հատուցումն: 13 Այդ[6] յորժամ առնիցես[7] ընդունելութիւն, կոչեա՛յ[8] զաղքատս եւ[9] զխեղս[10], զկաղս եւ զկոյրս, 14 եւ երանելի[11] լինիցիս[12], զի ոչ ունին փոխարէն[13] հատուցանել[14] քեզ, եւ հատուսցի քեզ փոխարէնս[15] ի[16] յարքայութեան[17] արդարոց: 15 Իբրեւ լուաւ զայս ոմն[18] ի բազմականացն, [Ա.60ա] ասէ ցնա[19]. Երանի որ կերիցէ հաց յարքայութեանն Աստուծոյ: [20]* 16 Եւ նա ասէ. Այր ոմն գործեաց ընթրիս, եւ հրաւիրեաց զբազումս, 17 եւ առաքեաց զծառայն իւր ի ժամու ընթրեացն՝ կոչել զհրաւիրեալսն, եթէ՝ Եկայք, զի ահաւասիկ պատրաստ է ամենայն ինչ: 18 Եւ սկսան մի ըստ միոջէ ամենեքեան հրաժարել»:

Եւ[21] քարոզէ սարկավագն. Վասն ի վերուստ խաղաղու[թեան][22]:

Եւ ասէ քահանայն[23] զաղոթս զայս[24].

խ. Ամենակալ Աստուա՛ծ, եւ[25] փառաւորեալ ի վերնոց[26] կարգապետութեանց եւ ի ստորնայնոց երկրպագեալ [Բ.73բ] Բանդ Աստուած, որ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն[27], որ[28] ի սկզբանցն[29] տպաւորեցեր զձեւ եւ զաւրինակ[30] առ ի[31] յապա եղելոցս, քանզի ստորանկեալ[32] մարդոյն ի բարեվայելուչ[33] դրախտէն եւ կամակոր եղեալ ի մեծապատիւ[34] փառացն խաբմամբ ինքնայաւժար խորամանկութեամբ[35] բանսարկուին, սակայն ի վերանալ[1] եւ ի բազմանալ մարդկան[2] ի վերայ երկրի հաճեցար մերոյս ազին[3] բարեպաշտին առ քեզ սեղանաւք[4] եւ պատարագաւք[5] որպէս մատուցանելն[6] Աբելի արդար կոչեցաւ[7]: Եւ Նոյ եկեալ ի տապանէն, մատոյց պատարագ եւ[8] հոտոտեալ ի հոտ անուշից[9] քեզ[10] Տեառն Աստուծոյ: Եւ Աբրահամ[11] մատուցանելով զճշմարիտ ողջակէզսն[12] զոխոյն փրկութեան[13], որ աւրինակէր զանապական զմահ քո ի խաչին: Եւ արդ, բարերար Տէր[14] Աստուա՛ծ մեր, աղաչեմք եւ մաղթեմք եւ[15] խնդրեմք |Ա.60բ| ի քէն. ընկա՛լ ողորմութեամբդ[16] քո զնուէրս զայս ի ձեռաց մերոց եւ[17] ի հաճութիւն ամենազաւր կամաց քոց[18], ընկա՛լ[19], Տէ՛ր Աստուած մեր, զնուէրս[20] խոստմանս մերոյ. |Բ.74ա| զոր ուխտեցաք[21] քեզ ի նեղութեան մերում[22], յորում աղաղակեցաք առ քեզ, եւ փրկեցեր զմեզ. ընկալ, բարեխնամող Աստուած, զպատարագս զայս, զոր համարձակեալ մատուցանեմք քեզ անկարաւտ փրկչիդ. որոյ անչափ եւ անհաս[23] է ողորմութիւն գթութեանդ քո[24]: Ընկա՛լ, անոխակա՛լ, եւ հաւատարեա՛յ ընդ երջանկացեալ սուրբ ընծայաբերութիւն նախահարցն սրբոց[25], զորս մերժեալ հեռացուցեր ի սուտապատիր զոհիցն եւ ի[26] հեթանոսական ճենճերացն, եւ ի[27] դիւական կռապաշտութեանցն, որ ի ձեռն սուրբ եւ[28] երանելի մարգարէին քո Մովսէսի հրամանատրեցեր ժողովրդեան քում Իսրայելի՝ մատուցանել քեզ պատարագ[29] հաւտից եւ յանդեաց[30] եւ յայլոց[31] անասնոց սրբոց, ածելով առ դուռն խորանին վկայութեան[32] առ քահանայն

---

[1] Ս արտաքոյ
[2] Ս ոչ եթէ
[3] Ս է] իցէ
[4] Ս մատուսցուք
[5] Ս այսինքն է
[6] Ս պատարագս
[7] Ա պետրոսի առաքելո ի կաթողիկէից թղ.] յեբրայեցւոց թղթի պաւղոսի
[8] Բ որ
[9] Ա քահանայապետին
[10] Բ նոցին
[11] Ս մարմինք
[12] Ա արտաքո

[13] Ա արտաքո
[14] Ա արտաքո
[15] Բ ի յանձն
[16] Ա > եթէ
[17] Ս է] իցէ
[18] ԱՍ այլ
[19] Ս մատուսցուք
[20] Ս այսինքն է
[21] Բ ալե. սաղ. իբ. մատուցէք
[22] Ա իբ.] իը.
[23] Բ ղուկա] ըստ ղուկասու
[24] Ս > յիսուս
[25] Ա ասէր մեր յիսուս եւ ասէ] ասէ յիսուս եւ

[1] Յ առնես
[2] Բ > մի՛ զեղբարս քո
[3] Բ > եւ մի՛ զդրացիս քո
[4] Ա փոխարէնս
[5] Ա լինիցի այն
[6] ԱՍ այլ
[7] Բ առնես
[8] Ս կոչեա
[9] Ա > եւ
[10] Բ զխեղս եւ
[11] Բ երանի
[12] Ա լիցիս
[13] Ա փոխարէնս
[14] Ս հատուցանելոյ
[15] Ս փոխարէն
[16] Բ այդ] եւ հատուսցի քեզ փոխարէնս ի
[17] Բ յարքայութեանն, Ս յարութեան
[18] Ա մի ոմն
[19] Ա > ցնա
[20] Ա > եւ նա ասէ... ամենեքեան հրաժարել (16-18 համարք)

[21] Ա > եւ
[22] Ա > խաղաղու.
[23] Բ > քահանայն
[24] Ա զ.] զայս
[25] Ա > եւ
[26] Ա վերնայնոց
[27] Ա հոգւոյն
[28] Ա > որ
[29] Ա սկզբանն
[30] Ա զյաւրինակ
[31] Ա > ի
[32] Ա ստորանգեալ
[33] Բ բարէվայելուչ
[34] Բ > մեծապատիւ
[35] Ա խորամանգութեան

---

[1] Ա. սերանալ (գրչի սխա՞լ)
[2] Ա. մարդկանն
[3] Ա. զմերոյս ազինս
[4] Ա. սեղանովք
[5] Ա. բարութեան] եւ պատարագաւք
[6] Ա. մատուցանելով
[7] Ա. արդարոյ] արդար կոչեցաւ
[8] Ա. > եւ
[9] Ա. անուշից
[10] Ա. > քեզ
[11] Ա. աբրահամու
[12] Ա. ողջակեզն
[13] Ա. փորձութեանն] զոխոյն փրկութեան
[14] Ա. > տէր
[15] Ա. մաղթանաւք հայցմամբ] մաղթեմք եւ
[16] Ա. ընգալ ողորմութեամբ
[17] Ա. > եւ
[18] Ա. կամացդ] կամաց քոց
[19] Ա. ընգալ
[20] Ա. զնուէր
[21] Ա. խոստացաք] ուխտեցաք
[22] Ա. մերոյ
[23] Ա. հաս] անհաս
[24] Ա. > քո
[25] Ա. մերոց] սրբոց
[26] Ա. > ի
[27] Ա. պղծութեան] եւ ի
[28] Ա. > սուրբ եւ
[29] Ա. պատարագս ի
[30] Ա. յաւդեաց] յանդեաց
[31] Ա. յայլոց
[32] Ա. վկաութեան

Ղեւտացին[1], դնելով ձեռն[2] ի վերա եւ հեղուլ[3] զարիւնն առ |Ա.61ա| սուրբ սեղան[4] քո, Տէ՛ր, որով յանցանքն քաւեին[5] եւ խնդրուածքն կատարեին[6]: Այդ այնու[7] ամեն|Բ.74բ|այնիւ աւրինակ էր[8] ստուեր[9] հանդերձելոցն ճշմարիտ փրկութեանս այսմ, որ շնորհեցաւ մեզ գալստեամբդ[10] քո յաշխարհս. քանզի դու նոյն ինքն[11] ամենաողորմ[12] բարերար Տէր, նախագուշակ հոգւովդ[13] քո ասացեր ի ձեռն մարգարէին[14]. Ոչ ընդունիմ ի տանէ քումմէ պարարումն զուարակաց[15], այդ[16] մատո՛յ պատարագ աւրհնութեան Աստուծոյ. եւ կամաւորական մտաւք զոհ անարիւն մատուցանել[17], զի է իսկ ստումն. Պատարագ Աստուծոյ հոգի մաշեալ եւ զսիրտ մաշեալ[18], եւ զհոգի խոնարհ[19] Աստուած ոչ արհամարհեաց[20], եւ[21] այժմ մեք՝ մեղուցեալքս եւ անարժանքս խոնարհեալ սրտիւք մերովք անկանիմք[22] առաջի անբաւ գթութեանդ[23] քո եւ աղերսեմք[24] զբազմագութ[25] մարդասիրութիւնդ[26] քո եւ զմեծ[27] զողորմութիւն քո, Տէ՛ր[28], եւ զանսուտ խոստմունս[29] քո, որ առ սիրելիսն[30] քո եւ հարսն[31] մեր: Խոնարհեա՛, Տէ՛ր յ[ը]նծայս մեր[32] եւ ընկա՛լ զսա[33] ի ձեռաց մերոց, որպէս զողջակէզս[34] խոյոց եւ[35] զուարակաց եւ իբրեւ զբեւրաւորս[36] գառանց |Ա.61բ| պարարտից. |Բ.75ա| շնորհեա՛ զխնդրուածս մեր, զի մի՛ եղիցուք ամաւթ թշնամեաց մերոց, այդ[37] ցնծալով ուրախասցուք[38] ի փրկու-

---

[1] Ա. ղեւտացիս
[2] Ա. զձեռն
[3] Ա. հեղլով
[4] Ա. սեղանով
[5] Ա. քաւէին
[6] Ա. կատարէին
[7] Ա. այլ այսու
[8] Ա. աւրինակեցեր] աւրինակաց էր
[9] Ա. զստուեր
[10] Ա. գալստեամբ
[11] Ա. ինքնին] նոյն ինքն
[12] Ա. ամենաողորմ եւ
[13] Ա. հոգովդ
[14] Ա. ~ ի ձեռն մարգարէին ասացեր
[15] Ա. ի զզուարակաց քոց պարարումն] ի տանէ քումմէ պարարումն զուարակաց
[16] Ա. այլ
[17] Ա. մատուցանել աստուծոյ
[18] Ա. > եւ զսիրտ մաշեալ
[19] Ա. խոնարհեալ
[20] Ա. արհամարհէ
[21] Ա. այլ] եւ
[22] Ա. անզանիմք
[23] Ա. գթութեան
[24] Ա. աղերս արկանեմք
[25] Ա. զբազում
[26] Ա. մարդասիրութիւն
[27] Ա. > զմեծ
[28] Ա. > քո, տէ՛ր
[29] Ա. խոստումն
[30] Ա. սիրելիս
[31] Ա. առ հարս] եւ հարսն
[32] Բ > խոնարհեա տէր յ[ը]նծայս մեր
[33] Ա. զսայ
[34] Ա. զողջակեզ
[35] Ա. > եւ
[36] Ա. զբեւրաւորս
[37] Ա. այլ
[38] Ա. ուրախ լիցուք

թեան քում, զի եթէ[1] զամենայն զլերինս[2] եւ զդաշտս կշռես յակնարկելդ[3] քում եւ զերկինս եւ զերկիր ի բռինդ ունիս[4], եւ նստիս[5] ի բարձրութիւնս բարձանց՝ ի քերովբէական աթոռ, եւ անդունդք չեն[6] քեզ աներեւոյթ, եւ ամենայն չորքոտանիք եւ ամենայն շնչաւորք չեն քեզ բաւական յողջակէզս. զիա՞րդ մեք առաջի քո իշխեմք համարձակել եւ մատուցանել քեզ[7] պատարագս, այդ[8] դու Տէր, որ վասն մեր հաճեցար[9] մարմնանալ եւ ուսուցեր մեզ[10] սրբուքն առաքելովքն[11] զամբիծ հաւատս, որ ի սուրբ Երրորդութիւնդ[12], որով եւ[13] արժանաւորեցեր զմեզ որդիս եւ եղբարս[14] անուանել անարատ մարմնոյ եւ արեան միածնի քո Աստուած Բանդ[15], նոյն ինքն եւ այժմ, մեծ եւ սքանչելագործ Տէր, ընկալ ի ձեռաց մերոց զնուէր զենմանս այսորիկ բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնիդ եւ ամենայնայաղթ |Բ.75ր|խաչի[16] քո զաւրութեամբ, որով հանապազ երկր|Ա.62ա|պագեմք[17] աղաչանաւք սրբոց առաքելոցն եւ մարգարէից[18] եւ ընդհանուր[19] սուրբ եւ երանելի վկայից քոց[20], որք զարիւնս իւրեանց փոխանակ արեան[21] քո հեղին, եւ պարգեւեա՛յ զհայցուածս մատուցողաց սորա եւ շնորհեա[22] զթողութիւն մեղաց կենդանեաց եւ ննջեցելոց[23]: Աճեցո՛յ զհաւատս եւ զանդեայս սոցա[24] եւ զամենայն ինչ եւ զստացուածս ծառայիս քո[25] այս անուն[26], քաղցրութեամբ հոսեա՛յ ցաւղ[27] յանդաստանս մեր: Պարգեւեա[28] երկրիս[29] մերում զցաւղ[30] շայեկանութեան[31], հալածեա՛ ի

---

[1] Ա էթէ
[2] Ա լերինս
[3] Ա յակն արկել
[4] Ա ունիս ի բռին] ի բռինդ ունիս
[5] Ա նստիս
[6] Ա ոչ են] չեն
[7] Ա > քեզ
[8] Ա այլ
[9] Ա ~ հաճեցար վասն մեր
[10] Ա > մեզ
[11] Ա սրբովք առաքելովք
[12] Բ հաւատսն, որ սուրբ Երրորդութիւնքդ
[13] Բ > եւ
տայ[1] ընդունի զկեանսն[2] յաւիտենականս: 48 Ես եմ հացն կենաց: 49 Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին եւ մեռան: 50 Այս է հացն, որ[3] յերկ|Բ.139բ|նից իջեալ է, եթե ոք[4] ուտիցէ ի սմանէ[5], մի՛ մեռանիցի[6]: 51 Ես եմ հացն կենդանի[7], որ ի[8] յերկնից իջեալ[9]: 52 Եթե ոք ուտիցէ ի հացէս[10] յայսմանէ[11] կեցցէ յաւիտեան[12], եւ հացն, զոր ես տաց[13] մարմին իմ է, զոր ես տաց[14] վասն կենաց աշխարհի[15]: 53 Մարտնչէին ընդ միմեանս հրեայքն եւ ասեին. Զիա՞րդ կարէ սա տալ մեզ[16] զմարմին իւր՝ ուտել[17]: 54 Ասէ ցնոսա Յիսուս[18]. Ամէն, ամէն ասեմ ձեզ. եթե ոչ կերիջիք զմարմին Որդւոյ[19] մարդոյ եւ արբջիք զարիւն նորա[20], ոչ ունիք կեանս յանձինս[21]: 55 Որ ուտէ |Ա.84ա| զմարմին իմ եւ ըմպէ[22] զարիւն իմ, ունի զկեանս[23] յաւիտենականս, եւ ես յարուցից զնա յաւուրն յետնումն[24]: 56 Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, եւ արիւն իմ՝ ճշմարիտ ըմպելի[25]: 57 Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ՝ յիս[26] բնակեսցէ, եւ ես՝ ի նա: 58 Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, եւ ես կենդանի եմ վասն Հաւր, եւ որ ուտէն[27] զիս, եւ նա կեցցէ վասն իմ: 59 Այս է հացն որ[28] յե|Բ.140ա|րկնից իջեալ. ոչ որպէս կերան հարքն ձեր[29] զմանանայն եւ մեռան, որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան»:

Եւ ապա ասեն[30] զՀաւատամն եւ զնորին աղաւթսն եւ զՀայր մեր որ յերկինս[31] եւ զնորին աղաւթքն[32] եւ ապա[33] ասե զՔրիստոս պատարագեալն եւ[34]. Ճաշակեցէ՛ք. եւ տա զփրկականն խորհուրդն:

---

[1] Ա հաւատա յիս
[2] Բ զկեանս
[3] Ա որ ի
[4] Ա զի ամենայն որ] եթե ոք
[5] Բ ի հացէս յայսմանէ] ի սմանէ, Ս ~ զի որ ուտիցէ ոք ի սմանէ] եթէ… սմանէ
[6] Բ մեռցի
[7] Ա այս է հացն] ես եմ հացն կենդանի
[8] Ս > ի
[9] Ա իջեալ է
[10] Ս հացէ
[11] Ա ի սմանէ] ի հացէս յայսմանէ
[12] Ս ի յաւիտեան
[13] Ա տայց
[14] Ա տայց
[15] Ա յաշխարհի
[16] Բ > մեզ
[17] Բ ուտել
[18] Ա > ասէ ցնոսա յիսուս
[19] Ա որդո
[20] Ա նորայ

[21] Ա յանձինս ձեր
[22] Բ ըմբէ
[23] Ա կեանս
[24] Բ յայտնումն (ԱՍ յետնումն)
[25] Ս ըմպելի է
[26] Ա նայ յիս
[27] Ա ուտեն
[28] Ա որ ի
[29] Ա ~ հարքն ձեր կերան
[30] Բ ասէ] ապա ասեն
[31] Ա ի յերկինսն
[32] Ա աղաւթսն
[33] Բ > ապա
[34] Բ եւ ասէ] եւ ապա ասե զքրիստոս պատարագեալն եւ

Եւ ասէ զաղաւթս զայս[1].

ՀԶ. Գոհանամք զքէն, Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արարեր զծառայս քո[2] երկնային[3] պարգեւացս այսոցիկ՝ հաղորդութեան[4] ճշմարիտ[5] մարմնոյ եւ անապական[6] արեան Տեառնդ[7] մերոյ Յիսուսի Քրիստոսի: Աղաչեմք զքեզ, Տէ՛ր, մի՛ լիցի սայ մեզ ի դատապարտութիւն յաղագս բազում[8] յանցանաց[9] մերոց, |Ա.84բ| այլ[10] շնորհեա՛ զսա[11] մեզ յառողջութիւն հոգւոյ[12] եւ մարմնոյ, եւ ի զգաստութիւն[13] խորհրդոց, եւ ի կատարումն ամենայն[14] գործոց բարեաց եւ ամենայն[15] առաքինութեան, որպէս զի սրբելով սա զմեր զշունչ եւ զհոգի եւ զմարմին, անուանեսցէ զմեզ լինել տաճար բնակութեան սրբոյ Երրորդութեանդ[16*] առ ի գտանել զողորմութիւն առաջի ահաւոր բեմի՝ մասն |Բ.140բ| ժառանգութեան Քրիստոսի Յիսուսի. Տերամբ մերով վայել է փառք իշխ[անութիւն][17]:

---

[1] Բ զաղաւ] զաղաւթս զայս
[2] Բ > արժանի արարեր զծառայս քո
[3] Ա երկնաւին, Բ զերկնային
[4] Ա հաղորդել
[5] Ա > ճշմարիտ
[6] Ա > անապական
[7] Ա տեառն
[8] Ա > բազում
[9] Բ յանցան
[10] Ա այլ
[11] Բ > զսա
[12] Ա հոգոյ
[13] Ա սգաստութիւն
[14] Ա > ամենայն
[15] Բ > բարեաց եւ ամենայն
[16] Ա սրբեալ սորա զմիտս եւ զխորհուրդս եւ զմարմինս, արասցէ զմեզ տաճար սրբոյ Երրորդութեանդ] սրբելով սա զմեր զշունչ... սրբոյ Երրորդութեանդ
[17] Ա քո այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից] ահաւոր բեմի... իշխանութիւն

ԻԲ.[1] [ԻԹ.[2]] [3*]ԿԱՆՈՆ ԶԱՄԵՆԱՅՆ ՆՆՋԵՑԵԱԼՍ ԹԱՂՄԱՄԲ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅՈՒՂԱՐԿԵԼՈՅ

[4*] Ասեն զորողայս Գ.՝ զկարգեալն. [ԻԴ. 1]. Առ քեզ, Տէ՛ր, համբարձի. [ԻԷ. 1]. Առ քեզ, Տ՛էր, կարդացի. Աստուա՛ծ իմ, [Լ. 2]. Ի քեզ, Տէ՛ր, յուսացա. աւրհնութիւն՝ Ես ասացի, սարկաւագն քարոզէ. Վասն ի վերուստ. Խ. Տէր ողորմեայ: Եւ ասէ զաղաւթս զայս.

[5*] Ասեն զորողայք Գ. սաղմոս[6]. [ԻԴ. 1]. Առ քեզ Տէր համբարձի. [ԻԷ. 1]. Առ քեզ Տէր կարդ[ացի]. [Լ. 2]. Ի քեզ Տէր յուսացա, [ԼԴ. 1]. Դատեա՛յ, [Տէ՛ր, զայնոսիկ ոյք զատեն զիս]: Ալէլու. Ես ասացի. Աւրհնու. Ճ. Տէր ողորմեա: Եւ ասէ զաղ[աւթս].

ՀԷ. Աստուած յաւիտենական, անսկզբն, անեղ, անիմանալի եւ[7] անհասանելի խորհուրդ, Հայր բարեխնամող, ծնաւղ[8] միածնի Որդւոյ[9] եւ արտաքս առաքող ի Սուրբ Հոգւոյդ[10], որ ի քէն ելանէ եւ լնու զամենայն արարածս: Դու, Տէ՛ր, կարող[11] զաւրութեամբդ[12] քո առեր[13] հող յերկրէ, |Ա.85ա| արարեր զմարդն եւ բնակեցուցեր զնա յանցաւ եւ յանախտ[14] եւ յանաշխատ ի կեանս անմահականս, աստուածագործ տնկոյն[15] վայելչութեան եւ պատուիրանադրութեամբ քո[16] զգեցուցեր[17] զնա[18] անամաւթ փառաւք ի դրախտին փափկութեան, սակայն չարին խանդացեալ[19] ընդ մեծութիւն փառաց[20] պատուի նորա, զոր ի քումմէ բարերարութենէդ ընդալեալ[21] էր[22], եւ պա|Բ.141ա|տրեալ զնա յաղագս անհաւիցն ցանկութեան[23], որ եւ զիւրն ոչ պահեաց տեղի փառաց[24*]

---

[1] Ա.86ա, 90ա՝ ստ. լս. «աշխարհաթաղ», 87ա, 89ա, 91ա, 92ա, 93ա, 94ա, 95ա՝ «մեռելաթաղ», 88ա՝ «մեռելթաղ»
[2] Բ.140բ՝ խորագրի մոտ համար չկայ, 142ա «թաղ աշխարհ», 143ա, 145ա, 146ա, 147ա, 148ա, 149ա 151ա՝ «աշխ թաղ», 152ա՝ «թաղ աշխ»
[3] Ա կանոն համաւրէն ամենայն վախճանելոցն առ ի թաղումն
[4] սա ըստ՝ Ա. Բ > այս խրատը
[5] սա ըստ՝ Բ. Ա > այս խրատը
[6] Ա զկարգեալն] սաղմոս
[7] Ա > եւ
[8] Ա ծնող
[9] Ա որդո
[10] Ա ~ հոգւոյդ սրբոյ
[11] Ա ամենակարող
[12] Ա զաւրութեամբ
[13] Ա առեալ
[14] Ա > եւ յանախտ
[15] Ա տնգոյն
[16] Ա > քո
[17] Ա սգեցուցեր
[18] Ա > զնա
[19] Բ խանտացեալ
[20] Ա > փառաց
[21] Ա բարերարութենետ ընկալեալ
[22] Բ > էր
[23] Ա ցանգութեան
[24] Բ զիմ տեղի փառացն ոչ պահեաց] զիւրն ոչ պահեաց տեղի փառաց

կամակոր[1] եղեալ յերեսաց քոց, Տէ՛ր: Իսկ յանցանել նորա զպատուիրանաւ քո, Տէ՛ր[2], հանեալ եդիր զնա արտաքոյ[3] դրախտին փափկութեան, զգեցուցեր[4] նմա զմաշկեղէն հանդերձսն[5], զախտալի եւ զմեղսասէր[6] մարմինս, եւ սահմանեցեր զհողադարձիլ[7] հողոյն, դարձեալ[8] եւ ոչ այնու անտես արարեր, այղ[9] առաքեցեր զմիածին Որդի[10] քո, որ եկեալ մարմնացաւ յանարատ եւ[11] յանապական կուսէն Մարիամայ[12], եւ[13] զգեցաւ[14] զհնացեալ մարմին ծառայութեան |Ա.85բ| մերոյ, զոր ծառայեաք[15] մահու մեղացն[16] տարագրութեամբ ի ձեռն կնոջ[17] դաւաճանութեան: Ազատեցոյց աստուածութեամբ իւրով ի ձեռն կենդանարար խաչին իւրոյ եւ անապական թաղմանն[18], զոր վասն[19] անսուտ բանիւդ քո հարկիւ պարտեաք[20] մեռանել, եբարձ սքանչելագործ[21] յարութեամբն իւրով եւ լուսաւորեաց զազգս որդւոց[22] մարդկան ի նոյն նմանութեան |Բ.141բ| պատկերի քո, որով ստեղծեր զնախնին մեր զհայրն[23], եւ ծանոյց մեզ զանուն քո, որով արժանաւորեցաք կոչել զքեզ Հայր, վասն զի նստեալ ընդ աջմէ քումէ մարմնովն, զոր ի մէնջն[24] եառ, եւ մեզ խոստացաւ յարութիւն կենաց ի միւսանգամ գալստեան[25] իւրում[26] ի դատաստանի[27] յաւուրն յետնում եւ պարգեւեաց մեզ ժամադրութիւն գործոց բարեաց զանցաւոր զկեանս[28], որով մարթասցուք գտանել զերկիրն կենդանեաց ի ձեռն[29] վարդապետութեան սրբոց առաքելոցն իւրոց[30], որով եբարձ զդիւամոլ կռապաշտութիւն[31] |Ա.86ա| յաշխարհէ:

---

[1] Ա. կամաւոր
[2] Բ > տէր
[3] Ա. արտաքո
[4] Ա. սգեցուցաներ
[5] Բ հանդերձն
[6] Ա. զախրալի եւ զախտաւոր] զախտալի եւ զմեղսասէր
[7] Ա. հողադարձիլ
[8] Ա. > դարձեալ
[9] Ա. այլ
[10] Բ որդիտ
[11] Բ > յանարատ եւ
[12] Ա. Մարիամա
[13] Ա. > եւ
[14] Ա. սգեցաւ
[15] Ա. ծառաեաքն
[16] Ա. մեղաց
[17] Ա. կնոջն
[18] Բ խաչիւն իւրով] խաչին իւրոյ եւ անապական թաղմանն
[19] Ա. զի զոր] զոր վասն
[20] Ա. պարտապանեաք] պարտեաք
[21] Բ գքանչելագործ
[22] Ա. որդոց
[23] Բ զհայր
[24] Ա. մենջ
[25] Ա. գալստեանն
[26] Ա. > իւրում
[27] Ա. դատաստան
[28] Ա. զկեանսս
[29] Ա. ձեռ
[30] Բ > իւրոց
[31] Ա. զկռմոլ դիւապաշտութիւն] զդիւամոլ կռապաշտութիւն

Եւ այժմ, Տէ՛ր բարերար եւ բազումողորմ, ընկա՛լ[1] զհոգի ծառայիս քո[2], որ եկից զժամանակ պանդխտութեան նժդեհութեան իւրոյ ի վերայ երկրի եւ ընգալաւ զլուծումն[3] յաշխատութեանցս[4] եւ յաշխարհակործ պատրողական խաբեութեանցս, եւ[5] դասաւորեա՛ ընդ սուրբս քո յարքայութեան քում, ուր[6] մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք: Միշտ յարազուարճ բերկր|Բ.142ա|անաւք պայծառացեալ տեսլեամբ աստուածային[7] փառաց քոց, ուրախանան[8] ամենայն ընտրեալք[9] քո, ընդ նոսին դասաւորեա[10], Տէ՛ր, զհոգիս հանգուցելոյս մերոյ[11], զի եւ մեք սովաւ հանդերձ փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՀոգիդ[12] Սուրբ այժմ եւ միշտ եւ յա[ւիտեան][13]:

Խաղաղութիւն ամենեցուն[14]. Աստուծոյ երկրպա[գեսցուք][15].

ՀԸ. Հայր մեր որ յերկին[16] եւ յերկրի, եւ յամենայնի սուրբ եղիցի անուն քո ի վերայ մեր, եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի, եւ փառաւորեսցի անուն քո [17]յաւիտեան[18] որ պարգեւեցեր մեզ հանգիստ յերկրաւոր աշխատութեանցս յանախտ եւ յանաշխատ |Ա.86բ| ի կեանսդ: Որ ի ձեռն միածնի Որդւոյ[19] քո սպաներ զմահ եւ լուսաւորեցեր զմեզ ի կեանս եւ յանեղծութիւն, որ փրկեցեր զմեզ[20] յիշխանութենէ խաւարի եւ փոխեցեր յարքայութիւն Որդւոյ[21] քո սիրելոյ Տեառնդ[22] մերոյ[23] Յիսուսի Քրիստոսի: Ընկա՛լ[24], մարդասէր Տէ՛ր, աղաչեմք զքեզ, զհոգիս[25] սորա ընդ արդարս քո ի հանգստեան քում[26] եւ թուեա՛ ի

---

[1] Ա. ընդալ
[2] Ա. այսօրիկ] ծառայիս քո
[3] Բ > իւրոյ ի վերայ երկրի եւ ընգալաւ զլուծումն
[4] Բ աշխատութեանցս
[5] Ա. > եւ յաշխարհակործ պատրողական խաբեութեանցս, եւ
[6] Ա. քո, ուստի] քում, ուր
[7] Ա. աստուածաին
[8] Ա. ուր ուրախանան
[9] Ա. ընդրեալք
[10] Ա. դասաւորեայ
[11] Ա. հանգուցելոց մերոց
[12] Ա. քեզ հայր եւ որդի եւ հոգի
[13] Բ > եւ միշտ եւ յա.
[14] Ա. > ամենեցուն
[15] Ա. երկրպա
[16] Ա. յերկինս
[17] Բ.142րդ թերթի արտաքին լս-ը կտրած, վերին 4 տողի 4-6 տառով հանդերձ, կայ այս. *«յաւիտ/// պարգեւեց/// հանգիստ յաւ///ենական յերկր///որ աշխատութե///ցս յանախտ եւ ///աշխատ կեանսդ»*
[18] Ա. սուրբ յաւիտեան
[19] Ա. որդոյ քո
[20] Ա. զկեանս եւ զանեղծութիւն եւ փրկեցեր զսուրբս քո] զմեզ ի կեանս եւ յանեղծութիւն, որ փրկեցեր զմեզ
[21] Բ > որդոյ
[22] Ա. տեառն
[23] Ա. մերոյ եւ փրկչիտ
[24] Ա. ընդալ
[25] Ա. զհոգի
[26] Ա. արդարոց] քում

Համար[1] սրբ|Բ.142բ|ոց քոց ի ձեռն փրկութեան[2] միածնի քո եւ նորոգութեամբ[3] Հոգւոյդ Սրբոյ[4], որով փառաւորի Հայր ամենակալ եւ Որդիդ միածին եւ կենդանարար Սուրբ Հոգիդ, որում վայել են փառք, իշխանութիւն, պատիւ այժմ եւ միշտ յաւ[իտեանս][5]

Եւ ապա ասեն[6] սաղմոս ողբաձայն՝ ԼԱ·[7] [6]· կցուրդ[8]. *Ահա չափով եդիր զաւուրս իմ[9].*

85. Ի ԿՈՐՆԹԱՑԻՈՑ ԹՂԹՈՅՆ[10] ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔ[ԵԼՈՅ[11]. Բ·Կորնթ· Ա· 3-11].

«Աւրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայր գթութեանց եւ Աստուած ամենայն մխիթարութեանց[12], 4 որ մխիթարեն զմեզ յամենայն նեղութիւնս մեր՝ առ ի կարող[13] լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ, որ յամենայն նեղութիւնսն իցեն, մխիթարութեամբն որով մեք մխիթարիմք յԱստուծոյ. |Ա.87ա| 5 Զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ի[14] մեզ, նոյնպէս եւ ի[15] ձեռն Յիսուսի[16] առաւել լիցի եւ[17] մխիթարութիւնն[18] մեր: 6 Զի եթէ նեղիմք, վասն ձերոյ մխիթարութեան եւ փրկութեան, եւ եթէ մխիթարիմք վասն ձերոյ մխիթարութեան[19], որ յաջողեալն է համբերութեամբ նոցին չարչարանացն[20], զոր եւ մեքն[21] չարչար|Բ.143ա|իմք, 7 եւ յոյսն[22] մեր հաստատուն է վասն ձեր. քանզի գիտեմք, թէ[23] որպէս կցորդ էք չարչարանացն, նոյնպէս եւ՝ մխիթարութեանն: 8 Քանզի ոչ կամիմ զձեզ տգէտ[24] լինել, եղբա՛րք, վասն նեղութեան[25] մերոյ եղելոյ յԱսիա, զի առաւել քան զկար[26] մեր ծանրացաք, մինչեւ անյոյս լինելոյ մեզ եւ[27] ի կենաց[28]: 9 Այդ[1] անձամբ յանձինս

---

[1] *Ա թուեալ ի համարս*

[2] *Ա ի փրկութիւն] ի ձեռն փրկութեան*

[3] *Բ.142բ*՝ ունի. *«սրբ///եան փրկ/// միածնի ///եւ նորոգու///եամբ»*, սրա տեղ Ա.86բ կայ՝ *«սրբոց քոց ի փրկութիւն միածնի քո, եւ նորոգութեամբ սուրբ Հոգւոյդ»*

[4] *Ա սուրբ Հոգւոյդ*

[5] *Ա որում վաէլ ե փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս ա.] որով փառաւորի Հայր… այժմ եւ միշտ յաւ.*

[6] *Բ ասի] ապա ասեն*

[7] *Ա > ·ԼԱ·*

[8] *Բ ~ ·ԼԱ· կցուրդ ողբաձայն*

[9] *Բ > զաւուրս իմ*

[10] *Ա թղթ.*

[11] *Բ պաւղոս] պաւղոսի առաք.*

[12] *Ս մխիթարութեան*

[13] *Ս կարաւղ*

[14] *Ա > ի*

[15] *Ա > ի*

[16] *Ս քրիստոսի] յիսուսի*

[17] *Ա > եւ*

[18] *Ա մխիթարութիւն*

[19] *Բ > եւ եթէ մխիթարիմք վասն ձերոյ մխիթարութեան*

[20] *Ա չարչարանաւք, Ս չարչարանաց*

[21] *Բ մեք*

[22] *Ա յոյս*

[23] *Ս եթէ*

[24] *Ս ագէտ] զձեզ տգէտ*

[25] *Բ նեղութեանն*

[26] *Ա զկարն*

[27] *Ա > եւ*

[28] *Ա կենացս*

զվճիռ մահու ընկալաք[2], զի մի յանձինս ապաստանիցեմք[3], այդ[4] յԱստուած, որ յարուցանէ զմեռեալս[5]· 10 որ յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ, եւ փրկեսցէ· 11 քանզի յուսացեալ եմք, եթէ[6] տակաւին[7] փրկեսցէ աւգնականութեամբ աղաւթից ձերոց վասն մեր»:

[8]* Աղէղուիա. սաղմոս ՃԱ· [= ՃԽԱ· 2]. *Ձայնիւ իմով ես առ Տէր կ[արդացի]*.

86. |*Ա.87բ*| ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ[9] ՅՈՀԱՆՆՈՒ [Ե· 19-30].

«Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ[10]. Ամէն, ամէն ասեմ ձեզ, ոչ կարէ Որդի մարդոյ առնել յանձնէ եւ ոչ ինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն, զի առնէ, զի զոր նայն առնէ, զնոյն եւ Որդին[11] նմին նմ|Բ.143բ|ան գործէ: 20 Զի Հայր սիրէ զՈրդի եւ զամենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր[12] ինքն առնէ, եւ մեծամեծ[13] եւս քան զնոյն[14] ցուցանէ նմա զգործսն[15], ընդ որ[16] դուք[17] զարմանայք: 21 Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս եւ կենդանի առնէ, նոյնպէս եւ Որդի զորս կամի կենդանի առնէ: 22 Եւ ոչ եթէ Հայր դատի զոք, այդ[18] զամենայն դատաստան[19] ետ Որդւոյ[20] իւրում[21]. 23 զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի, որպէս պատուեն զՀայր. որ ոչ պատուէ պատուէ զՈրդի[22], ոչ պատուէ[23] զՀայր զառաքիչն[24] նորա: 24 Ամէն, ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն իմ լսէ եւ հաւատայ այնմ, որ առաքեացն զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս եւ ի դատաստան ոչ մտանէ, այդ[25] փոխեցաւ ի մահուանէ ի կեանս: 25 Ամէն, ամէն ասեմ ձեզ, զի գոյ[26] |Ա.88ա| ժամանակ եւ արդեն իսկ է, յորժամ մեռեալք լուիցեն[27] ձայնի Որդւոյն[28] Աստուծոյ, եւ որք լուիցենն[29] կեցցեն: 26 Զի որպէս Հայր

---

[1] *ԱՍ այլ*

[2] *Ա ընդալաք*

[3] *Ս ապաստան իցեմք*

[4] *ԱՍ այլ*

[5] *Բ զմեռեալս + եւ կենդանի առնէ*

[6] *Բ թէ*

[7] *Ա տակաւին եւս*

[8] *Ա ալելու. .ճխ. ձայնիւ իմով ես առ տէր կա.*

[9] *Բ ի] ըստ*

[10] *Ա տէր մեր յիսուս ասէ] պատասխանի ետ յիսուս եւ ասէ, Ս ասէ ցնոսա*

[11] *Ա որդի*

[12] *Ա զոր եւ*

[13] *Ս մեծամեծս*

[14] *Բ > քան զնոյն, Ս զսոյնս] զնոյն*

[15] *Ս զգործս*

[16] *Ա զոր] ընդ որ*

[17] *Ս դուքդ*

[18] *ԱՍ այլ*

[19] *Ա դատաստանս, Ս դատաստանն*

[20] *Ա որդոյ*

[21] *Ս որդւոյ իւրոյ*

[22] *Ս զորդին*

[23] *Բ > պատուէ զորդին, ոչ պատուէ*

[24] *Ա զառաքիչ*

[25] *ԱՍ այլ*

[26] *Ս գայ] գոյ*

[27] *Ս լսիցեն*

[28] *Ա որդոյն*

[29] *Ա* լսիցենն, Ս լսիցեն

ունի կե|Բ.144ա|անս յանձին իւրում, նոյնպէս եւ ետ[1] Որդոյ[2] ունել կեանս յանձին իւրում[3]: 27 Եւ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել, եւ զի Որդի մարդոյ է, 28 ընդ այն զի՞ զարմանայք, զի եկեսցէ ժամանակ յորում ամենեքեան[4], որ ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա[5], 29 եւ ելցեն արտաքս, որոց բարիս[6] գործեալ իցէ[7] յարութիւն կենաց, եւ[8] որոց զչար արարեալ իցէ՝ յարութիւն դատաստանաց: 30 Ոչ կարեմ ես յանձնէ առնել[9] եւ ոչ ինչ, այլ[10] որպէս լսեմն[11]՝ դատիմ, եւ դատաստանն[12] իմ արդար է, զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ[13] զկամս այնորիկ, որ առաքեացն զիս»:

Եւ[14] քարոզէ. *Վասն ի վերուստ*[15], եւ Ճ. Տէր ողո[րմեա][16]:

Եւ ասէ զաղաւթս զայս[17].

ՀԹ. *Աստուած հոգւոց եւ ամենայն[18] մարմնոց, որ զմահ խափանեցեր եւ զսատանա կոխեցեր, եւ աշխարհի կեանս պարգեւեցեր, հանգո՛յ զհոգիս ծառայիս քո |Ա.88բ| ի տեղւոջ[19] լուսոյ եւ ի տեղւոջ[20] հանգստեան, ուստի փախուցեալ[21] են ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք, եւ ամենայն մեղաց ի[22] սմանէ |Բ.144բ| գործելոց մերժումն արասցես[23] բանիւ կամ գործով կամ[24] մտածութեամբ, դու որպէս բարերար եւ մարդասէր եւ ողորմած Աստուած[25] թողութիւն շնորհեա[26] սմա, վասն զի «Ով է մարդ, որ կեցցէ եւ ոչ մեղիցէ» [Սղմ. ՁԸ. 49], զի դու միայն ես առանց մեղաց, եւ արքայութիւն քո արքայութիւն յաւիտենական[27], որ ոչ անցանէ[28], եւ բանք[29] քո ճշմարիտ են, զի դու ես կեանք եւ յարութիւն ամենայն ննջեցելոց, եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ[30]:*

---

[1] *Ս ~ ետ եւ*
[2] *Ս որդւոյ*
[3] *Բ > նոյնպէս եւ ետ որդոյ ունել կեանս յանձին իւրում*
[4] *Ս ամենեքին*
[5] *Ա որդոյն աստուծոյ] նորա*
[6] *Ս զբարիս*
[7] *Ս իցէ ի*
[8] *Բ > եւ*
[9] *Բ ~ առնել յանձնէ*
[10] *ԱՍ այլ*
[11] *Ս լսեմ*
[12] *Ա դատաստան*
[13] *ԱԲ այլ*
[14] *Ա > եւ*
[15] *Ա վերուստ խա.*
[16] *Ա > եւ .Ճ. տէր ողո[րմեա]*
[17] *Բ > զայս*
[18] *Բ ստեղծիչ] ամենայն*
[19] *Ա տեղոջ*
[20] *Ա տեղոջ*
[21] *Ա ի բաց մերժեալ] փախուցեալ*
[22] *Ա առ ի*
[23] *Ա եթե] մերժումն արասցես*
[24] *Ա եւ կամ գործով եւ կամ*
[25] *Բ > եւ ողորմած աստուած*
[26] *Ա շնորհեայ*
[27] *Ա յաւիտենից*
[28] *Ա > որ ոչ անցանէ*
[29] *Բ բանդ*
[30] *Բ > իշխանութիւն եւ պատիւ այժմ*

Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպա[գեսցուք].

Ձ. *Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, որ բարերարութեամբ քո[1] զաշխարհս արարեր, եւ ստեղծեր զմարդն ի հողոյ եւ եդիր զնա ի կեանս եւ ի փառաւորութիւն[2] անուանդ[3] քո սրբոյ[4], լցուցեր զնա բարուք պարգեւովք[5] եւ առատ ողորմութեամբ քո[6], եւ դարձեալ անդրէն առ քեզ դարձուցեր եւ հանգուցեր ի հանգիստ կամաց քոց, վասն որոյ աղաչեմք[7] զքեզ, Հա՛յր |Ա.89ա| երկնաւոր, ի վերայ ամենայն ննջեցելոց[8], մանաւանդ որ այժմս հանգուցեալս է, ընկա՛լ զհոգի սորա |Բ.145ա| խաղաղութեամբ եւ հանգո՛յ ընդ սուրբս քո. եւ զոհանալով փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՀոգիդ Սուրբ[9] այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն[10]:*

Ապա թէ[11] ի դպրաց է[12] կամ յաշխարհողաց, կամ յաւագ տանուտեարց[13], տանին ի դուռն եկեղեցւոյն[14] եւ ասեն սաղմոս ՁԳ.[=ՁԳ. 5] կցուրդ[15]. *Երանելիք են, որ բնակեալ են ի տուն Տեառն*[16].

87. Ի ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑՈՑ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵ[ԼՈՅ[17]. Ա. Թեսաղ. Դ. 12-17]. *«Ո՛չ կամիմ, եղբա՛րք, եթէ տգետք իցէք վասն ննջեցելոցն, զի մի՛ տրտմիցիք[18] որպէս եւ այլքն[19], որոց ոչ գոյ[20] յոյս: 13 Եթէ հաւատամք, եթէ Յիսուս[21] մեռաւ եւ յարեաւ, նոյնպէս եւ Աստուած[22] զննջեցեալսն[23] ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա: 14 Բայց զայս ասեմք[24] Տեառն բանիւ, եթէ մեք, որ կենդանիքս մնացեալ իցեմք[25] ի գալստեան[26] Տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն: 15 Զի ինքն[27] Տէր հրամանաւ ի ձայն հրեշտակապետի[28] եւ ի[29] փող Աստուծոյ իջանէ յերկնից, եւ մեռեալք ի Քրիստոս*

---

[1] *Ա քով*
[2] *Ա փառաւորութեան*
[3] *Ա > անուանդ*
[4] *Ա > սրբոյ*
[5] *Ա բարեաւք պարգեւաւք*
[6] *Ա քով*
[7] *Բ աղաչեմ*
[8] *Ա ննջեցելոց*
[9] *Ա զսուրբ հոգին*
[10] *Բ > յաւիտեանս. ամէն*
[11] *Ա եթե] ապա թե*
[12] *Ա իցէ] է*
[13] *Բ > կամ յաւագ տանուտեարց, Յ տանուտեարց*
[14] *Ա եկեղեցոյն*
[15] *Բ > կցուրդ*
[16] *Բ բն.] բնակեալ են ի տուն տեառն, Ս* Երանի ամենեցուն որ բնակեալ են ի տան տեառն
[17] *Բ ի Թեսաղոնիկէայ Թղթ. պաւղ.*
[18] *Ա տրտմեսջիք*
[19] *ԱՍ այլքն*
[20] *Ա գո*
[21] *Ա քրիստոս] յիսուս*
[22] *Ա > աստուած*
[23] *Ա զննջեցեալն*
[24] *Ա ասեմ*
[25] *Ս եմք մնացեալք] մնացեալ իցեմք*
[26] *Ա գալստեանն*
[27] *Ա ինքնին*
[28] *Բ հրեշտակապետին, Ս հրեշտակապետի*
[29] *Ա > ի*

յարիցեն յառաջագոյն: 16 Ապա եւ մեք, որ կենդանիոյն[1] մնացեալ իցեմք՝ նորաւք[2] հանդերձ |Ա.89բ| յափշտակեսցուք ամպաւք[3] ընդ առաջ Տեառն յաւդս, եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լին|Բ.145բ|իցիմք: 17 Այսուհետեւ մխիթարեցէք[4] զմիմեանս բանիւքս այսոքիւք[5]»:

[6]* Ալելու. [ԻԹ· 2]· Բարձր առնեմ զքեզ տէր, զի [ընկալար զիս].

[7]* Աղեղու. [ՃԻԱ· 1]· Ուրախ եղէ, որք ասեին ցիս ի տուն Տեառն [երթիցուք մեք].

88. [8]* ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ [Ժ· 21-22· ԺԱ·28-30]. «Յայնժամ[9] ցնծացաւ Յիսուս Հոգովն[10] Սրբով եւ ասէ. Գոհանամ զքէն, Հա՛յր, Տէ՛ր երկնի[11] եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց, եւ յայտնեցեր[12] տղայոց. Այո՛, Հա՛յր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո[13]: 22 Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հաւրէ իմմէ. եւ ոչ որ ճանաչէ[14] զՈրդի է թէ ոչ Հայր[15], եւ ոչ զՀայր որ ճանաչէ[16]՝ եթէ ոչ՝ Որդի, եւ ում Որդին կամեսցի[17] յայտնել: ԺԱ 28 Ասէ[18]. Եկայք առ իս ամենայն աշխատեալք[19] եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ: 29 Առէ՛ք զլուծ իմ ի ձեզ, եւ ուսարուք յինէն՝ զի ես[20] հեզ եմ եւ խոնարհ սրտիւ. եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց: 30 Զի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ՝ փոքրոգի»:

89. [21]* ԱՒԵՏ[ԱՐԱՆ] ՅՈՀԱՆ[ՆՈՒ. Ե· 24-30]. Տէր մեր Յիսուս ասէ[22]. «Ամէն, ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն իմ լսէ եւ հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս, եւ ի դատաստան ոչ մտանէ, այլ[23] փոխեցաւ ի մահուանէ ի կեանս: 25 Ամէն, ամէն ասեմ ձեզ, զի գոյ[24] ժամանակ եւ արդեն իսկ է, յորժամ մեռեալք լուիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ, եւ որք լուիցեն[1] կեցցեն: 26 Զի որպէս Հայր ունի կեանս յանձին[2], նոյնպէս եւ Որդւոյ ետ ունել կեանս յանձին իւրում. 27 եւ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել: Եւ զի Որդի մարդոյ է, 28 ընդ այն զի զարմանայք. զի եկեսցէ ժամանակ, յորում ամենեքեան[3], որ ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա 29 եւ եկեսցեն արտաքս, որոց զբարիս գործե[ա]լ[4] իցէ՝ յարութիւն[5] կենաց, եւ որոց զչար ար|Բ.146ա|արեալ իցէ՝ ի յարութիւն դատաստանի[6]: 30 Ոչ կարեմ ես առնել յանձնէ[7] եւ ոչ ինչ, այլ[8] որպէս լսեմ[9] դատիմ, եւ դատաստանն իմ արդար է, զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ, որ առաքեացն զիս»:

Եւ[10] քարոզէ սարկաւագն[11].

ՁԱ. Վասն հրաժարելոյ անձանց եւ ննջեցելոց ի Քրիստոս զՏէր աղաչեսցուք[12]:

Վասն որք լքին թողին[13] զապականացու կենցաղս եւ հետեւեցին ի վիճա|Ա.90ա|կս երկնաւորին զՏէր աղաչեսցուք[14]:

Վասն քաւութեան եւ թողութեան յանցանաց սորա եւ մեր ամենեցուն զՏէր աղաչեսցուք[15]:

Վասն առաջնորդելոյ սմա յանստուեր աւթեվանսն[16], զոր պատրաստեաց ի տան Հաւր իւրոյ Որդին միածին, զՏէր աղաչեսցուք[17]:

Վասն լսելոյ սմայ ձայն կենարար[18] փողոյն եւ վերանալ ընդ առաջ զՏեառն զՏէր[19]:

Վասն արժանի լինելոյ սորայ դասիլ[20] յաջակողման դասուն զՏէր աղ[աչեսցուք][21]:

Վասն հոգւոցն[22] հանգուցելոց[23], եւ եւս զանձինս ողորմեաց[24]:

Եւ ասէ զաղաւթս զայս[25].

---

[1] Ա կենդանոյն
[2] Ա նաւքաւք
[3] Ա յափշտակեսցուք ամբովք, Ս ամպովք
[4] Ա մխիթարեսցուք
[5] Ա այսոքիկ
[6] սա ըստ՝ Ա
[7] սա ըստ՝ Բ
[8] Բ > այս ընթ·ը
[9] Ս ի նմին ժամու] յայնժամ
[10] ՍՅ հոգւովն
[11] Ս երկնից
[12] Ս յայտնեցեր զայս
[13] Ս քոյ
[14] Ս գիտէ] ճանաչէ
[15] Ս թէ ով է որդի, եթէ ոչ՝ հայր] զորդի է թէ ոչ հայր
[16] Ս եւ ո է հայր] եւ ոչ զհայր ոք ճանաչէ
[17] Ս կամիցի որդին
[18] Ս > ասէ
[19] Ս վաստակեալք] աշխատեալք
[20] Ս > ես
[21] սա ըստ՝ Բ. Ա > յաջորդող ընթ·ը
[22] Ս > տէր մեր յիսուս ասէ
[23] Ս այլ
[24] Ս գոյ

---

[1] Ս լսիցեն
[2] Ս յանձին իւրում
[3] Ս ամենեքին
[4] Ս գործեալ
[5] Ս ի յարութիւն
[6] Ս դատաստանաց
[7] Ս ~ յանձնէ առնել
[8] Ս այլ
[9] Ս լսեմ
[10] Ա > եւ
[11] Բ > սարկաւագն
[12] Բ զտ] զտէր աղաչեցուք
[13] Ա > թողին
[14] Բ զկնի քրիստոսի զտէր] ի վիճակս... աղաչեսցուք
[15] Բ > աղաչեսցուք
[16] Ա աւթեւանսն
[17] Բ > աղաչեսցուք
[18] Ա զձայն երկնաւոր] ձայն կենարար
[19] Ա փրկչին զտէր աղաչե] զտեառն զտէր
[20] Ա սմա կեալ] սորայ դասիլ
[21] Բ զտ.] զտէր աղ.
[22] Ա հոգոցն
[23] Բ հանգ.
[24] Բ զանձի. ողորմ
[25] Բ > զայս

ՁԲ. *Որ թագաւորդ ես յաւիտենից, եւ ես՝ որ առնես զամենայն ինչ առաւել քան զոր[1] խնդրեմք եւ իմանամք, որ զամենայն ինչ բարիոք[2] մատակարարեցեր որդւոց[3] մարդկան, ընկա՛լ զհոգի ծառայիս[4] այսորիկ ի բարի[5], եւ հանգո՛յ ընդ սուրբս քո, որք ի սկզբանէ հաճոյ եղեն քեզ, ընկա՛լ[6] զսա ընդ |Բ.146բ| արդարս քո եւ[7] ի խորանս զքեզ սիրողաց բնակեցո՛յ զսա, եւ եթե մարդկաւրէն ինչ յանցեալ է[8] սորա բանիւ կամ գործով[9] կամ մտածութեամբ, դու որպէս բարերար եւ ողորմած եւ[10] մարդասէր Աստուած[11] թողութիւն շնորհեա[12] սմա, եւ զամենեցուն ելս յաշխարհէս խաղաղութեամբ |Ա.90բ| աջողեա՛ լինել ժառանգորդ երկնից արքայութեանդ, զի յամենայն ժամ փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ զՀոգի[13] այժմ եւ միշտ եւ յաւիտեանս ամեն[14].*

Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպագ[եսցուք].

ՁԳ. *Գթած եւ մարդասէր Տէ՛ր[15], հանգո՛յ զհոգիս ծառայիս[16] այսորիկ յաւթեվանս արդարոց. եւ զմեր կատարումն քրիստոնէութեան[17] առանց մեղաց աջողեա՛, եւ հաստատեա՛յ[18] յամենայն գործս բարիս[19] շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչիդ[20] Յիսուսի Քրիստոսի, որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւի[տեանս][21].*

[22]* Եւ սկսանին զԱմբիծսն եւ զԱբարիչն, շարականաւ, մինչեւ ածեն ի դուռն գերեզմանին: Եւ ապա ասեն ողբաձայն սաղմոս ՃԺԴ.[23] [=ՃԺԴ. 7]. *Դա՛րձ, ա՛նձն իմ ի հանգիստ քո.*

[24]* Եւ ասեն զ*Ամբիծն* մինչեւ ածեն ի դուռն գերեզմանին: Եւ այս կանոն կատարի սաղմ|*Բ.147ա*|ոս ՃԻԴ. [=ՃԺԴ. 7]. կցուրդ. *Դա՛րձ, ա՛նձն իմ, ի հանգիստ քո:*

---

[1] *Ա. քան զոր ինչ] ինչ առաւել քան զոր*

[2] *Ա. ի բարի*

[3] *Ա. ազգի] որդւոց*

[4] *Ա. ծառաիս*

[5] *Ա. > ի բարի*

[6] *Ա. եւ հանգոյ] ընկա՛լ*

[7] *Ա. > եւ*

[8] *Ա. իցէ] է*

[9] *Բ. գործովք*

[10] *Բ. > ողորմած եւ*

[11] *Ա. > աստուած*

[12] *Ա. շնորհեայ*

[13] *Բ. զհոգի*

[14] *Բ. > եւ միշտ եւ յաւիտեանս ամեն*

[15] *Ա. աստուած] տէր*

[16] *Ա. զհոգի ծառաիս*

[17] *Ա. քրիստոնէութեանս*

[18] *Ա. կատարեայ պահեա] աջողեա՛ եւ հաստատեա՛յ*

[19] *Ա. բանս եւ ի գործս բարութեան] գործս բարիս*

[20] *Ա. > եւ փրկչիդ*

[21] *Բ. > յաւի.*

[22] *սա ըստ՝ Ա. Բ. > այս խորատը*

[23] *Յ .ճժգ.*

[24] սա ըստ՝ *Բ. Ա.* > այս խրատը

90. Ի ԿՈՐՆԹԱՑԻՈՑ[1] ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼ[ՈՅ[2]. Ա. Կորնթ. ԺԵ. 12-24]. *«Ապա[3] եթե Քրիստոս քարոզի, եթե[4] ի մեռելոց յարուցեալ է, զիա՞րդ ասեն ոմանք ի ձէնջ, եթե յարութիւն մեռելոց չիք: 13 Եթե յարութիւն մեռելոց չիք, ապա եւ Քրիստոս չէ յարուցեալ: 14 Եւ եթե Քրիստոս չէ[5] յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն[6] մեր, ընդունայն են եւ հաւատքն[7] ձեր. 15 եւ գտանիցեմք սուտ վկ|Ա.91ա|այք Աստուծոյ, զի վկայեցաք զԱստուծոյ, եթե յարոյց զՔրիստոս, զոր ոչն[8] արդեւք յարոյց, եթե մեռեալք ոչ յառնիցեն[9]: 16 Իսկ եթե մեռեալք ոչ յառնեն[10], ապա եւ Քրիստոս չէ յարուցեալ: 17 Եւ եթե Քրիստոս չիցե[11] յարուցեալ, ընդունայն են[12] հաւատքն[13] ձեր, եւ տակաւին ի նմին ի մեղս կայցէք[14]: 18 Իսկ արդ, որ ննջեցին ի Քրիստոս, կորեա՞ն արդեւք: 19 Եթե այսու կենաւքս[15] միայն յուսացեալ եմք ի Քրիստոս, ողորմելի[16] եմք քան զամենայն մարդիկ: 20 Այղ[17] արդ, Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց. 21 քանզի մարդով եղ|Բ.147բ|եւ մահ, եւ մարդով յարութիւն մեռելոց: 22 Որպէս Ադամաւն ամենեքին մեռանին[18], նոյնպէս եւ Քրիստոսիւ[19] ամենեքին կենդանասցին, 23 իւրաքանչիւր յիւրում[20] կարգի. նախ Քրիստոս եւ ապա քրիստոսեանք՝ ի գալստեան նորա, 24 եւ ապա կատարած»:*

Աղեղուիա. սաղմոս ՃԱ. [2]. կցուրդ[21]. *Տէ՛ր, լո՛ւր աղաւթից իմոց[22].*

91. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՀԱՆՆՈՒ[23] [ԺԲ. 24-26, 27-34]. *Տէր մեր Յիսուս ասէ.* [24]* *«24 Ամէն, ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անգեալ[25] յերկիր մեռանիցի, 25 ինքն միայն կեա[26], ապա եթե մեռանիցի, բազում արդիւնս առնէ:*

---

[1] *Ա. կորնթացոց*

[2] *Բ. > առաքել*

[3] *Բ. եղբարք, ապա*

[4] *Ա. եթէ, Ս թէ*

[5] *Ա. չիցե*

[6] *Ա. քարոզութիւն*

[7] *Ա. հաւատք*

[8] *Ա. ոչ*

[9] *Ա. յառնեն*

[10] *Ա. յառնիցեն*

[11] *Բ. չէ] չիցե*

[12] *Բ. են եւ*

[13] *Ա. հաւատք*

[14] *Ս կայցէք*

[15] *Բ. կենաւք*

[16] *Ս ապա ողորմելի*

[17] *ԱՍ այլ*

[18] *Ա. ամենեքեան մեռան*

[19] *Բ. քրիստոսիւն*

[20] *Բ. յորում*

[21] *Ա. աղեղու (Յ ալելու) .ճա.] աղեղուիա. սաղմոս .ճա. կցուրդ*

[22] *Բ. աղաւթ] աղաւթից իմոց*

[23] *Բ. աւետ. յոհան] աւետարան ըստ յոհաննու*

[24] *Բ. >* յաջորդող՝ 24-26 համարք

[25] *Ս անկեալ*

[26] *Ս կայ*

Որ սիրէ զանձ[1] |Ա.91բ| իւր՝ արձակէ զնա. եւ որ ատէ[2] զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ի կեանս[3] յաւիտենականս պահեսցէ զնա: 26 Եթէ ոք զիս պաշտեսցե[4], զկնի իմ եկեսցէ. եւ ուր եսն եմ, անդ եւ պաշտաւնեայն իմ եղիցի: Եթէ ոք զիս պաշտեսցէ[5], պատուեսցէ զնա Հայրն իմ: [6]* 27 Բայց այժմ անձն իմ խռովեալ է: Եւ զի՞նչ ասացից, եթէ՝ Հա՛յր, ապրեցո՛յ զիս ի ժամանակէ աստի յայսմանէ, այղ[7] վասն այնորիկ եկի ի ժամս յայս: 28 Հա՛յր, փառաւորեա՛ զանուն[8] քո. եկն բարբառ յերկնից. եւ փառաւոր արար[9], եւ դարձեալ փառաւորեցից[10]: 29 Եւ ժողովուրդն որ կայր եւ լսէր, ասէին. Որոտումն լինի[11]. կէսքն ասէին՝ Հրեշտակ խաւսեցաւ ընդ նմա: 30 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ո՛չ վասն իմ ինչ եկն բարբառս այս, այղ[12] վասն ձեր: 31 Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ, այժմիկ զիշխան[13] աշխարհիս այսորիկ ընկեցի արտաքս: 32 Եւ ես յորժամ բարձրացայց յերկր|Բ.148ա|է, զամենեսեան[14] ձգեցից առ իս: 33 Զայս ասաց[15] նշանակեալ, եթէ[16] որով մահու մեռանելոց իցէ»:

[17]* Եւ քարոզէ. Վասն ի գիշերի եւ ի տու. եւ Ճ. Տէր ողորմ[եա]: Եւ ասէ զաղաւթս.

ՁԴ. Աստուած հոգւոց եւ ստեղծիչ մարմնոց, Տէր ես կենդանեաց եւ յարութիւն մեռելոց, տուիչ ես բարութեանց[18] եւ մխիթարիչ ամենայն վշտացելոց, եւ քաղցրութիւն[19] քո աւետարանութիւն է ամենայն ննջեցելոց, զոր ժողովեցեր ճշմարտութեամբդ[20] քո ի կոչումն հաւատոց, եւ հաւատացելոցս ի քեզ խոստացար հանգիստ յաւիտենական կենաց անվախճանիցն[21], քանզի հրամայեցեր[22] նախահայրն մերում զանմահական զկեանսն[23] եւ կացուցեր զնա Տէր[24]

---

[1] Ս զանձն

[2] Ս ատեայ

[3] Ս կեանսն

[4] Ս պաշտիցէ

[5] Ս պաշտիցէ] պաշտեսցէ

[6] Ա > յաջորդողը (27-34 համարք)

[7] Ս այլ

[8] Ս զորդի] զանուն

[9] Ս արարի

[10] Ս փառաւոր արարից] փառաւորեցից

[11] Ս լինել

[12] Ս այլ

[13] Ս իշխան

[14] Ս զամենեսին

[15] Ս ասէր

[16] Ս թէ

[17] Ա քարոզե. վասն զտանելոյ մեզ. եւ ասե զաղաւթս զայս (թաւ «ա»երը բոլորգրով են)

[18] Ա բարութեան

[19] Ա քաղցր տէրութիւն] քաղցրութիւն

[20] Ա զթութեամբ] ճշմարտութեամբդ

[21] Ա խոստացար հաւատացելոց քոց զհանգիստ յաւիտենից կենացն անվախճանից] հաւատացելոցս ի քեզ խոստացար հանգիստ յաւիտենական կենաց անվախճանիցն

[22] Ա հրամաեցեր

[23] Ա զկեանսդ

[24] Ա > տէր

ի վերայ ամենայն[1] ձեռակերտաց քոց եւ զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա[2], եւ ի ձեռն յանցանաց նորա կոչեցեր յերկիր՝ ուստի առաւ[3]: Եւ դարձեալ խոստացար ի ձեռն գալստեան[4] միածնի քո |Ա.92ա| յաշխարհս՝ |Բ.148բ| անճառելի խոստմամբդ[5] յարուցանել զմեռեալս եւ յասել ամենակարող եւ հզաւր[6] բանիդ քո եթէ[7]. «Եկա՛յք առ իս, ամենայն աշխատեա՛լքդ եւ բեռնաւորքդ[8] եւ ես հանգուցից զձեզ» [Մտթ. ԺԱ. 28]: Հանգո՛յ, Տէ՛ր Աստուած, զհոգի ծառայիս այսորիկ[9] ի ձեռն բանիդ այդմիկ[10] եւ գրեա[11] զսա ի գիրս հանգստեան փառաւոր երանութեան քում[12], եւ պարգեւեա[13] սմա մասն եւ բաժին ընդ սուրբս քո[14] ի խորանսդ յաւիտենականս[15], եւ եթէ մեղուցեալ ինչ իցէ սորա յանցանաւք[16] աշխարհիս այսորիկ, անվախճան բանիւդ քո[17] թողութիւն շնորհեա՛ սմա, եւ յամենայն մեղաց եւ ի սնոտի խաբեութեանց զհոգի սորա ազատեա[18], եւ զամենայն ժողովուրդս քո աւրհնեա[19] եւ մխիթարեա[20], զի ի բերանոյ ամենայն արարածոց փառաւորեսցի[21] ամենասուրբ Երրորդութիւնդ՝ Հայր եւ Որդի եւ Հոգիդ Սուրբ այժմ[22]:

Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպագ[եսցուք][23].

ՁԵ. Արդ, խնդրեմք ի քէն, թագաւո՛ր թագաւ|Բ.149ա|որաց եւ Տէր տէրանց[24], յորժամ գաս փառաւք[25] եւ երեւիս մեծութեամբ քով[26], գունդք հրեշտակաց[27] եւ զաւրու|Ա.92բ|թիւնքն առաջի քո ընթանան: Գաս հիացմամբ եւ ձայնիւ[28] փողով զարթուցանես[29] զննջեցեալսն, յարուցանես[30] զմեռեալսն, կանգնես[1] զգլորեալսն, բժշկես[2] զվիրաւորեալսն, դաս բոցով եւ դատիս անշէջ հրով, ծագիս ի վերուստ յարեւելից կողմանէ, եւ սուրբ խաչն առաջի քո, եւ[3] յայտնեալ երեւիս երկրի[4], բանին դպրութիւնքն[5], եւ[6] կարգին աթոռք, լինի ահեղ դատաստան[7], դնին կշիռք արդարութեան, եւ ընդունի իւրաքանչիւր ոք[8] ըստ գործոց իւր[9]: Վկայքն պսակին ըստ ճգնութեանն, եւ մեղաւորքն՝ ըստ տանջանացն[10], դատէ զխաչողսն[11] եւ[12] տանջէ[13] զմեղաւորսն, պապակել զուրացողսն[14]: Յայնժամ յայտնին կառք հրեղէնք յերկնից, լինի ձայն փողոյն[15] մեծի, ընթանան զաւրութիւնքն[16], եւ[17] սարսափեն հրեշտակքն[18], փայլատակէ[19] հուր եւ[20] |Բ.149բ| խաւարէ[21] արեգակն եւ լուսին, թաւթափին աստեղք. եւ[22] խառնակին ամպք[23], ցամաքի ծով, եւ[24] հիանան արարածք ամենայն. ուրախանան բարեգործքն[25], եւ ողբան չարեաց գործողքն[26], բերկրին երկրպագուքն Քրիստոսի, |Ա.93ա| եւ հառաչեն ուրացողքն[27]: Պսակքն յայտնեալ փայլեն[28], եւ կուսանքն ցնծան[29], առագաստն զարդարի, եւ իմաստուն կուսանքն պատրաստք մտանեն[30]՝ ջահքն, զոր բարեբարութեան իւղովն պայծառացուցին[31], իսկ յիմարացն շիջանին, եւ դատարկացեալ ամաւթալից լինին. ճրագք անցեալք, գլուխք խոնարհեալք եւ հոգիք եւ սիրտք տրտմեալք, եւ հոգիքն[32] հալածեալք[33] ի ձայնէ

---

[1] Ա > ամենայն

[2] Ա > եւ զամենայն ինչ... ի ներքոյ ոտից նորա

[3] Ա ստեղծաւ] առաւ

[4] Ա > գալստեան

[5] Ա խոստմանդ

[6] Ա > եւ հզաւր

[7] Բ > եթէ

[8] Բ ծանրաբեռնեալքդ (Ա բեռնաւորքդ), Ս բեռնաւորք

[9] Ա ծառախս քո] ծառայիս այսորիկ

[10] Ա այդորիկ

[11] Ա գրեայ

[12] Ա գիր փառաւոր արքայութեանդ] գիրս հանգստեան փառաւոր երանութեան քում

[13] Ա պարգեւեայ

[14] Ա > ընդ սուրբս քո

[15] Ա յաւիտենից

[16] Ա յանցանս

[17] Ա > քո

[18] Ա ազատեայ

[19] Ա աւրհնեայ

[20] Ա > եւ մխիթարեա՛

[21] Բ փառաւորի

[22] Ա այժմ եւ միշտ եւ յաւիտեանս ամէն] Հայր... այժմ

[23] Բ երկր.

[24] Ա տերանց

[25] Ա քրիստոս] փառաւք

[26] Ա քոով

[27] Ա հրշտակաց

[28] Բ ձայնի

[29] Ա զարթուցանել

[30] Ա յարուցանել

---

[1] Ա կանգնել
[2] Ա բժշկել
[3] Ա > եւ
[4] Ա երեւի եւ հատուցանես իւրաքանչիւր ումեք] երեւիս երկրի
[5] Ա դպրութիւնք
[6] Ա > եւ
[7] Բ դատաստանք
[8] Բ ընդունին իւրաքանչիւր] ընդունի իւրաքանչիւր ոք
[9] Բ իւրեանց] իւր
[10] Ա տանջանաց
[11] Ա դատել զխաչողս
[12] Ա > եւ
[13] Ա տանջել
[14] Բ > պապակել զուրացողսն
[15] Ա փողոյ
[16] Ա զաւրութիւնք
[17] Ա > եւ
[18] Ա հրեշտակք
[19] Ա փայլատակի
[20] Ա > եւ
[21] Ա խաւարի
[22] Ա > եւ
[23] Ա ամբք
[24] Ա > եւ
[25] Ա բարիքն
[26] Ա չարիքն] չարեաց գործողքն
[27] Ա ուրացողք
[28] Ա յայտնին] յայտնեալ փայլեն
[29] Ա խնդան] ցնծան
[30] Ա ~ մտանեն պատրաստք
[31] Ա եւ ճրագք վառեալք] ջահքն, զոր բարեբարութեան իւղովն պայծառացուցին
[32] Ա յիմար կուսանքն դատարկացեալք ճրագք շիջեալք, սիրտք տրտմեալք, գլուխք խոնարհեալք] յիմարացն շիջանին... եւ սիրտք տրտմեալք, եւ հոգիքն
[33] Ա հալածին

թագաւորին, որ ասէ, եթէ՝ Ոչ գիտեմ զձեզ. խնդան աջակողմանքն, եւ լան ձախակողմանքն, խայտան աւդիքն, եւ մերժին այծիքն յերեսաց քոց, Տէ՛ր[2]: Լոյսն պայծառանա, եւ խաւարն նուաղի, դժոխք աղաղակեն, եւ սատանա յամաւթ |Բ.150ա| լինի, ցանկութիւնն անցանի[3], եւ որդն[4] ոչ մեռանի: Յայնժամ, բարերար եւ մարդասէր Տէ՛ր[5], յորժամ այս ամենայն կարգի[6] ի քումմէ իմաստութենէդ[7] եւ ի զաւրութենէդ, յիշեա՛ զհոգի ծառայիս[8] այսորիկ եւ դասաւորեալ պայծառացո՛յ ընդ սուրբս քո յարքայութեանդ երկնից. եւ զամենայն զոր ինչ[9] մեղուցեալ իցէ[10] սորա՝ բանիւք կամ գործովք[11] կամ մտածութեամբ, զկամա եւ զակամա, զգիտութեան եւ զանգիտութեան, ներեա[12] |Ա.93բ| եւ թո՛ղ սմա քով մարդասիրութեամբդ[13], վասն զի ով է մարդ որ կեցցէ եւ ոչ մեղիցէ, զի դու միայն ես առանց մեղաց, եւ արքայութիւն քո արքայութիւնն յաւիտենից[14], որ ոչ անցանէ. եւ անուան քում[15] վայել է փառք, իշխանութիւն եւ պա[տիւ][16]:

Եւ տեառնագրեն զդին[17] եւ[18] իջուցանեն ի գերեզմանն, եւ ասեն[19]՝ Հաւատ ունելով, շարականս. Հաւատ ունելով[20] հոգի խաղաղութեան[21]. սաղմոս. [ՃԺԴ. 1]. Սիրեցի, զի լուիցէ[22] [Տէր զձայն աղաւթից իմոց]: Ձկնի՝ Փառք ի բարձունս, զի մխիթարեսցեն զվշտացեալքն[23]: Եւ ապա քարոզ[24].

ԶԶ. Վասն ի վերուստ պահպանութեան անձանց մերոց առ ի Տեառնէ[25] եւ հաճոյական աղաւթից[26] առաքելոց զՏէր աղաչեցուք[27].

Վասն ընդունելոյ Տեառն զ|Բ.150բ|հոգիս հանգուցելոյս[28] ի հանգիստ երկնային[29] զՏէր.

---

[1] Ա հալածին
[2] Ա տեառն] քոց, տէր
[3] Ա ցանգութիւն անցանէ
[4] Ա որդնն
[5] Ա աստուած] տէր
[6] Ա կարգին
[7] Ա մեծութենեդ] իմաստութենէդ
[8] Ա զհոգիս ծառաիս քո
[9] Ա ~ ինչ զոր
[10] Ա է] իցէ
[11] Ա բանիւ կամ գործով
[12] Ա ներեայ
[13] Ա մարդասիրութեամբտ
[14] Ա արքայութիւն յաւիտենական
[15] Ա քեզ] անուան քում
[16] Բ իշխանու., Ա իշխանութիւն եւ պա[տիւ]
[17] Ա > եւ տեառնագրեն զդին
[18] Ա եւ ապա
[19] Ա ասելով] եւ ասեն
[20] Բ > շարականաւ. հաւատ ունելով
[21] Ա խաղ.
[22] Ա լուիցի
[23] Բ > զկնի՝ փառք ի բարձունս, զի մխիթարեսցեն զվշտացեալքն
[24] Ա զկնի քարոզէ] եւ ապա քարոզ
[25] Ա ի տեառնէ անձանց մերոց] անձանց... տեառնէ
[26] Ա աղաւթիւ
[27] Բ աղ.
[28] Ա զհոգի հանգուցելոցն
[29] Ա հանգստեան արդարոց] հանգիստ

Վասն թողլոյ զյանցանս սորայ՝ զկամա եւ զակամա, զՏէր[1].

Վասն արժանի լինելոյ սմա խաղաղութեամբ եւ մեծաւ յուսով սպասել տեառնագալուստ փողոյն զՏէր.

Վասն քաղցրութեամբ[2] լսելոյ սմա զահաւոր բարբառն[3], որ ասէ. «Ահա գա Քրիստոս, արիք ընդ առաջ» [Մտթ. ԻԵ. 6], զՏէր աղ.[4]

Վասն համարձակապէս տեսանելոյ սմա զանապական եւ զանստուեր զլոյսն[5] զՏէր.

Վասն լրջմտութեամբ[6] եւ առանց ամաւթոյ կալ սմա առաջի արդար դատաւորին[7] Քրիստոսի զ[Տէր].

Վասն տալոյ սմա տեղի ի հայրական խնամոյն եւ[8] յառաջագահ դասուն զՏէր.

Վասն լսելոյ սմա զերանաւէտ զձայնն, եթէ՝ Եկայք աւրհնեալք Հաւր իմոյ ի հանգիստն[9] [Մտթ. ԻԵ. 34], զոր պատրաստեալ է Որդին միածին ի տան Հաւր[10] զՏէր աղաչեսցուք[11].

Վասն պարգեւելոյ սմա զերկնային[12] պսակն կենաց եւ անմահութեան զՏէր[13].

Վասն հրեշտակին խաղաղութեամբ[14] |Ա.94ա| անցուցանել[15] զհոգի սորա, ուր հանգիստ է ամենեցուն սրբոց[16] զՏէր աղաչե[սցուք][17].

Վասն կնքելոյ զգերեզմանս սորա[18] խաչիւն իւրով մինչեւ ի գալուստն իւր սուրբ զ[Տէր][19].

Վասն առաքման շնորհաց մեծի[20] եւ ամենազաւր աջոյն Քրիստոսի ի հողանիւթ յարկ[21] տապանակիս այսորիկ[22] զՏէր աղա[չեսցուք][23].

Վասն առաքելոյ զշնորհս Հոգւոյն[24] Սրբոյ ի սիրտս լսողաց հա-

երկնային

[1] Ա վասն թողլոյ սմա զանցանս իւր զկամայն եւ զակամայն զտէր աղա.

[2] Ա քաղցրաբարբառ] քաղցրութեամբ

[3] Ա զձայնն] բարբառն

[4] Ա եթե արիք ահա գա քրիստոս] որ ասէ. «ահա գա քրիստոս, արիք ընդ առաջ», զտէր աղ.

[5] Ա լոյսն

[6] Ա աչալրջութեամբ] լրջմտութեամբ

[7] Ա ատենին] արդար դատաւորին

[8] Բ > եւ

[9] Ա տեղի հանգստեան] հանգիստն

[10] Ա > զոր պատրաստեալ է որդին միածին ի տան հաւր

[11] Բ զտ.] զտէր աղաչեսցուք

[12] Ա զերկնաւին

[13] Ա զ.

[14] Ա հրշտակին խաղաղութեան

[15] Ա աւանդել] անցուցանել

[16] Ա > ուր հանգիստ է ամենեցուն սրբոց

[17] Բ > աղաչե.

[18] Ա > սորա

[19] Ա > վասն կնքելոյ... սուրբ զտէր՝ գրուած յաջորդից՝ «վասն առաքման... այսորիկ զտէր» յետոյ

[20] Ա ~ մեծի շնորհաց

[21] Ա հողանիւթեայ յարկս

[22] Ա > տապանակիս այսորիկ

[23] Բ > աղա.

[24] Ա հոգւոյն

ւատացելոց անուանն իւրոյ զՏէր աղաչեսցուք[1].

Վասն մխիթարելոյ զվշտագնեալս սրտիւք ի ձեռն ողորմութեանն իւրոյ զՏէր աղաչեսցուք[2].

Վասն պահելոյ զմնացորդս |Բ.151ա| սորա յամենայն հնարից սատանայի զ[Տէր].

Վասն հոգւոցն[3] եւ եւս զանձինս ողորմեայ մեզ. Ճ. Տէր ողորմեայ[4]:

Եւ աղաւթք՝ կնքել գերեզման[5]:

Ձէ. Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած մեր, որ ստեղծեր զմարդն ի հողոյ երկրէ[6] եւ փչեցեր յերես[7] նորա շունչ կենդանի, լինելով նմա կամաւ քո[8] ի հոգի կենդանարար, եւ եդիր զնա ի դրախտին փափկութեան՝ գործել զնա եւ պահել, եւ յանցանելն[9] նորա զպատուիրանաւ քո՝ հանեալ եդիր զնա արտաքոյ[10] դրախտին փափկութեան, ուստի առաւ, մատնելով զնա տարժանաւոր եւ ախտալից կենցաղոյս այսորիկ: Եդիր նմա[11] սահման ասելով. «Հող էիր[12] եւ ի հող դարձցիս» [Ծն. Գ. 19]: Եւ այժմ, Տէ՛ր բարերար, ընկա՛լ զծառայս քո զայս, որ ելից զժամանակ պանդխտութեան իւրոյ |Ա.94բ| ի վերայ երկրի եւ կատարեաց զընթացս իւր[13], եւ ըստ հրամանի քում մերձեցաւ մտանել յարգանդ երկրի, յորմէ ծնանելոց է[14] վերստին ի կեանս անմահս[15]: Եւ արդ[16], Տէ՛ր Աստուած մեր[17], ձգեա՛ զպահպանական աջ քո եւ աւրհնեա[18] եւ կնք|Բ.151բ|եա[19] զտեղի հանգստեան սորա, *զի եղիցի ի զգուշութեան եւ ի պահպանութեան նշխարք ոսկերաց սորա իբրեւ զգանձս պատուականս առաջի աստուածութեանդ քո, եւ մի՛ իշխեսցէ դրժել զսա թշնամի՝ երեւելի կամ աներեւոյթ[20], եւ զհոգի սորա, զոր աւանդեցեր[21] ի ձեռն հրեշտակի[22] քո, մերձեցո՛յ առ սուրբ փառաց աթոռ քո՝ ընդ այլ[23] պայծառացեալ հոգիսն ցնծալ, ցուարճանալ, պարել[1] շուրջ զարքունական աթոռովդ[2] մինչեւ յաւր կրկնակի գալստեանդ[3] քո յերկնից, փառաւք Հաւր եւ ամենայն հրեշտակաց[4] սրբոց, յորժամ գաս[5] միւսանգամ ի[6] նորոգել զանկեալ եւ զկործանեալ[7] պատկերս[8] քո, այցելութիւն արա՛, Տէ՛ր, ծառայիս[9] այսորիկ եւ հա՛ն սմա[10] մասն եւ բաժին յարքայութեան քում[11], ընդ այնոսիկ՝ ոյք[12] սիրեցին զքեզ յամենայն սրտէ եւ յամենայն անձէ[13] իւրեանց, եւ յամենայն մտաց իւրեանց, եւ յամենայն զաւրութեանց[14], զի յամենայնի |Բ.152ա|մեծացեալ եւ փառաւորեալ եղիցի անուն[15] Տեառնդ մերոյ եւ փրկչիդ Յիսուսի Քրիստոսի[16], ընդ որում Հաւր ամենակալի եւ Որդւոյ միածնի[17], կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւոյդ[18] վայել[19] է փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ[20]:

---

[1] Բ > աղաչեսցուք

[2] Բ > աղաչեսցուք

[3] Ա հոգոցն

[4] Բ զանձի ողորմ] զանձինս ողորմեայ մեզ. .Ճ. տէր ողորմեայ

[5] Ա եւ աստ զաղաւթս զայս] եւ աղաւթք՝ կնքել գերեզման

[6] Ա հող յերկրէ] ի հողոյ երկրէ

[7] Բ երեսս

[8] Ա կամաւք քով

[9] Ա յանցանել

[10] Ա արտաքո

[11] Բ > նմա

[12] Ա էիր

[13] Ա > եւ կատարեաց զընթացս իւր

[14] Ա իցէ] է

[15] Ա > վերստին ի կեանս անմահս

[16] Ա այժմ] արդ

[17] Բ > մեր

[18] Ա > եւ աւրհնեա

[19] Ա կնքեայ

[20] Ա > զի եղիցի ի զգուշութեան եւ ի պահպանութեան նշխարք ոսկերաց սորա... կամ աներեւոյթ

[21] Բ աւանադեցեր

[22] Ա հրշտակի

[23] Ա այլ

Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպագեսց[ուք][21].

ՁԸ. Տէրդ[22] մեր եւ փրկիչդ[23] Յիսուս Քրիստո՛ս, |Ա.95ա| Որդի՛ Աստուծոյ կենդանւոյ[24] եւ կենդանարար, կերպարան եւ կնիք Հաւր, որ վասն նախաստեղծին քում Ադամայ[25] անկելոյն[26] յանցանաւք ի փառակենցաղ դրախտէն[27], կամաւ Հաւր եւ հաճութեամբ Հոգւոյդ[28] Սրբոյ խոնարհեցար յերկնից[29] եւ իջեր յերկիր[30], եւ[31] առեր մարմին ի սրբոյ կուսէն, խաչիւ եւ անապական թաղմամբդ[32] քո զհնացեալս մեղաւք վերստին նորոգեցեր, որպէս զի ստեղծուածն առաջինն[33], որ[34] առանց ապականութեան էր,

---

[1] Բ պահել] պարել
[2] Ա աթոռով քո
[3] Ա գալստեան
[4] Ա հրշտակաց
[5] Բ գա] գաս
[6] Ա > ի
[7] Ա եւ կանգնել] զանկեալ եւ զկործանեալ
[8] Ա զպատկեր
[9] Ա տէր բարերար ծառախս քո
[10] Ա > սմա
[11] Ա յարքայութեանդ երկնից] յարքայութեան քում
[12] Ա որ] ոյք
[13] Ա անձնէ
[14] Ա > եւ յամենայն մտաց իւրեանց, եւ յամենայն զաւրութեանց
[15] Ա > անուն
[16] Ա տէր մեր յիսուս քրիստոս] տեառնդ մերոյ եւ փրկչիդ յիսուսի քրիստոսի
[17] Ա հանդերձ] եւ որդւոյ միածնի
[18] Ա հոգոյդ
[19] Ա վաել
[20] Բ իշխան] իշխանութիւն եւ պատիւ այժմ
[21] Ա երկրպագե.
[22] Ա տէր
[23] Ա փրկիչ
[24] Ա կենդանոյ
[25] Ա քո ադա] քում ադամայ
[26] Ա անդելոյն
[27] Ա դրախտին
[28] Ա հոգոյն
[29] Բ ի յերկնից
[30] Բ ի յերկիր
[31] Ա > եւ
[32] Ա արեամբ] թաղմամբ
[33] Ա առաջին
[34] Ա > որ

ի հանդերձ յարութեանն[1] մեռելոց առանց մեղաց[2] երեւեսցի, զի դու ինքնին, Տէ՛ր, վասն մերոյ փրկութեան իջեր ի գերեզման[3], աւարեցեր զդժոխս[4] ողորմելով արկելոցն ի նմա[5] հոգոցն, եւ[6] լուծեր զերկունս |Բ.152բ| մահու, թաղմամբ եւ աստուածաքանչ յարութեամբդ[7] քո ազատութիւն եւ նորոգումն[8] շնորհեցեր յուսացելոցս ի քեզ: Եւ արդ, դու, նոյն ինքն Տէ՛ր Աստուած մեր բարերար, գթա[9] ի մեղուցեալ ծառայս քո, որ վախճանեաց զերկրաւոր[10] զկեանս իւր, բարեխաւսութեամբ սրբոյ[11] Աստուածածնիդ եւ ամենայն սրբոց քոց, որք յաւիտենից հաճոյ եղեն քեզ, ներեա՛, քաւեա՛[12] եւ թո՛ղ զմեղս սորա[13], |Ա.95բ| զոր գործեաց՝ զկամա եւ զակամա, քանզի ոչ արդարանայ[14] առաջի քո[15] ամենայն մարմին: Աւրհնեա՛[16], Տէ՛ր, եւ զհողանիւթեայ յարկս[17] տապանի սորա, եւ զոսկերս սորա կնքեա՛ եւ պահեա՛ անարատ աջովդ քո[18] եւ պատուական խաչիւդ[19], յորում հեղեր զպատուական արիւնդ[20] ի թողութիւն մեղաց մերոց: Աւրհնեա՛[21], Տէ՛ր, եւ զմնացորդս սորա, սփոփեա՛ եւ մխիթարեա՛[22] եւ փարատեցո՛յ ի սրտից սոցա[23] զսուգ եւ զտրտմութիւն, եւ խաղաղական կենաւք աճեցեալ զարգացո՛յ[24] եւ[25] միացո՛յ ի սէր սրբութեան քո, ընդ նոսին աշխատող|Բ.153ա|ացս եւ համաւրէն զկնի եկելոցս ողորմեա՛[26], Տէ՛ր, եւ տո՛ւր զբարեաց[27] քոց հատուցմունսդ[28]: Հալածեա՛[29] եւ հեռացո՛յ ի սոցանէ զխորամանկութիւն[30] սատանայի, սգաստութեամբ[31] առաջնորդեա՛յ ի շաւիղս արդարութեան քո՝ հասանել ի կոչումն փո-

---

[1] Ա յարութեան
[2] Ա > առանց մեղաց
[3] Բ գերեզմանն
[4] Ա զդոխս («ժ» գրի բացթողում)
[5] Ա նա
[6] Ա > եւ
[7] Ա յարութեամբ
[8] Ա նորոգութիւն
[9] Բ գթայ
[10] Ա > զերկրաւոր
[11] Ա սուրբ
[12] Ա ներեայ քաւեայ
[13] Ա սմա զմեղս |Ա.95բ| իւր] զմեղս սորա
[14] Բ արդարա
[15] Բ > առաջի քո
[16] Ա աւրհնեայ
[17] Բ զհողանիւթեա յարկ
[18] Ա եւ կնքեայ անարատ աջովտ] եւ զոսկերս սորա կնքեա՛ եւ պահեա՛ անարատ աջովդ քո
[19] Ա խաչիտ քո
[20] Ա զսուրբ արիւնտ] զպատուական արիւնդ
[21] Ա աւրհնեայ
[22] Ա մխիթարեայ
[23] Ա յանձանց սոցա] ի սրտից սոցա
[24] Ա աճեցուցեալ զարգացեալ
[25] Ա > եւ
[26] Ա ողորմեայ
[27] Ա զբարի պարգեւաց] զբարեաց
[28] Ա հատուցումն
[29] Ա հալածեայ
[30] Ա զխորամանգութիւնս
[31] Բ եւ ի սգաստութեամբ

ղագոչ ձայնի հրեշտակապետին[1] յաւիտենական հանգստեանն[2], զարթուցեալք ի[3] մահահանգիստ քնոյն[4] եւ[5] վերաթռիչ[6] յուսեղէն ամպովք[7] ընդ առաջ ելանել քոյ փառացդ[8], եւ արժանաւոր[9] լինել՝ սրովբէանալ ի պարս քրովբէագունդ բանակացն եւ ի դասս հրեշտակաց եւ ամենայն սրբոց եւ սիրողաց քոց, եւ[10] բարեբանողական[11] փառատրութեամբ աւրհնել զքեզ[12], Քրիստոս[13] Աստուա՛ծ, հանդերձ[14] Հարբ եւ ամենա|Ա.96ա|սուրբ Հոգւովդ[15], որում վայել է փառք, իշխանութիւն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ[16]. այժմեւ միշտ եւ յաւիտեանս ամէն[17]:

[18]* Եւ արհնին ժողովուրդն եւ գնան խաղաղութեամբ. դառնան ի տուն վախճանելոյն եւ ասեն. [ԽԳ· 18]· *Այս ամենայն եկն ի վերա մ[եր].*

[19]* Եւ արկանէ զհուր բուրուառին ի վեր գերեզմանին. ասելով. *Աւրհնեցի եւ պահպանեցի եւ կնքեցի զգերեզմանս զայս մինչեւ ի գալուստն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ:* Երկրորդ անգամ ասէ եւ զերրորդն՝ *Աւրհնութիւն եւ փառս.* եւ խաչանման մատամբ զհողն ձեւացուցանելով. |*Բ.153բ*| եւ արհնեն զժողովուրդն եւ արձակին ի խաղաղութիւն. եւ դառնան ի տուն վշտացելոցն. եւ ասեն սաղմոս. [ԽԳ· 18]· *Այս ամենայն եկն ի վերայ մեր:*

Եւ ասեն[20] զաղաւթս զայս.

ՁԹ. *Հա՛յր գթութեանց եւ Աստուա՛ծ ամենայն մխիթարութեանց[21], որ մխիթարես զմեզ յամենայն նեղութեան մերում[22], որ հարկանես, Տէ՛ր, եւ դու ինքնին բժշկես, որ[23] ոչ երբեք թողուս զստեղծուածս քո[24] ի ձեռաց քոց[25], տո՛ւր մեզ, Տէ՛ր, գթութեամբդ քո[26] հոգի սգաստութեան եւ[1] Հոգի մխիթարութեան, եւ մխիթարեա[2] զվշտագնեալս սրտիւք. եւ բժշկեա[3] զվէրս հոգւոց եւ մարմնոցս[4] սոցա, զի հաստատուն քո յուսովդ[5] առողջացեալք[6] ի սգոյ եւ ի տրտմութենէ[7], *եւ մխիթարութեան քո, Տէ՛ր, արժանի լիցուք յանտրտում եւ յանաշխատ կեանստ եւ յարքայութիւնդ երկնից. եւ գոհանալով[8] փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի[9]:*

ԻԳ.[10]/[Լ.[11]] ԿԱՆՈՆ[12]. ԻՍԿ ՅԵՐԿՐՈՐԴՈՒՄ[13] ԱՒՈՒՐՆ[14]

[15]* Յորժամ յայգալացն ժողովին, եւ ասեն սաղմոս ՃԽԳ· [= ՃԽԲ· 10]· կցուրդ. *Հոգի քո բարի առաջնորդեսցե ինձ ի յեր[կիր ուղիղ].*

[16]* Երթան ի գերեզմանն առաւաւտուն եւ այս կանոն կատարի. սաղմոս ՃԽԸ· [= ՃԽԲ· 10]· ողբաձայն կցուրդ. *Հոգի քո բարի [առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ]:*

92. Ի ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑՈՑ[17] ԹՂԹ[ՈՅՆ] ՊԱՒՂ[ՈՍԻ. Բ· Թեսաղ· Բ· 12 - Գ· 5]· |*Բ.154ա*| *«Այլ[18] մեք պարտիմք գոհանալ զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր, եղբա՛րք սիրեցեալք[19] ի Տեառնէ, զի ընտրեաց[20] զմեզ Աստուած ի սկզբանէ[21] ի փրկութիւն՝ սրբութեամբ[22]* |*Ա.96բ*| *Հոգւոյն[23] եւ հաւատովք ճշմարտութեան[24],* 13 *որ[25]*

---

[1] *Ա հրշտակապետին*
[2] *Ա > յաւիտենական հանգստեանն*
[3] *Ա զարթուցեալ յայսմ] զարթուցեալ ի*
[4] *Ա քնոյս*
[5] *Ա > եւ*
[6] *Ա վերայթռիչ*
[7] *Ա ամբովք*
[8] *Ա քոց փառացտ*
[9] *Ա արժանի*
[10] *Ա > սրովբէանալ ի պարս քրովբէագունդ բանակացն եւ ի դասս հրեշտակաց եւ ամենայն սրբոց եւ սիրողաց քոց, եւ*
[11] *Ա բարեբանական*
[12] *Ա > զքեզ*
[13] *Ա զքրիստոս*
[14] *Ա > հանդերձ*
[15] *Ա հոգւոյդ*
[16] *Ա > որում վայել է փառք, իշխանութիւն հաւր եւ որդւոյ եւ հոգւոյ սրբոյ*
[17] *Բ > եւ միշտ եւ յաւիտեանս ամէն*

[18] սա ըստ՝ *Ա*
[19] սա ըստ՝ *Բ*
[20] *Բ ասէ*
[21] *Ա մխիթարութեան*
[22] *Ա նեղութիւնս մեր*
[23] *Ա եւ] որ*
[24] *Բ > քո*
[25] *Ա > ի ձեռաց քոց*
[26] *Ա գթութեամբ քով*

[1] *Ա > եւ*
[2] *Ա մխիթարեայ*
[3] *Ա բժշկեայ*
[4] *Ա հոգւոց եւ մարմնոց*
[5] *Ա յուսով քո] քո յուսովդ*
[6] *Ա ողջացեալք*
[7] *Ա տրտմութեանց*
[8] *Ա > եւ մխիթարութեան քո, տէր, արժանի լիցուք յանտրտում... եւ գոհանալով*
[9] *Ա փառաւորեսցեն զամենասուրբ զերրորդութիւնդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս] փառաւորեսցուք զհայր եւ զորդի եւ զսուրբ հոգի*

[10] *Ա.97ա, 98ա, 99ա*՝ ստ. լս. «*այգալաց*»
[11] *Բ.154ա* սկզբում սեւով՝ «*.լա.*» [=*.լ.*], *154ա, 155ա, 156ա, 157ա, 158ա*՝ «*այգոյն*»
[12] *Ա > կանոն*
[13] *Բ յարկրորդումն*
[14] *Ա.97ա* ստ. լս.՝ «*այգալաց*»
[15] սա ըստ՝ *Ա*
[16] սա ըստ՝ *Բ*
[17] *Ա թեսաղովնիկեցոց*
[18] *Բ եղբարք, այլ*
[19] *Բ որ սիրեցեալդ էք] եղբարք սիրեցեալք*
[20] *Ա ընդրեաց*
[21] *Բ > ի սկզբանէ*
[22] *Բ սրբութեան*
[23] *Ա հոգոյն*
[24] *Բ ճշմարտութեանն*
[25] *Ս յոր*

եւ կոչեաց զձեզ[1] Աւետարանաւն մերով ի փրկութիւն փառաց[2] Տեառն[3] մերոյ Յիսուսի Քրիստոսի: 14 Այսուհետեւ, եղբա՛րք, հաստատո՛ւն կացէ՛ք եւ պինդ կալարո՛ւք զաւանդութիւնն[4], զոր ուսարուքն[5], եթէ՛ բանիւ եւ[6] եթէ՛ թղթովք մերովք[7]: 15 Այլ[8] ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ Աստուած Հայր մեր[9], որ սիրեացն[10] զմեզ եւ ետ մեզ մխիթարութիւն յաւիտենից, եւ յոյս[11] բարեաց շնորհաւք, 16 մխիթարեսցէ զսիրտս ձեր եւ հաստատեսցէ յամենայն բանս եւ ի[12] գործս բարութեան[13]: [14]* Գ. 1 Այսուհետեւ, եղբա՛րք, աղաւթս արարէ՛ք եւ ի մեր վերա[15], զի բանն Տեառն ընթասցի, եւ փառաւոր լիցի յամենայն տեղիս, որպէս եւ առ ձեզ[16], 2 զի ապրեսցուք յանաւրինաց եւ յանզգամ[աց][17] մարդոց. զի ոչ ամենեցուն են հաւ|Բ.154բ|տարք: 3 Այլ[18] հաւատարիմ է Տէր, որ եւ հաստատեսցէ զձեզ եւ պահեսցէ ի չարէ անտի: 4 Վստահ եմք ի ձեզ Տէրամբ, եթէ[19] զոր պատուիրեցաքն ձեզ, եւ առնէք եւ առնիցէք: 5 Այլ[20] Տէր ուղղեսցէ զձեզ[21] ի սէրն Աստուծոյ եւ ի համբերութիւնն Քրիստոսի»:

[22]* Աղեղու ԻԸ. [=ԻԹ. 2]. Բարձր առնեմ զքեզ, Տէ՛ր, զի ընկալար զիս եւ ոչ ո[ւրախ արարեր զթշնամին իմ յիս].

Աեղուիա, սաղմոս. [Գ. 5. ՀԶ. 2. ՃԻԸ. 2]. Ձայնիւ իմով ես առ Տէր [կարդացի]:

93. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ[23] [ԻԸ. 34-38]. Տէր մեր Յիսուս ասէ[24]. «Զգոյշ[25] լերո՛ւք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ եւ արբեցութեամբ եւ հոգովք[26] աշխարհականաւք, եւ յանկարծակի[27] հասանիցէ ի վերայ ձեր աւուրն այն: 35 Զի

---

[1] Ա զմեզ
[2] Մ փառացն
[3] Բ > փառաց տեառն
[4] Ա զաւանդն, Մ զաւանդութիւնան
[5] Ա ընդալարուք, Մ ուսարուք
[6] Ա > եւ
[7] Մ մերով
[8] ԱՄ այլ
[9] Բ ~ աստուած հայր մեր եւ տէր մեր յիսուս քրիստոս
[10] Ա սիրեաց
[11] Բ զյոյս
[12] Ա > բանս եւ ի
[13] Ա բարութեան + առնել զսոսա.
[14] Ա > այսուհետեւ, եղբա՛րք... համբերութիւնն քրիստոսի (Գ.1-5 համարք)
[15] Մ ի վերայ մեր
[16] Մ ձեզզ
[17] Մ յանզգամաց
[18] Մ այլ
[19] Մ թէ
[20] Մ այլ
[21] Մ զսիրտս ձեր] զձեզ
[22] սա ըստ՝ Ա
[23] Ա՝ աւետարան եւ ղուկասու բառերի «ա» գրերը բոլորգրով են, Բ ղուկա] ըստ ղուկասու
[24] Մ > տէր մեր յիսուս ասէ
[25] Բ զգուշ
[26] Բ հոգաւք (Ա հոգովք), Մ հոգւովք
[27] Ա յանգարծակի

իբրեւ զորոգայթ հասանիցէ[1] ի վերայ ամենեցուն, որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի: 36 Արթուն կացէ՛ք այսուհետեւ[2], եւ[3] յամենայն ժամ աղաւթս արարէ՛ք, զի արժանի լինիցիք[4] զերծանել յայնմ ամենայնէ[5], որ լինելոցն է, եւ կալ առաջի |Ա.97ա| Որդւոյ[6] մարդոյ: 37 Եւ ի տուէ ի տաճարին ուսուցանէր եւ զգիշերն ելեալ ագանէր ի լերինն, որ կոչէր Ձիթենեաց: 38 Եւ ամենայն ժողովուրդն կան|Բ.155ա|խէր ընդ առաւաւտն[7] ի տաճարն[8] լսել ի նմանէ»:

[9]* Քարոզէ սարկաւագն. Վասն գտանելոյ մ.

ԱՂԱՒԹՔ ՍՐԲՈՅՆ ԲԱՐՍՂԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԵՍԱՐՈՒ ԿԱՊՈՒԴԿԱՑԻՈՅ[10].

106. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍ [Ժ. 17-24]. «Դարձան եւթանասունք[21] եւ երկուքն խնդութեամբ եւ ասեն. Տէ՛ր, եւ դեւք հնազանդին մեզ յանուն քո: 18 Ասե[22] ցնոսա. |Ա.123բ| Տեսանեի զսատանայ անկեալ[23] յերկնից իբրեւ զփայլակն: 19 Ահայ[24] ետու ձեզ իշխանութիւն կոխել զաւձս եւ զկարիճս, եւ զամենայն զաւրութիւնս

---

[1] Մ յիշեցուցանեմ
[2] Մ > աստուծոյ
[3] Մ զգաստութեան
[4] Մ համարիցիս զվկայութիւնն
[5] Մ > յիսուսի քրիստոսի
[6] Մ զկապեալ
[7] Մ փրկեացն
[8] Մ յառաջադրութեանն եւ
[9] Մ զժամանակսն
[10] Մ յաւիտենից + 10 բայց յայտնեցաւ այժմիկ՝ յերեւել փրկչին մերոյ յիսուսի քրիստոսի
[11] Մ լուսաւոր արար] լուսաւորեաց
[12] Մ եղայ] եղե
[13] Մ հաւատացեալն եմ եւ հաստատեալ եմ
[14] Մ կարաւղ է զաւանդն իմ պահել
[15] Մ զորս
[16] Մ հաւատովք
[17] Մ սիրով] յուսով
[18] Մ զբարւոք
[19] Մ > որ
[20] Մ ասացի թե պահեցից զճանապարհս իմ
[21] Մ եւթանասուն
[22] Մ եւ ասե
[23] Մ անկեալ
[24] Մ ահա

թշնամոյն[1]. եւ ձեզ ինչ ոչ[2] մեղանչիցեն: 20 Բայց ընդ այն մի՛ զարմանայք[3]՝ եթե այսք հնազանդին ձեզ. այլ խնդրեցեք[4], զի անուանք ձեր գրեալ են յերկինս: 21 Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս Հոգւովն Սրբով եւ ասե. Գոհանամ զքէն, Հա՛յր. Տէ՛ր երկնի[5] եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց, եւ յայտնեցեր[6] տղայոց. Այո Հա՛յր, զի այսպես հաճոյ եղեւ առաջի քո[7]: 22 Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հաւրե իմմե. եւ ոչ ոք գիտե եթե[8] ոյ է Հայր, եթե ոչ Որդի, եւ ոյ է Որդի, եթէ ոչ՝ Հայր[9], եւ ում Որդին կամիցի[10] յայտնել: 23 Եւ դարձեալ առանձինն յաշակերտսն[11] ասէ. Երանի է[12] աչաց, որ տեսանեն զոր տեսանեք[13] եւ լսեն զոր լսեքդ[14]: 24 Ասեմ ձեզ. զի բազում մարգարէք եւ թագաւորք կամեցան տեսանել զոր տեսեքդ[15]՝ եւ ոչ տեսին. եւ լսել զոր լսեքդ[16], եւ ոչ լուան»:

Քարոզե. Վասն ուղղելոյ զգն.:

|Ա.124ա| Եւ ճայրն ասե զաղաւթս զայս.

ՃԺԶ. Տէր Յիսուս Քրիստո՛ս, հայեա՛ց ի ստեղծուածս ձեռաց քոց, որ յուսացաւ ի քո բարերարութիւնդ, եւ գա զհետ հրամանաց քոց, ուրանալով զսատանա եւ զպատրանս նորա. Որպես եւ ետուր իշխանութիւն հաւատացելոց քոց կոխել զաւձս եւ զկարիճս եւ զզաւրութիւնս թշնամոյն, տո՛ւր, Տէ՛ր, եւ սմա յաղթութիւն ամենայաղթ խաչիւդ քո սրբով, գնալով ի վերայ իժի եւ քարբի եւ ջարդել զխայթուց թիւնաւոր վիշապին, ընդ յաղթող սուրբ հարցն ժառանգել զերկնից արքայութիւնն: Աւրհնեա՛յ, Տէ՛ր, զպատմուճան եւ զարտախուրակ սորա, որպես աւրհնեցեր ի ձեռն Մովսեսի զպատմուճանն եւ զարտախուրակն Ահարովնի եւ որդոց նորա, որոց ի նահապետումնն պատմուճանացն յաւրինէր Յակոբ զծաղկեայ պատմուճանն Յովսեփու: Աւրհնեա՛յ, Տէ՛ր, զպատմուճան սորա, որպես աւրհնեցեր զպատմուճանն Եղիայի, ընդ որոյ ձեռն հանգեաւ հոգին Եղիայի ի վերայ Եղիսեի. Աւրհնեա՛յ, Տէ՛ր, զպատ-

---

[1] Մ զաւրութիւն թշնամւոյն
[2] Մ ոչ ինչ
[3] Մ խնդայք] զարմանայք
[4] Մ խնդացեք] խնդրեցեք
[5] Մ երկնից
[6] Մ յայտնեցեր զայս
[7] Մ քոյ
[8] Մ թէ] եթե
[9] Մ ով է որդի, եթէ ոչ՝ հայր, եւ ո է հայր՝ եթէ ոչ՝ որդի] ոյ է հայր, եթե ոչ որդի, եւ ոյ է որդի, եթէ ոչ՝ հայր
[10] Մ ~ կամիցի որդին
[11] Մ առ աշակերտսն
[12] Մ > է
[13] Մ տեսանիցեն զոր տեսանեքդ
[14] Մ > եւ լսեն զոր լսեքդ
[15] Մ դուքդ տեսանեք
[16] Մ լսեքդ

մու|Ա.124բ|ճան սորա, Հա՛յր երկնաւոր, զի հանգիցէ ի վերա սորայ աւրհնութիւն աստուածատեղծ պատմուճանի քո նկարեալ ի վերուստ, զորմէ գուշակ եղեալ իմաստնոյն ասէր, եթէ Դիմեալ գայ յԵդովմա գեղեցիկ պատմուճանաւ եւ բուռն զաւրութեամբ [Հմմտ. Եսայ. ԿԳ. 1]. *այն աւրհնութիւնն հանգիցէ ի վերա պատմուճանի սորայ, լրութեամբ շնորհաց քոց. եւ մեք գոհացողական ձայնիւ փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հ[ոգի]:*

Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպագե[սցուք].

ԾԺԷ. *Քրիստոս Աստուա՛ծ մեր, յոյս փրկութեան եւ պարիսպ ամրութեան, պահեա՛յ զծառայս քո զայս անուն անսասանելի յաւիտեան, զժամանեալս յաստուածահրաւիրակ կոչմանս, եւ կարգեա՛յ զսայ ընդ հաճոյս քո, զգեցո՛յ սմայ զպատմուճան արդարութեան, վառեա՛յ զմեջ սորայ ամենայն ժուժկալութեամբ, ցո՛յց զսայ ճգնաւոր եւ գործաւոր գործոց բարութեան, պարկեշտ, սուրբ, անարատ, ամբիծ, ցածուն, զուարթուն առ ամենեսեան, հեզ, խոնարհ, խաղաղարար, սուրբ սրտիւ, եւ միանգամայն արիացեալ վարիւք սրբ|Ա.125ա|ութեամբ յամենայնի պահեսցի յանուն քո անարատ, աւրհնութեամբ ի հաճոյս քեզ: Ընդ սմայ եւ զմեզ աւրհնեա՛յ հոգեւոր շնորհաց եւ պարգեւաց ի փառս ամենաւրհնեալ տէրութեանդ. ցո՛յ զմեզ Հոգւով Սրբով հոգեւոր ուրախութեամբ, ի հրաւէր կատարման կարգի սրբութեան: Զի դու ես Աստուած ընդունող եւ փրկիչ, որ կամիս, զի ամենայն մարդ կեցցէ եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ: Եւ քեզ փառս վերառաքեսցուք ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ այսր աստուածաւրհնութեանց եւ շնորհաց ամենայն կատարման փառս տան. Եւ[1] եթէ կուսան լինի, հանեն ի բեմբն[2], եւ երկրպագեցուցանէ առաջի սրբոյ սեղանոյն. Եւ ողջունեն զնա համբուրիւ ամենիքեան[3] որք կցորդ եղեն նորա յաւրհնութեանն[4] եւ կարգին[5]. Եւ աւրհնեալ յամենայն եղբարցն, մնայ անդրեն յեկեղեցւոջն որպէս զնորոգ փեսայ յաստուածային առագաստին, զարդարեալ աստուածային կրաւնիւքն[6], զգեցեալ զտէրունական պատմուճանն[7], որ է անարատ

---

[1] *Յ > եւ*

[2] *Հ բեմին*

[3] *Հ ողջունեալք համաւրէն ամենեքեան*

[4] *Յ յաւրհնութեան*

[5] *Հ աւրհնութեանցն եւ կարգին սրբութեան*

[6] *Հ առաքինաձեւ կրաւնիւք] աստուածային կրաւնիւքն*

[7] *Հ պատմուճան.* Հ էջ 367/184ա. ստ. լս. գրչից՝ «*սքեմաւո՛ր, լսէ՛ խրատուս, զի*

խոնարհութիւն եւ մեծ պսակ քրիստոնէութեան, սուրբ անուան Տեառն |*Ա.125բ*| զաւրութեամբ եւ քաջութեամբ, ժրութեամբ, պնդութեամբ պահաւք, եւ աղաւթիւք, ճգնութեամբ եւ ամբոխ ծնդրադրութեամբ[1], զգլուխն ծածկեալ, լի արտասուաւք եւ անդադար սաղմոսերգութեամբ[2], արիացեալ ամենայն զաւրութեամբ իւրով՝ ի մարտ ընդդէմ ամենաբոյծ[3] շարժմանց, ի բաց խլել զստամարմնոյ[4] կամս, զվարս առաքինութեան հրշտակական[5] վարել աստուածեղէն իմաստութեամբ, որպէս եւ վայելուչ իսկ է[6] Աստուծոյ ճգնաւորի, ոչ ինչ[7] զանցաւորս զայս եւ զհողեղէն խորհուրդս յինքեան բերելով[8], այլ ճշմարտիւ[9] յերկինս գումարել[10], բոլորել զանձն[11] որպէս առաջին սուրբ հարքն, բնաւ իսկ եթէ զուցէ աշխարհ, չգիտելով բնաւորեալ[12], միացմամբ եւ անդադար աւրհնութեամբ, անձկալի[13] սրտիւ ակն ունել գալստեան Քրիստոսի[14] յերկնից: Սիրել զնոյն Տէր Աստուած մեր ամենայն զաւրութեամբ, սուրբ եւ անարատ մտաւք, եւ սիրել զընկերն իբրեւ զանձն: Եւ զնոյն ինքն Տէրն ինքեան հաշուի ի փոփոխումն բարութեան[15]: Կուսան հոգով եւ կուսան մարմնով[16], զի[17] Տէրն զայս երիս[18] պահանջէ յամենայն մարդոյ հաւատացելոյ. զսրբութիւն մարմնոյ, զճշմարտութիւն լեզուի, զհաւատս ուղիղս[19] ի խորհուրդս՝ որպէս եւ ասաց սուրբ հայրն: Արդ, պարտ է ողջախոհ եւ[20] ողջամիտ լինել յամենայնի, կանխեալ միշտ ի խորհուրդս բարիս[21], |*Ա.126ա*| զբաղմամբ հաճոյիցն Աստուծոյ, արդարութեամբ եւ ուղղութեամբ: Եւ այսու ամենա[յ]նիւ[22] վայելչացեալ[23], քրիստոսագետ պատուիրանապահութեամբ[24] լիցի անտրտունջ յամենայնի: Եւ համբերեալ[25] խոնարհութեամբ՝ որպէս ասաց Տէր, հաստատուն կալ ի բան նո-

---

կեցցես միշտ»

[1] *Հ ծունրդրութեամբ*

[2] *Հ > եւ անդադար սաղմոսերգութեամբ*

[3] ՆՀԲ. գուցէ գրելի էր՝ *ամենաբիծ*

[4] *Հ առեալ զըստ մարմնոյ] խլել զստամարմնոյ*

[5] *Հ հրշտակաց*

[6] *Հ վայել է] վայելուչ իսկ է*

[7] *Հ մի ինչ*

[8] *Հ յիշել յինքեան բերել*

[9] *Հ այլ ճշմարտութեամբ*

[10] *Ա գումատել (Հ գումարել)*

[11] *Հ զբոլոր անձնն] բոլորել զանձնն*

[12] *Հ չգիտել, բնաւորեալ*

[13] *Հ եւ անձկալից*

[14] *Հ տեառն] քրիստոսի*

[15] *Հ զընկերն, իբրեւ զնոյն ինքն զՏէրն, վասն զի ինքեան համարի զառ ի փոփոխումն բարերարութեանն] զընկերն... բարութեան*

[16] *Հ կուսական հոգւով եւ կուսական մարմնով*

[17] *Հ զի եւ*

[18] *Հ երիս պատուիրանս*

[19] *Հ զճշմարտութիւն լեզուին, զսրբութիւն մարմնոյն եւ զհաւատս ուղիղս] զսրբութիւն... ուղիղս*

[20] *Հ > ողջախոհ եւ*

[21] *Հ բարեաց*

[22] *Հ ամենայնիւ*

[23] *Յ վայելջացեալ*

[24] *Հ քրիստոսազգեստ պատուիրանադրութեամբ*

[25] *Հ համբերող*

րա: Իսկ վասն հանդերձի, որպէս աւանդեցին մեզ եգիպտական սուրբ հարքն[1] հոգեկրաց[2], խոշորահանդերձ, գձուձ[3], անարգ, խոնարհ. զի նորա մեծքն ասղնաթոռոյ պարեգաւտիւք անցուցին զնշդէհական[4] վայրայուծութիւնս, եւ խարազնաւոր կրաւնիւք մերկ եւ բոկ, եւ ամենայն կարաւտիւք՝ որպէս սուրբ առաքեալքն եւ մարգարէքն լեշկամաշկովք, քաղցով եւ ծարաւով եւ ընդովք[5] եւ բաննարանաշակ կերակրովք: Եւ սոքա զնոցա[6] յուսաւոր շաւիղսն հետեւեցին ամենայն[7] առաքինութեամբ: Վասն այսորիկ պարտ է ագանել այծես կամ այլ ինչ խարազնազգեստ նեղաստորոտ[8], զի մի՛ պէտս ինչ շաւշափեսցի եւ մեծաբայլեսցէ[9]: Եւ թէ[10] կարասցէ ժուժկալել խոշորութեան վարուցն[11], թեզանատ լիցի եւ բոկոտն, որպէս եւ[12] արդարեւ յուսացեալ ի Տէր եւ առե[ա]լ[13] հրամանն կոխել զաւձս եւ զկարիճս եւ զամենայն զաւրութիւն թշնամոյն: Ապա թէ ոչ՝ սգե[ց]ցի[14] հողաթափս եւ կաշիկս, իսկ վարտիս ամենեւին ոչ, զի մի՛ շաւշափեսցի ընդ անդամս մարմնոյն: Գաւտի մաշկեղէն ընդ մէջ, որ նշանակէ զարիական պատ|*Ա.126բ*|րաստեալ ի պատերազմ ընդդէմ թշնամոյն: Այնոքի[ւ]կ[15] պնդեալ զերիկամունսն զցանկութեան սգայարանսն[16]. եւ դնել կնկող առանց խաւոյ[17], որ նշանակիչ է նահատակութեան[18]՝ որպէս զաւրականացն սաղաւարտն, զոր ի հին արտաքնոցն կորբանն կոչեն[19], այսինքն՝ գագաթնադաշն[20], եւ առանց խաւոյ, որ նշանակէ զԱստուծոյ պատուիրանին պահպանութիւնն[21]՝ ո՛չ մարմնով այլ ոգով[22]: Եւ արկանեն բանկոն չորեքկուսի[23], խրացիւք պնդեալ զլանջսն[24], որ

նշանակէ զչորեքժամանակեան տարժանմունս եւ զգձութիւնս: Արդ. պարտ է մեզ ամենայն ճգնական փութով ոչ խնդրել կամս եւ ստանալ փափուկ ինչ հանդերձ՝ բարակս եւ ողորկս, եւ այծենիս կրկնավերտ սախմանալի նա խորհրդով[1], որ թշնամութիւն է առ Աստուած. զի ամենայն չարեաց պատճառս ի փափուկ հանդերձից լինի. եւ ոչ ի հայել ընդ աշխարհականս աւելիս, զի պճնումն հանդերձից իշխանաց է, աղաբանոսաց, վարդապետաց եւ կրկնոցաց քաղաքացեաց[2]: Իսկ կրաւնաւորացն եւ հոգով վառելոց այնպիսիքն անվայելուչ պատշաճին սգեստք: Այլ որպէս եւ սուրբ հարքն աւանդեցին, եւ մեր հարքս ընկալան, այնու պարտ է մեզ վարիլ ճգնութեամբ, անբամբաս յաշխարհէ եւ անխիղճ յանձնէ առ Աստուած եւ առ մարդիկ:

Իսկ կանանց պարտ է սքեմ տալ եւ զնոյն կատարել կարգս: Բայց |*Ա.127ա*| հոլանի սարկաւագուհիքն արասցեն, սեւ փակեղամբ ծածկե[ս]ցեն զնակատն մինչեւ յաւնսն: Իսկ եթէ յարուաց ոք իցէ ի կղերիկոսաց, յառաջ ընդ ձեռամբ անկելոց, այսինքն՝ երեց կամ սարկաւագ, այս կարգ մի՛ կատարեսցի ի վերայ նորա, բայց միայն զձեւն եւ զվարսն յանձն առցէ: Եւ յետ փասս տալոյն մտանեն ի ժամ ճաշոյ, եւ մարմնոյ եւ արեան Տեառն հաղորդե[ս]ցի:

Եւ Ը. աւր յեկեղեցւոջն կաց[ց]է, սաղմոսելով ի տուէ եւ ի գիշերի: Եւ հարն չէ պարտ մեկնել ի նմանէ, այլ խրատելով զնա եւ քաջալերել աստուածային պատուիրանացն եւ ամէնայն առ Աւետարան կարգաւ: Եւ յետ Ը. աւուրն հայրն զկնկողն վերացուցանէ, եւ զգաւտին լուծանէ, եւ բնակեցու[ս]ցէ զնա ընդ արդիւնաւոր կրաւնաւորի եւ ընդ հոգեւոր ճգնաւորի, յանձն առնելով շնորհաց Սուրբ Հոգւոյն, որ կարողն է հաստատել զնա ի սրբութեան վարս, մինչեւ յաւրն մահուան իւրոյ եւ կոչմանն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւ[իտեան][*]:

---

[1] *Յ հարքն*

[2] *Հ աւետարանեցաւ մեզ յեգիպտական սուրբ հարցն հոգեկրացն] աւանդեցին... հոգեկրաց*

[3] *Յ գձուձ*

[4] *Յ զնշտեհական*

[5] *Հ ասղնաթուոյ կենաւք անցուցին զնժդեհական վայրայուծութիւնս, բոկ եւ մերկ եւ ամենայն կարաւտութեամբ լի, որպէս առաքեալքն եւ մարգարէքն՝ լեշկամաշկաւք, քաղցիւ եւ ծարաւով, եւ ընտովք] ասղնաթոռոյ... ընդովք*

[6] *Հ ի նոյն] զնոցա*

[7] *Հ լի ամենայն*

[8] *Հ պճղնաւոր, նեղաստորոտ*

[9] *Հ մի՛ ի պէտս ինչ շուշափիցէ եւ մեծաքայլիցէ*

[10] *Հ եթէ] եւ թե*

[11] *Հ ~ վարուցն խոշորութեան*

[12] *Հ > եւ*

[13] *Հ առողի*

[14] *Հ զգեցցի*

[15] *Հ այսինքն] այնոքի[ւ]կ*

[16] *Հ զցանկութեան զգայարանսն*

[17] *Հ խաւոր*

[18] *Հ է նշանակ խոնարհութեան] նշանակիչ է նահատակութեան*

[19] *Հ կարիրատ կոչի*

[20] *Հ գագաթան դրոշմ*

[21] *Հ ճշմարտապէս նշանակէ զաստուծոյ շնորհացն պահպանութիւն] որ նշանակէ զաստուծոյ պատուիրանին պահպանութիւնն*

[22] *Հ հոգւով*

[23] *Հ արկանել բաճկոն չորեքանկիւնի*

[24] *Հ պնդել զառաջս] պնդեալ զլանջսն*

---

[1] *Հ եւ ո՛չ այծենիս կրկնավերտս ախտալիս իմն] եւ այծենիս կրկնավերտ սախմանալի նա խորհրդով*

[2] *Հ պճնումն հանդերձից՝ իշխանաց, եւ աղաբողոն՝ վարդապետաց, եւ կրկնոց՝ քաղաքացեաց*

[*] Բ.վ.Ս.՝ «յոյժ գեղեցիկ, խորհրդալից եւ միանգամայն սրտաշարժ կանոնս, որ յաջորդներէն յապաւումներով եւ յաւելուածներով փոփոխուած է, եգիպտական հարց գանձարանէն պահուած հնագոյն եւ թանկագին յիշատակարան մ'է, ինչպէս ցոյց կու տան նաեւ մէջի աստարոտի բառերն եւ լեզուն իսկ. եւ ահա այս պատճառով եւս ամէն տեսակէտով ուշադրութեան արժանի» (Յ. էջ 33):

ԻԶ.[1] ԿԱՆՈՆ ՀԱՅՐ ԱՌՆԵԼ

Ժողովին ուխտն եւ առաջի կացուցանեն զոր ընդրեալն են: Եւ ասեն սաղմոս ի թիւ ԻԳ. [1]. *Առ քեզ, Տէ՛ր, համբարձի.* ՃԻԳ. [1]. *Որ յուսա ի Տէր որպէս ի լեառն Սիովն,* ՃԼ. [1]. *Տէ՛ր, ոչ բարձրացաւ սիրտ իմ:* Քարոզէ.

ԾԺԸ. *Վասն ընդունելոյ զխնդրուածն[2] մեր ամենեցուն եւ առաքելոյ զշնորհս օրհնութեան ի մեզ՝ աղաչե[ս]ցուք հաւատով եւ միաբանութեամբ զփրկիչն մեր Քրիստոս, զի որպէս |Ա.127բ| եւ յոյս եւ համբերութիւն ծառայից իւրոց եւ ասաց, եթէ՝ «Խնդրեցէք եւ տացի ձեզ, հայցեցէք եւ գտջիք, բախեցէք եւ բաց[ց]ի ձեզ» [Մտթ. Է. 7], շնորհե[ս]ցէ մեզ մարդասիրութեամբ իւրով զհաճոյն իւր եւ զաւգուտն մեր, զամենայն պէտս բարեաց. եւ զամենայն բաւականութիւն ընդունելեաց, գոհանալով փառաւորեսցուք զպարգեւատուն բարեաց կենաց եւ փրկութեան մերոյ, զընդունող աղաւթից եւ զկատարիչ խնդրուածոց մերոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս. Տէ՛ր մեր, կեցո՛յ եւ ողորմեա՛: Լ. Տէր ողորմեա՛:*

Հայրն ասէ զաղաւթս զայս.

ԾԺԹ. *Անգեալ եմք առաջի քո, բարերար եւ բազումողորմ Աստուա՛ծ, աղաչեմք ամենայն սրտիւք մերովք եւ խնդրեմք զգթութիւն եւ զողորմութիւն ի քէն, որպէս խոստացար ծառայից քոց եւ ասացեր. Զամենայն ինչ զոր եւ խնդրեք հաւատով յանուն Որդւոյ, տացի ձեզ [Հմմտ. Յովհ. ԺԵ. 16]: Շնորհեա՛յ եւ մեզ հաւատացելոցս ի քեզ եւ կատարեա՛յ ի բարի զխնդրուածս մեր, վասն զի ի քեզ եմք ապաւինեալ, եւ քո առատ մարդասիրութիւնդ մխիթարեսցէ զմեզ ի կեանս յայսմիկ, եւ առաջնորդեալ հասուսցէ յերկնից յարքայութեանդ՝ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, |Ա.128ա| որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յ[աւիտեանս]:*

Ապա ասեն սաղմոս Ճ. [1]. *Ողորմութիւն եւ յիրաւունս [աւրհնեցից զքեզ, Տէ՛ր].*

107. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵԶԵԿԻԵԼԵ ՄԱՐԳ[ԱՐԷԷ. ԼԳ. 7-19]. *Այսպէս ասէ կամարար Տէր[3]. «Դէտ կացուցի զքեզ ի վերայ[4] տանդ Իսրայէղի[5], եւ լուիցես բանից բերանոյ իմոյ[6], զգուշասցիս նոցա[7] իբրեւ յինէն: 8 Յասել ինձ ընդ մեղաւորն եթէ[1] մահու մեռանիցիս. եւ դու ոչ զգուշացուցանես անաւրինին դառնալ ի ճանապարհե իւրում չարէ. եւ կեալ անաւրենն յանաւրենութեան[2] իւրում մեռցի, եւ զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից: 9 Իսկ եթէ զգուշացուցանես անաւրինին եւ ոչ դառնայցէ յանաւրենութենե եւրմե եւ ի ճանապարհե իւրմե չարէ, անաւրենն յանաւրենութեան իւրում մեռցի[3], եւ դու զանձն քո ապրեցուցես[4]: 10 Եւ յորժամ դարձ[ց]ի արդարն եւ արասցէ յամենայնս, արկից տանջանս զգլխով նորա, ինքն մեռցի, քանզի ոչ եթէ յիշեսցին արդարութիւնք նորա զոր արար, բայց քանզի ոչ զգուշացուցեր նմա, զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից, ապա եթէ զգուշացուցեր |Ա.128բ| արդարոյն զի մի՛ մեղիցէ, արդարն կելով կեցցէ, զի զգուշացուցեր նմա, եւ դու զանձն քո ապրեցուցես»:*

108. Ի ՅԵԲՐԱԵՑՈՑ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈ [ԺԳ. 17-21]. *«Ունկնդիր[5] լերո՛ւք առաջնորդաց ձերոց եւ հպատակ կա-*

---

[1] *Ա.128ա, 129ա*՝ ստ. լս. «*.իզ. հայր առնել*» (*130բ*՝ առանց *.իզ.* համարի)

[2] *Ց զխնդրուածս*

[3] *Ս > այսպես ասե կամարար տէր*

[4] *Ս > ի վերայ*

[5] *Ս իսրայէլի*

[6] *Ս իմոյ, եւ*

[7] *Ս զգուշացուսջիր դնոսա*

[1] *Ս զմեղաւորն թէ] ընդ մեղաւորն եթե*

[2] *Ս ոչ խաւսիցիս զգուշացուցանել զամպարիշտն ի ճանապարհէ իւրմէ. ինքն անաւրէնն յանաւրէնութեան] ոչ զգուշացուցանես... յանաւրէնութեանն*

[3] *Ս ապա թէ դու յառաջագոյն պատմեսցես ամպարշտին զճանապարհս իւր՝ դառնալ նմա ի նմանէ, եւ ոչ դարձցի ի ճանապարհէ իւրմէ. ինքն յամպարշտութեան իւրում մեռցի] իսկ եթե զգուշացուցանես... իւրում մեռցի*

[4] շարունակությունը հիմնովին տարբեր է՝ «10 *եւ դու որդի մարդոյ՝ ասա ցտունդ իսրայէլի: այսպէս խաւսեցարուք եւ ասացէք, եթէ. մոլորութիւնք մեր եւ անաւրէնութիւնք մեր ի մեզ են, եւ մեք ի նոսին մաշիմք. եւ զիա՞րդ ապրեսցուք: 11 ասա ցնոսա. կենդանի եմ ես՝ ասէ ադոնայի տէր. ոչ կամիմ զմահ ամպարշտին, որպէս զդառնալ ամպարշտին ի չար ճանապարհէ իւրմէ՝ եւ կեալ: դառնալով դարձարուք ի ճանապարհաց ձերոց չարաց. եւ ընդէ՞ր մեռանիք տունդ իսրայէլի: 12 եւ դու որդի մարդոյ՝ ասա ցորդիս ժողովրդեան քոյ: արդարութիւն արդարոյն ոչ փրկեսցէ զնա՝ յաւուր յորում մոլորեսցի. եւ անաւրէնութիւն անաւրինին ոչ չարչարեսցէ զնա՝ յաւուր յորում դառնայցէ յամենայն յանաւրէնութենէ իւրմէ: եւ արդարն ոչ կարասցէ ապրել յաւուր մեղաց իւրոց: 13 յասել ինձ ցարդարն՝ թէ՝ կելով կեցցես, եւ նա յուսացեալ յարդարութիւն իւր՝ առնիցէ անաւրէնութիւն. ամենայն արդարութիւնք նորա մի յիշեսցին, այլ անաւրէնութեամբն իւրով զոր արար՝ նովին մեռցի: 14 եւ յասել ինձ ցամպարիշտն թէ՝ մահու մեռջիր. եւ դարձցի ի մեղաց իւրոց, եւ արասցէ իրաւունս եւ արդարութիւն: 15 եւ զգրաւ պարտապանին ի բաց տացէ, եւ զյափշտակութիւնն դարձուցանիցէ, ի հրամանս կենաց գնասցէ չառնել զանիրաւութիւն. կելով կեցցէ՝ եւ մի մեռցի: 16 ամենայն մեղք իւր զոր մեղաւ՝ մի յիշեսցին. զի իրաւունս եւ արդարութիւն արար, նոքիմբք կեցցէ: 17 եւ ասեն որդիք ժողովրդեան քոյ. ոչ ուղիղ են ճանապարհք տեառն. նա՝ նոցա ճանապարհն չէ ուղիղ: 18 ի դառնալն արդարոյն յարդարութենէ իւրմէ եւ առնել անիրաւութիւնս՝ նոքիմբք մեռցի: 19 եւ ի դառնալ մեղաւորին յանաւրէնութենէ իւրմէ՝ եւ առնիցէ իրաւունս եւ արդարութիւն՝ նոքիմբք կեցցէ»*

[5] *Ս ունկնդիր*

ցե՛ք նոցա, զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց՝ որպէս եթէ[1] համարս տալոց են[2] ընդ ձեր, զի խնդութեամբ արասցեն զայն, եւ մի՛ յոգոց[3] հանելով, զի այն ո՛չ յաւգուտ ձեր է: 18 *Աղաւթս արարէ՛ք վասն մեր, զի հաստատեալ գիտեմք, եթէ բարեւք[4] միտս ունիք[5]. յամենայնի կամիմք բարեւք[6] գնացս ցուցանել:* 19 *Եւ առաւել աղաչեմք[7], զի զայն առնիցեք, զի լաւագոյն[8] պատսպարեցայց ձեզ:* 20 *Եւ Աստուած խաղաղութեան, որ էհան[9] ի մեռելոց զհովիւն հաւտից՝ զմեծն արեամբն[10] յաւիտենական ուխտին զՏէր մեր Յիսուս Քրիստոս[11],* 21 *հաստատեսցէ յամենայն[12] գործս բարութեան՝ առնել զկամս նորա. եւ արասցէ ի մեզ զհաճոյսն իւր[13] առաջի իւր՝ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս. ամէն»:*

Ալելու ԺԴ· [1]· *Տէ՛ր, ո՞վ կաց[ց]է ի խորանի քում:*

109. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ [Ժ· 11-16].

Տէր մեր Յիսուս ասէ[14]. «Ես եմ |Ա.129ա| հովիւ[15] քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց իւրոց[16]: 12 *Իսկ վարձկանն որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն. իբրեւ տեսանէ զգայլն զի գա[17], թողու զոչխարսն եւ փախչի. եւ գայլն յափշտակէ[18] զնոսա եւ ցրուէ.* 13 *զի[19] վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն:* 14 *Ես եմ հովիւ[20] քաջ. եւ ճանաչեմ զիմսն. եւ ճանաչիմ յիմոցն:* 15 *Որպէս գիտէ զիս Հայր. գիտեմ եւ ես զՀայր[21]. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց իմոց[22]:* 16 *Նա եւս այլ[23] ոչխարք իմ են[24], որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայն[25] եւս պարտ է ինձ ածել այսր. եւ ձայնի իմում լսիցեն[26], եւ եղիցին մի հաւտ՝ եւ մի հովիւ»:*

Քարոզէ սարկաւագն. *Վասն գտանելոյ:*

Եւ գլխաւորն ասէ զաղաւթս.

---

[1] *Մ թէ*
[2] *Մ իցեն] են*
[3] *Մ յոգւոց*
[4] *Մ բարւոք*
[5] *Մ ունիմք*
[6] *Մ բարւոք*
[7] *Մ աղաչեմ*
[8] *Մ վաղագոյն] լաւագոյն*
[9] *Մ եհան*
[10] *Մ արեամբ*
[11] *Մ > քրիստոս*
[12] *Մ զձեզ ի] յամենայն*
[13] *Մ > իւր*
[14] *Մ > տէր մեր յիսուս ասէ*
[15] *Մ հովիւն*
[16] *Մ > իւրոց*
[17] *Մ գայ*
[18] *Մ յափշտակէ*
[19] *Մ քանզի] զի*
[20] *Մ հովիւն*
[21] *Մ զհայրն*
[22] *Մ > իմոց*
[23] *Մ եւ այլ եւս] եւս այլ*
[24] *Մ ~ են իմ*
[25] *Մ զայնս*
[26] *Մ լուիցեն*

ԾԻ. *Թագաւո՛ր խաղաղութեան եւ փրկի՛չ անձանց մերոց Քրիստոս Աստուա՛ծ, որ վասն մեր խոնարհեցար յերկնից. աւետարանեցեր զպարգեւս քո բարեաց, եւ առաքեր քեզ ժողովուրդ սեպհական, նախանձաւոր գործոց բարութեան, ծառայս եւ աղախնայս, որոշելով յաշխարհական զբաղանաց, կուսութեամբ եւ սրբութեամբ |Ա.129բ| միշտ զարդարել. փառաւորեսցեն զամենաւրհնեալ անունդ նմանութեան դասուց վերնոց, որոշեցեր եւ վերայկացուս շնորհիւք քովք՝ լինել մատակարար բանին ճշմարտութեան, եւ ոմանց հնազանդութեան, զի հաստատեսցի ի նոսա քարոզութիւն Աւետարանին, զի միաբանութեամբ փառաւորեսցիս միշտ. եւ այժմ, Տէ՛ր բարերար, առաքեա՛յ զշնոր[հ]ս բարերարութեան եւ լի՛ց զսա հոգով իմաստութեան, եւ զաւրութեամբ, զոր ընդրեցեր յառաջնորդութիւն ժողովրդեան քո, որ տաս բան աւետարանչաց զաւրութեամբ քով, առ ի հաստատութիւն Աւետարանին: Դու ինքնին, Տէ՛ր, վերայկացու եղիցիս սմայ, եւ ի խորհուրդս արդարութեան առաջնորդեսցես եւ ի գործս բարիս, եւ փառաւք ընկալցիս, ըստ երկնաին կոչմանն խորհել, եւ ամենայն ճշմարտութեամբ վարիլ ի կենցաղումս, հովել զհովելս եւ առաջնորդել զառաջնորդեալս, շնորհաւք եւ մարդասիրութեամբ քո, որով խնամես զա|Ա.130ա|պաւինեալս ի քեզ: Որպես զի հայր բարեմիտ, եւ որդի դիւրահաւանք եւ հնազանդք, միաբանեալք ընդ ամենահեշտ լծով քո, ապրեսցին յորոգայթից սատանայի, եւ հաստատուն եւ անշարժ եւ անդրդուելի պահեսցի ի վերակացութեան հաւատս, եւ ի փառս ամենասուրբ Երրորդութեանդ, եւ այսպիսի հոգեւոր պարգեւաւք երկրաւնիւք վերայբերեալք յերկրէ, երկնաւոր անմահ կենացն ժառանգորդ լին[ել]ով, ընդ սուրբ հարցն եւ ընդ ճշմարիտ վերայկացուսն մատուցանել զաւրհնութիւն եւ զփառս Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն այժմ:*

Եւ ասեն կցուրդ ըստ խորհրդեանն, եւ նստուցանեն յաթոռն, եւ խաչն եւ Աւետարանն եւ բարսիղն ի գիրկսն: Եւ ուխտն ողջունեն ի փառս Աստուծոյ:

ԾԻԱ. ԲԱՐՍՂԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԲԱՆ ԽՐԱՏՈՒ ԱՍԱՑԵԱԼ.

Արդ, յառաջ ընտրեալ միոյն, խափանեսցին ամենայն կողմնաւոր կամք առ յառաջ ունողսն, ամենիքին որ զկնի այսմ տպաւորեսցին առաքելոյ հրամանողի հաւատացեն, ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է ի հնազա|Ա.130բ|նդութեան կայցէ, զի որ ընդդիմակացքն են, առցեն իւ-

րեանց դատաստան: Իսկ ճշմարիտ եւ կատարեալ հնազանդութիւն ընդ ձեռամբ անգելոյն առ իւրեանց առաջնորդսն յայժմ ցուցի, զի ոչ միայն յանտեղեացն ըստ խորհրդակցութեան վերակացուին հրաժարեսցէ, այլ եւ մի նոյն ինքն զգովելին առանց նորին կամացն արասցէ, քանզի ժուժկալութիւնք եւ ամենայն մարմնական չարչարանք առ ինչ պիտանացու ունի, ապա եթէ զիւր զանարգելութեանն զհետ երթայցէ, եւ զհաճոյսն իւր արասցէ, մեծ քան զուղղութիւնն են յանցանքն, քանզի որ ընդդեմ կա իշխանութեանն, Աստուծոյ հրամանին կա ընդդեմ, եւ հնազանդութեան վարձն առաւել է, քան զժուժկալութեանն ուղղութիւն, զի ասացեալն յառաջնորդեն աւրենք են, վասն որոյ որ զհասարակաց հոգսն հաւատացեալն է, իբրեւ զի պարտական է տալ պատասխանի վասն իւրաքանչիւր ումեք, այսպես զգուշասցի, զի եթէ ոք յեղբարցն կործանեսցի |Ա.131ա| ի մեղս, եւ ոչ յառաջագոյն ասասցէ նմա զիրաւունսն Աստուծոյ, եւ կամ թէ զայթակղեալ ոք ի նմին կայցէ, եւ ոչ ուսուսցէ նմա զաւրինակ ուղղութեանն, զարիւն նորա ի ձեռաց նորա խնդրեսցի. զինչ պարտ է առնել, որ զի պարտական է եղբայրութեանն տքնել վասն ոգւոց նոցա. եւ հոգալ վասն փրկութեան իւրաքանչիւրոցն. որպես զի համարս տալոց է հոգալ այսչափ. որպես զի մինչեւ ի մահ զփոյթն վասն նոցա ցուցանել. ոչ միայն զհասարակացն առ ամենիսեան սիրոյ ըստ Տեառն բանի. զի զանձն իւր դիցէ ի վերա սիրելեաց իւրոց. այլ եւ առանձինն ըստ ասելոյն յանձն առնուաք, եւ հաճոյ թուեր մեզ տալ ոչ միայն զԱւետարանն. այլ եւ զանձինս մեր. զի սիրելիք մեր եղերուք ի փառս Քրիստոսի Աստուծոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յա[ւիտենից].

Ապա մտանեն ի ժամ ճաշոյ. եւ պատարագ հայրն մատուցանէ, եւ ուխտն հաղորդին ըստ արժանեացն ի փառս Աստուծոյ:

ԻԷ.[1] ԱՂԱՒԹՔ Ի ՎԵՐԱՅ ՏՆՏԵՍԻ

ԾԻԲ. *Աստուած կենդանի եւ ամենայն կենդանեաց կերակրիչ, որ տաս կերակուր |Ա.131բ| ամենայն մսեղեաց, որ սահմանեցեր սրբոց առաքելոցն քոին լուսաւոր հրամանաւքդ, ասելով. եթէ որ մեծն է ի ձենջ, եղիցի ձեր սպասաւոր* [Մտթ. ԻԳ. 11], *եւ զքո ամենաւրհնեալ աստուածութիւնդ սպասաւոր հողեղինացս կացուցեր, խոնարհեալ քեզ վասն մերոյ նուաստութեանս, որ ես լիութիւն ամենայն կարաւտելոց: Եւ այժմ, Տէ՛ր բարերար, հաեա՛ց քաղցրութեամբ յառաջի կացեալ եղբայրս մեր, զոր ընդրեցաք ամենաբարի անուամբ քով՝ կալ մեզ ի կարգի տնտեսութեան, տո՛ւր սմա միտս սգաստս եւ վարս ուղիղս, սիրտ մաշեալ առանց խռովութեան, եւ հոգի ողորմած առ հեռաւորս եւ առ մերձաւորս, որպես զի հաւասար տալ ամենայնի զթով, տացէ որպես որդոց իւրաքանչիւր ումեք զիարդ պիտոյ իցէ, որպես Յուսեփ ի տանն փարաւոնի սպասաւոր ամենարուեստ, եւ աջողակ ձեռաւք ի ժամանակի սովոյն կերակրեր զԵգիպտոս եւ զամենայն կարաւտեալս, այսպես եղիցին կամք քո ի վերայ եղբաւրս մերոյ, որպես |Ա.132ա| զի յամենայն ինչ յոր եւ հպեսցին ձեռք սորա, ընդալցինս իմն շնորհաց, որպես Կոռնեղիոս եւ որպես Կամսափն Սոմնացոյն, լի եւ պատարուն եղիցին մնացեալ նշխարք կոտորոցն ի գալ միւսում տարոյն, որպես ի հինգ նկանակեն, եւ յերկուց ձկանցն, զոր ամենազաւր աջովդ քո աւրհնեցեր:*

Տո՛ւր սմա, Տէ՛ր, զվարձս Աբակումա քո կամահաճոյ մարգարէին, որ կերակրեաց զԴանիել ի գուբ առեւծուցն, տնկեա՛յ ի սմա զսեր եւ զերկիւղ քո, զի մի՛ երկբաւրեն աչառանաւք զոմանս մեծարիցէ, եւ զոմանս արհամարհիցէ, այլ առաւել քան զմեծարելոյն սպաս տարցէ տկարացն եւ հիւանդացելոցն, եւ մի՛ ծուղղութեամբ զվարս վաստակոցն կորուսանիցէ, եւ զոր եւ դու իսկ յաւետաբեր Աւետարանին քրիստոսագունդ եւ խաչակիր առաքելոցն ասացեր. Ով իցէ հաւատ[ար]իմ եւ իմաստուն տնտես, զորս կացուսցէ Տէր ի վերայ ծառայից իւրոց՝ տալ նոցա կերակուր ի ժամու [Ղկ. ԺԲ. 42]: *Երանի է ծառային այնորիկ, զոր եկեալ տէրն, գտցէ արարեալ այնպես: |Ա.132բ| Եւ արդ, Տէ՛ր մեր եւ Աստուա՛ծ, յո՛յս եւ ակնկալութիւն այնոցիկ, որք հաւատով կարդան զամենաւրհնեալ անունդ, արժանի արա՛ զսայ ի ձեռն այս տնտեսութեանս ընդու-*

---

[1] *Ա.131ա, 132ա*՝ ստ. լս. *«տնտես առնել»*

նել ի քեն զգիր ազատութեան անձեռագործ եւ անաշխատելի կենաց վերնայարկին Երուսաղէմի, լսել ի քեն զԾառայ բարին [Մտթ. ԻԵ. 21] *եւ զայն թէ. Որովհետեւ արարեք միում ի փոքրկանց եղբարց, ինձ արարեք* [Մտթ. ԻԵ. 45], *վասն զի քո եմք, Տէ՛ր, քո է ողորմել եւ կեցուցանել, եւ քեզ միայնոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:*

ԻԸ.[1]/ԻԸ. ԿԱՆՈՆ ՅՈՐԺԱՄ ԿՐԱՒՆԱՒՈՐ ՎԱԽՃԱՆԻ[2]

Այսպէս յղարկեն ի հանգիստն. Զսպեն զնոյն տիպն, բոլորով՝ որն սրբեմովն եւ այծէովքն, բանկոնովն, կնկղովն, կոշկովն: Եւ սաղմոսեն. [ՃԺԸ. 1]. *Երանեալ են ամբիծք.* Աւրհնութիւն՝ *Եւ ասացի:* Քարոզ. *Վասն ի վերուստ՝* Խ., Տէր ողորմեա:

Եւ ասեն զաղաւթս զայս.

ՃԻԳ. *Բարերար Աստուա՛ծ եւ ամենայն բարեաց առաջնո՛րդ, որ յաւրինեցեր մեզ ճանապարհ կենաց եւ արդարութեան սրբոց քոց, զի դու իսկ գնացեր մարմնով ի յերկրի՝ ընդ անձուկ ճանապարհն արդարութեան, եւ նովաւ |Ա.133ա| ջանացան սիրելիք քո մտանել նեղութեամբ ի հանգիստ մշտնջենաւոր, որպէս ծառայս քո այս, որ ընդրեաց բարի յաւժարութեամբ հրաժարել յաշխարհիս յաւելորդ ի սրաղմանց, խոնարհեցաւ ընդ լծով պատուիրանաց քոց եւ տարժանեցաւ ի ճգնութիւնս խստամբերութեան, պահոց եւ ծարաւոյ, աղքատութեան եւ աղաւթից: Եւ այժմ ի հրամանէ ակնարկելոյ քո աւարտեցաւ ի մարմնի: Եւ մեք՝ ժողովեալքս ի յուղարկումն եղբաւրս մերոյ. հողով զհողս ծածկեմք. եւ աղաւթիւք զհոգի սորա յղարկեմք ի ձեռն քահանայական շնորհիս. որով պաղատիմք առ քեզ. Տէ՛ր Աստուած մեր: Հայեա՛ց, Տէ՛ր, ի բարձանց ի խոնարհ ժողովուրդ քո, եւ ընկա՛լ զաղաչանս մեր ի վախճանի եղբաւրս մերում, եւ մի՛ լիցի իշխանութիւն սատանայի եւ դիւաց նորա ի վերայ սորա, եւ մի՛ տրտմեցուսցե զսա ոգի չարութեան, այլ հոգի քո բարի առաջնորդեսցե սմա ի յերկիր ուղիղ, եւ հանգիցէ ի դասու կանենի սրբոց քոց: Քրիստո՛ս փրկիչ մեր, տո՛ւր սմա համարձակութեամբ |Ա.133բ| կալ առաջի աստուածութեան քո, անտես արա՛ զյանցանս սորա, բարեգութ Տէ՛ր, զկամա եւ զակամա, եւ մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայիս քո, զի ոչ արդարանա առաջի քո ամենայն մարդ, այլ ըստ մեծի քում ողորմութեանդ մարդասիրեա՛յ եւ ընկա՛լ յարկս սրբոց քոց, բարէխաւսութեամբ սուրբ Աստուածածնին եւ սրբոց քոց առաքելոց, եւ մարգարեից եւ մարտիրոսաց, զի դու ես Աստուած բազումողորմ եւ մարդասեր, դատաւոր եւ փրկիչ եւ կարող յամենայնի, եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ:*

Ապա ասի սաղմոս ողբաձայն. ՃԽԲ.[1] [=ՃԽԲ. 6]. կցուրդ. *Աղաղակեցի առ քեզ Տէր:*

110. Ի ԿՈՐՆԹԱՑՈՑ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ Ը[ՆԹԵՐՑՈՒԱԾ. Բ. Կորնթ. Դ. 16 - Ե. 9].

«Զի[2] թեպէտ եւ արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքին մարդն[3] մեր նորոգի աւր ըստ աւրէ, 17 *զի առժամայն յաճախութիւն թեթեւ նեղութեանս մերոյ[4] յաւիտենական առաւելութեան[5], զմեծութիւն փառացն գործէ ի մեզ:* 18 *Քանզի ոչ գիտեմք զերեւելիսս, այլ զաներեւոյթսն. զի երեւելիքս առ ժամանակ մի են, եւ աներեւ|Ա.134ա|ոյթքն յաւիտենականք:* Ե. 1 *Քանզի գիտեմք, եթե[6] երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի, շինուած[7] յԱստուծոյ ունիմք, տաճար առանց ձեռագործի յաւիտենական՝ յերկինս:* 2 *Եւ ընդ այս տաղտկամք. քանզի զբնակութիւնս[8] երկնից փափաքեմք[9] զգենուլ.* 3 *միայն էթե[10] յորժամ սգենուցումք[11], ոչ մերկ*

---

[1] *Ա.133ա, 135ա, 136ա, 137ա*՝ ստ. լս. *«կրաւնաւորաթաղ», 134ա՝ «աբեղաթաղ»*

[2] *Ա.*133ա, ստ. լս.՝ *«կրաւնաւորաթաղ»*

---

[1] *Յ .ճիբ.*

[2] *Ա այլ*

[3] *Ա մարդս*

[4] *Ա մերոյ ի*

[5] *Ա առաւելութիւն*

[6] *Ա զի եթէ*

[7] *Ա շինած*

[8] *Ա զբնակութիւնն*

[9] *Ա փափագեմք*

[10] *Ա թէ*

[11] *Ա զգենուցումքն*

զտանիցիմք: 4 Քանզի որ եմք ընդ յարկաւ այսուիկ[1], տաղտկամք ծանրացեալք. քանզի[2] ոչ կամիմք մերկանալ, այլ զայն ի վերա[3] այսր զգենուլ, զի ընկղմեսցի մահկանացուս ի կենաց անտի[4]: 5 Այլ որ յաջողեն[5] մեզ ի սոյն, Աստուած է, որ ետ մեզ զառհաւատչեայ Հոգւոյն: 6 Արդ, համարձակիմք յամենայն ժամ, եւ գիտեմք եթէ որչափ յամեմք ի մարմնի[6], աւտարանամք ի Տեառնէ: 7 Զի հաւատովք գնամք, եւ ոչ կարծեաւք[7]: 8 Այլ համարձակիմք, եւ առաւել եւս հաճեալ եմք ելանել ի մարմնոյ աստի եւ մտանել առ Աստուած: 9 Վասն որոյ[8] առատանամք, զի թէ[9] յամիցեմք, եւ եթէ ելանիցեմք, հաճոյ եւեթ լիցեմք նմա»:

Ալելու ժ·Զ·[1]· *Լո՛ւր, Տէ՛ր, արդարութեան.*

111. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՀԱՆՆՈՒ [Զ· 35-40]· |Ա.134բ| *Տէր մեր Յիսուս ասէ[10]. «Ես եմ հացն կենաց. որ գա[11] առ իս՝ ոչ քաղցիցի[12], եւ որ հաւատա[13] յիս՝ ոչ երբեք ծարաւեսցի: 36 Այլ ասացի ձեզ. եթէ տեսէք զիս, եւ ոչ հաւատայք: 37 Զամենայն զոր ետ[14] ինձ Հայր, առ իս եկեսցէ. եւ որ գա[15] առ իս, ոչ հանից արտաքս: 38 Զի իջի ես յերկնից, ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ որ առաքեացն զիս: 39 Այս են կամք Հաւր իմոյ[16], զի զամենայն զոր ետ ինձ[17] Հայր՝ ոչ կորուսից ի նոցանէ[18], այլ յարուցից զնա յաւուրն յետնումն[19]: 40 Այս են կամք Հաւր իմոյ, զի ամենայն որ տեսանիցէ զՈրդի եւ հաւատա[20] ի նա, ընկալցի զկեանսն յաւիտենականս. եւ ես՝ յարուցից զնա յաւուրն յետնում»:*

Եւ[21] քարոզէ. *Վասն ուղղելոյ զգնացս մեր ի ճ.:* Եւ ասէ զաղաւթս զայս.

ՃԻԴ. *Փառաւորեմք զանճառ բարերարութիւն քո, Որդի՛ Աստուծոյ, որ լուսաւորէցեր զհաւատացեալս անվանտ քո սրբոյ եւ փրկեցեր ի խաւարային իշխանութենէ եւ ի գայթակղութեանց սատանայի, գոհանամք զքեն, Տէ՛ր, եւ աղաչեմք ամենայն սրտիւք մերովք.* |Ա.135ա| *հանգո՛յ զծառայս քո զ՟յ՟ ա՟ն՟ն, որ կատարէցաւ ի խոստովանութեան քում, գրեա՛յ զանուն սորա ի դպրութեան կենաց եւ ջնջեա՛ զձեռագիր յանցանաց սորա, զոր ինչ ի մեղանչական կենցաղումս մեղուցեալ իցէ բանիւ կամ խորհրդովք, կամ գործովք, զկամա եւ զակամա: Աղաչեմք ամենեքեան զբարերարութիւնդ քո, կարգեա՛յ զհոգի սորա ընդ արդարս քո, եւ լուսաւորեալ պայծառացո՛յ ընդ սուրբս քո, որպես արժանի արար ուխտի կրաւնից եւ կարգաց ժուժկալութեան աստիճանի սուրբ առաջնորդացն, նոցին սուրբ պսակացն ժառանգակից արա՛յ զսայ: Տէ՛ր տերանց՝ Հոգիտ Սուրբ, կատարեա՛յ ի բարի զխնդրուածս ծառայից քոց եւ հանգո՛յ ընդ սուրբս քո, վասն զի ամենասուրբ Երրորդութեանդ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ:*

Եւ ապա տանին ի հանգիստն[1], սաղմոսելով զվերին կանոնն: Աւրհնութիւն. [Ճժթ· 1· ժէ· 7]· *Ի նեղութեան:* Քարոզ. *Վասն գտանելոյ:*

Եւ ասէ զաղաւթս զայս.

ՃԻԵ. *Ամենազաւր Տէ՛ր, որ իշ|Ա.135բ|խանդ ես կենաց եւ մահու, մարդասիրապես խոնարհեցար ի մահկանացու բնութիւնս, մինչեւ ի գերեզման իջանելով, զփորձ առեալ աստուածային եւ անապական մարմնովդ զմերոյ բնութեանս առանց մեղաց, ընկա՛լ զխոստովանող մարմինս որոշեալ ի հող, ըստ դարձի մահկանացու բնութեանս, որ ի քեն ընկալաւ զդատավճիռ յարդար քոյ պատուիրանացդ, ողորմութիւն շնորհեա՛ ծառայիս քո յարդար քո դատաստանիդ, բարեւք պատասխանատրութեամբ կա՛լ առաջի ահաւոր բեմիդ եւ ընդունել զողորմութիւն ի քեն, եւ ընդ սուր[բ]ս քո փառաւորել զքեզ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամեն:*

Խաղաղութիւն. Աստուծոյ երկիրպագեսցուք].

ՃԻԶ. *Որ աղբեւրդ ես շնորհաց եւ պարգեւատու, որք ճշմարտապես ճանաչեն զՀոգիդ Սուրբ ճշմարտութեան, որով կնքեցաւ ծառայս քո այ՟ ան՟ն՝ քուն դրոշմաւ ի սուրբ աւազանեն, եւ պաշտել զսուրբ հաւատ քրիստոնեութեան, արժանի եղեւ քուն առատապարգեւ շնորհիդ, եւ կրաւնաւորական կոչմանս* |Ա.136ա| *այսորիկ եւ ի կատարման իւրում յղարկեցաւ քոին յուսով ի հանդերձեալ աշխարհդ, աղաչեմք զբարերար եւ զբազմագութ եւ զողորմած Հոգիդ Սուրբ, մի՛ թողուր*

---

[1] Մ ընդ այսուիկ
[2] Մ զի] քանզի
[3] Մ վերայ
[4] Մ անտի
[5] Մ յաջողէն
[6] Մ մարմնի աստ
[7] Մ կարծեաւք
[8] Մ որոյ եւ
[9] Մ եթէ
[10] Մ > տէր մեր յիսուս ասէ
[11] Մ գայ
[12] Մ քաղցիցէ
[13] Մ հաւատայ
[14] Մ տայ] ետ
[15] Մ գայ
[16] Մ իմոյ + որ առաքեացն զիս
[17] Մ ցիս] ինձ
[18] Մ նմանէ] նոցանէ
[19] Մ յետնում
[20] Մ հաւատայցէ
[21] Յ > եւ

---

[1] Յ հանգիստ

ի պաշտպանական զաւրութենէդ քում արտաքս, այլ հանգիցէ ի պատրաստ բնակութեանդ, ուր զաւրքս քո ժողովեն եւ հանգուցանեն եւ պահեն ի յանդորրութեան, եւ յորժամ առաքես ի սրբութենէ քումէ՝ նորոգել զերեսս երկրի, եւ ստանաս զքո զընդրեալս, խառնեսցես զայս ի դասս արդարոց, անյոյզ պատուհասի զերծո՛յ ի դատապարտութենէ մեղաց, որպէս զի քեզ յանձն առնելով զհոգի սորա, հաւատասցուք լսելի լինել աղաւթից մերոց, զի դու ես կենդանարար եւ նորոգիչ հոգւոց մերոց. եւ քեզ փառաւորեսցուք այժմ եւ միշտ եւ յաւիտեանս ա[մէն]:

Ապա ասի սաղմոս ողբաձայն. կցուրդ *ՃԺԴ·[7]· Դարձ [անձ]ն իմ ի հանգիստ:*

112. Ի ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑՒՈՑ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔ[ԵԼՈՅ. Ա· Թես· Բ·1-12]. *«Եղբարք դուք ինքնին գիտէք[1] զմուտն մեր առ ձեզ, զի ընդ ունայն ինչ ոչ[2] եղեւ, 2 այլ յառաջ|Ա.136բ|գոյն թշնամանեալք եւ հալածեալք[3], որպէս եւ դուք իսկ գիտէք ի մէջ Փիլիպպեցոցն[4], համարձակէաք Աստուծով մերով՝ պատմել ձեզ զԱւետարանն Աստուծոյ մեծաւ պատերազմաւ: 3 Զի մխիթարութիւնն մեր ոչ ի մոլորութենէ[5] եւ ոչ ի պղծութենէ, 4 այլ որպէս ընդրեցեք[6] յԱստուծոյ հաւատարիմ լինել Աւետարանին, նոյնպէս եւ խաւսիմք ոչ իբրեւ մարդկան հաճոյ լինել, այլ Աստուծոյ, որ քննէ զսիրտս մեր, 5 զի ոչ երբեք բանիւք ողոքանաց եղաք[7] առ ձեզ որպէս եւ դուք[8] գիտէք, եւ ոչ ի պատճառս ագահութեան՝ որպէս եւ Աստուած վկաէ[9], 6 եւ ոչ խնդրէցաք փառս[10] ի մարդկանէ՝ եւ[11] ոչ ի ձէնջ եւ ոչ յայլոց: 7 Կարող եաք[12] իբրեւ[13] Քրիստոսի առաքեալս ծանրանալ, այլ եղաք հեզք ի միջի ձերում, որպէս դաեակ[14] որ սնուցանիցէ մանկունս[15]. 8 այնպէս[16] եւ մեք գթացաք[17] ի ձեզ[18], ոչ միայն զԱւետարանն Աստուծոյ, այլ եւ զանձինս մեր, քանզի սիրելիք մեր եղերուք: 9 Յիշեցէ՛ք, եղբա՛րք, զվաստակն*

---

[1] *Ս ~ դուք ինքնին գիտէք եղբարք*

[2] *Ս > ոչ*

[3] *Ս չարչարեալք եւ թշնամանեալք] թշնամանեալք եւ հալածեալք*

[4] *Ս փիլիպեցւոց*

[5] *Ս մոլորութենէ է*

[6] *Ս ընտրեցաք*

[7] *Ս եղեաք*

[8] *Ս դուք իսկ*

[9] *Ս վկայէ*

[10] *Ս զփառս*

[11] *Ս > եւ*

[12] *Ս կարաւղ էաք*

[13] *Ս որպէս] իբրեւ*

[14] *Ս դայեակ*

[15] *Ս մանկունս*

[16] *Ս նոյնպէս*

[17] *Ս գթայաք*

[18] *Ս ձեզ + հաճոյ թուէր մեզ տալ ձեզ*

մեր եւ զջան. զի զցայգ եւ զցերեկ գործեցաք[1] |Ա.137ա| վասն չծանրանալոյ ումեք ի ձենջ, եւ քարոզեցաք[2] զԱւետարանն Աստուծոյ. 10 դուք ինքնին գիտեք[3], եւ Աստուած, որպէս սրբութեամբ եւ արդարութեամբ, եւ ամբծութեամբ ձեզ հաւատացելոցդ եղեաք, 11 որպէս են գիտեք[4], զի զիւրաքանչիւր ոք ի ձէնջ՝ որպէս հայր զորդի[5], 12 մխիթարեաք եւ սփոփէաք, եւ դնեաք վկայութիւն գնալ ձեզ արժանապէս Աստուծոյ, որ կոչեաց զձեզ յիւր արքայութիւնն եւ ի փառսն»[6]:

Ալելուիա. *[ՃԺԵ·10]· Հաւատացի զոր եւ խաւսեցա:*

113. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՀԱՆՆՈՒ [Է·33-41]. *«Տէր մեր[7] Յիսուս ասէ[8]. Փոքր մի[9] ժամանակ ընդ ձեզ եմ, եւ երթամ առ այն՝ որ առաքեացն զիս: 34 Խնդրիցէք զիս եւ ոչ գտանիցէք. եւ ուր եսն երթամ՝ դուք ոչ կարէք գալ: 35 Ասեն հրեայքն ցմիմեանս[10]. Յո՞ երթայցէ դա՝ զի մեք ոչ գտանիցեմք զդայ[11]. մի՞թէ ի սփիւռս[12] հեթանոսա՞ց երթիցէ եւ ուսուցանիցէ զհեթանոսս: 36 Զի՞նչ է այս զոր ասացն եթէ[13]. ուր եսն երթամ, դուք ոչ կարէք[14] գալ: 37 Ի վերջնում աւուր մեծի տաւնին կայր Յիսուս, աղաղակեր եւ ասէր. Եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս՝ եւ արբցէ: 38 Եւ[15] որ |Ա.137բ| հաւատա[16] յիս՝ որպէս եւ են[17] գիրք, գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոյ[18] կենդանութեան: 39 Զայս ասէր վասն Հոգւոյն, զոր ընդունելոց էին՝ որ հաւատաին[19] ի նա, զի չեւ էր Հոգի, վասն զի[20] Յիսուս չեւ էր փառաւորեալ: 40 Ոմանք ի ժողովրդենէն իբրեւ լսէին զբանս զայս, ասէին. Սա է ճշմարիտ մարգարէն: 41 Այլքն ասէին. Սա է Քրիստոսն»:*

Քարոզէ.

ԾԻԷ. *Վասն հրաժարելոյ անձանց եւ ննջեցելոց ի Քրիստոս զՏէր աղ[աչեսցուք].*

Վասն քաւութեան յանցանաց եւ թողութեան մեղաց սորա եւ

---

[1] *Ս գործեաք*

[2] *Ս քարոզեցաք ձեզ*

[3] *Ս վկայէք] գիտեք*

[4] *Ս գիտէք իսկ*

[5] *Ս զորդիս*

[6] *Ս փառս*

[7] *Յ > մեր*

[8] *Ս ասէ յիսուս] տէր մեր յիսուս ասէ*

[9] *Ս մեւս եւս] մի*

[10] *Ս ընդ միմեանս, իսկ] ցմիմեանս*

[11] *Ս զդա*

[12] *Ս սփիռս*

[13] *Ս բանն այն զոր ասաց. խնդրեցէք զիս եւ ոչ գտանիցէք. եւ] այս զոր ասացն եթէ*

[14] *Ս կարիցէք*

[15] *Ս > եւ*

[16] *Ս հաւատայ*

[17] *Ս ասեն] են*

[18] *Ա ջրոց*

[19] *Ա հաւատային*

[20] *Ս քանզի] վասն զի*

մեր ամենեցուն զՏէր աղաչե[սցուք].

Վասն որք լքին զապականացու կենցաղս եւ հետեւեցին ի վիճակն առ Քրիստոս արքայն երկնից զՏէր [աղաչեսցուք].

Վասն առաջնորդելոյ սմայ յանսասուեր աւթեւանսն, զոր պատրաստեաց ի տան Հաւր իւրոյ միածին Որդին Աստուծոյ զՏէր աղաչե[սցուք].

Վասն լսելոյ սմա զձայն երկնաւոր կոչմանն աստուածային փողոյն եւ դասաւորիլ ընդ հրշտակս զ[Տէր աղաչեսցուք].

Վասն արժանի լինել լսել զձայն փողոյն ի տիեզերական ատե[ն]ին եւ յափշտակիլ ամպովք ընդ առաջ Տեառն յաւդս զՏէր աղա[չեսցուք].

Վասն հոգոյն, եւ ես զանձինս ողորմե. Խ. Տէր ող[որմեա՛]:

Եւ ասէ զաղաւթս զայս.

Աստուած հոգւոց եւ ստեղծ: Գի՛տ յԱշխարհաթաղին կարգի եւ կարդա՛:

Եւ քարոզէ. *Վասն գտանելոյ.* եւ *Փառք ի բարձունս:*

|*Ա.138ա*| Աղաւթք. *Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս:*

Եւ փառս տան. եւ այգալացն հասարակացն է:

ԻԹ.[1]/[ԺԳ.[2]] |Բ.57ա| [3]* ԿԱՆՈՆ ՋՈՒՐ ԱՒՐՀՆԵԼՈՅ ՅԱՒՈՒՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

[4]* Առնու քահանայն զխաչն եւ եւ զԱւետարանն. եւ կցրդիւ երթան ի ջուրն, հանդերձ ուխտիւն, եւ այս կանոն կատարի. սաղմոս ԻԸ. [3]. կցուրդ. *Ձայն Տեառն ի վերա ջրոց.*

[5]Երթան ի ջուրն եւ այս կանոն կատարի. սաղմոս ԻԷ. [=ԻԸ. 3]. *Ձայն Տեառն ի վերայ ջուրց:*

114. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ՉՈՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵ[ՆԷ][6]. [Դ. ԹԱԳ. Բ. 19-22]. «*Եւ ասեն արք քաղաքին ցԵղիսէէ. Ահաւասիկ*[7] *բնակութիւն քաղաքիս բարի է, որպէս եւ տէրդ իսկ տեսանէ*[8], *եւ ջուրքս չար, եւ երկիրս անզաւակ:* 20 *Եւ ասէ Եղիսէէ*[9]. *Առէ՛ք առ իս կուժ մի նոր եւ դի՛ք այդր*[10]: *Եւ բերին առ նա:* 21

---

[1] *Ա.138ա, 140ա՝ ստ. լս. «.իթ. ջուր աւրհնել» (139ա, 141ա, 142ա, 144ա, 145ա, 146ա՝* առանց *.իթ.* համարի)

[2] *Բ.57ա* ստ. լս.՝ *սեւով .ժգ. համարը ջնջած: 57ա, 58ա, 59ա, 60ա, 61ա, 62ա, 63ա, 65ա, 66ա, 67ա, 68ա, 69ա՝ «Ջուր աւրհ.»*

[3] *Բ կանոն աստուածայայտնութեան ջուր աւրհնելոյ*

[4] սա ըստ՝ *Ա*

[5] սա ըստ՝ *Բ*

[6] *Ա ընթերցուած .ա. ի չորրորդ թագ.*

[7] *Ա ահաւասիկ*

[8] *Բ տեսանես*

[9] *Ա եղիսէէ*

[10] *Բ այսր*

Եւ ել Եղիսէէ[1] *յականս*[2] *ջուրցն եւ* |*Բ.57բ*| *արկ անդ աղ: Եւ ասէ*[3]. *Այսպէս ասէ Տէր. Բժշկեմ*[4] *զջուրս զայսոսիկ*[5], *եւ մի՛ եւս*[6] *լիցի այդի*[7] *մահ եւ յանզաւակութիւն:* 22 *Եւ բժշկեցան ջուրքն մինչեւ ցայսաւր, ըստ բանին Եղիսեի*[8], *զոր խաւսեցաւ»:*

115. [9]* ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱԵԱ ՄԱՐԳԱՐԷԻ [ԺԲ. 3-6]. *Այսպես ասէ Տէր*[10]. 3 «*Եւ առէ՛ք ջուր ուրախութեան յաղբերացն*[11] *փրկութեան:* 4 *Եւ ասասցեն*[12] *յաւուրն*[13] *յայնմիկ. Աւրհնեցէ՛ք զՏէր. հնչեցէ՛ք զանուն նորա. պատմեցէ՛ք ի հեթանոսս զփառս նորայ*[14]. *զի բարձրացաւ* |*Ա.138բ*| *անուն նորա:* 5 *Աւրհնեցէ՛ք զՏէր*[15] *զի սքանչելիս*[16] *արար. պատմեցէ՛ք զայս յամենայն*[17] *երկիր:* 6 *Ցնծացէ՛ք*[18] *բնակիչք Սիովնի, զի բարձրացաւ սուրբն*[19] *ի մէջ նորա»:*

115ա. [20]* ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱԵԱ ՄԱՐԳԱՐԷԷ [ԺԲ. 3-6]. «*Այսպէս ասէ Տէր. Եւ առէ՛ք ջուր ուրախութեան յաղբերացն փրկութեան: Եւ ասասցեն յաւուր յայնմիկ. Աւրհնեցէ՛ք զՏէր, հնչեցէ՛ք զանուն նորա, եւ պատմեցէք զայս ամենայն երկրի, ցնծացէ՛ք եւ ուրախ լերո՛ւք բնակիչք Սիովնի, զի բարձրացաւ Տէր ի մէջ սրբոց»:*

116. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵԶԵԿԻԵԼԷ ՄԱՐԳԱՐԷԷ[21] [ԽԷ. 1-12]. «*Եւ եմոյծ զիս Հոգին*[22] *առաջի դրաց*[23] *տաճարին, եւ ահա ելանէր ջուրն*[24] *ներքոյ վարագուրաց տաճարին, որ հայէր*[25] *ընդ արեւելս, եւ ջուրն հոսէր ընդ աջմէ կողմանէ տաճարին եւ*[26] *հիւսիսոյ ի սեղանն կոյս*[27]: 2 *Եւ եհան*[28] *զիս ընդ ճանապարհ*[29] *դրանն հիւսիսոյ*[30], *եւ շրջեցոյց զիս ընդ* |*Բ.58ա*| *ճանապարհ*[31] *առ*[32] *դրամբն արտաք-*

---

[1] *Ա եղիսէէ*

[2] *Ա յականջս*

[3] *Բ ասէ եղիսեէ*

[4] *Բ բժշկեմ ես*

[5] *Ս զայդոսիկ*

[6] *Ա > եւս*

[7] *Ս այտի*

[8] *ԱՍ եղիսէի*

[9] սա ըստ՝ *Ա. Բ >* այս ընթ-ը

[10] *Ս > այսպես ասէ տէր*

[11] *Ս յաղբիւրացն*

[12] *Ս ասասցես*

[13] *Ս յաւուր*

[14] *Ս նորա, յիշեցէք*

[15] *Ս զանուն տեառն] զտէր*

[16] *Ս մեծամեծս] սքանչելիս*

[17] *Ս ամենայն*

[18] *Ս ցնծացէք եւ ուրախ լերուք*

[19] *Ս սուրբն իսրայէլի*

[20] սա ըստ՝ *Բ. Ա >* այս ընթ-ը

[21] *Ա մարգ.*

[22] *Ս > հոգին*

[23] *Ս դրան*

[24] *Ս ջուր ի*

[25] *Ս > որ հայէր*

[26] *Ս > եւ*

[27] *Ա > եւ եմոյծ զիս հոգին… ի սեղանն կոյս* (1ին համարը)

[28] *Ա հան*

[29] *Բ ճանարհ*

[30] *Բ արտաքոյ (Ա հիւսիւսոյ), Ս հիւսւսոյ*

[31] *Բ ճանապարհ հիւսիսոյ*

[32] *Ա > առ*

նով[1], որ հայէր ընդ արեւելս, եւ ահա ջուրն[2] հոսէր յաջմէ կողմանէ[3]: 3 Եւ[4] իբրեւ գելս առն դէմ յանդիման, եւ չափ ի ձեռին իւրում, եւ չափեաց հազար՝ չափով[5], եւ անց ընդ ջուրն, եւ ջուրն ջուր յորդութեան[6]: 4 Եւ չափեաց հազար չափով[7] եւ անց ընդ ջուրն[8]. եւ հարկանէր ջուրն մինչեւ ցերանսն[9], եւ չափեաց հազար՝ չափովն[10] զուղխսն[11], եւ անց ընդ ջուրն, եւ հարկանէր ջուրն մինչեւ ցգաւտին: 5 Եւ չափեաց հազար՝ չափովն, զուղխսն[12] եւ ոչ կարաց[13] անցանել, զի յորդեաց ջուրն իբրեւ զյորձանս հեղեղաց[14], ընդ որ[15] ոչ ոք անցանիցէ: 6 Եւ ասէ ցիս. Տե՛ս[16] որդի մարդոյ, եւ դարձոյց զիս եւ տարաւ յափն գետոյն[17]· 7 ի[18] շրջելն իմում անդ[19], եւ ահա ափն[20] գետոյն ծառա|Ա.139ա|ստանի բազում[21] յայսկոյս եւ[22] յայնկոյս: 8 Եւ ասէ ցիս. Ջուրս այս, որ ելանէ ի[23] կողմ Գալիլէացւոց[24] ընդ արեւելս, եւ իջանէ յԱրաբիա, եւ գայ[25] մինչեւ ցծով՝ ի ջուրց ելիցն[26], եւ[27] բժշկեսցէ զջուրս[28], 9 եւ եղիցի ամենայն շունչ[29] անասնոց ի բաց[30] թքելոց |Բ.58բ| յամենայնէ[31], յորոյ վերա[32] եկեսցե[33] գետն՝ կենդանասցին[34], եւ եղիցի անդ ձուկն[35] բազում յոյժ, զի հասեալ[36] անդ[37] ջրոյս այսորիկ՝ բժշկեսցէ[38]. եւ կենդանասցին[39], յորոյ[40] վերայ

---

[1] Ա. արտաքնոյ առ դրամբն] առ դրանն արտաքնով, Բ դրանն
[2] Ա. ջուր
[3] Բ ընդ աջմէ կողմանէն] յաջմէ կողմանէ
[4] Բ > եւ
[5] Մ չափովն
[6] Մ յորդութեանց] եւ ջուրն ջուր յորդութեան
[7] Մ չափովն
[8] Բ > եւ ջուրն ջուր յորդութեան, եւ չափեաց հազար չափով եւ անց ընդ ջուրն
[9] Բ ցերանսն գաւտին
[10] Ա. չափով
[11] Ա. > զուղխսն
[12] Ա. չափով զուղխն
[13] Մ կարէր
[14] Ա. հեղեղաց բազմաց
[15] Ա. որս
[16] Բ տեսե՞ր
[17] Բ գետւոյն
[18] Մ եւ ի
[19] Ա. > ի շրջելն իմում անդ, Մ ~ անդ իմում
[20] Մ յափն
[21] Մ բազում յոյժ
[22] Մ > եւ
[23] Բ ընդ] ի
[24] Բ գաղեյացւոց եւ (Ա. գալիլէացւոց), Մ գալիլեացւոց
[25] Ա. գա
[26] Ա. ի ծովն ի ջուրն ելից] ցծով ի ջուրց ելիցն
[27] Բ > եւ
[28] Բ զջուրսն
[29] Ա. շնչոյ
[30] Մ > ի բաց
[31] Ա. յամենայն ի վերայ] յամենայնէ
[32] Մ յամենայնէ յորոց վերայ
[33] Բ հասանիցէ] եկեսցե
[34] Բ կենդանասցի
[35] Ա. ձկունք
[36] Ա. ի հասանել
[37] Բ ընդ (Ա. անդ), Մ անդր
[38] Ա. > բժշկեսցէ
[39] Բ կենդանասցի յամենայնէ
[40] Մ յորոց

հասանիցէ[1] գետն՝ կեցցէ[2]: 10 Եւ կայցեն[3] ի նմա որսորդք յԵնգադա[4] մինչեւ ցԵնգադդիս[5] ձկունք[6] ուռկանաց առանձինն եղիցի նմա[7], եւ ձկունք նորա իբրեւ զձկունս ծովուն մեծի բազմութեամբ[8] յոյժ. 11 եւ[9] յելս նորա եւ ի դարձ նորա[10], եւ ի համբառնալ նորա[11] մի սրբեսցին[12] եւ յա[յլս] մատնեսցին[13]: 12 Եւ առ գետովն ելցեն[14] զափամբն[15] յայս կոյս եւ[16] յայն կոյս, եւ[17] ամենայն ծառ ուտելի, եւ մի՛ հնասցէ[18] շուրջ զնովաւ, եւ մի՛ պակասեսցի պտուղ նորա, եւ զդալարութիւն[19] իւր յառաջագոյն արձակեսցէ[20], զի ջուրք նորա ի սրբութեանց[21] ելանեն[22], եւ եղիցի պտուղ |Ա.139բ| նորա[23] ի կերակուր, եւ ելք նորա[24] ի բժշկութիւն»[25]:

117. Ի ԿՈՐՆԹԱՑԻՈՑ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵՅՈՑ[26] [Ա. Կորնթ. Ժ. 1-7]. «Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք, եղբա՛րք[27], զի հարքն |Բ.59ա| մեր ամենեքին ընդ ամպովն էին[28], եւ ամենեքին[29] ընդ ծովն անցին. 2 եւ ամենեքին[30] ի Մովսէս մկրտեցան յամպն եւ ի ծովն. 3 եւ ամենեքին[31] զնոյն հոգեւոր[32] կերակուրն[33] կերան. 4 եւ ամենեքին[34] զնոյն հոգեւոր ըմպելին[35] արբին, զի ըմպէին ի հոգեւոր վիմէն, որ երթայր զհետ նոցա, եւ վէմն էր ինքն[36] Քրիստոս: [37]* 5 Այղ[38] ոչ եթէ ընդ բազումս ի նոցանէ հաճեցաւ Աստուած, քանզի տապաստ անկան յանապատի անդ: 6 Եւ այն աւրինակաւ լինէր

---

[1] Ա. եկեսցէ, Մ հասցէ] հասանիցէ
[2] Ա. կենդանասցին, Մ եւ կեցցէ] կեցցէ
[3] Մ կացցեն
[4] Ա. յենգադդա, Մ յենգադեայ
[5] Մ ցենգադիս
[6] Մ ձգանք
[7] Ա.Մ եղիցին] եղիցի նմա
[8] Մ եւ բազմութիւն բազում
[9] Մ > եւ
[10] Մ դարձս նորին
[11] Մ նորին
[12] Բ սրբեցին] մի՛ սրբեցին
[13] Ա. > յա մատնեցին (Բ ունի), Մ այլ յայլս մատնեսցին] եւ յամատնեցին
[14] Բ զեղեցէ
[15] Բ զափամն
[16] Մ > եւ
[17] Ա. > եւ
[18] Ա. խնաեսցես, Մ հնասցի] հնասցէ
[19] Բ զդալարութիւնն
[20] Բ արձակիցէ
[21] Ա. սրբութիւն
[22] Մ ելանիցեն
[23] Մ նոցա
[24] Մ նոցա
[25] Բ այս ընթերցումը սխալաշատ է
[26] Բ թղթո, Ա. պաւղոս, Բ > առաքելոյ
[27] Ա. ~ կամիմ եղբարք եթէ տգետք իցեք + խորհրդոյս այսմիկ
[28] Ա. ամբովն էին
[29] Մ > եւ ամենեքին
[30] Ա. ամենիքին, Մ ամենեքեան
[31] Ա. ամենիքին
[32] Մ զհոգեւոր
[33] Ա. կերակուր
[34] Ա. ամենիքին
[35] Ա. ըմբելի
[36] Ա. ~ ինքն էր
[37] Ա. > այղ ոչ եթե... ոմանք ի նոցանէ (5-7 համարը)
[38] Մ այլ

վասն մեր, զի մի՛ լիցուք ցանկացողք[1] *չարեաց, որպէս եւ նոքա*[2] *ցանկացան:* 7 *Եւ մի՛ կռապարիշտք*[3] *լինել, որպէս ոմանք ի նոցանէ»:*

Ալելու. *Ղ.Բ. [1]. Տէր թագաւորեաց վայելչ[ութիւն զգեցաւ]*[4]*:*

118. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱԹԵՈՍԻ[5] *[Գ. 1-17].* [6]* *«Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ՝ քարոզել յանապատին Հրէաստանի,* 2 *եւ ասէ*[7]*. Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ*[8]*,* 3 *զի սա է վասն որոյ ասացաւն*[9] *ի Տեառնէ*[10] *ի ձեռն Եսայեա*[11] *մարգարէին*[12]*. «Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհս*[13] *Տեառն |Բ.59բ| եւ ուղիղ արարէք զշաւիղս նորա» [Եսյ. Խ. 3]:* 4 *Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ ստեւ*[14] *ուղտու եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, եւ կերակուր նորա*[15] *մարախ եւ մեղր վայրենի:* 5 *Յայնժամ ելանէին առ նա ամենայն երուսաղէմացիք եւ ամենայն Հրէաստան եւ ամենայն կողմն Յորդանանու,* 6 *մկրտեին ի նմանէ ի Յորդանան գետ, խոստովանեալ*[16] *զմեղս իւրեանց:* 7 *Եւ տեսեալ զբազումս ի սադուկեցւոցն եւ ի փարիսացւոցն, եկեալս*[17] *ի մկրտութիւն նորա, ասէ ցնոսա. Ծնո՛ւնդք իժից, ո՞ եցոյց*[18] *ձեզ փախչել ի բարկութենէն, որ գալոցն է,* 8 *արարէք այսուհետեւ պտուղ արժանի ապաշխարութեան* 9 *եւ մի՛ համարիք*[19] *ասել յանձինս, եթէ*[20] *ունիմք մեք հայր զԱբրահամ, ասեմ ձեզ, զի կարող է Աստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու:* 10 *Զի աւասիկ տապար առ արմին ծառոյ*[21] *դնի. ամենայն ծառ, որ ոչ առնէ պտուղ*[22] *բարի՝ հատանի եւ ի հուր արկ|Բ.60ա|անի:* 11 *Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն, բայց որ զկնի իմ գայ՝ հզաւրագոյն է քանզիս, եւ ես չեմ բաւական բառնալ զկաւշիկս նո-*

---

[1] *Ս ցանկացաւղք*

[2] *Ս նոքայն*

[3] *Ս կռապաշտք*

[4] *Բ աղեղուք. արուեստ] ալելու, .դր. տէր թագաւորեաց վայելչ.*

[5] *Ա մաթեոս*

[6] *Ա >* ընթ. այս սկզբից մինչ՝ *յաւուրսն յայնոսիկ... այրեսցէ անշէջ հրով* (1-12 համարը)

[7] *Ս ասել*

[8] *Ս երկնից] աստուծոյ*

[9] *Ս ասացաւ*

[10] *Ս > ի տեառնէ*

[11] *Ս եսայայ*

[12] *Ս մարգարէի, որ ասէ*

[13] *Ս զճանապարհ*

[14] *Ս ի ստեւոյ*

[15] *Ս նորա էր*

[16] *Ս եւ խոստովան լինէին] խոստովանեալ*

[17] *Ս փարիսեցւոց եկեալս*

[18] *Ս ցոյց*

[19] *Ս համարիցիք*

[20] *Ս թէ*

[21] *Ս ծառոց*

[22] *Ս առնիցէ զպտուղ*

րա: Նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ եւ ի հուր: 12 *Որոյ հեծանոցն ի ձեռին իւրում, եւ սրբեսցէ զկալ իւր, եւ ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս իւր, եւ զյարդն այրեսցէ անշէջ հրով*[1]*:* 13 *Յայնժամ գայ*[2] *Յիսուս ի Գաղիղեէ*[3] *ի*[4] *Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել ի նմանէ:* 14 *Եւ Յովհաննէս*[5] *արգելոյր զնա եւ ասէր*[6]*. Ինձ պիտոյ*[7] *է ի քէն մկրտել*[8]*, եւ դու առ ի՞ս գաս:* 15 *Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա*[9]*. Թոյլ տո՛ւր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս: Եւ ապա թոյղ*[10] *ետ նմա*[11]*:* 16 *Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ի ջրոյ անտի*[12]*, եւ ահա բացան նմա երկինք, եւ ետես զՀոգին Աստուծոյ, զի իջանէր իբրեւ զաղաւնի եւ գայր ի վերայ նորա:* 17 *Ձայն եղեւ |Ա.140ա| յերկնից*[13]*, որ ասէր*[14]*. Դա է |Բ.60բ| Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցա*[15]*»:*

Եւ[16] քարոզէ սարկաւագն.

ԾԻԸ. *Վասն ի վերուստ խաղաղութիւն, եւ փրկութեան անձանց մերոց առ ի Տեառնէ*[17]*, զՏէր աղա[չեսցուք].*

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ[18] *զՏէր աղաչե[սցուք]*[19]*.*

Վասն առաջիկայ[20] *ջրոյս եւ որ հանդերձեալն*[21] *են առնուլ զաւրհնութիւն*[22]*, զՏէր աղաչե[սցուք].*

Վասն ընդունելոյ սմա զաւրհնութիւնսն Յորդանանու շնորհաւք միածնին, որ լուսաւորեացն[23] *զմեզ զՏէր [աղաչեսցուք].*

Վասն լինելոյ սմա ի[24] *բժշկութիւն հոգոց*[25] *եւ մարմնոց մերոց զՏէր աղ[աչեսցուք].*

Յիշելով զԱստուածածինն եւ զփառաւորեալ միշտ[26] *կոյսն Մարիամ եւ զՄկրտիչն զՅովհաննէս*[27]

---

[1] *Ա >* ընթ. սկզբից մինչ աստ՝ *յաւուրսն յայնոսիկ... այրեսցէ անշէջ հրով* (1-12 համարը)

[2] *Ա գա*

[3] *Ա գաղիղիէ, Ս գալիլեէ*

[4] *Բ > ի*

[5] *Ա յովաննես*

[6] *Ս արգելու զնա եւ ասէ*

[7] *Բ պարտ] պիտոյ*

[8] *Բ մկրտիլ*

[9] *Ա > ցնա*

[10] *ԱՍ թոյլ*

[11] *Ա նմայ*

[12] *Ա անդի*

[13] *Ս եւ ահա ձայն յերկնից] ձայն եղեւ յերկնից*

[14] *Ա եւ ասէ] որ ասէր*

[15] *Ս հաճեցայ*

[16] *Ա > եւ*

[17] *Ա > անձանց մերոց առ ի տեառնէ*

[18] *Ա եկեղեցոյ*

[19] *Բ զ.] զտէր աղաչե*

[20] *Ա առաջիկա*

[21] *Ա հանդերձեալ*

[22] *Ա ընդունել զաւրհնութիւն ի սմանէ] առնուլ զաւրհնութիւն*

[23] *Ա լուսաւորեաց*

[24] *Ա > ի*

[25] *Բ հոգւոյ*

[26] *Բ սուրբ] եւ զփառաւորեալ միշտ*

[27] *Ա > եւ զմկրտիչն զյովհաննէս*

եւ զամենայն սուրբս եւ նորաւք[1] զՏէր աղաչե[սցուք].

Եւ եւս՝ Զանձինս մեր ողորմեա[2]:

ՃԻԹ. ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ ՋՐՈՅ[3] ՋՈՐ ԱՍԱՑԵԱԼ Է ՍՐԲՈՅՆ[4] ԲԱՐՍՂԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ[5] ԿԵՍԱՐՈՒ ԿԱՊՈՒՏԿԱՑԻՈՅ[6].

եւ տարրայնոցս[1], զմնացուածս փոքր ի շատէ զետեղեալ ի ժողովս իւրեանց, յորմէ[2] բղխեալ ազգք ազգք[3] զետնոց ի հրամանէ քումմէ՝ առ ի վայելումն մարդկան[4], եւ քան զամենայն արարածս պատուեցեր զմարդն: Ընդ որս[5] չարացեալ չարին[6] առ ի յորսալ յապականութիւն եւ ի կոխումն[7], զոր ի քումմէ իմաստութենէդ բարի յաւրինուածովն[8] զարդարեալ էր, զոր միւսանգամ նորոգեցեր զհնացեալ պատկերս քո, իջմամբ քո[9] յանսկիզբնական փառաց քոց եւ զգեցուցեալ[10] մարմին հողեղէն՝ ըստ մերում բնութեան[11], եկիր ի լուացումն ամենասուրբդ ի մեղաց եւ մաքուր եւ սրբիչ զջուրսն[12] կացուցեր, եւ ի ձեռն մարգարէին Եղիսէի[13] ուրհնեցեր զջուրսն[14] չարաշունչս եւ զմահականս[15] եւ մեծին Մովսէսիւ բաժանեցեր զաւազանաւն[16]՝ յաւրինակ սուրբ[17] խաչին: Եւ[18] |Բ.56բ| զյաղթող զջուրսն, եւ[19] զթշնամին ի խորս[20] ընկղմեցեր, եւ[21] ետուր քաղցրութիւն ջուրցն մեռադառնա|Ա.180ա|բուղխ[22]: Եւ լցուցեր զպասքումն ժողովրդեանն[23] եւ այժմ, Տէ՛ր բարերար, առաքեա՛[24] զնոյն շնորհս Հոգւոյդ Սրբոյ[25] ի ջուրս յայս եւ ուրհնեա՛[26] զսա[27] անարատ աջովդ քո եւ զաւրութեամբ կենդանարար խաչիդ[28], ի ձեռն քահանայիս եւ խնդրուածովք[29] ժողովրդեանս քո[30] տո՛ւր սմա շնորհս եւ զաւրութիւն, զի ամենայն, որ արբցէ[31] ի սմանէ, եղիցի ի[32] բժշկութիւն Հոգւոյ[33] եւ մարմնոյ եւ[34] յառողջութիւն[35]

---

[1] *Ա տարանոցս եւ*
[2] *Ա յոր*
[3] *Բ ազգք] ազգք ազգք*
[4] *Ա մարդոյն*
[5] *Ա որ*
[6] *Ա չարն*
[7] *Ա կորուստ] կոխումն*
[8] *Ա յաւրինուածով*
[9] *Ա > քո*
[10] *Ա ագեցեալ*
[11] *Ա բնութեանս*
[12] *Ա զջուրս*
[13] *Բ եղիշէի*
[14] *Ա զջուրն*
[15] *Ա մահականս, Բ.56ա* լս-ում՝ *«առէք»*
[16] *Ա բարժանեալ զաւազանաւ*
[17] *Ա > սուրբ*
[18] *Ա > եւ*
[19] *Բ > եւ*
[20] *Ա խորսն*
[21] *Ա > եւ*
[22] *Բ ջրոյն մեռաբուղխ] ջուրցն մեռադառնաբուղխ*
[23] *Ա ժողովոյն*
[24] *Ա առաքեայ*
[25] *Ա հոգի շնորհաց] շնորհս Հոգւոյդ սրբոյ*
[26] *Ա ուրհնեայ*
[27] *Բ > զսա*
[28] *Բ > քո եւ զաւրութեամբ կենդանարար խաչիդ*
[29] *Ա խնդրուածաւք*
[30] *Ա եւ] քո*
[31] *Ա արբցե*
[32] *Բ > ի*
[33] *Ա հոգոյ*
[34] *Ա > եւ*
[35] *Ա առողջութիւն*

ախտաժետաց: Աւրհնեա[1]*, Տէ՛ր, ողորմութեամբդ քո*[2] *զջուրս զայս, եւ սրբեա՛յ սուրբ խաչիւս, զի հաւտք եւ խաշինք որ մերձենան*[3] *եւ*[4] *արբիցեն ի սմանէ, եղիցին անցաւս*[5] *եւ ի ծննդականութիւն, ուստի եւ նուերս անուշութեան քեզ ընծայս*[6] *մատուցանեմք: Աւրհնեա*[7]*, Տէ՛ր, զջուրս զայս զաւրութեամբ*[8] *սուրբ խաչիւս, զի յանդս՝ յորս ցաւղեսցի*[9]*, տացէ տոհմականս շաէկանս*[10]*, որ է նաշիհ*[11] *սրբութեան քո*[12]*, պատարագ ի սուրբ տէրութեանդ քո*[13]*: Աւրհնեա*[14]*, Տէ՛ր, զջ|Բ.57ա|ուրս զայս զաւրութեամբ*[15] *սուրբ խաչիւս, զի յամենայն յորս ցաւղեսցեն բուսոց եւ տնկոց*[16] *առաւել եւս պտղաբերութեամբ եւ աճմամբն*[17] *ի չահաւետութիւն |Ա.180բ| որդւոց*[18] *մարդկան եւ ամենեցուն, յորոց ի սպաս պաշտաման խորանի քում, զքոյդ քեզ մատուցանեմք ամենայնգթ եւ ամենազաւր թագաւոր, որ միշտ եւ հանապազ*[19] *յամենայն արարածոց աւրհնիս ամենասուրբ Երրորդութիւնդ*[20] *Հայր եւ Որդի եւ Հոգիդ Սուրբ*[21] *այժմ եւ միշտ եւ յաւիտե[անս]*[22]*:*

Եւ ապա տեառնագրէ խաչին զջուրն եւ ասէ[23]. *Աւրհնե[ս]ցի եւ սրբե[ս]ցի ջուրս այս*[24] *յանուն Հաւր*[25] *եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ*[26]*:*

---

[1] *Ա աւրհնեայ*

[2] *Ա > ողորմութեամբդ քո*

[3] *Ա խաշունք որք մերձեսցին*

[4] *Բ > եւ*

[5] *Ա եղիցի յանցաւութիւն] եղիցին անցաւս*

[6] *Բ նուէրս քեզ] եւ նուերս անուշութեան քեզ ընծայս*

[7] *Ա աւրհնեայ*

[8] *Ա > զաւրութեամբ*

[9] *Բ ցաւղեսցեն*

[10] *Բ տայցեն զտոհմականս շայեկանս*

[11] *Բ նաշեհ*

[12] *Ա > քո*

[13] *Ա քում տէրութեանդ] սուրբ տէրութեանդ քո*

[14] *Ա աւրհնեայ*

[15] *Ա > զաւրութեամբ*

[16] *Ա ցաւղեսցի ի բոյսս կամ ի տունկս] ցաւղեսցեն բուսոց եւ տնկոց*

[17] *Բ աճմամբ] եւ աճմամբն*

[18] *Ա չահաւորութիւն որդւոց*

[19] *Ա > եւ հանապազ*

[20] *Ա երրորդութիւն*

[21] *Ա > հայր եւ որդի եւ հոգիդ սուրբ*

[22] *Բ > միշտ եւ յաւիտե[անս]*

[23] *Ա եւ ապա զխաչն անցուցեալ զջուրն երիցս ասելով] եւ ապա… ասէ*

[24] *Բ զջուրս զայս*

[25] *Բ հա[ւր]*

[26] *Բ > եւ որդոյ եւ հոգոյն սրբոյ*

---

[1]* ԼԹ. ԱՂԱՒԹՔ ՈՐ ՊԻՒՂԾ ԻՆՉ ԿԵՐԵԱԼ Է

ՃԽԹ. *Տէր Աստուած մեր, որ ի սուրբս ես հանգուցեալ եւ գովեալ յիսրայէղէ, խոնարհեցո՛յ եւ այժմ զունդն քո եւ լո՛ւր մեզ, եւ պարգեւեա՛ զթողութիւն ծառայի քում պղծացելում եւ ճաշակողի զանմաքուրս՝ ո՛չ կամաւորաբար, եւ արժանաւորեա՛յ զսա մաքրութեամբ հոգով եւ մարմնով հաղորդել անարատապես մարմնո եւ արեան Քրիստոսի քո, եւ փրկեա՛ զսա յայսմ հետէ յանմաքուր կերակրոց եւ յըմպելեաց, եւ եւս ի գործոց չարեաց, որպես փափկանալով աստուածայնոյ քում խորհրդով, վայելելով ի սուրբ եւ յահաւոր սեղան Քրիստոսի քո, ընդ մեզ մտեալ ի կաթողիկե եկեղեցի, հաղորդեսցի մարմնոյ եւ արեանն Տեառն, նորոգ|Ա.181ա|եսցի եւ հանցե զարհնութիւն եւ զփառս Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյդ Սրբոյ այժմ եւ միշտ:*

Խ.[2] ՈՐ Ի ԿԵՐԱԿՈՒՐՍ ՄԻԱՑՆ ՊՂԾԻ

ՃԾ. *Տէր Աստուած մեր, որ զգլխաւորի առաքելոյն Պետրոսի, ի ձեռն տեսլեանն, ձայնիւ աւրհնագրեցեր, մի՛ զոք պիղծ եւ անսուրբ ասել, զի առ ի քեն արարեալ կերակուր մարդկան, եւ ի ձեռն անաւթոյն Պաւղոսի ընդրելոյն զամենայն ինչ զսուրբ սրբոց քարոզեցեր, դու եւ այժմ որ ի բարբարոսաց հարկս անկաւ, ոչ ըստ յաւժարութեան անսուրբ ինչ որպես կարծեցին ճաշակելով որոգայթեցան, զխիղճ մտաց մաքրեա՛յ, եւ զքո պատուիրանտ հաստատեա՛ ի սոսա, առանց աղտոյ, եւ Հոգոյդ Սրբոյ պատրաստեա՛յ առ յընդունել անարատ եւ կենդանարար խորհրդոյ, քանզի աւրհնի եւ փառաւորի ամենապատիւ եւ մեծանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյդ Սրբոյ այժմ ե[ւ միշտ]:*

---

[1] *Բ >* այս աղօթք-միաւորը

[2] *Ա.181ա՝ «.խ. որ ի կերակրոց պղծի»*

ԽԱ.[1] ԱՂԱԻԹՔ Ի ՎԵՐԱՅ ԵՐԴՄՆԱՍԽԱԼԱՑ

ՃԾԱ. *Աստուա՛ծ, որ զմարդոյ բնութիւնս փոփոխական եւ տկար գիտես, եւ զառ ի մտածութենէ մերմէ խորհուրդս ճշմարտապես ճանաչես՝ զառ ի |Ա.181բ| խարեութեանց մերոց եղեալս, որ անոխակալդ ես, արժանաւորեա՛յ թողութեան որք յանդգնեցան յերդումն շաղախիլ, քանզի դու միայն գիտես զգաղտնիս սրտից մերոց, խնդրեմք ի քէն՝ թողութիւն առցես եւ մեզ գտանել քո անճառելի բարերարութեամբդ, քանզի աւրհնեալ է անուն քո եւ փառաւորեալ թագաւորութիւն Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ա[մէն]:*

ԽԲ.[2] ԿԱՆՈՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱԻ[Ն]ԱԳԱՆՈՍԱՑ, ՈՐ ԼԻՆԻՆ ԳՐԱԿԱՐԴԱՑՔ

Սաղմոս ՃԺ· [=ՃԺԸ· 1]. *Երանեալ են ամբիծք [ի ճանապարհի]:*

Եւ քահանայն ասէ զաղաւթս զայս.

ՃԾԲ. *Տէ՛ր Աստուած, հաստատիչ եւ արարիչ բոլորից եղելոցս, ստեղծի՛չ ազգի մարդան, որ փառաւորեալդ ես յամենասուրբ զուարթնոց, յանճառ եւ յանիմանալի բնութեանդ, Հայր եւ Որդի եւ Հոգի սրբութեան քո, նայեա՛յ յաղաչանս մեր եւ սուրբ արա՛ զծառայս քո զայս անուն, Տէ՛ր Հզաւր եւ Աստուա՛ծ ամենայնի, ընդրեա՛յ զսա, որ սուրբ ես եւ փառաւոր, արժանի արա՛յ զսա ամենայն իմաստութեամբ եւ խնամութեամբ, զաստուածեղէն բանից քոց կարգացմունս առնել, պահել |Ա.182ա|[3] զսայ առանց ամենայ[illegible]րատոյ, ողորմութեամբ ընդ [illegible]ս, եւ զմեզ արժանաւորեա՛յ փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՀոգիդ Սուրբ այժմ եւ միշտ եւ յա[ւիտեանս]:*

---

[1] *Ա.181ա՝ «խա. երդմնահարի»*

[2] *Ա.181բ՝ «խբ. գրակարգաց»*

[3] *Ա. պահել |Ա.182ա| <պահել>*

ԽԳ.[1] ԿԱՆՈՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԵՍ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ

Սաղմոս ՃԺԸ· [=ՃԻԸ· 1] *Ուրախ եղէ ես՝ որք ասեին ցիս. ի տուն [Տեառն երթիցուք մեք]:* Քարոզէ. *Խնդրեսցուք հաւատով եւ մ[իաբանութեամբ]:*

Եպիսկոպոսն դնէ զաջն եւ ասէ զաղաւթս զայս.

ՃԾԳ. *Աստուա՛ծ ամենայնի եւ Տէ՛ր զաւրաց եւ կարգաւորի՛չ եղելոց, ընդունո՛ղ փառաբանութեան, որք ճշմարտութեամբ աւրհնեն զքեզ, դու, Տէ՛ր, բարեբարեա՛յ ծառայիս քո այս անուան, որ միայնդ ես ամենակալ Տէր, հաւրածին Բանիւ եւ Հոգովդ քո Սրբով, եւ ընդրեա՛յ զսա ի բարիս, ըստ բազում ողորմութեան քում, եւ արա՛յ արժանի առանց ամաւթոյ, կատարել զպաշտաւն իւր, հանդերձ կամաւք իւրովք, եւ հեզութեամբ, ողորմութեամբ եւ գթութեամբ Քրիստոսի քո, ընդ որում քեզ՝ Հաւր ամենակալի, հանդերձ կենդանարար եւ ազատիչ Սուրբ Հոգւոյդ վա[յել] է փառք, իշխանութիւն եւ պա[տիւ]:*

ԽԴ.[2] ԿԱՆՈՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ

Սաղմոս ԺԴ· [1]. *Տէ՛ր, ո՞վ կաց[ց]է ի խորանի [քում, կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո]:* Եպիսկոպոսն տեառնագրէ զգլուխն, եւ սափրեն՝ որչափ |*Ա.182բ*| ձեռն եպիսկոպոսին հասանէ: Դարձեալ ասեն սաղմոս ԻԴ· [1]· *Առ քեզ, Տէ՛ր, համբարձի [զանձն իմ]:* Եւ սարկաւագն կոչէ ի վերայ բեմբին երիցս անգամ, դարձուցեալ յարեւմուտս. *Կոչեն զայս անուն ի դպրութենէ ի սարկաւագութիւն՝ Տեառն ի ծառայութիւն, սրբոյ եկեղեցոյ ի սպասաւորութիւն՝ ըստ վկաութեան անձին իւրում եւ ժողովրդեանս: Արժանի է:* Եւ ապա ի ծունկս լինի ի վերայ ահեկին. եւ դնեն սարկաւագունքն զձեռսն ի վերայ ձեռաց նորա. Եպիսկոպոսն դնէ զաջն ի վերայ գլխոյն եւ ասէ զաղաւթս զայս.

ՃԾԴ. *Աստուածային եւ երկնաւոր շնորհն, որ միշտ եւ հանապազ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան կաթողիկէ եկեղեցոյս, կոչէն զայս անուն ի դպրութենէ ի սարկաւագութիւն՝ Տեառն ի ծառայութիւն եւ սրբոյ եկեղեցո ի սպասաւորութիւն՝ ըստ վկաութեան անձին իւրում եւ ամենայն ժողովրդեանս: Ես դնեմ ձեռն ի վերայ. աղաւթս արարէ՛ք ամենի-*

---

[1] *Ա.182ա՝* ստ. լս. *«խգ. կես սարկաւագ առնել»*

[2] *Ա.183ա՝* ստ. լս. *«խդ. սարկաւագ առնել» (184ա՝* առանց *.խդ.* համարի*)*

քեան, զի արժանի լիցի զաստիճան սարկաւագութեան՝ անարատ պաշտել առաջի Աստուծոյ եւ սրբոյ սեղանոյս զամենայն աւուրս կենաց իւրոց: Տէ՛ր Աստուած, հզաւր եւ փառաւորեալ յամենայնի, մեծ եւ ահաւոր կամաց քոց, որոց զաւրաց սպասաւոր լինին ամենայն ար|Ա.183ա|արածք՝ երկրաւինք եւ երկնաւինք, անյապաղ հնազանդութեամբ, առաւել եւս բանաւորք եւ մտաւորք, կարգեալք կամաւք ի քո սպասաւորութիւն, կատարեն մեծաւ ուրախութեամբ զհրամանս քո: Գոհանամք զքէն, Տէ՛ր, որ յամենայնի հզաւր ես եւ անկարաւտ, այլ վասն մարդասիրութեան քո հայեցար յազգս մարդկան եւ ընտրեցեր քեզ եկեղեցի ի մենջ՝ տաճար բնակութեան ամենասուրբ եւ փառաւորեալ Երրորդութեանդ: Կարգեցեր ի սմայ սարկաւագունս սպասաւորս սրբոյ եկեղեցոյ քո: Աղաչեմ զքեզ, Տէ՛ր, եւ խնդրեմք ի բարերարութենետ քումմէ, հայեա՛ց հաշտ ակամբ ի պատրաստ բնակութենետ քումմէ ի ծառայս քո այս, որ ձեռնադրեցաւ այժմիկ ի սպասաւորութիւն սրբոյ սեղանոյ քո, հաստատուն պահեա՛յ ի կոչումնս յոր կոչեցաւ, հեռացո՛ զսա յամենայն իրաց չարաց եւ զաւրացո՛յ ի գործս բարիս, յաւե՛լ ի սայ զսեր եւ զհաւատս: Տո՛ւր սմա զաւրութիւն եւ զշնորհս Ստեփաննոսի առաքելոյ Նախավկայի եւ առաջին սար|Ա.183բ|կաւագի եւ բարեպաշտի, որպէս զի լցեալ Հոգւով Սրբով՝ կացցէ ի սպասաւորութիւն սրբոյ սեղանոյ քո, խնկելով անուշահոտ վարիւք, եւ առաքինասեր գործովք զեկեղեցի քո, զուարճացուցանէ զինքն եւ զամենայն զմերձաւորս եւ զհեռաւորս՝ զծառայս քո, եւ արժանաւոր լիցի ի պատշաճ ժամանակի հասանել մեծի աստիճանի քահանայութեան, շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ՝ Հաւր ամենակալի իշխանութիւն եւ զաւրութիւն եւ փառք վայել է, հանդերձ կենդանարար Սուրբ Հոգւովդ, այժմ եւ միշտ եւ յ[աւիտեանս]:

Եւ[1] քարոզէ սարկաւագն.

ՃԾԵ. Միայն ամենիքեան աղաչեսցուք հաւատով զմարդասէր Աստուած յաղագս երանելի եպիսկոպոսի մերոյ այս անուան, որպէս զի շնորհեսցէ զսա եկեղեցոյ իւրում բազում ժամանակս ուղիղ վարդապետութեամբ եւ առաքինի գործովք հով[ու]ել իմաստութեամբ զժողովուրդ Տեառն, արժանաւոր ձեռնադրութիւնս առնելով ի պէտս սրբոյ սեղանոյս, կեցցէ անխիղճ մտաւք եւ անարատ վարիւք՝ կալ առաջի Տեառն զամենայն աւուրս կենաց իւրոց: Խնդրեսցուք յաղագս այս անուան սարկաւագութեան, զի սրբութեամբ եւ անբամբաս աջողեսցի ի գործս սպասաւորութեան սրբոյ սեղանոյս. |Ա.184ա| առ այս եւ վիճակ ժառանգութեան ընկալցի ընդ ամենայն սուրբս յարքայութեանդ երկնից: Եւ եւս յաղագս երանելի եպիսկոպոսի մերոյ այս անուան հաւատոց կենաց եւ փրկութեան մերոյ ամենեցունց ի Տեառնէ խնդրեսցուք. Կեցո՛յ եւ ողորմ[եա՛]: Գ. Տէր ողորմեա՛յ:

Եպիսկոպոսն ասէ զաղաւթս զայս.

ՃԾԶ. Ընկա՛լ, Տէ՛ր, զաղաչանս մեր զամենեցուն, եւ զծառայս քո, զոր ընտրեցեր եւ կոչեցեր ի սպասաւորութիւն սրբոյ սեղանոյ[1] քո, լցո՛յ զսայ Հոգւովդ քո Սրբով, յաջողեա՛յ ի գործս առաքինութեան, ուգնական եւ պաշտպան լինելով յամենայն ժամ, ընդ հովանեաւ ամենազաւր բազկի քո, պահեա՛յ յերեւելեաց եւ յաներեւելեաց թշնամեաց ճշմարտութեանն, զի անարատ գնացեալ ըստ կամաց քոց յամենայն ճանապար[հ]ս արդարութեան, արժանի լիցի յաւիտենից կենացդ, ընդ ամենայն սուրբս քո: Եւ սեր ամենեցուն հոգեւոր եւ սուրբ համբուրիւ ընկալեալ զսայ այժմ որպէս յամենայնի եւ այժմ, եւ գոհանալով փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւի[տեանս]:

---

[1] Յ > եւ

[1] Յ եկեղեցոյ] սեղանոյ

ԽԵ.[1] ԿԱՆՈՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

Սաղմոս *ՃԼԱ·[1]· Յիշեա՛յ, Տէ՛ր, զԴաւիթ [եւ զամենայն հեզութիւն նորա]*: Եւ կոչէ քահ|*Ա.184բ*|անայն ի վերայ բեմին, դարձուցեալ յարեւմուտս՝ որպէս սարկաւագն, բայց միայն զանունն փոփոխեն, թէ՝ *Ի սարկաւագութենէ ի քահանայութիւն*: Ապա լինի ի ծունգս առաջի սրբոյ սեղանոյն. եւ դնեն քահանայքն զձեռս ի վերայ ձեռաց նորա, եպիսկոպոսն դնէ զաջն ի վերայ եւ ասէ զաղաւթս զայս.

ՃԾԷ. *Աստուածային եւ երկնաւոր շնորհք, որ միշտ լնուս զպէտս սպասաւորութեան սրբոյ առաքելական եկեղեցւոյ, կոչէն զայս անուն ի սարկաւագութենէ ի քահանայութիւն, ըստ վկայութեան անձին իւրոյ եւ ամենայն ժողովրդեան: Ես դնեմ ձեռս ի վերայ, աղաւթս արարէ՛ք ամենիքեան, զի արժանի լիցի զաստիճան քահանայութեան՝ անարատ պաշտել առաջի Տեառն զամենայն աւուրս կենաց իւրոց: Տէ՛ր Աստուած ամենակալ, ամենազաւթ, ամենախնամ, արարիչ ամենայն արարածոց՝ երեւելեաց եւ աներեւութից, բնակեալ ի լոյս անմատոյց եւ յանմերձենալի, եւ անդունդք խորոց յայտնի են ամենատես աչաց քոց: Զքեւ շուրջ կան զաւրք երկնաւորք. հրշտակք եւ հրշտակապետք. իշխանութիւնք եւ պետութիւնք. սերովբէք եւ քերովբէք, եւ ամեն|Ա.185ա|նայն մարմնական զինուորութիւնք յաղթական զոհութեամբ միշտ զքեզ փառաւորեն: Դու, Տէ՛ր զաւրութեանց, ամէնայն եւ յամենայնի հզաւր եւ անկարաւտ, մարդասէր կամաւք զթացեալ ի խոնարհութիւն ազգի մարդկան, որոշէցեր յամենայն մարդկանէ ժողովուրդ սեպհական սուրբ զեկեղեցի, զոր մարմին եւ անդամ քեզ անուանեցեր, կացուցեր ի սմա քահանայս, հովիւս եւ առաջնորդս ժողովրդեան քում: Լո՛ւր, Տէ՛ր, եւ այժմ ձայնի աղաչանաց մերոց, եւ զոր ընտրեցեր եւ ընկալար զծառայս քո ի քահանայութիւն զձեռնադրեալս այժմ անշարժ պահեա՛ ի քահանայ[illegible]անս յոր կոչեցաւ, շնորհեա՛ յ[illegible]մա միտս զգաստս՝ զգուշութեամբ պահել զպատուիրանս քո եւ սիրել զքեզ յամենայն սրտէ իւրմէ եւ յամենայն զաւրութենէ, եւ ի բաւանդակ մտաց իւրոց, որպէս զի գնասցէ ճշմարտութեամբ զճանապար[հ]ս քո արդարութեամբ, սուրբ սրտիւ, անկեղծաւոր հաւատով եւ առաւելեալք ի գործս բարիս՝ ըստ կամաց քոց բարէխիրաց, զի կացցէ |Ա.185բ| հաստատուն եւ անարատ ի քահանայութեան, առաջի քո ի կաթողիկէ եկեղեցւոջ. շինեալ եւ հաստատեալ ի վերայ հաւատոյ վիմի, առանց ամաւթոյ, ուղիղ համառաւտել զբանն քարոզութեան, սերմանել զկենդանարար եւ զուղափառ հաւատս առաքելական եկեղեցւոյ յամենայն տեղիս ի լսողս: Տո՛ւր սմա շնորհս առաքելականս՝ առ ի մերժել եւ հեռացուցանել զախտս չարչարանաց եւ զայս պիղծս ի մարդկանէ, դնելով ձեռս ի վերա նոցա, կարդալով զամենազաւր անուն քո, աւգնութիւն եւ բժշկութիւն ախտացելոց շնորհեսցէ, արժանաւոր լիցի կոչել զՀոգիդ Սուրբ ի յերկնից՝ առ ի հոգեւոր կենդանութիւն վերստին ծնելոցն լուսաւոր աւազանաւն, որով հասանեն մեծի շնորհի որդէգրութեան քո, եւ ժառանգութեան երկնից արքայութեանդ, հաւատովք կարդեսցէ զահաւոր եւ զերկնային խորհուրդ մարմնոյ եւ արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ի թողութիւն մեղաց արժանապէս հաղորդելոց, այլ եւ զամենայն իսկ կարգս քահանայութեան |Ա.186ա| բաւանդակ առաքինութեամբ կատարեալ եղիցի փառաբանիչ սրբոյ Երրորդութեանդ, վարձս ընդ երանելի առաքեալսն ընդալցի յաւիտենական կեանդ, կրկին պատուոյ արժանի, շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ հրաւիրեաց զմեզ եւ կոչեաց յիւր յարքայութիւնն, ընդ որում քեզ՝ Հաւր ամենակալի, զաւրութիւն, իշխանութիւն եւ փառք վայել է այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:*

Սարկաւագն քարոզէ.

ՃԾԸ. *Միաբան աղաչե[ս]ցուք հաւատով յաղագս երանելի եպիսկոպոսի մերոյ այս անուան, որպէս զի շնորհեսցէ զսա եկեղեցւոյ իւրում բազում ժամանակս ուղիղ վարդապետութեամբ[1] եւ առաքինի գործովք հով[ու]ել իմաստութեամբ զժողովուրդ Տեառն, արժանաւոր ձեռնադրութիւնս առնել ի պէտս սրբոյ սեղանոյ: Կացցէ անխիղճ մտաւք եւ անարատ վարիւք՝ կալ առաջի Տեառն զամենայն աւուրս կենաց իւրոց: Խնդրեսցուք եւ յաղագս այս անուան քահանայի, զի սրբութեամբ եւ անբանբաս աջողեսցի ի գործս սպասաւորութեան առաջի սրբոյ սեղանոյս, եւ վիճակ ժառանգութեան ընկալցի ընդ ամենայն սուրբս յարքայութեանդ երկնից: Եւ եւս յաղագս երանելի եպիսկոպոսի մերոյ հաւատովք կենաց*

---

[1] *Ա.185ա*՝ ստ. լս. *«Լ.Ե. Երեց առնել» (ԽԵ.ի փխ. գրել է ԼԵ., 186ա, 187ա, 188ա՝ առանց համարի)*

[1] Բ.վ.Ս.՝ «Մնացեալն, ի բաց առեալ օծումը, ճիշտ նոյն է սարկաւագի ձեռնադրութեան քարոզին հետ. հմմտ. 183բ^{1}-184ա^{1}» (Վենետիկի ցուցակ, Գ., էջ 42):

եւ փրկութեան մերոյ ամենէ|Ա.186բ|եցուն ի Տեառնէ խնդրեսցուք. Կեցո՛յ եւ ողորմեա՛, Գ. Տէր ողորմեայ:

Եպիսկոպոսն ասէ զաղօթս զայս.

ՃԾԹ. *Տէ՛ր Աստուած ամենակալ ամենայն լինելութեանց, որ նախ յաթոռս անարուեստս եւ անտես յանմահ սուրբ զուարթնոցն, զովեալ բարէբանիս, որք անհանդչելի ձայնիւք առ միմեանս բաղդատելով, գերեքսրբեան դրուատեն զիշխանական զփառս, աղաչեմք զքեզ միարան ծառայքս քո, խոնարհեա՛յ ի խնդրուածս մեր եւ շնորհեա՛յ զառատ քո ողորմութիւն, պարգեւեա՛յ ծառայի քում զաստիճան քահանայութեան՝ ուղիղ վարիւք եւ անարատ առաքինութեամբ հաստուցանել քեզ շահընկալ զովութիւն, հե՛ղ ի վերայ առատապէս զշնորհս Սուրբ Հոգւոյն, եւթնապատիկ պարգեւաւք ճշմարտութեան եւ իմաստութեան հանճարոյ, եւ մեծի խորհրդոյ զաւրութեան, աստուածպաշտութեան եւ երկիւղիւ քո, Տէ՛ր, մերժեալ հեռասցի ամենայն խորամանգութիւն կամակոր թշնամոյն, զի կեցեալ սորա արդարութեամբ |Ա.187ա| եւ ուսուցանող նմանութեան անձին իւրոյ՝ զհաւատացեալս ի քեզ ժողովուրդս հով[ու]ել ճշմարտապէս, առնելով եւ ուսուցանելով մեծ կոչեսցի յարքայութեան Քրիստոսի քո, եւ արժանապէս փառաւորեսցէ զքեզ, Տէ՛ր, եւ մեր ամենեցուն ընկալեալ սրբութեան ողջունիւ զսա, եւ գոհութեամբ եւ աւրհնութեամբ յամենայն ժամ պատրաստ գոլով ամենազաւր կամաց քոց, բարէբանեսցուք սուրբ զԵրրորդութիւնդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:*

Եւ սգեցուցանեն ասելով. *Քահանայք քո սգեց[ց]ին զարդարութիւն:*

142. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱԵԱ ՄԱՐԳԱՐԷ [ԿԱ· 1-6]. «*Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ աւծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս. բժշկել զգերեալս[1] սրտիւք, քարոզել գերեաց զթողութիւն, եւ կուրաց տեսանել, 2 կոչել ամ Տեառն ընդունելի եւ աւր հատուցման Աստուծոյ [illegible]ոյ, մխիթարել զամենայն սգս[illegible], 3 տալ սգաւորաց Սիովնի [illegible]ռս[2]. փոխանակ մոխրոյն աւծումն ուրախութեան. եւ սգաւորաց նորա[3] հանդերձ փառաց փոխանակ ոգոցն[4] վհատութեան: Եւ կոչեսցին |Ա.187բ| նոքա ազգ[5] արդարութեան՝ տունկ Տեառն ի*

---

[1] Ս զբեկեալս] զգերեալս
[2] Ս փառս
[3] Ս սգաւորացն] սգեւորաց նորա
[4] Ս ոգւոցն
[5] Ս ազգք

փառս, 4 եւ շինեսցեն զաւերակսն յաւիտենից. եւ զյառաջագոյն աւերեալսն կանգնեսցեն. եւ նորոգեսցեն զքաղաքս աւերեալս ազգաց յազգս[1]: 5 Եւ եկեսցեն աւտարածինք հովիւք խաշանց քոց. եւ այլազգիք մաճակալք եւ այգեգործք քոյ[2]: 6 Բայց դուք քահանայք Տեառն կոչեսջիք, եւ[3] պաշտաւնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջիք. զզաւրութիւնս[4] ազգաց կերիջիք, եւ մեծութեամբ նոցա սքանչելի լինիջիք»:

143. ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ Ի ԿԱԹՈՂԻԿԵԻՑ ԹՂԹՈՅ[5] [Ա· Պետր· Ե· 1-4]. «*Զերիցունս այսուհետեւ աղաչեմ՝ իբրեւ զերիցակիցս եւ զվկայս[6] չարչարանացն Քրիստոսի, որ եւ հանդերձեալ փառացն որ մեզ[7] յայտնելոց են հաղորդս[8]· 2 արածիցէք որ[9] ձեզ հաւտ իցէ յԱստուծոյ[10]. վերակացու լինել՝ մի՛ իբրեւ ակամա, այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի իբրեւ[11] զաւշաքաղութեամբ, այլ յաւժարութեամբ սրտի[12]. 3 մի՛ իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել աւրինակ հաւտին: 4 Զի յերեւել հովուապետին՝ ընկալջիք[13] զանթառամ փառաց պսակն*»:

Ալելու. *Ասաց Տէր ցՏէր իմ. Նի՛ստ ընդ աջմէ.*

144. |Ա.188ա| ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ [ԺԶ· 13-19]. «*Տէր մեր Յիսուս ելեալ ի չենս[14] Փիլիպպեայ կեսարեայն, հարցանէր զաշակերտսն իւր[15] եւ ասէր. Զո՞ ոք ասեն զինեն մարդիկն՝ էթէ[16] իցէ որդի մարդոյ: 14 Եւ նոքա ասեն. Ոմ[17]՝ զՅովաննէս[18] մկրտիչ, եւ այլք՝ զԵղիա, կէսք[19]՝ զԵրեմիա, կամ զմի ոք ի մարգարէից[20]: 15 Ասէ ցնոսա[21]. Իսկ դուք զո՞ ոք ասէք զինեն էթէ[22] իցեմ: 16 Պատասխանի ետ Պետրոս[23] եւ ասէ. Դու ես Քրիստոս[24] որդի Աստուծոյ կենդանոյ[25]: 17 Պատասխանի ետ*

---

[1] Ս ազգաց մինչեւ յազգս
[2] Ս քո
[3] Ս > եւ
[4] Ս զզաւրութիւն
[5] Յ թղթոյն
[6] Ս զերիցակից եւ վկայ
[7] Ս > որ մեզ
[8] Ս յայտնելոյ հաղորդ
[9] Ս արածեցէք որ ի
[10] Ս է աստուծոյ] իցէ յաստուծոյ
[11] Ս > իբրեւ
[12] Ս > սրտի
[13] Ս ընդունիջիք] ընկալջիք
[14] Ս եւ ելեալ յիսուս ի կողմանս] տէր մեր յիսուս ելեալ ի չենս
[15] Ս > իւր
[16] Ս թէ
[17] Ս ոմն
[18] Ս զյովհաննէս
[19] Ս եւ կէսք
[20] Ս մարգարէիցն
[21] Ս ցնոսա յիսուս
[22] Ս թէ
[23] Ս նմա սիմովն պետրոս
[24] Ս քրիստոսն
[25] Ս կենդանւոյ

Յիսուս եւ ասէ[1]. Երանի է[2] քեզ Սիմովն որդի Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է: 18 *Եւ ես քեզ ասեմ. Դու[3] ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն:* 19 *Եւ տայց[4] քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս»:*

Եպիսկոպոսն ասէ զաղաւթս զայս.

ԾԿ. *Տէ՛ր Աստուած, հզաւր եւ անիմանալի, Աստուած փառաց եւ ամենայն պատուոյ, դու պսակեցեր փառաւք |Ա.188բ| եւ պատուով զսուրբս քո, դու ընծայեցուցեր զմարգարէական շնորհս ի մարդիկ: Դու պարգեւեցեր զքահանայական պատիւ, դու ընդրեցեր զսուրբ զառաքեալսն եւ յաւրինեցեր ի կաթողիկէ եկեղեցւոջ ազգի ազգի կարգս ուղղութեան: Դու յարուցեր ի սմա քահանայապետս, աճեցուցեր քահանայս եւ դասս սարկաւագաց, որով մեծարի անուն գալստեան քո, Քրիստոս Աստուա՛ծ: Եւ այժմ, Տէ՛ր, Տէ՛ր, զծառայս քո զոր ընդրէցեր ի կոչումն քահանութեան. լուսաւորեա՛յ շնորհաւք Սուրբ Հոգւոյդ, զի կացցէ առաջի քո ամբիծ եւ անարատ վարուք. եւ պաշտեսցէ զսուրբ եկեղեցի քո եւ զժողովուրդս քո առանց գայթակղութեան, յամենայն նեղութեան չարին. եւ մեր ամենեցուն հոգեւոր եւ սուրբ ողջունիւ ընկալեալ զսա, որպէս յամենայնի՝ եւ յայսմիկ անդադար գոհութեամբ փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յ[աւիտեանս]:*

---

[1] Մ ասէ ցնա
[2] Մ > է
[3] Մ զի դու
[4] Մ տաց

ԽՋ.[1] ԿԱՆՈՆ ՁՆՇԽԱՐՍ ՍՐԲՈՑՆ Ի ՀԱՆԳԻՍՏ ՓՈԽԱՐԿԵԼՈՅ

Տանին ի տեղի արժանի դնելոյ եւ ասեն ի թիւ |*Ա.189ա*| զՃԼԲ. [=ՃԼԸ. 1]. սաղմոսն. *Յիշեա՛, Տէ՛ր, զԴաւիթ:* Ապա ասեն զՃԺԵ. [15]. *Պատուական է ա[ռաջի Տեառն մահ սրբոց իւրոց]:*

145. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ՉՈՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹ[ԵՆԷ. Գ. Թ–գ. Ը. 3-8]. *«Եւ եկին ամենայն ծերքն Իսրայէղի[2], եւ բարձին քահանայքն զտապանակն[3]* 4 *Տեառն եւ զխորանն վկայութեան, եւ զամենայն կահ սրբութեանն[4]. եւ հանին զայն քահանայքն ղեւտացիքն[5]:* 5 *Եւ արքայն Սողոմովն[6] եւ ամենայն ժողովուրդն Իսրայէղի[7] գումարեալք առ նա, հանդերձ նովաւ առաջի տապանակին զենուին[8] պատարագս ողջակիզաց Տեառն Աստուծոյ[9]:* 6 *Եւ տարան ի ներքս քահանայքն զտապանակ ուխտին Տեառն[10] ի Դաբիր տուն[11] սրբութիւն սրբութեանց[12]՝ ընդ թեւաւք քրովբեիցն[13].* 7 *զի քրովբէքն[14] թռուցեալ թեւաւքն[15] ի վերայ տեղոյ[16] տապանակին[17], եւ զսրբութիւնսն որ[18] ի վերուստ:* 8 *Եւ կային[19] ի վերա սրբեցելոցն, եւ հայէին գլուխք սրբեցելոցն ի սրբութեանց անդի[20] հանդէպ Դաբիրայն, եւ արտաքոյ[21] ոչ եւս[22] երեւէին. եւ եղեն անդ մինչեւ ցայսաւր»:*

146. Ի ԿՈՐՆԹԱՑՈՑ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ Ը[ՆԹԵՐՑՈՒԱԾ. Բ. Կ–րնթ. Դ. 6-14]. *«Զի Աստուած որ ասաց ի խաւարէ լոյս ծագել, որ եւ ծագեաց իսկ ի սիրտս մեր՝ ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստուծոյ, |Ա.189բ| ի դեմս Յիսուսի Քրիստոսի:* 7 *Այսուհետեւ ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս. զի առաւելութիւն զաւրութեան[23] իցէ յԱստուծոյ, եւ ոչ ի մենջ:* 8 *Յամե-*

---

[1] *Ա.189ա*՝ ստ. լս. «*դնչխարս սրբոց ի հանգիստ*»
[2] Մ ծերք իսրայէլի
[3] Մ զտապանակն + 4 եւ հանին զտապանակն
[4] Մ սպասն սրբութեան որ ի խորանին վկայութեան] կահ սրբութեանն
[5] Մ քահանայքն եւ ղեւտացիք
[6] Մ արքայ սողոմոն
[7] Մ իսրայէլի
[8] Մ զենուին
[9] Մ արջառս եւ ոչխարս անհամարս եւ անթիւս ի բազմութենէ] պատարագս ողջակիզաց տեառն աստուծոյ
[10] Մ տեառն + ի տեղի իւր
[11] Մ տանն
[12] Մ սրբութեան սրբութեանցն
[13] Մ թեւովք քրոբէիցն
[14] Մ քրոբէքն
[15] Մ թեւովք
[16] Մ տեղւոյ
[17] Մ տապանակին + եւ ծածկեցին քրոբէքն զտապանակն
[18] Մ զսրբութիւնս նորա] զսրբութիւնսն որ
[19] Մ կային
[20] Մ անտի
[21] Մ արտաքս
[22] Մ > եւս
[23] Մ զաւրութեանն

նայնի նեղեալք, այլ ոչ նուաղեալք. կարաւտեալք, այլ ոչ տարակուսեալք. 9 *հալածեալք, այլ ոչ լքեալք. չարչարեալք, այլ ոչ տանջեալք*[1]: 10 *Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր կրեսցուք, զի եւ կեանքն մեր*[2] *Յիսուս*[3] *ի մարմինս մեր յայտնեսցի*[4]: 11 *Քանզի եւ մեք միշտ*[5] *կենդանիքս եմք, ի մահ մատնիմք վասն Քրիստոսի*[6]. *զի եւ կեանքն Յիսուսի յայտնի լինիցի*[7] *ի մահկանացու մարմինս մեր:* 12 *Այսուհետեւ մահ ի մեզ զաւրանա*[8], *եւ կեանք ի ձեզ:* 13 *Արդ, ունիմք զնոյն հոգի հաւատոց, որպէս եւ գրեալ է. Հաւատացի՝ զոր*[9] *եւ խաւսեցա*[10]: *Եւ մեք հաւատամք՝ վասն որոյ եւ խաւսիմք իսկ:* 14 *Զայս գիտեմք՝ եթէ որ յարոյցն զՅիսուս, եւ զմեզ ընդ Յիսուսի յարուսցէ, եւ յանդիման կացուսցէ ձեւք հանդերձ»:*

Ալելու. *Տէր ով կաց[ց]ե ի խորանի քում:*

147. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱԹԵՈՍԻ [Ժ· 40-42]. *Տէր մեր Յիսուս ասէ*[11]. *«Որ զձեզ ընդունի*[12]*՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ:* |*Ա.190ա*| 41 *Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ: Եւ որ ընդունի զարդարն*[13] *յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ:* 42 *Եւ որ արբուսցէ միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր»:*

Քարոզէ. *Սուրբ ճգնաւորաւքս աղաչե[սցուք]*: Եւ ասէ զաղաթս զայս.

ՃԿԱ. *Տէ՛ր Աստուած մեր, որ փառաւորեցեր զսուրբ վկայսն քո, որք վասն անուան քո ճգնեցան, եւ պարգեւէցեր սերմանել ընդ ամենայն երկիր զնշխարս սոցա ի սրբարանս քո, եւ զպտուղ բժշկութեան ծաղկեցո՛ վասն սոցա, ամենայն բարեաց վաստակակից գոլով աղաւթիւք սոցա, որոց խոստացար հանգիստ նշխարաց ի սուրբ տանս յայսմ լինել, պարգեւեա հատուցումն մեզ, եւ յայմ* [illegible] *ճգնեցան վասն անուանս քո, սքանչելագործեա՛ ի ձեռս սոցա, առ ի մեզ զբժշկութիւն եւ զփրկութիւն հոգւոց, վասն զի քո է զաւրութիւն, եւ քեզ վայել է փառք այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:*

---

[1] *Ս սատակեալք] տանջեալք*
[2] *Ս > մեր*
[3] *Ս յիսուսի*
[4] *Ս յայտնեսցին*
[5] *Ս միշտ մեք որ] եւ մեք միշտ*
[6] *Ս յիսուսի] քրիստոսի*
[7] *Ս լիցին*
[8] *Ս զաւրանայ*
[9] *Ս վասն որոյ] զոր*
[10] *Ա խաւսեցայ*
[11] *Ս > տէր մեր յիսուս ասէ.*
[12] *Ս ընդունի զձեզ*
[13] *Ս զարդար*

ԽԷ.[1] ԿԱՆՈՆ ՅՈՐԺԱՄ ՔԱՀԱՆԱ ՎԱԽՃԱՆԻ |Ա.190բ| ԿԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՌ Ի ԹԱՂՈՒՄՆ

Այսպէս յուղարկեն. առնու եպիսկոպոսն զբազմութիւն ուխտին, եւ երթան ի տեղին ուր զհանգիստն կամին պատրաստել: Ասեն սաղմոս ՉԹ· [17]· կցուրդ. *Զգործս ձեռաց մերոց:*

148. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱԿԱՑ [Թ· 1-6]. *«Իմաստութիւն շինեաց իւր տուն*[2], *եւ կանգնեաց սիւնս եւթն:* 2 *Զեն զենլիս*[3] *իւր, եւ խառնեաց ի խառնելիս զգինի իւր, եւ պատրաստեաց զսեղան իւր:* 3 *Եւ առաքեաց զծառայս իւր՝ կոչել բարձր քարոզութեամբ ի խառնելիս իւր,* 4 *եւ ասէ. Որ ոք իցէ անզգամ*[4], *եկեսցէ առ իս, եւ ցպակասամիտսն ասէ.* 5 *եկա՛յք կերա՛յք ի հացէ իմմէ, եւ արբէ՛ք զգինի իմ, զոր խառնեցի*[5] *ձեզ:* 6 *Թողէք զանզգամութիւն*[6] *եւ*[7] *կեցջիք· խնդրեսցէք*[8] *զիմաստութիւն զի ապրեսջիք*[9]*»:*

149. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵԶԵԿԻԵԼԷ[10] ՄԱՐԳ[ԱՐԷԷ. Ընգէ· Բ· 4-5]. *«Այսպէս ասէ Տէր*[11]. *«Ո՞յր ուրուք*[12] *տեսեալ իցէ զտունս զայս ի փառաւորութեան իբրեւ*[13] *զառաջինն. որպէս այժմ տեսանիցեք զսա իբրեւ*[14] *զոչինչ առաջի ձեր:* 5 *Եւ*[15] *արդ, զաւրացի՛ր դու, Զորաբաբե՛լ, ասէ Տէր, եւ զաւրացի՛ր, Յեսո՛ւ Յովսեդեկիա քահանա*[16] *մեծ, եւ զաւրա[ս]ցի ամենայն ժողովուրդ երկրիդ*[17], |*Ա.191ա*| *գործեցէ՛ք*[18], *զի ես ընդ ձեզ եմ»,- ասէ Տէր ամենակալ»:*

150. ՅԵԲՐԱԵՑՈՑ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵ[ԼՈՅ. Գ· 1-4]. *«Եղբա՛րք, նահեցարուք*[19] *ընդ առաքեալ*[20] *եւ ընդ քահանայապետ*

---

[1] *Ա.191ա, 204ա՝* առ. լս. *«.խէ. քահանաթաղ» (192ա, 193ա, 194ա, 195ա, 196ա, 197ա, 198ա, 201ա, 202ա, 203ա, 205ա, 206ա, 207ա, 208ա, 209ա, 210ա, 211ա, 212ա, 213ա, 214ա, 215ա, 216ա, 217ա, 218ա, 220ա, 221ա, 222ա, 223ա, 224ա, 225ա, 226ա, 227ա՝* առանց *.խէ.* համարի*), 219ա, 228ա, 229ա, 230ա՝ «քահանայաթաղ»*
[2] *Գ տունս*
[3] *ՍԳ զզենլիս*
[4] *ՍԳ անզգամ*
[5] *ՍԳ խառնեցի*
[6] *ՍԳ զանզգամութիւն*
[7] *Գ զի] եւ*
[8] *Ս խնդրեցէք*
[9] *Գ եւ ուղղեցէք գիտութեամբ զհանճար] խնդրեսցէք... ապրեսջիք*
[10] *Գ յանգեայ] յեզեկիէլէ*
[11] *Ս > այսպէս ասէ տէր*
[12] *Գ ոյրուք ի ձէնջ] ոյր ուրուք, Ս ի ձէնջ] ուրուք*
[13] *Գ իւրում իբրեւ, Ս իւրում] իբրեւ*
[14] *ՍԳ ո՞րպէս (Գ եւ) արդ տեսանէք զդա որպէս] որպէս այժմ տեսանիցեք զսա իբրեւ*
[15] *Գ > եւ*
[16] *Ս յովսեդեկեայ քահանայ, Գ յովսեդեկեանց քահանայ*
[17] *ՍԳ երկրիդ, ասէ տէր*
[18] *ՍԳ եւ գործեցէ՛ք*
[19] *ՍԳ ուստի եղբարք սուրբք, երկնաւոր կոչմանն բաժանորդք, նայեցարուք] եղբա՛րք, նահեցարուք*
[20] *Ս առաքեալն, Գ առաքեալսն*

խոստովանութեանս[1] մերոյ ընդ Յիսուս Քրիստոս[2]. 3 Զի առաւել եւս քան զՄովսէս փառաց[3] արժանի եղեւ. որչափ եւս[4] առաւել պատիւ ունի[5] քան զտունն՝ տանն առնելի[6]: 4 Զի ամենայն տուն կազմի յումեք կազմի. իսկ որ զամենայն[7] արար, Աստուած է»:

Ալելու. [ՁԳ. 1]. *Իբրեւ[8] սիրելի են յարկ քո Տէր զաւրութ[եանց]:*

151. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ [ԺԹ. 5-6]. *«Իբրեւ եկն ի տեղին, հայեցաւ ի վեր Յիսուս եւ ասէ[9]. Զակքէ՛ փութա[10], է՛ջ այտի, զի այսաւր ի տան քում արժան է ինձ ագանել: 6 Փութացաւ եւ էջ, եւ ընդալաւ[11] զնա ուրախութեամբ[12]»:*

Քարոզէ. *Վասն ի վերուստ խ[աղաղութեան]:* Եւ ասէ զաղաւթս զայս.

ՃԿԲ. *Փառք քեզ, թագաւո՛ր փառաց, յոյս եւ ակնկալութիւն ամենայն[13] ծագաց երկրի. ի քեզ յուսացար, որ փոխանակ ապականացու կենացս զանապական եւ զանվախճան կեանըս պարգեւեսցես մեզ. եւ փոխանակ սնոտի եւ տխրական աշխարհիս պարգեւեսցես մեզ զվերինդ Երուսաղէմ եւ զգուարճալից ուրախութիւնդ, վասն որոյ աղաչեմք* |Ա.191բ| *զքեզ. Տէ՛ր, աւրհնեա՛յ զբնակութիւն ծառայիս քո, որ շնորհեցեր տաճար հանգստեան, հանգո՛յ ընդ սուրբս քո շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ [յաւիտեանս]:*

Ապա առեալ քահանայն զբրիչն խաչանման նշէ զտեղին եւ տայ ցժողովուրդն, եւ արասցեն զխորութիւնն վիրապին Զ. թիզ: Եւ ապա երթան ուր սուրբն ննջեցեալն է եւ լուանան քահանայքն ծածուկ ի ժողովրդենէն. եւ [illegible]ին մի՛ մերձեսցի: Եւ ասեն սաղ[illegible] ր. [9]. կցուրդ. *Յաւղեա՛ յի[illegible] ակաւ, եւ սուրբ եղ[էց]:*

152. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵԶԵԿԻԷԼԷ ՄԱՐԳ[ԱՐԷԷ. ԼԶ. 25-28]. *«Այսպէս ասէ Ադոնայ[14] Տէր[15]. «Եւ ցանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ, եւ սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց, եւ յամենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ[1]. 26 եւ հանից զսիրտ[2] քարեղէն ի մարմնեղէն[3] ի մարմնոց ձերոց, եւ տայց[4] ձեզ սիրտ մարմնեղէն. 27 եւ զոգի իմ տայց[5] ձեզ: Եւ արարից, զի յարդարութիւնս իմ[6] գնասջիք[7], եւ զպատուիրանս իմ պահեսջիք[8], եւ առնիցէք զնոսա[9]: 28 եւ բնակեսջիք յերկիրն[10], զոր ետու[11] հարցն ձերոց. եւ եղիջիք ինձ ի[12] ժողովուրդ, եւ ես եղեց ձեզ Աստուած[13]»:*

153. |Ա.192ա| Ի ՅԵԲՐԱՅԵՑՈՑ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔ[ԵԼՈՅ. Ժ. 19-25]. *«Ունիմք այսուհետեւ, եղբա՛րք, համարձակութիւն ի մուտս սրբութեան[14] արեամբն Յիսուսի[15]. 20 զոր նորոգեաց մեզ զճանապարհ[16] նորոգ եւ կենդանի, ի ձեռն վարագուրին, այսինքն[17] մարմնոյ[18] իւրոյ. 21 եւ քահանա[19] մեծ ի վերայ տանն Աստուծոյ. 22 մատիցուք ճշմարիտ սրտիւ[20], լրութեամբ հաւատոց[21], լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց, եւ մկրտեալ զմարմինս ի ջուր[22] սրբութեան: 23 Պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն, զի հաւատարիմ է որ խոստացաւն: 24 Եւ զգուշասցուք[23] միմեանց յորդորմամբ[24] սիրոյ եւ գործոց բարեաց. 25 եւ մի՛ թողցուք զժողովս միմեանց, որպէս սովոր են ոմանք. այլ մխիթարեսցուք[25], եւ այնչափ եւս առաւել՝ որչափ տեսանիցէք զաւրն մերձեալ»:*

Եւ ապա ագուցանեն պարեգաւտս սպիտակս եւ փիլոն սպիտակ, եւ կնկող սպիտակ, եւ գաւտի մաշկեղեն, եւ անդրավարտիս սպիտակ եւ խողովխի մի ածել. եւ գուրպայս յոտսն. եւ բուրուառ յաջու ձեռինն, եւ փոքր դաստառակաւ խունկ ի ձախոյ ձեռինն, եւ խաչն եւ Աւետարանն ի գիրկսն. եւ գլուխն յետ բազմեալ յարեւմուտս. վասն զի անդի անգաւ Ադամ: Եւ ասեն զվերին կանոնն

---

[1] *ՍԳ խոստովանութեան*

[2] *ՍԳ քրիստոս + 2 որ հաւատարիմ է արարչին իւրոյ, որպէս եւ մովսէս յամենայն (Գ + ի) տան նորա*

[3] *ՍԳ եւս փառաց քան զմովսէս*

[4] *ՍԳ > եւս*

[5] *ՍԳ ունիցի*

[6] *Ս առնելին*

[7] *Ս զամենայնն*

[8] *Ս որպէս] իբրեւ*

[9] *Ս ասէ ցնա*

[10] *Գ զաքէ փութայ*

[11] *ՍԳ ընկալաւ*

[12] *Գ* ունի նաեւ տունք 7-10՝ հմմտ-ը տե՛ս ի 30րդ ընթ.

[13] *Յ ամենեցուն] ամենայն*

[14] *Գ նդովնիայ*

[15] *Ս > այսպէս ասէ ադոնա տէր*

[1] *ՍԳ զձեզ: + 26 եւ տաց ձեզ սիրտ նոր, եւ ոգի նոր նորոգեցից ի ձեզ*

[2] *Ս զսիրտն*

[3] *ՍԳ > ի մարմնեղէն*

[4] *ՍԳ տաց*

[5] *Ս տաց ի, Գ տաց*

[6] *Ս > իմ*

[7] *Ս գնայցէք*

[8] *Ս զհրաւունս իմ պահիցէք] զպատուիրանս իմ պահեսջիք*

[9] *Գ զնոսայ*

[10] *Ս բնակիցէք յերկրին, Գ յերկրին*

[11] *ՍԳ ետու] երդուա*

[12] *Գ > ի*

[13] *Ս յաստուած*

[14] *ՍԳ սրբութեանցն*

[15] *Գ քրիստոսի] յիսուսի*

[16] *ՍԳ ճանապարհ*

[17] *ՍԳ այսինքն է*

[18] *Ս մարմնոյն*

[19] *ՍԳ քահանայ*

[20] *Ս սրտիւք*

[21] *Գ հաւատոյ*

[22] *Ս զմարմին ի ջուրն, Գ ջուրն*

[23] *Գ զգուշացարուք*

[24] *Ս յորդորմամբք*

[25] *Գ մխիթարեցարուք*

|*Ա.192բ*| եւ զաւրհնութիւնն շարականաւ, եւ աւրհնութիւն եւ փառս: Այլ եւ սաղմոս ԻԶ. [1]. *Տէր լոյս իմ եւ*[1] *ես յումէ՞ երկեայ[ց], Տէր ապաւէն կ[ենաց]*[2]:

154. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՀԱՆՆՈՒ [ԻԱ. 18-19]. *«Տէր մեր Յիսուս ասէ*[3]. *«Ամէն ամէն ասեմ քեզ. մինչ*[4] *մանուկն էիր՝ անձամբ անձին գաւտի ածեիր, եւ երթայիր յոր*[5] *եւ կամեիր. եւ յորժամ ծերասցիս*[6]*, եւ այլք ածցեն քեզ գաւտի, եւ տարցին ուր ոչ*[7] *կամեսցիս*[8]*:* 19 *Զայս ասաց նշանակեալ՝ թէ որով մահու փառաւոր առնիցէ զԱստուած: Եւ զայս իբրեւ ասաց, ասէ ցնա. Ե՛կ զկնի իմ*[9]*»:*

Քարոզէ. *Վասն ուղղելոյ:*

Եւ ասէ զաղաւթս զայս.

ՃԿԳ. *Մատիցուք ճշմարիտ սրտիւ, լրութեամբ հաւատոց, փութասցուք հետեւել յառագաստ երկնաւոր փեսային ի վերինն Երուսաղէմ ժամանեալ ի դաս առաքելոցն, եւ արժանաւորեսցուք Քրիստոս լուացման վերնատանն, զոր իւր սուրբ ձեռաւքն առեալ ջուր. արկ ի կոնքն եւ լուաց զոտս առաքելոցն. կեանս եւ յաւերժ ուրախութիւն համարեսցին սոքա ընդ դասս առաքելոցն, շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում վայել է փառք. իշխանութիւն ե[ւ] պատիւ:*

|*Ա.193ա*| Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպագե[սցուք].

ՃԿԴ. *Փութացարուք մտանել ի ներքին կողմն, լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց. եւ մկրտեալ զմարմինս ի ջուր սրբութեան, աւազանին ապաշխարութեամբն, եւ մաքրեալ յաղտոյ յանցանաց: Եւ արդ, խնդրեմք ի քէն, մարդասէր Տէ՛ր. առաջնորդեա՛յ հոգւոյ սորա ի յերկիր ուղիղ ի կեանս, զոր պատրաստեցեր սիրելեաց քոց, զի եւ սա արժանի լիցի կարգել ի տեղիս անդեղոց հրշտակաց, եւ ի միւսանգամ գալստեանն քո գ[illegible]րթերես կացցէ առաջի ահա[illegible] դատաւորիդ, եւ մեք յամե[illegible] ժամ գոհութեամբ փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի այժմ եւ միշտ եւ [յաւիտեանս]:*

Եւ ապա ասեն [ԺԸ. 2] *զԵրկինք պատմել*, եւ աւրհնութիւն. *Ես ասացի*՝ շարականաւ: Եւ քարոզէ.

ՃԿԵ. *Վասն հրաժարելոյ քահանայիս յերկրաւոր կենցաղոյս եւ արժանաւոր լինել երկնից արքայութեանն զՏէր աղաչե[ս]ցուք:*

Վասն որք ի ծովածուփ եւ սնավստակ աշխատութեանցս յղարկեց անհասանելի նաւահանգիստն խաղաղութեան զՏէր աղաչ[եսցուք]:

Վասն որք փոխեցան յախտալից եւ ի տխրական կենցաղոյս, զի զանանց կեանսն ժառանգեցին, զՏէր աղ[աչեսցուք]:

Վասն զի արժանի արասցէ զսա մտանել ընդ նեղ դուռն եւ կալ առաջի ահաւոր տէրութեանն զՏէր աղ[աչեսցուք]:

|*Ա.193բ*| *Եւ վասն հոգոյն հանգուցելոյ եւ ո., եւ եւս զանձինս ողորմեա՛յ մեզ:*

Եւ ասէ զաղաւթս զայս.

ՃԿԶ. *Տէ՛ր Աստուած, արարիչ ամենայն արարածոց, դու զաւրութեամբ քով մեծաւ իջեր ի սանդարամետս դժոխոց եւ լուծեր զզաւրութիւն մահու, եւ ազատեցեր որ ի նմա զհոգիսն, վերափոխեալ յանմահական քո հանգիստ, աղաչեմ զքեզ, Տէ՛ր, զհոգի [illegible] քահանայի խառնեա՛յ ի դասս սիրողաց անուան քում սրբոյ, եւ զմեզ զժողովուրդս քո, որ կամք առաջի քո, աւրհնեա՛, եւ արժանաւորեա՛յ փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւի[տեանս]:*

Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպագե[սցուք].

ՃԿԷ. *Աղաչեմք զքեզ, Տէ՛ր, յահաւոր քո գալստեանդ, ի գոչել աստուածային փողոյն, արա՛ զսա արժանի նորոգման, կա՛լ զուարթերես յաջակողման դասուն, մտանել երկնային քո սուրբ յառագաստ, պայծառացեալ առաջի քո աստուածային լուսոյդ, ընդ Մովսեսի եւ ընդ Ահարովնի համարեսցի քահանայութիւն սորա, ընդ Մեղքիսեդեկի եւ ընդ այլ ուղափառ նահապետացն լինել հաղորդ խոստացեալ բարեացդ, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր որ*|*Ա.194ա*|*ում փառք յաւիտեանս. ամէն:*

Եւ[1] ապա կան շուրջ զվախճանելովն եւ ասեն զուրողայս[2]. Դ.՝ զկարգեալն. [ԻԱ. 2]. *Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ նայեա՛ց առ իս*, [ԻԴ. 1]. *Առ քեզ, Տէ՛ր, համբարձի*, [ԻԷ. 1]. *Առ քեզ, Տէ՛ր, կարդացի*, [Լ. 2]. *Ի քեզ, Տէ՛ր, յուսացա*. Աւրհնութիւն. *Ծաներուք*, շարականաւ:

Եւ քարոզէ սարկաւագն.

ՃԿԸ. *Վասն խոստովանողական հոգոյս, որ հրաժարեցաւ ի մէնջ, զՏէր աղաչ[եսցուք]:*

Վասն քաւութեան եւ թողութեան մեղաց սորա եւ մեր ամենեցուն զՏէր աղաչեսցուք:

---

[1] *Ս եւ + կեանք իմ*

[2] *Ս կենաց + իմոյ, ես յումէ՞ դողացայց*

[3] *ՍԳ > տէր մեր յիսուս ասէ*

[4] *ՍԳ զի մինչ*

[5] *ՍԳ յո*

[6] *ՍԳ ծերասցիս, ձեռս ի վեր կալցես*

[7] *Գ տարցեն ուր ոչն*

[8] *ՍԳ կամիցիս*

[9] *Գ > եւ զայս ասաց... զկնի իմ*

[1] *Յ > եւ*

[2] *Յ զուրղայս*

Վասն առաջնորդելոյ սմա հրշտակին խաղաղութեան յաւթեւանս սրբոցն զՏէր [աղաչեսցուք]:

Վասն պարգեւելոյ սմա մասն եւ բաժին ընդ արժանաւորս արքայութեանն երկնից զՏէր աղաչե[սցուք]:

Վասն ընդունելոյ զպաղատանս միաբան ժողովելոցս ի Քրիստոս զՏէր աղաչե[սցուք]:

Վասն հոգւոյն հանգուցելոյ եւ որք հ.

Եւ եւս զանձինս Ողորմեա՛յ:

Եւ ասե զաղաւթս զայս.

ՃԿԹ. *Տէ՛ր Աստուած, յոյս ամենեցուն, որ նստիս յաթոռս քերովբեից եւ երկրպագիս ի սրբոց հրշտակաց, եւ ընդունիս զաղաչանս մարդկան, եւ գթաս ի հոգիս հանգուցելոց, հաւատացեալս ամենասուրբ Երրորդութեանդ, եւ զքահանայս զոր ընդրէցեր ի սպասաւորութիւն եկեղեցոյ քում սրբոյ, ի հաճոյս քո պաշտել զքեզ, եւ դարձեալ առ քեզ դարձուցեր՝ ուստի ստեղծեր զսա, ըստ բանի քում որ ասացեր եթե. |Ա.194բ| «Հող եիր եւ ի հող դարձ[ց]իս» [Ծն. Գ. 19]: Եւ այժմ ի ձեռն կոչման քո, Տէ՛ր, զհանգիստ քո շնորհեա՛յ սմա, եւ զամենայն մեղս զոր գործեալ իցէ թո՛ղ՝ զկամա եւ զակամա, եւ զհոգի սորա խաղաղութեամբ ընկա՛լ յերկնային խորանսդ, եւ զմեզ արժանաւոր արա՛ փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:*

Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպագե[ս]ց[ուք].

ՃՀ. *Սուրբ ես, Տէ՛ր Աստուած մեր, որ բնակեալդ ես ի բարձունս եւ բարերանիս երեքսրբեան աւրհներգութեամբ, եւ քաղցրութեամբ խնամես զարարածս քո, զոր ընդրեցեր քեզ ժողովուրդ յամենայն ազգաց՝ փառաւորել զանուն քո սուրբ, եւ խոստացար մեզ զանանց բարութեանցդ հանգիստ, ընկա՛լ եւ աւրհնեա՛ եւ դասաւորեա՛յ զհոգիս ծառայիս քո այս անուն քահանայի ընդ ամենայն սուրբս քո, որք յաւիտենից հաճոյ եղեն քեզ եւ խոստացեալ հանգստեան քո, եւ զամենայն յանցանս զոր յանցեալ իցէ առաջի քո, ներեա՛ եւ թո՛ղ սմա ողորմութեամբ ք[illegible] պատեա՛յ զհոգի սորա յան[illegible]ւր գործոց, եւ ի կապանաց ս[illegible]ց, եւ հանգ|Ա.195ա|ո՛յ ի դասս սրբոց քոց, եւ զմեզ արժանաւորեա՛ փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւի[տեանս]:*

Եւ տեառնագրեն զդին ամենայն քահանայքն[1]. Ապա այս կանոն կատարի. սաղմոս ԼԲ. [=ԼԳ. 6]. կցուրդ.
Ահա չափով եդիր զաւուրս իմ:

---

[1] *«քահանայք*

155. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ա. Ի ԾՆՆԴՈՑ. [Իե. 7-11. Խթ. 31-32. Ծ. 1-3. 13. 23-25][1]

[Իե. 7-11]. *«Եւ այս են ամք աւուրց[2] կենացն Աբրահամու զոր[3] եկեաց[4], ՃՀ. եւ Ե.[5] ամ:* 8 *Եւ պակասեալ Աբրահամու[6], մեռաւ բարեաւք ծերութեամբ[7], ալեւորեալ եւ[8] լի աւուրբք. եւ յաւել[9] առ ժողովուրդ իւր:* 9 *Եւ թաղեցին զնա[10] Իսահակ եւ Իսմաել[11] որդիք նորա յայրին[12] կրկնում[13] յագարակին Ոփրեմի որդոյ Սահառա Քետացոյ[14]. որ է յանդիման Մամբրէի[15]* 10 *ագարակն. եւ այրն, զոր ստացաւ[16] Աբրահամ յորդոցն Քետա[17], անդ թաղեցին զԱբրահամ[18] եւ զՍառա[19] կին նորա:* 11 *Եւ եղեւ յետ մահուանն[20] Աբրահամու[21], աւրհնեաց Աստուած զԻսահակ որդի[22] նորա: Եւ բնակեաց[23] առ Ջրհորով տեսլեան[24]»:*

[Խթ. 31-32]. *«Անդ թաղեցին զԻսահակ եւ զՌեբեկա[25] կին նորա: Անդ թաղեցին զԼիա[26]:* 32 *Եւ դադարեաց Յակովբ[27] ի պատուիրելոյ[28] որդոց[29] իւրոց: Եւ[30] առեալ զոտս[31] իւր անդեն[32] ի մահիճս[33], պակ|Ա.195բ|ասեաց եւ յաւելաւ ի[34] ժողովուրդ իւր»:*

[Ծ. 1-3]. *«Եւ անգեալ Յուսեփ[35] ի վերայ երեսաց հաւր իւրոյ ելաց զնա[36]:* 2 *Եւ հրաման ետ Յովսեփ ծառայից իւրոց դիազարդ[37] պա-*

---

[1] ընթերցուածը միակտուր է, պարբերութիւնների բաժանել ենք ըստ գլխահամարների եւ տնահամարների
[2] *Գ > աւուրց*
[3] *Ս աբրաամու զորս*
[4] *Գ եկաց*
[5] *ՍԳ հարիւր եւթանասուն եւ հինգ] .ճհ. եւ .ե.*
[6] *Ս աբրաամու*
[7] *ՍԳ ի բարւոք ծերութեան*
[8] *Գ > եւ*
[9] *ՍԳ յաւելաւ*
[10] *Գ զնայ*
[11] *ՍԳ իսմայէլ*
[12] *Ս յայրի անդ ի, Գ յայրի անդ*
[13] *Գ կրկնումն*
[14] *ՍԳ եփրոնի որդւոյ սահառայ քետացւոյ*
[15] *Ս մամբրէի*
[16] *Գ ըստացաւ*
[17] *Ս աբրաամ յորդւոցն քետայ, Գ յորդւոցն քետեայ*
[18] *Ս զաբրաամ*
[19] *Գ զսառայ*
[20] *Գ մահւանն*
[21] *Ս աբրաամու*
[22] *ՍԳ զորդի*
[23] *Ս բնակեցաւ իսահակ, Գ բնակեցաւ*
[24] *Ս ջրհորի տեսլեանն, Գ տեսլեանն*
[25] *Գ զըռեբեկայ*
[26] *Գ եւ զլիայ, Ս զլիա + ի ստացուածի ագարակին եւ այրին, որ է ի նմա առ ի յորդւոցն քետայ*
[27] *Ս յակոբ*
[28] *Գ պատուիրելոյ*
[29] *Ս որդւոցն, Գ որդւոց*
[30] *Գ > եւ*
[31] *Ս զոտսն*
[32] *Գ ~ անդրէն զոտս իւր*
[33] *Ս մահիճսն*
[34] *ՍԳ առ] ի*
[35] *Ս անկեալ յովսէփայ, Գ անկեալ յովսէփ*
[36] *ՍԳ զնա (Գ զնայ) + եւ համբուրեաց զնա (Գ զնայ)*
[37] *ՍԳ դիազարդաց*

տեղ զՀայր[1] *իւր: 3 Եւ պատեցին դիազարդքն*[2] *զԻսրայէղ*[3]*»:*

[Ծր· 13]· *«Եւ տարան զնա*[4] *[զՅակոբ] որդիքն իւր յերկիրն Քանանացւոց*[5]*. եւ թաղեցին զնա*[6] *անդ*[7]*»:*

[Ծր· 23-25]· *«Խաւսեցաւ*[8] *Յովսէփ ընդ եղբարս*[9] *իւր եւ ասէ. Ես աւասիկ մեռանիմ: Այցելութեամբ*[10] *այց արասցէ ձեզ Աստուած, եւ Հանցէ զձեզ յերկրէս յայսմանէ յերկիրն*[11] *զոր երդուաւ տալ*[12] *Հարցն մերոց՝ Աբրահամու, Իսահակա եւ Յակոբու*[13]*: 24 Եւ երդմնեցոյց Յովսէփ զորդիսն Իսրայէղի*[14]*, եւ ասէ. Այցելութեամբ*[15]*, յորում այց արասցէ*[16] *ձեզ Աստուած, Հանջիք*[17] *եւ զիմ ոսկերս*[18]*: 25 Եւ վախճանեցաւ Յովսէփ ամաց Ճ. եւ տասանց*[19]*. եւ թաղեցին զնա եւ եդին*[20] *ի տապանի յԵգիպտոս*[21]*»:*

156. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ա. ՅԱՌԱԿԱՑ [ԺԱ· 2-9]. *«Բերան խոնարհաց խոկայ զիմաստութիւն. 3 կատարելութիւն*[22] *ուղղոց առաջնորդեսցէ նոցա, եւ զայթակղութիւն*[23] *արհամարհողաց աւարեսցէ*[24] *զնոսա: 4 Ոչ աւգնեսցեն ինչք յաւ|Ա.196ա|ուր բարկութեան, այլ արդարութիւն*[25] *փրկէ ի մահուանէ: Մեռաւ արդարն*[26] *եւ եթող զղջումն*[27] *յոյժ. յանդուգնն*[28] *եւ ոտնհարութեամբ*[29] *լինի կորուստ ամբարշտաց*[30]*: 5 Արդարութիւն անարատի*[31] *ուղղէ զճանապարհս, եւ յամբարտաւանութիւն*[32] *արկանի*[33] *անիրաւութիւն: 6 Արդարութիւն արանց ուղղոց փրկեսցէ*[34] *զնոսա. անմտութեամբ կորնչին անաւրէնք: 7 Ի վախճանել առն*

---

[1] Մ զՀայրն
[2] Մ դիապատիկքն] դիազարդքն, Գ զնայ] դիազարդքն
[3] Մ զիսրայէլ, Գ > զիսրայէղ
[4] Գ զիսրայէց] զնա
[5] Մ յերկրին քանանացւոց, Գ քանանացւոց
[6] Գ զնայ
[7] Մ յայրին կրկնում] զնա անդ
[8] ՄԳ եւ խաւսեցաւ
[9] Գ որդիսն] եղբարս
[10] Գ յայցելութեանն յորժամ] այցելութեամբ
[11] Գ եւ տանի յերկիրն
[12] Մ աստուած տալ
[13] ՄԳ սահակայ եւ յակոբայ
[14] Մ իսրայէլի
[15] ՄԳ յայցելութեանն
[16] Գ առնիցէ
[17] Գ Հանիջիք
[18] ՄԳ ոսկերս + աստի (Գ > աստի) ընդ ձեզ
[19] ՄԳ Հարիւր եւ տասանց
[20] գին զնա
ւ եդնա զնայ ի տապանի եւ թաղե-
ն զնայ յեգւտոս
կատարումն
[23] Մ զայթագղութիւն
[24] ՄԳ աւերեսցէ
[25] Գ արդարութիւնն
[26] Մ արդար
[27] Գ զղջումն
[28] ՄԳ յանդուգն
[29] Մ ոտնՀարութիւն
[30] Մ ամպարշտաց
[31] Մ անբծի] անարատի
[32] Մ յամպարշտութիւնս, Գ յամբարըշտութիւն] յամբարտաւանութիւն
[33] ՄԳ արկանէ
[34] ՄԳ փրկէ

արդարոյ ոչ կորնչի յոյս. բայց պարծանք ամպարշտաց[1] *կորնչին*[2]*: 8 Արդարն*[3] *յորսողաց փրծանի, եւ փոխանակ նորա մատնի ամբարիշտն*[4]*: 9 Ի բերանս ամբարշտաց*[5] *որոգայթ քաղաքակցաց*[6]*. իմաստութիւն արդարոց յաջողեալ են*[7]*»:*

157. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱԵԱՅ[8] ՄԱՐԳԱՐԷԷ [ԿԱ· 6-9]. *«Բայց դուք քահանայք Տեառն կոչեսջիք եւ*[9] *պաշտաւնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջիք. զզաւրութիւնս*[10] *ազգաց կերիջիք, եւ մեծութեամբ նորա*[11] *սքանչելի լինիջիք: 7 Փոխանակ ամաւթոյն*[12] *ձերոյ կրկին ուրախութիւն, եւ փոխանակ անարգանացն*[13] *ձերոց ցնծութիւն. եւ ապա զերկիրն յերկրորդումն*[14] *ժառանգեսցեն*[15]*. եւ ուրախութիւն յաւիտենից ի |Ա.196բ| վերայ գլխոց նոցա: 8 Զի ես եմ Տէր, որ սիրեմ զարդարութիւն, եւ ատեմ*[16] *զանիրաւութիւն*[17] *յանիրաւութենէ. եւ տայց*[18] *զվաստակս նոցա արդարոց, եւ ուխտ յաւիտենական*[19] *ուխտեցից ընդ նոսա*[20]*: 9 Եւ ծանիցի*[21] *ի մէջ ազգաց զաւակ*[22] *նոցա, եւ ծնունդք նոցա ի մէջ ժողովրդոց, եւ*[23] *ամենեքեան որք*[24] *տեսանիցեն՝ զնոսա ճանաչիցեն*[25] *եւ ասասցեն*[26]*. սոքա*[27] *են զաւակ աւրհնեալ*[28] *յԱստուծոյ. եւ ուրախութեամբ ուրախ լինիցին*[29] *ի Տէր»:*

158. ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ Ի ԿԱԹՈՂԻԿԵԻՑ ԹՂԹՈՅՆ Ը[ՆԹԵՐՑՈՒԱԾ[30]. Բ· Պետր· Ա· 10-15]. *«Վասն որոյ, սիրելիք*[31]*, առաւել փութասջիք, զբարի գործոցն*[32] *Հաստատուն զձեր կոչումն*[33] *եւ* զընդրութիւնն[1] պահիցեք: Զայս արարեալ՝ ոչ երբեք[2] յանցանիցէք[3]: 11 Զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ մուտ[4] յաւիտենական արքայութեանն[5] Տեառն մերոյ եւ փրկչին[6] Յիսուսի Քրիստոսի: 12 Որով պատրաստիցեմ միշտ ձեզ յիշեցուցանել վասն սոցին, առաւել եւս գիտակացն եւ հաստատելոցն՝ եկեալ հասեալ ճշմարտութեանն: 13 Քանզի իրաւունս համարիմ մինչդեռ ի մարմնի[7] աստ՝ զարթուցանել զձեզ յիշատակաւք[8]: 14 Գի|Ա.197ա|տեմ եթե[9] վաղվաղակի լինելոց է[10] մերկանալ յինէն մարմնոյս. որպէս[11] Տէր մեր Յիսուս Քրիստոս եցոյց ինձ: 15 Եւ փութամ ճեպիմ միշտ զձեզ յորդորել. զի յետ իմոյ ելանելոյ յաշխարհէ[12] առնիցեք զյիշատակ[13] այսոցիկ[14]»:

---

[1] Գ ամբարշտաց
[2] Մ կորիցեն
[3] Մ արդար
[4] Մ ամպարիշտն
[5] Մ անաւրինաց] ամբարշտաց
[6] Մ ընկերաց] քաղաքակցաց
[7] ՄԳ է] են
[8] Գ յեսայեայ
[9] Մ > եւ
[10] Մ զզաւրութիւն
[11] ՄԳ նոցա
[12] ՄԳ ամաւթոյ
[13] ՄԳ անարգանաց
[14] Մ յերկրորդում
[15] Գ ժառանգիցէք
[16] Մ ատեամ
[17] Մ զյափշտակութիւն, Գ զանաւրէնութիւն] զանիրաւութիւն
[18] ՄԳ տաց
[19] Մ յաւիտենից
[20] Գ նոսայ
[21] Գ ծանիցի
[22] Մ զաւակն
[23] Մ > եւ
[24] Մ ամենեքին որ
[25] Գ ~ ճանաչիցեն զնոսա
[26] Մ ճանաչիցեն զնոսա՝ թէ] զնոսա ճանաչիցեն եւ ասասցեն
[27] Գ ասասցեն եթէ սոքայ
[28] Գ զաւակք աւրհնեալք
[29] Մ եղիցին
[30] Գ կաթուղիկեաց թղթոյն է ըն.
[31] Մ եղբարք] սիրելիք
[32] Մ զի բարեացն գործովք, Գ զի բարեաց գործոց] զբարի գործոցն
[33] Մ կոչումնն

Աղելու. ՉԳ.[15] [= ՉԳ. 1] Իբրեւ[16] սիրելի են յարկք քո:

159. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ[17] ՅՈՎՀԱՆՆՈՒ [ԺԳ. 31-38. ԺԴ. 1-7].

Տէր մեր Յիսուս ասէ[18]. «Այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ, եւ Աստուած փառաւորեցաւ ի նմա: 32 Զի եթէ Աստուած փառաւորեցաւ ի նմա[19], եւ Աստուած փառաւորեսցէ զնա[20] յանձն իւր. եւ վաղվաղակի փառաւորեսցէ զնա յանձն իւր[21]: 33 Որդեա՛կք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ, խնդրեսցե՛ք զիս. եւ որպէս ասացի ցՀրեայսն, եթե ուր ես երթամ, դուք ոչ կարէք գալ: Եւ արդ, ձեզ ասեմ: 34 Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրեսջիք[22] զմիմեանս՝ որպէս սիրեսցի[23] ես զձեզ, զի եւ դուք սիրեսջիք զմիմեանս[24]: 35 Յայսմ գիտասցեն ամենիքեան[25], եթե իմ աշակերտք էք, եթե սիրեսջիք[26] զմիմեանս: 36 Ասէ ցնա[27] Սիմոն[28] Պետրոս. Տէր յո՞[29] երթաս: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ[30],

---

[1] Ս զընտրութիւն, Գ զընտրութիւնն
[2] Ս երբէք
[3] Գ > զոր արարեալ… յանցանիցէք
[4] Գ շնորհեսցէ ձեզ մուտ, Ս մուտ ի
[5] Ս արքայութիւն
[6] Ս փրկչի
[7] ՍԳ եմ ի մարմնի
[8] Գ յիշատակաւ
[9] Ս թէ
[10] Ս է լինելոց
[11] ՍԳ որպէս եւ
[12] Ս յաշխարհէս
[13] ՍԳ զյիշատակս
[14] Գ զայսոցիկ
[15] Յ ալելու .ձգ.
[16] Ս
[17] ստ
[18] իբրեւ եկ, ասէ յիսուս] տէր մեր ւս ասէ, Գ > տէր մեր յիսուս ասէ
[19] Գ > զի եթէ աստուած փառաւորեցաւ ի նմա
[20] Գ զնայ
[21] ՍԳ > յանձն իւր
[22] Ս սիրիցէք
[23] Ս սիրեցի
[24] Գ > որպէս սիրեցի… զմիմեանս
[25] Ս ամենեքեան
[26] ՍԳ սիրիցէք
[27] Գ ցնայ
[28] Ս սիմովն
[29] Ս յո՞վ
[30] ՍԳ

դու՝ ոչ կարասցես[1] գալ[2] զկնի իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ: |Ա.197բ| 37 Ասէ ցնա Պետրոս. Տէր՝ ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո. արդեն իսկ զանձն իմ[3] եդից ի վերայ քո: 38 Պատասխանի ետ Յիսուս. Զանձն քո դիցես ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ քեզ. չեւ իցե այսաւր[4] հաւու խաւսել, մինչ դու երիցս ուրասցիս զիս»: [ԺԴ.] 1 «Մի խռովեսցին սիրտք ձեր, եւ մի զանգիտիցեք[5], այլ հաւատացէք յԱստուած, եւ յիս հաւատացէք[6]: 2 Ի տան Հաւր իմոյ աւթեւանք[7] բազում են. ապա[8] էթե[9] ո՞չ ասացեալ էր իմ ձեզ, եթե երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի[10], 3 դարձեալ գամ եւ առնում զձեզ առ իս. զի ուր ես իցեմ, եւ դուք անդ իցեք: 4 Եւ ուր երթամն[11] գիտիցէք[12]: 5 Ասէ ցնա Թոմաս[13]. Տէ՛ր, ոչ գիտեմք[14] յո[15] երթաս, եւ զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել: 6 Ասէ ցնա Յիսուս. Ես եմ ճանապարհ[16] եւ ճշմարտութիւն եւ կեանք[17]. ոչ ոք գա[18] առ Հայր՝ եթե ոչ ինեւ: 7 Եթէ զիս գիտէիք, ապա եւ զՀայրն[19] գիտեիք, եւ[20] այսուհետեւ գիտասջիք զնա[21]»:

Եւ քարոզէ. Վասն ի վերուստ խաղ[աղութեան]: Եւ ասէ զաղաթս զայս.

ՃՀԱ. Աստուած յաւիտենական, անսկիզբն, անեղ, անիմանալի, անհասանելի |Ա.198ա| խորհուրդ, Հայր բարէխնամող, ծնող միածնի Որդւոյ, եւ արտաքս առաքող ի Հոգւոյդ Սրբոյ, որ ի քեն ելանէ եւ լնու զամենայն արարածս: Դու, Տէ՛ր ամենակարող զաւրութեամբ քո առեալ հող յերկրէ՝ արարեր զմարդն, եւ բնակեցուցեր զնա յանցաւ եւ յանախտ եւ յանաշխատ ի կեանս անմահականս, աստուածագործ տնկոյն վաելչութեան, եւ պատուիրանադրութեամբ զգեցուցեր անամաւթ փառաւք ի դրախտին փափկութեան: Սակայն չարին խանտացեալ ընդ մեծութիւն պատուի նորա, զոր ի քումմէ բարերարութենետ ընկալեալ էր, եւ պարտեալ զնա յաղագս անհասից ցանգու-

---

[1] Ս կարես այժմ] կարասցես
[2] Գ կարես գալ այժմ
[3] ՍԳ ~ զանձն իմ իսկ
[4] Գ չիցէ այժմ] չեւ իցէ այսաւր, Ս > այսաւր
[5] ՍԳ > եւ մի զանգիտիցեք
[6] ՍԳ հաւատացէք
[7] Ս աւթեվանք
[8] Գ ապայ
[9] Ս թէ
[10] Ս տեղի +$_3$ եւ եթէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի
[11] Գ > եւ ուր երթամն
[12] ՍԳ գիտիցէք, եւ զճանապարհն գիտիցէք
[13] ՍԳ Թովմաս
[14] Գ գիտեմ
[15] Ս յով
[16] ՍԳ ճանապարհն
[17] Գ կեանքն
[18] ՍԳ գայ
[19] ՍԳ զհայր իմ
[20] Գ եւ արդ
[21] Գ զնայ

թեան, որ եւ զիրն ոչ պահեաց տեղի փառաց եւ կամակոր եղեալ յերէսաց քոց, Տէ՛ր: Իսկ յանցանել նորա զպատուիրանաւ քո, Տէ՛ր, հանեալ եղիր զնա արտաքո դրախտին փափկութեան, զգեցուցեր նմա զմաշկեղեն հանդերձն, զխղճալի եւ զախտաւոր մարմինս, եւ սահմանէցեր հողագործել հողոյն, եւ ոչ այնու անտես արարեր, |Ա.198բ| այլ առաքեցեր զմիածին Որդի քո, որ եկեալ մարմնացաւ յանարատ եւ յանապական կուսեն Մարիամա, զգեցաւ զհնացեալ մարմին ծառայութեան մերոյ, զոր ծառայեաքն մահու մեղաց, տարագրութեամբ ի ձեռն կնոջն դաւաճանութեան, ազատեցոյց աստուածութեամբ իւրով՝ ի ձեռն կենդանարար խաչին իւրոյ եւ անապական թաղմանն: Զի որ անսուտ բանիւդ քո հարկիւ պարտապան եաք մեռանել, էբարձ սքանչելագործ յարութեամբ իւրով, եւ լուսաւորեաց զազգս որդոց մարդկան ի նոյն նմանութիւն պատկերի քո, որով ստեղծեր զնախնին մեր զհայրն, եւ ծանոյց մեզ զանուն քո, որով արժանաւորեցաք կոչել զքեզ Հայր, վասն զի նստելով ընդ աջմե քումմէ մարմնովն, զոր ի մենջն էառ, եւ մեզ խոստա[ցա]ւ յարութիւն կենաց ի միւսանգամ գալստեանն, ի դատաստան յաւուրն յետնում, եւ պարգեւեաց մեզ ժամադրութիւն գործոց բարեաց զանցաւոր զկեանս, որով մարթասցուք զտանել զերկիրն կենդանեաց, ի ձեռն վարդապետութեան սրբոց |Ա.199ա| առաքելոց իւրոց, որով եբարձ զգիտամոլ կռապաշտութիւն յաշխարհէ: Եւ այժմ, Տէ՛ր բարերար եւ բազումողորմ, ընդա՛լ զհոգի ··· ····· քահանայի, որ ելից զժամանակ պանդխտութեան նչդեհութեան իւրոյ ի վէրայ երկրի, եւ ընկալաւ զլուծումն յաշխատութեանցս, դասաւորեա՛յ ընդ սուրբս քո յարքայութեան քո, ուստի մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք, միշտ յարագուարճ բերկրանաւք, պայծառացեալ տեսլեամբ աստուածային փառաց քոց, ուր ուրախանան ամենայն ընդրեալք քո, ընդ նոսուն դասաւորեա՛յ, Տէ՛ր, զհոգի հանգուցելոյս մերոյ, զի եւ մեք սովաւ հանդերձ փառաւորեսցուք զքեզ՝ Հայր եւ Որդի ե[illegible]ուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ եւ յ[illegible]տեանս]:

Խաղաղութիւն ամենեցո[ւն]. Աստուծոյ երկրպա[գեսցուք].

ՃՀԲ. [1]*Հայր մեր որ յերկինս եւ յերկրի, եւ յամենայնի սուրբ եղիցի անուն քո ի վերայ մեր, եղիցին կամք քո որպես յերկինս եւ յերկրի, եւ փառաւորեսցի անուն քո սուրբ յաւիտեան, որ պարգեւեցեր մեզ հանգիստ յերկրաւոր աշխատութեանցս, յանախտ եւ յանաշխատ կեանսդ, որ ի ձեռն միածնի Որդոյ |Ա.199բ| քո սպաներ զմահ եւ լուսաւորեցեր զկեանս եւ զանեղծութիւն, եւ փրկեցեր զսուրբս քո յիշխանութենէ խաւարի, եւ փոխեցեր յարքայութիւն Որդոյ քում սիրելոյ՝ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Ընկա՛լ, մարդասեր Տէ՛ր, աղաչեմք զքեզ, զհոգի սորա ընդ արդարս քո ի հանգստեան արդարոց, եւ թուեա՛յ ի համարս սրբոց քոց, ի փրկութիւն միածնի քո, եւ նորոգութեամբ Սուրբ Հոգոյդ, որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամեն:*

Եւ դնեն ի դագաղս, եւ բառնան քահանայքն եւ տանին ի դուրսն. եւ այս կանոն կատարի. սաղմոս ողբաձայն ՃԼԷ· [8]· կցուրդ. *Տէր ողորմութիւն քո յաւիտեան:*

160. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ԹՈՒՈՑ [Ի· 23-30]. *«Եւ խաւսեցաւ Տէր ընդ Մովսեսի եւ ընդ Ահարովնի ի Հովր լերինն, ի սահմանս երկրին Եդովմաեցոց[1] եւ ասէ. 24 Յաւելցի Ահարովն[2] առ ժողովուրդ իւր, զի մի՛ մտցէ[3] յերկիրն, զոր ետու որդոցն[4] Իսրայէղի. քանզի բարկացուցին[5] զիս ի վերայ ջուրցն բամբասանաց: 25 Ա՛ռ դու զԱհարովն[6] եւ զԵղիազար որդի նորա, եւ հա՛ն զնոսա |Ա.200ա| ի Հովր լեառնն[7], յանդիման ամենայն ժողովրդեանն. 26 եւ մերկացուցես[8] յԱհարովնէ զպատմուճանն իւր[9], եւ զգեցուցես[10] Եղիազարա[11] որդոյ[12] նորա. եւ Ահարովն[13] մեռցի անդ եւ յաւելցի առ ժողովուրդ իւր[14]: 27 Եւ արար Մովսէս որպէս եւ հրամաեաց[15] նմա Տէր, եւ հան[16] զնոսա[17] ի Հովր լեառնն[18] յանդիման[19] ամենայն ժողովրդեանն: 28 Եւ մերկացոյց յԱհարովնէ զպատմուճանն[20] նորա եւ զգեցոյց[21] Եղիազարա որդոյ[22] նորա: 29 Եւ մե-*

---

[1] կարծես նման է .ՀԸ. աղօթքին

---

[1] *Ս եդովմացւոց, Գ եդովմայեցւոց*
[2] *Ս ~ ահարովն յաւելցի*
[3] *Ս մտանիցէք դուք] մտցէ*
[4] *ՍԳ որդւոցն*
[5] *ՍԳ բարկացուցէք*
[6] *Գ զահարոն*
[7] *ՍԳ լեառն*
[8] *ՍԳ մերկացոյ*
[9] *ՍԳ զպատմուճան նորա*
[10] *Ս զգեցուցես, Գ զգեցուցանիցես*
[11] *Գ եղիազարու*
[12] *Ս զգեցոյ եղիազարու որդւոյ*
[13] *Գ ահարոն*
[14] *Ս եւ ահարովն յաւելեալ մեռցի անդ] եւ ահարովն մեռցի անդ եւ յաւելցի առ ժողովուրդ իւր, Գ > եւ յաւելցի առ ժողովուրդ իւր*
[15] *Ս հրամայեաց] եւ հրամաեաց*
[16] *Գ եհան*
[17] *Ս էհան զնա*
[18] *ՍԳ լեառն*
[19] *ՍԳ առաջի] յանդիման*
[20] *Ս զհանդերձս, Գ զհանդերձն] զպատմուճանն*
[21] *ՍԳ զգեցոյց*
[22] *ՍԳ եղիազարու որդւոյ (Գ որդոյ)*

ռաւ[1] Ահարովն ի գլուխ լերինն. եւ իջին Մովսէս եւ Եղիազար ի լեռնե անդի[2]: 30 եւ ետես ամենայն ժողովուրդն, եթէ մեռաւ[3] Ահարովն, լացին զնա զԼ. աւր ամենայն ժողովուրդն Իսրայէղի[4]»:

161. [ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՐԿՐՈՐԴՈՒՄՆ ԱՒՐԻՆԱՑ. ԼԴ. 5-12][5]. «Եւ վախճանեցաւ Մովսէս ծառայն[6] Տեառն յերկիրն[7] Մովաբու՝ ըստ բանին Տեառն: 6 Եւ թաղեցին զնա ի Գայլի[8] մերձ ի տունն Փեգովրա[9]. եւ ոչ ոք գիտաց զգերեզման նորա մինչեւ ցայս[10]: 7 Եւ Մովսէս էր ամանց Ճ. եւ Ի.ից[11] ի վախճանել[12] իւրում. եւ ոչ վատեցին[13] աչք նորա, եւ ոչ խոշորեցին[14] ծնաւտք նորա: 8 Եւ[15] լացին որդիքն Իսրայէղի զՄովսէս զԼ. աւր[16] Յառաբ|Ա.200բ|ովթ[17] Մովաբու[18] առ Յորդանանու, յանդիման Երեքովի[19]. եւ կատարեցան աւուրք զզոյ[20] լալեացն Մովսէսի: 9 Եւ Յեսու որդի Նաւեայ լցաւ հոգով[21] իմաստութեամբ[22]. զի եդ Մովսէս զձեռն իւր ի վերայ նորա. եւ հնազանդեցան նմա որդիքն Իսրայէղի, եւ արարին որպէս եւ հրամաեաց Մովսէս[23]: 10 Եւ ոչ[24] եկաց մարգարէ յԻսրայէղի որպէս[25] զՄովսէս, զոր ծանեաւ Տէր դէմ յանդիման, 11 նշանաւք[26] եւ արուեստիւք[27], զոր առաքեաց Տէր առնել յերկիրն[28] Եգիպտացւոց, ի փարաւոն[29] եւ յամենայն ծառայս[30] նորա, եւ յամենայն երկիրն[31] սքանչելիս[32] մեծամեծս. 12 զձեռն[33] հզաւր եւ զբազուկ

---

[1] Գ մեռաւ խաղաղութեամբ
[2] Ս լեռնէն] լեռնե անդի, Գ անտի
[3] Ս վախճանեցաւ] մեռաւ
[4] ՍԳ եւ լացին զահարովն զերեսուն աւր ամենայն տունն իսրայէղի
[5] գրուած որպէս նախորդ ընթերցման շարունակութիւն-մաս
[6] Ս ծառայ
[7] Ս յերկրին
[8] Գ գայիայ
[9] Ս տունն + յերկրին մովաբու, Ս փոգովրա, Գ փոգովրայ
[10] ՍԳ ցայսաւր ժամանակի] ցայս
[11] ՍԳ ամաց հարիւր եւ քսանից] .Ճ. եւ .Ի.ից
[12] ՍԳ վախճանելն
[13] Գ վատեցան
[14] ՍԳ խոշորեցան
[15] Ս > եւ
[16] ՍԳ > զԼ. աւր
[17] Գ յրոարովդ
[18] Ս մովար
[19] ՍԳ երեքովի աւուրս (Գ զաւուրս) երեսուն
[20] Գ սգոյ
[21] հոգւով սրբով եւ
[22] հոգւով իմաստութեան
[23] Ս պատուիրեաց տէր մովսէսի, Գ պատուիրեաց նոցա ծառայն աստուծոյ մովսէս] հրամաեաց մովսես
[24] Ս ոչ եւս, Գ այլ ոչ եւս
[25] Ս իսրայէղի իբրեւ] յիսրայէղի որպէս
[26] ՍԳ ամենայն նշանաւք
[27] Գ արուեստիւք
[28] ՍԳ յերկրին
[29] Ս փարաւովն
[30] ՍԳ եւ ի ծառայս] եւ յամենայն ծառայս
[31] Ս երկիր նորա
[32] Գ զսքանչելիս
[33] ՍԳ եւ զձեռն

բարձր, զոր արար[1] առաջի ամենայն Իսրայէղի[2]»:

162. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԱՌԱԿԱՑ [Իմաստ. Դ. 7-17]. «Արդարն[3] եթէ հասցէ ի վախճանել եւ[4] ի հանգստեան եղիցի: 8 Զի ծերութիւն պատուական[5] ոչ բազմաժամանակեան[6] է, եւ ոչ որ թուով ամաց[7] չափիցի[8]. այլ ալիք իմաստութիւն մարդոյ[9] են, 9 եւ հասակ ծերութեան՝ կեանք անարատք: 10 Զի հաճոյ եղեալ Աստուծոյ սիրեցաւ, եւ կենդանոյն[10] ի միջոյ |Ա.201ա| մեղաւորաց փոխեցաւ: 11 Յափշտակեցաւ[11] զի մի՛ չարութիւն ինչ շրջեսցէ զիմաստութիւն նորա[12], կամ նենգութիւն պատրեսցէ[13] զանձն նորա: 12 Զի չարութիւն անզգամութեան չիջուցանէ[14] զբարիս. եւ ցածութիւն[15] նենգութեան[16] խուճապէ զմիտս[17] անմեղս: 13 Կատարեալ ի սակաւուն ելից զժամանակս[18] երկայնս: 14 Զի ցանկալի էր[19] Տեառն անձն նորա. վասն այսորիկ[20] տագնապեցաւ ի միջոյ չարեաց: Իսկ ժողովուրդք տեսին, եւ ոչ իմացան. եւ ոչ եդին ի մտի այնպիսի[21] ինչ. 15 էթէ իրաւունք Աստուծոյ ի վերայ սրբոց իւրոց, եւ այցելութիւն Տեառն[22] ի վերայ ընդրելոց[23] նորա: 16 Դատապարտէ արդար հանգուցեալ զամբարիշտս[24] կենդանիս, եւ մանգութիւն[25] վաղվաղակի վախճանեալ՝ զբազմամեայ ծերութիւն անիրաւի: 17 Զի տեսին[26] զվախճան իմաստնոյ[27], եւ ոչ իմացան[28] զինչ խորհէցան[29] վասն նորա. եւ առ ի մեզ[30] զգուշացաւ նմա Տէր»:

163. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՐԵՄԻԱ[31] ՄԱՐԳԱՐԷԷ [Ողբ. Գ. 1-7, 13-14]. «Աստուա՛ծ[32] հզաւր, հայեա՛ց յաղքատութիւնս մեր[33]. ի

---

[1] ՍԳ արար մովսէս
[2] Գ ժողովրդեանն] իսրայէղի
[3] Ս իսկ արդարն
[4] ՍԳ > եւ
[5] Գ պատուական
[6] Ս բազմաժամանակեայն, Գ բազմեայժամենակեան
[7] Ս ամացն
[8] Գ չափի
[9] Գ իմաստութեան մարդոյն
[10] ՍԳ կենդանւոյն
[11] ՍԳ յափշտակեցաւ
[12] Գ իւր] նորա
[13] Ս պատրիցէ, Գ պարտիցէ
[14] ՍԳ չարակնութիւն (Գ չարութիւն) անզգամութեան չլացուցանէ] չարութիւն անզգամութեան չիջուցանէ
[15] Ս յածումն] ցածութիւն
[16] ՍԳ ցանկութեան] նենգութեան
[17] Ս միտս
[18] Ս ժամանակս
[19] Ս ցանկալի էր, Գ ցանկալի է
[20] ՍԳ այնորիկ
[21] Ս այսպիսի
[22] ՍԳ > տեառն
[23] Ս ընտրելոց, Գ ընտրելեաց
[24] Ս զամպարիշտս
[25] ՍԳ մանկութիւն
[26] ՍԳ տեսցեն
[27] Գ իմաստնոց
[28] ՍԳ իմասցին
[29] ՍԳ խորհեցաւ
[30] ՍԳ իմէ՞] ի մեզ
[31] Գ յերեմիայ
[32] Ս ալիփ աստուած
[33] Ս յաղքատութիւն, ՍԳ իմ] մեր

ձեռն գաւազանի սաստկութեան 2 ընկալաւ[1] զիս, եւ ած ի վերայ իմ խաւար՝ եւ ոչ զլոյս[2]: 3 բայց սակայն դարձոյց զձեռն |Ա.201բ| իւր ի վերայ իմ[3] զաւր[4] հանապազ: 4 Մաշեաց[5] զմորթ իմ[6] եւ զմարմին իմ. եւ[7] զոսկերս իմ փշրեաց առ հասարակ. 5 շինեաց ի վերայ իմ, եւ պատեաց զգլխով իմով. 6 Ջանացաւ[8] նստոյց զիս ի խաւարի՝ որպես[9] զմեռեալ յաւիտենից: 7 Կուտեաց[10] ի վերայ իմ, եւ ոչ[11] կարեմ ելանել. ծանրացոյց[12] ի վերայ իմ որպես[13] զպղինձ: 13 եւ[14] արար զիս նետալից, 14 եւ ծաղր ժողովրդեան իմոյ»:

164. Ի ԿՈՐՆԹԱՑՈՑ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ Ը[ՆԹԵՐՑՈՒԱԾ[15]. Բ· Կորնթ· Դ· 14-19· Ե· 1-9]. *«Զայս գիտեմք, էթէ որ յարոյցն զՅիսուս, եւ[16] զմեզ ընդ Յիսուսի յարուսցէ եւ յանդիման կացուսցէ ձեւր[17] հանդերձ: 15 Զի[18] ամենայն ինչ վասն ձեր է. զի շնորհքն[19] յաճախեալք ի բազմաց գովութենէ անդի[20], առաւելեսցին[21] ի փառս Աստուծոյ: 16 Վասն որոյ եւ ոչ ձանձրանամք, զի[22] թէպէտ եւ արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքին մարդն[23] մեր նորոգի աւր ըստ աւրէ. 17 զի առժամայն յաճախութիւն թէթեւ[24] նեղութեանս մերոյ ի յաւիտենական առաւելութեանն[25], զմեծութիւն փառացն գործէ ի մեզ: 18 Քանզի ոչ դիտեմք զերեւելիսս, այլ զաներեւոյթսն. զի երեւելիքս առ ժամանակ մի են, եւ[26] աներեւոյթքն յաւիտ|Ա.202ա|ենականք:*

[Ե· 1]. Քանզի գիտեմք, եթէ[27] երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի. շինած[28] յԱստուծոյ ունիմք՝ տաճար առանց ձեռագործի յաւիտենական յերկինս: 2 Եւ ընդ այս տաղտկամք. քանզի ակութիւնս[29] երկնից փափաքեմք[1] զգէնուլ[2]· 3 միայն էթէ[3] յորժամ սգենուցումքն[4], ոչ մերկք[5] գտանիցիմք: 4 Քանզի եւ[6] որ եմք ընդ յարկաւս ընդ այսուիկ[7], տաղտկամք ծանրացեալք, քանզի[8] ոչ կամիմք մերկանալ, այլ զայն ի վերա[9] այսր զգենուլ, զի ընկղմեսցի մահկանացուս ի կենաց անդի[10]: 5 Այլ որ յաջողեն[11] մեզ[12] ի սոյն, Աստուած է. որ ետ մեզ[13] զառհաւատչեայ Հոգոյն[14]: 6 Արդ, համարձակիմք յամենայն ժամ, եւ գիտեմք էթե որչափ յամեմք ի մարմնի[15], աւտարանամք ի Տեառնէ: 7 Զի հաւատով[16] գնամք, եւ ոչ կարծեաւք[17]: 8 Այլ համարձակիմք, եւ առաւել եւս հաճեալ եմք ելանել ի մարմնոյ աստի եւ մտանել առ Աստուած: 9 Վասն որոյ եւ առատանամք, զի[18] էթէ յամիցեմք՝ եւ էթէ ելանիցեմք, հաճոյ եւեթ լիցեմք նմա»:

Ալեղու[19]. [ՃԺԵ·10]· *Հաւատացի զոր եւ խաւսեցա, եւ ես խ[ոնարհ եղէ յոյժ]:*

165. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ[20] [ԺԴ· 15-24]· *Տէր մեր Յիսուս ասէ[21]. «Էթէ սիրէք զիս, զպատուիրանս |Ա.202բ| իմ պահեսջիք: 16 Եւ ես աղաչեցից զՀայր, եւ այլ մխիթարիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ յաւիտեան[22]. 17 զՀոգին ճշմարտութեան, զոր աշխար[հ]ս[23] ոչ կարէ ընդունել, զի ոչ տեսանէ զնա[24] եւ ոչ ճանաչէ[25]: Բայց դուք ճանաչէք զնա[26], զի առ ձեզ բնակեսցէ, եւ ընդ ձեզ եղիցի: 18 Ոչ թողից զձեզ որբս, գամ առ ձեզ: 19 Փոքր միւս[27] եւս, աշխարհս[28] ոչ կարէ տեսանել[29] զիս, բայց դուք տեսանիցէք[30] զիս, զի ես կենդանի եմ, եւ դուք կենդանի լինելոց էք: 20 Յայնմ աւուր գիտասջիք[31], զի ես ի Հաւր իմում, եւ*

---

[1] ՍԳ սրտմտութեան իւրոյ ընկլոյց (Գ ընկալաւ)] սաստկութեան ընկալաւ
[2] ՍԳ լոյս
[3] Ս ~ ի վերայ իմ զձեռն իւր
[4] Ս > զաւր
[5] Ս բէթ մաշեաց
[6] Ս > իմ
[7] Ս > եւ
[8] Ս եւ ջանացաւ
[9] ՍԲ իբրեւ
[10] Ս զամիլ կուտեաց
[11] Ս ոչ եւս
[12] Գ ծանրացաւ
[13] ՍԳ քան] որպես
[14] Ս > եւ
[15] Գ պաւղոսի առաքելո ի կորնթացւոց թղթոյն ընթ.
[16] Յ > եւ

[17] Գ ձեւք
[18] Ս քանզի
[19] ՍԳ շնորհք
[20] ՍԳ գոհութենէ անտի
[21] Գ առաւելասցին
[22] ՍԳ այլ] զի
[23] ՍԳ մարդս
[24] Գ թեթեւ
[25] ՍԳ առաւելութիւն
[26] Գ իսկ] եւ
[27] Ս զի եթէ
[28] Գ շինուածք
[29] Ս զբնակութիւնն

[1] ՍԳ փափագեմք
[2] ՍԳ զգենուլ
[3] ՍԳ թէ
[4] Ս զգենուցումքն, Գ զգենուցումք
[5] ՍԳ մերկ
[6] ՍԳ > եւ
[7] Գ յայսմիկ
[8] ՍԳ զի
[9] ՍԳ վերայ
[10] ՍԳ անտի
[11] ՍԳ յաջողէն
[12] Գ զմեզ
[13] Գ > մեզ
[14] Գ Հոգոյն ի սիրտս մեր
[15] ՍԳ մարմնի աստ
[16] ՍԳ հաւատովք
[17] Գ կարծիւք
[18] Գ իսկ] զի

[19] Յ ալելու
[20] Գ յոհան.
[21] ՍԳ > տէր մեր յիսուս ասէ
[22] ՍԳ ի յաւիտեան
[23] ՍԳ աշխարհս
[24] Գ զնայ
[25] ՍԳ ճանաչէ զնա (Գ զնայ)
[26] Գ զնայ
[27] Ս մեւս
[28] ՍԳ եւ աշխարհս
[29] Ս ոչ եւս տեսանէ] ոչ կարէ տեսանել
[30] Գ տեսանէք
[31] ՍԳ գիտասջիք դուք

զուք յիս[1], եւ ես ի ձեզ: 21 Որ ունի զպատուիրանս իմ եւ պահէ զնոսա, նա[2] է որ սիրէ[3] զիս: Եւ որ սիրէ[4] զիս[5] սիրեսցի ի Հաւրէ իմմէ, եւ ես սիրեցից զնա[6], եւ երեւեցուցից նմա[7] զիս. 22 Ասէ ցնա Յուդա՝ ոչ Սկարիովտացին[8]. Տէ՛ր, զի՞ եղեւ, զի մեզ յայտնելոց ես զքեզ, եւ ո՛չ աշխարհի: 23 Պատասխանի ետ Յիսուս[9]. Եթէ ոք սիրէ զիս՝ զբանս[10] իմ պահեսցէ, եւ Հայր իմ սիրեսցէ զնա[11]. եւ առ նա եկեսցուք, եւ աւթեւանս[12] առ նմա արասցուք. 24 Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանն[13] իմ ոչ պահէ: Եւ բանն[14] զոր լսէք՝ ոչ է իմ, այլ Հաւրն՝ որ առաքեացն զիս[15]»:

|*Ա.203ա*| Քարոզե. *Վասն զատնելոյ մեզ շնոր[հ]:*

Եւ ասէ զաղաւթս զայս.

ՃՀԳ. *Աւրհնեալ ես, արդարադատ եւ ողորմած Աստուա՛ծ, որոյ ճշմարտութիւնդ անպատում է, եւ ողորմութեանդ ոչ գոյ թիւ, որ վասն արդար դատաստանի քո յուծեր ի հողոյ զշնչաւոր մարմինս մեր, զպատրեալս ի բանսարկուէն, ասելով. «Հող էիր, եւ ի հող դարձցիս» [Ծն. Գ. 19], ըստ որում խոնարհեցան անձինք մեր, եւ յերկիր կցեցան մարմինք մեր: Իսկ վասն բազում ողորմութեան քո, մարդասէր Տէ՛ր, խոնարհեցար ի նորոգել զմարմին հողեւոր, առաքեցար դու ինքնին միածին Բանդ Հաւր, եւ տպաւորեցեր յանձին քում կամաւորութեամբ զմեր մահս, որպես զի տացես մեզ զքո անմահութիւնդ, եղար ի գերեզմանի, համարեցար ընդ մեռեալս, յարուցեալ համբարձար յերկինս, եւ նստար ընդ աջմէ Հաւր, եւ զանկակիցս քո մահու խոստացար լինել նմանակիցս զսիրելիսն քո, եւ զմարմին խոնարհութեան նոցա կերպարանակիցս առնել, ըստ նմանութեան քոյ փառացդ յեր- լ յայտնութեան քո ի փող յե- ին, յորժամ գաս տալ նոցա վարձս, |Ա.203բ| վասն որոյ աղաչեմք զքեզ, Տէ՛ր բարերար, արա՛ զսա արժանի փառաւոր յարութեանդ ընդ սուրբս քո, յաւուր հանդիպելի քեզ փառաւք, որպես զի զուարթերես կացցէ յաջակողման ընտրելեաց քոց, եւ զնոցին խոստացեալ բարիսն ընկալցի, եւ գոհանալով փառաւորեսցէ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ա[մէն]:*

---

[1] *Գ ի յիս*
[2] *Գ զնոսայ, նայ*
[3] *Գ սիրէն*
[4] *ՍԳ սիրէն*
[5] *Ա զիս <եւ որ սիրէ զիս>*
[6] *Գ զնայ*
[7] *Գ նմայ*
[8] *Գ իսկարիովտացին*
[9] *ՍԳ յիսուս՝ եւ ասէ ցնա*
[10] *ՍԳ զբանն*
[11] *Գ զնայ* (դերանունների վերջի այս անհարկի յ-ն այլեւս չենք նշանակում)
[12] *Ս աւթեվանս*
[13] *Ս զբանս*
[14] *Ս բանն իմ*
[15] *Ա որ առաքեացն զիս՝* բոլորգրով է

Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպագե[սցուք]:

ՃՀԴ. *Որ յերկնային զինուորութեանցն անդադար աւրհնաբանիս սրբասացութեամբ ի հրշտակաց եւ ի հրշտակապետաց, յաթոռոց, յիշխանութեանց եւ պետութեանց, ի սրովբեից եւ ի քրովբէից, որք անլռելի պարակցութեամբ համապազ զովեն եւ փառաւորեն, դու, Տէ՛ր, անսուտ բանիւդ քո խոստացար եւ ասացեր, թե. Որ հաւատայ յիս զմահ մի՛ տեսցէ յաւիտեան* [Հմմտ. Յովհ. ԺԲ. 26], *եւ զփոփոխումն սորա որպես ի մահուանէ ի կեանս աւրինադրեցեր, կոչելով զքեզ Աստուած կենդանեաց, վասն զի ամենիքեն քեզ կենդանիք են: Ընկա՛լ, մարդասէ՛ր Տէր, աղաչեմք զքեզ, զխնդրուածս մեր եւ դասաւորեա՛ զհոգի ծառայիս քո այս անուն քահանայի |Ա.204ա| ընդ ամենայն սուրբս քո՝ ի միւսանգամ գալստեանդ, զի եւ սա արժանի լիցի գոհութեամբ փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտե[անս]:*

Եւ բառնան քահանայքն եւ բերեն ի դուռնն, ի սրահի եկեղեցւոյն. բայց ի ճանապարհի, ի պատեհ տեղոջ կարդան առանց Ալելուի Աւետարան:

166. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱԹԵՈՍԻ [ԺԱ. 25-30]. *«Յայնժամ ցնծացաւ Յիսուս Հոգովն Սրբով եւ ասէ[1]. Գոհանամ զքէն, Հա՛յր, Տէ՛ր երկնի եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց, եւ յայտնեցեր տղայոց: 26 Այո՛, Հա՛յր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո[2]: 27 Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հաւրէ իմմէ: Եւ ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր, եւ ոչ զՀայր ոք ճանաչէ՝ եթե ոչ Որդի, եւ ում Որդին կամիցի յայտնել: 28 Ասէ[3]. Եկայք առ իս ամենայն աշխատեալք[4] եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ: 29 Առէ՛ք զլուծ իմ ի ձեզ, եւ ուսարուք յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ. եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց: 30 Զի լուծ իմ քաղցր է. եւ բեռն իմ փոքրոգի»:*

167. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ [ԺԳ. 32-37]. *Տէր մեր Յիսուս ասէ[5]. «Այլ վասն աւուրն այնորիկ եւ ժամու[6] ոչ ոք գիտէ, |Ա.204բ| ո՛չ հրշտակք երկնից[7] եւ ո՛չ Որդի, բայց միայն Հայր[8]: 33 Զգո՛յշ լե-*

---

[1] *Ս յայնմ ժամանակի պատասխանի ետ յիսուս՝ եւ ասէ] յայնժամ ցնծացաւ յիսուս հոգովն սրբով եւ ասէ*
[2] *Ս քոյ*
[3] *Ս > ասէ*
[4] *Ս վաստակեալք՝] աշխատեալք*
[5] *ՍԳ > տէր մեր յիսուս ասէ*
[6] *Գ ժամուն*
[7] *ՍԳ հրեշտակք յերկինս*
[8] *Գ ~ հայր միայն*

բուք[1], հսկեցէ՛ք[2] եւ կացէ՛ք յաղօթս, զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ: 34 *Որպէս այր մի գնացեալ ի տարաշխարհ, եւ[3] թողուցու զտուն իւր, եւ տայցէ[4] ծառայից իւրոց իշխանութիւն, եւ իւրաքանչիւր զգործս[5] իւր. եւ դռնապանին պատուէր[6] տայցէ, զի արթուն լինիցի[7]:* 35 *Արթո՛ւն լերուք[8], զի ոչ գիտէք ե՛րբ տէր տանն գայցէ, յերեկորեա[9], եթէ՞ ի մէջ գիշերի, եթէ՞ ի հաւախաւսու[10], եթէ՞[11] ընդ առաւաւտս:* 36 *Գուցէ եկեալ յանդարծակի[12]՝ գտանիցէ զձեզ ի քուն:* 37 *Բայց զոր ձեզդ[13] ասեմ, ամենեցուն ասեմ՝ արթուն կացէ՛ք»:*

168. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱ. [ԻԱ· 34-38]. *Տէր մեր Յիսուս ասէ[14]. «Զգոյշ կացէք[15] անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ եւ արբեցութեամբ, եւ հոգովք[16] աշխարհականաւք, եւ յանդարծակի[17] հասանիցէ ձեզ[18] աւրն այն.* 35 *Զի իբրեւ զորոգայթ հասանիցէ ի վերայ ամենեցուն, որ բնակեալ են ընդ ամէնայն երեսս երկրի:* 36 *Արթո՛ւն կացէք այսուհետեւ, եւ[19] յամենայն ժամ աղաւթս արարէք, զի արժանի լինիցիք[20] զերծանել յայնմ ամենայնէ[21], որ լինելոցն[22] է, եւ կալ առաջի Որդւոյ[23] մարդոյ:* 37 *Եւ ի |Ա.205ա| տուէ ի տաճարին ուսուցանէր, եւ զգիշերն[24] ելեալ ագանէր ի լերինն՝ որ կոչէր Ձիթենեաց:* 38 *Եւ ամէնայն ժողովուրդն կանխէր ընդ առաւաւտն[25]՝ լսել ի նմանէ»:*

169. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՀԱՆՆՈՒ [ԺԲ· 46-49]. *Տէր մեր Յիսուս ասէ[26]. «Ես եմ[27] լոյս աշխարհի[28]. ամենայն որ գա առ իս[29], ի խաւարի մի մնասցէ:* 47 *Եթէ[30] ոք լուիցէ*

---

[1] *Ս եղերուք*
[2] *Ս սկեցէք*
[3] *ՍԳ > եւ*
[4] *ՍԳ տացէ*
[5] *Ս զգործ*
[6] *Գ պատուէր*
[7] *Գ լիցի*
[8] *Ս արդ, արթուն կացէք] արթուն լերուք, Գ կացէք] լերուք*
[9] *Ս յերեկորեայ, Գ յերեկաւրեայ*
[10] *ՍԳ հաւախաւսի*
[11] *Գ թէ*
[12] *ՍԳ յանկարծակի*
[13] *Գ ձեզ*
[14] *ՍԳ > տէր մեր յիսուս ասէ*
[15] *ՍԳ լերուք] կացէք*
[16] *հոգւովք*
[17] *յանկարծակի*
[18] *ՍԳ ի վերայ ձեր] ձեզ*
[19] *Ս > եւ*
[20] *Ս լինիջիք*
[21] *Ս յամենայնէ*
[22] *Ս լինելոց*
[23] *ՍԳ որդւոյ*
[24] *Ս զգիշերս*
[25] *ՍԳ առաւաւտս + առ նա ի տաճարն*
[26] *Ս > տէր մեր յիսուս ասէ*
[27] *Ս > եմ*
[28] *Ս յաշխարհ եկի] աշխարհի*
[29] *Ս զի ամենայն որ հաւատայ յիս] ամենայն որ գա առ իս*
[30] *Ս եւ եթէ*

բանից իմոց եւ ոչ պահիցէ[1], ես ոչ դատիմ զնա. քանզի ոչ եկի էթե[2] դատեցայց զաշխարհս[3], այլ զի փրկեցից զաշխարհս[4]: 48 *Որ անարգէ զիս, եւ ոչ ընդունի զբանս իմ. ես ոչ դատիմ զնա[5]. գոյ որ դատի զնա, բանն զոր խաւսեցա[6]՝ նա դատի զնա յաւուրն յետնում:* 49 *Զի ես յանձնէ իմէ[7] ոչ խաւսեցա[8]. այլ որ առաքեացն զիս[9], նա ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից եւ զինչ խաւսեցայց»:*

Եւ բառնան քահանայքն եւ բերեն ի սրահ եկեղեցոյն: Եւ ի դրանն այս կանոն կատարի. սաղմոս ԼԵ· [=ԼԳ· 7]· *Այս աղքատ կարդաց առ Տէր, եւ Տէր լ[ուաւ սմա]:*

170. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍՈՒԱ ՈՐԴՈՅ ՆԱՒԵԱՅ [ԻԴ· 29-33]. *«Եւ պաշտեաց Իսրայէղ[10] զՏէր զամենայն աւուրս կենաց[11] Յեսուա[12], եւ զամենայն աւուրս ծերոցն որ[13] կային ի ժամանակին[14] ընդ նմա[15]. եւ նոքա[16] տեսին[17] զգործս[18] Տեառն, զոր արար յԻսրայէղ[19]:* 30 *Եւ եղեւ յետ այնորիկ[20] մեռանել Յեսուա որդւոյ[21] Նաւեայ ծառայի Տեառն[22], |Ա.205բ| ճժ.[23] ամաց,* 31 *եւ թաղեցին զնա առ սահմանաւք ժառանգութեան իւրոյ ի Թամնասաքար, ի լերինն Եփրովն[24] ի հիւսիսոյ[25] ի լերինն Գայասու: Եւ անդ եդին ընդ[26] նմա որ թաղեցինն առ[27] յիշատակ[28] զսուրսն քարեղէնս[29], որով թլփատեաց[30] զորդիսն Իսրայէղի ի Գաղգաղ[31], յորժամ էհան[32] զնոսա յերկրէն Եգիպտացւոց[33]՝ որպէս[34] հրամաեաց[35] Տէր. եւ անդ են[36] մինչեւ* ցայսաւր ժամանակի[1]: 32 Եւ զոսկերսն Յովսեփու[2] հանին որդիքն Իսրայէլի յԵգիպտոսէ. եւ թաղեցին[3] ի Սիկիմ, ի բաժնի ագարակին զոր ստացաւ Յակովբ յԱմուրհացոցն բնակելոցն[4] ի Սիկիմ, որոջաց Ճ.ոց[5], եւ ետ զայն Յովսեփու[6] ի բաժնի[7]: 33 Եւ եղեւ յետ այնորիկ մեռանել[8] Եղիազարու քահանայի որդւոյ[9] Ահարովնի. եւ թաղեցին ի Գաբաթ Փենեհեզի որդւոյ[10] իւրոյ, զոր ետ նմա ի լերինն Եփրեմի[11]: Յաւուրսն յայնոսիկ[12] առեալ որդւոցն[13] Իսրայէլի զտապանակն[14] Աստուծոյ՝ շրջեցուցանէին ընդ ինքեանս[15]: Եւ քահանայացաւ Փենէհեզ[16] որդի Եղիազարու[17] փոխանակ[18] հաւր իւրոյ, մինչեւ մեռաւ՝ եւ թաղեցաւ յիւրում Գաբաւովնի[19]: Եւ որդիքն Իսրայէլի գնացին յիւրաքանչիւր |Ա.206ա| տեղիս իւրեանց[20]»:

---

[1] *Ս պահեսցէ*
[2] *Ս թէ*
[3] *Ս զաշխարհ*
[4] *Ս զաշխարհ*
[5] *Ս > ես ոչ դատիմ զնա*
[6] *Ս զոր ես խաւսեցայ*
[7] *Ս իմմէ*
[8] *Ս խաւսեցայ*
[9] *Ս զիս հայր*
[10] *Ս պաշտեցին] պաշտեաց իսրայէղ, Յ իսրայէլ*
[11] *ՍԳ > կենաց*
[12] *Գ ~ զամենայն աւուրս յեսուայ զտէր, Ս յեսուայ*
[13] *Ս որք*
[14] *Ս ժամանակն*
[15] *Ս ձգեցին զժամանակս ընդ յեսուայ] կային ի ժամանակին ընդ նմա*
[16] *Ս որք, Գ սոքայ] նոքա*
[17] *Գ տեսցեն*
[18] *ՍԳ զամենայն գործս*
[19] *Ս յիսրայէլ, Գ յերուսաղէմ*
[20] *Ս այսորիկ եղեւ*
[21] *Գ յեսուայ, Ս յեսուայ որդւոյ*
[22] *Գ ծառային տէր*
[23] *Ս հարիւր տասն, Գ հարիւր եւ տասն*
[24] *ՍԳ եփրեմայ*
[25] *Ս հիւսսոյ*
[26] *Գ առ] ընդ*
[27] *Գ թաղեցին առ ի*
[28] *Ս ուր թաղեցին զնա առ ի յիշատակէ] որ թաղեցինն առ յիշատակ*
[29] *Գ զսուրն քարեղէն*
[30] *ՍԳ թլփատեաց*
[31] *Ս գաղգաղա, Գ գաղգաղայ*
[32] *Գ եհան*
[33] *ՍԳ յեգիպտոսէ] յերկրէն եգիպտացւոց*
[34] *Գ որպէս եւ*
[35] *Ս հրամայեաց, Գ հրամայեաց նմայ*
[36] *Ս են անդ] անդ են*

171. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՐԵՄԻԱ[21] ՄԱՐԳԱՐԷԷ

[Ողբ· Եր· 1-8]. «Յիշեա՛յ[22], Տէ՛ր, որ ինչ անցք անցին ընդ մեզ. նայեա՛յ[23] եւ տե՛ս զնախատինս մեր: 2 Ժառանգութիւն[24] մեր դարձաւ յաւտարութիւն, եւ բնակութիւն մեր ի նշղեհութիւն: 3 Որբ մնացաք[25], եւ ոչ գոյ[26] մեր հայր, մայրք[27] մեր իբրեւ այրիք ի ժամանակի մերում[28]: 4 Զջուր մեր գնոյ[29] արբաք. եւ փայտ[30] մեր առանց փոխանակի 5 եկն ի վերայ մեր եւ[31] պարանոցի մերում[32]: Ի հալածանս եղաք[33], եւ ոչ գտաք հանգիստ: 6 Ձեռնածիգ եղեն եգիպտացիքն[34] եւ ասորեստանայքն[1] յագեցուցանել[2] հացիւ: 7 Հարքն մեր մեռան[3] եւ ոչ եւս ուրեք[4] են[5] ի միջի. մեղք հարց մերոց[6]՝ այն ընդ մեզ ելին, 8 ծառայք տիրեցին[7] մեզ. եւ այն որ փրկեն[8] զմեզ ի ձեռաց նոցա՝ չիք ուրեք[9] ի միջի»:

172. ՊԵՏՐՈՍԻ Ի ԿԱԹՈՂԻԿԷԻՑ[10]

[Ա· Պետր· Ա· 3-9]. «Աւրհնեալ է Աստուած եւ[11] Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում մարդասիրութեանն իւրոյ[12] ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի. ի ձեռն Յիսուսի Քրիստոսի յարութեան մեռելոց[13], 4 յանեղծ եւ յանարատ եւ յանթառամ ժառանգութիւնսն[14]՝ որ պահեալն[15] է յերկինս ձեզ[16]· 5 որ զաւրութեամբն Աստուծոյ պահեալ եք հաւատովն[17] որ ի Քրիստոս Յիսուս[18], ի պատրաստեալ |Ա.206բ| փրկութիւն[19], յայտնեալ յետին[20] ժամանակս: 6 Որով ուրախ լինիջիք, որ[21] այժմ սակաւ[22] ինչ ըստ պատշաճի իրաց սրտմտեալ եք[23] ի պեսպես փորձութիւնս: 7 Զի հանդես ձերոց հաւատոցտ[24] առաւել է[25] քան զոսկի կորստական, պատուական է՝ որ հրով փորձեալ գտաւ, ի գովութիւն եւ ի փառս եւ ի պատիւ ի յայտնութեան[26] Տեառն մերոյ[27] Յիսուսի Քրիստոսի: 8 Զոր ոչն տեսեք՝ եւ սիրեցէք, ընդ որ այժմ ոչ[28] նաեցեալ[29], բայց[30] ուրախ էք անճառ եւ փառաւորեալ խնդութեամբ[31]· 9 ընկալեալ զկատարումն հաւատոց[32] ձերոց զոգւոցն փրկութիւն»:

---

[1] Գ > եւ անդ են... ժամանակի
[2] Ա յովսեփայ
[3] ԱԳ թաղեցին զնա (Գ զնայ)
[4] Գ յամուրհացւոցն, Ա յամուրհացւոցն բնակելոց
[5] ԱԳ աւրոջաց (Գ որոճաց) հարիւրոց
[6] Գ յովսեփայ
[7] Ա բաժին
[8] Ա վախճանել
[9] Ա որդւոյ
[10] Ա թաղեցաւ ի գարաաղ փենէէսի որդւոյ, Գ թաղեցաւ ի գաբաթ փենէհեզի որդւոյ
[11] Ա եփրեմայ, Գ եփրոնի
[12] ԱԳ յաւուր յայնմիկ
[13] ԱԳ որդւոցն
[14] Ա զտապանակ ուխտին
[15] Գ ~ շրջեցուցանէին ընդ ինքեանս զտապանակն, Ա իւրեանս] ինքեանս
[16] Ա փենէէս
[17] Ա > որդի եղիազարու
[18] Ա փոխանակ եղիազարու
[19] Ա յիւրումն գաբաաթ, Գ գաբաթայ
[20] Գ իւրաքանչիւր ի քաղաքս իւրեանց] յիւրաքանչիւր... իւրեանց

յերեմիայ

յիշեա

Ա նայեաց, Գ նայեա՛

[24] Գ զի ժառանգութիւն
[25] Ա մնացաք մեք
[26] ԱԳ գոյր
[27] Ա մարք
[28] ԱԳ ժամանակաց մերոց
[29] Գ գնով
[30] Ա փայտն
[31] Գ եւ ի վերայ
[32] Ա պարանոցի մերոյ] մեր եւ պարանոցի մերում, Գ մեր] մերում
[33] Ա հալածական եղեաք] ի հալածանս եղաք
[34] Գ եգիպտացիք

[1] Ա եւ ոչ ասորեստանեայքն, Գ ասորեստանեայք
[2] ԱԳ յագեցուցանել
[3] ԱԳ մեռան] մեռան
[4] Գ > ուրեք
[5] Ա չիք ուրեք] ոչ եւս ուրեք են
[6] Ա եւ մեղք հարցն, Գ զի մեղքն] մեղք հարց մերոց
[7] ԱԳ տիրեցին
[8] Ա փրկէրն, Գ փրկէր
[9] Ա > ուրեք
[10] Գ պետրոսի առաքելոյ ի կաթուղիկեայ թղթոյն է ընթ., Յ կաթողիկէից թղթոյն
[11] Յ > եւ
[12] ԱԳ ողորմութեան իւրում] մարդասիրութեանն իւրոյ
[13] ԱԳ յարութեանն յիսուսի քրիստոսի ի մեռելոց
[14] ԱԳ ժառանգութիւնն
[15] Ա պահեալ
[16] Ա ի ձեզ
[17] ԱԳ հաւատովք
[18] ԱԳ > որ ի քրիստոս յիսուս
[19] ԱԳ փրկութիւնն
[20] ԱԳ ի յետին
[21] ԱԳ որք
[22] Ա սակաւիկ
[23] Ա իրացդ սրտմտեալք] իրաց սրտմտեալ եք
[24] Ա հաւատոցն, Գ հաւատոցդ
[25] Ա > է
[26] Ա յայտնութեանն, Գ յայտնութեանն] ի յայտնութիւն
[27] ԱԳ > տեառն մերոյ
[28] Գ > ոչ
[29] ԱԳ հայեցեալք
[30] ԱԳ բայց + հաւատացէք. եւ
[31] Ա խնդութեամբն
[32] Ա հաւատոցն

Աղեղու. [Ի.Զ. 1] *Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես [յումէ՞ երկեայց]:*

173. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՀԱՆՆՈՒ [ԺԴ. 25-31]. *Տէր մեր Յիսուս ասէ[1]. «Զայս խաւսեցա[2] ընդ ձեզ մինչ առ ձեզս էի: 26 Իսկ մխիթարիչ[3] Հոգին Սուրբ, զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուցէ[4] ձեզ զամենայն. եւ յիշեցուսցէ ձեզ զամենայն ինչ զոր ասացի ձեզ[5]: 27 Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ո՛չ որպէս աշխարհս տա[6] տամ ես ձեզ: Մի՛ խռովեսցին սիրտք ձեր, եւ մի՛ զանգիտասցեն[7]. 28 Լուայք զի ասացի ձեզ՝ եթէ[8] երթամ եւ գամ առ ձեզ. եթէ սիրէք[9] զիս, ապա ուրախ լեալ[10] էր |Ա.207ա| ձեր՝ եթէ ես առ Հայր իմ[11] երթամ, զի Հայր իմ մեծ է քան զիս: 29 Եւ այժմ ասացի ձեզ մինչեւ[12] եղեալ. զի յորժամ լինիցի, հաւատասջիք: 30 Ոչ եւս այլ շատ խաւսեցա[13] ընդ ձեզ. գա[14] իշխան աշխարհիս այսորիկ. եւ յիս ինչ ոչ գտանէ: 31 Այլ զի ծանիցէ աշխարհ՝ եթէ սիրեմ զՀայր. եւ որպէս պատուիրեաց ինձ Հայր[15] այնպէս[16] առնեմ: Ա՛ռն, արի՛ք գնացուք[17] աստի»:*

Քարոզէ. *Վասն ուղղելոյ զգ[նացս]:*

Եւ ասէ զաղաւթս զայս.

ՃՀԵ. *Աստուա՛ծ մարդասէր, փրկի՛չ մեր, կարդամք առ քեզ զմեծ եւ զամենազաւր անուն քո, աղաչանաւք սուրբ Աստուածածնիդ եւ ամէնայն սրբոց քոց. որք միաբանեալ հայցեմք ի քո առատ բարերարութենէդ, շնորհեա՛յ զթողութիւն մեղաց սորա, զի դու ես Տէր, որ պարգեւեցեր ծառայի քում առաջնորդութիւն՝ հովել զժողովուրդ քո, նոյն ինքն եւ այժմ շնորհեա՛յ սմա ընդ երջանկացեալ հայրապետացն վերադասիլ, զի ընդ նոսին փառաւորեսցէ Հայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին յժմ [եւ միշտ]:*

Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպագեսցուք:

ՃՀԶ. *Ո՛վ Տէր ամենեցուն եւ արարի՛չ, եւ առաւելապէս այսմ ստեղծուածոց, ո՛վ Աստուած ամենեցուն եւ Հայր |Ա.207բ| եւ ուղղիչ, ո՛վ կենաց եւ մահու Տէր: Ո՛վ հոգոց եւ մարմնոց շտեմարան եւ բարէգործ, որ առնես զամենայն եւ փոփոխես արուեստաւոր բանիւ ըստ ժամանակի, որպէս դու ինքնին գիտես քո իմաստութեամբդ, ընկա՛լ եւ այժմ զաղաչանս մեր, եւ զհոգի սորա հանգո՛յ ընդ սուրբս քո, եւ արա՛յ արժանի վերստին նորոգման՝ ի լսել զձայն աստուածային փողոյն, ընդ առաջ ելանել քեզ փառաւք, զի կացցէ առաջի քո զուարթերես եւ պայծառ, ընկալցիս եւ զմեզ յետոյ ի դեպ ժամանակի, մատակարարեալս ի մարմնի, որքա՞ն արդեւք աւգտակարագոյն եղիցուք յաւգս քոյ երկիւղիդ՝ պատրաստեալք եւ ոչ խուսափեալք ի վերջին աւուրն, այլ յաւժարեալք առ այդր կեանս երկնաւորս եւ յաւիտենականս, շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչիդ Յիսուսի Քրիստոսի, որում վայել է փա[ռք]:*

Եւ բառնան քահանայքն եւ մտանեն յեկեղեցին եւ դնեն առաջի խաչին: Եւ այս կանոն կատարի. սաղմոս ԻԵ. [8]. կցուրդ. *Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո:*

174. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ[1] ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵՆԷՆ[2] [Գ. Թ-գ. Բ. 1-4. 10]. *«Եւ մերձեցան աւուրք Դաւթի մեռանելոյ. պատասխանի[3] ետ[4] որդոյ |Ա.208ա| իւրում Սողոմոնի[5] եւ ասէ. 2 Ահա[6] ես երթամ զճանապար[հ]ս[7] ամենայն երկրի, եւ դու զաւրասցիս եւ եղիցես[8] այր[9] 3 եւ պահեսցես զպահպանութիւն[10] Տեառն Աստուծոյ քո[11]՝ գնալ ի ճանապարհս նորա եւ պահել զպատուիրանս նորա եւ զիրաւունս, եւ զդատաստանս եւ զվկաութիւնս[12] նորա, եւ[13] զգրեալսն յաւրէնսն Մովսեսի[14], զի ի միտ առնուցուս զոր առնիցես, ըստ ամենայնի զոր պատուիրեմ քեզ: 4 Զի հաստատեսցէ Տէր զբան իւր զոր խաւսեցաւ վասն իմ եւ ասէ. Եթէ պահեսցեն որդիք քո զճանապարհս իւրեանց, որպէս եւ գնացեր դու[15], մի՛ պակասեսցէ[16] քո[17] այր յերե-*

---

[1] *ՍԳ > տէր մեր յիսուս ասէ*
[2] *ՍԳ խաւսեցայ*
[3] *Ս մխիթարիչն*
[4] *Ս ուսուսցէ*
[5] *Ս ~ որ ինչ ասացի ձեզ, եւ յիշեցուսցէ ձեզ] եւ յիշեցուսցէ... ասացի ձեզ*
[6] *ՍԳ տայ*
[7] *ՍԳ զանգիտեսցեն*
[8] *Ս ես ձեզ թէ*
[9] *ՍԳ սիրէիք*
[10] *Ս լինեալ*
[11] *ՍԳ > իմ*
[12] *ՍԳ մինչ չեւ] մինչեւ*
[13] *Ս խաւսեցայց*
[14] *Ս գայ*
[15] *Գ հայրն*
[16] *Ս հայրն այսպէս*
[17] *ՍԳ գնասցուք*

---

[1] *Գ յերրորդ*
[2] այս խորագրի եւ նախորդող խորանի բոլոր «ա» գրերը բոլորգրով են

---

[3] *Ս եւ պատասխանի*
[4] *Գ պատուիրեաց] պատասխանի ետ*
[5] *Ս ~ սողոմոնի որդւոյ իւրում, Գ սաւղոմոնի*
[6] *ՍԳ > ահա*
[7] *Ս զճանապարհ, Գ զճանապարհս*
[8] *Գ եղիցիս*
[9] *Ս յայր*
[10] *Ս զպահպանութիւնս, Գ զպատուիրանս*
[11] *Ս քոյ*
[12] *ՍԳ զվկայութիւնս*
[13] *ՍԳ > եւ*
[14] *Ս զգրեալս յաւրէնս մովսիսի*
[15] *ՍԳ գնալ առաջի իմ ճշմարտութեամբ յամենայն սրտէ իւրեանց եւ յամենայն անձնէ իւրեանց, ասէ] որպէս եւ գնացեր դու*
[16] *Գ պակասեսցի*
[17] *Ս սատակեսցի] պակասեսցէ քո*

սաց իմոց որ նստցի յաթոռ Իսրայէղի[1]: 10 *Եւ ննջեաց Դաւիթ ընդ հարս իւր, եւ թաղեցաւ ի քաղաքի Դաւթի»:*

175. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵԶԵԿԻԵԼԵ ՄԱՐԳԱՐ[ԷԷ. Խ. 44-46]. *«Եւ տարաւ զիս ի սրահ*[2] *ներքին. եւ ահա երկու պատշգամք ի ներքո*[3] *սրահին, մի*[4] *ընդ հարաւոյ խորանին*[5]*, որ հայեր ընդ հիւսիսի*[6] *եւ հաներ ընդ հարաւ, եւ մի ընդ հիւսիսոյ*[7] *դրանն, որ հաներ*[8] *ընդ հարաւ եւ հայեր ընդ հիւսիսի*[9]: 45 *Եւ ասէ ցիս. Այս պատշգամք*[10]*, որ հայի ընդ կողմ*[11] *հարաւոյ՝ քահանայիցն եղիցի, որ պահեն զպահպանութիւնս*[12] *իմ*[13]: 46 *Եւ պատշգամն որ հայի* |*Ա.208բ*| *ընդ կողմն*[14] *հիւսիսոյ*[15]*՝ քահանայիցն եղիցի, որ պահեն*[16] *զպահպանութիւն սեղանոյն. նոքա են որդիք Սադովկա*[17]*, որ մերձենան ի ղեւտացոց անդի*[18] *պաշտել զՏէր»:*

176. ԴԱՐՁԵԱԼ ՅԵԶԵԿԻԵԼԷ ՄԱՐԳԱՐԷԷ [ԽԴ. 17-21]. *«Եւ եդիցի ի մտանել քահանայիցն*[19] *ընդ դուռն ներքին սրահին*[20]*, զգեցցին պատմուճանս*[21] *կտաւիս. եւ մի*[22] *զգեցցին*[23] *ասուիս*[24] *ի պաշտաման*[25] *իւրեանց, ի դրանեն ներքնոյ*[26] *սրահին:* 18 *Եւ խոյրս կտաւիս ունիցին ի գլուխս իւրեանց, եւ անդրավարտիս կտաւիս յերանս իւրեանց, եւ ոչ զգենուցուն բռնութիւնս*[27]: 19 *Եւ յելանել նոցա*[28] *յարտաքին սրահն՝ առ ժողովուրդն, մերկասցին զպատմուճանս իւրեանց*[29]*, եւ դիցեն զնոսա ի սենեակ սրբութեան*[30]*, եւ զգեցցին այլ պատմուճանս. եւ մի՛ սրբեսցեն զժողովուրդն պատմուճանաւք*[31] *իւրեանց:* 20 *Եւ զգլուխս իւրեանց մի՛ գերծցեն, եւ զվարսս իւրեանց մի՛ անաւսրեսցեն*[1]: 21 *Եւ գինի մի՛ արբցեն ամենայն քահանայքն ի մտանել*[2] *իւրեանց ի*[3] *յարտաքին*[4] *սրահն»:*

177. Ի ՅԵԲՐԱՅԵՑՈՑ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔ[ԵԼՈՅ[5]. ԺԳ. 17-21]. *«Ունդնդիր*[6] *լերո՛ւք առաջնորդաց ձերոց եւ հպատակ կացէ՛ք նոցա, զի նոքա տքնին վասն ոգոց*[7] |*Ա.209ա*| *ձերոց՝ որպէս թէ համարս տալոց են*[8] *ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն զայն եւ մի՛ յոգոց*[9] *հանելով, զի այն ոչ յաւգուտ ձեր է:* 18 *Աղաւթս արարէ՛ք վասն*[10] *մեր, զի հաստատեալ գիտեմք, եթե բարեւք*[11] *միտս ունիմք*[12] *յամենայնի, կամիմք բարեւք*[13] *գնացս ցուցանել:* 19 *Եւ առաւել աղաչեմք*[14]*, զի զայն առնիցէք, զի վաղագոյն պատսպարեսցայց ձեզ:* 20 *Եւ Աստուած խաղաղութեան, որ էհան*[15] *ի մեռելոց զհովիւն հաւտից՝ զմեծն արեամբ յաւիտենական ուխտին զՏէր մեր Յիսուս Քրիստոս*[16], 21 *հաստատեսցէ զսիրտս ձեր*[17] *ի գործս բարութեան՝ առնել զկամս նորա. եւ արասցէ ի մեզ զհաճոյսն*[18] *ի ձեռն Յիսուսի Քրիստոսի»:*

Աղեղու ԽԴ. [1]· *Առ քեզ, Տէ՛ր, համբարձի զա[նձն իմ]:*

178. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՀԱՆՆՈՒ [ԺԵ. 11 - ԺԶ. 5]. *Տէր մեր Յիսուս ասէ*[19]. *«Զայս խաւսեցա*[20] *ընդ ձեզ, զի ուրախութիւնն*[21] *իմ ի ձեզ լիցէ, եւ ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի:* 12 *Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս ես*[22] *սիրեցի զձեզ:* 13 *Մեծ եւս սեր քան զայս*[23] *ոչ ոք ունի*[24]*, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարէկամաց իւրոց:* 14 *Դուք բարէկամք էք իմ, եթէ առնիցէք զոր ես*[25] *պատուի*|*Ա.209բ*|*րեմ ձեզ:* 15 *Ոչ եւս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէր*[26] *նորա, այլ զձեզ կոչեցից*[27] *բարեկամս, զի զա-*

---

[1] *ՍԳ յաթոռոյ Իսրայէլի*] *յերեսաց իմոց որ նստցի յաթոռ Իսրայէղի*

[2] *ՍԳ սրահն*

[3] *Ս պատշգամբք ի ներքոյ*

[4] *Գ > մի*

[5] *ՍԳ դրանն*] *խորանին*

[6] *Ս հիւսիսի*

[7] *Ս հիւսիսոյ, Գ հիւսիսոյ*

[8] *ՍԳ հայէր*

[9] *ՍԳ հանէր ընդ հիւսիսի (Գ հիւսիսի)*

[10] *Ս պատշգամ*

[11] *Ս կողմանս*

[12] *Գ զպահպանութիւն*

[13] *ՍԳ տանն*] *իմ*

[14] *Ս > կողմն*

[15] *հիւսիսի*

[16] *Գ պահէն*

Դ սադովկայ

Գ ղեւտացւոց անտի

մտանելն նոցա

[20] *ՍԳ սրահին ներքնոյ (Գ ներքնոյն)*] *ներքին սրահին*

[21] *Ս զպատմուճանս*

[22] *Գ > մի*

[23] *Ս զգենուցուն*

[24] *Գ ասուիս*

[25] *Գ պատմուճանս, Ս պաշտամանն*

[26] *ՍԳ դրանէ ներքին*

[27] *Ս բռնութիւն, Գ բռնութեամբ*

[28] *Ս յելանելն իւրեանց*] *յելանել նոցա*

[29] *Ս իւրեանց որովք պաշտիցենն*

[30] *Ս սենեակն սրբութեանց*

[31] *Գ պատմուճանաւքն*

[1] *ՍԳ անաւսրացուսցեն + ծածկելով ծածկեսցեն զգլուխս իւրեանց*

[2] *Ս մտանելն*

[3] *Գ նոցա ի*] *իւրեանց*

[4] *Ս ի ներքին*] *յարտաքին*

[5] *Գ պաւղոսի առաքելոյ յեբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս*

[6] *ՍԳ ունկնդիր*

[7] *ՍԳ ոգւոց*

[8] *Ս իցեն*] *են*

[9] *ՍԳ յոգւոց*

[10] *Գ եւ վասն*

[11] *Ս բարւոք, Գ բարիոք*

[12] *Գ ունիցիմք*

[13] *ՍԳ բարւոք*

[14] *Ս աղաչեմ*

[15] *ՍԳ եհան*

[16] *Ս > քրիստոս*

[17] *ՍԳ զձեզ*] *զսիրտս ձեր*

[18] *ՍԳ զհաճոյսն առաջի իւր*

[19] *ՍԳ > տէր մեր յիսուս ասէ*

[20] *ՍԳ խաւսեցայ*

[21] *Գ ուրախութիւն*

[22] *Ս եւ ես*

[23] *ՍԳ ~ քան զայս սէր*

[24] *ՍԳ ունիցի*

[25] *ՍԳ եսն*

[26] *ՍԳ տէրն*

[27] *Ս կոչեցի*

մենայն զոր լուա[1] ի Հաւրէ[2] ծանուցի ձեզ. 16 Ոչ եթէ դուք ընդրեցէք[3] զիս, այլ ես ընդրեցի[4] զձեզ. եւ եդի զձեզ, զի դուք երթիցէք[5] եւ պտղաբերք[6] լինիցիք. եւ պտուղն ձեր կացցէ[7]: Եւ զոր ինչ խնդրեսջիք[8] ի Հաւրէ իմմէ[9], տացի[10] ձեզ: 17 Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս: 18 Եթէ աշխարհս[11] զձեզ ատեա[12], գիտասջիք զի նախ զիս ատեաց[13]: 19 Էթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհս[14] զիւրն սիրե՞ր[15] արդեւք. բայց զի չէք յաշխարհէ[16], այլ ես ընդրեցի[17] զձեզ յաշխարհէ, վասն այնորիկ ատեա[18] զձեզ աշխարհս[19]: 20 Յիշեցէ՛ք զբանն զոր ասացի ձեզ[20], եթէ[21] ոչ է ծառա[22] մեծ քան զտէր իւր: Եթէ զիս հալածեցին, ապա եւ զձեզ հալածեսցեն. էթե զբանն իմ պահեցին, ապա եւ զձեր[23] պահեսցեն: 21 Այլ զնոյնս արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ, զի ոչ ծանե[ա]ն զՀայր եւ ոչ զիս[24]: 22 Իմ՝ եթէ չէր եկեալ եւ խաւսեցեալ[25], մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ, չիք[26] պատճառս[27] վասն մե|Ա.210ա|ղաց իւրեանց: 23 Որ զիս ատեա[28], եւ զՀայրն իմ ատեա[29]: 24 Եթէ զգործսն չեր գործեալ ի նոսա, զոր ոչ այլ ոք գործեաց, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ, տեսին, եւ ատեցին[30] զիս եւ զՀայր[31] իմ: 25 Այլ զի լցցի բանն, որ յաւրէնս նոցա գրեալ է, եթե[32] Ատեցին[33] զիս ի[34] տարապարտուց [հմմտ. Սղմ. ԼԴ. 19. ԼԷ. 20. ԿԸ. 5]: 26 Բայց յորժամ եկեսցէ մխիթարիչն[35], զոր առաքեցի[36] ձեզ ի Հաւրէ իմմէ[37], Հոգին[38] ճշմար-

---

[1] *ՍԳ լուայ*
[2] *ՍԳ հաւրէ իմմէ*
[3] *ՍԳ ընտրեցէք*
[4] *ՍԳ ընտրեցի*
[5] *ՍԳ երթայցէք*
[6] *Գ պտղաբեր*
[7] *Գ կայցէ*
[8] *ՍԳ խնդրիցէք*
[9] *Գ իմմէ յանուն իմ*
[10] *Ս տացէ*
[11] *Ս աշխարհ*
[12] *Ս ատեայ*
[13] *Ս ատեայ*
[14] *Ս աշխարհ*
[15] *Գ զիւրն սիրէ*
[16] *Ս ~ յաշխարհէ չէք*
[17] *ՍԳ ընտրեցի*
[18] *ՍԳ ատեայ*
[19] *Ս աշխարհ*
[20] *Ս > ձեզ*
[21] *Ս թէ*
[22] *ՍԳ ծառայ*
[23] *ՍԳ զձերն*
ՍԳ զայն որ առաքեաց զիս] զհայր եւ ոչ զիս
ՍԳ խաւսեցեալ ընդ նոսա
[26] *Ս չիք ինչ*
[27] *ՍԳ պատճառք*
[28] *Ս ատեայ*
[29] *Ս ատեայ*
[30] *Ս ատեցին եւ*
[31] *Գ զհայրն*
[32] *ՍԳ թէ*
[33] *ՍԳ ատեցին*
[34] *Ս > ի*
[35] *Գ մխիթարիչն + հոգին սուրբ*
[36] *ՍԳ ես առաքեցից] զոր առաքեցի*
[37] *Ս > իմմէ*
[38] *ՍԳ զհոգին*

տութեան որ ի Հաւրէ ելանէ, նա վկաէ[1] վասն իմ: 27 Եւ դուք վկաեք[2], զի ի սկզբանէ ընդ իս եք:

[ԺԶ.] 1 Զայս խաւսեցա[3] ընդ ձեզ, զի մի՛ գայթակղեսջիք[4]: 2 Ի ժողովրդոց իւրոց[5] հանցեն[6] զձեզ: Այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամենայն որ սպանանիցեն[7] զձեզ, համարեսցի[8] պաշտաւն մատուցանել Աստուծոյ: 3 Եւ զայն արասցեն ընդ ձեզ[9], քանզի[10] ոչ ծանեան զՀայր, եւ ո՛չ զիս: 4 Այլ եւ զայս խաւսեցա[11] ընդ ձեզ, զի յորժամ եկեսցէ ժամանակ՝ յիշեսջիք էթէ[12] ասացի ձեզ: 5 Զայս ի սկզբանէ ոչ ասացի[13], քանզի ընդ ձեզ[14] էի»:

Քարոզէ. *Վասն գտանելոյ:* Եւ ասէ զաղաւթս զայս.

ԾՀԷ. *Հովուապետ բարի Քրիստո՛ս, գտա՛կ կորուսելոց եւ խնդրող մոլորելոցս, որ եւ եղ|Ա.210բ|բարս անուանեցեր զսուրբ զառաքեալսն, եւ նոքաւք որսացեր զմարդիկ ի կեանս յաւիտենից: Եւ այժմ ծառայս քո, որ աւանդեաց զհոգի իւր ի ձեռս քո, զի եւ սա եղեւ սպասաւոր փոքր ի շատէ տէրութեանդ քում, յիշեա՛յ զհոգի այս անուն քահանայի, եւ զմարմինս որ կա առաջի քո, եւ թո՛ղ զմեղս սորա՝ զկամա եւ զակամա, ի ձեռն կենսատու խաչի քո, բարէխաւսութեամբ սուրբ Աստուածածնին եւ ամենայն սրբոց քոց, եւ հա՛ն սմա մասն եւ բաժին յարքայութեան քում, եւ զմեզ արժանի արա՛ փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ [յաւիտեանս]:*

Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպագեսցո[ւք]:

ԾՀԸ. *Դարձեալ մատուցանեմք զաղաւթս մեր ընդ դուռն սրբոյ եկեղեցոյ քում, քահանայքս եւ ժողովուրդքս, մի՛ թողուր զմեզ ի ձեռաց քոց, եւ մի՛ տար աւտարաց զժառանգութիւնս քո, եւ ի կատարումն ծառայիս քո այս անուն քահանայի յանձն արա՛ զմեզ ուղափառ հաւատով, զի ի կեանս սորա դու պահեիր զմեզ, եւ պահեցես, եւ այժմ ոչ ես հեռի ի մենջ Սուրբ Հոգովդ եւ կենսաբեր խաչիւդ, պահեա՛ զմեզ, եւ զվե|Ա.211ա|րակացուս մեր՝ որ փոխեցաւ յաշխարհես, դասակից եւ աթոռակից արա՛ զսա հարց եւ հայրապէտաց, զի ահաւասիկ ողջունեալ ի մենջ, հրաժարի եւ ըստ հրամանի քում դառնա ի հող, ուստի ստեղծեր զնա: Դու, Տէ՛ր,* լե՛ր պահապան մարմնոյ սորա, եւ հանգիստ հոգւոյ սորա, եւ յոյս յարութեան ի մեծի աւուրն գալստեան քո, յորժամ գաս ժողովել զկենդանիս եւ զմեռեալս: Քրիստո՛ս, յո՛յս մեր եւ պսա՛կ պարծանաց հաւատացելոց, յիշեա՛յ զծառայս քո զփախճանեալս, եւ կացո՛յ յաջակողման քում, ընդ սիրելիս երկնաւոր Հաւրդ, ի ժառանգութիւնդ, ի ձեռն նորոգող Հոգւոյդ Սրբոյ, որում վայել է փառք, իշխանութիւն այժմ եւ մի[շտ]:

---

[1] *ՍԳ վկայեսցէ*
[2] *ՍԳ վկայէք*
[3] *ՍԳ խաւսեցայ*
[4] *Ս գայթագղեսջիք*
[5] *ՍԳ իւրեանց*
[6] *Գ հանիցեն*
[7] *Ս սպանանիցէ, Գ սպանանեսցէ*
[8] *Ս համարիցի*
[9] *Գ ձեզ + վասն անուան իմոյ*
[10] *Գ զի*
[11] *ՍԳ խաւսեցայ*
[12] *ՍԳ յիշեցէք թէ ես] յիշեսջիք էթէ*
[13] *ՍԳ ասացի ձեզ*
[14] *Գ ձեզն*

[1]* Աղաչեմ եւ՝ մեղուցեալ քահանայս Գիորգ, զորքասեր դասս քահանայից. յայդմ վայրի ինձ մնաց թողութիւն հայցեցեք յարդար դատաւորեն Քրիստոսէ. զի թերեւս ողորմեսցի բազմագութն Աստուած ինձ եւ ծնողաց իմոց, եւ զաւակաց իմոց եւ զիւգակցի իմոյ, եւ որք յիշեք յիշեալ լիջիք ի Տէր. ամեն:

|Ա.211բ| Եւ բառնան քահանայքն եւ մուծանեն յեկեղեցին եւ դնեն առաջի բեմին: Եւ այս կանոն կատարի սաղմոս ՃԺԷ· [19]· Բացէք ինձ զդրունս ար[դարու]թեան[2]:

179. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ԾՆՆԴՈՑ [ԻԸ· 10-15]. «Եւ ել Յակովբ[3] ի Ջրհորոյ անդի[4] երդման եւ գնաց ի Խառան: 11 Եւ եհաս[5] ի տեղի մի եւ ննջեաց անդ. զի[6] արեւն ի մուտս էր, եւ առ ի քարանց տեղւոյն այնորիկ[7] եւ եդ ընդ սնարս իւր, եւ ննջեաց ի տեղւոջն[8] յայնմիկ[9]: 12 Եւ ետես տեսիլ. եւ ահա սանդուխք[10] յերկրի, որոյ գլուխն հասանէր[11] յերկինս: Եւ հրեշտակք[12] Աստուծոյ ելանէին[13] եւ իջանէին ընդ նա[14]: 13 Եւ Տէր հաստատեալ կայր ի նմա: Եւ ասէ. Ես եմ[15] Աստուած Աբրահամու[16] հաւր քո[17], եւ Աստուած Իսահակա[18]. մի՛ երկնչիր. զի զերկիրդ յորում դու ննջես[19], քեզ տայց[20] զդա եւ զաւակի քում: 14 Եղիցի[21] զաւակ քո իբրեւ զաստեղս երկնից եւ իբրեւ[22] զաւազ երկրի[23]: Եւ ընդարձակեսցես ընդ[1] ծովակողմն[2] եւ ընդ արեւելս[3]. եւ ընդ հիւսիսի եւ ընդ հարաւ: Եւ աւրհնեսցին ի զաւակէ քումմէ ամենայն ազգք[4] երկրի[5]: 15 Եւ ահաւասիկ ես[6] ընդ քեզ եմ ամենայն ուրեք[7] ուր եւ երթիցես[8]: Եւ դարձուցից զքեզ յերկիրս յայս. եւ[9] ոչ թողից զքեզ մինչեւ արարից զամենայն[10] զոր խաւսեցայ ընդ քեզ»:

---

[1] սրա սկզբում կայ պարզ բաժանարար՝ աշխարհ բառի գաղափարագրին նման 8 զարդագիծ

[2] այս խրատի բոլոր «ա» գրերը բոլորգիր են

[3] Ս յակոբ

[4] ՍԳ անտի

[5] Ս հասեալ, Գ եհաս

[6] Ս բանզի

[7] Գ տեղւոյն, Ս տեղւոյն] տեղոյն այնորիկ

ՍԳ տեղւոջն

Ս յայնմ

Ս սանդուղք հաստատեալ

[11] Ս գլուխ իւր հասանէր մինչեւ] գլուխն հասանէր, Գ հասանէր մինչեւ

[12] ՍԳ հրեշտակք

[13] Գ զի ելանէին

[14] Գ նմայ

[15] Ս եմ տէր

[16] Ս աբրաամու

[17] Ս քոյ

[18] ՍԳ իսահակայ

[19] Ս դուք ննջեցեր, Գ ննջեցեր

[20] ՍԳ տաց

[21] ՍԳ եւ եղիցի

[22] ՍԳ > իբրեւ զաստեղս երկնից եւ իբրեւ

[23] Գ ծովու] երկրի

180. |Ա.212ա| ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱԵԱ[11] ՄԱՐԳԱՐԷ[Ի. ԾԲ· 7-10]. «Իբրեւ զի գեղեցիկ են ի վերա լերին[12] ոտք աւետարանչացն[13] բարութեան[14]. զի լսելի արարից զփրկութիւն[15] քո, ասել ցՍիովն էթէ[16] թագաւորեսցէ քեզ Աստուած: 8 Զի ձայն[17] պահապանաց քոց բարձրացաւ, եւ ի նոյն բարբառ առհասարակ ցնծասցեն[18], զի դէմ յանդիման տեսցեն զժամանակն[19] յորում ողորմեսցի Տէր Սիովնի: 9 Լերինք ցնծասցեն[20] աւերակաւքն հանդերձ Երուսաղէմի զցնծութիւն, զի ողորմեցաւ Սիովնի[21], եւ փրկեաց զԵրուսաղէմ: 10 Եւ յայտնեաց[22] Տէր զբազուկ[23] իւր[24] առաջի ամենայն ազգաց, եւ տեսցեն ամենայն ազգ[25] զփրկութիւն Աստուծոյ մերոյ»:

181. Ի ՄԱՂԱՔԻԱ[26] ՄԱՐԳԱՐԷԻ [Բ· 5-7]. Այսպես ասէ Տէր[27]. «Ուխտ[28] իմ որ ընդ նոսա իցէ[29] կենաց եւ խաղաղութեան, ես էտու[30] նմա[31] երկիւղ[32]՝ երկնչել յինէն[33] եւ յերեսաց անուան իմոյ խորշել: 6 Աւրենք ճշմարտութեան

---

[1] Գ ընդյարձակեսցես ի] ընդարձակեսցես ընդ

[2] Ս ընդարձակեսցի ի] ընդարձակեսցես ընդ ծովակողմն, Գ ծովակողմ

[3] Գ յարեւելս

[4] Գ ազգ

[5] Ս ի քեզ ամենայն ազգք երկրի՝ եւ ի զաւակի քում] ի զաւակէ քումմէ ամենայն ազգք երկրի

[6] Ս ~ ես ահաւասիկ

[7] Ա զամենայն տեղիս] ամենայն ուրեք

[8] Ս պահել զքեզ յամենայն ճանապարհս քո՝ յոր եւ գնասցես] զամենայն տեղիս ուր եւ երթիցես

[9] Ս զի] եւ

[10] Ս զամենայն ինչ

[11] Գ յեսայեայ

[12] ՍԳ վերայ լերանց

[13] ՍԳ աւետարանչի (Գ աւետարանչաց) համբաւուն խաղաղութեան, իբրեւ աւետարանչի] աւետարանչացն

[14] Ս բարութեանց

[15] Գ զփրկութիւնս

[16] Ս ցսիոն թէ, Գ թէ

[17] Գ ձայնք

[18] Գ ցնծասցուք

[19] Ս զժամանակ

[20] ՍԳ գոչեսցեն] ցնծասցեն

[21] Ս ողորմեցաւ նմա տէր, Գ ողորմեցաւ տէր] ողորմեցաւ սիովնի

[22] Ս յայտնի արասցէ

[23] Գ զբազուկս

[24] Ս իւր սուրբ

[25] Ս ծագք երկրի, Գ ազգք երկրի] ազգ

[26] Գ ընթերցուած ի մաղաքիայ

[27] Ս > այսպես ասէ տէր

[28] ՍԳ ուխտն

[29] ՍԳ նմա] նոսա իցէ

[30] ՍԳ ետու

[31] Գ նոցա] նմա

[32] Ս երկեւղ

[33] Գ > յինէն

ի[1] բերան նորա, եւ անիրաւութիւն ինչ[2] ոչ գտաւ ի շրթունս նորա, խաղաղութեամբ եւ ողորմութեամբ[3] գնաց ընդ իս. եւ զբազումս դարձոյց յանիրաւութենէ: 7 Զի շրթունք քահանայի[4] զգուշասցին գիտութեան. եւ աւրէնք[5] խնդ|Ա.212բ|րեսցեն ի նմանէ[6], զի հրշտակ[7] Տեառն ամենակալի է»:

182. ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ Ի ԿԱԹՈՂԻԿԷԻՑ[8] [Ա· Պետր· Ե· 1-4]. *«Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ զերիցակից եւ վկայք[9] չարչարանացն Քրիստոսի, որ եւ հանդերձեալ[10] փառացն որ[11] յայտնելոց է[12] հաղորդս[13]: 2 Արածիցէք[14] որ ի ձեզ հաւտ է յԱստուծոյ[15]. վերակացու լինել՝ մի՛ իբրեւ ակամա[16], այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի՛ զաւշաքաղութեամբ, այլ յաւժարութեամբ. 3 մի՛ իբրեւ տիրելով վիճակացն[17], այլ լինել աւրինակ հաւտին: 4 Զի յերեւել Հովուապետին՝ ընդունիցիք[18] զանթառամ փառաց պսակն»:*

Աղէլու ծ· [3]. *Ողորմեա՛յ ինձ, Աստուա՛ծ, [ըստ մեծի ողորմութեան քում]:*

183. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՀԱՆՆՈՒ[19] [Ժ·Զ· 5-28]. *Տէր մեր Յիսուս ասէ[20]. «Բայց արդ, երթամ ես առ առաքիչն իմ. եւ ոչ ոք ի ձէնջ հարցանիցէ[21] զիս, թէ յո՞[22] երթաս: 6 Այլ զի զայս խաւսեցայ[23] ընդ ձեզ, տրտմութիւն ելից զսիրտս ձեր: 7 Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ եթե ես երթամ. զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթե ես[24] երթամ, առաքեցից զնա առ ձեզ: 8 Եւ նա եկեալ, յանդիմանեսցէ զաշխար[հ]ս[25] վասն մեղաց, վասն[26] արդարութեան եւ վասն դատաստանի: |Ա.213ա| 9 Վասն մեղաց՝ զի ոչ հաւատան յիս: 10 Վասն արդարութեան՝ զի առ Հայր[27] երթամ, եւ ոչ եւս տեսանէք[1] զիս: 11 Վասն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է. 12 Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ, այլ ոչ կարէք հանդարտել[2] այժմիկ: 13 Զի[3] յորժամ եկեսցէ նախ[4] Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ զամենայն[5] ճշմարտութեամբ, զի ոչ է թէ յանձնէ ինչ խաւսեցա[6], այլ զոր լսեցի[7] խաւսեսցի, եւ զգալոցն պատմեսցի[8] ձեզ: 14 Նա զիս փառաւորեսցէ, զի յիմէ անդի[9] առնուցու եւ պատմեսցէ ձեզ[10]: 16 Փոքր մի, եւ ոչ տեսանեք[11] զիս. եւ ապա[12] սակաւիկ մի, տեսանեք[13] զիս. եւ ես երթամ առ Հայր[14]: 17 Ասեն ցնա[15] ոմանք յաշկերտաց անդի[16] ցմիմեանս. Զի՞նչ է այս, որ ասէ[17] ցմեզ, եթէ[18] փոքր մի՝ եւ ոչ տեսանիցէք[19] զիս, եւ ապա[20] սակաւիկ մի՝ տեսանէք[21] զիս, եւ էթէ[22] ես երթամ առ Հայր[23]: 18 Եւ ասէին, զի՞նչ իցէ այն փոքր մի[24] եւսն, չգիտեմք զինչ խաւսի: 19 Գիտաց Յիսուս էթէ կամին հարցանել[25]. եւ ասէ ցնոսա. Վասն այսորիկ խնդրեք ընդ միմեանս, զի ասացի, եթէ[26] փոքր մի՝ եւ ոչ տես|Ա.213բ|անէք զիս, եւ դարձեալ սակաւիկ մի[27] տեսանիցէք[28] զիս: 20 Ամէն, ամէն ասեմ ձեզ, զի լացջիք եւ ողբասջիք դուք, եւ աշխարհս[29] խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ տրտմութիւնն[30] ձեր յուրախութիւն եղիցի: 21 Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա. իսկ[31] յորժամ ծնանիցի[32] զմանուկն, ոչ[33] յիշէ զնեղութիւն[34] վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհս[35]: 22 Եւ*

---

[1] Ս էին ի

[2] Ս անաւրէնութիւն] անիրաւութիւն ինչ, Գ > ինչ

[3] Գ > եւ ողորմութեամբ, Ս ուղղութեամբ] ողորմութեամբ

[4] ՍԳ քահանային

[5] Ս աւրէնս

[6] Ս բերանոյ նորա] նմանէ

[7] ՍԳ հրեշտակ

[8] Գ կաթուղիկեայ թղ.

[9] Ս զերիցակից եւ վկայ, Գ զվկայս

[10] Գ հանդերձելոց

[11] ՍԳ > որ

[12] Գ էք] է

[13] Ս յայտնելոյ հաղորդ

[14] ՍԳ արածեցէք

[15] ՍԳ աստուծոյ

[16] ՍԳ ակամայ

[17] Գ վիճակին

[18] Ս ընդունիջիք

[19] Գ յովհաննու

[20] ՍԳ > տէր մեր յիսուս ասէ

[21] Ս հարցանէ

[22] Ս յո՞վ

[23] Ս խաւսեցայ

[24] ՍԳ > ես

[25] Ս զաշխարհ, Գ զաշխարհս

[26] ՍԳ եւ վասն

[27] ՍԳ հայր իմ

---

[1] Գ տեսանիցէք

[2] Գ տանդուրժել] հանդարտել

[3] Ս > զի

[4] Ս նա, Գ նայ] նախ

[5] ՍԳ ամենայն

[6] ՍԳ խաւսիցի

[7] ՍԳ լսիցէ

[8] ՍԳ պատմեսցէ

[9] Ս յիմմէ անտի

[10] ՍԳ ձեզ + 15 զամենայն ինչ զոր ունի հայր՝ իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ, թէ (Գ եթէ) յիմմէ անտի առնու՝ եւ պատմէ (Գ պատմեսցէ) ձեզ:

[11] Ս ոչ եւս տեսանիցէք, Գ տեսանիցէք

[12] Գ դարձեալ] ապա

[13] Ս եւ տեսանիցէք, Գ տեսանիցէք

[14] Գ > եւ ես երթամ առ հայր

[15] ՍԳ ասէին] ասեն ցնա

[16] ՍԳ անտի

[17] Ս զոր ասէս

[18] Ս թէ

[19] ՍԳ տեսանէք

[20] ՍԳ դարձեալ] ապա

[21] Ս եւ տեսանիցէք] տեսանէք

[22] Գ > էթէ

[23] ՍԳ առ հայր իմ երթամ] երթամ առ հայր

[24] Ս մեւս, Գ միւս] մի

[25] Ս ցնա հարցանել

[26] Ս թէ, Գ ձեզ թէ

[27] Ս մեւս եւս եւ] մի

[28] Գ տեսանէք

[29] Ս աշխարհ

[30] ՍԳ տրտմութիւն

[31] Ս այլ] իսկ

[32] ՍԳ ծնցի

[33] ՍԳ ոչ եւս

[34] ՍԳ զնեղութիւնն

[35] ՍԳ յաշխարհ

դուք այժմ տրտմութիւն ունիք, այլ դարձեալ տեսից զձեզ, եւ ուրախ լիցին[1] սիրտք ձեր[2], ոչ որ հանիցէ ի ձէնջ: 23 Եւ յայնմ աւուր զինեն[3] ինչ ոչ հարցանիցէք: Ամէն, ամէն ասեմ ձեզ. Զի զոր ինչ խնդրիցէք ի Հաւրէ իմմէ ի[4] յանուն իմ, տացի[5] ձեզ: 24 Մինչեւ ցայժմ ոչ ինչ խնդրիցեք[6] յանուն իմ. խնդրէցեք եւ առնուցուք. զի ուրախութիւնն ձեր լցեալ իցէ[7]: 25 Զայս առակաւք խաւսեցա[8] ընդ ձեզ. եկեսցէ ժամանակ, յորժամ ոչ[9] առակաւք խաւսեցա[10] ընդ ձեզ, այլ յայտնապես զՀաւրէն[11] ծանուցի[12] ձեզ: 26 Յայնմ աւուր խնդրեսջիք դուք[13] յանուն իմ, եւ ոչ ասեմ[14] |Ա.214ա| էթէ ես հարցից զՀայր վասն ձեր. 27 զի ինքնին[15] իսկ Հայր սիրէ զձեզ, զի դուք զիս սիրեցէք[16] եւ հաւատացէք էթէ ես[17] յԱստուծոյ ելի: 28 Ելի ի Հաւրէ եւ եկի յաշխարհս[18]. դարձեալ թողում զաշխար[հ]ս[19] եւ երթամ առ Հայր»:

Եւ քարոզէ սարկաւագն.

ԾՀԹ. Վասն քաւութեան մեղաց եւ թողութեան. յանցանաց հոգւոյ հանգուցելոյն զՏէր աղաչէ[սցուք]:

Վասն առաջնորդելոյ սմա ընդ նեղ դուռն անձկացեալ ճանապարհին զՏէր [աղաչեսցուք]:

Վասն ընդունելով զհոգի սորա ի խորանս սրբոց զՏէր աղ[աչեսցուք]:

Վասն լսելոյ սմա զձայն երկնաւոր կոչմանն եւ վերանալ ընդ առաջ փեսային զՏէր [աղաչեսցուք]:

Վասն դասելոյ սմա յաջակողման դասուն զՏէր աղաչեսցուք:

Վասն արժանի լինելով սմա անթառամ պսակին զՏէր ա[ղաչեսցուք]:

Վասն տալոյ սմա հանգիստ ի յերկնից յարքայութիւնն զՏէր [աղաչեսցուք]:

Վասն կարգելոյ զհոգի սորա ի տեղի անկելոց հրշտակացն զՏէր աղ[աչեսցուք]:

Վասն հոգոցն հանգ[ուցելոց], եւ եւս զանձինս ողորմեաց: Ծ. Տէր ողորմեա՛յ:

---

[1] Գ լինիցին
[2] ՍԳ ձեր + եւ զուրախութիւնն ձեր
[3] ՍԳ զիս] զինեն
[4] ՍԳ > ի
[5] Ս տացէ
[6] Ս խնդրեցեք, Գ խնդրեցէք
[7] ՍԳ եղիցի
[8] Ս խաւսեցայ
[9] Ս ոչ եւս
[10] Ս խաւսեցայց
[11] ՍԳ զհաւրէ
[12] ՍԳ պատմեցից] ծանուցի
[13] ՍԳ > դուք
[14] ՍԳ ասեմ ձեզ
[15] Ս ինքն
[16] Ս սիրիցէք
[17] Գ > ես
[18] ՍԳ յաշխարհ
[19] Ս զաշխարհ, Գ զաշխարհս

Եւ ելանեն քահանայքն ի բեմբն, եւ մինն ասէ զաղաւթս զայս.

ԾՉ. Տէ՛ր Աստուած, փրկի՛չ[1] մեր, Աստուա՛ծ յաւիտենական, արարի՛չ եւ իշխա՛ն հրշտակաց եւ մարդկան, դատաւո՛ր կենդանեաց եւ մեռելոց, աւրհնեմք զքո մարդասիրութիւնդ, որ վասն բազում ողորմութեան քո ոչ կարացեր անտես առնել զստեղծուածս՝ զվիրաւորեալս ի |Ա.214բ|[2] բանսարկու թշնամոյն, կամաւ Հաւր եւ Սուրբ Հոգոյն խոնարհեցար յարգանդ սուրբ կուսին, եւ հրաշափառ եւ սուրբ ծննդեամբդ զանիծիցն լուծեր զդատակնիք, ամենամեծդ Աստուա՛ծ, որ վասն մեր աղքատացար, փառաւորեմք զքո անմահ թագաւորութիւնդ, որ զկերպարանս ծառայի առեր, բեւեռեցար ի խաչին, եւ սուրբ եւ պատուական արեամբ քո զգերաւեալսն ի ծառայութենէ թշնամոյն ազատեցեր ի կեանս, երկրպագութիւն եւ փառս մատուցանեմք քեզ, հովի՛ւ բանաւոր հաւտի, Տէրդ մեր եւ փրկիչդ Յիսուս Քրիստոս, որ զցրուեալսն յանքերեւոյթ եւ յանմարմին դիւեն ժողովեցեր առ ի բնակութիւն սրբոց հրշտակաց, եւ պարսպեցեր նշանաւ սուրբ խաչիդ, կարգեցեր հովիւս տեսուչս եւ առաջնորդս՝ հով[ու]ել իմաստութեամբ զժողովուրդս քո: Իսկ ծառայս քո այս անուն, զոր շնորհեցեր մեզ ի ձեռն սուրբ առաքելոցն, այսաւր հրաժարեաց ի մենջ եւ դարձեալ ի հող՝ ուստի ստեղծեր զնա: Եւ մեք՝ մեղուցեալ ժողովուրդքս քո, ի տաճարի փառաց |Ա.215ա| սրբութեան աղաչեմք եւ խնդրեմք ի քէն, բարէխաւսութեամբ սուրբ Աստուածածնիդ եւ ամենայն սրբոց քոց, որք յաւիտենից հաճոյ եղեն քեզ, ընկա՛լ զբանս ողջունի սորա ի սուրբ եկեղեցոջս եւ առաջի սրբոյ սեղանոյս, հանգո՛յ զհոգի ծառայիս քո ի խորանս սրբոց քոց, թո՛ղ սմա զյանցանս իւր եւ զմտածութիւն սորա գործովք եւ խորհրդովք, զի դու, Տէ՛ր, միայն կարող ես թողուլ զմեղս, շնորհեա՛ սմա յարդար դատաւորութեան քում ընդ պետրոսեան աթոռակցութիւնսն վերապատուիլ, եւ զմեզ զամենիսեան աւրհնեա՛ հոգեւոր աւրհնութեամբ քով, զի սրբեալք ի մեղաց, գոհութեամբ փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւ[իտեանս]:

Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպագե[սցուք]:

ԾՉԱ. Ի մէջ եկեղեցոյ քո եւ առաջի սրբոյ սեղանոյս քեզ երկիր պագանեմք եւ աղաչեմք զանհաս զթութիւնդ քո, որ ես երկայնա-

---

[1] Յ ձրկիչ (վրէպ)
[2] Ա ի |Ա.214բ| <ի>

միտ առ ամենախեան, Քրիստոս Աստուա՛ծ մեր, ընկա՛լ եւ այժմ, Տէ՛ր բարերար, ողորմութեամբ քով զխնդրուածս մեր, եւ հե՛ղ զաղբիւրաբար զառատաբուխ շնորհ[ս] քո |Ա.215բ| ի գանձս յայս պատուական, որ է տաճար կամաց քոց սրբոց, զի ի ձեռն ածմանս այսորիկ, զոր յանուն քո ածանեմք սրբով իւղովս այսորիկ, ընկցին նշխարք ոսկէրաց սորա զաւրութիւն բժշկութեան, եւ հալածումն սեւագունդ դիւացն, եւ մեծ պարծանք քրիստոնէութեան, եւ յոյս մեծապես սուրբ խոստովանութեան, որ ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Եւ բառնան քահանայքն եւ հանեն ի բեմն. Եւ դնեն առաջի սրբոյ սեղանոյն եւ ասեն սաղմոս ողբաձայն ԻԲ. [5]· կցուրդ. *Պատրաստ արարեր առաջի իմ [սեղան]:* Եւ առնու քահանայն զսուրբ միռոնն եւ հեղու նախ ի ճակատն՝ որպես եւ սուրբն Դենեսոս Աթենացի պատուիրէ՝ աշակերտ սուրբ առաքելոյն Պաւղոսի. քանզի կարգաւ մեկնէ զխորհուրդն, զոր մի՛ ոք ի յայսպիսի կարգ քրիստովնէութեան[1], հեթանոսական գարշանաւք աղարտեսցէ, զի առաքելական է կանոնս: Եւ համբուրեն զսեղանն որպես յերեւաց վիճակելոյն եւ զվախճանեալն, եւ զխորանն եւ զամենայն սրբութիւնսն, եւ զսուրբ Աւետարանն որ ի գիրկսն:

Եւ ի համբուրելն ասեն.

Ողջո՛յն քեզ, սուրբ եկեղեցի՛.

Ողջո՛յն քեզ, սեղա՛ն սրբութեան.

Ողջո՛յն ձեզ, դաս[2] քահանա|Ա.216ա|ութեան. ես վերստին ճանապարհորդեսցի առ արարիչն երկնից:

Սաղմոս [ՃԻԱ· 1]. *Ուրախ եղէ ես որք ասէին ցիս՝ ի տուն Տեառն ե[րթիցուք]:*

Եւ տուն առ տուն զողջոյնն: Եւ իջուանեն ի բեմեն եւ համբուրեն զբոլոր եկեղեցին: Եւ ի համբուրելն երթան առաջի սրբոյ[3] սեղանոյն: Եւ համբուրեն զմիմեանս քահանայքն կարգաւ, եւ երկրպագելով վախճանելոյն: Համբուրեն նախ զաջն[4] եւ զԱւետարանն եւ զաջ քահանային. եւ իջուանեն ի բեմեն. փոխեն զսաղմոսն եւ զողջոյնն: Եւ ասեն սաղմոս. [ՁԶ· 1]· *Հիմունք նորա [ի լերինս ի սուրբս նորա].*

Փոխ[5]. *Ողջո 'եզ, մանգո՛ւնք սուրբ եկեղեցո*

Ողջո՛յն ձեզ, հաւատացեալ եղբա՛րք ի Քրիստոս.

Ողջո՛յն ձեզ, համաւրեն ժողովո՛ւրդք, ես վերստին ճանապարհորդեսցի առ արարիչն երկնից:

---

[1] Յ *քրիստոնէութեան*

[2] Յ *դասք*

[3] Յ > *սրբոյ*

[4] Յ *զխաչն*] *զաջն* (նախընտրելի՝ *զխաչն*)

[5] *Ա փոխ*՝ սիւնակամիջին

Սաղմոս [ՃԼԸ· 1]· *Տէր փորձեցեր զիս եւ ծան[եար զիս]:*

Փոխ.[1] *Ահա հրաժարեմ ի քէն, սուրբ եկեղեցի՛, ահա մեկնիմ ի ձենջ, սիրելի եղբա՛րք, ի կոչումն վերանորոգողին իմոյ Քրիստոսի.*

Փոխ[2]. *Աղաւթս արարէ՛ք վասն իմ, հա՛րք իմ եւ եղբա՛րք եւ որդի՛ք, եւ աւրհնեսցէ զձեզ Քրիստոս արքայն երկնից.*

Պահեսցէ զձեզ հաստատուն ի հաւատս իւր՝ մինչեւ յաւր սահմանեալ կետ կոչման իւրոյ. եւ խաղաղութիւն Տեառն եղիցի ընդ ձեզ յաւիտենից յաւիտեանս ամէն:

|Ա.216բ| Կցուրդ. Հրաժարելով քարոզէ սարկաւագն. *Վասն գտանելոյ:*

Եւ ասէ զաղաւթս զայս.

ՃՋԲ. *Արարչագործ Աստուա՛ծ, որ ի ձեռն աստուածային խորհրդոյ քո զառաջաստեղծ մարդոյն զկերպարանսն կերպարանակից եւ լուսենմանակից քեզ արարեր եւ լուսեղէն փառաւք զարդարեցեր, եւ պատկերաւն փառաւորակից գոլով հրեղինացն, եւ ծածկեցաւ հողեղէն մարմինն լուսեղէն փառաւքն, իսկ աթոռովն վերագոյն քան զհրշտակս, որում ցանգաւին բազմութիւն վերնոցն, խանդացաւ թշնամին ընդ փառս նորա, մահաբեր ճաշակմամբն պտղոյն խաբեաց եւ ընկեաց ի փառացն, եւ էհան ի վայելչական դրախտէն, իսկ նորա զինքն տեսեալ մերկացեալ ի լուսեղէն սգեստիցն, սաղարթապատ լինելովք ընդ տնկոյ դրախտին: Իսկ նորա որ լուծեալ եր ի պատուիրանէն, եւ արտաքս ելեալ եր ի դրախտէն, եւ ոչ եգիտ վշտակցութեանն մխիթարութիւն, էթէ չեր ասացեալ քո կենարարիտ էթէ՝ «Հող էիր, եւ ի հող դարձցիս»* [Ծն. Գ. 19], *ապա այնուհետեւ ցանգայր մահու հասանել, զի մահուամբն զկենդանութիւն գտցէ:* |Ա.217ա| *Իսկ դու, Տէ՛ր, գթացեալ ի յանարատ ձեռին քո ստեղծուածս, ոչ կարացեր անտես առնել զնմանութիւն պատկերի քո կորուստ նախաստեղծ մարդոյն, խոնարհեցար յերկնից՝ ի լուսեղէն աթոռոյն, ի հայրական ծոցոյ, զմարմին ծառայի ի կուսեն ճշմարտապես յանձն առեր, զհողաստեղծն լուսեղէն փառաւքն ծածկեցեր, եւ զլուսեղէն աստուածութիւնդ ի հողեղէն կերպարանս նմանակիցս արարեր քոաստեղծ պատկերին, զզրպարտեալս ի պատրողէն առաջին սգեստիւն զարդարեցեր, եւ զմեզ նորոգեցեր ընդ նախահաւրն մերում Ադամա՝ քո կենսաբեր չարչարանաւքդ ի վերա կենսաբեր փայտին, եւ արբուցեր մեզ յանմահական բաժակեն՝ ի կողահոս աղբեւրեդ, զմեռելութիւնս մեր կենդանացուցեր անշնչութեամբ քո ի* վերայ խաչին, եւ իջանելով քո ի գերեզման, եւ յարութեամբ քո ի մեռելոց, որ դրունք դժոխոց զգա մի՛ յաղթահարեսցեն» [Մտթ. ԺԶ. 18]: Եւ այժմ, Տէ՛ր բարերար, ծառայս քո այս, զոր արժանաւորեցեր առնուլ զպատիւ քահանայութեան՝ զպսակ պարծանաց, ընդրեցեր զսա լինել սպասաւոր ընդ որդիսն Որոտման:

---

[1] *Ա փոխ*՝ սիւնակամիջին

[2] *Ա փոխ*՝ սիւնակամիջին

Սա նմանեալ Մելքիսեդեկի եւ լցեալ շնորհիւն Աստուծոյ:

Սա նմանեալ Մովսեսի նախագոյն մարգարէին՝ առաջնորդ լինելով ժողովրդեանն, ի մթապատ տեղացն եգիպտացւոց մուծանել ի տուն Տեառն եւ ի գաւիթս Աստուծոյ, եւ ո՛չ արեամբ զլուց եւ նոխազաց, այլ արեամբ Քրիստոսի մտաներ ի սրբութիւն սրբութեանցն:

Սա նմանեալ Ահարոնի վակասակիր պատմուճանին եւ ակամբք երկոտասանիւք ընդելուզեալք, այլ երկոտա|Ա.218ա|սան առաքելոցն փառատրութեան համեմատեալ, եւ ո՛չ ակն յանդիմանութեան վակասուն կրելով, որով զմահ եւ զկեանս ժողովրդեանն ճանաչեր, այլ զմարմին եւ զարիւնն Քրիստոսի ի վերայ բազկաց իւրոց բերելով, որով զմեղս եւ զանաւրենութիւնս մեր քաւելով:

Սա նմանեալ Սամուէլի, արկեալ զիւրեաւ զկրկնոցն եւ զեփոդն [Հմմտ. Ա. Թագ. Բ. 18-19], քահանայական իշխանութեամբն, եւ յանշարժ տապանակին հով[ու]եր զժողովուրդն Տեառն:

Սա տաճարի Տեառն գործող:

Սա սեղանոյ Տեառն պաշտաւնեա:

Սա պատարագիչ Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Սա բաշխիչ մարմնոյ եւ արեանն Տեառն.

Սա մկրտիչ ծնիցելոյ աւազանին մկրտութեան ջրով եւ հոգւով:

Սա պսակիչ զուգակցելոց յամուսնութիւն՝ տեառնագրութեամբ սուրբ խաչին եւ բոլորեալ պսակաւն:

Սա մեղաւորաց դարձուցիչ՝ կոչելով յապաշխարութիւն քաղցրալուր բարբառով:

Սա ընթերցող մարգարէական տառիցն:

Սա քարոզող ժողովրդեան՝ նմանեալ առաքելոցն:

Սա տ ախմբող մարտիր|Ա.218բ|ո յիշատակ սուրբ ճգնաւորացն

Սա յիշատակ ն[ն]ջեցելոցն հաշտարար պատարագաւն:

Սա փառաւորիչ Սուրբ Երրորդութեանն՝ վերնականացն նմանեալ:

Եւ այժմ, Տէ՛ր, առ քեզ կոչեցեր, եւ խափանեցաւ պաշտաւն սորա ի սուրբ եկեղեցւոյ քումէ եւ

ի ժողովրդենէ. վասն որոյ աղաչեմք զքեզ. բազմագութ Տէ՛ր, ընկա՛լ զհոգի սորա ընդ ընդրեալսն եւ ընդ կամարարսն անուանտ քո սրբոյ, խառնեա՛ զսա ի թիւ աշակերտաց քոց, Տէ՛ր: Եւ էթե յանցեալ ինչ իցէ սորա ըստ մարդկային բնութեանս եւ ըստ պատրողին խաբէութեանցն, թո՛ղ, Տէ՛ր, սմա յանճառ եւ յահեղ միւսանգամ գալստեանդ, յորժամ նշան սուրբ խաչին յարեւելից ճառագայթէ՝ կարապետ գալստեան քո, Տէ՛ր, եւ զաւրութիւնք երկնից շարժին, եւ զաւրք հրշտակաց առաջի քո ընթանան, եւ հրշտակապետն ազդեցութիւն առնէ՝ զփող գալստեանն, եւ ազդ առնէ յաւիտենից ննջեցելոցն եւ զարթուցանէ ի մահահանգիստ քնոյ, եւ յառնեն ի մեռելոց ի գերեզմանաց հոգիքն իւրեանց, եւ զգեն|Ա.219ա|ուն զիւրաքանչիւր զպատկեր, եւ եկեալ կան առաջի ահեղ ատենին եւ ի տիեզերականին հրապարակին, եւ յայնմ աւուր յահեղին յանուանէ կոչեա՛յ զծառայս քո եւ ընդ աջմէ քումէ կացո՛յ՝ աւդաթռիչ թեւաւք թեւապարել ի վերինն Երուսաղէմ, ի մայր մեր ամենեցուն, ի լուսեղէն առագաստին յաւիտենական եւ յանանցանելի կեանսդ, եւ զաշակերտակից սորա եւ զյղարկիչս եւ զյարմարող ծառայիս քո, հանդերձ զերկրպագող ժողովուրդս, արժանաւորեա՛յ երանաւէտ կոչման քո, Քրիստոս Աստուա՛ծ մեր, զի դու ես Տէր կենաց եւ Աստուած ողորմութեան, եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ՝ Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս ա[մէն]:

Եւ յետ այսորիկ ասեն կցուրդ. *զԱհեղ* եւ *զՄիւսանգամ գալուստն*: Եւ ամենայն ժողովուրդքն համբուրեն՝ որպես եւ քահանայքն: Եւ բառնան քահանայքն եւ հանեն ի դուրս: Եւ եթե եպիսկոպոս ոք իցէ, զաթոռն եւ զգաւազանն յեկեղեցին թողուն՝ մինչեւ այլ յաջորդէ[1] Աստուած: Եւ ասեն այլ կցուրդ. *Ուրախ լե՛ր, հա՛յր քահանայապետ*: Եւ առ դրանն այս կանոն կատարի. սաղմոս ՃԽԲ·[8]· կցուրդ. *Ցո՛յց ինձ ճանապար[հ]ս յոր եւ գնաի*[2]:

184. |*Ա.219բ*| ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ [Ի· 17-38]. «Եւ Մեղիտէ[3] յղեալ յԵփէսոս[4], կոչեաց զերիցունս եկեղեցւոյն: 18 Եւ իբրեւ եկին առ նա[5], ասէ ցնոսա. Դուք ձեզէն գիտէք յաւրէն[6] յառաջմէ[7] յորմէ հետէ[8] եկի յԱսիա[9], որպէս[1] զամենայն ժամանակն[2] եղե. 19 ծառայել[3] Տեառն[4] ամենայն խոնարհութեամբ եւ բազում արտասուաք[5] եւ պեսպես[6] փորձութեամբ[7]՝ որ դիպեցան ինձ ի նենգութեան[8] հրէից[9]: 20 Որպէս ոչ ինչ զանգիտեցի[10] յաւկտակարացն պատմել[11] ձեզ, եւ ուսուցանել[12] հրապարակաւ, եւ առտնին. 21 տալ վկաութիւն[13] հրէից եւ հեթանոսաց զապաշխարութիւնն[14]՝ որ առ Աստուած, եւ հաւատայն որ առ Տէր[15] Յիսուս Քրիստոս: 22 Եւ արդ, ահաւասիկ ես կապեալս հոգով[16], երթամ յԵրուսաղէմ. եւ որ ինչ[17] ընդ իս անցք[18] անցանելոց են[19]՝ չգիտեմ: 23 Բայց[20] Հոգին Սուրբ ըստ քաղաքաց քաղաքաց[21] վկաէ[22] ինձ՝ թէ[23] կապանք եւ նեղութիւն[24] մնան քեզ: 24 Այլ ոչ ինչ[25] իւիք համարիմ զանձն իմ պատուական[26], որպէս կատարել[27] զընթացս իմ ուրախութեամբ. եւ զպաշտաւնն իմ[28] զոր առի ի Տեառնէ Յիսուսէ[29], վկա[30] լինել Աւետարանին[31] շնորհացն Աստուծոյ: 25 Եւ արդ, աւասիկ գիտեմ[32], էթէ ոչ եւս տես|Ա.220ա|անելոց էք[33] զերեսս իմ ամենիքեան դուք[34], յորոյ շրջեցա[35] քարոզել զարքաութիւնն[36] Աստուծոյ[37]: 26 Վասն որոյ վկաութիւն[38] դնեմ ձեզ յաւուրս[39] յայսմիկ, զի սուրբ եմ ես[40] յարենէ ամենեցուն ձեր[41]: 27 Քանզի ոչ խորշեցա ի պատմել[42] ձեզ զամենայն

---

[1] Ց + (յաջողեսցէ)

[2] Ս ճանապարհ յոր գնացից

[3] Ս ի մելիտեայ, Գ ի մելիտէէ

[4] Գ յեգւպտոս] յեփէսոս

[5] Գ > առ նա

[6] Ա յաւրէ

[7] Ս յաւրէ յառաջնմէ

[8] Ս > հետէ

[9] Ս յասիայ, Գ ես յասիայ

---

[1] ՍԳ որպէս ընդ ձեզ
[2] Ս ժամանակսն, Գ ժամանակս
[3] ՍԳ ծառայել
[4] Ա աստուծոյ] տեառն
[5] Ա արտասուաք
[6] Ս > պեսպես
[7] ՍԳ փորձութեամբք
[8] Ս նենգութեանց, Գ > նենգութեան
[9] Գ հրէիցն
[10] Ա զանգիտացի
[11] Ս զանգիտեցի յաւգտակարացն չպատմել
[12] Ս ուսուցանել ձեզ
[13] ՍԳ վկայութիւն
[14] Ս զապաշխարութեանն
[15] Ս զհաւատոցն որ ի տէր մեր, Գ զհաւատոն որ ի տէր մեր] զհաւատոն որ առ
[16] Ս կապեալ հոգւովն, Գ կապեալ հոգւով
[17] Ս ինչ անդ
[18] Ս > անցք
[19] Ս է, Գ իցէ] են
[20] Ս բայց զի
[21] ՍԳ քաղաքաց] քաղաքաց քաղաքաց
[22] ՍԳ վկայէ
[23] Ս եւ ասէ, եթէ] թէ, Գ եթէ] թէ
[24] ՍԳ նեղութիւնք
[25] Ս եւ ոչ] ոչ ինչ, Գ > ինչ
[26] Գ պարտական] պատուական
[27] Ս զկատարեալ
[28] ՍԳ > իմ
[29] Ս յիսու իսուսէ
[30] ՍԳ վկա
[31] ՍԳ աւետարանի
[32] ՍԳ ահաւասիկ գիտեմ ես
[33] ՍԳ տեսանէք
[34] ՍԳ ~ դուք ամենեքեան
[35] ՍԳ յորս շրջեցայ
[36] Գ զաւետարանն, Ս զարքայութիւնն
[37] Գ > աստուծոյ
[38] Ս որոյ եւ վկայութիւն
[39] Ս յաւուր
[40] Ս > եւ
[41] Ս > ձեր
[42] ՍԳ խորշեցայ ի պատմելոյ

կաման[1] Աստուծոյ: 28 Զգո՛յշ կացեք անձանց եւ ամենայն հաւտից, յորում եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս, հովել[2] իմաստութեամբ[3] զժողովուրդս[4] Տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով: 29 Քանզի գիտեմ իսկ[5] ես, էթէ յետ իմոյ ելանելոյ յաշխարհէ[6]՝ գայցեն գայլք յապշտակողք[7], որ ոչ խնաեսցեն[8] հաւտից: 30 Եւ ի ձենջ յարիցեն արս որք[9] խաւսեսցին թիւրս[10], ձգել զաշակերտեալսն[11] զկնի իւրեանց: 31 Վասն այսորիկ արթուն կացէ՛ք, եւ յիշեցէ՛ք[12], զերկեամ մի զցայգ եւ զցերեկ ոչ դադարեսցի[13] արտասուաք խրատել զմի մի իւրաքանչիւր ի ձենջ[14]: 32 Եւ արդ, յանձն առնեմ զձեզ Աստուծոյ եւ բանի շնորհաց նորա, որ կարող[15] է շինել եւ տալ վկաութիւն[16] ընդ սուրբս ամենայն[17]: 33 Արծաթոյ՝ կամ ոսկո[18]՝ կամ հանդերձի[19]՝ ոչ ուրուք ի ձենջ ցանգացա[20]. 34 դուք ինքնին վկաէք[21], զի զպետսն[22] |Ա.220բ| իմ, եւ որոց ընդ իս[23] էին՝ պաշտեցին ձեռքս այս: 35 Եւ զամենայն ինչ ցուցից[24] ձեզ. էթէ որպէս[25] պարտ է վաստակել, եւ դարմանել զաղքատս[26]. եւ յիշել զբանն Յիսուսի[27] զոր[28] ասաց. Երանի է մանաւանդ տալ քան առնուլ[29]: 36 Եւ զայս իբրեւ ասաց, եդ ծունդր ամենեքումք[30] հանդերձ՝ եկաց[31] յաղաւթս: 37 Եւ[32] բազում լալին եղեւ ամենեցուն. եւ անդեալ[33] զպարանոցաւն Պաւղոսի, համբուրէին զնա. 38 մորմոքէին մանաւանդ[34] ի վերայ բանիցն[35] զոր ասեր[36], էթէ[37] ոչ եւս

---

[1] ՍԳ կամս
[2] Գ հովուել
[3] ՍԳ > իմաստութեամբ
[4] Ս հովուել զժողովուրդ
[5] ՍԳ > իսկ
[6] Ս մեկնելոյ] ելանելոյ յաշխարհէ, Գ յաշխարհէս
[7] ՍԳ յափշտակաւղք ի ձեզ
[8] Ս խնայեսցեն
[9] Ս արք որ, Գ որ
[10] Ս խաւսիցին թեւրս, Գ թիւրս
[11] Ս զաշակերտսն
[12] ՍԳ յիշեցէ՛ք՝ զի
[13] ՍԳ դադարեցի
[14] Գ ոք ի ձէնջ, Ս > ի ձենջ
[15] Ս կարաւղն
[16] ՍԳ ձեզ ժառանգութիւն] վկաութիւն
[17] Ս սուրբսն ամենեսեան
[18] ՍԳ ոսկւոյ
[19] Ս հանդերձից
[20] ՍԳ ցանկացայ
[21] ՍԳ գիտէք] վկաէք
[22] ՍԳ զպէտս
[23] Ս իսն
[24] ՍԳ ցուցի
[25] Ս զի այսպէս] էթէ որպես, Գ այսպէս] որպէս
[26] ՍԳ զհիւանդս] զաղքատս
[27] ՍԳ տեառն յիսուսի
[28] ՍԳ զոր ինքն իսկ
[29] Ս երանելի է մանաւանդ տալն քան առնուլն, Գ տալն քան զառնուլն
[30] Ս եդեալ ծունր ամենեքումբք
[31] Գ կենաց] եկաց
[32] ՍԳ > եւ
[33] ՍԳ անկեալ
[34] Գ եւ մորմոքէին (> մանաւանդ)
[35] Ս բանին
[36] Ա ասաց
[37] Ս թէ

տեսանելոց են զերեսս նորա. եւ յղարկեցին[1] *զնա ի նաւ անդր»:*

185. **Ի ԿՈՐՆԹԱՑՈՑ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ**[2]. Կշ֊յ· Գ· 1-4]. *«Եթե յարերուք ընդ Քրիստոսի, ապա զվերինն խնդրեսցեք*[3], *ուր Քրիստոս*[4] *նստի ընդ աջմե Աստուծոյ.* 2 *զվերինն խորհեցարուք, մի՛ զայս որ ի*[5] *յերկրի աստ է:* 3 *Քանզի մեռարուք, եւ կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած:* 4 *Այլ*[6] *յորժամ*[7] *յայտնեսցի կեանքն ձեր*[8], *յայնժամ եւ դուք ընդ նմա յայտնեսջիք փառաւք»:*

Աղեղու ՃԲ·[1]· *Աւրհնեա անձն իմ զՏէր:*

186. **ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՀԱՆՆՈՒ**[9] [ԺԶ· 33· ԺԷ· 1 – ԺԸ· 1]. *Տէր մեր Յիսուս ասէ*[10]. *«*33 *Զայս խաւսեցա*[11] *ընդ ձեզ, զի ընդ իս զխաղաղութիւն*[12] *ունիցիք. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք*[13], *այլ քաջալերեցարուք* |Ա.221ա| *զի ես յաղթեցի աշխարհի»:* [ԺԷ·] 1 *Զայս իբրեւ ասաց*[14] *Յիսուս, ամբարձ զաչս իւր յերկինս եւ ասէ. «Հայր, հասեալ է ժամ, փառաւորեա՛ զՈրդի քո, զի եւ Որդի քո փառաւորեսցե զքեզ:* 2 *Որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ, զի ամենայնի զոր ետուր նմա, տացէ զկեանսն*[15] *յաւիտենականս:* 3 *Այս են յաւիտենական կեանքն*[16], *զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտդ*[17] *Աստուած, եւ զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս:* 4 *Ես զքեզ փառաւորեցի յերկրի. զգործն*[18] *կատարեցի՝ զորս*[19] *ետուր յիս*[20] *զի արարից:* 5 *Եւ այժմ փառաւորեա՛յ*[21] *զիս, Հա՛յր, առ ի քեն, փառաւքն զոր ունէի յառաջ քան զլինել*[22] *աշխարհի առ ի քեն:* 6 *Յայտնեցի*[23] *զանուն քո մարդկան, զորս*[24] *ետուր ինձ յաշխարհէ. քո էին, եւ ինձ ետուր զնոսա. եւ զբանն*[25] *քո պահեցին*[26]*:* 7 *Եւ*[27] *արդ, գիտացին*[1]*՝ էթէ*[2] *զամենայն ինչ զոր ետուր ինձ,* 8 *ետու նոցա. եւ նոքա ընկալան եւ ծանեան ճշմարտութեամբ՝ էթէ*[3] *առ ի քեն ելի. եւ հաւատացին*[4] *էթէ դու առաքեցեր զիս:* 9 *Արդ, ես վասն նոցա աղաչեմ, եւ ոչ վասն աշխար*|Ա.221բ|*հի աղաչեմ. այլ վասն սոցա*[5] *զորս ետուր*[6] *ինձ. զի քո էին*[7]*:* 10 *Եւ ամենայն որ ինչ իմ է, քո է*[8]. *եւ փառաւորեալ եմ ի նոսա:* 11 *Եւ ես ոչ եւս եմ յաշխարհի, եւ նոքա յաշխարհի են, եւ ես առ քեզ գամ, Հա՛յր: Սուրբ պահեա՛ զնոսա յանուն քո, որով ետուր*[9] *ինձ, զի իցեն*[10] *մի, որպէս եւ մեք մի եմք:* 12 *Մինչ էի ընդ նոսա յաշխարհի*[11], *ես պահէի զնոսա յանուն քո, որով ետուր*[12] *ինձ. եւ պահեցի*[13]. *եւ ոչ ոք ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորստեան, զի գիրն լցցի:* 13 *Բայց արդ, առ քեզ գամ, եւ զայս խաւսիմ*[14] *յաշխարհի, զի ունիցին զուրախութիւնս*[15] *իմ լիով յանձինս*[16] *իւրեանց:* 14 *Ես ետու նոցա զբանն*[17] *քո, եւ աշխարհս ատեաց զնոսա. զի չեն յաշխարհէ, որպէս եւ ես չեմ յաշխարհէ:* 15 *Ոչ զայս աղաչեմ՝ զի բարձցես զնոսա յաշխարհէ, այլ զի պահեսցես զնոսա ի չարէ:* 16 *Յաշխարհէ աստի չեն, որպես եւ ես չեմ յաշխարհէ:* 17 *Սուրբ արա՛ զնոսա ճշմարտութեամբ քով*[18], *զի քո բանդ ճշմարտութիւն է:* 18 *Որպէս զիս առաքեցեր յաշխարհս*[19]. 19 *եւ ի վերայ նոցա*[20] *սուրբ առնեմ զանձն իմ,* |Ա.222ա| *զի եղիցին եւ նոքա սրբեալք ճշմարտութեամբ:* 20 *Այլ ոչ*[21] *վասն նոցա միայն աղաչեմ, այլ*[22] *վասն ամենայն հաւատացելոց՝ բանիւ*[23] *նոցա յիս.* 21 *զի ամենիքեան*[24] *մի իցեն, որպէս դու, Հա՛յր, յիս, եւ ես ի քեզ, զի եւ նոքա ի մեզ իցեն: Զի աշխարհս*[25] *հաւատասցէ, էթէ դու առաքեցեր զիս:* 22 *Եւ ես զփառսն զոր էտուր*[26] *ինձ՝ ետու նոցա, զի*

---

[1] *Ս յուղարկեցին*
[2] *Գ պաւղոսի առաքելոյ ի ըողոսացւոց թղթոյն է ընթերցուածս*
[3] *ՍԳ խնդրեցէք*
[4] *Ս քրիստոսն*
[5] *ՍԳ > ի*
[6] *ՍԳ իսկ] այլ*
[7] *ՍԳ յորժամ քրիստոս*
[8] *Գ > կեանքն ձեր*
[9] *Գ յովհաննու*
[10] *ՍԳ > տէր մեր յիսուս ասէ*
[11] *ՍԳ խաւսեցայ*
[12] *ՍՑ խաղաղութիւն*
[13] *Գ > յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք*
[14] *ՍԳ խաւսեցա ւաց*
[15] *Գ զկեանս*
[16] *ՍԳ կեանք*
[17] *Ս ճշմարիտ*
[18] *Գ զգործսն*
[19] *ՍԳ կատարեցի զոր*
[20] *ՍԳ ցիս*
[21] *ՍԳ փառաւորեա*
[22] *ՍԳ զլինելն*
[23] *ՍԳ յայտնեցի*
[24] *Գ զոր*
[25] *Գ զբան*
[26] *ՍԳ պահեցին*
[27] *ՍԳ > եւ*

---

[1] *ՍԳ գիտացին*
[2] *Գ թէ*
[3] *Ս թէ*
[4] *ՍԳ հաւատացին*
[5] *ՍԳ նոցա] սոցա*
[6] *ՍԳ ետուրն*
[7] *Գ քայ էին + եւ ինձ ետուր զնոսա*
[8] *ՍԳ ~ եւ որ ինչ իմ է, ամենայն քո (Գ քոյ) է + եւ որ ինչ քո (Գ քոյ) է, այն իմ է*
[9] *Ս ետուրն*
[10] *ՍԳ եղիցին] իցեն*
[11] *ՍԳ ~ յաշխարհի ընդ նոսա*
[12] *Ս ետուրն*
[13] *ՍԳ պահեցի*
[14] *Ս եւս խաւսիմ*
[15] *Ս զուրախութիւնն, Գ զուրախութիւն*
[16] *Ա յանձինս<ինս>*
[17] *Գ զբան*
[18] *ՍԳ քով*
[19] *ՍԳ յաշխարհ +եւ ես առաքեցի զնոսա յաշխարհ*
[20] *ՍԳ նոցա ես*
[21] *Գ ոչ թէ*
[22] *Ս այլ եւ*
[23] *Ա բա\իւ, Ս բանիւն*
[24] *Ս ամենեքին*
[25] *ՍԳ զի եւ աշխարհ*
[26] *ՍԳ ետուր*

իցեն մի՝ որպէս եւ մեք մի եմք: 23 *Ես ի նոսա, եւ դու՝ ի*[1] *յիս, զի եղիցին*[2] *կատարեալք ի մի*[3]*, եւ սիրեցի զնոսա՝ որպէս դու զիս սիրեցեր:* 24 *Հա՛յր, զորս ետուր*[4] *ինձ, կամիմ՝ զի ուր եսն իցեմ*[5]*, եւ նոքա ընդ իս իցեն*[6]*, զի տեսանիցեն զփառսն զիմ, զոր ետուր ինձ*[7]*. զի սիրեցեր զիս յառաջ քան զլինել*[8] *աշխարհի:* 25 *Հա՛յր, արդարեւ*[9] *աշխարհս*[10] *զքեզ ոչ ծանեաւ, այլ ես զքեզ ծանեա*[11]*, եւ նոքա ծանեան, եթէ դու առաքեցեր զիս:* 26 *Եւ ծանուցի նոցա զանուն քո, եւ ծանուցից. զի սէրն զոր սիրեցեր զիս՝ ի նոսա իցէ, եւ ես ի նոսա:* ԺԸ. 1 *Զայս իբրեւ ասաց Յիսուս, ել աշակերտաւքն հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրովնի, ուր*[12] *էր պարտէզ, յորս*[13] *եմուտ ինքն եւ աշակերտաւքն իւր»:*

|*Ա.222բ*| Եւ քարոզէ. *Վասն ի վերուստ:*

Եւ ասէ զաղաւթս զայս.

ԾՋԳ. *Եկեալ եմք երկիր պագանել առաջի սուրբ փառաց աթոռոյ քո, եւ ի խորանի փառաց սրբութեան քո, զպաղատանս զոր մատուցանեմք առաջի քո գթութեանդ, զքահանայս զորս կոչեցեր յառաջնորդութիւն ժողովրդեան քում, քանզի քո հրամանաւդ կոչէցեր յաւծումն, եւ կատարեալ ժամանակս ըստ հրամանի քում, քա՛ղցր եւ բարերա՛ր Տէր, զպատարագս եւ զնուէրս զոր մատուցեալ է վասն մեղաց առաջի քո, եւ զյիշատակս ննջեցելոց, զոր ի վերայ սրբոյ սեղանոյ քո կատարեալ է, ընկա՛լ ի հաճոյս քո, եւ ողորմեա՛յ ըստ մեծի ողորմութեան քում, եւ հոգոյ սորա առաջնորդեա՛ ի յերկիր ուղիղ, որ տանի ի կեանսն յաւիտենականս, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ:*

Խաղաղութիւն ամենեց[ուն]. Աստուծոյ երկրպ[ագեսցուք].

ԾՋԴ. [illegible] *ամենեցուն, փրկի՛չ աշխարհի վասն մեղաւորաց խոնարհէցար յանճառ փառաց եւ մարմնացար յանարատ կուսէն, եւ եկիր կամաւ ի չարչարանս, եդար ի* |*Ա.223ա*| *գերեզմանի, իջեր ի մէջ դժոխոց եւ զթշնամին կապեցեր ի յանլոյծ կապանսն, յարեար ի մեռելոց եւ մեզ նորոգումն խոստացար ի միւսանգամ գալստեան քո: Յիշեա՛յ, Տէ՛ր, եւ զծառայս քո*

---

[1] *ՍԳ > ի*
[2] *Գ իցեն*
[3] *ՍԳ մի: + եւ գիտասցէ աշխարհ՝ եթէ (Գ թէ) դու առաքեցեր զիս*
[4] *Ս ետուրն, Գ ետուր*
[5] *Ս ես եմ] եսն իցեմ*
[6] *ՍԳ ~ իցեն ընդ իս*
[7] *Ս ետուրն ցիս, Գ ցիս] ինձ*
[8] *ՍԳ զլինելն*
[9] *Ս արդար եւ*
[10] *ՍԳ աշխարհ*
[11] *Ս ծանեայ*
[12] *Ս ուր] որ*
[13] *ՍԳ յոր*

զայս, որ ի սնոտի կենցաղոյս փոխեցաւ, եւ զքահանայութիւնս զոր կատարեաց յաշխարհիս՝ ընկա՛լ քեզ ի հաճոյս, եւ տո՛ւր սմա բաժին ընդ արժանաւորս եւ ընդ սիրելիս անուանտ քո սրբոյ, որք սրբութեամբ պաշտէցին զքեզ, եւ զոր ինչ յանցեալ իցէ սորա՝ բանիւք կամ գործովք, կամ մտածութեամբ, թո՛ղ սմա, քանզի դու ես ողորմած եւ մարդասէր Տէր, եւ քեզ միայնոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ:

Եւ բառնան քահանայքն եւ տանին ի ճակատ խորանին յարեւելս. Եւ ասեն սաղմոս ՃԻԲ. [ՃԻԳ. 8]. *Աւգնութիւն ե մեզ յանուանէ Տեառն Աստուծոյն*[1]*:*

187. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ [ԺԳ. 43-52].

Տէր մեր Յիսուս ասէ[2]*. «Յայնժամ ծագեսցին արդարքն*[3] *իբրեւ զարեգակն յարքայութեանն*[4] *երկնից: Որ ունիցի ականջս՝ լսելով*[5] *լուիցէ:* 44 *Դարձեալ՝ նման է արքայութիւնն*[6] *երկնից գանձի ծածկելոյ* |*Ա.223բ*| *յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թաքոյց*[7]*. եւ ի խնդութենէ անտի*[8] *երթեալ վաճառեաց*[9] *զամէնայն ինչ զոր ունէր, եւ գնեաց*[10] *զագարակն զայն:* 45 *Դարձեալ՝ նման է արքայութիւնն*[11] *երկնից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս.* 46 *եւ գտեալ մի պատուական մարգարիտ, երթեալ վաճառեաց զամէնայն ինչ զոր ունէր եւ գնեաց զայն մարգարիտն*[12]*:* 47 *Դարձեալ՝ նման է արքայութիւնն*[13] *երկնից ուռկանի արկելոյ ի ծով եւ յամենայն ազգաց ժողովելոյ,* 48 *զոր իբրեւ լցաւ, հանեալ ի ցամաքն*[14]*, եւ նստեալ ժողովեսցին*[15] *զբարին ի բարի*[16] *յամանս*[17]*, եւ զխոտանն ի բաց ընկեցին:* 49 *Այնպէս եղիցի կատարած*[18] *աշխարհիս*[19]*. ելցեն հրշտակք*[20] *եւ մեկնեսցեն զչարս ի միջոյ արդարոցն*[21]*,* 50 *եւ արկցեն զնոսա ի հնոցն*[22]*. անդ եղիցի լալ եւ կրճտել*[23] *ատամանց*[24]*:* 51 *Ասէ ցնոսա Յիսուս. Իմացարո՞ւք*

---

[1] *Ս որ արար] աստուծոյն*
[2] *ՍԳ > տէր մեր յիսուս ասէ*
[3] *ՍԳ ~ արդարքն ծագեսցին*
[4] *Ս յարքայութեան*
[5] *ՍԳ լսելոյ*
[6] *Ս արքայութիւն*
[7] *Գ թագոյց*
[8] *ՍԳ անտի*
[9] *Ս երթայ վաճառէ*
[10] *Ս ունի եւ գնէ*
[11] *Ս արքայութիւն*
[12] *Ս մարգարիտ*
[13] *Ս արքայութիւն*
[14] *ՍԳ ցամաք*
[15] *ՍԳ ժողովեցին*
[16] *Ս ժողովեցին զբարի բարին*
[17] *Ա ամանս*
[18] *ՍԳ ի կատարածի*
[19] *Գ աշխարհի*
[20] *ՍԳ հրեշտակք*
[21] *ՍԳ արդարոց*
[22] *ՍԳ հնոց հրոյն] հնոցն*
[23] *ՍԳ կրճել*
[24] *Գ ատամանցն*

զայդ[1] ամենայն: Ասեն ցնա. Այո[2]: 52 Եւ նա ասէ ցնոսա. Վասն այսորիկ ամենայն դպիր աշակերտեալ է[3] արքայութեանն[4] երկնից, նման է առն[5], որ հանէ ի գանձէ իւրմէ զհինն եւ զնորն[6]»:

|*Ա.224ա*| Եւ քարոզէ. *Վասն ի գիշերի:* Եւ տեառնագրեն զդին, եւ բառնան քահանայքն եւ տանին ի կո[ղ]մն հարաւոյ. Եւ ասեն սաղմոս ՃԽԵ· [5]· կցուրդ. *Երանի ազգի որում[7] Տէր Աստուած Յակոբա [աւգնական է նմա]:*

188. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ [Ը· 34-38]. *Տէր մեր Յիսուս[8] «կոչեցեալ առ ինքն զժողովուրդն աշակերտաւքն հանդերձ եւ[9] ասէ ցնոսա. Եթէ ոք կամի գալ զկնի իմ, ուրասցի զանձն իւր եւ առցէ[10] զխաչ իւր եւ եկեսցէ զկնի իմ: 35 Զի որ կամեսցի[11] զանձն իւր կեցուցանել[12], կորուսցէ զնա. եւ որ կորուսցէ զանձն իւր վասն Աւետարանին, ապրեցուսցէ զնա: 36 Զի՞նչ աւգուտ իցէ[13] մարդոյ՝ եթէ զաշխարհս[14] ամենայն շահեսցի, եւ զանձ[15] իւր տուժեսցէ[16]: 37 Զի[17] զի՞նչ տացէ փրկանս[18] փոխանակ անձին իւրում[19]: 38 Եթէ[20] ոք ամաւթ համարեսցի զիս եւ զբանս իմ ի շնացող[21] եւ ի մեղաւոր ազգիս այսմիկ[22], եւ Որդի մարդոյ յամաւթ արասցէ զնա՝ յորժամ գայցէ[23] փառաւք Հաւր իւրոյ եւ ամենայն հրշտակք ընդ նմա[24]»:*

Եւ տեառնագրեն զդին. եւ բառնան քահանայքն եւ տանին ի կողմն արեւմտից. եւ ասեն սաղմոս ՃԼԲ· [3]· *Տէր անդ պատրաստեաց զաւրհ[նութիւն, եւ զկեանսն յաւիտենից]:*

189. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ [ԻԲ· 24-30]. *«Եղեւ եւ հակառակութիւն ի մէջ նոցա, էթէ ո՞[25] ի նոց|Ա.224բ|անէ համարեսցի[26] մեծ: 25 Եւ նա ասէ ցնոսա. Թագաւորք ազգաց տիրեն նոցա, եւ որ իշխեն[27] նոցա՝ բարերարք[28] կոչին.*

---

[1] ՍԳ զայս

[2] ՍԳ այո տէր

[3] ՍԳ > է

[4] Ս արքայութեան

[5] ՍԳ առն տանուտեառն

[6] Ս զնոր եւ զհին, Գ զնորն եւ զհին

[7] Ս ում] ազգի որում. ՃԽԵ· 5 Երանի ում Տէր Աստուած Յակոբայ աւգնական է նմա, Համմ. ԼԲ· 12· Երանի ում Տէր Աստուած Յակոբայ աւգնական է նմա

[8] Ս եւ] տէր մեր յիսուս

[9] Ս > եւ

[10] Ս բարձցէ] առցէ

[11] Ս կամիցի

[12] Ս ապրեցուցանել զանձն իւր

[13] Ս է] իցէ

[14] Ս զաշխարհ

[15] Ս զանձն

[16] Ս տուժեսցի

[17] Ս քանզի] զի

[18] Ս մարդ] փրկանս

[19] Ս իւրոյ

[20] Ս զի որ] էթէ

[21] Ս շնացաւղ

[22] Ս յայսմիկ

[23] Ս եկեսցէ

[24] Ս հրեշտակաց սրբոց] ամենայն հրշտակք ընդ նմա

[25] Ս թէ ո՞վ, Գ թէ ո՞] էթէ ո՞

[26] Ս համարիցի

[27] Գ որք իշխենն, Ս իշխենն

[28] Գ բարեկամք

26 այլ դուք ո՛չ այնպէս. որ[1] մեծն է ի ձենջ[2]՝ եղիցի իբրեւ[3] զկրսեր[4], եւ առաջնորդն իբրեւ[5] զսպասաւոր[6]: 27 Ո՞վ է մեծ, բազմեա՞լն՝ էթէ սպասաւորն. ո՞չ ապաքէն՝ բազմեալն. բայց ես եմ ի միջի ձերում իբրեւ սպասաւոր[7]: 28 Եւ դուք էք[8] որ ցանգաիք[9] ընդ իս ի փորձութիւնս իմ[10]. 29 եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս եւ Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւնն[11]. 30 զի ուտիցէք եւ ըմպիցէք[12] սեղան[13] իմ յարքայութեան[14] իմում. եւ նստջիք[15] յերկոտասան աթոռսն[16] դատել զերկոտասան ազգն Իսրայէղի[17]»:

Եւ տեառնագրեն զդին եւ տանին ի կողմն հիւսիսոյ: Եւ ասեն սաղմոս ՃԼԲ· [=ՃԼԳ· 3]· *Աւրհնեսցէ զմեզ[18] Տէր ի Սիովնէ, այն որ արար զերկ[ինս եւ զերկիր]:*

190. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱԹԵՈՍԻ [ԻԵ· 31-46]. *«Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառաւք Հաւր իւրոյ[19] եւ ամենայն հրշտակաց սրբոց[20], յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց, 32 եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք երկրի[21], եւ մեկնեսցէ զնոսա ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնես///[22]|Գ.301բ|[ցէ զաւղիսն[23] յայծեաց]»:*

191. [ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ՉՈՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ[24]. ԺԳ· 14-21. *«Եւ Եղիսեէ[25] հիւանդացաւ հիւանդութիւն], /// |Ա.225ա| որով[26] եւ մեռաւ իսկ: Եւ էջ առ նա Յովաս արքա Իսրայէղի[27], եւ էլաց[28] ի վերայ նորա[29] եւ ասէ. Հա՛յր, հա՛յր, կառքդ[30] Իսրայէղի[31] եւ հեծեալք նորա[32]: 15 Եւ ասէ ցնա Եղիսէէ[33]. Ա՛ռ դու զաղեղն քո եւ*

---

[1] Ս այլ որ

[2] Ս ձեզ

[3] Գ որպէս] իբրեւ

[4] Ս զկրտսերն

[5] Գ որպէս] իբրեւ

[6] ՍԳ զսպասաւորն

[7] Ս զսպասաւոր

[8] Գ > էք

[9] Ս ցանգ կայիք, Գ ցանկայիք

[10] Գ > իմ

[11] Ս զարքայութիւն

[12] Գ ըմպիցէք

[13] ՍԳ ի սեղան

[14] Ս յարքայութեանն

[15] Ս նստիցիք

[16] Ս աթոռ, Գ աթոռս

[17] Ս ազգ իսրայէլի

[18] Ս զձեզ] զմեզ

[19] Ս իւրովք] հաւր իւրոյ

[20] Ս հրեշտակք ընդ նմա] հրշտակաց սրբոց

[21] Ս > երկրի

[22] Ա այստեղ՝ 224-5 թերթերի միջեւ մէկ պրակ՝ 8 թերթ, ընկած. ընթերցմանս շարունակութիւնը՝ ըստ Գ.301բ-2բ տե՛ս Յաւելուածում, ընդ նոյն 190 համրաւ. Կոնիբիր, էջ 262՝ ունի այստեղ եղածի պէս

[23] Ս զաւդիս

[24] Գ ընթերցուած ի չորրորդ թագաւորութենէ

[25] Ս եղիսեէ (Գ եղիսէէ)

[26] ՍԳ որ] որով

[27] Ս արքայ իսրայէլի, Գ արքայ իսրայէղի

[28] ՍԳ ելաց

[29] Ս երեսաց նորա

[30] Գ կառք

[31] Ս իսրայէլի

[32] Գ հեծեալքդ դորայ

[33] Ս եղիսեէ

զնետս[1]. եւ առ զաղեղն իւր[2] եւ զնետս: 16 եւ ասէ ցարքայն Իսրայէղի[3]. Մո՛ւտ ընդ աղեղամբ[4] ձեռաւք քովք[5]: Եւ էմուտ[6] ընդ աղեղն[7] ձեռաւք իւրովք: Եւ եդ Եղիսէէ[8] զձեռս[9] իւր ի վերա[10] ձեռաց արքային 17 եւ ասէ. Բա՛ց զպատուհանդ որ[11] ընդ արեւելս. եւ էբաց[12]. եւ ասէ[13]. Ձգեա՛. եւ ձգեաց. եւ ասէ. Նետ փրկութեան Տեառն եւ նետ փրկութեան ընդդէմ ասորոց[14]. եւ հարցես զասորիս յԱփեկա[15] մինչեւ ի սպառ: 18 Եւ ասէ ցնա[16] Եղիսէէ[17]. Ձգեա՛ եւ հա՛ր զգետինդ: Եւ հար[18] արքայն երիցս եւ եկաց: 19 Եւ տրտմեցաւ ի վերայ նորա այրն Աստուծոյ եւ ասէ. Էթէ[19] հարեալ էիր հնգիցս կամ վեցիցս, յայնժամ հարկանէիր զասորիս[20] մինչեւ ի սպառ. եւ արդ, երիցս հարցես զասորեստանայսն[21] մինչեւ ի սպառ[22]: 20 Եւ մեռաւ Եղիսէէ[23], եւ թաղեցին զնա: Եւ մեկնազէնսն[24] Մովաբու եկին ի[25] յերկիրն ի[26] գալ տարոյն[27]: 21 Եւ եղեւ ի թաղել նոցա զայր մի. եւ ահա տեսին զմեկնա|Ա.225բ|զենսն[28] եւ ընկեցին զայրն ի գերեզմանսն[29] Եղիսէի. եւ գնաց[30] մերձեցաւ յոսկերսն Եղիսէի եւ կենդանացաւ. եւ էկաց[31] ի վերայ ոտից իւրոց»:

192. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՅԵՍԱՅԵԱՅ[32] ՄԱՐԳԱՐԷԷ [Կ· 20 - ԿԱ· 4]. *Այսպես ասէ Տէր[33]. «Եւ կատարեսցին աւուրք սգոյ քո[34]: 21 Եւ ժողովուրդ իմ[35] ամենեւին[36] արդար, եւ յաւիտեան[37] ժառանգեսցեն զերկիր[38]՝ պահել զնորատունկս[1] գործոց ձեռաց իւրոց[2] ի փառս: 22 Սակաւաւորն հազարաւոր եղիցի, եւ կրսերն[3] ի[4] յազգ մեծ, զի ես՝ Տէր ընդ ժամանակս ժամանակս ժողովեցից զնոսա: [ԿԱ·] 1 Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ աւծ իսկ զիս՝ աւետարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւք, քարոզել գերեաց զթողութիւն եւ կուրաց տեսանել, 2 կոչել ամպ[5] Տեառն ընդունելի եւ աւր հատուցման Աստուծոյ մերոյ, մխիթարել զամենայն սգաւորս, 3 տալ սգաւորաց Սիովնի զփառս[6]. փոխանակ մոխրոյն՝ աւծումն ուրախութեան. եւ սգաւորացն[7] հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոյն[8] վհատութեան: [9]* Եւ կոչեսցին նոքա ազգ[10] արդարութեան՝ տունկ Տեառն ի փառս: 4 Եւ շինեսցեն զաւերակն[11] յաւիտեն|Ա.226ա|ից, եւ զառաջագոյն[12] աւերեալսն կանգնեսցեն. եւ նորոգեսցեն զքաղաքս աւերեալս ազգաց մինչեւ յազգս»:*

193. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ[13] ՅԵՐԵՄԻԱ ՄԱՐԳԱՐԷԷ [Ողբ Գ· 19-29. 55-60]. *«Յիշեսցի[14] յաղքատութենէ իմէ[15] եւ ի հեծեծանաց[16] իմոց. դառնութիւն[17] եւ բարկութիւն 20 եղեւ[18] ինձ[19] միանգամայն, ձանձրացաւ յիս անձն իմ. 21 զայս ինչ կարծեցի[20] ի սրտի իմում, վասն այնորիկ եւ համբերեցի[21] նմա: 22 Ողորմութիւնք[22] Տեառն անսպառ են, եւ ոչ նուազեն[23] գթութիւնք նորա: 23 Ի նորոգումն առաւաւտուն բազմանա[24] ճշմարտութիւնք նորա[25]: 24 Վասն այսորիկ[26] ակն կալայց նմա: 25 Բարերար[27] է Աստուած ի վերայ համբերողաց իւրոց[28]. անձն[29] որ խնդրէ զնա՝ 26 բարի է որ համբերէ նմա ճշմար-*

---

[1] *Ս զնետս քո*
[2] *Ս > իւր*
[3] *Ս իսրայէլի*
[4] *Ս աղեղնդ, Գ աղեղն*
[5] *Ս քովք, Գ քո*
[6] *ՍԳ եմուտ*
[7] *Ս աղեղնն*
[8] *Գ եղիսէ*
[9] *Ս եղիսեէ զձեռն*
[10] *ՍԳ վերայ*
[11] *Ս որ է*
[12] *ՍԳ եբաց*
[13] *Ս ասէ եղիսեէ*
[14] *Ս ասորւոց*
[15] *ՍԳ յափեկ*
[16] *Ս > ցնա*
[17] *ՍԳ եղիսեէ (Գ եղիսէէ) + առ դու քեզ նետս եւ առ: եւ ասէ ցարքայն իսրայէլի (Գ իսրայէղի)*
[18] *ՍԳ եհար*
[19] *ՍԳ եթէ*
[20] *Ս զասորիս, Գ զասորիսս*
[21] *Ս զասորիս, Գ զասորիսս*
[22] *ՍԳ > մինչեւ ի սպառ*
[23] *Ս եղիսեէ*
[24] *ՍԳ մեկնակս ն*
[25] *Գ > ի*
[26] *Ս > ի*
[27] *ՍԳ տարւոյն*
[28] *Ս մեկնակաղէնքն*
[29] *ՍԳ գերեզմանն*
[30] *Ս գնաց եւ, Գ գնացին*
[31] *Ս կանգնեցաւ] էկաց, Գ եկաց*
[32] *Գ յեսայայ*
[33] *Ս > այսպես ասէ տէր*
[34] *Ս քոյ*
[35] *Ս քո] իմ*
[36] *Գ ամենեւիմբ*
[37] *Ս յաւիտեանս*
[38] *Ս զերկիր. եւ*

---

[1] *Ս զնորատունկ*
[2] *Ս իւրեանց*
[3] *ՍԳ կրտսերն*
[4] *ՍԳ > ի*
[5] *ՍԳ ամ] ամպ*
[6] *ՍԳ փառս*
[7] *Գ սգաւորաց*
[8] *ՍԳ ոգւոյն*
[9] *Գ > եւ կոչեսցին... ազգաց մինչեւ յազգս*
[10] *Ս ազգք*
[11] *Ս զաւերակսն*
[12] *Ս զյառաջագոյն*
[13] *Գ յերեմիայ*
[14] *Ս զէ յիշեցի, Գ յիշեցէք*
[15] *Ս իմմէ*
[16] *Ս հալածանաց] հեծեծանաց*
[17] *Գ դառնութիւն, նենգութիւն*
[18] *Ս յուշ եղեն] եղեւ, Գ եղեն*
[19] *Գ > ինձ*
[20] *Գ զի ինձ կարգեցի] զայս ինչ կարծեցի, Ս կարգեցի*
[21] *Ս այսորիկ համբերից, Գ այսորիկ եւ համբերեցից] այնորիկ եւ համբերեցի*
[22] *Ս խէթ ողորմութիւնք*
[23] *Գ նուազին*
[24] *Ս առաւաւտու բազմանայ, Գ առաւաւտու բազմանան*
[25] *ՍԳ ճշմարտութիւն (Գ ճշմարտութիւնք) քո տէր] ճշմարտութիւնք նորա. ՍԳ քո + 24 ասաց անձն իմ բայ (Գ > բայ) բաժին իմ է նա (Գ նայ)*
[26] *ՍԳ այնորիկ*
[27] *Ս տէթ բարերար*
[28] *Գ > իւրոց*
[29] *Ս զի անձն, Գ եւ անձն*

տութեամբ, եւ[1] հանգիցէ[2] նա[3] ի փրկութեան Տեառն: 27 Բարի է մարդոյ[4] որ առնու[5] զլուծ խոնարհութեան ի մանգութենէ[6] իւրմէ: 28 Նստցի[7] միայն լռիկ ի տան իւրում. զի անձամբ[8] առ ի[9] յանձն զլուծ քո[10]: 29 Եւ[11] տացէ հողոյ զբերան իւր, վասն զի կա[12] յոյս. 55 Կարդացի[13] ես[14] զանուն քո, Տէ՛ր, ի գփոյ[15] տառապանաց, 56 եւ լուաւ[16] ձայնի իմում. մի՛ թաք|Ա.226բ|ուցաներ[17] զունկն[18] քո ի խնդրուածոց[19] իմոց, այլ ընդարձակեա՛յ[20] ինձ եւ փրկեա՛յ[21] զիս: 57 Դու յաւգնել ինձ նաեա՛ց[22], եւ[23] ասացեր. զմաս[24] յորում աւուր կարդացես[25] առ իս. մի՛ երկիցես[26]: 58 Դատ արա՛ ինձ[27], Տէ՛ր, զդատաստան անձին իմոյ[28]: 59 Տեսեր, Տէ՛ր[29], զխռովութիւնս[30] իմ. դատեցեր[31] զդատաստանս[32] իմ: 60 Տեսե՞ր զամենայն իրաւունս իմ[33]. հայեցար յամենայն խռովութիւնս[34] իմ»:

194. Ի ԿՈՐՆԹԱՑՈՑ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔ[ԵԼՈՅ[35]. Ա· Կորնթ· ԺԵ· 51-56]. *«Արդ, խորհուրդ մի[36] ասեմ ձեզ. ամենիքեան ննջեսցուք[37], այլ ոչ ամենիքեան[38] նորոգեսցուք 52 յանդարձակի[39] յական թաւթափելոյ[40] ի փող յետին. քանզի փող հարկանի, եւ մեռեալք յառնեն[41] առանց ապականութեան, եւ մեք նորոգեսցուք: 53 Զի պարտ է ապականու-*

---

[1] *Գ > եւ*

[2] *Ս հանգչի*

[3] *Գ > նա*

[4] *Գ մարդւոյ*

[5] *Ս առնուլ] որ առնու*

[6] *ՍԳ մանկութենէ*

[7] *Ս յոդ նստցի, Գ նստիցի*

[8] *Ս անձամբ իւրով*

[9] *ՍԳ > ի*

[10] *Գ տեառն] քո*

[11] *ՍԳ > եւ*

[12] *ՍԳ կայ*

[13] *Ս կոփ կարդացի*

[14] *Գ > ես*

[15] *ՍԳ գբոյ*

[16] *ՍԳ դու լուար*

[17] *Գ թողուցաներ*

[18] *Ս զանուն] զունկն*

[19] *Գ խնդրուածաց*

[20] *ՍԳ ընդարձակեա*

[21] *ՍԳ փրկեա*

[22] *Ս մերձեցար, Գ մերձեցիր] նաեաց*

[23] *Գ առ իս] եւ*

[24] *Ս բամ, Գ բայց] զմաս*

[25] *Գ կարդացեր*

[26] *Գ երկնչիցիր*

[27] *Ս ոէչ դատեա, Գ դատեցար] դատ արա՛ ինձ*

[28] *ՍԳ իմոյ + փրկեցեր (Գ + տէր) զկեանս իմ*

[29] *Ս > տէր*

[30] *Գ զխռովս*

[31] *ՍԳ դատեցար տէր*

[32] *Գ զդատաստան*

[33] *Գ եւ] տեսե՞ր զամենայն իրաւունս իմ*

[34] *ՍԳ խորհուրդս] խռովութիւնս*

[35] *Գ պաւղոսի առաքելոյ ի կորընթացւոց թղ″*

[36] *Գ իմ] մի*

[37] *ՍԳ ամենեքեան ննջեսցուք (Գ ննջեցարուք)*

[38] *Ս ոչ եթէ ամենեքեան, Գ ամենեքեան*

[39] *ՍԳ յանկարծակի*

[40] *ՍԳ թաւթափել*

[41] *Ս յարիցեն*

թեանս այսմիկ սգենուլ[1] զանապականութիւն, եւ մահկանացուիս այսմիկ սգենուլ[2] զանմահութիւն[3]: 54 Այլ յորժամ մահկանացուս այս սգեսցի[4] զանմահութիւն, եւ ապականութիւնս զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն որ գրեցաւ. Թէ[5] ընկլաւ մահ յաղթութիւն քո[6]: 55 Ո՞ւր է[7] դժոխք խայթոց[8] քո [Ովսէ· ԺԳ· 14]: *56 Խայթոցք[9] |Ա.227ա| մահու՝ մեղք են, եւ զաւրութիւն[10] մեղաց՝ աւրէնք: 57 Այլ շնորհքն[11] Աստուծոյ, որ ետ մեզ[12] յաղթութիւն ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:*

Ալելու. սաղմոս Լ·[2]· *Ի քեզ Տէր յուսացայ, [մի՛ ամաչեցից յաւիտեան]:*

195. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՀԱՆՆՈՒ[13] [Զ· 35-39· 41-44]. *«Տէր մեր Յիսուս ասէ[14]. Ես եմ հացն կենաց՝ իջեալ յերկնից[15]. որ գա[16] առ իս՝ ոչ քաղցիցէ, եւ որ հաւատայ յիս՝ ոչ երբեք[17] ծարաւեսցի: 36 Այլ ասացի ձեզ՝ էթէ տեսէք[18] զիս, եւ ոչ հաւատայք: 37 Զի[19] զամենայն զոր ետ[20] ինձ Հայր, առ իս եկեսցէ. եւ որ գա[21] առ իս, ոչ հանից[22] արտաքս: 38 Զի իջի ես յերկնից՝ ո՛չ զի զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ որ առաքեացն զիս: 39 Այս են կամք Հաւր իմոյ, որ առաքեացն զիս[23]. զի զամենայն զոր ետ ինձ[24] Հայր՝ ոչ կորուսից ի նոցանէն[25], այլ յարուցից զնա յաւուրն յետնումն[26]:* [27]* *41 Տրտնջէին զնմանէ հրեայքն[28], զի ասաց՝ էթէ[29]. Ես եմ հացն կենաց[30] իջեալ ի[31] յերկնից. 42 եւ ասէին. Ո՞չ սա է որդին Յուսեփու[32], զո-*

---

[1] *ՍԳ զգենուլ*

[2] *Ս զգենուլ*

[3] *Գ > եւ մահկանացուիս այսմիկ սգենուլ զանմահութիւն*

[4] *Ս զգեցցի, Գ զգեցի*

[5] *ՍԳ եթէ*

[6] *Ս քո + 55 ո՞ւր է մահ յաղթութիւն քո*

[7] *Գ են] է*

[8] *Ս խայթոցքն*

[9] *Ս խայթոց*

[10] *Գ զաւրութիւնք*

[11] *Ս շնորհք*

[12] *Գ > մեզ*

[13] *Գ յովհաննու*

[14] *ՍԳ ասէ ցնոսա յիսուս] տէր մեր յիսուս ասէ*

[15] *ՍԳ > իջեալ յերկնից*

[16] *ՍԳ գայ*

[17] *Ս երբէք*

[18] *Գ տեսանէք*

[19] *ՍԳ > զի*

[20] *ՍԳ տայ*

[21] *ՍԳ գայ*

[22] *Գ հանից զնայ*

[23] *Գ որ յերկինս է] որ առաքեացն զիս*

[24] *ՍԳ ցիս] ինձ*

[25] *Ս նմանէ, Գ նոցանէ*

[26] *ՍԳ յետնում + 40 Այս են կամք Հաւր իմոյ. զի ամենայն որ տեսանիցէ զորդի եւ հաւատայցէ (Գ հաւատասցէ) ի նա, ընկալցի զկեանսն (Գ զկեանս) յաւիտենականս. եւ ես՝ յարուցից զնա յաւուրն յետնում (Գ յետնումն)*

[27] *Գ > տրտնջէին զնմանէ… յարուցից զնա յաւուրն յետնումն* (41-44 համարք)

[28] *Ս հրէայքն*

[29] *Ս թէ*

[30] *Ս > կենաց*

[31] *Ս > ի*

[32] *Ս յովսեփու*

րոյ մեք իսկ[1] զհայրն գիտեմք զորա եւ զմայրն[2]: 43 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ[3]. Մի՛ քրթմնջէք ընդ միմեանս. 44 ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ Հայրն՝ որ առաքեացն զիս[4], ձգեսցէ զնա |Ա.227բ| առ իս[5], եւ ես յարուցից զնա յաւուրն յետնումն[6]»:

Եւ քարոզէ. *Վասն գտանելոյ:*

Եւ ասէ զաղօթս զայս.

ՃՁԵ. *Աւրհնեալ ես, Տէ՛ր Աստուած մեր, որ մարդասիրութեամբ քով առեր հող յերկրէ եւ ամենասուրբ ձեռաւք քո արարեր զմարդն ըստ նմանութեան քո պատկերիդ, եւ վասն յանցանաց նորա մահ տիրեցուցեր նմա, ասելով. «Հող էիր, եւ ի հող դարձցիս» [Ծն. Գ. 19]: Եւ արդ, ծառայս քո դարձաւ ի հող, ուստի ստեղծեր զսա, աղաչեմք զքեզ, Տէ՛ր բարերար, առաքեա՛յ զՀոգիդ քո Սուրբ եւ աւրհնեա՛ զհողս զայս, զի մտանելով ի սմա ոսկերաց ծառայիս քո այս անուն քահանայի՝ ընկալցի զբարեաւք հանգիստ յառատ բարերարութենէդ քումմէ, եւ առաքեա՛ զհրշտակ խաղաղութեան քո եւ ընկա՛լ զսա յաւթեւանս սրբոց քոց. եւ թո՛ղ սմա զամենայն յանցանս զոր մեղաւ առաջի քո՝ գիտութեամբ եւ անգիտութեամբ, քանզի հաւատաց յամենասուրբ Երրորդութիւնդ ի ձեռն միածնի Որդոյ քո՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ունի իշխանութիւն դատել զկենդանիս եւ զմեռեալս, |Ա.228ա| զի յամենայնի գոհանալով փառաւորեսցէ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւի[տեանս]:*

Խաղաղութիւն. Աստուծոյ երկրպա[գեսցուք]:

ՃՁԶ. *Աստուա՛ծ ճշմարտութեան եւ Տէ՛ր ողորմութեան, հայեա՛ց ի պատրաստ բնակութենէ քումմէ ի պաղատանս ժողովրդեան քո, զոր մատուցանեմք հաւատով վասն ծառայիս քո այս անուն քահանայի, զի դու կարգեցեր զմարդիկ հողեղէն սպասաւորս անտանելի փառաց էութեանդ քո, դու կոչեցեր զնախամարգարէն ի մորենոյն [illegible]իւք քո, եւ առաքեցեր զնա [illegible]իչ ժողովրդեան քո, դու ընդրեցեր զԱհարովն եւ զորդիս նորա ի պաշտաւն սրբութեանց եւ փառաւորեցեր զնա մեծարեալ, աւծմամբ եւ վակասակիր պատմուճանաւն քոյին տեսչութեամբ, եւ հրամաեցեր նմա ելանել ի լեառնն եւ աւանդէցեր զհոգի նորա առ քեզ, եւ անդ[7] ամրա-*

---

[1] *Ս > իսկ*

[2] *Ս գիտեմք զհայրն] զհայրն գիտեմք զորա եւ զմայրն, Ս + իսկ արդ՝ զիարդ ասէ՝ եթէ ես յերկնից իջի*

[3] *Ս ասէ ցնոսա*

[4] *Ս զիս առաքեաց*

[5] *Ս > առ իս*

[6] *Ս յետնում*

[7] Ճիշտը՝ *ընդ*

ծածուկ աջով քո ամփոփեցեր զմարմին նորա: Եւ ահա այժմ ծառայս քո եւ առաջնորդ հաւտի քո, զորս ընդրեցեր գլուխ ժողովրդեան քո, կատարեաց զասպարեզ նախաշաւիղ աւրինադրութեան քո, |Ա.228բ| եւ ճեպեաց հոգի սորա ըստ հրամանի կոչման քո, հանգուցեալ ի տարժանման մարմնական աղետից: Արդ, աղաչեմք զգթութիւն քո, Տէ՛ր, ընկա՛լ զսա յանտրտում քո ուրախութիւնդ, եւ զուարճացո՛յ զհոգի սորա յանանց խոստմանց քոց վայելստ: Յիշեա՛, Տէ՛ր, զուխտս եւ զժառանգութիւնս քո, զոր փրկեցեր արեամբ քո, աւրհնեա՛յ, Տէ՛ր, զբնակութիւն սորա եւ զոսկերս պահպանական աջով քո, վերակացու լե՛ր հոգոյ սորա եւ մարմնոյ, զի դու ես ժողովարան քոոց կամարարաց եւ շտեմարան անկապտէլի, որ անփոփես նախագոհութեամբ զժողովուրդս քո եւ հանգուցանես ի գրգանս մշտնջենազուարճս դրախտին փափկութեան, որ մնա ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, եւ զմեզ արժանաւորս արա՛ գնալ ի հաճոյս քո եւ ի դեպ ժամանակի ընդ սուրբս քո հասանել ի խոստացեալ հանգիստն եւ ընդ նոսին գոհացողական երգով փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւ[իտեանս]:

Եւ տեառնագրեն զդին ամենայն քահանայքն եւ իջուցանեն ի հանգիստն եւ խփեալ զտապանն, |*Ա.229ա*| ասեն սաղմոս ողբաձայն [Չէ. 7]. *Եդին զիս ի գփին[1] ներքնումն, ի խ[աւարի][2]:*

196. Ի ՏԻՄՈԹԷՈՍ ԹՂԹՈՅՆ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔ[ԵԼՈՅ. Բ. Տիմ. Դ. 1-8]. *«Զայս վկաութիւն[3] դնեմ առաջի Աստուծոյ, եւ Յիսուսի Քրիստոսի, որ դատելոց է զկենդանիս եւ զմեռեալս ի յայտնութեան իւրում եւ յարքայութեան. 2 եւ դու քարոզեա՛ զբանն, հա՛ս ի վերայ ժամու եւ տարաժամու, յանդիմանեա՛, սաստեա՛յ[4], մխիթարեա՛, ամենայն երկայնմտութեամբ եւ վարդապետութեամբ: 3 Զի[5] եկեսցէ ժամանակ, զի ողջամտութեան[6] վարդապէտութեանն ոչ անսայցեն. այլ ըստ իւրաքանչիւր ցանգութեանց[7] կուտեսցեն իւրեանց վարդապետս՝ ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց[8] 4 յառասպելս կործանեսցեն[9]. 5 Այլ դու զուարթ կա՛ց յամենայնի, ճգնեա[10], զգործս աւետարանչին*

---

[1] *Յ գբին*

[2] *Ս եդին զիս ի գբի ներքնում, ի խաւարի եւ ի ստուերս մահու*

[3] *Ս վկայութիւն*

[4] *Ս սաստեա*

[5] *Ս քանզի] զի*

[6] *Ս ողջմտութեան*

[7] *Ս ցանկութեանց*

[8] *Ս իւրեանց. + 4 եւ ի ճշմարտութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս եւ*

[9] *Ս > կործանեսցին*

[10] *Ս ճգնեաց*

գործեա՛յ[1]. զպաշտաւն[2] քո կատարեալ կալ: 6 Զի ես այսուհետեւ նուիրեալ եմ, եւ ժամանակ դարձի իմոյ հասեալ կա[3] ի վերայ իմ[4]: 7 Զբարեւոք պատերազմն պատերազմեցայ[5], զընթացսն կատարեցի[6], զհաւատսն պահեցի[7]: 8 Այսուհետեւ[8] կա եւ մնա[9] ինձ արդարութեան պսակն, զոր |Ա.229բ| հատուսցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդար դատաւորն[10]. ո՛չ միայն ինձ, այլ եւ ամենեցուն՝ որ սիրեն[11] զյայտնութիւն նորա»:

Աղեղու արուեստի.

197. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱԹԵՈՍԻ[12] [Ժ·Թ· 27-30]. *«Տեառն մերոյ Յիսուսի պատասխանի տուեալ Պետրոսի եւ ասէ[13]. Ահաւասիկ մեք թողաք զամենայն եւ եկաք զկնի քո. արդ, զի՞նչ լինիցի մեզ: 28 Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ասեմ ձեզ. զի դուք որ եկիք զկնի իմ, ի միւսանգամ գալստեան[14] իմում[15] յորժամ նստցի[16] Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց. նստջիք եւ դուք յերկոտասան աթոռսն[17] դատել զերկոտասան ազգն Իսրայէղի[18]: 29 Եւ ամենայն որ էթող[19] զտուն կամ զեղբարս, կամ զքորս[20], կամ զհայր, կամ զմայր, կամ զկին, կամ զորդիս, կամ զագարակս[21], հարիւրապատիկ առցէ եւ զկեանս[22] յաւիտենականս ժառանգեսցէ: 30 Բազումք եղիցին առաջինք յետինք, եւ յետինք առաջինք»:*

Եւ քարոզէ. *Վասն գտանելոյ:*

Եւ զկնի ընթեռնու զաղաւթս եւ զՀանգիստն երանելոյն տեառն Յոհաննու եւ աւետարանչի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

198. *Էր ընդ եղբարսն երանելին Յոհաննես մեծաւ |Ա.230ա| ուրախութեամբ ի Տէր[23], եւ յաւուր կիւրակէի ընդ ժողովել եղբարսն սկսաւ խաւսել այսպես. Եղբա՛րք եւ ժառանգակի՛ցք իմ եւ ծառայակի՛ցք / սղո՛րդք Տեառն արքայութեան յիշեցէ՛ք, սիրելի՛ք իմ, եւ որ քանի զաւրութիւնք ի ձեռն իմ ետ ձեզ Աստուած, որչափ շնորհս, որպիսի վարդապետութիւնս, եւ վերակացութիւնս, հանգիստս, սպասաւորութիւնս, փառս, հաւատս, միաբանութիւնս, պարգեւս ձրիս[1], զոր տեսէք աչաւք ձերովք զտուեալն ձեզ ի Տեառնէ, ո՛չ ըստ մարմնոյ երեւեալ եւ լուեալ, այլ հոգով երեւեալ, արդ, հաստատեցեք ի նոսա յիշելով զՏէրն յամենայն ի գործս ձեր, գիտէք զխորհուրդս մատակարարութեանն որ եղեւ ի մարդիկ, էթէ որ աղագաւ արար Տէր: Եւ այժմ ի ձեռս իմ աղաչեմ զձեզ ի Տէր մնալ առանց թշնամանաց, առանց նենգութեան, անաղտս, քանզի գիտեմ զթշնամանսն, եւ զանարգութիւնսն, զնենգութիւնսն որ ի ձենջ, գիտեմ եւ զանառակութիւնսն, ի ստունգանելն ձեր ի սուրբ պատուի|Ա.230բ|րանաց նորա: Արդ, մի՛ տրտմեցցի վասն ձեր բարերարն Աստուած, ողորմածն, սուրբն, յիստակն, անարատն, անհիւթն, միայնն, մինն, անփոփոխն, ստոյգն, աննենգն, անցասումնն, որ ի վեր է քան զամենայն լսելի եւ իմանալի անունն Աստուծոյ. եւ արդ, ուրախ լիցի Յիսուս ի բարեաւք կրաւնաւորութեան ձերոյ, խնդասցէ ի սուրբ կեանս ձեր, հանգիցէ ի պարկեշտ վարս ձեր, անհոգ լիցի ի ժուժկալութեան ձերում, հաճեսցի ի միաբանութեան ձերում, ժպրհեսցի ի սգաստութեան ձերում, բերկրեսցի ի [սիրելն] զնա, զայս այժմ խաւսիմ ընդ ձեզ, եղբա՛րք, փութացեալ յառաջակա գործն ձեր կատարել ի Տէր, քանզի զինչ ունիմ ասել ձեզ, ունիք զԱստուծոյ ձերոյ զրաւականն, ունիք զբարերարութեան նորա զտուրս, ունիք զանհրաժեշտ գալուստ նորա, զի թե [ոչ] մեղիցէք եւ զառաջինն, եւս խնդրէ ի ձենջ, եւ [ոչ] ընկալջիք ողորմութիւն եւ մասն ի բարի Տեառնէ: Եւ զայս ասացեալ էկաց յաղաւթս ամենեքումք եւ ասէ. Ո՛վ Տէր ամենակալ, որ զպս///[2][ակս զայս հիւսեցեր, Քրիստո՛ս, քոյին հիւսմամբդ]:*

---

[1] *Ս աւետարանչի գործեա*
[2] *Ս զպաշտաւնդ*
[3] *Ս կայ*
[4] *Ս > ի վերայ իմ*
[5] *Ս զբարւոք պատերազմ պատերազմեցայ*
[6] *Ս կատարեցի*
[7] *Ս պահեցի*
[8] *Ա այսուհետեւ*՝ «*եւ*»ը միանիշ է
[9] *Ս կայ մնայ*
[10] *Ս արդարն դատաւոր*
[11] *Ս սիրեցին*
[12] *Գ մաթէոս*
[13] *ՍԳ յայնժամ պատասխանի ետ պետրոս եւ ասէ ցնա (Գ > ցնա)*
[14] *Գ գալըստեանն*

[15] *ՍԳ > իմում*
[16] *Գ նստի*
[17] *Ս աթոռ, Գ աթոռս*
[18] *Ս ազգ իսրայէլի*
[19] *ՍԳ որ ոք եթող*
[20] *Ս զքորս*
[21] *ՍԳ զագարակս վասն անուան իմոյ*
[22] *Ս զկեանսն*
[23] *Յ* «մեծամասամբ պակասաւոր»

[1] երեւի՝ *ձիրս*

[2] *Ա*՝ աւարտում է 230րդ թերթի բ. երեսով, որից յետոյ ընկած 2 թերթ (առկայ վերջին՝ Տ պրակը 8-ի փոխարէն ունի 6 թերթ). սրանից յետոյ ընկած եւս երկու պրակ՝ 16 թերթ. Յովհաննու հանգստի ամբողջութիւնը տե՛ս Յաւելուած Ա. եւ Բ., ընդ նոյն համարաւ 198: Կոնիբիր, էջ 265 Հանգիստը լրացրել է իր D եւ Ven օրինակներից, իսկ կանոնի մնացեալ մասը՝ նոյն Ven-ից՝ էջ 266-76: